776

ԳԻՐՔ ՈՍԿԵԳԼԻՆ,
ԵՒ ԹՈՒՂԹՔ,
ՔԱՂՑՐԱԼՈՒՐՔ։

Յորս ընթեռնանին վարք արարմունք և բարքն
իմաստասիրուն Փիլիսոփայի. և Ճարտա-
րապետին բանաստեղծի. Մարկոսի
Աւրելիոսի Կայսեր։

Նորապէս սրբագրեցեալ, և ուղղեցեալ։

Յաւելուն այսմիկ նորապէս ցանկք ամենից ղ-
րուածեց բանից, և բարեաց ասացեալ-
ծոց որք 'ի սմա պարունակին։

Թարգմանեցեալ 'ի Սպանիականէն 'ի Հայկա-
կան բառբառ 'ի նախանձայուղ, և ջան-
սէր պարոն Գաբրիէլ Համազասպեան
Երևանցւոյ, 'ի յօգուտ, և 'ի զուարթ
ճաշակիւն ազգին Հայոց։

Աշխատութիւբ և գոյիւք նոյն Պարոն Գաբրիէլ վ
որդոյ Պարոն Աբիսաակէսին 'ի Վառս
Մեծագոյնս Աշ։

'Ի Հայրապետութիւն Տեառն Աբրահամու
ամենից Հայոց Կաթուղիկոսի։

Տպեցեալ եղև Յամի Տն. 1738. փետրուարի, 15
Իսկ 'ի թուին Հայոց 1187.

'ԻՍԼԻՆԳՏԻԿ։

'Ի տպարանի Անտոնիոսի Պուլիոլի։
Հրամանաւ Մեծաւորաց։

Գիրք ոսկեղէն.



ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԹԻՒՆ

Ի որպէս ժամանակն իւրէ գոտիչ մի ամենից համբաւոնակ լրոց և բովանդակիչ մի հաւատոի իրաց հնագոյնից և 'ի վաղնջանի ժամանակն տայ զվաղնջան իրաց ամենից որք սպասեն վաղնջանի. բայց միայն ճշմարտութեն, 'ի մէջ ամենից իրացէ յատկօրինեցեալ, որում մինչ ժամանակն երևեցուցանիցէ բեկեալ ուղեղով զթեւս իւր, յայնժամ նայ որպէս անմահ գոլով առնու զմեծագոյն զօրութեն, և առող ջանայ։ Ոչ գոյ իր մի այնքան ամբողջ որ ոչ տկարանայցէ։ ոչ գոյ իր այնքան կարծրագոյն և պինդ որ ոչ ջախիցի և ոչ իր այնքան պահպանեցեալ որ ոչ ապականիցի։ Ուրեմն զնմ իրս յայսոսիկ ժամանակն նուաճէ, և երկրաթաղ առնէ, եթէ ոչ միայն և միայնակ ճշմարտութենն որինչ կայ 'ի վերայ ժամանակին, և զնմ որ 'ի ժամանակին, զերազանցեալ յաղթահարէ, և յաղթանակէ։ Իսկ վասն ոչ լեալ օգնեցեալ 'ի բարեաց, և վա՜ լեալ հալածեցեալ 'ի չարեաց, կարէ լինիլ թէ զսակաւ ժամանակ ինչ ընկճիցէ և զդադար առնուցու, և արգելցի, բայց ծնունդ թուիցի յորում և թուիցի ոսկեայ

ոսկի 3995

Ճշմարիտ այս։ զի 'ի վաղմանի որպէս նաւ բա
ռնոք կառաւարեցեալ, յաղթելով ալեացն ծո-
վու և հալածանաց ելցէ 'ի ցամաք, և անսասան
ժամանէ 'ի բարի նաւահանգիստ։ Զի պտուղք
գարնանայինք ոչ ունին զայնքան զօրեղութի
առի տալոյ զոյժ ոչև զքաղցրութի կատա-
րեալ առ'ի տալ զհամեղութի, քայց մինչ ան
ցանի ամառն, և ժամանէ աշունն յորում պը
տուղքն հասունք լինին, տան զուժեղութի, և
զօրութի ուտողացն իւրեանց, և որք կամի-
ցին առնուլ զառհաւաղչեայ տացեն նոր զառա
ւել համ։ Կամիմ այսոքիւք խօսիւքս ասել թէ
'ի յայնմ առաջնում ժամանակի, և յառաջնում
տի ոչ ժամանակի աշխարհի որքան ցանկալիք,
և վարկադրեցեալք եղեն մարդիկք վ՚ իւր-
եանց աղաւնակեաց պարզամտութիք կենցաղա-
վարութեն, այնքան եղեն յետոյ յանդիմանեց-
ալք յաղագս նուաղութի հանճարեղութի իւր
եանց։ Արդարև հինքն, և յոյժ հնագոյնք փի
լիսոփայքն, որպէս Քաղդէացիք, նոյնպէս և ս
Յոյնք, որք իսկզբանէ 'ի վեր եղեալք 'ի հայե-
ցումն աստեղաց երկնից, և եղանի լեառն Օլիմ
բոս, առ'ի համանկատել զշարժմունս մոլո-
բականաց աստեղաց, որք ներգործեն 'ի յեր-
կրի, համարձակիմ ասել, թէ առաւել արդիւ-
նաւորեցան զթողութի վասն տգիտութեան
իւրեանց, քան թէ զշնորհս վասն դիտութի
իւրեանց։ Նոքա եղեն նախնիք որք խնդրե-
ցին գտանել զճշմարտութի տարերաց երկնից
եղեն և նախնիք, որք սերմանեցին զմոլորու-
թի 'ի մէջ իրաց բնականաց 'ի վերայ երկրի։
Ասէր Հումէրոս առ յորդէդին իւր զ[illegible]ս այս
Նախնիս Փիլիսոփայսն դատապարտե[illegible] զորյա
[illegible]աջ-

ուաջ քան զիս եկին վասն այնորիկ, զոր գիտա-
ցին։ Բայց շնորհակալեմ 'ի նոցանէ, վասն այ
նորիկ, զոր ցանկացան գիտել։ Յոյժ բարւոք
ասաց Հուսէրոս։ Վասնզի, եթէ ոչէր թագաւո
րեալ հնագունիցն այնքան տգիտութիւն, ոչ լի-
նիցէին այնքանք աղանդք զանազանք 'ի յիւրա
քանչիւր դպրատան, և յուսումնատան։ Որ
ոք ընթերցեալէ զվաղնջականուն յոյժ հնագոյ
նից Փիլիսոփայիցն ոչ երբէք բաց ասէ ինձ,
թէ յանդգնուին նոցա, որք գիտէին, և տգի
տութիւն նոցա, որք ցանկային գիտել, պատ-
ճառ իցէ եղեալ, զի գոլով գիտութիւնն մի
միայն, մարդիք լինիցին զանազանք։ Սինիքեանք
Աթոքեանք Փերիփատետիկեանք, Աքադէմ-
եանք, Էպիկուրեանք եղեն այնքան հակա-
ռակորդք միմեանց 'ի կարծիս իւրեանց, որ-
քան զանազանք էին 'ի բնութիւնս։ Ոչ կա-
միմ, զի այնքան յաճախիցէ գրիչն իմ, և ան-
ցանիցէ զչափն առ 'ի յանդիմանել այնքան զան
ցեալս հնագունսն, զի միայնոյն փառաւորեցեալ
ալք միայն ներկայքն։ Արդարև, զի եթէ արդ-
իւնաւորի զվարձս նա, որ ցուցանէ ինձ զճա
նապարհն այն յոր պարտիմ երթալ, ոչ սակաւ
շնորհս արդիւնաւորի նա որ զիս աղդէ ոչ գնալ
ի այն ճանապարհ, ուր կարելի է մոլորիլ, և տղա
լիլ։ Քանզի տգիտութիւն նախնեաց, ոչ եղեն,
եթէ ոչ առաջնորդ մի վասն աջողապէս յառա
ջելոյ մեզ, և քանզի նք մոլորեցան յայնժամ մո
լորութիւն նոցա պատճառ եղև, զի յետոյ մեք
գտանիցեաք զճանապարհ ուղիղ։ Արդ ասեմ
զիր մի զի ասացուածն եղիցի առաւել վասն
փառացնոցա, և վասն առաւել վատահամբաւ
ութեան մերոյ։ զի եթէ մեք որք եմք այժմոյս, ե-

ղեալք իցէաք յայնժամ, իմանայցէաք զսակաւ
քան զայն, զոր նք իմացան : Իսկ նք որք եղէն
յայնժամ, եթէ եղեալք իցէին յայսմ ժամա-
նակիս, իմանայցէին առաւել քան զմեզ, զոր
մեք իմանամք, և զիտեմք այժմ: Թուի ինձ թէ
ճշմարիտ իցէ այս : Վա՜յ զի իմաստունքն այնոքիկ
ջանացմամբ իւրեանց հետևեցան, զի զշաւիղս,
և զմուտս փակեցեալս, բացեալ, և ուսիցեն
ծեալ ճանապարհ առնիցէին : Իսկ մեք ծու-
լութիւն մերով զնթացս հաւասարս, և զճանա-
պարհս արձակս առնեմք շրջափակս, և դժուա
բակիրս : Արդ եկեսցուք ուրեմն առ յառաջս
դրուին մտադրուեմ մերոյ զոր կամիմ ասել որ է
այս : Զի եթէ ոչ կարեմք դանդատել մեք, որք
այժմուսեմք, ոչ կարէին զանդատել նք, որք
յառաջ քան զմեզ եղեն : զի ճշմարտութիւն (որ
պէս ասէ Արիստոտելեան դուստրէ ժամանակի)
'ի յայսմ յետնում ժամանակաց աշխարհի, ոչ
բացայայտեցաւ մեզ մոլութիւնք, և սղալանք,
յորոց պարտիմք փախչել, ոչ զճշմարտութիւն,
և կրթութիւն, որոց պարտիմք հետևիլ : զի ե-
ղեալէ ասասանօր չարութիւն, և խարդախու-
թիւնն մարդկային այնքան արթնացեալ, և իմա
ցուածս մահկանացուաց այնքան ընդ լծուլ
եղեալ, մինչ զի բարիքն սակաւք են պիտոյք
առ'ի գիտել, և զչարիսն գիտել կամիմք առա-
ւել քան զհարկաւորսն : Այսու կերպիւ նմա-
նիմք մեք զթուղթ խաղացողացն այնոցիկ, որոց
մինն խաղայցէ բազմովք թղթովք, և միւսն սա
կաւուք թղթովք, սակայն իւրաքանչիւր ոք հա
մարձակեալ յանդգնի շահել զխաղն : կարծեմ
թէ այս ճշմարիտ իցէ : այնքան սակաւք յորում
վերահասուք լինիմք, և դոն այնքանք, զորս
ա կա-

կարէաք և պարտէաք գիտել և ոչ գիտեմք ,
մինչ զի բազմութիւն զոր գիտեմք , է սակաւ բա-
ժին այնոցիկ զորս անդիտանամք : Ըստ այսմ
կերպի . որպէս իրք բնականք տարբերացն ըստ
զանազանութեան ժամանակի առնեն զգոր-
ծառութիւնս իւրեանց զանազանս , նոյնպէս
և իրք մարկանացուաց ըստ հանդիպման տիոց
հասակի աշխարհի : այսպէս և բարայայտեցան
իմաստութիւնք և դիտութիւնք : Արդարև ոչ ամ
պտուղք դան միայնագամայն , եթէ ոչ , յերբ
վերջանայ մինն , զսկիզբ առնուն միւսքն ըստ
պատեհ ժամանակի իւրեանց : Կամիմ ասել ,
թէ ոչ ամենայնք վարդապետք 'ի մէջ քրիստո-
նէից , ոչև հայայնք Փիլիսոփայք 'ի մէջ
հեթանոսաց հանարնութեան ներ միում ժամա-
նակի , եթէ ոչ մեռանելով լաւ վարդապետ-
մի , ծնան այլք լաւագոյնք : Վերհադոյն իմաս-
տութիւն այն որ զամ իրս ջանիւ իրաւամբ ,
և արդարութիւն , և մանաւորապէս բաժանէ
ըստ բարուն իւրում , ոչ կամեցաւ զի 'ի միում ժա-
մանակի աշխարհս ընանիցիւր անջատութիւն իմաստ-
նոց , և յայլում ժամանակի ընանիցիւր անջատութիւն
յիմարաց ,մեոյն հասանիցիւր պտուղն, և միւսոյն
ոչև տերևն միայն հասանիցիւր : զի այսու կեր-
պիւ , աբ ձանձրանայցեին յայնմանէ , զոր նք բա-
ցօք բերանովք ունիլ ցանկային : Այն հնագոյն
դարն ժամանակի , որ ընթանայր 'ի ժամանակս
Սաթուրնոսի , որ այլ անուամբ կոչիւր ոսկէ-
զօծ , յորում եղև այնքան խնդրեցեալ , և պա-
տուեցեալ 'ի նոցանէ , որք տեսին զնա , և այն
քան գովեցեալ 'ի նոցանէ , որք գրեցին զնմանէ ,
նաև այնքան ցանկացեալ 'ի նոցանէ , որք զնա
ոչ վայելեցին : Ժամանակն այն ոչ եղև ոսկէ-
զօծ վասն իմաստնոց զորս ունէր զի օծանի-

ցէլին զնա , եթէ ոչ վասն այսորիկ , զի չքաւ-
բեցաւ 'ի չարեաց , որք 'ի յօծմանէ ոսկւոյ մերոյ
կացուցանիցէին : Այս տիս հասակի ժամանա-
կիս մերոյ երկաթեղինւոյ , մի՛ ոք մոռածիցէ ,
թէ վա՜ այսորիկ կոչիցի երկաթեայ , որպէս թէ
պակասեցեալք իցեն իմաստունք , այլ կոչի երկա-
թեայ , զի յաւելան չարք , և վատթարագոյնք :
Խոստովանիմ զիր մի , և խոկամ ունիլ զբա-
ղումս , որք օգնեսցեն ինձ յայսմիկ , թէ ոչեչ
բէք եղեն յաշխարհի այնքանք , զի ուսուցանի-
ցեն զուսաքինութիւն , և ոչ բնաւ եղեն սակաւ
ևս զի 'ի գործ ածիցեն զայն : Աւլոքէլեոս ասէ 'ի
գիրս իւրս որ կոչի գիշերային ամիկայս , թէ վա՜
այսորիկ 'ի յայնքան պատիւս ունեցեալք եղեն
նախնիքն , զի յոյժ սակաւք գոյին , որք ուսու-
ցանէին , և յոյժ բազումք , որք ուսանէին : Իսկ
այժմոյսդ հակադարձն : զի գոն բազումք որք
ուսուցանեն , և յոյժ սակաւք որք ուսանին :
Սակաւ պատիւն , որով այժմոյս պատուին 'ի-
մաստունքն , կարեւորապէս ցուցանէ զվերոյար
գոյս մեծարանս , զորս 'ի հնումն ունէին Փի-
լիսոփայքն : Զինչ լինիցի տեսանել զՀուսիրոս
'ի մէջ Յունաց , զՍողոմոն 'ի մէջ Եբրայեցւոց :
զԼիքուրգոս 'ի մէջ Լաչէդէմոնացւոց , զՓորո-
նէոս 'ի մէջ Հելենացւոց , և զԼիմոս 'ի մէջ Հռո-
մայեցւոց , զՁիէրոն 'ի մէջ նոյն Լատինացւոց :
զԱպոլոնիոս Թիւնէայն 'ի մէջ ամենից բարբա-
րոսականաց ազգաց : Կուպէլէս բարեբախտու-
թիւն իւրով , եկն 'ի միում ժամանակի , յորում
աշխարհս էր այնքան հարուստ ազգէս արամբք
և այնքան աղքատ արամբք իմաստնովք , մինչ
զի ընթանային 'ի տարաշխարհէ , և 'ի զանազան
թագաւորութեանց և յայլասեռ ազգաց , ոչ
միայն 'ի լսել զվարդապետութիւն նո՝ , այլ մա-
նաւ

նասանդ 'ի տեսանել զանձն նորա : Ոչ հա-
ւատամ թէ պատմութիւնքն կամիցին խաբել
զիս մինչ ասեն, թէ մինչ Հռոմ 'ի յաջողութիւնս
եւրս յաղթութիւն վարիւր , յայնժամ Տիտոս
Լիւսոն դրեր զպատմութիւնս իւրս , և շարա-
դրեր : Եւ փառաւորեցեալն Ջերոնիմոս հաս-
տատէ 'ի յառաջաբանութիւնս ածաշունչ դրոց
և ասէ ', թէ բազումք զայնն 'ի Հռոմ մանա-
ւանդ առ 'ի տեսանել , և լսել զնաբտարաբանու-
թիւնս դրոց , քանթէ վայելել զյաղթանակութիւն
ոմանս Հռոմայ : Յորժամ Օլիմպիա ծնաւ ըզ
մեծն Աղեքսանդրոս , Փիլիպոս այրն նորա ,
և հայրն մանկան , գրեաց առ Արիստոտել
սասելով : Ես յոյժ շնորհակալեմ 'ի դիցն
ոչ այնքան զի ետուն ինձ զորդի արու , այլ
զի ետուն ինձ զայն 'ի ժամանակի միում, յորում
կարասցես լինիլ դու վարպետ և ուսուցիչ նր ,
և նա աշակերտ քո : Մարկոս Աւրելիոս Ան-
տոնիոս Կայսրն , զորմէ ներկայաբար ձեռնարկանեմք , և զարարմանս նր , խօսելով զինքն-
նէ , գրէ առ Պօլիոն զբանս այս : Ծանուցա-
նեմ քեզ ո՛վ բարեկամ իմ, զի ոչ արարին զիս
Կայսր վասն արենակցութեան նախնեաց իմոց ,
ոչև օգնականութեամբ ներկայից , եթէ ոչ , եղէ
բարեկամ իմաստնոց , և թշնամի անմտաց: Յոյժ
երանեցեալ եղև Հռոմ վասն ընտրելոյ զայն-
պիսի խոհեմ 'ի Կայսերութեան , և յոյժ բախտու-
նակ եղև Կայսրս այս , առ 'ի հասանել 'ի ծայրս
գոյն պատիւ Կայսերական , որ ոչ վասն տոհմ
նակցութեան , այլ վասն իմաստութեան : Արդ
եթէ փառաւորեցեալ եղև հասակ ժամանա-
կին այնորիկ , առ 'ի վայելել զանձն նր , ոչ սա-
կաւ եղեցի փառքն այսր ժամանակիս առ 'ի
վայե-

վայելել զվարդապետութիւնն նորա ։ Զի ես կամեցայ անուանակոչել զգիրքս այս Աւրէօ , որ կամի ասել ոսկեղէն , ոչ զի այնքան ընդունիցեն զայս արք առաքինիք առ'ի բացայայտութեան գրքոյս այսորիկ և հուչակել'ի ժամանակի իւրեանց հանդերձ զօրութեամբ բանի իւրոյ , որպէս ունին թագաւորք զքանս ոսկւոյ 'ի հնդիկս արևմտեան ։ Բայց սակայն նա խագուշակեմ յայսմ հետէ , թէ գոն բազումք սիրտք աքսորեցեալք 'ի հնդիկս վասն ոսկւոյ , քան զայս ըստանալոյ առ'ի ընթերցումն գործոյս գրոյս այսորիկ ։ Ասէ Սալուստիոս , թէ պարտէ յոյժ փառաւորել զնոսա , որք գործածեն զյաղթութիւնս բազումս , և ոչ պարտէ սակաւաբար բարեհամբաւել զնա , որք ոճով ճարտարաբանութեամբ գրեցին զպատմութիւս ։ Յաղագս այսր պատճառիս խոստովանիմ ես , թէ թարգմանութիւնս իմ ոչ արդիւնաւորի զհամբաւ ինչ , մանաւանդ խնդրեմ զթողութիւն յամենից դիտնոց , վասն պակասութեանց , որք 'ի սմին գտանին ։ Զի բայց 'ի յաճայնոց տառից , ոչ գոն մատեանք այնքան բարեկարգապէս գրեցեալք , մինչ զի ոչ ունիցին պիտոյս վերուզղութեան , և սղալաբարձութեան ։ Այս երևի գոլ ճշմարիտ ։ Քանզի Սօկրատէս եղև յանդիմանեցել 'ի Պղատոնէ . Պղատոն 'ի Արիստոտէլէ ։ Արիստոտէլ 'ի Աբենուռէ , Սէսելիոս 'ի Սուլպիցիէ ։ Լելիոս 'ի Վարոնէ , Մարինոս 'ի Թուլիէ ։ Էնիոս 'ի Օրացիու , Սէնէքայ 'ի Աւլոպէլիոսէ , Էրաթէսթենէս 'ի Սթրաբոնէ ։ Թէսաղոն 'ի Գալենու ։ Հերմագորա 'ի Զիզերոնէ ։ Որոդինէս 'ի Հերոնիմոսէ ։ Հերոնիմոս 'ի Ռուֆինէ , և Ռուֆինոս

'ի

'ի Դ օ ն ա ն թ է ։ Ո ւ ր ե մ ն ե ղ թ է գ տ ա ւ պ ա կ ա ս ու թ է
ու ղ ղ ե լ ի 'ի գ ո ր ծ ս այ ս պ ի ս ե ա ց ա ն ձ ա ն ց Հ ո ւ ջ ա -
կ ա գ ւ օ յ ն ի ց , ո ր ք է ն ն լ ս ս ա շ խ ա ր հ ի , ո չ ե ն
զ ա ր մ ա ն ք , թ է ա յ ս դ ի ս պ ի ց ի է ւ ս ի ն ձ , ո ր գ ի -
տ ե մ զ ն ս ո չ ի ն չ գ ի տ օ ղ ։ Ի յ ե ն ի թ ա դ ա տ ու թ ի ս ,
և 'ի ք ն ն ու թ ի ս ի մ ա ս տ ն ո ց , և ա ռ ա ք ի ն ե ա ց , կ ա
մ ա ւ ո ր ա պ է ս ա տ ո ր ա ր կ ե մ զ ն ս և զ ն ե ր կ ա յ գ ո ր -
ծ ա ռ ու թ ի ս այ ս ։ բ ա յ ց ն ո ք ա ո ր ք ո չ ե ն այ ս պ ի -
ս ի ք , պ ա հ ա ն ջ ե մ 'ի ն ո ց ա ն կ , զ ն շ ա տ ա ն ա յ ց ե ն
լ ե ն ի լ ը ն թ ե ր ց օ ղ ք , և ո չ դ ա տ օ ղ ք ։ Ո չ դ ո ղ հ ա մ
բ ե ր ու թ է ո ր կ ա ր ի ց ի ե ր կ ա յ ն ա մ տ ու թ ի ք տ ա -
ն ի լ , ո չ և ա ր է ն ո ր զ ա յ ս խ ո տ ա ն ա յ ց ե ն , թ է
զ գ ի ր ս ի մ ա ս տ ն ո յ ու ր ու ք , ո ր ն ր ք ա ք ա ր , և
ն ր ք ա գ ւ օ յ ն ի ւ ի մ ա ց մ ա մ ք , ն ա և ե փ ե ա լ զ գ ա ց -
մ ա մ ք ի ց է գ ր ե ա լ , զ ա յ ն ա ն մ ի տ մ ի մ ի ա ն գ ա մ
ը ն թ ե ռ ն ե լ ով ա ր հ ա մ ա ր հ ե ա ց է ։ Բ ա զ մ ի ց ս յ ա ն դ ի
մ ա ն ե ց ե ա լ ք ե ղ ե ն հ ե ղ ի ն ա կ ք և գ ր օ ղ ք գ ր ո ց ,
ո չ 'ի ն ո ց ա ն կ , ո ր ք գ ի տ ե ն զ լ թ ա ր գ մ ա ն ու թ ի ւ ն
ա ռ ն ե լ , և շ ա ր ա դ ր ե լ զ գ ի ր ս , ե թ է ո չ 'ի ն ո ց ա -
ն է , ո ր ք ը ն թ ե ռ ն ու ն , և ո չ ի մ ա ն ա ն , կ ա մ ո չ
գ ի տ ե ն ը ն թ ե ռ ն ու լ ։ Ա ռ ա ւ ե լ բ ա ց ա յ ա յ տ ե լ ով
ա ս ե մ , թ է յ ո գ ն ք ե ղ ե ն ո ր ք գ ր ե ց ի ն 'ի ժ ա մ ա
ն ա կ ի Մ ա ր կ ո ս ի Ա ր է լ ի ո ս ի Կ ա յ ս ե ր ս ա յ ս ո -
ր ի կ , (զ ո ր պ ա ր տ ե գ ի տ ե լ) ՝ Ի ր օ դ ի ա ն ո ս
դ ր ե ա ց տ ա կ ա ւ , և Տ ր օ պ ի ո ս և ս , Լ ա մ ր ի դ ի ո ս
յ ա յ ժ տ ա կ ա ւ ։ Յ ու լ ի ո ս Կ ա պ ի տ օ լ ի ն ո ս բ ա զ մ ա ս
և զ յ ո ք ու ն ս ։ Բ ա զ մ ա մ ք գ ր ե ց ե ա լ ք ա ց ա ս , և
այ լ ո ց ե ր ե ւ ի ն ա ռ ա ւ ե լ բ ա ն ա ս տ ե ղ ծ ու թ է ք , ք ա ն
թ է պ ա տ մ ու թ է ք ։ Գ ա յ և ս այ լ զ ա ն ա զ ա ն ու թ է ն
'ի մ է ջ այ ս օ ղ ի կ գ ր ու ա ծ ո ց ո ր ո ց լ ու ա ն , և 'ի մ է ջ
գ ր ու ա ծ ո ց ն ո ց ա , յ ո ր ո ց ա ռ 'ի զ ա յ ս զ ո ր մ է այ ժ մ
ը ն ձ ե ռ ե մ ։ Զ ի ն ո ք ա գ ր ե ց ի ն զ ո ր լ ու ա ն ն յ այ
լ ո ց ։ բ ա յ ց ն ո ք ա ՝ ո ր ո ց ե ս գ ա ղ ա փ ա ր ե ց ի զ ն ե ր
կ այ

կայ դորձս այս, եղեն վկայք ներկայք, և ա-
կանատեսք, զի ոչ լուան յայլոց, այլ տեսին
աչօք իւրեանց։ Գիտելի է և զ'ի մէջ վար-
պետաց, որք ուսուցին զգիտութիւն Կայսերիս
այսորիկ եղեն երեք, որք են այսոքիկ։ Յու-
նիոս Ռուստիկոս. Զինակալութիւնս, և Սիստոս
Զէրոնացին եղբօր որդի մեծին Պլուտարքոսի։
Աք երեքեանքս գրեցին զներկայ պատմութիւս
այս։ Սիստոս Զէրոնացին գրեաց յունարէն։
և այլք երկուքն լատին բառով։ Կարծեմ թէ
յոյժ սակաւք իցեն, որք զպատմութիւնս
այս լուեալք իցեն։ զի մինչև ցայսօր ոչ եմք
տեսեաք տպեցեալ։ Մ'ինչ ես ելի արտաքս յու-
սումնասանէ ուսման իմոյ, և տարան զիս քա-
ղաղել'ի տան արքունի, մինչ տեսի, և լուայ
զայնքան նորագոյն համբաւս 'ի յարքունիս,
եղերեցի ցանկութիւն տալ զիս 'ի հետաքննուն,
և'ի գիտուն իրաց հնագոյնից։ Յաւուր միում
մինչ անցանէի ընթեռնելով զպատմուիս, զտի
զիթղթիկ մի պատառեալ պատմութեան այսո-
րիկ, զոր մինչ ընթերցայ, այնքան հաճոյ եր-
և եցաւ, և թուեցաւ, մինչ զի եդի զնամ, սա-
յոր կարողութիւն մարդկային կարողէ հասանիլ
'ի գիւտ նի։ Յետ այնորիկ վերաշրջելով, և
որոնելով զբազում գրեանս, և գնալով'ի բա-
զում գրքատունս, և խօսելով ընդ բազում
իմաստնոց, նաև երթալով'ի բազում թագա-
ւորանիստ դաւառս, վերջապէս յայտնեցաւ
ինձ'ի Ֆլորէնցիա'ի մէջ գրոցն, զորս էթող
Կօզիմոս դէ Մ'էդիչի այր իրաւի բարւոյ յիշա-
տակի արժանի։ Արդ զգիրքս այս, որ է մարդ-
կային, 'ի կիր արկի այնպէս, ոչ բազում ան-
դամ'ի կիր արկանին գիրք ճծայինք, որոց թարգ-
մա-

մանութիւն ոչ է բառ առ բառ, եթէ ոչ'ի զօ-
րութէ բանից 'ի զօրութեն բանից։ Ոչ պարա-
ւանդիմք մեք թարգմանիչքս տալ 'ի չափու-
զխօսս, այլ բաւականեն նկատել, և կշռել հա-
ւասարապէս զծանրութիւն զօրութեն բանից։
Եւ քանզի պատմիչք, և պատմաբանութիւնքն էին
բազումք, և պատմութիւնն զոր ես կամիմ առ-
նել էր մի մեայն, ոչ կամիմ ուրանալ թէ հա-
տեալ իցեմ երբեմն զոմանս իրս անհամս, և
զսակաւ օգտակարս, և 'ի մէջ արկեալ իցեմ
զայլ իրս յոյժ խորժակս, և առաւել օգտա-
կարս։ Ունիմ'ի մտի, թէ եմ մարդ իմաստուն,
յետ այնորիկ որ ընթերցեալ իցէ զգիրս այս,
մի՝ ասիցէ թէ ես իցեմ սկզբնական հեղինակն
գրոյս այսորիկ, ոչևս սակաւ վճռահատիցէ,
թէ զիս որոշեմ բոլորովիմբ 'ի սմանէ։ Վա՜ զի
այնքան, և ոչ այնպիսիք եփեալք և'ի կատար
հասուցեալք զօրութիք բանից, ոչ երբէք գը-
տանին 'ի ժամանակի ներկայականի, և ոչ այն
քան բարձր ոճով, երբէք հասին 'ի ժամա-
նակի, որ նախ քան զմեզ անցին։

Սկսա-

Սկսանի գիրքս ոսկեղէն յորում պարունակնակի կեանն, և աշնուագոյն կրթութիւնն առաքինական, նաև խորագոյնք, և բարձրագոյնք գօրութիւք բանիցն Մարկոսի Աւրելիոսի, և Կայսերն Ճոխաբանի: Նմանապէս յայտնին 'ի սմին թուղթք ոմանք գրեցեալք 'ի նոյն Կայսերէ, արժանիք 'ի լոյս ածելոյ: Քայլէ գիրքս այս այնքանեաւ բարձրագոյնիւ ոճով շարադրեցեալ, որքանեաւ խորագոյնիւ իմացուածուք բանից իցէ զարդարեցեալ: Վասն որոյ, թարց առնելոյ զանիրաւութիւն ումեք, և առանց հեռանալոյ 'ի ճշմարտութէ կարէ ասել, թէ ոչ երբէք տեսեալք եղեն մինչև ցօրս այս բանք, այնքանեաւ հռետորականաւ ոճով շարադրեցեալք 'ի լեզուս ապանիականս:

ԳԻՐՔ



Ցովսէփ Ֆիլոսիոս Քանդակագործ·



ԳԻՐՔ ՈՍԿԵԴԷՆ

ընձեռեալ ղկենաց և ղվարուց Մարկոսի Աւրելիոսի Կայսեր։

Գլուխ առաջներորդ։

Յաղագս աղդաբանութեան և տոհմականութեան Մարկոսի Աւրելիոս։ Կայսեր

ռուբ
3925

ԱՄԻ հիմնարկութեան Հռովմայ վեցհարիւր իններորդն և հինգ երորդի և յամի Օլիմպիադայ հարիւր, վաթսուն և երրորդի, ըզկնի մահվանն։ Անտոնիոսի կայսերն պիոյն այսինքն գլուածին, գոլով խորհրդակիցք Ֆուլվիոս գոլով խորհրդակիցք Ֆուլվիոս կատոն, և չէնէոս պարտուկիոս 'ի բաթիլագոյն կանփիդոլումն, այսինքն խորհրդա

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍԱՆԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

բանին 'ի չորքն Հոբտեմբերի 'ի խնդրոյ ամ ժո-
ղովրդեանն, Հռոմայեցւոց, և համահաւանութիւն
ամ սրբազան խորհրդարանին, եղև ընտրեցեալ
'ի կայսրութի ընդհանրական ամ միապետութեն
Հռոմայեցւոց Մարկոս Աւրէլիոս Անտոնինոս։
Գերազանցագոյն այրս այս եղև 'ի Ծննդենէ Հռո-
մէացի, Ծնեալ Իմմնթէ չէլիս։ և ըստ որումասէ
Յուլիոս կապիտոլինոս, Ծնաւ 'ի վեցն մայիսի,
որ ըստ համարողութեան լատինացւոց, է 26. յա-
ւուրն ամսոյն ապրելի։ Հայրն սորին կոչեր
Անիս Վերոս, և վասն այս պատճառիս պատմիչք
'ի բազում տեղիս կոչեն Մարկոս Անտոնինոս վե-
րոս, այս ևս հաւատի է, զի Աղրիանոս կայսր
կոչէր զնա Մարկոս Վերիսիմոս, որ թարգմանի
Մարկոս ճշմարտադունեղ, զի ոչ երբեք գտաւ
'ի նմա սուտ, ոչև պակասեցաւ 'ի ճշմարտութենէ։
Այսոքիկ Անիս, Վերոեանքս էին տոհմք ի մեծ 'ի
Հռոմ, որք պանծային զինքեանս դով սերեցեալս,
և յառաջ եկեալս 'ի Նումա Պոմպիլիոյ, և 'ի
Կուինթոս Կուրցիոյ հռչակաւոր Հռոմայեցւոյ,
որ առ 'ի ազատել զհռոմ 'ի վտանգից, և առ 'ի
տալ զանձն իւր 'ի մշանջենական յիշողութիւն,
կամաւորապէս դահաւիժեաց զինքն 'ի խորխո-
բատն այն, որ յայնմ ժամանակի տեսանիւր 'ի
Հռոմ եւ մայրն Կայսերս այսորիկ կոչիւր Դոմի-
ցիագա Կամիլա ըստ որում պատմէ չենա պատ-
միչն 'ի դիրս ազգաբանութեան տոհմիցն Հռոմէա-
ցւոց։ Կամիլեանքս այսոքիկ, եղեն անձինք յայնմ
ժամանակի յոյժ վերապատուեցեալք, զի պան-
ծային զինքեանս սերեցեալս, և յառաջեկեալս
'ի Կամիլոսէ, հռչակաւոր և, հնագոյն. զորապէ-
տէ Հռոմէացւոյ, որ ազատեաց զՀռոմ 'ի դալիա-
ցւոց, որք կալեալք էին զնա։ Մարդիկք, որք
յառաջգային և ծնանէին 'ի յայսմ տոհմի, կո-
չէին Կամիլեանք վասն յիշատակի Կամիլոսին։ Եւ
կանայքն 'ի նոյն տոհմէ կոչէին Կամիլեանք 'ի
յիշատակ դստերն միոյ նոյն Կամիլոսի, որ Կա-
միլա կոչիւր։ Գոյր օրէնք յոյժ հնագոյն, զի
հա-

համայնք Հռոմայեցիք յորում տեղւոջ ունիցին զյատուկ յատկութիւն ինչ, յորում նախ-
նիքն նոցա վասն ժողովրդեանն Հռոմէացւոց ա-
ւարեալք իցէին զգործ ինչ արժանի մեծի գո-
վասանութեան։ Եւ յաղագս հնագոյն սովորութեան
այսորիկ հրամայեցաւ, զի յաղագս գոլոյն իբրեանց
'ի տոհմի Կամիլոսի, ունիցին զյատկութիւն
'ի վերայ հսկման, եւ պահպանութեան բարձր կամիլ-
ոսին, այսինքն խորհրդարանին։ Եւ թէպէտ
փոփոխութեի ժամանակաց, բազմութիւնք բա-
նաւորաց, եւ թնդմունք քաղաքական պատերազ-
մաց իցէին առիթ նուազեցուցանելոյ զդին մա-
քրութիւն, եւ զբարի սովորութիւն Հռոմայեցւոց,
եւ ներածելոյ զկերպ մի ոչ բարւոք վասն կենաց
մարդկան, սակայն ոչ ընթեռնումք, թէ վասն
այսորիկ նախագահութիւն Հռոմէացւոց իցէ հա-
տեցեալ, եւ ունայնացեալ, բաց 'ի ժամանակէ
օրինայի յորժամ արար զընդհանրական աքսորումն
ընդդէմ Մարիու։ յետ մահուանն Սիլլայի անու-
ղղրմի, զբանալով Յուլիոս զթագաւոր Կայսրն,
որ եւ եղեալ կառավարիչ եւ քաղաքապետ Հռո-
մայ, նաեւ զբուխ Մարիանացւոց, բնաջինջ արար
զամ, զոր արար Սիլլա, եւ դարձուց վերստին 'ի
նախկին կացութիւն իւր զՀռոմայեցիսն։ Եւ թէ
որպիսի իցէ եղեալ բարք, եւ կացութիւն։ աղքա-
տութիւն, կամ հարստութիւն։ յաջողութիւն, կամ
ձախորդութիւն ծնողացն Մարկոսի Աբրելիու
Կայսերն, ոչ գտանի 'ի պատմութիւն հնագունից,
թէպէտ եմ հոգացողութիւն որոնեցեալ եղև։
քանզի հնագոյնք պատմիչք Հռոմէացւոց, ոչ ու-
նէին զսովորութիւն գրելոյ զկենս ծնողացն Կայ-
սերաց, մանաւանդ մինչ եղեալք էին միապետք
առաւել վասն, արդեանց զոր ունէին որդիքն,
քան թէ վասն կարողութեան, զոր ժառանգեցին
'ի ծնողացն իւրեանց։ Ճշմարիտ այն, զոր Յու-
լիոս Կապիտոլինոս ասէ, թէ հայրն Մարկոսի
Աբրելիու Կայսերն գոլով նախընկալ առենապետ,
եւ զրաւպետ զրաց, եւ կառավարիչ վերջնոյ սահ-

մանի ամիսոցաց, 'ի ժամանակի Տրայանոսի բա-
ւոյն. Ադրիանոսի իմաստնոյն, և Անտո-
նինոսի դիցածագունի կայսերաց։ Եւ նոյն ինքն
Մարկոս Աւրելիանն հաստատէ զայս, գրելով
'ի կղզոջն Ռոդոսոյ առ բարեկամն իւր անուանե-
ցեալն Պօլիոն, որ բնակէր 'ի Հռոմ Յոյժ
ըղդամբարեկամ իմ Պօլիօն ոչ գոլով ներկայ
'ի Հռոմ, առաւել և այս որ զիս տեսանեմ միայն
'ի յայսմ կղզոջս, բայց որպէս առաքինութեն առ-
նէ զօտարն ընտանի, և մոլութեն զնտանին դարձ-
ուցանէ 'ի յօտարականութի, գոլով Ամս Տասն
որ ընթեռնում ասա 'ի Ռոդոս զփիլիսոփայութի,
զիս արդէն ունիմ բնիկ ընտանի ասա 'ի յերկրի,
քանզի արարին զիս մոռանալ զանդորրութենն
Հռոմայ, և մերձենալ 'ի խստութի, և 'ի կոշ-
տութի կղզոյս այսորիկ, այսու պատճառաւ,
զի գտի ասա զբազում բարեկամս հօր իմոյ, և
գիտացեալ թէ որպէս եղև զօրապետ ընդդէմ
բարբարոսաց 'ի յԱդրիանոսէ տնէ իմմէ, և Ան-
տոնինոսէ յաներէ իմմէ բացատրութ ժամանակի
հնգետասան ամաց։ Արդ ասեմ քեզ, զի Ռոդո-
սացիքս են երախտադէտք։ Բարւոք կամէի ես
'ի Ռոդոսի ընթեռնուլ զփիլիսոփայութի զայնքան
տարի, զորքան հայրն իմ եկաց ասա 'ի պատե-
րազմի, բայց ոչ կարեմ, զի Ադրիանոս տրնիմ
հրամայէ ինձ, զի ես երթալով 'ի Հռոմ ընակից
եմ անդ։ Բայց սակայն եմ մարդոյ հաճոյ թուի
տեսանել զհայրենին իւր։ Արդ ըստ բանիցս
թեղեցոյս այսորիկ հաւատալիք, թէ Անիօ, Վէրս
հայրն Մարկոսի Կայսեր զառաւելագոյն մասն կե-
նաց իւրոց ծախեալ էցէ իմարտս պատերազմի։
Իրաւի ոչէ սովորութի այսպէս թեթեւապէս հա-
ւատալ, եթէ ոչ այնոցիկ, որք իցեն յոյժ կրթե-
ցեալք 'ի կրթմունս պատերազմի։ այսպիսեացս
է հաւատալի տալ զպաշտօն զօրապետութենն սահ-
մանաց, որպէս թէ բոլոր փառքն Հռոմայեցւոց
իցէր թողուլ զբարի համբաւելինքեանց, իրաւի նա
էր վարկեցեալ առաւել զօրաւոր, և 'ի խորհրդ

տրա-

տրանին ունէր զբաղում բարեկամն, որում հաւատային զգժուարայաղթ մարտնչումն ընդդէմ յոյժ դաղանաբարոյ թշնամեաց։ Ըստ այնմ, զոր ասէ Աբեսոս չերբնացին թէ եւս Հռոմէացիք ունիցէին առ ձեռն պատրաստ յոյժ զվոտանդաւոր պատերազմ, միշտ ունէին 'ի չորեքկողմն կայսերութեան իւրեանց յոյժ բաւական, և կատարեալ զօրս, (զորս հարկէ գիտել) 'ի բուզանդիա, որ այժմ կոչի Կոստանդինուպօլիս, վասն արեւելականաց, 'ի կագէս, որ այժմ կոչի Կաֆս քաղաք սպանիու, վասն արեւմտականաց, 'ի գետս ռօդանու, որ այժմ կոչի Ռէնօ վասն, գերմանացւոց, 'ի կօլօս, որ այժմ կոչի Ռօդօս 'ի պատճառս բարբարոսաց, Յամենայն Յունվարի, յորում բաժանէին զպաշտօնս, և զպատաւորութիւս 'ի խորհրդարանի, նախապատրաստեցեալ քաղաքապետն, և երկուքխորհրդակիցք տարեկանք, այսինքն կօնսուլք, որք տիրէին մի միայն Տարի։, խակայն 'ի յերկրորդում ամի նախապատրաստէին զչորս վերապայծառարս վասն չորից կողմանց սահմանաւերջ ամրոցաց։ Տեսանի զայս դոլ ճշմարիտ։ վասն զի համայնք մեծս համբաւք արքն Հռոմէացիք, ընթեռնուլք, զի 'ի տղայական հասակի եղեալք զօրաւոր սահմանաւերջ ամրոցաց։ Զի մեծն Պօմպէոս ամենայն ընդ բիւրսան դացուց։ Եւ փառաւորեցեալն Ճշիպիօն ընդ կողոսացիսն, և քաջաբիրտ Յուլիոս կայսրն ընդ Ռօդանիսն։ Արդ զայս ասացաք իվերջնումն թէ ուրեմն Անիս, Վերս, հայրն Մարկոսի Կայսեր եղեալ իցէ զբրապետս 'ի Պաշտօնս և մինն 'ի նոցունց զբրագլխաց սահմանս վերջ ամրոցաց, որ պարտեր դոլ 'ի Հռոմ մի 'ի միջի անձանցն այնոցիկ յոյժ նշանաւորաց։

Յաղագս ուսուցչաց, զորս ունեանց Մարկոս Աւրելիան Կայսրն իմանկութիւն իւրմէ։

Գլուխ երկրորդ։

Զ դոյ ստուգական պատմութիւն, թէ ուր, կամ յերբ, որպէս, կամ որպիսեաւ կերպիւ, կամ յորում կրթութիւն, և վարժմունս, ընդ որում անձին, կամ նորում գաւառի իցէ ծաղեալ զառաւելագոյն մասն կենաց իւրոց Բարեկենցաղ կայսրս այս։ Բայց միայն կարճառօտ բանիւք ասէ Յուլիոս Կապիտոլինս, թէ գոլով քսան և երկու ամաց հասակի իւրոյ յանձնեցեալ եղև 'ի Ադրիանոս կայսրն, բայց հակառակն դատնի 'ի պատմութիւս այլոց պատմողաց, ըստ որում ասէ Սէքստոս չէրօնէզն 'ի պատմութիւն իւրում, թէ ոչ գոյր սովորութիւն 'ի մէջ պատմագրացն Հռոմէացւոց գրել զկրս, զորս արարեալք էին թագաւորքն իւրեանց յառաջագոյն քանզի լինիլն իւրեանց թագաւոր եթէ ոչ միայն իմանկանցն յայնցանէ որք ունէին յոյժ գերագոյն խոհականութիւն 'ի մանկութիւն իւրեանց։ Եւ այս երևի ճշմարիտ, քանզի պատմէ լայնատարածաբար Սվէտոնիոս Տրանքվիլլոնն, զարարմունս, բարձրայօնս և զգործս առուիս անպզուշականս, զորս Գայիոս Յուլիոս կայսրն առնէր 'ի տղայութիւն իւրում, առ 'ի ցուցանել իշխանացն ապագայից, թէ ոչ յոյժ մեծ եղև փառամոլութիւն զորս սնեալ առ 'ի ստանալ զվիապետուն, և յոյժ սակաւ խելքս,

և

և հանձարեղութիւնս առ 'ի պահպանութիւն նորա։ Ոչ են իրք նորագոյնք որդոց մարդկան, որք փափաքին, և ըղձան առնելոյ զերս յոյժ գժուարակիրս, զի որքան առաւել բարձրադոյն ունիցին զնորհուրդս իւրեանց, այնքան առաւել ցածացեալ զդայցեն զբախտն իւրեանց, և որքան առաւել հոգս ունակք են առ 'ի հասանել 'ի լուսն, ցանկութեց իւրեանց, այնքան անհոգս ցուցանեն զինքեանս առ 'ի պահպանումն հանգստութիւն իւրեանց։ Եւ թէպէտ Անիս, Վերջ հայրն Մարկոսի Կայսեր (որպէս ասացաք 'ի վերոյ) հետևեալ 'ի ցերեկութիւնս զինուորութիւն Բայց սակայն, եդ զորդին իւր 'ի Ճանապարհս դիտութիւն և իմաստութիւն։ Քանզի գոյր փէնը յոյժ ինկիր արկեցեալ, և սովորութիւն յոյժ պահեցեալ 'ի լաւ կառավարութիւն Հռովմայեցւոց. թէ ամ քաղաքացի, որ վայելէր զազատութիւն Հռովմայ, ժամանեալ որդին նորա 'ի տասնամեայ, ոչ թողուլ զնա յայնու հետև դնալ 'ի փոքոցի դատարկաբանութիւն, և ունայնակեցութիւն։ Ոչ չէնաօրն, այլ ինքն իրաւայքննիչն որ հվուէր զՀռովմ և իւրաքանչիւր յաւորս որոն էր զիսողոցս թոյլ տայր, թէ երեխայն քաղաքացւոյ ուրուք երթիցեր 'ի զբօսանուլ, եթէ ոչ մինչև ցասացեալ ժամանակն, յայնու հետև, պարտականդեցեալէր հայրն սնուցանելոյ զնա արտաքոյ պարսպին Հռովմայ, կամ լինիլ երաշխաւոր, զի որդին իւր ոչ առնիցէ զնեալադարութիւն ինչ։ Յորժամ Հռովմ յաղթանակէր, և վասն իւրոյ քաջութեան կառավարութեան հովուէր զաշխարհ, արդարև էր իր զարհուրելի, տեսանելոյ այնմ ժամանակի, և ոչ սակաւ է զարմանալի լսել այժմոյս, ունիլ Հռովմ չորեք. հարիւր հազար ընտանիս, որոց 'ի մէջն գոյին առաւել քան զերկու հարիւր հազար տղայք, որք ունէին այնքան ամենահարեցեալս զողայականս խելագարութիւն, մինչ զի զորդին Կատոնի խստապէս պատժել Հրամայեցին, մի ունելոյ զսակաւ ինչ

հրամարձակութիւն, և զեղբայրն բարոյն զինայլ
առաքեցին յաքսորանս, վասն զինելոյ ունայնակեաց,
և պարապուրդ, եթէ ոչ իսաբէ զմեզ զիչէրօն,
որ 'ի գիրս օրինացն. Հռոմէացւոց ասէ, թէ
ոչ 'ի Հռոմէացւոց կարէր համարձակել քայլ-
լով 'ի փոզոցին Հռոմայ, եթէ ոչ ունէր 'ի ձեռին
իւրումմ զնշան պաշտօնի իւրոյ, և գործոյն այնո-
րիկ, նորումմ անցուցանէր զկեանն իւր, որպէս-
զի ամենեքեան ճանաչիցին զնա, թէ կենցա-
ղավարիւր 'ի գործս, և յաշխատանս ձեռաց
իւրոց, և ոչ 'ի քրտուանս, և 'ի վատտակս այլոց։
և օրէնքս այս, հաւասարապէս յամենեցուն էր
պահելի։ Զի Կայսրն տանէր առաջի իւր զնան-
մի վառեցեալ. և իսորհրդակիցքն իւրաքանչիւր
զք տանէր զտապար մի, և քահանայքն զսաղա-
ւարդ մի. Սէնատօրքն, այսինքն ծերակոյտքն
զսաղաթի մի մեծ 'ի վր թևոց իւրեանց. և չէնա-
օրքն, այսինքն իրաւաքննիչքն զտախտակ մի
փոքրիկ, և գատաւորքն զգաւազան մի, և հա-
բիւրապետքն զփշեայ ծաղիկ մի, ատենաբանքն
զգիրք մի, զինուորքն զսուր մի ընդ միջ, դեր-
ցակք զմկրատ մի, գարբինքն զկուռ մի, ոսկե-
րիչք, կամ արծաթագործք զբոզ մի, և այսպէս
ամ այլք պաշտօնեայք, և գործավարք։ Յայս-
ցանէ ասացելոցս կարեմք վերահաւաքել, թէ
Մարկոս Կայսրն որովհետև ծնաւ 'ի Հռոմ, մինչ-
դեռ երեխայ էր, ծնողքն նորա տուեալք իցեն
նմա յոյժ բարի անուն։ Եւ թէպէտ մեզ ան-
յայտք են սկզբունքն մանկուանն նր, սակայն եմք
հաւաստեալք, զմիջին, և զվերջին գործս նր
յոյժ փառաւոր եղեալ գոլ։ Անիծ, Վէրս հայրն
Մարկոսի, Կամեցաւ, զի որդին իւր Մարկոս
թողեալ զզէնս, հետևիցէր ուսմանց։ Իրաւի
նկատելիք այս, թէ այս եղեալեցէ վասն խնա-
յութեան հօրն, և ոչ վասն երկչոտութեան որդւոյն։
Արդ եթէ գործք մեռելոց ոչ իսաբեն զմեզ
կենդանիքս, և պատճառն ենթադասելի են,
ենթադասութիւն ոչ մթացեալով, այլ պարզագունիւ
յուշեալ

յուշեմութիւն, և զորութիւն բանից հանձարեղաց, դատանեմք զսակաւագոյն անձինն, որք կորուսին զկեանս գրովք, և ուսմամբ, և յոյժ սակաւք, որք շահեցան, և յաւելան 'ի զենս, և 'ի զենուորութիւս։ Վերազնիցուք զամ գիրս, և որս նիցուք յամ թագաւորութիւս, և 'ի վախճանի պատասխանեսցեն մեզ, թէ են սակաւք, որք 'ի դաւառի իւրեանց ելցեն երանելիք 'ի զենս, և հետևապէս ստացեալք ելցեն զհամբաւ յոյժ մեծագոյն։ Բայց են յոյժ բազումք, որք կարի մեծապէս երջանկացան բարեաք համբաւաք 'ի ձեռս ուսման, և դրոց։ Աբեերիցուք ուրեմն զօրինակ, և տեսցուք եթէ իցէ՞ ճշմարիտ, որով զայս ասացեալս իմ հաստատեմ։ Ոչ ուներին եթէ ոչ մի միայն թագաւոր, այսինքն ըղ Նինոս Ասուրեստանեայքն։ և զմի Լիկուրգոս Լաչէդէմոնացիք, զմի Թէոլոմէոս եգիպտացիք և զմի Մակաբէ եբրայեցիքն, զմի Հերքուլոս յունաստանեայքն, և զմի Աղէքսանդրոս Մակէդոնացիք, զմի Պիռոս Էփիրոտացիք, և զմի Հէքթոր Տրոիանացիքն, զմի Տէոնիոս Ռոմբրացիք, և զմի Վիրիաթոս Սպանիացիքն, զմի Անիբալ Կարդագինացիք, և զմի Յուլիոս կայսր Հռոմէացիքն։ Բայց ոչէ այսպէս 'ի յարս հանձարեղս։ Քանզի եթէ յոյնք ունէին զՀոմերոս, երկիրն յունաց ոչ սակաւ պանծայր եօթն իմաստասիրօք, որոց առաւել հաւատամք 'ի Փիլիսոփայութիւնս նոցա, քան թէ Հոմերոսի 'ի պատերազմս Տրոեայ քանզի այնքան գիտնականագոյնք դատանել զճշմարտուն մի 'ի Հոմերոսէ որքան գիտնականք դատանել սուտ մի 'ի Փիլիսոփայսն։ Նմանապէս հնագոյնք Հռոմէացիքն, ոչ միայն ունէին Հիլէրսն յոյժ ճարտարաբան, այլև զԱլաբստիոս, և Հլուկանոս և զՏիտոս Լիվիոս, և զՄարկոս վարսն ընդ այլ յոգունց արանց յոյժ ընտրեցեալց, որք թողին զայնքան հաւատարմութիւն 'ի գիրս իւրեանց, վասն խօսելոյ զճշմարտութիւն, զորքան կորոյս Հիլէրսն 'ի խորհրդարան

բանին, վասն 'ի կիրարկելոյ զշողոքորթութիւն։ Եւ որպէս ասացաք զփոքունցս այսցանէ, յու-նաց, և Լատինացւոց, կարելիէ ասել զասո-րոց, զպարսից, զմարաց, զառհիվօտաց, զա-քայացւոց, զպէնաց, զդալիացւոց, զգերմանա-ցւոց, զբրիթանիացւոց, զսպանիացւոց, ընդ ո-րոց ամենից ազգաց, թարց համաբաղդատու-թեամբ թողին զինքեանց առաւել զիշատակումն, և պատուեցին զհայրենիս իւրեանց գրովք իւրեանց նոքա, որք վերապրեցան 'ի գիրս, քան զնս, որք նշանակեցին զինքեանս 'ի ոչինս, Արդ թող-ցուք զպատմութիւն օտարականս, և դարձցուք առ զարդացումն Կայսերին մերոյ Մարկոսի Ա-ւրելիոսի, ոչ պատմէ Իուլիփիոս։ թէ ոչ դե-բազանցագոյն այրս այս ուսաւ զբաղում, և զգա-նազան գիտութիւն։ Նոյնպէս ունեաց զբաղումս. և զգանազանս վարպետս յաղագս ուսանելոյ։ Զի ուսաւ զբերականութիւն 'ի վարպետէ միոյ, Էու-ֆօրմիոն կոչեցելոյ, զերաժշտութիւն յայլմէ վար-պետէ, կոչեցելոյ Զէմինոս Կոմիտս, զնարտա-սանութիւն, ի Յաղէքսանդրէ յունէ, զբնական փի-լիսոփայութիւնն Իկոմէդոսէ քաղկեդոնացւոյ, այր ծերունի, որ առեալէր 'ի Հումերոսէ, և 'ի Սէսթոս չէրօնացւոյ եղբօր որդոյն մեծահամ-բաւ Պլութարքոսի։ Նոյնպէս ուսաւ զօրէնն 'ի Վէլուստէ մէսանէ։ Պատուական համա-րեաց կայսրս այս, գիտել զպատկերահանութի, և ուսանիլ զքաշուածս, որոյ արհեստի վար-պետն եղև Դէօղէնիտս. որ յայնմ ժամանակի էր յոյժ անուանի, և հռչակաւոր պատկերահան։ Նմանապէս աշխատեցաւ առ 'ի գիտել, և հե-տաքրքիր լինիլ. թէ յո՞ տարածիցիւր արհեստն հմայութեամբ, որոյ յաղագաւ երթայր յայտնա-բար 'ի լսել զդիցն Ապոլօնիս։ Եւ որ-պէս զի մի՛ մայցէր իրինչ ուսանելոյ, ետ զ-ինքն 'ի վրայ ամ գիտութեամբ, և երկրաչափութեամբ, և աշխարհագրութեամբ, որոյ վարպետն էր Յու-նիոս Ռուսաիկո, որ յետոյ գրեաց զվարս նոր։

և

և չինենա Կաթուլոս, որ գրեաց զմահն նր, և զկեանն Կոմոդոսի որդոյն իւրոյ։ Յայսցանէ գերազանց արանցս, որք աճեալք ծաղկէին յայնմ ժամանակին, եղև վարդապետեցեալ 'ի յառաքինութիս, և կրթեցեալ 'ի դիտութիս։ Ուստի լայր Զէնէրօն Արտասուաթոր աչօք, զնեադոյն բարի սովորութիւնս Հռոմայ, զի տեսանէր զմեծագոյն կորուստն ներկայ 'ի ժողովրդեան, տեսելով 'ի հռետորականի իւրում, թէ հնագոյնք Հռոմայեցիքն, միտ դնէին զաչս յայնմիկ, յորմէ կարծէին կարելի գոլ ծնանիլ վտանգք մեծագոյնք։ Հինգ իրս ունէին Հռոմայեցիք 'ի մէջ այլոց իրաց, յորոց վր առնէին զծայրագոյն հսկեցողութիւն, յորս ոչ խորհրդարանն անզգուշանայր և ոչինչ, օրէն զթողութիւն տայր, և էին այսոքիկ, այսինքն։ Զի քահայքն իցէին պարկեշտք, և հաճեալք։ Կուսանքն վեստալիք յոյժ ողջախոհք։ Զէնաորքն, այսինքն, իրաւաբաններքն։ Յոյժ արդարք, և իրաւասէրք։ Զօրավարքն յոյժ հզօրք, և ուժեղք։ Եւ նոքա որք ուսուցանեն զողջոյն, իցեն յոյժ առաքինիք։ Զի ոչ թոյլ տային 'ի Հռոմ, թէ նա որ կամի լինիլ ուսուցիչ դիտութեան, եղանիցիւր աշակերտ մոլութեան։

Յաղագս դիտութեան, զոր ուսաւ Մարկոս Կայսրն և թուղթ մի աստ դրնի զարմանաբար գրեցեալ, զոր առաքեաց առ Պօլիոն բարեկամն իւր։

Գլուխ երրորդ։

Արդեանէին ոմանք ցաղօլանիս, թէ ով իցէր առաւել հարուստ 'ի յերկրի, առյորս պատասխանեալ ասաց. առաւել հարուստն նա, որ առաւել դիտէ։ Դարձեալ հարցանէին, թէ ո՞ իցէր առաւել աղքատ, պատասխանեաց նոցա ասելով։ Նա է ստաւել աղքատ որէ առաւել յիմար։ Իրաւի զի զօրութիւն բանիցս այսոցիկ, արժանի է անձին այնմիկ, որ զայս ասաց, որոյ զճշմարտութիւն յայտ ժամ տեսանեմք փորձառութեամբ։ Այր իմաստուն մինչ սահի, 'ի բազում, և 'ի զանազան դիպուածս բախտի, պինտ կալնու զինքն, զի մի' անկանիցի։ Բայց ոգէտն 'ի յոյժ փոքրագոյն իրս, թէև ոչ սահի, անկանի 'ի վայր։ Ոչ դոյ իր, որքան կորուսեալ և իցէ. զոր դնելով 'ի ձեռս 'ի մատանոյ, ոչ իցէ յոյս վերատանալոյ զայն։ Նոյնպէս և ոչ իր այնքան մեծապէս շահեցեալ, և ապահով, որ եդեալ 'ի ձեռս անմոլ ուրուք, ոչ իցէ կասկած կորստեան նորա։ Հարցեալ եղև Սենոֆոնթէս փիլիսոփային, թէ 'ի մէջ երկուց իրաց զո՞րն իցէր ընտրելոց. այսինքն. լինիլ անմիտ վերհամբարձեալ, և բարձրացեալ, կամ լինիլ խելացի, անկեալ, և ցածացեալ։ Իսկ նա պատասխանեալ

նեալ առաց այսպէս. եւ ունիմ զմեծագոյն ցա-
ւակցութիւն վասն տգիտին վերացելոյ, և բարձրա-
ցելոյն։ և ունիմ յոյժ զմեծագոյն նախանձ առ
իմաստունն անկեալ, և ընկճեցեալ։ Քանզի ի-
մաստունն միայն թէ հարցի ոտիւք վեր ելանէ
առ 'ի ոչ անկանիլ։ Իսկ տգէտն միայն թէ փո-
քրինչ զգայցէ զփոփոխումն բախտին անկանի
առ 'ի ոչ կանգնելոյ երբէք։ Հայր ոք որ մե-
ռանի թողլով զորդին իւր աղքատ, և իմաստուն,
այնքան սուաւել հարատագոյն վարկեա զորդին
այն, որքան առաւել վարկելիէ իմաստութիւն,
քանզհարատութիւն և համարեաց թէ բազումինչ
է թողեալ. Իսկ հայրն այն, որ է թող զորդին
իւր հարուստ, և տգէտ, աղքատագոյն համա-
րեա զորդին այն. իբր թէ թողեալ իցէ ոչինչ
Զայս եմ համախոսելով Անիս, Վէրս հայրն
կայսերիս այսորիկ, որպէս հայր ոք սրտակա-
թիլ սիրով սիրէր զորդին իւր, ոչ հաճեցաւ
սակ զորդին իւր մի միայն վարպետի միում,
զի առնիցէր զնա առաքինի, և ուսուցանիցէր
նմա զմի միայն գիտութիւն, յորում զբաղեցիւր
իմացուածն իւր, այլ եւս զնա բազում վարպէ-
տաց, զի սանձահարիցէին զմոլութիւնս նորա։
Եւ հրամայեաց նոցա ուսուցանել նմա զբազում
գիտութիւս, որպէս զի ունիցէր առաւել վկա-
թութիւնս, և զվարժմունս։ Եւ եթէ կամիցիս
գիտել, թէ որքան իցէ աշխատեալ կայսրս այս
'ի յուսանին, և որքան գիտութիւն իցէ ասա-
ցեալ, և որպիսեաւ յօժարութիւ կամեցեալ իցէ.
կամ թէ զինչիցէ զգացեալ յայսմ պատճառիս
ուսման իւրոյ, կարեմք իմանել այսոքիւքանիւքս
զոր նոյն ինքն գրէ առ Պօլիոն բարեկամն իւր,
որ յայնմ ժամանակի բնակէր 'ի յԱգրիպինայ.
որ այժմ ասի Կոլոնիա զբանս այս։ Աքանչա-
ցիր, բարեկամ իմ, զի մինչև 'ի ծայրն աւ-
ուրց իմոց ոչ թողի առ 'ի ուսանիլ զերս նորա-
գոյնս։ Նա որ ունի զմի միայն կերակուր, և
ոչ կարէ ուտել 'ի նմանէ, թողլով զայն, որ էր
որ-

արդեօք շահաւէտ և առողջ եկիրարկանէ 'ի յու-
տել զայլս , թէպէտ դիտիցէ դոլ այն ՚ի մասակար
ինքեան : Զայս գերազանցուին ունի յինքեան
նա , որ տեսանի զբաղեալ զանազան կերակրովք։
Չի գոլով ձանձրացեալ միով ախորժ , և անուշ
կերակրով , արկանէ զձեռս առ այլ համեղա-
գոյն , և ախորժագոյն կերակուրս , Նա որ ի-
մաստուն է , թարգ առաւել մեկնելոյ , և պար-
զաբանելոյ կարէ զդալ , և իմանալ : Չի որպէս
ամ արհեստք երբեմն , և երբեմն յաջեցու-
նեն , և ամ գիտութիւնք որքան և քաղցերք ի-
ցեն երբեմն , և երբեմն անհամանան , այսպէս
և ա , նա որ ոչ գիտէ եթէ ոչ զմի միայն գի-
տութիւն , թէպէտ իցէ իմաստուն , բարեմիտ
կրեսցէ զվտանգ : Քանզի ունելով զձանձրու-
թիւն , զղջումն առմինն , զբաղեցուցանէ ըղ-
կեանն իւր յայլ իրս ՚ի մասակարս : Աբ ախո-
եանք , և արիացեալք , որք 'ի բաց մերժեցին
զմինքեանց գծուլութիւնս , և թողին զմիշտ
յաւիտենական , ոչ միայն կամեցան ուսանիլ ,
զմի միայն գիտութիւն , որով արիցէին զմտացա-
կանութիւնս իւրեանց , այլև աշխատեցան ոչ սա-
կաւ , յուսանիլ զայլս բազումս , որովք նուրբ
առնելով զնոյն իմացականութիւն , մի՛ մնայցէին
բթեցեալք : Դ՚ յամ իրս բնութիւնն բնակա-
նաբար սակաւ իրաւ յաղի : Բաց 'ի յիմացակա-
նութիւն , և 'ի խոհականութիւն , որք թէպէտ առ
բազումս տարածին , սակայն միշտ քաղցեալս
զգան զինքեանս : Աբդ որովհետև իմացակա-
նութիւնն ունի զայնպիսի իսկութիւն և բարք ,
մինչ զի ազատութիւն անհնազանդի , կենդանակա-
նութիւն ճանաչէ , թեթևութիւն բարձրանայ ,
նրբութիւն թափանցէ , և տգիտութեամբ հոսի
և վայր վայթի , ուրեմն յոյժ հարկաւորէ , ըստ
ժամանակի վերհամբառնալ զնա 'ի յիրս դժուա-
րակիրս , յառաջ քան թէ իջանիցէ առ յիրս
խոտանս , և գռեհիկս : Ամ՚ մասս մարմնական,

որ

որ կարիլի է պատահիլ մահկանացուաց, կամ դեղոջք կարէ բժշկիլ, կամ բանականութիւն կարէ գարմանիլ և հնարիլ, կամ ժամանակն երկար բուժէ, կամ վերջապէս մահն 'ի դրաս հասուցանէ։ Իսկ միայն խմացականութիւն խաւարեալ մոլորութեամբ և սղայանօք, և վատթարացեալ չարակնութիւն, նենդութիւն, ոչ դեղն բժշկէ զնա, ոչև բանականութիւն յարմարեալ չինի։ Ոչև խորհրդականութեամբ օգուտկարի։ Այնք հնադոյնք Փիլիսոփայքն, յայնմ փառաւորեցելում ժամանակին, և յայնմիկ տիրոջ ոսկեզօծում աշխարհս, ոչ միայն ուսանէին զմի իր ոլորով պահպանիցէին և սնուցանէին, զկեանս իւրեանց և յաւելուցուին զհամբաւս, այլ և քրտնէին առ 'ի դիտել զայն ամ դրոս վարպետքն իւրեանց գիտէին, և նորապէս որոնին առաւել ևս գտանել զնոր իմն առ 'ի դիտել։ Յամ. 75. Օլիմփիադայ, ժողովեցեալք բազումք մարդիկք, 'ի գաղաթ լեառն Օլիմփիու 'ի հաշակել զոսնս իւրեանց հանդիպեշպատահեցաւ անդ Փիլիսոփայ մի թէբացի, զամ որ զգեցեալէր, և բերէր ընդ ինքեան, ձեռամբք իւրով էր գործեալ։ Չի զկօշկս ինքն էր կարեալ, զվերարկուս ևս ինքն էր ձևեալ. և արարեալ, զշապիքն ինքնէր գործեալ, նաև զդիրքն ինքնէր գրեալ, և կազմեալ և զթուղթն ինքնինէր զուգեալ, նոյնպէս և զամ իրս զորս ունէր։ Զայս տեսեալ ամենեքեան որք կային 'ի միասին 'ի տեղին այնմիկ ըսկան աքանչանալ, տեսանելով զայնքան արհեստս 'ի մարդոյ միում։ Եղև 'ի բազմաց բազմիցս հարցաքննեցեալ, թէ ուստի իցէր ուսեալ և առեալ զայնքան զանազանութիւն արհեստից, առ յորս պատասխանեալ ասաց, թէ յուլութիւն մարդկային ասիթեղև, զի արհեստ մի բաժանիցիւր 'ի բազում մասունս. քանզի զայն զոր դիտեն այժմ ամենեքեան, պարտականէր զի գիտայցէր զամ մի ոք միայն։ Իրաւի յոյժ դերագունաբար պատաս-

տասխանեաց Փիլիսոփայն Քանզի նոքա որք լուան, եղեն այնքան յանդիմանեցեալք և նախատեցեալք ի բանից յայսցանէ, որքան Փիլիսոփայն այն փոքացեալ ի փառամոլութիւն զգեսաուց իւրոց։ Բողոքիցէ ուրեմն իւրաքանչիւր որ զանհոգութիւն իւրմէ, և մի՝ որ մեղադրիցէ զԺամանակն, թէ կարճ իցէ, կամ զբնութիւն թէ տկար իցէ։ Չի ոչ գոյ իր այնքան կարծրագոյն, որ ոչ կակղանայցէ, և ոչ իր այնքան բարձրագոյն, առ յոր ոչ հասանիցի, և ոչ այնքան հեռացեալ, որ ոչ տեսանիցի։ և ոչ այնքան նրբագոյն, որ ոչ զգասցի։ Ոչ այնքան մթացեալ, որ ոչ պարզիցի, և ոչ այնքան խրթին, որ ոչ բացա յայտիցի, ոչ այնքան բազրոովին, որ ոչ հասանիցի, և ոչ այնքան հատանեցեալ, որ ոչ միաւորիցի, ոչ այնքան կորուսեալ, որ ոչգտաս նիցի և ոչ այնքան անկարելի, որոչ պահպանիցի, եթէ բազրովսրտիւ ի բարիս կրթուիս զբաղեցուցանիցեմք զամ կարողուիս մեր, և զիմացակնուութիւն մեր Տախիցեմք ի յլիս բարձրագոյնս։ Ո՛չ բացասեմ ես, թէ սակաւակար իցէ բնութիւն մեր, բայց սակայն նմանապէս կարեմ խոստովանիլ։ թէ առաւել առնիցէ ծուլութիւն մեր։ Կամիմ հարցանել ցարս վատակենցաղս, և աղաչել զնոսա, զի լիցին բարեկենցաղք, և նոքա իսկոյն դիմեն առ խորհրդակցութիւն իմ, առաջարկելով զտկարութիւնս մարմնոյ իւրեանց ասելով, թէ տկարէ մարմինն բայց զարմանք մեծէ, թէ ոչ կարէ լինիլ։ Չի վասն կերպաւորելոյ, և գտանելոյ զչարութիւս, և վասն ի գործածելոյ զայնս ունին զիմացողութիւն, և ունին զկարողութիւն յարամնալոյ ի յայնս, որոյ յաղագաւ ոչ պակասի հաստատուն նոցա։ Եւ պատճառ սորին է։ Չի ի մոլութիւս, և ի թշուառութիւս կոչեմք զմեզ բնակամս և բնութենականս առ ի առնել, իսկ ի յառաքինութիւն, և ի զբաղութիւս կոչեմք զմեզ օտարացեալս, և տկարս, և բեկանաւորս առ ի գործել։ Մի՝ որ վատահամ

համբաւիցէ զբնութիւն որպէս զիր մի տկար։ Եւ մի՛ ոք ապատամբիցէ ընդդէմ դիցն, թէ իցեն անողորմք, քանզի ոչ զզգակաս յարմարութիւն ունիմք առնելոյ զբարիս, որքան պատրաստեմք առնելոյ զչարիս։ Մի՛ ոք ասիցէ, թէ կամիմ, և ոչ կարեմ հեռանալ ի մոլութենէ. զի բարս ոք կարէ ասել, թէ կարեմ, և ոչ կամիմ հեռանիլ առաքինութենէ։ Ո՛չ կամիմ վատահամբաւել զայլասեռ թագաւորս և զգաւառս օտարաց եթէ ոչ պատմիցուք զչտինացւոց մերոց, որովք կարէ տեսանիլ, թէ ոյք եղեն չարքն, և որպէս կարէին լինել ի բարութիւնս։ Հարցանեմ զծախան, զոր արար Մարկանտոնն ի վերայ Կէօղատարայ, և նախայ բութիւնն և արտատանմանումն զոր արար Սիլլա, որով կամեցաւ աքսորել զազնիւսն Հռոմայ։ և զերդմնականն ուխտն, զոր հնարագիտութամբ արհեստիւ ներդործեաց Կատիլինա ընդդէմ հայրենեաց իւրում։ Եւ զհեղումն արեան, որ ի պատճառս Պոմպէի հեղաւ ի դաշտին Քարտաղիոս։ Եւ զկողոպտումն, զոր արար Յուլիոս Կայսրն ի դանձարանի Հռոմայ։ և զդժնդակ խստութիւնն, զոր ի կիր էարկ անդոյնեն Նէրոն ընդդէմ մարդեաց։ և զհարատաւոր, բռնադատական վարշտութիւնն, զոր գործեաց Կալիգուլա ընդդէմ քեռեաց իւրոց։ և զմատնողութիւնն զոր արար Բռութոսն Լիւսիոս Դայիսոսի։ և զանզգամանկանանդթութիւնն Դոմիտիանոսի, զոր արար ընդ կուսանացն վեստալեայս։ և զմատնողութիւնն զոր ի կիր էարկ Յուլիոս Պարտոկլէս ընդ սիկուլիացիսն։ և զանիրաւութիւնս անբարգամութեան զոր արար Ուլպիոս Մարինոս ի տաճարան Կամփանիս։ արդ կամիմ գիտել թէ զամ զորս ասա պատմեմ, և զայլ բազումս զորս թողում ի պատմել, և զայսքան բռնաւոր հնարս, զորս ի ծախանումն այնքանեաց չարութեանց ի գործ ածին, մ՚ որ արդելոյցոյր արդեօք, եթէ կամիցէին ծախել զայնս ի բարեգործութիւն։ Զայս ամ՚ ասացի քեզ,

բարեկամ իմ Գոլիոն, առ ի պատուասխանել քեզ զայն, զոր հարցանեաս, որ զի զգայցես, թէ յո-
բուսմ իրի իցեմ ծախեալ զժամանակն իմ։ Ու-
րեմն լուր ինձ, զի հաճայ թուսի ասել քեզ։ Անիս,
Աէրս հայրն իմ, զպարգևեաց ինձ զամս ուրթ
տղայութեան, և այնուհետև մինչ ի լրումն
ամաց տասանց երիտասարդի զգաստաւն, առ ի
յուսանել գրել, և ընթեռանուլ։ և ի տասանէն
մինչև ի յերկոտասանն ուսայ ի յեկեղեցիսն զքերականութիւն։ և յայնմ մինչև ի տասն, և
և եօթն ուսայ ի Յաղէքսանդրէ յունէ տասնա-
բանի զճարտասանութիւն։ յայնմ հետէ մինչև ի
լրումն քսանամաց և երկից լուայ ի Կամէտոսէ
քաղկեդոնացուէ զբնական փիլիսոփայութիւն։
յետ այսոց ամացս անցեալոց, եկեալ ի Հռոմայ.
գնացի ի Ռոգոս կղզին, և անդ ընթերցայ
զարհեստս ատենաբանութիւն և տրամաբանութիւն
մինչև ի ՅՇ. ամն տիրոյն իմոյ, և յայնմհետէ եկի
ի քաղաքն պարտենպօլիս որ այժմ կոչի Կայսրի,
ուր ագեայ զամս երիս ընդ Քրիստոնեիսն յու-
նոյ, ուսանելով զգիրս յունականս և եռաւ զիս
նոցա այնքան բարբարով սրտիս, և նոքայ եռաւն ինձ
զինքեանս այնքան յոժար կամաւ, մինչ զի ա-
ռաւել, և հեշտաբար ատենաբանէի ի լեզուս
յունականս, քան թէ գրիչեի ի լեզուս հայա-
նականս, և դարձեալ եմ յետայ բնակեալ ի Հռոմ,
յորեաւ պատերազմ դաչիս, առ յոր Աղրիա-
նոս տէրն իմ ուղևորեաց զիս։ Եւ քանզի ի
բանակի անդ ոչ էր կարասանելոյ զգիրս գիտու-
թեան, եղերեցի ուսանիլ զարհեստս երաժշտական
ի Զէմինիս Կոմոտոսէ, որպէս զի քաղցրութեամբ
երգոցն անդամատիցիւր սիրտս մարմնոյն իմ յո-
մանց մտալութեաց, որք երբեմն ի տան իմում յոյժ
բախմամբ կամէին առնուլ զժառանգութիւն։
Զայլ ամ ինացորդս կենաց իմոյ բարւոք գիտես
դու, զի ծախեցի զայնս առ ի ունիլ զպաշտօնս
ի Հռոմ, մինչև վիճակաւ նախասահմանութեանն,
առանձեցաւ ի ձեռաս իմ միապետութիւն կայ-
սե-

սերական։ Մինչև ցաստ խօսի Կայսր։ Ուրեմն այսու թզկեռով, զոր Կայսրն առ բարեկամն իւր գրեաց, բարւոք ցուցանի, թէ որքան անհեղգ գուութիւն ի՝ցէ անցուցեալ ղժամանակն կենաց իւրոց կայսրս այս։ Մեծաւ իրաւամբ կարեմք հաւատալ զայն ամ, զոր ասէ։ Քանզի այնքանք գերազանցագոյնք գործառութիւնքն, զորս նա 'ի գործ էած։ և այնքանք իմաստութիւնք զորս նա գրեաց, ոչ կարէին արտաբերիլ, եթէ ոչ 'ի մարդոյ յոյժ ղիտնոյ, և 'ի խելաց յոյժ հանճարեղէ։

Յաղագս գրոլոյն Մարկոսի Կայսեր յոյժ հանճարեղ, սոյն պատճառաւն ծաղկեցան բազումք իմաստունք 'ի ժամանակի նոր։

Գլուխ չորրորդ։

Արդարև, կեանն արքայի ոչ այլ ինչ է, եթէ ոչ նպատակ մի, առ յոր ամենեքեան վերանշմարեն, և աւուտակաս սպաս փեսուր մի, առ յոր ամենեքեան շարժեն առ 'ի որսալ զհաւս։ Եւ զայս միշտ տեսանեմք փորձառութեամբ։ Քանզի 'ի յոր կոյսն կողմնացեալ լիցէ թագաւոր ոք, ամենեայն ամբոխն ժողովրդեան ջանան աշխատանօք հետևիլ նմա։ Քանզի ռամիկ ամբոխն ժողովրդեան ոչ ունելով զհանճար 'ի բաց մերժելոյ զչարն, և ընտրելոյ զբարին, ոչ սակաւ հաւաստաբար ի ջանեն առ այն աւուտակերպ փեսուրն, այնք որք հետևին մոլութեց քան թէ 'ի հաւաստի միան, այսինքն յառաքինութենն որոյաղագաւ միանգամ միայն թռչելով կորոյսանեն զաղաւութիւնն իւրեանց զոր ունէին, և ոչ յագեցուցանեն զքաղցն, որում փափագէին և 'ի վերայար ամենայնի, զարձակունք թևքն իւրեանց վերադարձեն 'ի կապանս, 'ի դերութիս, և 'ի ծառայութիս։ Ոչ ազատի 'ի մեծագոյն մեղադրութեէ, և յանջնջելւոյ վատահամբաւութեէ թագաւորն այն որ ունելով զկարողութիւն տալոյ զձեռս 'ի կենցաղավարութիս բարիս, որովայնք յարիցեն 'ի վեր, դարձուցանէ զտոս իւր 'ի

չարտուղութիւն, որով ամենեքեան ընկղմիցին։ Բայց թարց համաբաղդատութեան յոյժ մեծագոյնք են անպգամութիւնքն ամբոխին, քան զանհոգութիւն թագաւորին. քանզի մի ոք որ չարտպէս կեայ, եթէ հեռևիցի նմա այլ ոք զկնի նորա, ոչէ զարմանք Ուրեմն է զարմանալի, եթէ հեռևիցեն ոմանք զի ոչէ իր նորագոյն իսկ եթէ հեռևիցեն բազումք ոչեմ, է իր զարհուրելի, բայց հեռևիլ ի յիրս յամենայնս ամենեքեան, է մեծ գայթակղութիւն։ Եթէ ժողովուրդն իցէ այնպիսի, որպիսի պարտէ լինիլ, մանաւանդ մինն վասն բազմաց վերադառնայլ ի չարէն առ բարին քանզի բազումք վասն միոյ ուրուք դառնայցեին ի բարւոյ առ չարն։ Արդարև ամ ոք թէպէտ ուրքան տգէտ և իցէ, բարւոք գիտէ, զի եթէ պարտանդիմք մեք հնազանդիլ թագաւորին մերում ի յիրաւունս և զգաստասանութեան նորա, սակայն ոչ պարտանդիմք հեռևելոյ զվատթար կենցաղավարութեանն նորա։ Բայց զինչ ասացուք։ Չի այնքան մեծէ վարկ ցեալ աստուծոյ զհեշտութիւն անանց խաբեանց, և այնքան ցածուցեալ խրախտութիւն կայսերական, մինչ զի թարց ոչինչ ամենի իմք խոտեմք զհրամանս, և ոչինչ համարելով զարդար հրամանս, նորա հեռևիմք յոգի կենցաղավարութեանէ։ Որ եթէ ունկնդրեին թագաւորք զայնքան մարդկեան բարիս, որք կատարիցեին զայնս, զոր նոքա հրամայեն, զոր քան ունին զմարդկեան, որք հեռևին արարմանց նոցա, երդուելով ասեմ, թէ ոչ ոմիսոյանայր բանս վասն չարաձգակաց, լուծ վասն հայհոյողաց, շղթայս վասն գերեաց, տոգունք վասն դարանադրծաց. սուր վասն շնացողաց, դուժ վասն աւազակաց, կախաղան վասն գողից. Կամիմ սալ զօրինակ վասն համայնից այսոցիկ, որով կարասցի տեսանիլ ճշմարտութիւն ասացելոցս։ Եթէ թագաւորն ըղձահանկեցեալ, այսինքն յօժարեալ ի յոր, ամենեքեան եղանին որսորդք։ Եթէ

'ի խաղս թղթոյ , ամենեքեան եղանին խաղաղ-
յողք , եթէ 'ի գէնս, ամենեքեան կամին զինուո-
ւիլ , եթէ 'ի շնութիւն , ամենեքեան շնանան , եթէ
յանզգամանայ , ամենեքեան խելագարին , եթէ
իցէ առաքինի , ամենեքեան սատանայ զգօնուի ,
եթէ իցէ պարեշտ , ամենեքեան սանձահարեն
զինքեանս , եթէ իցէ վատաբարու , ամենեքեան
իցեն սմարդիկք , եթէ իցէ խնամարկու , ա-
մենեքեան եղանին դթածք , եթէ իցէ իմաս-
տուն , ամենեքեան ուսանին : Այսպուրեամն ոչ
մեղադրիցուք միայն զներկայս ժամանակակիցսն
մեր , եկեացուք 'ի յիշումն ոմանց թագաւորաց
ժամանակաց անցելոց : Ո՞ որ ընթերցեալ իցէ
զդիրն Սէսոս Զէրօնացւոյն , որ անուանակոչն
զանազան ըղձահակութիւն , զոր ունիլ կամեցան
թագաւորք , գոսանէ , զի Ռօմուլոս հիմնարկիչն
Հռովմայ, յոյժ պատուէր զքարտիսրսն . Նումա
Պոմպիլիոս յաջորդն իւր զքահանայս, Պաւլոս Է-
միլիոս զնաւավարսն , Կամիլոս Հօրատիոսն և
զորսորդսն Սիլա զզենադրծս Մարիոս ոսոխն
իւր զքանդակագործս Յուլիոս դայիոս Կայսր
զարձուցեալս զործսն Ըկկիլիոն զղօրապետս , Օ-
գոստոս Օթաւիանոս զգնդակախաղս, Կալիգուլա
զաղաւաշս և զկաւատս Տիբերիոս զգագգուիչս 'ի վա-
վաշոտցանկուն : Անողորմ Ներոնն զսրամարժս,
Կլաւդիոս զգրադիրս Վէսպասիանոսն քարի ըղ-
պատկերանկարս Տիտոս որդին նորա զարհեստս
երաժշտականս , Դոմիտիանոս չարադոյն եղբայ-
րն նորա , զնետաձիգս : և դեր քան զամ կայ-
սրն մեր Մարկոս Աւրելիոսն միշտ սիրեաց զա-
մատուանն Զանազան ըղձահակութիւն , զորս
ունեցան թագաւորքն , առ զանազանս իրակու-
թիւնս , որպարին զանազան ներգործութիւնս 'ի բա-
զում անձինս օգնական կամ անօգնական լինելոյ
ժողովրդեանն : Եւ քանզի ռամիկք առաւել ակն
արկեն առ յօգուտն , քան թէ առ իրաւունն ,
զայն արհեստսն համարեն յոյժ օգտակարք , առ
յոր թագաւորքն զինքեանս առաւել ըղձահա-
կե-

կեցեալս ցուցանեն։ Զայս ամ ասեմք, առ 'ի ցուցանել, թէ որքան երջանիկ, և պատուեցեալք եղեն իմաստունքն 'ի ժամանակի Կայսերս այսորիկ, որում հետև Կայսրս այս այնքան սիրեր զիմաստունս։ Իրաւի եթէ պատմագիրքն ոչ ասեն զմեզ, 'ի ժամանակէ Զէնինս Հռովմայեցոց (որ եղև առաւել բարեբախտեցեալ ուշնեղով զիմաստունս իւր բարեկամս, քան թէ զտիչ լինիլ նորակերպ, և անուշահամ կերակրոց) մինչև 'ի Մարկոս Աբրելիոսն, անցեալք էին։ 17։ Կայսերք, որք եղեն այսոքիկ։ Ցուլիոս Օգոստոս, Տիբերիոս, Կալիգուլա, Կլաւդիոս, Ներոն, Գալբա Օթոն, Վիթելլիոս, Վէսպասիանոս Տիտոս, Դոմիցիանոս, Ներվա, Տրայանոս, Ադրիանոս, Անտոնինոս, և Աբրելիոս 'Ի մէջ այսոց ամենից, երկուքս միայն դտանին, որք եղեն սիրողք, և հովանաւորք գիտանոց, այս սինքն Նէրվա, և Տրայանոս որպէդ իրենիւր։ Իսկ այլք ամենեքեանք, ոչ միայն եղեն աշակերտք ստութեան, այլև եղեն խարազան, և ՀԱՅՈՑ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՆ։ Երբեմն թէ ՃՇՄարիս լցեն այս։ Քանզի Յուլիոս հալածեաց զՔԻՆԷՐՕՆ, Օգոստոս Օթաւիանոս աքսորեաց զՕՎԻԴԻՈՍ, Տիբերիոս էարկ ջրհորմի Հքալուշիոս Կալիգուլա գլխատեաց զՍՈՐ ատենաբանս միանգամայն, Ներոն եսպան զվարպետն իւրոյն Կլաուդիոս բանտարկեաց զուսկանոս հօրեղբայրն իւր Օթոնոս կախեաց զպարտուհիս, Դոմիցիանոս աքսորեաց զՇՄ ատենաբանս 'ի Հռովմայ, և առ 'ի ցուցանել առաւել զՍՈՐԱԹԵՆ իւր, մինչ մերձենային իմաստունքն 'ի դուռն մի առի աքսորիլ, ընդ այլ դասուն մտանէին ազատաշէն, որք 'ի յեղբօրէ իւրմի Տիտոսէ էին արտաքսեցեալք։ և որպէս ասեմ զայսպանէ սակաւուցս, կարէի ասել և զայլոց բազմաց։ Իրաւի ոչ էին այսպիսաբար ընտրեցեալք 'ի ժամանակի բարեբարոյ Կայսերս այսորիկ։ Եւ ՃՇՄարտութիւն երևի 'ի բազում գերազանցագունեղ

մարդիկս, որք տեղակք եղեն զանազան դիտու-
թեանց, և ծաղկեցան 'ի բազում հանճարեղութիս
'ի ժամանակի որ։ Եւ Զուլիոս Կապիտոլինոս
Հռաւէ զոմանց 'ի նոցունց, որք են այսոքիկ։ Ա-
ղէքսանդրոս յոյնքն Տրասիանոս, Պոլինուէ,
Էութիքիոս, աննիս, Մարբիոն Քաննինիոս Է-
բոգիանոս Քորվիոն, Կուռնելիոս, Ապոլոնիոս,
Նիլոս, Սեստոս Զէրոնացին Ջունիոս Ռուստի-
կո, Կլաւդիոս Մակսիմ, Զինա Կաթուլ, Կաւ-
դիոս Սէվէրս, Դիոնէնիթ յոյժ մեծահամբաւ
պատկերանկարն, Վոլուսիոս Մէթիանս, յոյժ
մեծ անուն, և գիտակ օրինի։ Սոքա ամենե-
քեան կային միշտ յապարանի, և 'ի ներկայու-
թեան նորա, քաց այլոց բազմաց, որք գային 'ի
Հռոմ, և տարածեցեալք էին ընդ ամ'լիրոմունս
Իտալիս։ Էր իր զարմանալի տեսանելոյ 'ի յայն
ժամանակս, թէ որքան իցէր բազմութիւն իմաստ-
նոց, որք ծաղկեցան։ Ոչ գոյր հայր, որ ուն-
ցէր զերկուս որդիս, որ ոչ մուծանիցէր զմին-
'ի յուսանն, և զմիւսն ըստ օրինի Հռոմէականի
տայցէր 'ի վինուորութիւն։ Գիտէին արդէն ամ-
նեքեան, թէ իւրաքանչիւր մանուկ եթէ իմաս-
տուն իցէր, զեր քան զամենեսեան պատուելիր
'ի Կայսերէ։



Յաղագս մահուան Վէրիսիմոնի որ Թարքմանի Աշմորատաղուանեղ որդւոյն Մարկոսի, որ յոյժ սիրէր։

Գլուխ հինգերրորդ։

Քիայն զերկուս որդիս արուս ունեաց Մարկոս Աբդելհան Կայսրս։ (Ըստ որում պատմէ Իրոդիանոս) անդրանիկն կոչիւր Կոմոդոս, և կրտսերն կոչիւր Վէրիսիմոս, մանուկս այս եղև յոյժ գեղեցիկ մարմնով, և յոյժ տուաքինի վարուք, և գեղեցկութիւն իւրով քարշէր լինէր զաչս բազմաց, և բարեաւ յենմանէն կոչուցեալ էր, և յափշտակէր զսիրտս ամենեցուն։ Իր մանուկս այս յոյս մեծ ժողովրդեան, և փառք ծերունւոյ հօրն իւրոյ։ Եւ թէպէտ միւսն գոլով դրանկածին, բայց ասկայն, Կայսրն սահմանադրեալէր լինէաներ, թէպէտ իցէր յետնածին Վէրիսիմոն, յաղագս աւագինութիւն իւրոյ թագաւորիցէր յառաջ, և այն որ ծնեալէր յառաջ, վա՞ ապարդիւնաւորութիւն իւրոյ իցէր ժառանգահատեցեալ։ Բայց որպէս բազմիցս սովորէ պատահիլ, զի բարիք ցանկութիւնքն միջաբեկէ լիցին քախտիւ ձախորդականաւ, զի Կայսրն 52. տարւոյ, և Վէրիսիմոն ամաց 16. իցէ, փառքն Հռոմայ, յոյսն հօր, և կեանն որդւոյ միանգամայն ունիցին զվախճան։ Եւ եղև այնքան ողբու

և ծերն վասն յուժգին տրտմութեան, և դառնա-
կսկիծ ցաւոյն ոչ ելանէր 'ի խորհրդարանն ։
Եղև Հռոմ յոյժ ցաւակիր, և խորհրդարանն
զաւուրս բազումս ըսկսաւ փակիլ և առանձնա-
նալ 'ի բարձրագոյն Կամփիդոլիոն ։ և որպէս
մլրբին հողմոյն ձեռ այնոյ ընդ փոքու իմիք
համաբէ զշաղտալն ցողոյն դարնանայնոյ, և զիրս
պատուոյ, և մեծարանաց առնեն բռնութեամբ մո-
ռանալ մեզ աներջանկութեան բախտին, որպէս
այր 'ի յաղնուագոյն տոհմէ արթայեալ հոգով,
մինչ դեռ մնայ ցաւագնութեան 'ի մէջ սրտի ար-
մատացեալ 'ի ներսուստ, յիշէ քշտել, և հա-
տանել զձիւղս տրտմութեան, որք են 'ի ար-
տաքս ։ և կեզծաւորութեամբ երևեցուցանելով ար-
տաքոյ զուրախութեան, և 'ի ներս ուռնելով զցա-
ւակրութիւնսըմբերելն ։ Ուրեմն Մարկոս Կայար,
որպէս այր մի, ոյոյ կարկտահար եղեալ
այգին յորում բոլորովիմբ եգեալէր զամ յոյս
իւր ։ և յետ յայնորիկ հաւանեցուցանէ զինքն,
որոնել զանկեալ պատուզն, որք գտանին 'ի ներ-
քոյ ծառոց ։ Մեռեալ ուրեմն որդին իւր Ա-
ըխիմոն յոյժաբերականն իւր, Հրամայեաց ածել
առ յինքն զերեց որդին իւր Կոմոդոս զՄիայ-
նակ ժառանգն իւր, որ 'ի կենդանութեան եղբօրն
իւրոյ, ոչ էր մտեալ 'ի պալատն արքունի, և
տեսանելով զվատթար, և քան զսափն առաւել
համարձակութիւնն որդւոյն, և յիշելով զամենա-
խառնութիւն, և զհանդարտ կացութիւնն բարուցն
մեռեալ որդւոյն, հեզանելին արտասուք յաչսն
օր, ուրոյ յաղագաւ տեսանելով քառասան մայրն
իւր, որ սիրէր զնա արտակարգ սիրով, Հրա-
մայեաց նմա 'ի բաց կալ 'ի ներկայութենէ հօրն ։

Յաղագս վարպետաց, զորս էառ Արիկոս Կայսր առ 'ի զարքաշուցանել զորդին իւր։

Գլուխ վեցերրորդ։

Էպէտ զբաղեալէր սիրտն Ներուանայն վասն մահուանն որդւոյն, սակայն ոչ էր այնքան զբաղեալ յաւուրս, որ մոռանայցէր զգուշութիւն, և քաջամիտ հոգեսնակութիւն զարգացուցանել զանդրանիկ որդին բարուք, որ թագաւորելոցէր, Իրաւի այնպէսիք են որդիք արքայից 'ի չափ հասակի երիտասարդութիւն, որպէս իցեն անուշցեալք 'ի դեռահասակ երեխայութիւն։ Որպէսզի Ճանաչելով հայրն զարգանալ յենուն կերպն և բարքն տղային, զի ոչ համապատասխանէր 'ի բարի կառավարութիւն Կայսերականի, հրամայեաց Կայսր բարի, 'ի յամ դաւառաց 'ի տալիս կոչել առաւել դիտունս 'ի դիրս, և առաւել անուանիս 'ի հմտաւս, և առաւել առաքինիս 'ի յանձնելիս։ Եւ քանզի ոչ 'ի բազում իրս գտանի առաւել վատահամբաւութիւն վատահամբաւեցելոյ վասն չարութեան, քան թէ մեղանչելոյն վասն մարդկայնոյ տկարութեան, նոյնպէս 'ի բազում իրակութիւնս, առաւելի հմտաւն բացայայտեցեալ, քան թէ առաքինութիւն գաղտնի, և ծանկեցեալ։ Յաղագս այսր պատճառիս։ յետ ժողովելոյ զամ դիտունսն, Հրամայեաց քննել, և ունել զհարցափորձութիւն զարենէ հայրենեաց նոցա, և զհաւատարմութիւն տանց նոցա, և զառ և զորէ ստացուածոց նոցա, և զհաստատամտութիւն 'ի մէջ դրացեաց, և զմաքրութիւն կենաց։ զծանրակացու-

ցութենէ անձանց, և վերջապէս զգիտութիւնն։ Հրամայեաց կարգաւորաբար լինիցիւր քննութիւն, զատեղաբաշխն յատեղաբաշխութիւն, զերբաժիշտն յերբաժշտութիւն, զատենաբանն յատենաբանութիւն, և նոյնպէս 'ի յայլ գիտութիւս, և զայս արար, ոչ 'ի միում աւուր, այլ 'ի բազում աւուրս։ և ոչ միայն հարցափորձու

նոցն այնոցիկ եղև հրատարակեցեալ , ոչ եղև այն ամօթ վասն նոցա , այլ համբաւ առաքինադոյն , որովհետև այնպիսեաւ քաղցերբք բանիւք , և պարգևաք հօրն չուեցեն իմաստունքն այնք յաղթեցեալք և գոհուանակք , որպէս մնացին շատացեալք յաղթօղքն . և գրաւեցեալք պարգևաք ընդ որդւոյն։ Բայց ոչևս այսու շատացեալ արքայն քարի , հրամայեաց զի վարպետքն բնակիցեին 'ի պալատի իւրում , և լինի ցեին սեղանակիցք իւրք , առ 'ի տեսանել , մինթէ կեանք , և վարքն իւրեանց համակերպք ի ցեին ընդ դիտութիւնք իւրեանց կամ թէ բանասեղծականք , և հռետորականք ասացուածքն իւրեանց համապատասխանիցեին 'ի կատարումն գործոց իւրեանց։ Քանզի էր իր զարմանալի տեսանել զհոգս , զոր ունէր Կայսրն 'ի հայել 'ի դնալ և 'ի յուտելն նոցա։

Յաղագս իրաց, որք պատահեցան հնոցից իմաստասիրացն և, յաղագս որոց եղեն սրբասաքսեցեալք 'ի պալատսն ալքունա-կանէ։

Գլուխ եօթնեքսան։

Զանազանն սեպտեմբերի, և յաւուրն մեծասան երրորդի սոյն ամսոյս, յորում հուշակիւր ոսն Ծննդեանն Կայսեր. յայնմ փողոցակին Սենթէլիու և 'ի նոյն յարկոջ, յորում ծնեալներ Կայսրն։ անդ աղաւաղ մի առնէր զայն, զոր սովորք են առնել նմանիք նոցա, 'ի յայնպիսի պատճառի։ Իսկ Կայսրն դիտէր առաւել 'ի յիմաստուն, քան թէ 'ի խաղն, և 'ի կատականս անմտից։ Անդ ետես, զի հինկք 'ի յիմաստասիրաց անտի, բախեին ասիւք զգետինն, և շարժէին զինքեանս 'ի յաթոռի յայսր, և յայնր, զծափս հարկանէին, խոսէին բարձրաբաբառ ձայնիւ, և ծիծաղէին չափազանցութիւն. և այս ամ՚ ոչ եղև անտես, և բարւոք նշմարեցեալ 'ի Կայսերէ։ Արդ 'ի յաւարտիլ ոսնախմբութեանն կոչեաց Կայսրն զնա մեկուսի, և ասաց ցնոսա զբանս այս։ Ո՞վ բարեկամք ամենայնեն դիք իմք ընդդիս գթութիւնքն խրեանց, և երթ ելցեն ընդ ձեզ բախտքն բարիք։ Եւ ընտրեցի զձեզ, զի 'ի տան իմում յիմարքն եղանիցեն դիտունք, բայց տեսանեմ, զի դիտունքն եղանին յիմարք։ Ոչ դիտէք դուք, զի 'ի կայծական կրակարանի փորձի ոսկին և 'ի մէջ թեթեւայ խելաց փորձի խոհեմն ոսկին մաքուր ջատագովէ զզուութիւն զի-բեթիւր 'ի բորբոքեցեալ կայծն, իսկ այր խոհեմ

Ջա-

ջատագովի պիմատութիւնն իւր 'ի մէջ յիմարացս։ Ոչ գիտէք գուք, թէ յիմարն ոչ կարէ ճանաչել 'ի մէջ յիմարաց, ուստի իմաստունն 'ի մէջ իմաստնոց. Առակաբանութիւն հին իմաստասիրացն է, որք ասեն, թէ հակառակն եդեալ ընդհակառակին, իւրաքանչիւրոյ որպիսի գոլն առաւել յայտնապէս երևի, որէ յոյժ ճշմարիտ։ 'Ի մէջ իմաստնոց մէջինն յիմարքն, և 'ի մէջ իմարաց փայլեն իմաստունքն։ Ոչ գիտէք գուք, թէ որքան վատահամբաւիրէ, առնել վարպետ թագաւորաց զնա, որ է աշակերտ ազաւաչից։ Ոչ գիտէք, գուք, թէ 'ի հոգւոյ ախոյանէ յաղաղակ հաճեսուութի մարմնոյ, հանգարտուն անձին և բարեխառնութիւնք զուիչնչ օգուտ մարդոյ ունիլ զեզբան ճարտար, զյիշողականութիւն կենդանի, զգաստութիւն զայծառ, զգիտութիւն կատարեալ, զճարտարաբանութիւն խորագոյն, զոճ հանդէպ, եթէ 'ի միասին շնորհացս այսպիսեացս ունիցի խառնեցեալս զբարս վատաթարագոյնս, և չարակենցաղս։ Չինչ օգուտ իմաստնոյն ունիլ զբանս բարւոք մեծաքնոնս, և առնել զգործս անզգոյշս, և յանդուգն ընդդէմ կամն իմաստութիւնք զբանս յոյժ չափաւորս և պատեհաւորս եթէ գործովք իւրեանց են անպատեհք և արտաքոյ համեստութեանց։ Լաւ որպէս զի մի թուիցի ձեզ թէ առանց պատճառի իցէ զոր ասեմ, կամիմ առաջարկել ասա զորէն հնագոյն Հռոմայեցւոց։ 'Ի եօթն երրորդումն մասին օրինի հարցն մերոց Հրամայիւր, թէ առաւել ծանրագոյն պատիժ տացիւր իմաստնոյն քան թեթևագոյն յանցանաց հրապարակաւ գործեցելոց, քան թէ մարգասպանի միում, որ սպանեալ իցէ զոք ծածկաբար, և ոչ յայտնապէս։ Ահ թէ որքան արդարն օրէնս այս, և արդարագոյնք նոքա, որք զայս Հրամայեցին։ Քանզի յիմարհոգագոյնն մի, ոչ սպանանէ, եթէ ոչ միայն զմարդ մի սրով բարկանէ իւրոյ։ Բայց մարդն այն, որ իմաստունն է

տունէ վարկեցեալ, սպանանէ զբազումս, ընդ չար
օրինակաւ կենաց իւրոց Յոյժ յուշադրութիւն, և
հետաքրքրութիւն զաւգեալէ իմ զի յայնժամ ակաւ
Հռօմ հմնաքակ լինիլ, յորժամ խորհրդարանն
մեր չքաւորեցաւ 'ի բնակողաց յաղաւնակենցաղից
խորհրդակցաց, և առաւուցաւ բնակչաց օձաբարուք
իմաստնովք։ Քանզի սրբազան խորհրդարանն այն էր զարդարեցեալ խոհեմագունիւք
ծերովք, և ոչ թարց արտասուաց ճառեմ զայս իսկ այժմ լցեալէ տղայիւք բարբանջողաք։ 'Ի ժամանակին վաղնջականի, յերկրին
յունաստանեաց իգպրատանն, զճարտասանութիւն
միայն ուսուցանէին թողլով զգործս, և 'ի Հռօմ
ուսուցանէին առնել զգործս բարիս, թողլով
զիւսակցութիւնս։ Իսկ այժմ զկատարեալն տեսանեմք։ Զի յոյնքն զյոքնանուսս աքսորեցին 'ի Հռօմ, և Հռօմ զիմաստունս, որք գործէին զբարիս աքսորեաց 'ի յունաստան։ Եւ ցանկամ մանաւանդ գոլ աքսորեցեալ 'ի յունաստանում ընդ
իմաստնոց, քան թէ բնակիլ 'ի Հռօմ ընդ խելագարից։ Երդնում ձեզ բարեկամք, զի գոլով
ես մանուկ, տեսի 'ի խորհրդարանին զԿիլիսոփայն Քրիսպոս սպասաւորն բարւոյն Տրյեանոսի, առնենաքանելով բազում անգամ, և էր այնքան քաղցրալուր 'ի յաստէն իւր, մինչ զի իւրաքանչիւր ոք 'ի յատենաքանիլ նորա, քանիցս
անչամ խօսէր սպասէին նմա, առաւել քան
զերիս ժամս, և ոչ ասէր զբան մի, որ ոչ իցէր
արժանի մշտնջենականի յիշատակի։ Իսկ 'ի յայլ
կողմանէ, ելանելով արտաքս 'ի յատենէ, ոչ երբեք տեսի զգործս զորս առնէր, որ վասն նոյն
գործոցն ոչ արդիւնաւորիցիւր զպատիժս ծանրագունեղս։ Իրաւի էր իր այլանդակ, և զարհուրելի տեսանել յայնժամ, և լսել այժմուս
զպատուականութիւն ստենաքանական ոճից նր
և զվատահամբաւութիւն անձին իւրոյ։ զի բոլորն Հռօմիհանայր ընդ մեծավարկ և 'ի բարձրայուզիսս նորա։ և զբոլոր Հռօմ, և 'ի տա-

լեա կային դայլեագրեցեալք ընդ չարադրեալ մոլութիւն նորա։ Զամս 400. յարատեւեցին յա-ջութիւնքն 'ի Հռոմ, և այնքան Հռոմ եղև Հռոմ, որքան եկաց ընդ նմա միամտութիւն և լրջմտութի 'ի բանս, և հանդիսաւորութի 'ի գործս։ Զբան մի ասացից ձեզ, որ դնէ զմեծ վրդովումն 'ի կենդանիս, և ածէ 'ի զարմացումն զմեռեալս։ Զի զհամայնից հնագունից, ոչ երբէք ընթերցա զբան մի, զոր ասացեալք իցեն թեթևամտութիւք, ոչև զգործ մի չար, զոր արարեալք իցեն չարութիւ։ Զինչ էր 'ի տեսանել զդարս այս փառաւորեցեալս այնքանիւք փառաւորեցեալովք ծերունիւք վայելել խնդութիւ։ Իսկ ժամ 'ի տիոջ ժամանակիս մերոյ ապականեցելոյ այսքանիւք ապականեցելովք տղայիւք։ Իրաւի ես տառաւել նախանձիմ ընդ դերա հռչակ գործս նոցա, քան թէ ընդ հատորս գրեալս մերոց զի նոքա լուութիւ, և գործովք թողին մեզ զօրինակ զարմանալի, իսկ զդիտուն յայտ ժամանակիս ասեմք հրապարակաւ, և թաքնաբար գրեմք զվարդապետութիւն կորստեան։ Արդ վասն այսորիկ ասեմ և զ՝ այլ ինն օրինակի ասացից ձանաչիցէք զայն զոր զգամ 'ի յիս։ Յորժամ թագաւորութի 'ն Աքայացոց ստորագրեալ խոնարհեցոյց զվոնգաւոր զեղջիւրս իւրս հանդերձ հպարտացեալ գլխով իւրով, առ հանդարտ կապանս, և համեղ լուծն Կայսերութի Հռոմայ, կամեցաւ բացայայտ գաշնադրութիւք հաստատել թէ կամիր մանաւանդ հուրբնկալ լինիլ 'ի յերկրի իւրում զվնասուորական ջոկն պահպանեալ զոր բոլոր տիրու, քան թէ տեղի տալ զմիոմն զաշակերտաց ատենաբանիցն Հռոմայ։ Յայնմ ժամանակի կայր 'ի Հռոմ դեսպան մի Աքայիու, որ էր արդարև այր բարեխառն 'ի բանս իւրս, համեստ 'ի վարս, և սպիտակագեալ զհերս գլխոյ իւրոյ։ Հարցին զնա ծերակոյտքն, թէ վասն այր պատճառի էր յամառեալ և այնքան խիստ զի կամէր տանիլ յերկիրն իւր զզինուորս ժլատա-

և ընտիպօղս և զբիրաս , և ոչ զմարդիկս իմաս-
տուն , որպիսիք են ատենաբանքն : և նու պա-
տասխանեալ ասաց , զայս կամիմ առնել վասն սի-
բոյ , զոր հայրենին իմ ինձ էն պահանջէ , վասն
յարգական ծանրուն իմոյ , զոր պահանջէ անձն
իմ , և վասն համարձակութեն , զոր պահանջէ
սպասաւորութին իմ : յետոյ սկսաւ ասել այս-
պէս : Ո՞վ հարք համարձեցեալք , ով ժողո-
վուրդք բարեբախտք : են արդէն աւուրքք երկուք ,
յորս ոչինչ ուտեմ , և գիշերքք երկուք , յորս ոչ
ննջեմ անիծանելով զբախտն , որ էբեր զիս 'ի
տաքիս , և հաւաջմամբ սրտիս , հոգւոց հա-
նելով գանդատեմ զդիցն , որք թողուն զիս
ինչ կենդանի , զի կամ եդեալ 'ի մէջ սալի
կարծրագունի , և կռանի վշտացուցչի , զի յամ
կողմանէ տեսանեմ յոյժ խստագոյն , այսպէս
զսայն որոյ վերայ կամ , նոյնպէս և զկռանն զոր
ունիմ 'ի վերայ գլխոյս : Զի 'ի մէջ երաց վտան-
գաւորաց , որոց գոյ երկիւղ կորուսանելոյ ,
առաւելագոյն վտանգաւորն է ընտրողութիւն :
Բռնադատէք զիս , զի ընտրիցցեմ , և իմաց-
ուածն իմ ոչ բաւէ , ոչև գիշն ինձ ուսուցանեն ,
թէ զոր ընտրիցեմ , եթէ ընտրիցեմ զբաղում զի
նուրս , ձանձրացուցանեն զնտանիսն , և եթէ ըն-
տրիցեմ զփաստաբանս , բոլոր ժողովն թագաւո-
րութեն 'ի վտանգի եղիցի : զինչ արարից ես ողոր-
մելիս , կամ զինչ գրիցեմ տրտում գավառին ,
որ ինձ սպասէ : և զանգթութիս ձեր որով հրա-
մայէք ինձ առնել զնորութիս այս , ես սահ-
մանագրեալ եղերեմ տանել մանաւանդ զզինա-
որս , որք ծախեն զինչս մեր , քան թէ զնոսա ,
որք սպականեն զբարի սովորութիւնքս մեր : Քանզի
Լէդէոն մի զինորաց , վա՜ չքաւորութեն վշտա-
ցուցանեն զգէօղ մի , բայց ատենաբան , կամ փաս-
տաբան մի խարդախութիւն իւրով , սպականէ
զբոլոր թագաւորութեն մի : Այդ սեռէք բարե-
կամք (ասաց Կայսրն առ յիմաստունսն այնո-
սիկ) թէ ոչ՝ վերացեալ , և բարձրացեալ է հա-
ւա-

աստարմութիւն ոգիտաց. և ոչ կորուսեալ իցէ վարդապետացն։ Չի աբայեացիքն կամեցան մանաւանդ կերակրել զաղքատսն։ զոր, քան թէ ունել զդրացիս իւրեանց զատենաբանս բազմախօսս։ Արդ վերջացեալ խօսակցութիւնս, ելեալ գնացին հինք վարդետքն մեծաւ ամօթով, և մնացին ինքնունքն մեծաւ երկիւղիւ։ Բայց 'ի բոլոր ժամանակի, որք եղեն ամիսք երկուք Իշխանն Կոմոդոս չեւեւս էր ելեալ 'ի տանէ դահեակաց, զի նք ուսուցանէին զվարդապետութիւն, հանդերձ այսու էր խոհ փափկութիւն, և ոչ 'ի հանճարեղութիւնս խելաց Իշխանն Կոմոդոս թէպէտ ծնաւ 'ի Հռոմ 'ի փողոցն Մենթիէլը, սակայն եղև անեալ 'ի նաւատանգստեանն օտոիս, և եղև այնքան սիրեցեալ 'ի քաւատունէ Մօրէ իւրմէ, որքան եղև արհամարհեցեալ 'ի Մարկոսէ Աբրէլեան է հօրէ իւրմէ. և երկոքեանքն ուղղին զերաւունք։ Քանզի մայրն ունէր զինքն հաւատաքար մայր որդւոյն, և որդին զբարս, և զսովորութիւնս երևեցուցանէր նմանակ մօրն։ Իսկ հայրն կայր 'ի յերկբայութիւն, մի թէ իցէ բնական որդի իւր։ Եւ որդին երևիւր սակաւաց նմանութիւն ունել հօրն 'ի յառաքինութիւնս։

Յաղագս խօսակցութեան միոյ, զոր արար Մարկոս Կայսրն ընդ վարպետացն, որք հանդերձեալք էին սնուցանել զիշխանն Կոմոդոս։

Գլուխ Ութներորդ։

Եւ անցանելոյ համայնից վերոյ ասացելոյ, Կայսր բարի, առ 'ի տալ զհամար զոր արարեալ էր, և առ 'ի նախահոգալ զոր առնելոցեր, կոչեալ առանձնակի զիննուսնան այնս դիտուսնան և ասաց նոցա այսպէս։ Համբաւ մի մեծ հուչակեցեալէ 'ի Հռօմ', զոր արարի ես 'ի թագաւորութեան իմում', առ 'ի հոգալ մեծաւ ստիպմամբ 'ի բացայայտումն համայնից 'իմաստնոց, և զհետոսաքրքրուսն զոր ցուցի ինալ ընդ բարեդայնսն։ Եթէ ճշմարտութեամբ խոհեմք իցէք, 'ի յոչ իմիք իրացս յայտցանէ դայթագղեցիք։ Խորշումն յիրաց չարաց յառաջադայի 'ի յուշիմութէ, քայց զարմացումն 'ի յիրաց բարեաց բղխի 'ի փոքրութէ խելաց, և 'ի սակաւութէ փորձառութեաց։ Ոչ 'ի կիր արկանի զարմացումն 'ի յիմաստունս, և ոչ կարէ հպատակել զնոսա քանզի ցուցանել զզարմացումն յիւրաքանչիւրում պատշաւի և ըզդալ աղմուկն վրդովէ բացարձակապէս քարոզումն և ցուցանէ թէ ոչ է հաստատուն 'ի յիրի իմիք։ Եւ արարի ձեզ զանձուկ քննութեան և զներազնութիւն, զի պարտին 'ի յայնպիսիսն անցանել նոքա, որք ընդունելոցք են զբարեկամութիւն անձկոդայնս։ Բարեկամութիւնքն ա-

բարեկեցեալք ըշտապրնթացուք, և արտորմամբ, 'ի յերիս աւուրս ամենամանան և ձանձրանան։ և է կանոն յայտնագոյն և անձամբ իմով բազմից փորձաւի, զի զբարեկամս զորս դիւրաւոյ ընդունեմք դիւրաւոյ և թողումք։ Բայց բարեկամքն այնք, զորոքնեմք առանամք, են ճշմարիտք բարեկամք և հաւատարիմք, որոց կարեմք հաւատալ։ ստեմեռ, եթէ ոչ ինչ հանդիպեալ ինձ ընդ ալ Եւորի միում Հռոմէացոյ, զոր վերադեանց նոր, և սպիտակ հերացն, կոչէի հայր, և նա վասն սիրոյ, և վարդապետութեան կոչէր զիս որդի։ Սա 'ի պատճառաս բանի միոյ հարցանելով զիս ըզ բազում իրս, և ես ոչ կամելով յայտնել նմա զիր իմն, ասաց ինձ այսպէս. Տես որդեակ իմ, զի յօրէնս բարեկամութեան պահանջի, զի բարեկամն զամ ինչ հաւատայցէ բարեկամին իւրում այսու պայմանաւ, զի նախ տեսանիցէ, թէ զմրսիսի բարս ունիցի բարեկամն այն։ Իրաւի յոյժ բարի եղև խրատն, զոր ետ ինձ, և յոյժ լաւագոյն։ Քանզի եթէ ձիավար մի հեռաւոքքեր. և ուշիմ կամիցի դնել զձի մի, նախ տայ արշաւել և փորձէ նախ քանզ լաւսելն զձին, ընդ որ եթէ ոչ հաճիցի, արհամարեալ ոչ դնեսցէ զձին։ Իսկ եթէ հաճոյ թուիցի, տացէ նմա, զորինչ և խնդրեսցէ. և առնու զձին։ Այդ եթէ քնեի անասունն նախ քանզ տանիցն նորա 'ի ձիարանն. ապա որքան առաւել հարկէ փորձել և քննել զմարդն այն, զոր կամիմք առնել բարեկամ, նախ քան զմտանելն նոր 'ի տունն մեր։ և եթէ ձին որ ոչ զայլ ինչ ուտէ, եթէ ոչ զարդ, և զգաբի վասն պակասաւորութեան միոյ, և արատոյ իրիք թողանի, ապա որքան ևս առաւել զբարեկամն, որ 'ի մերոջ արտի մերոյ յարանայ, և հանգչի, նաև դիրանայ ուտելով զծածուկ խորհուրդս մեր, և զբաղձանս սրտից մերոց, ուրեմն վասն բազմաց պակասաւորութեց, և արատութեց որք 'ի նմա իցեն, ոչ է ընդունելի։ Եղև փիլիսոփայ մի կոչեցեալ Ա-

բեսպոս նախ քան զժամանակն Սիլլայի, և Մա-
ռիոս և սաեր Փիլիսոփայս այս, թէ բարեկամն
պարտէ լինիլ որպէս լաւ երիվար, այսինքն զն-
ունիցի զգլուխն փոքրիկ վասն խոնարհ կենցա-
ղավարութեան, զանանձս յոյժ կենդանիս առ 'ի
պատասխանել մինչ կոչիցեն զբերան կակուղ վա-
բարեխառնութեան լեզուին, զթիկունս խիստ վա-
կրելոյ զաշխատանս, և զնեղութիս, զձեռանն
բաց առ 'ի առնել զբարի, այլոց զոտս, և զպշ-
զուենն ապահովս առ 'ի յարամնալ 'ի բարեկամու-
թեան, զդէմն բարի վասն համեստութեան, և
բարոյ հմտաւոյ, վերջապէս լաւ երիվարն
պարտէ ոչ լինիլ ընկնոտ, և երկչոտ, որպէս զն
երթիցէ ընդ այն, ընդ որ նախատահմանուին
դարձուցեալ զայախուցն, այսինքն զչաւն բախ-
տին, իմանայցեն ինձ դիքն եթէ մարդիք ոչ կա-
ղեն վերահասուլինիլ։ Ուրդ դոլով առ յատա-
ջադրութիւն մեր, կամիմ ծանուցանել ձեզ, թէ վա-
յսասրիկ յուշ և յամրաւոյ ընկալայ զձեզ 'ի բարեկա-
մութիւն, առ 'ի ոչ արձակել զձեզ այնքան կանուխ, և
փութանակի։ Ծառքն կեռասի, որք ծաղկին
յամենանն փետրուարի, ոչ յուսամք թէ տայ-
ցեն զկեռաս յամենանն մայիսի։ Բարեկամք
պարտին լինիլ որպէս զծառս թթենեաց, որ 'ի
յայնպիսում ժամանակի տան զթութս յորումոչ
երևնին 'ի ցրտոյն յամենանն մայիսի կամ որպէս
զայգ. որ ոչ ելանիցի 'ի մրրկաց, և 'ի հողմոցն
յամենանն հոկտեմբերի, որպէս սերկեվիլս կա-
միմ ասել մի' դայցեն ընդ յաջողակ բախտին,
ոչ և չարաբախտ ձախորդական բախտիս։ Իրաւի
ոչ են այդ դիրքք զի կեղծաւոր բարեկամն, ոչ
մոռանալ զանազաքեզ զինարբուանն 'ի գինատա-
նէ. այս [illegible] բարեկամն 'ի տանէ վասն այ-
սորիկ ոչ [illegible] զիրք վաստակք և դործքն այ-
նոցիկ, որոց [illegible] զբարի դիտա-
ւորութեան [illegible] դործեն և վաստակին,
լերուք դոհ [illegible], և անարկիւղք 'ի յիս,
զի

զի ես հաճիմ ընդ գործս ձեր վասն որոյ ընկալայ զձեզ վարպետք երեխայիս այսորիկ, հայրենասիրութիւն, զի 'ի մէջ բազմաց նշանակեցի զձեզ փոքունատ, և 'ի մէջ փոքունդպ նշանակեցի զորդին իմ միայն մի։ Դահեակքն իւրք 'ի նուաստանալ ստեղանն օտիու, զամս երկուս ետուն ընկալեն, և մայրն իւր քաւաստինա զայլ երկուս ամս զփակութիւն անօգուտս, և ես որպէս հայր բարի կամիմ տալ զպատիժս յամս քսանս։ Քաւաստինն ոչ հաճի ընդ այս, զի ոչ կամի թողուլ զնա այնքան կանխապէս, բայց ես ներեմ զի կարի անագան բառնամ զորդին իմ 'ի նմանէ։ Բայց ոչ է զարմանք, զի կանայք թեթևութիւք, և երեխայքն անդիտութիւք զբաղեն զինքեանս միայն 'ի ներկայս, բայց մարդիկք խոհեմք պարտին մտածել զանցեալս, կարդաւորել զներկայս, և բաղում զգաստութեամբ նախադիտել զհանդերձեալս։ Յիշեմ ես զիւրաքանչիւր յամի զօրն այն, զոր ետուն ինձ դիքն, և յիւրաքանչիւր յաւուր յիշեմ զօրս այս, յորում տամ ես զսա ձեզ։ Դիքն ետուն զդա ինձ, և ես տամ ձեզ որպէս մարդ մահկանացու, բայց դուք ինձ, և ես դիցն գարձուցանիցեմք անմահ վասն դոլոյն իմաստուն զնչ կամիք զի առաւել ևս ասացից իրաւի զի Դիքն արարին զդայ մարդ 'ի մէջ մարդկան 'ի ձեռն հոգւոյ։ Ես ծնայ անասուն 'ի մէջ անասնոց 'ի ձեռն մարմնոյ, և դուք արասջիք զդի, 'ի մէջ դիցն 'ի ձեռն համբաւոյ, հարցանեմ զձեզ բանմի։ զինչ ետու ես որդւոյն իմում եթէ ոչ զմարմին մահկանացու, որով ունիցէ զկեանս և հեռևաւսէս վաղճանկեանց իւրոց, իսկ դուք տուք դմա զիմաստութիւն, ընդ որում ոչ երբեք կորիցէ յիշատակն իւր։ Եթէ փափուկ հասակ, և տին իւր ճանաչիցեր զակարութիւն մարմնոյն իւրոյ, զոր ես ետու և եթէ մթացեալ խելքն իւր հասանիցեր 'ի յիմաստութիւն, զոր դուք տայոցք էք դմա, կոչիցեր զձեզ հայրք բարիք և ինձ խորթահայր ոչ

բարի։ Եւ առանց ասելոյ նորա խոստովանիմ, զի մեք բնականք հայրքս մարմնոյ, եմք խորթք հայրք Աշմարտի ազնուականութեան, որովհետեւ մեք տալք զբնութիւն ենթակայ և հպատակ այսքան փոփոխականութեան, և սակայն այսքան թշուառութեան։ Արդարև դուք եղանիցիք օրինաւորք հայրք դորա, եթէ զհեշտասիրութիւն մարմնոյ փոխարկիցէք ի բարս բարիս, և զբաղեցուցանէք զիմացականութիւնն ի խորագոյն իմաստութիւնս։ Եւ մի արհամարհէք. ոչ եւս տակաւ ինչ համարեսջիք, զոր ես մատուցանեմ, և յանձնեմ կամայ, և դատողութեան ձերում։ Իսկ առ յոր աւաւել պարտին հայել թագաւորքն, են տեսանել թէ ոմն, կամ որում ումեք յանձնեն և կապակցեն զնուցումն որդւոց իւրեանց. քանզի գոլն վարպետ թագաւորաց ի յերկրի. է պաշտօն դիցն, որք ի յերկինս են, զի կառավարեն զնոսա, որք կառավարելոցք են զմեզ, կրթեն զնոսա, որք կրթելոցքեն զմեզ, ուսուցանեն զնոսա, որք ուսուցանելոցք են զմեզ, պատժեն զնոսա, որք զմեզ են պատժելոցք, և հրամայեն մերոյ միայնոյ, որ յետոյ հրամայելոց է աշխարհի։ Արդ զայլ ինչ կամիք թէ ասիցեմ ձեզ։ Իրաւի նա որ ունի զբեռն ուսուցանելոյ զորդին թագաւորի, է ղեկ նաւի, դրօշ զօրաց, վերատեսուչ ժողովրդեան, առաջնորդ ճանապարհի, և գանձ ամենեցուն։ քանզի դնի ի ձեռս նորա նա, որով յետոյ հովելոց է զաշխարհ բոլոր։ Եւ ասացից առաւելքան զայս, որպէս զի առաւել վարանիցիք։ զի տալով զձեզ զորդին իմ, տամ ձեզ առաւելքան զթագաւորութիւն մի։ Կեանն մաքուր որդւոյն կենդանւոյ, առնէ փառաւոր զհամբաւ հօրն մեռելոյ, Այսպէս դիքն ի՞նչն ձեզ օգնականք և բախտքն յաջողակօրէն յոյժ, որք մինչև ցայժմ հակեցիք վասն որդւոց այլոց, յայսմ հետէ անդադար զգաստութիւնք և ստէպ հոգացողութիւնք հակեցէք ի կրթել զորդին թագաւորի, որ է օգուտ ամենեցուն։ Եւ հայեցայ

բուք

բուք բարուք բարեկամք իմք, զի գոյ մեծագոյն զանազանութիւն 'ի սնուցանել զորդիս թագաւորաց, և 'ի յուսուցանել զողորմս ժողովրդոց, և ուսմանկաց։ Զի մեծագոյն մասն նոցա, որք գան 'ի դպրատուն, ոչ այլ ինչ զդիտաւորութիւն ունին, եթէ ոչ ուսանիլ զիօսակցութիւնս։ Բայց զորդին իմ Կոմոդոս ոչ տամ ձեզ, զի ուսանիցի խօսիլ զբաղում բանս, այլ զի ուսուցանիցէք նմա զճանապարհս գործելոյ զբաղում բարիս։ Փառք տիմար հարանց է, տեսանել զորդիս իւրեանց լինիլ յաղթող այլոց 'ի վիճաբանութիւնս։ Բայց փառքն իմ լեցի այս, զի տեսանիցեմ զորդին իմ դերազանցեալ 'ի վերայ այլոց առաքինակամաւք գործովք։ զի փառք յունաց է 'ի բազմախօսութիւն և պակասութիւն 'ի գործս։ իսկ փառք Հռոմայեցւոց է, գործել զբաղում գործս առաքինական, և խօսիլ սակաւս։

Յաղագս թէ որպէս պարտին հրաժարիլ 'ի մոլութեց վարպետքն այնոքիկ որք անուցանեն զորդիս աբքայից ։

Գլուխ Իններրորդ ։

Զատուեալով Կայսրն 'ի խօսակցութեան իւրում, յաւել ևս զբանս այս առ վերոյ ասացեալ վարպետսն, և ասաց նոցայսպէս ։ Հայեցարուք բարեկամք, բարիք, և մի մոռանայք, զի այսօր հաւատամ ձեզ զպատուն եմ, որ եմ հայր նորա, և զ զուսուցն Կօմդոսի որդւոյն իմոյ, նաև զփառքն Հռօմայ, որ է բնական հայրենին իմ, զպատուն 'ի տալու, և զհանդիսսն խաղաղութեան Հռօմէացոց, որքեն հպատակ ինձ զկաւաւորութենն 'ի տալու, որ է հայրենին ձեր, և 'ի վերջ քան զամ զնաղաղութեան, և զսնդորրութեան ժողովրդեան մերոյ ։ Շինեն զաշտարակ յանցս Ճանապարհաց բնակութեցն թշնամեաց, և կացուցանեն 'ի նմին զդէտս, զի արթուն կացեն թարց ննջերոյ ուրեմն ընդառն յորում հաւատան յայնպիսի աշտարակ ոչեն իրաւունք զի ննջեցէ ։ Արդ ես հաւատացի ձեզ որպէս արթնացեալ գիտօղ, ուրեմն պարտի ձեզ հսկել 'ի վերայ որդւոյն իմոյ, և ոչ ներիսել յանկողնոջ անհոգութեան ։ Հայեցարուք, զի այսօր ստնդեհատ առնեմ ես զորդին իմ, և նա որպէս մորուկ ձիոյ կամիցի խաղալ 'ի կանաչայեալ հովիտս, եղիցի ձեզ աշխատանք ճնշել զնա։ և վասն նորա եղիցի վիշտ դոլ ճնշեցեալ։ Արդ առաջն իրն, վասն որոյ աղաչեմ զձեզ, է զի

է զի գիցէք ի նմա զանձ խստագոյն, որպէս զի մնայցէ բերան նորա ժուժակալ, մինչ զի ի նմին մի՛ գտանիցի սուտ։ Չի մեծագոյն պակասութիւն բարեաց մարդկանց է, լինիլ աղքատ, և զուրկ ի ճշմարտութենէ, և զպակասութիւն ունակ մարդկանցն է, լինիլ հարուստ սուտութեամբ։ Եղերուք յոյժ հարցաքննութեամբ տեղեկացեալք, զի մի՝ թարց հրամանաց ձերոց համաձանեալ ընդ սանձարձակ տղայոց, խաղայցէ ընդ նոսա, կամ ընկերակցիցի ընդ կորստական անձանց։ Չի մեծագոյն նշանն, որով որդին արքայի կորուսանելոցցիցէ զինքն, և Աւերելոց զթագաւորութիւնն է, յորժամ սկզբանն տղայ դողոյն նորա ճանաչիցի լեալ մոլի ի դուսարահաղորդութեան, զի խաղս այս է մոլութիւն մի, որ զո՛ ոք խայծէ, որպէս դշուն կատաղի առնէ զնա, որոյ կատաղութիւն միշտ մինչև ի մահ յարատեալ։ Սակս որոյ յուժգնակի յանձնեմ, ձեզ։ զի այս որդիս իմ, թէպէտ իցէ երեսեալ, առնիցէք զսա լինիլ հանդարտ, իրաւի ոչ տան զայնքան փառք որդւոցն արքայից ունիլ զթագ ի գլուխս, և մանաւանդ տաղեղն ի պարանոցի, ոչ ակունք ոգեւոր ականք որովք զարդարի լանջն, ոչ դաւազան թագաւորական ի ձեռին, ոչ դունդք պահապանաց, որք շուրջք կան ինքեան, որքան դոյն նոցա խաղաղք, և հանդարտք, զոր ցուցանեն ի մանկութեան իւրեանց։ զի համեստութիւն պատաքին, և բացայայտ, ընդ զպակաս տեղին բազմաց պակասութեան։ Մի՛ լինիք անհոգ դնել զնա ի մէջ լաւ շրջայի, և ունիլ յպինտ կապեցեալ, որպէս զի մի՝ տացէ զինքն ի վարս բղջախտականս, զի ի կնամոլ անձնէ ոչ եմք յուսալոյ թէ ունիցի երբէք զարարմունս բարիս։ Յոյժ հաճոյ թուի ինձ վերաբանութիւն իմաստուն վարպետին Ներոն ի Կայսեր, որ ասէր առ յորդէ գիրն իւր այսպէս, Եթէ դիտիցէի, թէ գիքն ինձ զթողութեան տայցեն, և մարդիկք ոչ երբէք իցեն գիտելոցք, սակայն վասն անարք, և խոտան.

և խոտան գոլոյն մարմնոյ , ոչ մեղանչէի ըստ մարմնոյ ։ Իրաւի բանքս այսոքիկ , վասն գեղեցկի գոլոյն իւրեանց , և վասն արժանաւորութեան ասողին , արժանիք են ոչ միայն պահել 'ի մոի , այլև քանդակել 'ի մէջ սրտի , թէպէտ 'ի ներոնէ չարէ , չարաբար եղև ընդունեցեալ ։ Մե՛ թուլացուցանիցեք զպահուցս , թէպէտ տեսանիցէ զմատակ ձի և , խրխնջայցէ քան զի ժամանակաւ զզուիցի , Չի մոլութիւս այս մարմնոյ յամ ժամանակի , յամենուամ տիոջ , յամ կացուցեալ ունի զդիպուկ ժամանակ պատրաստ առ ձեռն իւր , քայց անցեալ երեխայութիւն անկեալ սանձն 'ի բերանոյ բանականութեան , վիրաւորեցեալ խթանաւն մարմնոյ , սանձաձիք լեալ և սրամրտեցեալ թափով 'ի լսելն զձայն փողոյ զգայականութեան ոչ թողուցք զնա զկնի մատակ ձիոյ , զի չթողուցն սակաւ օգտի , և արդելուցն փոքր , և 'ի վախճանի մնայ մարմինն գօսացեալ , խելքն բեւեռեցեալ , բանականութիւն տարացն զեցեալ , համբաւն գահաւիժեցեալ , և մարմինն մնայ տակաւին մարմին , յաղագս որոյ ոչ դոյ այլ դեղ , եթէ ոչ զի որպէս հուրն յոյժ բորբոքեցեալ , առ 'ի շինուցանել զայն ծածկեն հողով , այսպէս և մարդ մի վավաշոտ եղեալ 'ի դերեզմանի , և ծածկեցեալ հողով կարէ աւարտել ։ Դիանգիմանելն մի՛ լինիք աչառու ։ Յոյժ յաճախապէս ասեմ ձեզ , մի՛ տայք զտեղի տղայիդ այդմիկ սիրելոյ զմոլութիւն , և 'ի պատժելն մի՛ ունիցիք զնոյնայուն , թէ է երեխայ փափկասուն , թէ 'ի մօրէ անուցեալ է փափկաբար , թէ է միայնակ ժառանգ կայսերականի պետութեան ։ Ընդ որդւոցն օտարաց , խստաբար վարիցն է գոռոզաբար անիրաւութիւն , քայց ընդ որդւոյ իւրում , ներկայական գթութիւն պատճառ է կորուստ առ յապագայն Եւ թէ որպէս պարտէ մեզ անուցանել , և զարգացուցանել զոր դիս մերս , ծառքն ուսուցանեն մեզ ։ Չի ծառն շահբաղութի 'ի խոշոր , և 'ի փշոտ կեղևոյ իւրոյ

արտաքերէ զկակուղ շահբաւութիւն։ Եւ Ծնանն ընկուղէ, ՝ի միջոյ կակղադոյն տերեւոց, արտածէ զընկուզ կարծրագոյն։ Արդ ըստ այսմ օրինակի, բազմիցս տեսաք զհայրս բարեգոյնս, յորոց Ծնանն որդիք անդոյնք, եւ զհայրս անդոյնս, յորոց Ծնանն որդիք բարեգոյնք։ Այն վարդապետն վարդապետուց եւ բարեհամբաւն ՝ի մէջ բարեհամբաւաց, Իկուրգոս թագաւորն լաչէդեմոնացոց տալով զօրէնս դաւառին իւրում, ասաց այսպէս։ Ես հրամայեմ ձեզ որպէս թագաւոր ձեր, եւ հրամանդ ամայն որպէս մարդ աղաչեմ զձեզ, զի ծերոցն յոյժ վաստակեցելոց ներիցի, եւ թողութեան տացի, եւ ընդ լերբ տղայոց երկայնամիտ լինիլ երբեմն, իսկ երեխայիցն փափկանից մի ներիցի իր ինն բնաւին։ Արդարեւ բանքս այսոքիկ եղեն արժանիք զայնպիսի անձին, թուի ինձ թէ մեծաւ իրաւամբ ասաց զայս։ Քանզի երիվար մի որ արշաւեալ իցէ, ունի զկարիս հանդչելոյ, եւ այն որ արշաւէ, իրաւունք է, թողուլ զնա արշաւել, եւ այն որ արշաւելոցդ է, հարկէ զի իցէ բարւոք կերպաւորեցեալ, եւ սանձեցեալ։ Զբաղեցուցէք ուրեմն միշտ ՝ի գործս առաքինական։ Զի այսպիսեացս ըղձակրութիւն հասակի իւրեանց եթէ մթացուցանէ զիմացանս մեր, եւ թէ առնէ վատաշուէր զմարմինն, մեծաւ դժուարութիւն կարեն պարապիլ ՝ի պաշտօնս կրթութեան եւ իմանալ զերս այլոց բերկրալեաց հաճութեանցն զգայարանաց իւրեանց։ Զի ունին ՝ի գլուխս իւրեանց զլրբութիւն եւ ՝ի ներքոյ ոչացն իւրեանց բանականութիւն ընտրողութեան։ Երբեմն տղայութիւն պահանջէ զբօսանս, եւ զհանգստութիւս, զոր կարէք շնորհել, բայց այսու պայմանաւ հանդերձ, զի զբօսանն այն իցէ յոյժ սակաւ, եւ չափեցեալ իրաւամբ բանականութեամբ, նաեւ պարապեալ ՝ի յաղնիւ կրթութիւն։ Հայեցարուք, զի ոչ եւոու ձեզ զորդին իմ զբաղիլ ՝ի հանգստութիւս, այլ զի կրթիցի ՝ի յուսամունս։ Մինչ հաւն ունի զձուն

ընդ թևովք իւրովք, ոչ ելանէ իքնէ իւրմէ, և թէևս իցէ ձուն օտարական, այլ տածէ զայն որպէս թէ իցէ իւրն բնական։ Յայսմանէ պատճառէ, ասասնօր 'ի Հռօմ 'ի հարիւրից աշակերտաց, ելանեն ինեանքն որպէս ձու հոտեալ թարց ձաքուց։ Քանզի եթէ վարպետքն ծախեն ընդ նոսա զպահս երկուս 'ի վարդապետութիւն իւրեանց, կորուսանեն ընդ նա զպահս քան 'ի խաղալ և 'ի կատականս, յայսմանէ յառաջագոյն, զի 'ի սակաւ համառոտութէ, և մեկուսմանէ վարպետաց ծնանին բազումք համարձակութիւք, և սակաւ պատկառանք 'ի յաշակերտսն։ Հաւատացէք ինձ բարեկամք, զի վարպետքն որդւոց արքայի, և ուսուցիչք աշակերտաց, առաւել օժանդակեսցեն, և օգնիցեն աշակերտաց իւրեանց տալով նոցա զբարի օրինակ խիստմ աւուր, քանէք բազում ընթեռնլով 'ի տարի մի բոլոր։ Տեսանելով որպէս իմ զմեկուսանալն ձեր, մեկուսանայ ևս ինքն, տեսանելով զձեզ ուսումնասէրս քակէ ևս նա ուսումնասիրել, տեսանելով զձեզ լռակացս, լռեսցէ ևս նա, տեսանելով զձեզ ժուժկալս, ոչ ուտիցէ երբեք, տեսանելով ամօթխածս զձեզ, երկիւղիւ նա ի ցէ զձեզ, և տեսանելով զձեզ հանդարտս, հանդարտիցի ևս նա։ Իսկ եթէ զներհակն տացին առնիցէք, զներհակն արասցէ ևս նա։ Իրաւի զի ճշմարիտ է այս։ Տուք ուրեմն որդւոյն իմում զբարի օրինակ, որ է առաւել օգուտ նմա, քան զբազումուսմունս։ Զայս իրաւի է զի եթէ այլք ծերացեալք տեսանիցեն միանգամ զչարութիւն ումեք կամ ապականեն զմարմինս իւրեանց կամ, ըկանեին գայթակղել ըզդայութիւնս իւրեանց ապա որքան առաւել ևս, երեխայքն, որք ոչ զայլ ինչ գիտեն ասել, եթէ ոչ զայն, զոր լուան։ և ոչ զայլ ինչ առնեն եթէ ոչ զայն, զոր տեսանեն զի այլք առնեն։ և աշակերտքն առաւել ուսանին զչարութիւն, զոր 'ի վարպետն տեսանեն, քան զչարութիւն այն, զոր 'ի

'ի յայլսն տեսանեն, որպէս թէ ոնաղէալք եղեն առ վարպետսն, ոչ միոյն բուսանիլ զիմաստութիւն։ այլև զչարութիւն։ Կամիմ ես, զի որդին իմ ուսանիցի զհամայնս եօթն արհեստսն աղաստակսնս, և վասն այսորիկ ընկալայ զձեզ յոքուսնս, որպէս զի ուսուցանիցէք նմա զբազում գիտութիւնս։ Բայց եթէ 'ի վախճանի մեալոց եղեալ ընդ աւաղաքն։ վասն ոչ կարելոյ հասանել ցանկութեան սրտի մերոյ գոնեա չէ ուներլոց աւաղայլ մանաւանդ միխիթարութիւն, զի ոչ է ծախեալ զժամանակն վայրաբար։ Եւ մի խաբեսցիք ասելով, թէ բաւականապէս գիտէ նա զայս, և բաւականէ սմա առի կառավարել և հովուել զիմաստութիւնն, զի Ճշմարիտ Փիլիսոփայն, ըստ օրինին Լիբուրգոսի, հարկէ գիտել իսօրէ 'ի հրապարակի, պատերազմել 'ի դաշտի, և ատենաբանիլ 'ի խորհրդարանի։ Եթէ ոչ խաբէ զիս յիշողականութիւնն մտայս, 'ի մէջ հնադունից իրայ զբրս բերի յաշխարհս յունաց, զոյ արձան մի, զոր ուներ Պիւթագորաս Փիլիսոփայն 'ի գրան Ճեմարանին իւրոյ, յորում յունականաւ գրով ձեռամբ իւրով էր քանդակեալ զբանս այս ասելով նա որ ոչ գիտէ զայն, որ գիտելի է, է անասուն 'ի մէջ մարդկան, և նա որ ոչ գիտէ աւելի քան զայն, որքան պիտոյէ, է մարդ 'ի մէջ անասնոց, իսկ նա որ գիտէ զամ, որ կարելի է գիտել, է ՈՒԾ 'ի մէջ մարդկան։ Ո՞հ, բանք դերաշոյնք, և ձեռք հանճարեղք այնորիկ, որ զայս դՃաղբեաց։ Իրաւի բանքս այսոքիք, ոչ 'ի գրուանս, որպէս յայնմ ժամանակին սովորքէին, այլ 'ի մէջ սրտի են նկարելիք։ Աղ զյետին դատակնիքն Փիլիսոփայիս այսորիկ, ընկալան հարքն մեր, աւաջինք, և առաջինք յանդիմանութիւն վիճակեցաւ մեզ, որք եմք յետինք որդիք նոցա։ Իրաւի 'ի մէջ Յունաց, և Լաչեդէմոնացոց զայնքան համբաւ ըստացան Փիլիսոփայքն իւրեանց, յաղագս չբոցն զոբս թողին, զորքան համբաւ ըստա-

ըստացան ինքեանք յոյնք , և Լաչէդեմոնացիք յաղագս յաղթութեան զորս արարին ։ Եւ նախ-նիք կայսերքն մեր , ոչ սակաւու սիրով վայե-լեցեն զթագաւորութիւն իւրեանց յաղագս խո-րագունի բանաստեղծութեան , քան թէ առաքի-նականաւ յաղթանակաւ զարհուրեցուցանելով զաշխարհս ։ Եւ թէ որպէս ճշմարիտ է այս , հայիցուք առ Յուլիոս Կայսրն որ 'ի մէջ զօրացն բանակին յահեակ ձեռին իւրում կալնոյր զդէ-զարդն , և յաջոյ ձեռամբ զդրիւն , որ և ոչ եթող երբէք զձէնս , թարց առնելոյ խակոյն զդիրս 'ի ձեռն ։ Եւ մի դիցուք զուշանն պատ-ճառ ասելով ընդ անմիտսն , թէ արհեստքն են յոյժ երկարք , և ժամանակն խիստ կարճ ։ Ար-դարև արիութեն հնոցն այնոցիկ , յանդիմանել զպղերդութիւնն մեր ներկայիցս ։ Զմի իր տեսան-ելք հաւատի , և է այս · զի 'ի կարճառօտ ժա-մանակի զամ վատթարութիւն ուսանիմք և 'ի երկարութեն ժամանակի ոչ կարեմք դիտել զբ-բարի իմն ։ Արդ կամիք տեսանել , թէ որքան ապաբախտք իցեն արարմունքն մեր , և որքան անհոդ ունին զմեզ դիքն · զի առի առնել զմի միայն բարի պակասի մեզ ժամանակն , և առ 'ի առնել զբազում չարիս , յաւելանայ ։ Արդ առի ոչ ասել զաւելի քան զոր առայի , արարէք , զի որդին իմ այսպիսեաւ կերպիւ զարդանայցէ , ունելով զերկիւղ 'ի դիցն , 'ի Փիլոսոփայից զգի-տութեն , 'ի հնոց Հռոմայեցւոց զառաքինութեն 'ի ձէնջ վարպետաց իւրոց զհանդիպատ , և յայմ բարեաց զբարի , որպէս յինէն ժառանգելոց է զթագաւորութեն , Եւ խոստանամև յանդիման կացուցանեմ զիս դիքն անմահք , ընդ որոց ա-ռաջադրեալեմ երթալ , և յանդիման կացուցա-նեմ զիս ևս բարձրագոյն Կամիթիոսն ուր կի-զելի է մոխիրն մարմնոյ իմոյ , զի ոչ Հռոմ զիս մի զադրիցէ իկենդանութեն իմում ։ ոչ ժամանակք և դարքն ապադայք զիս անիծանիցեն , զկնի մահու-ան իմոյ , եթէ որդին իմ վա չարակենցաղ վա-

թուց իւրոց կորուսանիցէ զժողովն արքունի, և յաղագս ձերոյ սակաւ պատժելութեանն լինիցիք պատճառ կորուսանելոյ զկայսերական արժանաւորութիւն։

Յաղագս թէ մրպէս անուցանէր, և զարգացուցանէր Մարկոս Աբրեվեան Կայսրն զդստերս իւրս։

Գլուխ Յասնեերրորդ։

Էպէտ Կայսերն Մարկոսի ոչ գոյին աւելի քան զերկուս ուստերս, այսինքն զԿոմոդոս, և զԱերիսիմն, սակայն ունեաց զդստերս չորս 'ի քաւաստինէ օրինաւոր կնոջէ իւրմէ, հանձարեալ, և խոհեմադոյն Կայսրս այս։ Իկիրարկանէր զարմանալի զգուշութիւն 'ի զարգացուցանելն նոցա։ Քանզի իսկոյն ի ծնանիլն, առաքէր 'ի մօտակայ գեօղսի արտաքոյ Հռոմայ առ 'ի անուցանել, և ոչ երբեք թոյլ տայր անուցանել զդստերս, և զդստերս իւրս 'ի մէջ պարսպին Հռոմայ, ոչ ե. կամեցաւ թէ ջամբիցէին զկաթն 'ի ստեանցն կնոջ փափկասնից, զի մեծ տպէս արհամարհէր զդահեակս հեշտայ կենցաղս, և սիրէր զաշխատասէր դահեական, և զառողջս որք թէպէտ էին դահեսիկք, սոցա միայն յանձնէր 'ի անուցանել զդստերս իւրս։ Եւ զկնի տալոյ զնոսա դահեակացն, ոչ կամէր զի դառնայցէին 'ի տուն։ Եւ սովորէր ասել հեքնելով, թէ առաւել աշխատասէն զիս վարձատուցանել զդահեական, քան թէ հարանացուցանել

զանել զգաստերս։ Պատմէ Հուսիրոս։ թէ յաշխարհն յունաց մեռանէր Արտեմիոս թագաւորն արքիացւոց, թարգ ունելոյ զորդի ժառանգ։ և դահեկան, որ անուցեալէր զարքայն. խնդրեաց մեծաւ թախանձանօք զի տացէր զթագաւորութիւն որդւոյն իւրում զոր ունէր, զի էր որդին իւր կաթնակից և անուշակից թագաւորին, և տայր զպատճառս ասելով. թէ որովհետև երկոքեանքն ջամբեցեալքէին զմի. և զնոյն կաթն, ուրեմն երկոքեակքն ժառանգելոցք էին զթագաւորութիւն մի։ Զայս ասէր Հուսիրոս առ 'ի յանդիմանել զդահեկանն յունաց, որք առաւել պանծային անուցանելով զորդիս արքայից, քանզի թագուհիան, որք ծնանէին զնոսա։ Արդ ապնիւ Կայսրս այս, ոչ միայն կամէր, զի զգաստերքն իւրք ջամբեցեալք լինիցէին կաթամբ շինականաց, այլև ոչ կամէր, թէ ունիցէին զայն զպատիւ, և զմեծարանս, զծառայութիւն, և զպատուութիւն, զորս զանազանք թագաւորաց սովորք են ունել։ Պատահեցաւ յաւուր միում, զի 'ի նստիլ յնթրիս, ասաց ցնա աղուաշ մի կոչեցեալ Գալինդոս (ընդորում Կայսրն զբօսնոյր յաճախապէս) Տէր իմ, ես զոլով ագէտ, ոչ կարեմ իմանալ զնթացս ձեր տեսանցդ իմոց, զի երեկ մինչ գայի ես 'ի սալօնն, տեսի 'ի նաւահանդստեանն օտիսու զորդիքն հոգի իմոյ կայսեր։ երթային որպէս գուշիկք և տեսանեմ անտ 'ի տան քում զորդիս զի նախանաց շրջիլ որպէս զորդիս Կայսեր։ Ասա ինձ ուրեմն, թէ զի՞նչ իցէ այս, եթէ դուք իմ զանց առնէս որպէս իմաստուն. քայց ես ոչ իմանամ որ եմ յիմար։ Առ այս պատասխանեաց Կայսրն, և ասաց, ով Գալինդոս, վասն այսորիկ Հռոմոյ է Հռոմն այն թէպէտ ըստ աշխարհ անուանեալ հռչակ իւր ես գտանեմ վասն իմ առաւել զհանդիստ, և եմ առաւել ապահով, զի որդիքն իմք ըսկսիցին գալ ոգ գուշիկք աղքատք և 'ի վախճանի աւուրս նշիցէ ոգ Կայսերս

հարս

հարատի, քան թէ ըսկսիցին դալ որպէս Կայ-
սերը հարուսաց, և յեռոյ աւարտիցին որպէս
զինուորք աղքատք։ Իսկ, զի սատանայ աւե-
րումն 'ի տալիս ծնանի յատկապէս յայտմանէ,
զի զորդիս իւրեանց զարդացուցանեն 'ի բա-
զում հեշտութիւն, և 'ի փափկութիւն, և ոչ 'ի
ներդութիւն, և 'ի յաշխատանս, վասն որոյ թո-
զուն յեռոյ ցաւանցդս, և զանանամացս իւր-
եանց 'ի մեծի թշուառութիւն, և ինքեանք աւար-
տեն զկեանս իւրեանց 'ի մեծադոյն վիշտս, և
'ի տառապանս։ Եւ եղև պատասխանատուութիւն
այս այնքան մեծահամբաւ, մինչզի որպէս ա-
ռակ յարամեաց 'ի Հռօմ։ Մինչ անցանէին ամբ
երկուք, սովորէին սահանցահատել զդստերսն,
և նախապատրաստէին զկանայս վարպետուհիս,
որոց յաճախէին զնոսա։ Ասէ Սէստոս Զէրոնա-
ցին, թէ խնդէր գոսանել զտիկինս Հռօմա-
ցիս, որք իցէին գեղաւ ամբք, և պայծառք
վարուք, աչք և զարկեցուք, համբաւով տենչա-
լիք, սրեամբ ազնիւք, հանճարոք հանդարտք,
կենաւք գովելիք, մեկուսացեալք, և առանձնա-
ցեալք, և առ 'ի կրթել զդստերս մեծադոյնից իշ-
խանաց, իցէին ինքեանք կրթեցեալք և վարժե-
ցեալք։ Եղև այնքան հոգս նոցա, և գիտացող
բարի Կայսրս այս 'ի տալն զդստերս 'ի զարդա-
ցումն, մինչ զի ոչ երբեք եռ իւրաքանչիւր
'ի դստերաց իւրոց տիկնոջ ոմեք, որ ոչ իցէր
գոնեա ծ ամեայ տիտիւր, և դամս տասն ապրու-
թիւն իւրոյ, նաև ոչ իցէր զարդացուցեալ զհարիւր
դստերս մեծանձանց։ Քանզի մուծէր, թէ
նա օր բաւուք 'ի կիր էարկ զդաշնոն զարդա-
ցումն այսքանեաց աղջկանց այլոց ոչ իցէր
աղաչելոց յեռոյ 'ի զարդացուցանելն դստերաց իւ-
րոց։ Զոգ նախապատրաստելով զվարպետուհիսն
բերէին զդստերս 'ի տեղոջէ յորում անեալքէին
և յանձնէին նոցա 'ի տան նոցա։ և 'ի Յօրէ յայտ-
մանէ, յորում ծնեալեր դուստրն։ Իւր ոչ եր-
քեք թոյլ տայր զի մանիկեր 'ի պալատն իւր,

մինչև ցօրն այն, յորում ամուսնացուցանէր։ Ուստի ծնեալ Կայսրուհին զաղջիկ մի ըսկսան սահել ամենեքեան, թէ նորածին աղջիկն այնէր յոյժ գեղեցիկ, և նմանէր մօրն իւրում։ զայս լուեալ Կայսրուհին, որպէս սովորութիւն է գիրքն և փաթիկասուն սրտի մարցն, մեծապէս շարժեցեալ 'ի գոյթ առ նորածինն աղերսեաց (զգ. Կայսրն), զի թողցէր զայն սնուցանել 'ի ներկայուն իւրում, պատասխանեալ ասաց Կայսրն։ Զգոյշ լեր Քառասունա 'ի յայնմանէ զոր այլք ասացին քեզ և զոր դու տեսեալ ես և վրէ կշռեցեր խնդրել յինէն զայս։ ուրեմն ես զոր վասն այսմ պատճառի ընթերցեալեմ և 'ի յայլս տեսել եմ ողբալ։ ոչ իւրք կերպիւ անասլոցն մ'քեզ։ Ոչ դիտես դու թէ յաւուրն յայնմիկ յորում ըսկսանի սնուցանել աղջիկն 'ի տան, բառնայ հոգացողութիւն զմիան հօր, և բազմանայ դգվանն 'ի սրտի մօր, նախանձ 'ի յեղբարն, 'ի յաղջիկն յոյժ համարձակութիւն և 'ի գահեանն խնամարութիւն։ Հարցանեմ քեզ։ Եթէ զարգանայ աղջիկս իսան, զինչ օգուտ թէ զարգացուցիչն դորա ուսուցանիցէ դմա զպարկեշտութիւն բանիւք, եթէ մեք հրաւիրեմք զդա 'ի լկտութիւն գործովք մերովք։ Չի՞նչ օգուտ։ թէ արդիւնաւորիցի զպատիժ դուստր քո փոխանակ պատժոյ ընդունիցի պարգևս 'ի մօրէ իւրմէ զի առաւել իրաւունս ունիցի դուստրն հետևեալով գործոց քոց, որ ես մայր իւր, քան թէ բանիցն կնոջ օտարականի, որ է վարպետուհի իւր։ Եւ եթէ զայս առնես առ 'ի վայելել զերեխայական բարս նորա, յիշեա զի հաճութիւնքն երեխայից, և զմայլումն նոցա են վերջապէ երեխայականք, ծաղր, և տնաղ, քայց եթէ ոչ բարւոք սնանիցի, յերբ ժամանիցէ 'ի կատարեալ հասակ, յայնժամ ոչ ողջայականք հաճութիւնքն անցեալք էին ողջայականք խաղալիք և կատակ, այսպէս և յետոյ արամութիւք և զայրացումն եղիցին հաւատիք։ Արդ եթէ իմաստուն ես, թող զծաղրն

այժմոյս, առ 'ի ոչ ունիլ զծաղը վշտալի 'ի յապա-
գայ ժամանակի։ Կամիմ ասել քեզ զբան մի, եւ
առաւել կամիմ, զի գոլով հեռացեալ 'ի նոցանէ,
լինիցին աշակերտուհիք առաքինութեան, և պար-
կեշտութեան, քան թէ հուպ, և ներկայ գո-
լով նոցա. եղանիցին վարդապետուհիք լիտու-
թեան, և լրբութեան։ Արդ որովհետուն այապէտ,
խնդրեմ 'ի քէն զի մի' խնդրիցես, կամիմ զի մի'
կամիցիս, ստիպեմ զքեզ, զի մի' ստիպիցես, և
աղաչեմ զքեզ, զի մի' աղաչիցես ինձ, ապա թէ
ոչ, հրամայեմ քեզ զի մի' հրամայիցես ինձ։
Արդ լուեալ Քառատենա զնստացեալ պատաս-
խանին, դադարեցաւ 'ի ըստիսմանէ, և եղև
այնքան զահի հարեալ, մինչ զի մինչ կայր հայրն
'ի մէջ պարսպացն Հռօմայ, ոչ համարձակէր
երթալ 'ի տեսութիւն դստերացն, եթէ ոչ ծա-
ծկապէս և թաքնաբար։

Յաղագս թէ որպէս ընտրէր Կայսրն զփեսայս իւրս ։ և որպէս փորձառութիւն ունէր զնոսա ։

Գլուխ Մեռասանեարրորդ ։

Զի որպէս իմաստնագունեալ Կայսրն Մարկոս 'ի բնական առաքինութիւնս եղև դերազանցագոյն քան զամենայն մարդկանացուս, նմանապէս 'ի հաբանացուցանել զդաստուրս իւրս ։ երևէր ։ թէ ունիցէր զազգականութիւն ընդ դիցն ։ որք միշտ են կենդանիք ։ Եղև այնքան բարեբախտ վասն արդեանն իւրոյ ։ և 'ի ձեռն պարգևաց դիցն 'ի յունիլ զփեսայս զգաստս ։ և զմուտս ։ որքան ոչ եղև յոյժ բախտաւոր 'ի դստերս համեստս ։ Մեռեալ բարի ծերն վասն մեծի անզգուշութեան որդւոյն իւրոյ անպքանկի առ 'ի կառավարել ։ և վասն ոչ ունելոյ յոյժ զբարի համբաւ դստերքն իւրք 'ի կեանն իւրեանց ։ կարէին տալ զվախճան փառաւորեցելոյ յիշատակի հօրն իւրեանց ։ եթէ ոչ իցեր վհատդոյն քարութիւնն փեսայից ։ զորս ընտրեալէր նա 'ի կենդանութեան իւրում ։ Ամ յաւուր պատահի զն այն որ կորնչի 'ի ձեռն որդոց վատաշուքերից ։ նոցն շահի 'ի ձեռն առաքինութեանցն փեսայից ։ Արդ զայս խոկալով Մարկոս Աւրելիան Կայսրն ։ վասն դստերաց իւրոց ։ ոչ առնէր զփեսայս 'ի բազմութեան ։ զորս մատուցանէին ունայնութիւնք աշխարհի ։ այլ 'ի սակաւուց ։ որք վասն բազում բարեացն նշանակեցեալքէին ։ Եւքանզի 'ի յամուռ

մունութիւն ներկայս։ Եամ աղաղանն կայանս 'ի
ցանկալն դրախտի, զորս ունին 'ի քաղաքի, և ոչ 'ի
քննելն անձանց, զորս տանին 'ի տունս իւրեանց
Կա ապ հանճարել ամուսնացուցանէր զդստերս
իւրս, ոչ թագաւորաց օտարականաց, այլ ծե-
բակուտից բնական բնութենականաց, ոչ նոցա
որք ցեղեալք էին 'ի բարձրաչունից տոհմական
նոց, որպիսիքեին Ըշկիպինքն Քաբրիցեանքն
Տօռքատեանքն այլ նոցա, որք առաքինութիւնք
իւրեանց համբառնային նորապէս, և հիմնա-
դրեին զքարի ցեղս 'ի տոհմս իւրեանց։ Ոչ
ամուսնացուցանէր նոցա որք պանծային զորե-
ղութիւն, և ուժեղութիւն գործեցելովք յանց-
եալովք հայրենեօք իւրեանց։ այլ ամուսնացու-
ցանէր նոցա, որք փայլեին, և հռչակեցեալք
էին դերադունիւք գործովք անձանց իւրեանց
ոչ ընտրէր յոյժ զնարուստս, և զփարթամս,
այլ յոյժ առաքինիս, ոչ զլաբմոքս, և զբանապար-
կուս, այլ զնամեստս, և զհանդարտս։ ոչ զանձ-
նապանծս, այլ զհեզ և զհմուտս։ ոչ զինքնա-
մուծս, և զինքնախառս 'ի գործս այլոց, այլ
զամենիմաստս, և եպարկեշտս։ ոչ զդաստարկա-
բանս, այլ զլուսկացս, ոչ զնեղասիրտս, և
փութանակի բարկացողս, այլ զհանդուրժեալս,
ոչ զանապարծս, այլ զերանարհս, ոչ զկագողս և
զկուս ասէրս, այլ զհամբերողս։ ոչ զնոսա որք
'ի հրապարակի զպարիս խնդրեն, այլ զնոսա,
որք առաւել արդիւնաւորք են 'ի մէջ իմաստա-
սիրաց։ Զի 'ի յայսմ պատճառի ոչ ուրեք հա-
ւատայր Քանդի ոչ ամուսնացուցանէր զդստերս
իւր նոցա, զորս այլք գովէին 'ի հեռաստանէ,
այլ նոցա, զորս երկար ժամանակաւ քննէր 'ի
մօտուց։ Աբգարեւ ունէր զիրաւուն։ Քան-
զի իրքն որք պատկանին 'ի պատիւ մարդոյ, ոչ
է պարտ իմաստնոյն հաւատալ միայն 'ի կարծիս
այլոց, և ինքնրհմութիւնս նոցա։ Ոչ է իմաս-
տուն նա, որ համարձակի առնել զամ ինչ ըստ
դատողութեան իւրում միայնոյ, և նմանի յիմա-

բաց նա, որ առնէ զամ ինչ ըստ կարծեաց այլոց։ Արդ դիցուք թէ Կայսրն ունիցէր զբարի հայեցուածս ի յերեսան, ի յերիթալն իցէր հանդարտ, ի խօսիլն յոյժ բանաստեղծօրէն, ի սեղանն յոյժ ժուժկալ, ի պատասխանելն ունիցէր զմեծ գգուշութիւն. և ի զօրութիւս բանից, նաև ի սահմանադրութիւս իցէր մեծ յարգոյ, բայց ի պատճառս ամուսնութեան, էր յոյժ խիստ. և ծանրագոյն մինչև ի յեղերիլն, և այս յաճախապէս հանդիպէր, ոչ մինչ նա ընդալոյց, այլ մինչ այլք զայրին առ նա աղաչել զնա։ Արդ պատահեցաւ ի ասնախմբութեան դիոյն յանվարի երթալով Կայսրն ի գաչտին Մարցիու ի վերայ երիվարի միոյ կառաղոյ, և ցասմնահարի, պատահեցաւ աղաւաչի միում, որ հեծեալ էր ի ձի երիվարն Կայսեր անկեալ ի վրայ աղավաչին այնքան մեծագոյն բախմամբ, մինչ զի աղավաչն, և ձին իւր ի միասին անկան, մեռեալ աղաւաչն, և սատակեցաւ ձին և երիվարն Կայսեր կաղացեալ ի յոտից և Կայսերն վերուսրեցաւ մի ասն, և մի ձեռն եղեալ ի տեղւոջ իւրմէ մնաց Կայսրն թաղկացեալ։ Եւ այնքան յաւելաւ ցաւն, մինչ զի եդաւ ի վասանդի մահուան։ Բուռեկա կայր որ սուտ, և բոլոր Հռոմ ի յերիրբայութիւն վա կենաց նորա։ Եւ քանզի ասկաւուք աւուրբք յառաջ ըսկսեալ էր խօսիլ Կայսրն զամուսնացուցանելոյ զմարինէ երրորդ դուստրն իւր, սուիպերցին զնա, զի վերայ սահմանիցէր զայն յաւուրն յայնմիկ։ և նա վասն սաստիկ. ցաւոյն բաղկի, և յաղագս արեանն, որ մածուցեալէր ի մարմնի իւրում, և վասն տուռասլանաց սրտի, զի յաղագս հայցմանն այնորիկ մատուցեալք էին առ նա, յամեցոյց զպատասխանին ի յայլոր։ Եւ եղև յորում ժամու եկեալք ամենեքեան եդան ի ներկայութիւն նորա, ըսկսաւ նա խօսիլ այսու կերպիւ։

Յաղագս թէ որպիսեաւ կերպիւ խօսեցաւ Մարկոս Կայսրն առ ծնողն ազգի մեր զոր կամէին ամուսնացուցանել միում 'ի գաստերացն նորա։

Գլուխ Երկոտասաներրորդ։

Աղում անդամ տեսի ես 'ի քայլս, և փորձ առ 'ի անձամբ իմով, զի սակաւ հաճոյ նկատումն, և բազում վաղ վաղոտութիւն 'ի գործս և 'ի յառնելս ներկայականս, զնոսա 'ի մեծի անպատեհութիւն, յանպատշաճութիւն, նաև յանհամութիւն զհանդերձեալսն։ Դիցուք թէ թոյլ տացի յիմաստուն իմաստնոյ ուրուք զկիր իմն հաւատալ դադողութեան և կարծման իւրում միայնոյ բայց 'ի պատճառս ամուսնութեան (թէպէտ հայրն իցէ իմաստուն) առանց դատողութեան և կարծման այլոց, ոչ պարտի սահմանադրել յոյժ թեթևապէս։ զի նախանձոտ բախտն, թէևս 'ի յամ իրս ցուցանիցէ ձախորդ, սակայն յայսմիկ առաւել տայ զհակառակութիւն և ներհակ ընդիմադարձումն, քան թէ յայլ ամ իրս։ Նա որ խօսի զամուսնութիւն, և զհարսանեաց, հարկէ մտանել 'ի միայնակեցարանն իւր, և այնքան խորհրդաւորապէս խորհիլ անդ զգործառութիւնս զայս, որպէս թէ երթայ ըստացուածքն հաւատարմուն կեանն, պատիւն, համբաւն, հանդստութիւն անձին իւրոյ, և մարմնոյն իւր, որ է դուստրն իւր, որպէս թէ համայնքս

զայսոքիկ կախիցեին զբաւոյ, կամ զչար ընտրո-
ղութիւն։ Եւ այսպէս կարծեմ, և ունիմ 'ի մտի,
եթէ համայնք իմաստունքն հաւիցեին 'ի մէջ բու-
թայի միոյ, ոչ կարացեն տալ զբարի խրատ մի
վասն հարատեւաց, կամ ամուսնութեան միոյ,
և կամիք դուք, զի ես միայն տայցեմ իակոյն և
փութանակի գուլով ազէտ։ Արդարև, անդ սի-
տոյ է խորհուրդ կատարեալ, և հասուն, ուր
զկնի անկման 'ի վտանկի միւմ աւանց այլ առա-
ւել մեծագունի վտանկի որ ոչ կարէ գուլ հնար
փրկութեան Այնմեծահամբաւ Մարկոս Պորցիոնն
որոյ կեանն էր հայելի յայնմ ժամանակին, և
ասացուածք, և խրատք նորա մեացին վերս
հաշակեցեալ 'ի յամ դարս ժամանակաց։ Սա 'ի
մէջ այլոց իրաց արժանի յաւիտենականի յիշ-
ղութեան ասաց ատենաբանելով 'ի մէջ խորհրդա-
բանին այսպէս։ Ո՛վ հարք համադրեցեալք, ով
ժողովուրդք բարեբախտք յաղագս հրամարտա-
քացն որք հրամայեցան 'ի ձենէ հաշակիլ 'ի յայտ-
քաղաքիս, ծանեաք զի մի միայն խորհրդով, և
խորհրդականութեամբ սահմանադրեցիք զերիս իրս,
և են այսոքիկ։ յարուցանել զպատերազմ նորապ-
ատեմ պարթևականաց, յարատեւել 'ի թշնամու-
թեան ընդ կարթագինացիս, և ամուսնացուցանել
զհինգ տիկինս Հռովմէացիս ընդ հինգ արանցն
ազնուից Սաբիտանացւոյ։ Եւ իրաւի ասա-
ցեկիմ ես։ զի ոչ հանգուրժէ 'ի մէջ իմաստնոց,
թէ իր մի այնքան դժուարսակիր 'ի ձեռս այս-
քան վաղվաղակի, և յանկարծակուոյ ազգմանէ
ահմանադրեցեալ աւարտիցի։ Արդ առ 'ի հա-
ճեցուցանել զիսելս իմ, և առ 'ի վճարել զպարտս,
զոր պարտիմ հայրենեաց իմում, ասացից զբան
մի։ Յարուցանել զպատերազմ նորապէս ընդդէմ
պարթևականաց, յարատեւել 'ի թշնամութիս
ընդդէմ կարթագինացւոց, և ամուսնացուցանել
զհինգ տիկինս Հռովմէացիս ընդ հնդից արանց
ազնուից մաբրիտանացւոց, վասն այսոքիկ երից
իրացն, համայնք մարդիկք պարտին տալ զխոր-
հուրդ

հուրդ, և համայնից արանց հարկէ առնուլ զզ-
խրատ, և առ համայնք դիւքն են յանձնելիք զայս,
և բիւրք խորհրդականելիք 'ի վերայ իւրաքանչ-
իւրոյ այսոցիկ են առնելիք։ Իրաւի բանքս պ-
ատրիկ, եղեն արժանիք այնպիսի մարդոյ, քան-
զի իր մի կարէ սահմանադրիլ 'ի ձեռս ընտրու-
եց բազմաց և խոստանի, բայց իրք բազումք 'ի
ձեռս մի միայն ընտրութեան ոչ պարտին սահմա-
նադրիլ, և աւարտիլ։ և թէպէտ կանոնս այս
իցէ վասն ամենից իրաց, սակայն առաւել պի-
տոյանայ 'ի յամուսնութեան։ Ո՞վ բարեկամք,
ասէք, թէ այն զոր մատուցանէք ինձ 'ի փե-
սայութիւն, է բարի, և յոյժ սիրեցեալ 'ի ժողո-
վրդենէ, և բարեհամբաւեցեալ Աստ վաճառել
և դնել։ զայս միդնէք 'ի դմա այնքան զվաթթար
ցուցանումն զի հաւատարմութիւնն բարոյ, ոչ
կայանայ 'ի մէջ ռամիկ ժողովրդեան, այլ 'ի մէջ
Փիլիսոփայից, ոչ և 'ի մէջ բազմաց, այլ 'ի մէջ
փոքրանց, ոչ 'ի մէջ այնքանեաց, այլ 'ի մէջ այս-
ոքանչից։ Այսպէս զիտէք, թէ այն ամ զոր
ռամիկք խորհին, են ընդունայնք, և զորս դի-
տեն, են ատութիւնք, և զորս դատապարտեն,
են բարիք։ և զորս փորձեն, չարք են, և զորս
գովեն, համբաւակորուստք են, և վերջապէս,
զորինչ առնեն, համայնքն խելագարութիւք են,
զի գովութիւք նոցա ըսկսանին լրբութեամբ, և
յարատեան թարց ուշիմութեան; և աւարտին կա-
տաղեաւ բարկութեամբ։ Ո՞հ թէ զոքանս տե-
սի էա 'ի տալա, որք գոլով ոգի զմրուրս գինոյ
արտաքսեցեալք 'ի խորհրդարանէն, յետոյ եղեն
սակ նշանակ ամենին 'ի հոգ որոց ենթադասու-
թեան նոցա կառավարիւր ժողովրդեան թագաւորութիւն։ յոյժ
մեծաւ թեթևամտութիւն ժողովրդ ռամկայ տան 'ի
գետին զմարդիկս, և յետ այնորիկ ոչ սակաւ
լրբութիւն գարձեալ բարձրացուցանեն զնոս հայե-
ցարուք թէ զի՞նչ իցէ ժողովուրդն ռամիկ, զի
զգործս խմաստնոց տան 'ի կատականս, և յոյժ
միաբանեալն 'ի մէջ հասարակ ժողովրդեան համա-
բեն

բեն ընդունայն իմաստուն՝քն բան կերպի իմն զի զարիւրն Փիլիսոփայից ուտեն 'ի տեղի որոման յիմաքն , և հակադարձասէս , արիւրն յիմարաց է որոմն 'ի մէջ իմաստնոց ։ Յայնմանէ , յորմէ նախնիք հարքն մերք փախչէին։ զկնի նց վազեն։ աստուանօր համայնք ընդունայնքն քանզի սիրեն զգոլ սիրեցեալ , և ատեն զգոլ ատեցեալ ։ Արդ այնպիսիքն ունիցին զհասարակ կանոնս այս , թէ ամ մարդ որ ցանկայ սիրեցեալ գոլ յամենեցուն հրապարակաբար , ոչկարէ զերծանիլ առ 'ի յուներլոյ զբազում մեղս 'ի գաղտնի . Կամք դիտել թէ ովքէ նայ որ այսօր սիրեցեալ է ի ռամիկ ժողովրդոց ուրեմն լուարուք զի ասայցից դիպեսցի յորումն դիպեսցի , վերաւորիցէ յորումն վերաւորէ ըզգասցէ յորումն ըզգայ , ռամիկ ժողովուրդն սիրէ զնա , որ խփէ զաչս իւր առ չարս , և թշնամի բարեաց , օգնական ընկեր ստախօսից ։ քակտէ զշնմարտութիւն , ընկերակցի մարդասպանաց , ծառայէ և զատապովէ գողից , խնամարկու եղանի աղմկարարաց , հալածէ զխաղաղասէրս , ազատէ զմեղաւորս , և սպանանէ զանմեղն , բարեհամբաւէ զվատահամբաւս , և վատահամբաւէ զբարեհամբաւսն , Վերջապէս նաէ առաւել սիրելի , որ 'ի բաց մերժէ յինքենէ զբարիս , և իցէ առաւել՝ ունայն 'ի մէջ ունայնիցս ։ Իրաւի զծծագոյն երկբայութիւն դնէ 'ի մէջ իմաստնոց նա , որ հասարակաբար գովի 'ի համայնից խելագարից ։ և պատճառ սորինէ այս , զի մինչ հասարակք ռամիկքն ոչ սիրեն , եթէ ոչ զնա , որ նենգութեամբ սանձահարէ զառաքինութիւնս , և թուլացուցանէ զպախուցն , մոլութեանց , ուստի նա որ յամենից հասարակաց է սիրեցեալ , ունիմք զնմանէ կարծիք , թէ ոչ ումքք որքան չարևիցէ է՝ զիցէ վշտաքնիլ ։ Ո՞հ թէ քանիցս անդամ թոյլ տան արդարք զիքն , զի մարդիկքն այնք , որք փառամոլութեամբ ջանան ունիլ , զփառս և զպատիւս արտաքոյ իրաւանց , և զայս առնեն 'ի

'ի բազում աւուրս , յանկարծակի , 'ի միում վայրկենում . մինչեն անհաք , զամ պատիւս , և զփառս կորուսանեն միով վատահամբաւութիւն։ Արդ ընկալարուք յինէն զբանս այս , զի 'ի մէջ բազմաչունից սակաւք գտանին արժանիք գովութիւն , և բազումք գտանին արժանիք յանդիմանութիւն։



Յաղագս թէ յոյժ քննելի է փեսայն , նախ քան զմոտանելն նորա 'ի տուն։

Գլուխ Երեքտասաներրորդ։

ԱՐդ եկեսցուք այժմ առ յիրս յատուկս։ Դուք գովեցիք առաջի իմ զաղայս այս , և եթէ այնպիսիք իցեն գործք գործոյ , որպիսիք են բանք քերանոյ ձերոյ , մի՛ կարծէք թէ արդիւնաւորիցի միայն լինիլ փեսայ իմ. այլ և արդիւնաւորիցի լինիլ միայնակ ժառանգ Կայսերութիւն։ Բայց հարցանեմ զձէնջ թէ յաղագս որոյ իրի կարէք գովել զայս ազգականն ձեր , զի մի իցէ հակառակութի՛ն մէջ բանից ձերոց , և 'ի մէջ գործոց իւրոց։ Եթէ է գեղեցիկ , եղիցի յոյժ նուազ եղեալ , եթէ է 'ի բարձր արենէ եղիցի ամբարտաւան , եթէ է հարուստ , եղիցի սիրող մոլուռ , եթէ է աղքատ , եղիցի ընչաքեր , եթէ է ուժեղ , եղիցի համարձակեալ , եթէ է երկչոտ , եղիցի վատահամբաւեցեալ , եթէ է յոյժ լուսակաց , եղիցի տգէտ , եթէ է յոքնախօս եղիցի ստախօս։ եթէ է գեղեցիկ , եղիցի ցանկացեալ , եթէ է տգեղ , եղիցի նախանձոտ

առ զերեցկութիւն այլոց։ Արդ եթէ իցէ ա-
զատ 'ի համայնից յայսցանէ, երդնում ես տաղ-
դմս զմարտիս դուստր իմ ձրի։ Զայս տեսեմ
ոչ թէ ես հաւատամ, թէ իցէ չար ինչ յաղ-
գականէ ձերում, այլ զի մոռածիցէք դուք թէ
կարելի է քան բնութեան դուլ չար ինն ըստ որում
մարդ։ Յետ այսորիկ, ես ոչ ընդդիմանամ
հաւատարմութեան ձերում, յաղագս համաձայնաց-
ման ձերոյ, զոր ունիք զդմանէ, բայց կամիմ
զի մի՛ յանդգնիցիք զկարծիսն իմ, զի վասն
կենաց տղայիդ այդորիկ, ամենեքիմք և բոլոր-
ովքիմք ես ունիմ զանձանօթութիւն։ Կամանա-
պէս ևս ոչ կամիմ զի խոկայցէք դուք, թէ
դուստրն իմ զարդացեալ, և սնեալ իցէ այնքան
խոհեմութեամբ յապարանի իմում քանզի կամիմ
հարանացուցանել միայն վասն համբաւոյ դորայ,
որ ունի 'ի մէջ ժողովրդեան։ Ո՞հ թէ զորքանս
տեսաք 'ի ժամանակի մերում, և զորքան ըն-
թերցաք յանցելոջ ժամանակի, զի երբեմն հրա-
մանաւ դիցն և երբեմն արդիւնաւոր մանէ իբ-
եանց երբեմն վասն չար գործոց իւրեանց և
երբեմն սրում բազմաց իւրեանց խոստանալով
մինչ խորհեին տանել 'ի տունս իւրեանց զվե-
ասայս, փոխանակ տանելոյ 'ի տունս, տանին 'ի
դժոխս, և փոխանակ հարսի, ստացան զօձս,
խնդրելով և որոնելով զորդիս, գտին զիժս,
և զբարբս և դնելով զմեծագոյն արենակցու-
թիւն, ընկալան յինքեանց զժահահոտութիւն,
և խնդրելով զբարեկամս, գտին զթշնամիս, և
կամելով ունել զպատիւս, և զմեծարանս, ստա-
ցան զանամոտհամբաւութիւն, և վերջապէս, ամուս
նացուցեալ զորդիս իւրեանց, խոկալով ունել
արդէն զկեանս բարի։ և զանդորր, տրտունջ
ծնօղքն չարչարեցեալք 'ի կեանս, և տուռապե-
ալք ևս առաւել 'ի ժամ մահուան իւրեանց։
Եւ իրաւի 'ի պատճառս զայնպիսեաց պարտիմք
ցաւակցիլ, և ուրախանալ պարտեալ զորտ-
մեցեալս։ Բայց սակայն, պարտիմք նկատել
զար-

զարժանէ պատուիժս դէպն ամրդարոց ; զնան զոր-
ծոցն անարդարութիւն արարեալոց 'ի յանարդա-
րոց մարդկանց , զի նա արդիւնաւորի զպատիժս
երկարատեղն , որ անդրոյզ համարձակութիւն ,
որպէս խելագար , զերս յոյժ դժուարակիրս
ահմանեալ վաղվաղակի թեւակոխութիւն խորհ-
դոյն իւրոց ։ Արդ հայեցարուք բարեկամք ,
եթէ իմաստութիւնք էք ; մի զարհուրիցք յայսմանէ ,
զոր ասեմ ձեզ , մի և դպրեալ ինքնութեան
զոր առնեմ ։ Չի զողայոյ այսր զոր ես ընդուն-
ելոցեմ 'ի յոյդիսութիւն ; Քաւութիւն կիցեն իմ 'ի
վերատութիւն , և մարդինամ դուստր իմ 'ի այրու-
թիւն Կոմոդոս իշխանն 'ի յեղբայրութիւն ; Դե-
ռակոյսք խորհրդարանին 'ի յանկերակցութիւն , 'ի
յնտանեաց իմոց ընդունել 'ի յաջգականութիւն , և
ծառայքն իմք ընկալնուն որպէս զոգեր իւրեանցն։
Ուրեմն իրաւունն ոստանիցէ ; զի յոյժ նկատուծ-
բեն հայեցուք 'ի զդեսանսն այսր , քանզի բա-
զումք են նոքա , որք զգենլոցեն զդա . զի զդեսանն
այն որ 'ի բազումս տարածի , հաճութիւն քան-
մոց պատոյ ձևիլ , և կորիլ ։ Բազում իսկ
տեսանեմք զնահանաբար բան ինքնութեան մերում ,
զոլ մեզ յոյժ զքաստակար 'ի մտոնելոյ , և ոչ զոլ
զքաստակար 'ի հեռանալոյ ։ Չի արեգակն չանցուք
իւրովք այրէ զմտրմինն եթէ օտարացեալ մերձա-
կայեցի իւրոց , և հակառակ արձակէս , նոքա որք
ինքեանն 'ի հիւսիս և 'ի վերջն երկրագնոյ ոչ վնաս
ցուցանեն զնոսա , զի հեռիւ 'ի նոցանէ ։ բանիս
զորդիս ունեաց Հռոմ , զոր ունելով 'ի յերկիր
օտար , հեռանեցաւ նմա մեծ օգուտութիւն ; և չահ
'ի յիրս հրապարակի նոր , և ոչ միոքն համբաւ
տարածեցաւ 'ի բոլոր աշխարհի , իսկ զկնի քա-
ջութեան զնա 'ի տունս իւրեանց , հեղան այնքանք ն-
լիութք անմեղք արանց , որք քան նախ հեղեալք
էին զարիւնս քարբարոսաց ։ Եւ թէ որպէս
ճշմարիտք այս , հարցիք զՅուլիոս Կայսր ,
զՊոմպէոս , զՍիլլա , զՄարիոս , զկատիլինա ,
զկաթիլինա , զԼեպիդոս , զՕկտաւիանոս զՄար-
կան-

կանգնիս ցկալիդոլա , ցնէբոն , ցՕԹՕնոս , և
ցդօմիցիանոս ։ Եւ որպէս ասեմ ես զսոցանէ սա-
կաւուց որդւոց պոնկածնացս , զորս ունեաց
Հռովմ , կարէի ասել զայլոց բազմաց զանգթից ,
և զանողորմից, զորս զարգացոյց ի տալիս ։ Հա-
ւատացէք ինձ , զի ոչ ամենեքեան , զորս տես-
սանեմք ի հրապարակս , և հաճոյք թուին մեզ ,
նոյնքն հաճոյք թուիցին մեզ մինչ մուծամեմք
զնոսա ի տուն ։ Չի բազում զանազանութիւն գոյ
ի մարդն ի զրուցատրութեան , որք լինին
բանիւք , և երկար ժամանակաւ կենցաղա-
վարիլ գործօք ։ սակաւ իրեւ պիտոյ մարդ կայնոյ
ոգիտութեն , այլակերպելոյ զինքն առ ի խա-
բել զայլս , և առաւել սակաւագոյն ինքն զոլ
խաբեցեալ յումեքէ ։ վասն միոյ Պարզագիտու-
թեան երեսաց մարդոյ և քաղցրութեան բանից լե-
զուին . հանդարտութեան անձին , և յոյժ չափա-
ւորութեան ի խօսակցութեան կարէ այսու ամ ոք
խաբել զայլս այսօր . և ի վաղիւն նոմիմբ ար-
հեստիւ զինքն յայլոց գոլ խաբեցեալ ։ Ոչ կա-
մեմ թողուլ զպատմութեան մի ։ Որ գոլով ես
տղայ , ճանաչեցի զմեծահռչակ աստենաբանն կո-
չեցեալ Տաւրինոս , բազում անգամ աստենաբա-
նելով ի խորհրդարանին ։ և պատահեցաւ զի
անգամ մի աստենաբանէր վասն սիկնոջ միոյ Հռ-
օմայեցւոյ , որում Հրամայեցեալէր , թէ ամուս
նացուցանիցէր զմի գուստր իւր յոյժ համեստ ի
միում վարժապետի ձիարանի միոյ, որոյ տեսուն
երևիւր Հռովմայեցւոյ , և ոչ որ թաքչիւր ի
ներքս , որ ի մէջ այլոց խօսից ասաց զբանս
այս ։ Ո՞վ հալոք համագրեցեալք , ո՞վ ժողո-
վուրդք բարեբախտք , զգոյշ լերուք մի՛ հրա-
մայեք զայն , զոր յեսոյ ըստ ջացեալ թէ ըն-
դեր Հրամայեցիք քանզի վատթար ամուսնու-
թիւնն է որպէս նա , որ արձակեալ ձգէ զկոչտ
մի , որում ումեք դիպիցի , վիրաւորէ , և զմեր
ձակայն կուրացուցանէ , և ի վախճանի նոյն
ինքն փշրի , և բեկոտի ։ Եղէն իրաւի խօսք
բարձ-

բարձրագոյնք, և համանմանութիւն բարուք խմացեալ, ներփակէ յինքեան զմեծագոյն վշիռ։ Արդ յայտնիէ ամենեցուն, զի վաղթար փեսայն ոչէ, եթէ ոչ մահ վասն կնոջ որ առնու զնա և են վատահամբաւութի ազգականաց, զոր ջանացմամբ ընալեցին, և տոիպմամբ հետևեցան տալնմա, և 'ի վախճանի է չար վասն իւր, և վասն ծնողաց իւրոց, որք մատուցին նմա։ Ուրեմն վասն իրացս այսոցիկ համայնից, զորս ասացաք, կարէք վերահասուք լինիլ, թէ զինչ իցէ, զոր յայսմիկ ամուսնութիւն զգամ։ 'Ի յաւարտիլ խօսակցութեան այսորիկ, յոյժ հաճոյ եղեն բանքս այսոքիկ խորհրդաւոր ծերակուտիցն, որք և յոյժ շնեցան, և ձիավարք ազնիւք ազգականքն տղային մնացին յոյժ ահաբեկեալք, և Կայսրուհի Քաւատինն եղև ամենայն, և վրդովեցեալ, զի ներածութեամբ նորին էր շարժեցեալ այս իրակութիւնս։ Բայց եթէ այսու խօսակցութեան զինչ վախճան ունեաց ամուսնութիւն, պատմիչքն ոչ յիշատակեն, որոց հետևիմք մեք յայսմ գործառուեա։

Յաղագս թէ Մարկոս Կայսրն ուրքան մեծ բա-
բեկամ ինչ եղեալ ազնիւ կրթեալ
թեանց, և թշնամի աղաւաղից
և կասակարկուաց։

Գլուխ Զորեքտասանեարորդ։

ԱՐդ թէպէտ բարեբարոյ, և իմաստնա-
գուներ Կայսրս այս, վասն դիտելոյ
զանազան դիտութեան, վասն ուժգ-
նութեան ի զէնս, և վասն մաքրութեան
կենացն, նաև վասն քաղցրագունի
կենցաղավարութեան ընդ իւրայնոց, ինչք մեծա-
համբաւ ի մէջ մեծատամբաւացն աշխարհի բայց
քաղցր զուցատրութեան որ ունէր ընդ ամենե-
սեան արար անուանի ի մէջ բոլոր աշխարհի։
սակայն զերս առաւել հաշելիս և թարց ոչինչ
տրտմասառն խոսակցութեան ի մէջ մեծամեծաց և
մէջակաց և կրտսերից են զի նա որ է, ուր և
թագաւոր և իշխող բազմաց թողցէ զինքն հա-
ղորդակցիլ, և զուցատրել ընդ ամենեսեան, և
լենիլ բարեբարոյ ընդ հպատակաց իւրոց, և
գոլով Կայսրս այս, այսու առաքինութեամբս
ոչ սակաւ ատացաւ զիտաս, և զհամբաւս, քան
զվերոյ ասացեալք առաքինութիւնքն Համայնք
գործք բարիք կարեն գոլ դատապարտեցեալք
ի չար դիտաւորուեց վատթարաց, բայց բարքն
քաղցրաքնութիւնք ունին զայս յատկութիւնս,
զի չարն գովէ զբարին, և զբարին վերահաս-
տատէ զչարակնութիւն չարին։ Ոչ դոյ ի միում
մարդում այնպիսի մեծատոյն մեղ ի կեանս իւր,
որոյ բարեաւ զուցատրութիւն և կենցաղավա-
ր-

թուիթքն ոչ ծածկիցի. և հակադարձաւէս, ոչ դոյ յանցանք այնքան գաղանի որ չարախօսութիւն և 'ի չարաձձիկ կենցաղավարութիւն 'ի ժամանակի որում առաւել խոցէ ոչ լինիցի բացայայտ նեցեալ։ 'Ի յերկուս իրս չափազանցականս, ոչ է այնքան ծանր վասն իրին. հրապարակի մարդն այն, որ է տկար 'ի պահել զսորհուրդս, և քաղցր 'ի զրուցատրելն 'ի հրապարակի. որպիսի է նա որք առաքինի առի պահել զսորհուրդս գաղտնիս, և դժնեայ, և չարաբնութիւն խօսակցութիւն 'ի հրապարակի տեսաք զբազում անձինս, որք ոչ ունելով զբարի քաղաքավարութիւն, երկար ժամանակաւ մնացեալք տեսեցին 'ի Հռօմ, միայն վասն գոլոյն իւրեանց քաղցրաբանք, և բարեվարք, և համեղախօսք, և տեսաք սաւաւել բազումս որք թէպէտ էին ուղղք 'ի պաշտօնս, և 'ի գործս իւրեանց, 'ի սակաւ ժամանակի, վասն լինելոյ նոցա խիստք, և սոպեռ բարուք. զրկեցան 'ի Հռօմայ։ Զայս ասեմ քանզի բարի Կայսրս այս, եղև այնքան զվարձ 'ի դէմս իւր, այնքան բարեկամավաք բարուք 'ի սովորութիւն իւր այնքան որբանոնուդ 'ի զրուցարանութիւս իւր մինչզի դիւրաբար ձգէր զբազուկն իւր 'ի վերայ ուսուցն այլոց, և կայնուր զձեռս ծայրագոյն գործուեսաց և բանուեղոց։ Դռնապանքն իւրք ոչ կարէին արգելուլ զնա, որք կամէին ունել զհօսակցութիւն 'ի պալատի նոր, ոչ և պահապանք զինուորք իշխէին որոշել զնա, որք կամէին խօսիլ նմա 'ի փողոցի, կամ 'ի դաշտի։ Ամենայն հասակի եւ զայն զոր ամ հասակ քնակեանաբար պահանջէ, առնելով զինքն ամ ընդ ամենեցուն։ զի եղև երեխայ ընդ երեխայից, տղայ ընդ տղայից, ծանրայանձն ընդ ծանրայանձին. թեթեւայանձն նոր թեթեւայանձին այլ ընդաւանց համարձակաց ընդ համարձակաց և վերջապէս ծեր ընդ ծերոց սովորէր ասել Յորժամ որ 'ի ներկայութեան իւրում պարսաւէր զոմանս ոչ բարուք կրթեցեալս լեզուս քամ-

հելով զթութիւն ծերոց և զթեթևութիւն
տղայոց դոլով ծերացեալք թէ թողէք նց՝ ուրեմն
թողուն ձեզ զի բաղում անգամ 'ի տղայից ու-
շնից, վերադարձցին ծերք խելագարք. և 'ի
տղայոց խելագարաց, սովորք են ելանել ծերք
ուշիմագոյնք։ 'Ի վախճանի ամենից իրաց բնու-
թիւն արար վերս բնականս։ և որպէս 'ի բաղում
տկարութիւն ոչ կարեմք առնուլ, եթէ ոչ զաս-
կաւ զուժս, կարեմք ընդդիմանալ բնութիւն մի-
բում երբեմն և ժամանակ ինչ, սակայն ոչ կա-
րեմք բոլորովիմբ տիրել նմա, Եւ զարմանամ
ընդ միտս զի բաղումք, որք պարծին զինքեանս
դոլ այնքան ախոյեանս 'ի յառաքինութիս և այն-
քան վերհամբարձեալս մտօք, մինչ զի կամին
հաւատացուցանել մեզ, թէ դոլով կենդանս-
վարեցեալք իմարմնի։ և դոլով ինքեանք մար-
մին, ինքեանք միայն ոչ զգան զմարմին։ Ո՛չ
դիտեմ եթէ բնութիւն արար զայլ 'ի յայլ բնու-
թիւն քան թէ զիս. կամ զիս արար 'ի յայլմէ բնու-
թիւն քան թէ զայլս։ Քանզի ոչ երբեք գտայ
ես փակեցեալ 'ի քաղցրագոյն զրուցատրութեն փի-
լիսոփայականի, զի ընդ բարւոք և դիպող ժամու
ոչ կոչէ զիս 'ի գուռն իւր մարմնոն նենդաւոր։
Որքան առաւել վերհամբառնայ զմեզ, և բարձ-
բացուցանէ դիտութիւն հանդերձ ազատակա-
նութիւբ իւրով, այնքան առաւել ևս տայ զմեզ 'ի
դատին, և խոնարհեցուցանէ մարմնոն թշուառու-
թեամբ իւրով հանդերձ։ Հաւատացէք ինձ
զի՞ մի, զի ծառ մի որ ոչ անցուցանիցէ զգա-
լոնն ծաղկոք, ոչ յուսամք 'ի յաշունն ունիլ
զպտուղս հասունս։ և տղայ մի, որ ոչ անու-
ցանիցէ զտղայութիւն իւր ընդ տղայս, ոչ յու-
սամք, թէ անցուցանիցէ զծերութիս իւրս ընդ
ծերոց։ և որպէս կարեմք բնութիւն մերում ընդ-
դիմանալ, բայց ոչ կարեմք բոլորովիմբ ոչն չա-
ցուցանել զնա. այսպէս սղալին հարքն։ Հաստա-
զանգք որք կամին, թէ որդիքն իւրեանց ըս-
կսանիցին որպէս ծերք, յորմէ հետէ յետոյ պա-
տահի

տահի, զի վճարիցին ոչ տոյժք։ Իբր ուրեմն Կայսրս այս բարի այնքան տեղեակ ի յամ իրս, մինչ զի ի ծաղրս, և ի կատականս, երբ յոյժ ծաղր, և կատակ. և ի հաւատոյս էր յոյժ հաւատոյ։ Եղև Կայսրս այս յոյժ համեստ, և չափաւոր ի յանցուցանել զժամանակս։ Եղև բարեկամ, և սիրօղ երաժշտական ելոյց, և յատկապէս քաղցր եղանակաց ձայնից, և նուագարանաց, մինչ զի, ոչ կամէր սպասել ի պատրաստուն նց։ Մինչ տղայ էր առաւել զժամանակս ծախեաց ի գիտութիւն գրոյով այլ կատարեալ զբաղեցեաւ ի կրթութիւն զինորականս, և եղև բարեկամ կրթուելոց, և ոչ հաւանեալ։ Եղև յոյժ տեղեակ, և յաջողակ ի զէնս, թէպէտ ի յարշաւելոյ զերիվարս երբեմն անյաջող։ Բերկրիւր ի խաղս դնդակաց ի տղայութիւն, և ի ծերութիւն ի խաղս նարգելոյ։ Ոչ եղև բարեկամ աղաւաշեց, և դերասանաց ոլբեն վարպետքս տեսարանաց և սակաւ ընդ կատակ արկուս Հայս Աղաւաշք, և կատակարկուքս անցուցին զմեծ փոփոխուն կայսերութեն Հռօմա, բան փոփոխութիւն բարուցն և բնութեանցն Կայսերաց։ Յուլիոս Կայսրն տայր զկերակուր նոցա։ Օթաւիանոս եղբօր որդին իւր ուղաւորեաց զնոսա, և Կալիգուլա յետս դարձոյց զնս, և եբեր ի Հռօմ։ Ներոնն անդոյնի աքսորեաց զնս, Ներվա դարձոյց ի Հռօմ։ Տրայանոսն բարի աքսորեաց ի բոլորի ի տալիս, Անտոնիոսն գթած ընկալաւ, և ի ձեռս Կայսերիս այսորիկ եղին աւարտեալք, և աղարտեալք, որոյ պատճառն եղև այս։ Զի Հռօմայեցիքն հուշակէին մեծագունիս յաղթանակաւ ի ոչ մայիսի զհամբաւ ավէտ տօնն բերէ։ Ինքն մարն ամ գրից։ Իսկ քուրմքն, որք կոչէին գիտիք կամէին տանիլ ի տաճարն իւրեանց զծաղրաբանսն այնոսիկ, առ ի ուրախութիւն տօնել զտօնս իւրեանց։ և հակառակեալ քահանայքն վէճ տային կամէին տանիլ զնոսա ի տաճարն իւրեանց, յայտ միջոցիս ոմանք ի ժո-

դովիդենէ կամ լով օգնել միոյն , և ոմանք միւսոյն և ոչ ոքիւղ աղաչեցանել եղև այնքան մեծագոյն չընչու

Յաղագս բարւոյ կենցաղավարութեան Մարկոսի Կայսերն։ ընդ համայնս այնոսիկ։ որք գային առ նա առ ի ընծեռել ընդ նմա զիրեր խմբեալ։

Գլուխ Հնգետասաներորդ։

Սաղաք զի չնամութիւն, զոր ունէր Մարկոս Կայսրն ընդ ծաղրաբանից, և ընդ վայրախօսից, և զգալելի կրթութեան նորին, առաց ցուք այժմ զայն, զոր պատահեցաւ վասն զոյն նորա քաղցր, և բարեհաճ, ունելոյ զբարս համեղս։ Է՝ այն քան սլանդակ չարութեն մարդկան, մինչ զի ոչ անձինք բարիք ունին զպարտանգութեան նուազեցուցանել, և սպառել զչարն, այսպէս և վասն թարքը, և չարք անձինքը առնեն զինքեանս պարտական քակտելոյ։ և գահատէ՛ժառնելոյ զբարին օշ և եղանի թէ լինիցի այնքան միաբանութեան։ և ուժեղութեան բարեացն ։ ի վերայ իրաց բարեաց, որքան է՛ն եղբայրութիւնքը։ և անզգամութիւնքը չարաց։ ։ի վերայ իրացն չարեաց։ Որպէսի մեծագոյն ապականութիւն կարէ գտանել գարայն և ժամանակին այնորիկ, ուր առաքինի որ, վասն գործոյ իրիք առաքինական։ ոչ գտանէ զոր, որ օգնիցէ նմա ի գործել զբարի, և յետ առնելոյ նա միայն առանց օգնականութեան իմիք. զբարեգործութեան մի։ գան և յառնեն ։ի վերայ նորա տասն հազարք առ ։ի հա-

կամարաձև ընդ նմա։ Ծայրագոյն բարին 'ի մէջ բարեացէ, յորժամ բնանդատութիւնք, և սնեալ թաւութիւնք յանդիմանին և 'ի բաց մերժին իշխեցեալ առաքինութիւնք. կամ յորժամ մոլութիւնքն եդեալք երկարապէս 'ի սովորութիւնս, հնարին, բարեաւ ներելեմամբ։ Իսկ ծայրագոյն չարն 'ի մէջ չարաց, է յորժամ եդեալ 'ի մոռացման զմարդ դոյն, և աքացեալ զբանականութիւնն, և առաքինութիւնն ելեալ 'ի ձեռանէ, և թուլացին զպախուցս մոլութեց։ Վասն որոյ Մարկոս Կայսրն այս, պահպանեաց 'ի կենաս իւր զփառս մեծադոյնս, խոտորելով 'ի յապերատութենէ իրաց խոտանեց, ոչ զպակաս արդիւնաւորեցաւ, զյիշատակ անմահական, վասն համբերութիւնք կրելոյ զբաղում զրպարտութիւս 'ի կատարելն զառաքինութիւս իւր։ Անսխալելի կանոնէ 'ի մէջ որդւոցն ունայնութեց զի մոլութիւնքն մոլեկանաց ծնանին զմոլեկանութիւս մեղաց և առաքինութիւքն բարդաւաճեալք զարդացուցանեն զբաղում նախանձս, միշտ չարամտիկքն են կրկնապատկայբար չարք, քանզի տանին ընդ ինքեանս զդէնս ջատագովական առ 'ի ջատագովել զչարութիւս սեփականս նա և ունին զդէնս վշտացուցիչս առ 'ի վիրաւորել զբարին այլոց։ Իրաւի եթէ մարդիկք բարիք հոգսունակք իցեն առի որոնել և գտանել զայլս բարիս ոչ սակաւ պարտին երթալ զգուշութիւք և թաքուցանել զինքեանս 'ի չարեաց զի մարդ մի բարի միայն մատամբ միով տիրապետեսցէ համայնից առաքինեաց, և վասն պաշտպանելոյ զինքն միայն 'ի չարէ միոյ, պիտոյանան ձեռք, և ոտք, նաև բարեկամք, և որպէս իցեն տրտում բախտքն բարեաց, և համբաւն իւրեանց սեփական կախեցեալ 'ի դատողուն այլոց։ Արդ Կայսրս այս բարի եղև առաքինութիւք առատ, բանիւքքաղցրադոյն, համեստ 'ի կրթութիւնս, հաղորդակցեալ ընդ ամենեսեան, ծանր 'ի մէջ ծանրակացեց խրոխտ 'ի մէջ խրոխտաց, ուրախ ընդ ուրախաց

բախաց և յոյժ իմաստուն 'ի մէջ իմաստնոց, որ-
պէս պատշաճի հոգածու և հետամուտ թագա-
ւորի։ Որքան իբրեւ այսքիկ 'ի յօրէնս բարեաց
են փորձառեցեալք և նկատեցեալք 'ի լաւագոյն
իմացականութիւն, և 'ի պայծառ խելաց, այն-
քան են գատուպարտեցեալք 'ի յարանց ունօղաց
զբար դիտաւորութիւն Աստ որպէս կայծքն հրա-
ցեալք ոչ կարեն կալ 'ի մոխիրս, թարց արձա-
կելոյ զանթիս և ոչ ապականութիւնն աղբի կարէ
կալ 'ի տեղւոջ մշուշ, առանց առնելոյ զհոտ աղ-
տելի, այսպէս որ ունի զսիրտ առողջ արտա-
բղխէ զբանս սիրոյ։ Իսկ նա որ ունի զփորոտիս
ապականեցեալս արտաշնչէ զբանս նենգաւորու-
թիւն, իրաւի սակաւ ժամանակ կարէ ժուժել
սէրն սիրահարի ուրուք, և յոյժ սակաւ ժա-
մանակ կարէ թաքչիլ խղճն ըղձահարեցելոյ ու-
րուք, զի սիրտք միաւորեցեալք հուշակեն
զհառաչմունս յոյժ ավաղելիս, և սիրտք ապա-
կանեցեալք 'ի ներսուստ, բացայայտեն զբանս յոյժ
նենգաւորս։ Զայս եմ ասացեալ, քանզի բարու-
թիւն Կայսերն Մարկոսի պատճառէր զու-
րախութիւն 'ի յանձինս բարիս, և զտրտմութիւն 'ի
վատթարսն։ Եւ քանզի 'ի յիրս նմանեաց սոցա,
ցուցանեն խոհեմքն զխոհեմութիւս իւրեանց, և
իմաստունքն զիմաստութիւս իւրեանց, սա գո-
լով առաքինի 'ի գործս իւր, իմաստուն 'ի ճա-
նաչելն, էր ևս յոյժ խոհեմ 'ի երկայնամտիլն
Մինն 'ի առաքինութեց, զոր պարտի ունել իմաս-
տունն ըստ յորում ճանաչի թէ իցէ իմաստուն
է գոլ յոյժ հանդուրժիչ, և համբերող։ Զի այր
յոյժ համբերող ոչ երբեք եղև եթէ ոչ յոյժ
բարեպէս փրկեցեալ։ Հանդերձ համբերու-
թեամբ և խոհեմութեամբ 'ի վատթար գործառու-
թեց եղանին գործառութիւնք իրաւունակք և
յիրաւունականէ բարի և 'ի բարեաց առաւելբա-
րի։ Եւ հակադարձաբար. մարդ անհամբեր,
թէպէտ 'ի յիրս յոյժ իրաւականս և արդարս. ոչ
յուսայցէ թէ իցէ բարեպէս 'ի կիրարկեցեալ,
և

և ի գործածեալ Աբդ թէպէտ Մարկոս Կայսրն
'ի յամ առաքինութիւն իւրս հաւասարեցաւ ընդ
ամ Կայսերացն Հաւէաց, անցելոց , սակայն
յայսմիկ առաքինութեն համբերուն , գերազան-
ցեաց զամենեքումբք կայսերքդ աշխարհիս։ Բա-
զում անգամ սովորէր ասել։ թէ Եա ոչ ստացայ
զկայսրութիւն 'ի ձեռն փիլիսոփայութեն , զ-
թուաց յիմասունց եթէ ոչ 'ի ձեռն համբե-
րութեան . զոր ունեցայ 'ի մէջ ազիտաց համ-
բերելով նոցա։ և այս թուէի գոլ ճշմարիտ , զի
բազում անգամ դտանէր զինքն ընդ խորհրդա-
բանին Իկոլիսէում , այսինքն յատենին Հաւ-
էականի , կամ խորհրդարանն ընդ նմա 'ի բարձր
Կամփիտոլում տեսանելով առաջի իւր զբա-
զումս , որք գովէին և այլք բարձումք որք ինքն
ոչ ներկայ գոլով , ընդ ժողովրդեան չարախօ-
սէին , և վրդովէին։ և էր այնքան մեծ ժուժ
կալութիւն նորա , մինչ զի ցուցանէր զինքն բո-
լորովիմբ չէզոքական . այսինքն , ոչ ունէր ըզ
կողմն միոյն , և ոչ միուսոյն , որք հակառակաբա-
նէին ընդ միմանց , ուստի ոչ բարեկամքն վասն
անշնորհակալութիւն լինէին արտաքոյ , և ոչ թշ-
նամիքն վասն իրիք ինչ անօգնականութիւն եղա-
նէին արտաքս արտանջելով։

Յաղագս տոնին, զոր հռչակէին Հռոմէացիքն դիոյն յունվարի և յաղագս այնորիկ, որ Յաւուր միում պատահեցաւ 'ի ժամանակս բարւոյ Կայսերս այսորիկ յայնմիկ տոնի։

Գլուխ Վեցևտասներրորդ։

Մէջ տոնից յոյժ հռչակեցելոյ, զոր նախկինք Հռոմաեցիքն հռչակէին, մինն էր տոնն դիոյն յունվարի զոր պաշտէին Հռոմէացիքն։ Տօնս այս հռչակիւր յառաջնում աւուրն յունուար ամսոյն։ Կիսարէին զայն երկադէմ, առ 'ի ցուցանել թէ էր վախճան տարւոյն անցելոյ, և սկիզբն տարւոյն ներկայի։ Այսմիկ գիւն նուի բեցեալ էր տաճար մի յոյժ մեծաշէն 'ի Հռոմ, զոր աբքայն նումա Պոմիլիոս անուանեաց տաճար խաղաղութեան։ և տաճարս այս, բաց 'ի տաճարէն Ժուպիտերի։ էր առաւել պատուեցեալ։ և վարկեցեալ, քան զայլ ամ տաճարսն։ Մինչ Կայսերքն Հռոմայ դային 'ի Հռոմ, կամ չուէին անտի, նախ դնային 'ի տեսութեան բարձր Կամփիտոլին, և կուսանացն վէստալեաց և խսկոյն երթային 'ի տաճարն դիւն յունվարի, և մատուցանէին անդ դաղօթս, և զնծայս։ Յաւուրն յայնմիկ։ յորում հռչակիւր տօնն, համարձաւէր 'ի նա բոլոր Հռոմ, իւրաքանչիւր ոք ըղձենոյր զլաւագոյն զգեստս զոր ունէր, լուծանէին զվանդս, և զսպասերս, և վառէին զնշուագունս ամենեքեան խտան իւրեանց։ առնէին զբազում տե-

տեսարանս դերասանաց և աղաւաշիչ , զբա-
զում խաղս և զխաղացողս ։ հսկէին 'ի բոլոր դի-
շերն , 'ի տաճարն արձակէին զամ բանտ ար-
կեալսն , որք 'ի կապանս էին վասն պարտուց , և
'ի գանձարանէ արքունւոյ լինէին հատուցեալք ։
Դնէին զսեղանս ուտելոյ 'ի դրունս իւրեանց մե-
ծաւ առատութիւն կերակրոց , մինչ զի էր առա-
ւել գիւնն յաւելուածոյն . քան զայն զոր ու-
տէին ։ Որոնէին 'ի բոլոր Հռոմ զաղքատս , ոչ
զի իցէին յուրն յայնմիկ առաւել նախախնա-
մեցեալք զի կարծէին Հռոմայեցիքն թէ , եթէ
զօրն այն ծախիցէին առատութիւն գիւն յուն-
վարի . որուն էր զիշխանութիւն 'ի վր ժամանա-
կի , պարգևէր յոյժ առատութիւն , և վարձատրէր
նոցա ։ Ասէին Հռոմեացիքն թէ գին յունվար .
էր դի վերաճանաչող , և երախտագէտ , զի եթէ
ծախիցէին վասն նորա զսակաւ իրս , նա պար-
գևէր զբազումս , Առնէին զմեծահանդէս թա-
փօր 'ի ոծնի նորա իւրաքանչիւր կերպի ։ որքն
երթային յատուկ , խորհրդարանն յառնէր ճե-
ղրովք իւրովք . քահանայքն յատուկ առանձինք
և դատաւորքն յատուկ առանձինք , ռամկական
ժողովուրդն յատուկ առանձնակի , տիկինք , և
աղջկունքն յատուկ առանձնակի . կուսանքն վեր-
տալիք յատուկ առանձնակի և դեսպանքն եր-
թային 'ի թաբօր հանդերձ ընկերակցութիւն հա-
մայնից դերեցելոց ։ Ոչ գնային 'ի միասին յայս-
միկ թափօրում , եթէ ոչ երկու երկու . և
վերջն միոյն էր , սկիզբն միւսոյն ։ Ելանէին
'ի տաճարէն գիւն յունվարի . և շուրջանակի
երթային առ ամ տաճարսն Հռոմայ , և 'ի դրա-
նէ լատինու ելանէին 'ի դաշտն , և շուրջ ան-
ցանէին զամ պարսպաւքն Հռոմայ . և քանզի էր
մեծ շրջակայութիւն զոր ունէր Հռոմ , ոչ գնայր
իւրաքանչիւր թափօր , եթէ ոչ 'ի միոյ դրանէ
մինչև առ միւս դուռն , այնպիսեաւ կերպիւ ,
մինչ զի մինչև ցերեկուն ամ թափօրն գնալով
իւրաքանչիւր ոք զբաժինն իւր , ընդ բոլոր
Հռոմ

Հռոմ լինէր շրջադայեցեալ։ Յետայնորիկ դառնային ամենեքեան ի տաճարն ուստի ելեալք էին, և իւրաքանչիւր ոք մատուցանէր ըստ կարեաց իւրոց։ Արդ սովորութիւն էր այսմ թափորիս, զի յայնմ աւուր, յորում հռչակիւր ոմանս այս, Կայսերք միայն ընկերակցիցէին ծերակուտից խորհրդարանին։ Բայց Կայսրս այս բարի. էր այնքան հեզ, և բարեխառն, մինչ զի որպէս կոչէին զնա ամենեքեան, կամէր պատուել, և ընկերակցիլ ընդ ամենեսեան։ Սովորութիւն էր ի Հռոմ, զի յայնմ աւուր յորում Կայսերն զգենոյր զհանդերձ երկայն, և մեծայարգ Կայսերական, համայնք գերիք, որք կարէին մերձենալ ի քոսանցս հանդերձի նորա և շօշափել ձեռամբ, լինէին ազատք, և համայնք չարագործք կարէին ունել զներքուստ, և համայնք աքսորեցեալք դարձուն ի յաքսորանաց։ Արդ Կայսրս այս առ ի գործ ածել զբարեգթութիւն իւր, և թողուլ զինքենէ զմշանջենական Յիշատակ, թողեալ զթափօրն ծերակուտին, եմուտ զինքն թարց պահապանացն ի թափօրն դերեցելոց, որոյ եղև պատճառն, որպէս զի թողուցցէր զինքենէ զյիշատակ անմահ առ թագաւորն ասպագայս, և զնշան մեծագունի բարեգթութեան, և զօրինակ բարի ամենեցուն։ Բայց քանզի ոչ գոյ իր իմն այնպէս բարեաց արարեցեալ՝ի յառնէ բարեգունէ, որ իսկոյն ոչ իցէ հակադիմեցեալ՝ի յառնէ չարեումեքէ, եղև արարս այս այնքան պարսաւեցեալ՝ի յանձանց վատթարադունից, որքան եղև դովեցեալ՝ի յարանաց բարեաց։ Եւ որպէս՝ի մէջ բարեաց միշտ նշանակի մի ոք գոլ յոյժ բարի այսպէս՝ի մէջ վատթարաց նշանեցեալ լինի մի ոք յոյժ չար, և որ չարագոյնն է քան զամենն զի ոչ այնքան պանծայ առաքինի ոք ընդ առաքինութիւնս իւր, որքան զանզգամութիւնս նենգաւորն՝ի չարութիւնս իւր Զայս ասագաք զի՝ի ծերակոյտն կայր ծեր մի կոչեցեալ Քուլվիոս, որ այնքան

էր

էր մեծացեալ 'ի նենգաւորութիւն իւրոց որքան սպիտակացեալք էին հերքն իւր ։ Սա աշխատեցաւ յոյժ ։ 'ի ժամանակի Ադրիանոսի , զի քնիցեւր Կայսր , և միշտ ունէր զՄարկոս Աուրելիանն ասոյս իւր ։ Եւ որպէս է քնական նոցա ։ որք ունին զսիրտս նենգաւորս ։ 'ի փոքրագոյն իրս ցուցանեն զչարութիւն իւրեանց ։ ոչ զարաք երբեք Կայսրն զիրս բարիս յայտնիս 'ի ժողովուրդս։ զորս նա ոչ բամբասիցէր 'ի գաղտնի ։ Նշանակօրեն ։ որպէս այս ազատութիւնս դեռեւաց էր արժանի մեծի դովութեն ։ ոչ ունելով խոհեմութիւն ծերն այն առ 'ի հանդուրժել ։ որ մասն ինչ հեքնութեամբ ։ և մասն ինչ հաւատարեալ ։ առաջի ներկայութեն ծերակուտին ասաց զբանս այս առ Կայսրն թէ ընդէր տուա դու զքեզ առ ամենեսեան ։

Յաղագս պատասխանոյն, զոր Մարկոս Կայսրն եւ ծերի միում, թէ թագաւորաց ոչ իցէ պարտ խորշել 'ի ժողովրդենէ։

Գլուխ Եօթնեւտասներրորդ։

Ասեալ Մարկոս Կայսրն, զոր 'ի ներկայութեան, և 'ի լուր ամենեցուն ասաց վերոյ ասացեալ ծերն, պատկանի գիտել թէ ընդէր տայր զինքն առ ամենեսեան։ առ այս պատասխանեաց այսպէս։ Բաւական, ես զիս ասամ ամենեցուն, որպէս զի ամենեքեան ասացեն զինքեանս ինձ։ Հաւատս ինձ, զի յոյժ դառնութեամբ, և զայրացումն թագաւորի պատճառէ զատերութեամբ 'ի ժողովուրդն։ Ոչ կամին գիրքն, ոչև թոյլ տան օրէնքն ոչև ըմբերսկ աստիճանն արքունի զի թագաւորքն որք են տեարք բազմաց, հաղորդակցիցին ընդ ստակաւոց։ Ընթերցեալեմ 'ի գիրս, և ես ինքնին. զիսրմեմատեալ, զի սէրն հնազանդելոցն ապահովութիւն թագաւորաց և հնազանդութիւն Կայսերաց, պատիւ խրհրդարանին։ պահպանին թագաւորք ոչ խստաբար խորշելով, և ոչ թոյլ տալով զի ոչ մերձենայցեն առ յինքեանս, եթէ ոչ հաճայականաւ գրուցատրութեամբ և հաղորդակցութեամբ վարիլ ընդ ամենայն Զկնորաքն ոչ երթեան միով խմորաւ առ 'ի որսալ զղանս զանս ձկունս 'ի գետս։ ոչև Ժողովնեցքն միով ուռկանաւ 'ի ծովն։ Կամիմ ասել. թէ զկամս խորհիս և զիրթիս. խորագանեց արտաքոյ, զոմանս խարդեւոք, զոմանս բանիւք։ զոմանս

խոստմամբ , և զոմանս օգնութիւն պարտիմք
շահել : Կատարելք ազահքն ոչ հաճին , թէ բա-
նայցեն վնասոցա զներքնայինս · արտի , և փա-
կիցեն զգանձարանն : և նոքա որք ծառայեն
սիրով , ոչ հաճին հակադարձաբար , թէ բա-
նայցեն զգանձարանս և փակիցեն զներքնայինս
արտի : Առակ նախկին եղև Պիթագորասի , որ
ասաց , թէ սէրն հատուցանի այլով սիրով : Ո՞հ
թէ որքան վատաբախտ Թագաւորն , և որքան
ապերջանիկք ժողովն արքունական , բան որում
ժողովուրդն ոչ ծառայէ նմն եթէ ոչ վասն
պարգևաց , և նորն ոչ ունի , և ոչ պատապարէ
զնոսա , եթէ ոչ վասն ծառայութեան : Ի բա-
զում քարանց , և 'ի միոյ բևեռէ կառուցանի շի-
նուածն մի , և 'ի զանազան մարդկանց , և 'ի միու-
ջէ նոցա վերակացուն խումբն ժողովոյն արքու-
նւոյ : Եթէ ճարտարապետութիւն ոչ պատրէ
զիս , կիրն որ միաւորէ զվէմն ընդ վիմն խառ-
նի , ընդ նմա և զբևեռն բևեռեցեալ , և լինի
կիր զնդացեալ , և իրաւաբար , վասն զի ան-
ջատելով վիմացն ճայթի պարիսն · բայց անկա-
նելով բևեռն , կորնչի շինուածն : Իսկ նա որ
խմաստունիցէ , խմանայ զբանս իմ : զի Սէրն
'ի մէջ դրացեաց ըմբերէ դոլ խոհեմ : Բայց
Թագաւորին ընդ ժողովրդեան պահանջէ զի իցէ
մաքուր : Բազում նախանձս 'ի մէջ բազմաց 'ի
բազում ժամանակս նայեցեալ իմ 'ի փողոցս
Հռովմայ գոլ փակեցեալ . և վերջացեալ 'ի միում
աւուր : և եթէ մի միայն յարիցէ 'ի մէջ ոն , և
ժողովրդեան իւրոյ , մինչև 'ի մահ ոչ սահմա-
նիցի , կամ աւարտեսցի : Դիժուարինէ կազդու-
րել , և միաբանել զբազումս ընդ բազմաց · բայց
առաւել դիժուարին է միաբանել զմին ընդ մոյ :
Իսկ Թարգ համեմատութեամբ են առաւել դիժուա-
բագոյն հաշտեցուցանել , և միաբանել զբա-
զումս ընդ միոն , և զմին ընդ բազմաց : Յա-
ղագս այսր պատճառի , ոչ կամիմ փրկել զԹա-
գաւորս , և ոչ Թողուլ առանց դատապարտելոյ
զամբոխն

զամբոխն ժողովրդեան։ Ուստի՞ կարծէք, թէ դայ այսօր, զի տեսարքն զայրացմամբ հրամայեն զերս անիրաւութիւն, և հայատակեալքն ոչ հնազանդին ի յիրս իրաւանց, և արդարութեաց։ Ուրեմն լուարուք զի ասացից ձեզ։ Թագաւորն առնելով զարարմունս և ոչ զիրաւունս, կամի հալել զկամս ամենեցուն ի բովս եկեալց իւրոց։ և արտահանել ինքեան և ամենեցուն զմի միայն կարծիս, և զկամեցողութիւնս իւր։ և հակադարձեալ բազմութիւնքն մարդկանց նօսրացուցանելով զնեալմտութիւնս ոմն իւրեանց, կամին զի կամիցի, ոչ զայն, զոր ինքն կամի վասն համայնից, եթէ ոչ զայն զոր իւրաքանչիւր ոք ի նոցանէ ցանկայ վս ինքեան։ Իրաւի են իրք ծանրագիրք, թէպէտ իցեն յոյժ կիրարկեցեալք ի մէջ մարդկան զի կամելով միոն առնուլ զվրէժս ի յսուիշտակութիւն ամենեցուն և այնքան սաստիկ կամքն ամենեցուն զի զնեւորիցին ի զէնս միոյ։ Բայց զինչ արասցուք, զի այսպէս թողին մեզ զաշխարհս հարքն մերք, և այսպէս ունիմք մեք որք եմք որդիք նոցա և որ վասնթարադոյն է քան զայս զի թողուցք զեմք ժառանգորդացն մերոց։ Ահա թէ զորքան թագաւորաց նախնեաց ընթերցայ, որք վտանգաւորեցան, վասն ցուցանելոյ զինքեանս խստացեալս, և սակաւ քաղցրաբանս, բայց ոչ ոք վտանգաւորեցաւ ի նոցանց, որք կամեցան գոլ քաղցրաբարք։ Կամիմ տալ զորինակ զնոցանէ, զոր ընթերցայ ի դիրս իմ։ այսպէս զի տեսանիցեն թագաւորք, թէ զինչ շահիլ կարեն ընդդուցատրութիւք քաղցրաբանութեամբ և զինչ կորուսանեն հրաժարելով, և խորշելով։ Այն թագաւորութիւն ասիացւոց, մեծագոյն զինուք, քանզ քաղդէացիսն, և կրտսերագոյն հնութիւքն քան զասորեստանայսն, ցեղ, և տոհմականութիւն մի թագաւորական յարամացին զամս երկուհարիւր, և քսան, զի ամենեքեան եղեն դովելիք կենցաղավարութիւք և զուցատրութիւք քաղց-

բաբաքաբք։ Իսկ միւս ցեղն (որպէս ասէ հում-
բոս) ոչ ունէաց, եթէ ոչ զամս քառասուն և
հինգ։ զի թագաւորքն իւրեանց եղեն բարուք
և քնութիւն վատթարք։ և իններորդ թագաւորն
եգիպտացւոց. կոչեցեալն Էպիփանոս, անկաւ
'ի պատուոյ թագաւորութենէ. վասն զի գոյր օրէն,
թէ 'ի յելանելն 'ի տաճարն հանիցէին զկոշիկս յո-
տից իւեանց։ Յաւուրքն ոմնի միոյ թագաւորս այս
հեծեալ 'ի ձի, գնաց առաջի դիոյն ամի, որեր դի
եգիպտացւոց, բայց գոբծնայն ոչ մնաց առանց
պատուհասի, զի իսկոյն եղև զրկեցեալ 'ի թա-
գաւորութենէ։ Վեցերորդ Աղատաշիտաւել ան-
կիրթ թագաւորն Պարթևաց, ոչ միայն զրկե-
ցաւ 'ի թագաւորութենէ, այլ և աքսորեցաւ 'ի
թագաւորական գաւառէ։ քանզի եղև հրաւի-
րեցեալ 'ի նախարարէ միոյ 'ի հարսանիս ոչ կա-
մեցաւ երթալ, զնիրաւիրեցեալ էր յառաջագոյն
'ի հարսանիս ուամկի միոյ։ Ի մէջ լատինացւոց.
թէ պէտ գաւառն նշ էր անձուկ, բայց սիրտ
նոցա էր լայնագոյն։ և որպէս զմնին իմառա-
նաց իւրեանց այսինքն 'ի թագաւորաց իւրեանց,
վասն 'ի բաց մերժելոյ զթշնամիս, և ոչ վասն
զարգացուցանելոյ զնոսա, էին ընտրեալ զնա թա-
գաւոր, 'ի դիշերի վասն ննջելոյ ապահովա-
պէս եղև զրկեցեալ 'ի թագաւորութենէ։ Քան-
զի գոյր օրէն զի ոչ ոք թագաւոր ոչ ուտիք և ոչ
ինչ ժամու ոչ 'ի տընջիան և ոչ 'ի դիշերի ունի-
ցէր փակեցեալ զդուռն։ Տաքուինոս վերջին թա-
գաւորն Հռոմէացւոց եղև ապերախտ առ ա-
ներն իւր, վատահամբաւ արեամբն իւրով, մատ-
նիչ հայրենոյն իւրոյ, անողորմ առանձն իւր,
և չնացող ընդ Լուկրէցիային, սակայն ոչ կո-
չեցաւ ապերախտ, ոչ վատահամբաւ, և ոչ չն-
ացող, ոչ ևս մատնիչ, այլ կոչեցաւ Տաքուի-
նոս հպարտ վասն գոյսն իւրոյ բարուքն գժ-
նեայ քնութի, 'ի յօրէնս բարեաց ձեզ երդնում
զի եթէ տրտուսն Տարքվինոս 'ի Հռօմ իցէր բա-
րեխառն և բարուքն բարի յաղագս շնանալուն
նր

նոր ընդ Լուկրեցիային, ոչ զբնկիցիւր 'ի թագաւորութեան, զի այլք չարութիւնք յոյժ աղտեղիք, և զծանրագոյնք յառաջ քանզնա և առաւել ծանր բաղդնս յետ նոր գործեցին Կայսերքն հնագոյնք 'ի Կայսերութեան իւրեանց, և էին այնպիսիք որք թուէին յոյժ փոքրագոյն անզգամութեանն զայն տոպային Ցարքուենոսի, իրաւի զայս հաւատի ունիցիք գուք թագաւորք զի եթէ բազում պատճառանս տացեն վասն չարութեան կամացն, յետոյ միով և յոյժ փոքու իմն պատճառաւ բաւականք են ցուցանումն հպատակաց ձերոց, զչարութիւն կամացն իւրեանց։ Աստեղութիւնն զոր տեր սք ունի առ ծառայն իւր եթէ ոչ ցուցանէ զատեղութիւնն ծառային իւրում, պատճառնէ, զի ոչ կամի ցուցանել, բայց զատեղութիւնն զոր ունի ծառայն առ տերն իւր, և զայն ոչ ցուցանէ նմա, պատճառն է, զի ոչ կարէ։ Ո՛վ Կայսերք, ո՛վ թագաւորք, և իշխանք, գուք յոյժամ հպարտորէն կենցաղարարք ընդ ժողովրդեան, եղիցիք ստեղեալք 'ի նոցանէ յոյժ պինդ ատեղութիւնք, իսկ գուք ոչ իմանայք, զի նոքա ոչ կարեն յայտնել զատեղութիւնն, զոր ունին ընդ ձեզ, այլ ապագեն առթի, և դիպող ժամանակի, յորում կարիցեն արտաքսեալ։ Յուլիոս վերջին քաղաքապետ, և կառավարիչն, և առաջին Կայսն Հռոմայ, մոռանալով զմարդ գոյն իւր 'ի մէջ մարդկան, կարծէր զինքն գոլ դի, 'ի մէջ դիցն։ Գոլով սովորութիւն դովելի, և փառաւոր 'ի խորհրդարանին, ողջունել զկայսրն անկեալ 'ի ծունկս, և կայսրն յառնել 'ի տեղւոջէ իւրմէ, և ցուցանել զինքն գոհունակ։ և նա վասն ամբարտաւանութեան իւրոյ ոչ կամեցաւ պահել զարարողութիւն այս, արդ իւնաւորեցաւ Ը ի՛Ը։ վիրաւաշտեղիւք կորուսանել զկեանն։ արդ ոնգ ասեմ 'ի սոցանէ փոքերց կարէի ասել 'ի այլոց բազմաց զի բժիշկքն սակաւ խաշնդեղիւ։ այսինքն ռեվանդով մաքրեն զմարմինս մարդկան 'ի բազում մաղձից, իսկ Կայսերքս սակաւ ինչ բարի կամք

ցուցանելով, որոտամերժեն զբաղում զատելուն, և զոսիս 'ի բազմաց սրտիցն ժողովրդեան։ Խաղաղ-
վուրդն պարտանդեցեալ է գինանդուն հրամանաց Թագաւորին իւրում և նշմարուն անձին
իւրոյ նմանապէս պարտանդեցեալ է Թագաւորն զզուդակցին դատաստան իւրաքանչիւրում, և
ցուցանել զբազդոր կենցաղավարութիւն և խօսակցուն ընդ ամենեսեան։ Ասէր Մարկոս Զօրցիոնն
բազում անգամ 'ի Հռօմ այսպէս։ Այն իրն հրապարակի է յարտադայական, և առանց երկիւղի 'ի
յանկարծակի անկմանէ, նորում 'ի ժողովրդեան Թագաւորն դատանէ զգինազանդութիւն, և ժողո-
վուրդն դատանիցէ զսէր առ Թագաւորն. քանզի 'ի սիրոյ Թագաւորին և նոն ծնանի հնազանդուն
'ի մէջ ժողովրդեան, և 'ի հնազանդութիւն ժողովրդեան ծնանի սէր 'ի տէրն։ Զմանէ Կայսրն
Հռօմայ սարդուոյ 'ի մէջ դրծուոյն իւր, եթէ ծայր մի ասղան դիպցի 'ի ծայրն դրծուոյն,
իսկոյն զգայ սարդին, կամիմ ասել թէ զամ դրծա-
զորառնէ Կայսրն 'ի Հռօմ իսկոյն են բացայայտանէ
ցեալ։ ընդ ամ աշխարհ։ Բարուք հաւատամ զի
այսօր դատեցայ 'ի նենդութէ մարդկայնոյ, վա՜
ընկերացութեան իմոյ ընդ Թագաւորին, դերեցե-
լոյ, և Թոյլ տալոյն իմոյ զի մատիցէին առիս,
որպէս զի վայելցէին զյատկութիւնն ա-
զատութեան։ Բայց ես գոհանամ զդիցն, և
զբարեբախտութենէ իմմէ, վասն առնելոյ դիս
Կայսր դրովազոյթ առ 'ի արձակել զբանդա-
կիցցեալս, և ոչ անողորմ բռնաւոր վասն ըմ-
բռնելոյ զաղատան։ և որպէս առակն ասէ, թէ
մեղ քարաձգութէ ըստանանեն զերկուս ձն-
ձղուկս, այսպէս եղև այսօր, 'ի յայսմ իրա-
կութեան։ զի բարեբարութիւնն եղև միայն
վասն եղկերեցս այսոցիկ, բայց օժանդակու-
թիւնն վասն ամենայն ազգաց իւրեանց։ Արդ
ոչ դիտէք դուք, թէ հանելով 'ի յերկաթ զգե-
բիս այսոսիկ, կապակցէք անիրգելեաւ շղթաիւ
և պարտաւորութեամբ զսիրաս դաւառաց իւր-
եանց։

եանց։ Վերջապէս ասեմ, զոլ ապաշնորհագոյն վասն թագաւորին, զի ծառայեցի նմա 'ի սրտից ազատից սիրով, քան թէ 'ի ծառայից գերեցելոց երկաթեաւ կապանաւ հանդերձ երկիւղիւ։

Յաղագս թէ որպէս Կայսրն Մարկոս բաժանէր զժամն աւուրց, առ 'ի տալ ամենեցուն զվճարումն ամենից դործառութեանցն Կայսերական։

Գլուխ Ութեւտասներրորդ։

Որդ սասացաք 'ի վերոյ թէ բարի Կայսրս այս ունէր զվճնամուն մեծադոյն, ոչ միայն ընդ արանցն, որք ոչ կենցաղավարէին ունելով զկեանս բարիս։ այլև ընդ նոսա, որք 'ի չար կրթուութիս անցուցանէին զկեանս իւրեանց։ ոչ է բաւական փիլիսոփայի ումեք յանդիմանել զմեղութիս՝ այլոց բանիւ միայն, եթէ ոչ հարկաւորէ զի ինքն 'ի դործածիցէ զայն զորս այլոցն յանդիմանեաց, Ասա պատշաճի ասել. թէ ոգ վնասիւրոյ մեծի, խոհեմուն է, և բաղմուն բանից և դործոց ընդ հանուր կայսերութեան, և զյատուկ դործս, ոսան իւրոյ, և հանդստութիւն անձին իւրոյ. և կրթութեան ուսումնականութեան իւրոյ, 'ի կիրարկանէր մինն և զմիուսն որքէին անհունք դործառութիւնք։ որ վասն պակասութեան ժամանակի բաժանէր, 'Ի յայսմիկ էր այնքան հմուտ և ուշիմ, և այնքան տեղեակ, մինչ զի ոչ ժամ-

մանակն յաւելնայր 'ի դուր ծախումն և ոչ նուա-
զիւր վասն ուղղաւորելոյ զբանս և զգործս ար-
քունոյն , քանզի յայնժամանակն է օրհնեալ և
փառաւոր մինչ փառաւորապէս լիցի ծախե-
ցեալ , և այնչ անիծեցեալ մինչ զի 'ի մեռաս մեր և
առանց օգտակարութեան այլոց անցանի և ոգէտ
արպէս զանասունս զմեզ թողու , ուներ բաժա-
նեալ ժամս և ժամանակս և կարգաւորեալ այ-
սու կերպիւ , Կնոջէր զեօթն ժամ պիշերն , և
ժամ մի 'ի սուրբգեան : Ծախէր ժամս երկուս
'ի ճանչելն , և 'ի յընթերիոն ունէր ժամ մի սահման
նադրեցեալ վասն իրակութեան ասիականաց և
այլ զերկուս ժամս աւարտելոյ զգործառութիւն
էվրօպայ և այլ ժամս երկուս 'ի կենցաղավա-
լուն , և 'ի կառավարել զտունն իւր , առանձնա-
նայր հանդերձ կնով , որդովք , և բարեկամքը
ծախէր զժամս երկուս , յաղագս իրաց , և գոր-
ծառութեց որք էին կարգէ 'ի դուրս , որպէս
սէրքէին լսել զարհամարհանս արհամարհեցե-
լոց , զբողոքս աղքատաց , զամբաստանուիս
այրեաց կանանց , զկողոպտումն որբոց , և զայլ
ժամ մի ունէր առանձնացեալ ընդ Կայսրու-
հուն և զայլ ամ մնացեալսն 'ի յայլ ոչինչ ծախէր
եթէ ոչ յընթերցմունս գրեանց , 'ի գրել , և 'ի
շարադրել զգիրս , զոտանաւորս , և զառաջս , և
'ի պարապիլ 'ի հնադոյն պատմութիւնս , 'ի զրու-
ցատրել , և վիճաբանել , ընդ Փիլիսոփայս , և
զայս առնէր կարգադրապէս 'ի ժամանակի ձմե-
ռայնոյ , և յամարայնոյ , 'ի դիշերի , և 'ի տուրն
ջեան , տենչմամբ սրտի , և ըղձայուզ փափակ-
մամբ : Իսկ եթէ խաւուութի պատերազմի ոչ
շփոթէր , կամ քանք , և գործառութիւնք գժուա-
րակիրք ոչ արգելուցոյր զնա միշտ մտանէր 'ի յան
կողինս 'ի յինն ժամու , և արթնանայր 'ի չորրորդ
պահու : Արդ էր սովորութիւն Կայսերաց հռ-
մեաց ոչ , միշտ յառաջատոի իբրեանց ունիլ զձ-
ուդ վառեցեալ 'ի դիշերի. և Կայսրս այս բարի ոչ
զի 'ի յարթնանալն ոչ լիցէր ուսրուզ, միշտ ունէր 'ի
ներ-

ներքոյ բարձին դնիրք մի, որ գլխոցեալ գիշերն
ծախէր ի յընթերցումն գրոց, մինչև ցլուսանալ.
արշալուս առաւօտուն և յարուցեալ ի վեց ժամուն
զգենոյր հրապարակորէն ոչ ընդ սակաւ բերկ-
բանօք եթէ ոչ մեծաւ ուրախութեամբ, և հարցա-
նէր ցնոսա, որք առընթերկային, թէ յորում
իրի էին ծախեալք զգիշերն այն. և ինքն պատ-
մէր նոցա զայն ամ, զոր յայնմիկ գիշերի ըն-
թերցեալէր։ և ի կատարումն. զգեստաւորու-
թեամբ, լուանայր ջրով անուշահոտիւ, զի յոյժ
սիրէր զհոտս անուշաբուրս. և էր այնքան
ըղձակրեցեալ առ հոմեղահոտութիւն, մինչ զի
ի պակասիլն նորա ուտնջանք պատճառէին նմա։
Իսկոյն առաջի ամենեցուն առնոյր զերկուս,
կամ զերիս պատուս բժշկական խոտեղէնս և
ընծայէր զերկու կուսս օղի, Եւթէ եղանակն ցցէր
ամառնային, երեթայր առ եղջն դեռոյն ոտիւք,
և անդ շրջիւր, և զգործառութիւնս մարդկանց
ուղղաւորէր, և մինչ ժամանէր ժամանակ ջեր-
մոյն, ելանէր ի բարձր Կամպիտօլն, և ի խոր
հրդարանն, յեռ այնոքիկ դառնայր ի ժողով-
մարանն, յորում էին համագումարեալք ամ դեռ
պանք, և ատենապետքն դավառաց, և անդ
ապանէր զմեծագոյն մասն աւուր, և յետոյ
նորիկ եթէ դոյր ժամանակ երթայր ի տաճարն
կուսանացն վեստալեաց, ուր լսէր զբանս իւ-
րաքանչիւր ազգաց յատուկ յատուկ, ըստ ժա-
մանակի, որ ըստ կարգադրութեան իւրում էր
բաժանեցեալ։ Ոչ ուտէր, եթէ ոչ միանգամ
յաւուրն, և սակաւ ինչ յետոյ. բայց ուտէր բա-
ւոք ախորժմամբ և բազում, թէպէտ ոչ յոյժ
այլև այլ կերակուրս։ Ընթեր զայս սովորութիւն,
զի յամ եօթներակի, ի Հռոմ, կամ յայլ քաղա-
քի յորում դտանիւր, զաւուրս երկուս եօթնե-
ւեկի, միայն երկոտասան ապատաւորք առանց
այլ պահապանաց, և առանց ձիավոր ասպնուաց,
երթայր ի փողոցս, առ ի տեսանել, եթէ
ոք կամիցէր խօսիլ ընդ նմա կամ նիցէր զան-

գատ յումեքէ պաշտօնէէից պալատին իւրոյ ,
կամ հալատահարեցեալ 'ի բռնաւորաց , և ազ-
գէր այլոց , զի տեղեկանայցեն զայսպիսիս իւր ։
Եւ ասէր բազում անգամ բարի Կայսրս այս ,
թէ թագաւոր ոք , որ կամի բարւոք հովուել ,
և ոչ բռնահարել , ոչէ պարտ գոլ ագահ , և
ընչասէր իշխարկաչահանջութիւն , ոչ հալարտ 'ի
հրամայելն , ոչ երախտամոռաց 'ի գործս ծա-
ռայից , ոչ համարձակեալ 'ի տաճարան , ոչ խուլ
'ի լսել զբանս վշտացելոց , զայս լցուցանելով ,
և կատարելով , ունիցի զդիս 'ի ձեռին իւրում ,
և ունիցին մարդիկք զնա ինքեանս արտից իւրեանց։
Եւ յամ ժամանակս , յորս տեւեաց 'ի Կայսերու-
թիւն , ոչ երբէք յառաջատոլ իւրում գտին
զնա պահապանք , կամ դռնապանքն , եթէ ոչ
զժամս երկուս որ առանձնացեալ լինիւր ընդ
Քառասունս Կայսրս հոյն իւրում , զի զկնի եր-
կուց ժամուցն , իսկոյն խոյս տայր 'ի խուղն
իւր , զոր ունէր ամրափակեցեալ քանալեաւ ,
և զայն ունէր միշտ ընդ ինքեան , և ոչ ումեք
հաւատայր զբանալին այն , մինչև ցօր մահուան
իւրոյ ։ Եւ յայնժամ յանձնեաց Պոմպէոսի , որ էր
այր խոհեմագոյն , և ծերունի , և ամուսնացեալ
ընդ դստերն իւրոյ , և ունէր 'ի յարկի այնմիկ
զբաղաւմ և զանազան գրեանս ամենից լեզուաց
գրեցեալս հելենացւոց , լատինացւոց , եբրայե-
ցւոց , քաղդէացւոց բառբառով , և զպատմու-
թիւս յոյժ հնագոյնս ։

Յաղագս թէ որպէս քաջաւորին Կայսրուհին խնդրեաց 'ի Կայսերէ յառնէ իւրմէ զբանալին ուսումնարանի յարկին նորա, և թէ զինչ պատասխանեաց նմա Կայսրն վասն այնմ պատճառի։

Գլուխ Իններորդ։

ԱՐդ քանզի բնական սովորութիւն է կանանց, արհամարհել զայն, որ պարգևի նոցա. և ցանկալ այնմիկ զոր ոչ տայ նոցա, ուստի Կայսրն զուսումնարան իմն 'ի պալատին իւրում յոյժ գաղտնի, առ յոլ ոչ թոյլ տայր ումեք մտանել 'ի նայ, ոչ կինն ոչ ընտանի, և ոչ բարեկամ ոք։ Արդ յաւուր միում քաջաւորին Կայսրուհին ասէ պեաց զԿայսրն ամենայն կերպիւ ժուելով, և բռնադատելով զնայ. որքան կարէր, զի ցուցանիցէր զշտեմարանն այն, ասելով նմա զբանս այս. թող ինձ տէր զի տեսանիցեմ զշտեմարանքն. նայեաց և տես զի ահա յղիեմ, եթէ ոչ տեսից զշտեմարանն քոյ, ելցէ հոգի իմ յինէն իսկ դու որ իմ քաջ գիտես զի ըստ օրինին Հռովմայեցւոց ոչինչ խնայի յղի կանանց, զերգնա արտից իւրեանց։ ապա թէ զայլ ինչ առնիցես արասցես զարարմունս և ոչ զիրաւունս։ զի 'ի յայսմ յղուես շարժին կարծիք որք և պատեն զիս, թէ ունիցիս դու զսիրուհի կին ոք փակեցեալ յայնմ ուսումնարանի, ուրեմն առ 'ի մեր-

մերժել զվիշտս զայս շարժմանց և առի ապահով առնել զափրտսիմ 'ի հոգոյ թողութիւն մատանել 'ի յուսումնարանն քոյ ոչեն յոգունք։ Արդ տեսանելով Կայսրն թէ քաւուսինն ասէր զայն հաւատաբար ; զի իւրաքանչիւր բանս ընթանայր զարտասուս բակաս պատասխանել հաւատաբար և ասաց այսպէս։ Ասէ իր հաւատոի, զի մինչ մարդ ոք է ուրախ և հանդարտեցել սրտիւ, մինչ կամի ասել զիր իմն, արտաբերէ լեզուաւ առաւել քան զայն, զորուն 'ի սրտի, և հակադարձաբար. մինչ ոք է տրտում, ոչ լայ այնքան ա չՔ, ոչ և կարէ բացայայտել այնքան լեզուաւ, որքան մայ ներփակեցեալ 'ի սրտի։ Սարդիկք ունայնք բանիւք ունայնութիւն հաչակեն զհաճութիւնս իւրեանց ընդունայնս։ Իսկ արք խոհեմք, խոհեմականիւք բանիւք իւրեանց, տանին համբերութիւն խստագունից ցանկութեանց իւրեանց։ 'Ի մէջ իմաստնոց, իրաւի նայ առաւել իմաստուն, որ գիտէ զբազում, և ցուցանէ զինքն սակաւագէտ, իսկ 'ի մէջ տգիտաց, այնէ տգիտագոյն, որ գիտէ զսակաւ, և ցուցանէ զինքն բազմագէտ։ Հանճարեղքն թէպէտ հարցեցեալք լինին, ոչ պատասխանեն։ Իսկ տգէտքն առանց հարցանելոյ իսկոյն ասեն զամ։ Զայս ասեմ քեզ ով քաւուսինս քանզի, վերուորեցին զիս այնքան արտասունքն քոյք, և այնքան անհանգստացեալ են ընդունայն խելքն քո, մինչ զի ոչ կարեմ բաւականաբար ասել զայն, զոր ես գիտամ, ոչև դու կարողես ըզգալ, զոր ասեմ։ Զբազում ազդեցմունս ետուն մեզ նոքա, որք դրեցին զամուսնութիւն, բայց ոչ կարողացան դրել զայնքան վիշտս, և զնեղութիւս 'ի մէջ ամենից դրեանցն իւրեանց, զորքան կին մի միայն առ այր մի միայն առնէ համբերել օր մի միայն, իրաւի յոյժ քաղցրէ զմայրել երեխայուեցն երեխայից, բայց են յոյժ խիստք, և տաժանելիք ըմբերել ստիպմանց, և նեղութեանց մօրն իւրեանց։ Երեխայքն առնեն երբեմն

բեմն և երբեմն զեր մի այնպիսի, որ հաճոյանայ մեզ, բայց դուք ոչ երբեք առնէք զերմի ուրում ոչ տայէք մեզ զծանրութիւն, և զսուտ ապանս։ Ես եղբայացուցանեմ և դաշնակցիմ ընդ ամենից արանց ամուսնացելոց, զի թողցեն զհաճոյական գործս երեխայից, յաղակս անհամաձուութիւնն, զորս տան մարքենոցա Չիր իմն տեսեալ է մարդ և նովաւ ոչ երբեք եղէ պատրեցեալ, զի դիքն արդարք յորժամ կամին պատժել զմեղաւորս վասն ամ մեղայ զորառնեն ուղաւորեն զնոսա ի տարտարոսն հանդերձեալ կենացն, Բայց եթէ ոք վասն հաճոյանալոյ կնոջ ասէ արասցէ զմեղս ինչ, հրամայեն, դիքն. զի ի ձեռս նոյնոյ կնոջ, ի յայսմ կենցաղումս ոչ ի հանդերձելումս կենաց ընդունիցիմք զպատիժս, ոչ դոյ զայնպիսի դաղանաբարս, և վասնդաբեր թշնամի մարդկան. որպիսի է կինն զոր ունի, եթէ մարդն ոչ դիտէ կեալ ընդ նմա որպէս մարդ, երթալով երթիցեն. զի ոչ երբեք տեսի զոք թեթեւամիտ և լիրք, որ կալով ընդ կնոջումբք, բոզախոհութիւք ոչ իցէ ի նոյն կնոջէ զկնի սակաւ ժամանակի ընկալեալ զպատիժս մահուամբ կամ վատահամբաւութիւք Չիրէ միոջէ եմ ես յոյժ հաւատի, զի ոչ միայն ընթերցեալեմ, այլ և անձամբ իմով զփորձ առեալ, եթէ այրն առնիցէ զայն ամ զոր կամի կինն իւր, կինն ոչ առնիցէ զայն, զոր ցանկայ այրն իւր, մեծագոյն անողորմութիւնն է ի մէջ բարբարոսաց որք ունին զկանայս իւրեանց որպէս զգերիս, և ոչ սակաւ թեթեւամտիւն Հռոմայեցւոց, որք որպէս զտիրուհիս ունին զկանայս իւրեանց, միոն ոչ պարտի լինիլ այնքան նեհար որ զզվեցուցանէ զուսուցն և ոչ այնքան գիրացեալ որ ոչ կարիցի ուտիլ, եթէ ոչ պարտի լինիլ միջակաւն զի եղեցի համեղ կամիմասել թէ ոչ պարտի այնքան սանձահարել զկինն որ թուիցի աղախին, ոչ և այնքան արձակել զսանձն, որ համբաւն։ այլ զինքն որպէս զտիրուհի, նայեաց Քաուս-

տինա

սինա։ զի էք դուք բոլորովիմբ 'ի վերքան զլսին. և էքկանայ քա, այնքան արտաքոյ չափաւորութեն մինչ զի սակաւ պատուով աճեցուցանէք զբա-զումմ ամբարտաւանութի, և սակաւ ինչ անպա-տուվութեն առնէք զբազումմ թշնամութեն։ ոչ գոյ կատարեալ սէր 'ի նոսա, յորս ոչ գոյ հանդի-տութեն մի, 'ի մէջ սիրողաց զմիմիանս, և քանզի դուքէք անկատարք և սէրն ձերէ անկատար բարբոք դիտեմ զի իմանաս ինձ, ուրեմն լուր, քա-ուատինայ զի եւ ասեմ քան զոր մտածես. ոչ գոյ կին, որ կամաւորապէս ըմբերիցէ այլում կնոջ մեծագունի, ուստ կին որ ցաւակցիցէ ընդ այլոյ հանդիսիւ իւրում։ քանզի եթէ ունի զնա-զար արծաթ եկամուտս ագարակի և 'ի տան իւ-րում, ունի եւ զտասն հազար խելագարութի 'ի դլխոջ իւրում։ բայց առաւել վատթարագոյնն է այս, զի բաղում անգամ մեռանի այրն իւր, և կորուսանէ զեկամուտսն։ բայց ոչ եւ մի այսորիկ աւարտի խելագարութենն իւր։ Ուրեմն լուր ինձ, զի ասացից քեզ. զի դուք ամ կանայքդ կամիք խօսիլ և կամիք զի տեսնեքեան լուցեն. կամիք հրամայել, և ոչ ոք կամի գոլ 'ի ներքոյ հրամանաց. կամիք ազատականութի և ոչ կամիք թէ այլ ոք ի ներ ազատ, կամիք հովուել և ոչ ոք 'ի ձէնջ կամի գոլ հովուեցեալ. զմիմիայն իւր կամիք այսինքն տեսանել և գոլ տեսեալ, ուստ պատահի, զի թեթեւամիտքն որք հետեւին թեթեւամտութեց ձերոց, որպէս զգերիս ստանակոխ առնէք զնոսա։ և զմտատունն որք յանդիմանեն զերդս ձեր, հալածէք որպէս զթշնամս. 'ի տարեցոյցս Պօմպէկանս. դուք զիր իմն արժանի դիտելոյ, այսինքն յորժամ Գնէոս Պոմպէոսն էանց 'ի յարևելս, 'ի ստորոտ լեառն ելիսէի, եգիտ զազգ մի կոչեցեալք մասաջէթք որք ունէին զօրէնս, որ հրամայէր, զի իւրաքանչիւր ոք ունիցէր զերկուս յայրս քան զի լեառն այն ոչ դոյր տուն. որոց 'ի միումն բնակէին այրքն, ուստերքն, և ծառայքն, և 'ի միուս-

միութիւնն կինն, դատերքն, աղաղնայքն։ ու-
սէին 'ի միասին 'ի յաւուրսն տոնի, և նը՛ջէին։
'ի միասին միանգամ 'ի յեօթն երրակող։ Հարց
մեծն Պոմպէոս զպատնառն։ Վասն կելոյ այսո-
կերպիւ, զի ոչ երբեք դուռ, և ոչ երբեք ըն-
թերցաւ ունիլ ոք զայսպիսի մեծ հրաժարութիւն։
առ յոր պատասխանեաց ոմն 'ի նոցանէ, և ասաց։
Նայեաց, ով Պոմպէոս, զի դիքն մեզ եռուն
զկեանս սակաւ զի ոչ ոք անցանէ աւելի քան
զվաթսուն ամ, վասն որոյ ջանամք խաղաղութիւն
անցուցանել Աստ ունելով միշտ զկանայս մեր
ընդ մեզ փոխանակ ապրելոյ մեռանիմք։ զի զդի-
շերն անցուցանեմք լսելով զպանդատս նոցա, և
'ի աւանդեան տանիլ զտրտնջմունս նոցա։ Ուստի
այսու կերպիւ ունելով զնոսա որոշեցեալս 'ի մէնք,
անանկն սառաւել խաղաղութիւն որդիքն մեր, և
խոյս տամք 'ի տրտնջմանէ նոցա։ որ ապանանէ զմեզ
ես ասեմ քեզ Քաւստինա զՀմարիան, զի թէ-
պէտ մեք զմասաքէթն կուտեմք բարբարոսք,
սակայն 'ի յայսպիսի դիպուածոցս են առաւել
գիտունք, քան զլատինն։ Զմի ինչ կամիմ ասել
քեզ, և խնդրեմ յոյժ զի կամիցիս լաւ իմանալ։
Եթէ բնական և դաղանաբարու շարժմունք
մարմնոյն ոչ ստիպիցէին զկամս մարդկան առ
'ի կամիլ, (թէպէտ ոչ կամին կանայք) կարծեմ
թէ ոչ միայն ոչ սիրիցէին մարդիկք զկանայս,
այլև ոչ ըմբերիցէին նոցա։ Եւ իրաւի եթէ
դիքն արարեալք իցէին զայս սէրս կամաւորա-
պէս որպէս ուրարին բնականապէս մինչ զի կա-
մելով կարիցէաք, և ոչ որպէս այժմ, որք կա-
միմք, և ոչ կարեմք, պարտ էր մեծագունիս
պատժով պատժել զնա, որք վա՜ կանանց ոմանց
'ի շնիցէին կորնչել։ Այսէ մեծագոյն դաղտնի
խորհուրդ դիցն, և մեծագոյն թշուառութիւն
մարդկան, որոց մարմինն այնքան տկար, բա-
նադատիցէ զսիրտն այնքան ապատ առ 'ի սիրել
զայն, որ արհամարհէ, և ջանայ ունիլ զայն,
որ վնասէ ինքեան։ Մեծէ դաղտնի խորհուրդս
այս,

այս ։ Զոր մարդիկք փորձառնուն յամ ժամ
ոչ մարդիկք ։ բայց ոչ կարեն երբեք հնարել
ոչ հանճարեալք ։ և ուշիմք ։ Ոչ նախանձիմ ես
գիցն կենդանեաց ։ ոչ և մարդկանց մեռելոց ։
եթէ ոչ երկուց իրաց ։ այսինքն դիցն որք կեան
առանց երկիւղի շարանձանց նենդաւորաց ։ և
մեռելոց ։ որք արդէն հանգուցեալք են ։ առանց
ունելոյ զպիտոյս ի կանանց ։ Են այնքան ապա-
կանեցեալք օդքն ։ մինչ զի ապականեն զամպն ։
և այնքան մահաբերք ։ մինչ զի զմարմին ։ և զսիրտ
ի միասին աւարտեն ։ Օվ քաւաստինա ։ սէրն
մարմոյ է այնքան բնական ընդ մարմոյ ։ մինչ զի
մինչ փախչի ի ձէնջ մարմինն հեքնելով ։ թող-
ցուսք մենք գրաւեցեալ զսիրտս մեր ի ձեռս
ձեր հաւատոտաւ ։ և եթէ բանականութիւն ոչ
բանական փախչի ։ մարմինն ոչ մարմին իսկոյն
ապ զինքն ոչ բանդարկեցեալս ։

Յաղագս թէ զոլբան վիշտ, և վշտանդաս ունին մարդիկք, որք յոյժ ընտելանան ընդ կանանց։

Գլուխ Քսաներրորդ։

Առասաւելով Կայսրն'ի զուցատրութիւն իւրում. ակաւ յատկացուցանել զոլ վշտան ընդհանրական, որք հեռաւին մարդկանց 'ի յաշխարհ ընկերակցութիւն։ և 'ի ընտանեկցութիւն կանանց, և յեռոց սասց զյատուկ ինչ, զոր երբեմն անցուցեալեր 'ի կեանս իւր ընդ կնոջն իւրում Քաւուսոնիայ յետ այնորիկ ըսկսաւ ասել այսպէս։ Զմտաւածեմ, զի բազում անդամ 'ի տղայութիւն իմում ընկղմեցայ 'ի մարմնի, ուներով զառաջադրութիւն ոչ երբեք դառնալ առ մարմնն, բայց ես խաւտամանիմ զի եթէ ունեցայ յաւուր միում զեարկ ցանկութիւն, փոխանակ նորա ունեցայ զաւուրս հազար 'ի գործս չարութիւն։ Ունին զիրաւունս փախստեան ով կամնայք նորա, որք փախչին, թաքուցանել զինքեանս որք թաքչին թողուլ զձեզ որք թողուն բաժանիլ 'ի ձենջ, որք բաժանին, և մոռանալ զձեզ, որք մոռանան։ Քանզի ոմանք փրծանին 'ի ձեռաց ձերոց, վատահամբաւեցեալք, որպէս չէզոքս և 'ի դաղեալս, ոմանք վիրաւորեցեալք 'ի լեզուաց ձերոց, բազումք հալածեցեալք 'ի արարմանց ձերոց, և քարոզ ազգասիրեցեալքն 'ի ձենջ եկեցեն ամենեքեան արհամարհեցեալք 'ի ներքսնյանոց սրտից ձերոց, և սքացեալք 'ի լրբութիւն ձերմէ։

Ու-

Ուրեմն որ զայս իմանայ, թէ ժամանէ ի յայսմ պարգևի։ Եւ ոչ գիտեմ թէ, ո՞ւրդ այնքան խե՛ լագար, որ զայս լսելով կամիցի ծառայել ձեզ։ Ո՛հ թէ ի յորքան վնասս, և ի վատանգս մատու ցանէ զնոքա մարդն այն, որ առնէ ընդ կանանց զնստանելագութիս։ Եթէ ոք ոչ սիրէ զնոսա, հա մարեն զնա ոգիս, եթէ սիրէ, համարեն զնա թերեւամիտ, եթէ թողու զնոսա, վարկանեն զնա անարդ, եթէ հետեւի նոցա, համարեն զնա մոլորեալ, եթէ ծառայիցէ ձեզ, ոչ հաւանիք ծառայութեան, եթէ ոչ ծառայիցէ արհամարհէք, եթէ կամի, ոչ կամիք։ եթէ ոչ կամի հալածէք, եթէ յաճախիցէ, վատահամբաւէք, և եթէ ոչ յաճախիցէ ունիցիք զնա պակասագոյն քան զմարդ, զինչ սրատցէ ողորմելն այն։ Զի՞ իր ունէցին մարդիկք հաւասար, զի թէպէտ առ նիցէ մարդ մի զայն ամ, զոր կարէ առնել վնասոջ իւրոյ որպէս մարդ, և զայն ամ զոր պարտէ առնել որպէս առն, և ի տկարութեան արտահանիցէ զուժեղութիւն որպէս բարի և աղքատութեան իւրով դարմանիցէ և ճարակ դնոցէ. աշխատանօք իւրովք, և յամ ժամ վնասս նորա դիցէ զինքն ի վտանգի, ոչ հաճիցի կինն ընդ այս ամ և ասասցէ թէ դաւաճանն այն ունի զսէր ընդ այլ կանանց, և զորինչ առնէ ինձ, զայն առնէ առ ի կատարել զգործն, զոր պարտէ առնել ամ մարդ կնոջն իւրում։ Գոն աւուրք բազումք, ով Քաւստինա, զի ես ցանկացայ ասել քեզ զայս, և վաղարկեցի մինչև ցայսօր, սպասելով զի տացես ինձ զպատշաճաւոր ժամանակ ասելոյ, թէ զորքան առիթս եռուր ինձ առի ըզդալ զնոյնն Անպատեհն սրանցն իմաստնոց, թէ յամենայն անդամ առնիցեն ընդ կանանց իւրեանց զիր իմն տրհամաճելս, խոյթելով զնա բանիւք. քանզի ի մէջ իմաստնոց. այնք բանքն են առավել բարի վարկեցեալք, որք ասի ի դիպող ժամանակի, և ի պատշաճաւոր տեղւոջ, և լիցեն յոյժ բարւոք արտաբերեցեալք։ Զմտաւածեմ

նաՀեմ զի են ամք վեց զոր Հայր քո Անտոնի-
նոսն գԹաՀ ընտրեաց զկս փեսայ իւր , զու
ընտրեցեր զկս այր քո , և ես զքեզ կին իմ ,
վատԹար բախտն իմ Թոյլ տալով զայս , և Ադ-
րիանոս տէրն իմ հրամայելով ինձ , ետ ամենայն
իմ ինձ զքեզ դուստր իւր , և յոյժ դեղեցիկ
'ի կնութիւն , և 'ի յօժիտս զկայսերութիւն իւր կա-
յուղագուսեղ , և խոկամ ես , Թէ 'ի հարսանիս ;
և 'ի յամուսնութիւս ամենեքեանս եղաք սպասե-
ցեալք , նա առնելով զկս որդեգիր իւր , և ես
'ի կնտրելն իմ զքեզ 'ի կնութիւն : Կոչեցաւ Ան-
տոնինոս գԹաՀ , զի յամենայնում իրակութեան
դուստ գԹաՀագոյն , բայց վասն իմ միայն
եղև անդութ : զի ընդ սակաւ մնոյ ետ ինձ յոյժ
բազում զոսկերս : և խոստովանիմ քեզ Ճշմար-
տապէս , զի ոչ էս զատամունս ունիմ առ 'ի
կռծել , ոչ և զշերմութիւն 'ի ստամոքսի , առ 'ի
մարսել , և բազում անգամ զկս նոքօք խեղդե-
ցեալ դու մոռծեմ : Կամիմ ասել քեզ զբան մի ,
Թէ էս այնու ընկալցիս զսանՁանս , զի դու վա-
քոյոյ գեղեցկութեան ես ցանկալի 'ի բազմից . և
վա՛ չաբասվորութեան դոյ յոյժ առեցեալ 'ի հա-
մայնից : Ա՛հ Թէ որքան վատԹարէ բախտն
քո , ով Քառատինա , և որքան վատապէս մտա-
նաւորեցին ընդ քեզ դիքն , տալով քեզ զգեղեց-
կութիւն , և զնարասութիւն առ 'ի վայելել վա՛ կրս-
տեան քոյ , և ոչ կամեցան տալ քեզ զիրս բա-
նեգոյնս , որքեան բարք քաղցունք , և խոհեմու-
թիւն որովք զքեզ պահիցէիր բարւոք պահպա-
նութիւ՝ : Դաւանման ասել նորապէս , Թէ եղեն
յոյժ անողորմք դիքն և անդոյթք դէզ 'ի քեզ ,
զի դահավիժեցեալ զքեզ 'ի ծոց ծովու անձկա-
դոյնի , յորում ամ՛ չարք վնասին , և ընկղմին , և
յափշտակեցին իքեն զառագաստս , և զղեկս ;
որովք ամ՛ բարիք փրծանին , և փրկին : Զամն
երեսուն և ութ կեցն առանց կանանց , որք ոչ
Թուեցան ինձ երեսուն և ութ աւուրք , իսկ 'ի
վեց ամս , ամուսնութեան , Թուին ինձ վեց հա-

իւր ամբ անցեալ՝ կենաց իմոց ։ Զմիով իրավ
կամիմ ալքեզ հաւատսի , և ճշգրիտ առնել ։ զի
եթէ եմ դիտիցէի յառաջ զայն , զոր այժմդիտեմ , և զբաղումս իրս , զորս գործամ այժմ կարիցէի զգալ յայնժամ զիրբրիկ մասն այսոցիկ ,
թէև դիքն հրամայէին ինձ , և Ադրիանոս որն իմ
աղաչիցէր զիս ես ոչ փոխանակիցէի զաղքատութիւն , և զհանդգուութիւն իմ ընդ օծմին հարստանացքոց և կայսերութիւն , բայց որովհետև
դիտալ ինձ վիճակս այս հանդերձ անիրջանութիւնքով , և քեզ հանդերձ երջանկութիւնքով , լուեմ յոյժ և ըմբերեմ առաւել ։ Եւ ցուցի
զիս որպէս ոչ զդացող բազում ժամանակ , բայց
այժմ ոչևս կարեմ համբերել , ոչոք ի մարդկանէ ըմբերէ կնոջն իւրում այնքան , որ ոչիցէ
պարտականդեցեալ ըմբերել նմա առաւելևս հանմանկատալով մարդն , թէ է մարդ , և վերջապէս կինն , թէ է կին ։ Լիրբէ կինն այն , որ
ընդդիմանայ կամացն առն իւրոյ , և խելագարէ այրն այն , որ վիճաբանի հրապարակաւ ընդ
կնոջն իւրում , քան զի եթէ բարի է կինն , պարտի այրն խնամածու լինիլ նմա , զի եղանիցի
առաւել բարեդոյն , և եթէ չարէ , պարտի
ըմբերել , զի մի՛ լինիցի չարագոյն ։ Գիտասցեն ամ մարդիկք , զի ամ իրք ըմբերեն տանջանաց , բայ միայն կանանց որպէս զի կին իցէ
ալիտոյանան զաղաչանս ։ Հաւատա ինձ քաւստինա , զի եթէ ահն դիցի , վատահամբաւութիւն անձին իւրոյ , և բամբասանքն զորս առնեն մարդիկք ոչ լեսս քարշիցեին զնա՝ ի չարեաց
ոչևս համայնք պատիժք բոլոր աշխարհի կարիցէին անջատել զնա ։ Չի սիրտ մարդկան է հզօր,
և ազնիւ , և սիրտ կանանցէ յոյժ նաղելի , և
տկար , կամին վասն սակաւ բարեաց զբաղում
պարգևս , և վա՛ բազում չարեաց ոչ մի ինչ
զպատիժ ։ Այր դիտուն պարտի բարւոք խոկալ
յառաջ քան զամուսնանալն , զոր առնելոցէ վա՛
ամուսնութիւն , և լեսս սահմանելոյ զինքն առ-
նուլ

նուլ զկին 'ի յնկերակցութիւն իւր, պարտեալ լայնացուցանել զսիրտն իւր յաղագս ամի զոր վա՛ն նչ կարէ գալ 'ի վերայ, ուստ նայ որ կամի մնանել 'ի պատերազմ նախ պատրաստել զսիրտ իւր առ կրել զամ, որ նմա պատահելոցէ իմարտի։ Ոչ առանց պատճառի կոչեմք պատերազմ զկեանն այն, զոր ունին չարապէս ամուսնացեալքն 'ի տան իւրեանց զի առաւել զմեծ պատերազմ շարժեն առ մեզ լեզուաւ իւրեանց կանայքն, քան զթշնամեաց գեղարդն վիրաւորել զմեզ։ Մեծագոյն պակասութիւն է մարդոյ, առնել զբաղձս քննութիւն զպակասաւորութեան կնոջ իւրոյ, պատժելով զնա յայտնապէս, և 'ի լուր ամենեցուն զայն ամ, որ պատահի 'ի մեջ նց գաղտաբար, և 'ի թաքստեան։ Արդ նայ որ խոհեմն իցէ եթէ կամի կենցաղաւարել խաղաղութիւն զայս կարգս պարտս պահել, այսինքն սպառնալ բանիցս յանդիմանել սակաւ, և ոչ հատուցանել զհեռս իւր 'ի նա ձաղանօք, ասա թէ ոչ, ոչ յինքեանէ հաւատարմութիւն, ոչ ինչոջէ բարւոք զտուր, և առութիւն, և ոչ որդոցն իւրեանց զբարի դարձացումն, ոչ 'ի դիցն զպաշտպանութիւն, և ոչ 'ի մարդկանէ զօրնականութիւն ունել կարեն կամ յուսալ երբեք։ Զայսմ իրակութիւն, գնաւ ասին ոչ կամիմ առաւել ասել, եթէ ոչ զբայցես, զայն, զոր զգամ, և գիտացես դու, զի սեռանեամ գբեզ և երկայնամտութիւն, և ըմբերումն իմ բանական դոլ կարէ, առ 'ի յուզութիւն, և զարուումն կենաց քոց։

Յաղագս այնր պատճառի, զոր պատասխանեաց Կայսրն Քառասնից շուրջ զյինս, որ ասաց թէ յղի իցէ։

Գլուխ Քսան և մի երրորդ։

Բդ այժմ քանզի բացայայտեցան, և արտաբերեալ հուսացան թուն՝քն հնացեալք, կամիմ պատասխանել քեզ յաղագս հարցմանն ներկայականի, ոչ զի օգտակաւք եղեցին դեղոցայքն հիւանդին և անտացելոյն, հարկաւորէ բանալ և արձակել զամրափակումն ստամոքսին։ Եմանապէս ոչ զքի կարէ տալ զկորհուրդ ոչ պատկանի բարեկամին իւրում, եթէ նոքա ոչ ծանուցանէ նմա, թէ վասն որոյ իրի զայրացեալ իցէ ընդ նմա։ Դու խնդրես յինէն զբանալն ուսումնարանին իմոյ. և սպառնաս ինձ, և ասես, եթէ ոչ տացից քեզ զբանալն վիժիցես զերեխայդ յորովայնիդ՝ և մեռանիցես 'ի յղութեանդ։ Լաւագոյն պատճառանս ունիք դուք յղի կանայք, որովհետև ենթ պատրուակի մահուանն կամիք առնուլ զցանկութիւնս ձեր։ Յորժամ սրբազան խորհրդարանն 'ի ժամանակի յոյժ բարեբախտութեանէ, և յաջողութեանէ արար օրէնս 'ի յօգուտ տիկնացն Հռովմայեցոց, ոչ էին կանայքն այնր ժամանակին այնքան հետևողք ցանկուանէ սրտից իւրեանց։ Եւ այժմ ոչ դիտեմ թէ զինչ եղև զնա՞մի բարեօք զղջալիք, և ցանկայք ամենայն ամենից չարեաց։ Եթէ սիրոյ զութն իմ ոչ պատրէ զիս, մինչ կամիցն արար

զուխտադրութեի առ մայրն Սիբել, որպէս զի տացէր նմա զյաղթութեի 'ի պատերազմի, և յաղթելով կատարել կամէր զուխտն իւր, էր այնքան աղքատացեալ Հռոմայնմ ժանանակի, մինչ զի ոչ ունէր զարծաթ, ոչ և զսակի, առ 'ի ձուլել զպատկեր ըստ խոստման իւրում։ և տեսանելով տիկնայքն այնր ժամանակին, թէ արքն իւրեանց մատուցեալք էին զկեանս իւրեանց 'ի պատերազմի այնմիկ, կամեցան ինքեանք մատուցանել զզարդս իւրեանց զոր ունէին, և զսակունս պատուականս արքային խորհրդապանին։ Եղև իր զարմանալի 'ի տեսանել. զի թարց պահանջելոյ ոք 'ի նոցանէ զիր ինչ, կամ մատծելոյ զայն, միաբանեալք տիկնայքն 'ի միասին գնացին 'ի կամ պիսաչն, և անդ 'ի ներկայութեի ամենեցուն եդին զգինդս ականջաց իւրեանց, զմատանիս մատանց, զապարանջանս բազկաց, զվզնոցս մարդարտեայ 'ի պարանոցի, զձուլածոյս լանջաց, և կրծոց, զգօտիս միջաց, և զայլ ամ բաղում իրս, և թէպէտ բազում յոյժ համարեցան զորս ետուն բայց թարց նմանութեի եղև համարեցեալ առաւել կամքն իւրեանց յորում ետուն։ Եղեն այնքան հարստութիւնքն զորս անդ մատուցին, մինչ զի ոչ միայն բաւականացան, կատարելոյ զուխտն դրօշեաց, այլ և տեսելոյ 'ի պատերազմն, և որպէս Հռոմ ունէր զսոմորութեի, ոչ ընդունիլ զծառայութեի ինչ յումեքէ եթէ ոչ զմ այնմ իրի իսկոյն ոչ առնիցէր զբազում պարգևս, և յայնմ աւուր յորում տիկնայքն Հռոմէացոց, մատուցին զինչս իւրեանց, խորհրդարանին, պարգևեցին ծերակոյտքն, հինգ իրս կանանցն այնոցիկ, այսինքն զյատկորինութիւնս զայսոսիկ։ Նախ և յառաջ, զի յաւուրն մահուան նոցա 'ի պատիւ նոցա կարիցեին տանէ նոքաքն տանեաքանել, և անդ պատմել զբարի կենցաղավարութիւնս նոցա։ Երկրորդ կարիցէին նստել 'ի տաճարի, զի յառաջ պարտէր նոցա յոտս կալ երրորդ, զի կարողք իցեին զգենուլ յանձինս

իւրեանց զգեստս կրկինս , զի յառաջ ոչ զգեստսն ի նեթէ ոչ զի միայն , Զորրորդ 'ի մեծի տէր անդուրեթե կարիցէին ըմպել զգինի , զոր յառաջ ոչ կարէին ըմպել , թէպէտ ելանելոց իցեր հոգին 'ի նոցանէ , այլ զոյր միայն ըմպէին : Հինգերորդ տիկին ոք գոլով Հռովմայեցի և յոլի , ոչ ոք կարօղ իցեր ուրանալ նմա զիր իմն : իրաւի հնկեքինք իրակուեթիքս այսոքիկ յոյժ արդարք , և քաջիք , յոյժ արդարապէս , և քաջուոք եղեն պարդևեցեալք նոցա 'ի խորհրդարանէն : Եհ յաղագս յոլի կանանց , որոց ասէ օրէնն , թէ ոչ ոք զիր իմն խնայիցէ նոցա կամիմ՝ ասել քեզ զպատճառն որ առաւել յատկաբար շարժեաց զխորհրդարանն զայս առնել : Գոլով Քուլվիս Տօքքատն բգեշխ , և խորհրդածու պատերազմին վրայակեցուց,ազնիւ ձիավարքն մաուրիտանացոց, Բերեալքէին 'ի Հռովմ զդատան մի միականի որսալով զնայ 'ի յանապատն յեգիպտոսի և ոչ յայնմ ժամանակին տիկնայքն Հռովմացոց էին հաճեստք որպէս 'ի ժամանակս մեր են համարձակեալք , կինն Տօքքատին գոլով յղի և էին աւուրքն ծնանելոյ նորա , իրաւի զի էր տիկին այնքան հաճեստ զոր ոչ սակաւ փառս ուներ նա 'ի յամրաֆակութեթ իւրում՝ 'ի Հռովմ քան զուժեղութիւն առն իւրում՝ 'ի նոյն պատերազմի: Եղև վերայ քանն եցեալ , և ներքանենեցեալ , զի զամս չորեքտասան , յորս Տօքքատոս այրն իւր եկաց 'ի յասիայ , յետ առաջնոյ աւուրն դնալոյն առն իւրոյ հասիա , ոչ երբեք ոք ետես զնա 'ի լուսամուտս տանն իւրոյ : և ոչ միայն այսու եղև նշանակեցեալ , նշմարեցեալ , և նկատեցեալ , այլև այնու եղև փառաւորեցեալ , զի 'ի բոլոր չորեք տասանամս մեկուսացեալ 'ի յառնէ իւրմէ , ոչ ոք 'ի յարուսաց 'ի յուեթն ամաց 'ի վեր զշեմս դրան նորա եմուտ : Ոչևս այսու շատացեալ , զոր առնէր յաղագս տալոյ զօրինակ բոլոր Հռովմայ և առ 'ի թողուլ վասն իւր զմշտնջենական յիշատակ, զարդացուցանէր զգաւակսն իւր կերպիւ զարմանա-

նալեաւ։ Արդ մնացեալք էին նմա երեք որդիք, որոց աւագագոյնն ոչ ունէր աւելի քան զամս երիս, և 'ի ընուլն զուեթն ամաց. հասակի, իսկոյն առաքէր զնս 'ի տունն պապին իւրեանց։ և զայս առնէր դերագոյն սեկիլնն այն՝ ոչ զի 'ի պատճառս որդւոց իւրոց, մի՛ մոռանիցէին 'ի տուն նորա այլք տղայք։ որոց յետ անցելոց ժամանակացն այնոցիկ դարձաւ 'ի պատերազմն մինչեցուց բարի ծերն այն Տօռքատոս Արդ անցա նելով ընդ դրունս ազնիւ տիկնուս զայն դաղանն միականի. ակաւ պատմել նմա աղախինն իւր, թէ ետես դազան մի միականի, ահարկու, և զքան չանալի որով տիկինն էառ մեծագոյն ցանկութիւն տեսանել զդազանն այն բայց ոչ գոտս ոք զի տա նիցէր նմայ. եղև այնքան սաստիկ ցանկութիւն նորա մինչ զի վիճեաց զերեխայն և նոյն ժամայն անկեալ մեռաւ 'ի ցանկութէն։ Իրաւի զի բազում անգամ էին անցուցեալք զդազանն ընդ փողոցսկաւն իւրով իակ նա ոչ երբէք կամեցաւ տեսանել, զի ոչ կամէր ելանել 'ի տանէ, ոչ էաւ 'ի լուսամուտ հայել։ Եղև մայն նորա 'ի Հռօմ յոյժ սգացեալ, զի 'ի վերքան զամենեսեան էր յոյժ սիրեցեալ յամենեցուն, և մեծաւ իրաւամբ զի յեռայնորիկ, Հռօմ ոչ երբէք զարգացոյց զտիկին մի նման նմին։ Եւ հրամանաւ խորհրդարանին, 'ի վերայ արձանաքարի գամբարանին իւրոյ քանդակեալ եգին զոտանաւոր տաղաչափութիւս այս։ Ասա զեռեալի փառաւորեցեալ Մաուրինակինն Տօռքատին, որում կամեցաւ դնիլ 'ի վգանգի մահուան և ետ զկեանն իւր, վանքոյթ, և ապահով առնելոյ զհամբաւն իւր նայեաց Քաւատինա, ոչ արարին զօրէնս այս, զի մի՛ խնայիցէ ոք զիր իմն յղի կնոջ, եթէ ոչ վասն մահուան համեստագունի տիկնոջս այսորիկ, որպէս զի մնացեալ օրինակ վարուցն նորա առ ամենեսեան, և յիշատակ մահուան նորա բոլոր աշխարհի։ Արդ որովհետև օրէնս այս հաստատեցաւ պատճառաւ յղի և համեստագունի

նի կնոջս այսորիկ, արդարութիւն պահանջէ ուրեմն. զի օրէնս այս ոչ ի կիր արկանիցի, եթէ ոչ վասն պարկեշտ, և համեստ յոյի կանանց. և կանայք որք կամին և խնդրեն զի պահիցի օրէնս այս յղացելոց զնոյն յօրէնսն հարցանեցեն եթէ իցեն յոյժ համեստք, զի ի յեօթներորդ տարեկան կի օրինին մերոյ ասի, թէ ուր դոյ ապականութիւն վարուց, և սովորութիւնց անդ. ոչ վայելէ պահպանել զաղաղութիւս օրինի։





Յաղագս թէ ի ժամանակի Մարկոսի Կայսերն, որպէս եկեալք Մաւրիտանացիքբաղում նաւովք առ ի առնուլ զմեծ կղզին Բրիթանիս։

Գլուխ Քսանուերկուերրորդ։

Ուին ծդ. տիոյն Մարկոսի Կայսեր, և ի տասներերորդի ամի Կայսերութեան նորա, և յամենեանն Յուլիսի գոլով ի Նապոլի, և ոչ բաւուք տրամադրեցեալ առողջութեամբ, զի վերատանայր ոտացաւոք, եկեալ Հարիւրապետ մի ի կղզէն մեծին Բրիթանիս առաքեալ ընդ կերպի սուրհանդակի, և զեկոյց Կայսերն, թէ յանկարծակի ելեալն խուսքեք զենոսեցեալք նաւովք, ի վերայ կղզոյն և հարցեալ ցհարիւրապետն զորքանութի նաւուց, ասաց թէ իսկեն նաւք հարիւր, և երեսուն յերկրէն Մաւրիտանոյ, և բաղմութիւն զինուորաց կայսնայր ի քսան հազար ոտանաւորս, և ի յերկուս հազար ձիաւորս, ասաց և սա. թէ սպարապետն նոցա էր եղբայրն արքային Մաւրիտանայ, որոյ անունն էր Աշկիլիա, և ի ջեալք ի ցամաք նաւ ահանգիստ կղզոյն, որ կոչի Աբսինս։ Եւ առ ի յնդիմանալ այնպիսի բաղմութեաց, էին ոսկաւք ալք ի կղզոյն, Իսկ ազնուագոյն Կայսրն զայս լուեալ, ոչ զայլ դեղ էգիտ վասն այսորիկ, եթէ թէ առաքել զձիավար աղնիւսն ի Բրիթանիա, և

և զամ պարոնայն որք կային 'ի պալատի իւրում։ և թէպէտ 'ի ներսուստ զդացաւ որպէս մարդ, քայց արտաքուստ զանց էառ, որպէս հանձարեղ ցուցանելով զինքն զուսարձադէմ, և հանդարտ 'ի խօսակցութիւն։ Եւ տեսանելով թէ գործք բանին ոչ ըմբերէին յամեցողութեան, ասաց զբանս այս։ Ես զիս տեսանեմ սակաւուք արամբք, և զոչինչ դրամս ունելով, քայց ա՞ր բարից, զորինչ կարողեմ առնել փութանակի, քանզի առաւել արդիւնաւորի միջակ նպաստն, որ յուղարկի 'ի դիպող ժամանակի, քանզի յոյժ կուտակօրէն ընդ վայրապար ժամուս։ Արդ կայսրն բարի իսկոյն նախահոգացեալ կամեցաւ, զի ամենեքեան որք կային 'ի պալատի իւրում չուի ցէին, որպ՞ ասացաք 'ի վերոյ 'ի Բրիթանիայ, թարց մնալոյ առ յինքն ումեք 'ի սպասաւորութեան իւրում։ Արդ կայր սովորութիւն, զի Կայսերքդ Հռովմայեցիք ունէցէին 'ի պալատի իւրեանց զայնպիսի մարդիկ, որք էցէին յարմարք յուղարկելոյ յոմն կամեցէին 'ի վտանգաւոր ժամանակի առ 'ի պատերազմել։ Եւ մինչ սոքա մտին ինաւ, ահա էհաս կուր, այսինքն փոքրիկ նաւիկ մի 'ի Բրիթանիու, որով իմացան, թէ Մաուրիտանացիքն դարձեալք էին յետս առանց առնելոյ զինչս ինչ բրիթանիու, ուստի Կայսրն յետս դարձոյց զձիավարս իւր, և քանզի մեծապոյն մասն նոցա որք չուէին 'ի Բրիթանիայ ոմանք վասն պակասութեան և ոմանք գնային յոյժ անցարձակ 'ի պատճառս պատերազմին ոմանք ոչ առնէին զկենանս բարիս, տեսեալ Կայսրն զանզգամուիս բանակին իւրոյ և համարձակութիւնս զորաց և պաշտօնէից տան իւրոյ վասն որոյ ոչ տկարացին առաւել 'ի յառաքինականաց վարուց և յաւելցին 'ի ներդաւորութիւն, յիշեաց յաւուր միում կոչել զամենեսեան և ասաց նոցա զբանս այսոսիկ։

Յաղագս այնորիկ։ զոր Մարկոս Կայսրն 'ի բանակի իւրում խօսեցաւ զվատթարութեանէ դատարկացութեանց։

Գլուխ Քանեւերեքերրորդ։

Երագոյն նշան առն առաքինեաց է, զբաղեցուցանել զժամանակն 'ի դործս առաքինական։ և մեծագոյն նշան առն պղերգի և յուսացելոյ, կորուսանել զժամանակն 'ի դործս ծուլական։ Սա ծագոյն բախտն ամենից բախտից և մեծագոյն ցանկութիւն ամենից ցանկութեանց է, կեալն մարդոյ ընդ ժամանակս երկար։ Քանզի զանազան դիպուածք, որք հանդիպին 'ի կարճաւուրս միջարկութեամբ, ըմբերեալ, և հնարաւորեալ լինի երկար ժամանակաւ։ Աւերն ասեն Պլատոն թէ այր ոչ սրոյ թարց օդտակարութեամբ անցուցանէ զաւուրս կենաց իւրոց որպէս անարժան կենաց հատցեն գնայ 'ի կենաց ոչ մնացեալ կեանն։ Աղբանաց տեղի տանն, և հոտեալ ջուրն ծովու 'ի յատակս նաւուց և ժահտոտ տեղիք քաղաքաց, ոչ այնքան ապականեն զօդն, որքան ապականեն ամենք դատարկաբեացք զժողովուրդս իւրեանց։ Այսպէս որպէս այրմի որ բարւոք տրամադրէ զժամանակս, ոչ դոյ առաքինութեամբ, զոր ոչ հաւատայցեն ամենեքեան զայն գոլ 'ի նմա, այսպէս և մարդ մի որ չարաչար 'ի կիրարկանէ զժամանակն, ոչ դոյ անարդութեամբ, և ամարդութեամբ, որ ոչ սուրբասիցի զնմանէ։ Այր պարապեալ 'ի բարիս, միշտ ունելի յայլոց որոշ բարի, և մարդն ծուլացեալ, թարց ներաղնութեամբ

իմիք դատապարտել է ոչվատթար, և չարագործ
Հարցանեմ ցձեզ զբան մի, և տուք պատաս-
խանի։ Ո՞վ բուսուցանէ, և արատանէ յինքենէ
զոստատակս, զեղէնձն, և զայլ փշփշուտ բան-
ջարան, եթէոչ երկիր անբան և ընդունայն և
տեղիք անվար և անգործ, այնպիսի յորում ոչ
հասանի վարող կամ խոփն վարողաց։ Ո՞վ Հռօմ
առանց Հռօմայ, որ ոչ զայլ ինչ բարի ունիս
առաջնոյ Հռօմայ, եթէ ոչ միայն զանուն նր։
Զի ասատանօր ես դու այնքան սուղեղեալ առա-
քինութիւն, որքան եժանացեալ կաս մոլութիւնք։
Լո՛ւր, լո՛ւր, զի ես ասացից քեզ զպատճառն
աղբատանալոյն քոյ։ Գիտես արդեօք թէ վասն
այր իրի եղեր ասդպէս։ Վասն այնորիկ զի ար-
տաքսեցեր զփողոցս, և զշուկայսն քոյս յար-
հեստաւորաց և ի յարհեստաց և լցեր շուր
Ջանակի զպարիսպն քո անհնիւք ունայնակեցօք.
և զհրապարակն քո անթուելեօք յուլացելովք։
Իրաւի գիտեմ, զի ոչ արարին քեզ զայնքան
ինչս Սամիտքն, Վօլսակքն, Էստրակքն, Պէնքն,
և Սփայեալքն 'ի դաշտի քում, զորքան աստա-
նօր առնեն հեղդացեալք դատարկակեացք,
և պարապեալքն 'ի ղումարտիաղութիս։ Ոչ
բացասեն ինձ համայնք պատմիչք, և պատմա-
գրիչք, որք ասեն, թէ համայնք ազգքն 'ի վե-
րոյ ասացեալք, ոչ ևս զպարիսպ մի կարողացան
քակել Հռօմայ։ Իսկ ունայնակեացքս այսոքիկ
առերեցին, և կորուսին զբարի համբաւն Հռօ-
մայ անպաղ օրէնքքն, զի այր ավեալ զինքն
'ի կրթուիս լինի առաքինի և տարով զինքն 'ի դա-
տարկակեացութիս լինի մոլ։ Ո՞հ թէ սրպիսի
երջանկութիւն եղև տեսանել զդարան այնս ած-
այինս նախնեացն մերոց, յորս 'ի Թուլոսէ Օս-
տիլիօք, մինչև 'ի Կուինցիոս Զինչինատոս դիտա-
պետն, և 'ի Զինչինատոսէ մինչև 'ի Սիլլա, և
Մարիոս, ոչ երբեք եղև խորհրդածու 'ի Հռօմ,
որ ոչ գիտիցեր զարհեստ իմն որ ելեալ 'ի խոր-
հրդարանէն ոչ անցուցանէին այնու արհեստիւ
զժա-

գժամանակն։ ոմանք ուսեալքէին նկարել զտաս
տակս, այլ ոմն քանդակել զպատկերս, այլ ոմն
ձուլել, և կամել զարծաթս այլոմն ընթեռնոյր
'ի վարժարանի, և այսպէս մինչ զի ոչ ոք 'ի դլնա
ւոր պաշտօնէից կարէր ընտրեցեալ գոլ 'ի խոր
հրդարանէ, եթէ ոչ իցէր վարժեցեալ 'ի ձե
ռագործս արհեստի իմիք։ Եւ առ 'ի հաստա
տել զՀնմարտութիւս այս, ընթերցեալեմ զտա
ղբեցոյցս, որք մնացեալք էին 'ի դրոց, զոր ե
տուն ինձ քրմապետքն վուլկանաու և զորէն
մի հնագոյն, թէպէտ յայսմ ժամանակի ոչ պաշտ
պանին, որ հրամայէր, թէ ոչ ջրաղացպանք,
ոչ բայտարք, և ոչ հացթուղք, ոչև իւղաղուգք
կարիցեն ունել զպաշտօն իմն 'ի խորհրդարանին,
զի այսպիսիք անձինքս համարեցեալք էին ոչ
թէ արաբեալք իցէին անհաւատարմութիւն ինչ։
Արդ նայեցարուք այժմ առ փոփոխումն ժա
մանակի, և տեսցք զպատկանուն սովորուեց։
Զի ամք երեք հարիւր 'ի համբաւաւորն Հռօմ
ամենեքեան աշխատէին։ և այժմ են ամք ութ
հարիւր յորս 'ի յանհամբաւն Հռօմ ամենեքեան
ըզբօանուն։ Գոսի և սս զայլ ինչ, որ է յոյժ արժա
նի մտանջենականի յիշողութեան 'ի նոյնոսմ տարե
ցուցի թէպէտ 'ի ծերոց ոչ էր բարուք ընթեռ
նանեցեալ։ Ժողովուրդն Հռօմայ ունէր 'ի
միում և ինոյն ժամանակի զչորս վլուանդաւոր
պատերազմս ուր կացուցաւ ըշխիպիոն տղայն ընդ
դէմ պէնաց, Մուսիոս ընդդէմ աքայացւոց,
Մէտելլոս ընդդէմ Աղէքսանդրի թագաւորին մա
կեդոնացւոց, և եղբայր Մէտելլոսի ընդդէմ սէր
թիբերացւոցն Սպանիացւոց։ Եւ քանզի էր
օրէն մի անբռնադատելի, թէ ոչ ոք, ոչ յու
մեքէ, և վասն ոչինչ իրակութեամբ կարիցէր 'ի բաց
հերքել և արդելուլ զոք 'ի յարհեստէ յորս ու
նէր, և ժողովուրդն Հռօմայ ունելով զմեծ
հարկաւորութիւն յուզարկելոյ զսուրհանդակ մի
'ի տեղիան պատերազմաց, յաւուրս երիս շրջե
լով և որոնելով ծերակոյտն, և դատաւորքն
'ի մէջ

'ի մէջ Հռովմայ, ոչ երբէք կարացին դտանել զայր մի դատարկակեաց որ կարիցէին առնել զինքն սուրհանդակ և հասուցանել զԵուղղն այնքան հարկաւոր։ Ողջամ, նախանձու զոր ունիմ առ յայն աղոգութիւն, և երկնկութիւնքն հնադու նից, և աշխարհամ ցաւակցելով թշուառութիւնքն ներկայ ժամանակիս մերոյ։ Ամաչիմ ասել զբան մի, բայց կամիմ ասել։ Զամս քսան ընկալայ զպաշտօն 'ի խորհրդարանի անդ, և են ամք տասն, յորմէ հետէ կառավարեմ զդաւառս Կայսերականա, որոց բովանդակութիւնքն են ամք երեսուն, և երդնում 'ի գիսն անմահս, զի ետու դանհաբել և յետոյ արկանել 'ի դուք, և հեղձամահ առնել, և կախել զփայտէ, և տուաքել յաքսորանս զարս տաւել քան զերեսուն հազար դատարկակեացս, և զկանայս տասն հազար։ Ահ թէ որքան անմանէ կենին այնմիկ մահս այս։ փառացն այնոցիկ, պատիժս այս, ոսկուն այնմիկ ժանկս երկաթիս այս, այն հնադոյն աշխատանքն հնադուներից Հռովմացոց, այս 'ի դաբարու պղերդութիւն մանկանցն Հռովմայ։ Ի յորէնս Լաչդեմոնացւոց դառնին բանքս այսոքիկ 'ի վրէ աշտարակին դատարկակեացից քանդակեցեալ, որ ասեր այսպէս։ Հրամայեմք ոչ թագաւոր, և աղաչեմք որպէս ծառայ, վարդապետեմք որպէս Փիլիսոփայ, և սպառնամք որպէս հայր։ զի հարքն որդւոցն իւրեանց նախ ցուցանիցեն զդաշտս, ուր աշխատելով վաստակօք ձեռաց իւրեանց ապրիցին, և ոչ 'ի հրապարակս, և 'ի փողոցս դատարկակեացուիք շրջելով կորնչիցին։ Ասեր ևս օրէնն Եթէ տղայքն, որպէս տղայք անհնազանդք լիցեն, ծերքն որպէս ծերք ճնշիցեն զնոսա։ և եթէ հարքն անխղճք իցեն 'ի հրամայելն, կամ որդիքն 'ի հնազանդելն իցեն ապստամբք յայնժամ թագաւորնիցէ պարտաւանդեցեալ, խստաբար պատժել զհայրն 'ի միասին ընդ որդւոյն։ Եղեն բանքս այսոքիկ արժանի նշանակելոյ, յա-

յաղագս որոց Լիքուրգոս արդիւնաւորեցաւ ու-
նել զյիշատակ յաւիտենական անձին իւրոյ, և
բարեբախտ ժողովն թագաւորուն զնաղաղութի
մշտնջենական։ Ո՞վ Հռօմ, զինչ առնես, ընդէր
ոչ նայիս 'ի յօրէնսն Լաչէդէմնացւոց, որք բա-
ղեկամական սովորութիւն իւրեանց, ծաղր առ-
նեն զզանանական մոլութիւնս։ Ննջես թէ հս-
կես։ Ո՞վ Հռօմ, դու զարթուցանէիր զբոլոր
աշխարհ փարիլ ընդքաղցր աշխատանօք, իսկ
դուն ննջես 'ի յանիրաւ ծուլութիւս Ապահովա-
գոյն ես 'ի թշնամեաց քոց, և անփոյթ առնես
զբեզ 'ի յունայնակեացից։ զի թէպէտ թշնամիք
քոյք են հեռիք, սակայն որպէս զի մի՛ յան-
կարծ մատնիցիս 'ի ձեռս նոցա։ Իսկ
իսոցանէ, որք կան առընթեր քեզ ոչ երկնչիս,
սակայն առաւել վասն սոցա քան թէ նոցա պար-
սէր քեզ կալ միշտ 'ի յանուրջս աքնութիւն։ Եւ
կամեցայ խօսիլ ընդ ամենեսեան, որք կան ատ-
'ի պալատի իմում 'ի միասին, և էջ արդէն բա-
ղում ժամանակ, յորմէ հետէ ունէի 'ի սրտի
իմում ասել զայս, բայց դործառութիւնք օտա-
րականք բռնադատեն զմարդիկս, առ 'ի մոռա-
նալ զգործառութիւս իւրեանց յինքեանց։



Զաղագս թէ որքան ՝ի ճաշակաւ իցէ կալն ՝ի պա-
լատի արքունի : և խօսի զյատկապէս
թողնոցանէ , որք յաճախապէս մոտ-
նեն ընդ այն :

Գլուխ Քսաներորդերորդ :

ԱՐդ՝ի յաւարտել Կայսրն զբանս այսո-
սիկ , յաւել և ասաց այսպէս : Զբա-
զում իրս տեսի , և ՝ի յանձինս ճշմար-
տասիրաց իմացայ , որոց բազումքն
թուեցանէին ՝ի չար և ոչ մի ինչ բարի :
Եւ յատկաբար խօսելով ասեմ , թէ չարն այն ,
որ զայրացուցանէ զդիան , դայթակղեցուցանէ
զաշխարհս , խանգարէ զժողովուրդս , և ան-
ձին իւրում ճնաս , է անիծեցեալ դատար-
կակեացութիւն , որ աւերէ զբարիս , և կորու-
ցանէ աւարտելով զչարս : Բազմիցս ՝ի դաղտնի ,
և բազմիցս կիսածիծաղ ՝ի յայտնի ոմանց ՝ի ձէնջ
ապառնացայ , և զոմանս պատժեցի , բայց ոչ
ումեք օգուտ տեսի զպատիժն : ՝Ի կողմանէ միոյ
խայթն բանականութիւն ելս ստիպէ պատժել :
և ՝ի միւս կողմանէ խոկալով զչարութիւնն մարդ-
կային , որ այնքան յօժարեալ առ չարն , երբեմն
առաջադրեմ համբերել : Բազում անդամ կա-
մեցայ պատժել ցասմամբ , որպէս զորդիս ,
բայց արդելեցի զիս , մտածելով , թէ գոլով
դուք ազգայք , ՝ի պատրանաց աշխարհի չլինիս
էք զգուշացեալք , նորաբծութք մտրուաք , և
վատթարք՝ հերք , որք նորապէս ծնանին , իրաւ-
ունն պահանջէ , զի հաւատայցեն ապիտակա-
հերաց :

հերաց, որք վասասակեալք մերձ են 'ի յանկումն։ Ունին չարիքն ընդ չարեաց զայնքան մեծագոյն խորամանկութիւն, և զայնքան մեծագոյն դաշնակ յուսթիւն 'ի մէջ իւրեանց մոլութիւնքն ընդ մոլութեանց, և են այնքան որք պատրենղայլս, և թոռուն զինքեանս գող պատրեցեալ, զի մինչ փրծանիմք 'ի միոյ խաբէութիւն փոքու, և ճանաչեմք զնաբօղն վաղուբեմն պատրեալէ զմեզ ընդ այլ առաւել մեծագոյն խաբէութիւն։ Յաւելեալ ցաւակցութիւն ունիմ վասն ձեր ծառայք, և ապաշաւորք իմք, խօսելով ոչ հայր, սեռանեղով զձեզ հանապազ երթալ 'ի տուընջեան, և 'ի դիշերի, յամ տեղիս Հռոմայ որպէս կորուսեալս, քայց առաւել վատթարագոյն քան զամ վատթարութիւնս զորս զգամ են զի դուք ոչ զգայք զկորուսան ձեր։ Զինչ առաւել անանկանութիւն անանոց կարէ լինել, քան զչքնջին որպէս խելագար 'ի տեսարանէ 'ի տեսարան, 'ի քաղաքեաց 'ի քաղաքիս, 'ի թիատրոնէ 'ի թիատրոն 'ի յմբիշատանց 'ի յմբիշատունս, 'ի հրապարակէ 'ի հրապարակս, 'ի ծաղրատեղէ 'ի ծաղրատեղս։ Իսկ առաւելագոյն վատթարութիւնքն են, զի ոչ դիտէք, թէ զինչ խնդրէք, կամ զինչ կամիք, կամ յո երթայք, կամ ուստի գայք, ոչ գիտէք թէ սրն իցէ հաճելի, կամ սրն անհաճելի. որն իցէ օգտակար, և որն ինեասակար։ Ոչ յիշէք թէ գոլով, դուք ծնեալք քանանանք, կամիք կեալ որպէս վայրենիք անասունք 'ի մէջ մարդկանց, և կամիք մեռանիլ իբրև զանասուն։ Լուսոյ կարծէք, թէ պատասխիցի այս։ զի զոր երբէկ կատարեաս ըղձիս որոնեիք, այսօր զդուիք նովաս, և անհամանայ վասն ձեր, պատճառ սորինէ զի ոչ սանձահարիք բռնութիւք զգայանաբարոյ շարժմունս ձեր, և ոչ ընդդիմանայք սղայականի ցանկութիւնս ձերում, և առաւել միշտ զբաղեցուցեալք կայք 'ի զգայութիւնս ձերում։ Կայեցարուք դուք, որք էք 'ի քանանանի իմում, և մի՛ մուռանայք։

Մի հոգայք զօրհանապաղ գտանել զպարա-
պարդ ժամանակ փոխառուբ։ Իբրոք 'ի մարդկանէ
զինչ բարք և ունիցի ոչ երբեք կարէ կեալ բա-
ւուք, եթէ ոչ ունիցի զկրթութիւն 'ի ձէնս, կամ
'ի յինթերցմունս, և իկիրարկութիս նոցա կար-
գադրեցեալ բարեպէս, ապա թէ ոչ, միշտ ու-
նիցի զմարմինն տանջանօք, և զհոգին այլագու-
նեցեալ, և ունիցի զձանձրութիւն ամենից իրաց,
և շրջեսցի 'ի փողոցէ 'ի փողոց դատարկութիւբ։
Դառնամ ասել միւսանգամ', զի որպէս սիրան
մարդկային. ազնիւ իցէ 'ի վերս գործոց իւրոց
ունի զհեղինակութիւն միշտ և հանապազ վա՛ռ ամ
գործոց և յիմումս պարապորդութիւն և ըղձաղ-
մանց մարմնոյ 'ի յերիս աւուրս ձանձրանա 'ի նմա
նէ միայնոյ և ընդ նմայ և 'ի նմայ միայն այսինքն
'ի գովելի կրթութիս ունի զհանդիստ։ Գովելով
ես կայսր ամ երկրի, ենիր պատշաճաւոր, (և
ոչ կարէ գոլ պակաս) զի իցեն 'ի ոտն իմում
յամենից ազգաց, և ազանց, և որպիսի է ար-
քայն, այնպիսիք իցեն ընտանիքն, և որպիսի է
ընտանին, այնպիսիք իցեն բնակողքն յապարա-
նի նորա, և որպիսիք իցեն բնակողքն յապա-
բանի, այնպիսի իցէ բոլոր գաւառն Կայսե-
րական։ Վասն որոյ, հարկէ զի թագա-
ւորն իցէ յոյժ համբաւ, և ունիլ զտունն
իւր յոյժ զարգարեցեալ առաքինութբ և պաշտօ-
նեայք նորա յոյժ կրթեցեալք, և յապարանա-
բնակքն յոյժ սեղեցեալք։ 'Ի կենաց իմոց կա-
խի բարի կեանն նոցա, և հեռանապէս կեանքն
չար։ Իւրաքանչիւր ազինք ուսանին յատկապէս
'ի վարժարանի, և 'ի դպրոցսն իւրեանց, Աստ-
ուրիքն 'ի Տիգրանակերտն իւրեանց Քաղդէացիքն
'ի Բաբիլոն, Պարսիքն 'ի Դօռկաս, Հնդիքն 'ի
ՅՕլիմպիայ Եգիպտացիքն 'ի Թեբաս։ Յոյնքն
'ի Յաթէնս, Եբրայեցիքն 'ի Էլիա։' այսինքն
Երուսաղէմ Լատինքն 'ի Սամնիում, Գալիացիքն
'ի Յաւրէիա, Սպանիացիքն 'ի Կադէս, և սբ
ամենեքեան միայնագամայն 'ի Հռօմ։ Արդ դպրա-
տուն, և ուսումնարանն, ընդհանրական բոլոր

աշխարհի, է անձն, տուն և յապարանն թա-
գաւորաց։ զի զոր ինչ ասեմք մեք Կայսերաբս,
զնոյնն ասացին նոքա որք ընդ միջին, և
զորինչ մեք առնեմք, զնոյնն արասցին և նոքա.
եթէ թուլանամք, թուլացին, եթէ կորու-
սանեմք զմեզ, կորնչին նոքա, եթէ սատանամք
զմեզ, սատանին նոքա, և վերջապէս, բարիքն
մերք, են բարիք նոցա, և չարիքն մերք են չա-
րիք նոցա։ Իրաւի պարտականէ արքայն ունիլ
զանձն իւր այնքան խոհեմ, և հանճարեղ, տուն,
և յապարանն իւր այնքան հոլուեցեալ, և կա-
ռավարեցեալ, մինչ զի մինչ ամենեքեան տեսա-
նիցեն, ունիցին զնախանձ համահեաւելոյ, և
զոր լսեն զնմանէ, ցանկանայցեն տեսանելոյ
զնա։ Կայսերարուք, և նայեսցուք, խորհեցա-
ցուք, և խորհեսցուք, զի նոքա որք 'ի յերկրէ օտա-
լացելոյ 'ի յերկիր օտար, և 'ի յօտար երկրէ դան
առ մեզ, առի խնդրել զձարակ վա՞ւ աշխատա-
նաց, և տուաւ ապանաց իւրեանց, 'ի չար սովորու-
թէ՞ մերմէ ոչ տանիցեն զդայթաղղութիւն ինչ դիր-
կիրն իւրեանց։ Այլ որպիսի մեծապոյն պայան-
գակութիւն 'ի մէջ մարդկան կարէ լինիլ, զի դան
հայցել զդատաստան ընդդէմ դողից և աւազակաց
երկրին իւրեանց, 'ի դողից և աւազակաց։ բա-
նակն և տան իմոյ որքան մեծ անհարմարութիւն այն-
քան անողորմ կարէ դոլ թէ դան բռնաբեալ 'ի յու-
նայնակեացից երկրին, իւրեանց առ յուռնայն
ակեացս տան իմոյ զինչ իրք առաւել չմարդի կարէ
դոլ թէ դան 'ի խնդրել զդատաստան ընդդէմ նո-
որ դործել իցէ զմի մեզ միայն, և խնդրիցեն ըզ
դատն յայնմանէ, որ դործեալիցէ զբազում մեզս,
և ոչինչ բարի իցէ արարեալ նկեանս իւր։ Այլ
որպիսի իր այնքան պատժապարտ դատանի. քան-
զայս։ Եթէ դայցեն չարախօս լինիլ զայնցանէ,
որք չարախօսք եղեն զթագաւորէ, և չարա-
խօսութիւնքն առնեն առաջի նց, որք հանապա-
զոր հայհոյեն զդիս իւրեանց։ Իրաւի վա՞ւ այսր
պատմառիս, նշդեհբնն այնոքիկ դառնան ընդ

յանդիմութիւն իւրեանց պատրեցեալք , իսկ
ոչ յարատեւամբ ընդ մերով խստագոյն անդիմ-
թիւն և նենգութիւն վատահամբաւք առ մար-
դիկս , և մեամբ պարտաւոր առաջի դիցն ։ Ո՛հ
թէ զորքան իրս փոքրագոյնս պատժեմք 'ի մար-
դիկս փոքրունս , զորս առանց առնելոյ զանի-
բաւութիւն դատաստանին , կարեաք թողուլ ա-
ռանց պատժելոյ ։ և որքան իրաց մեծաց մեծայ-
անձն տրանց հանքերեն դիքն , որք առանց ա-
նիրաւութիւն կարէին , սաստկագունեղայ պատ-
ժել ։ Բայց վերջապէս , արք խստագոյնք , որ-
պէս արք խստագոյնք ոչ դիտեն թողուլ ու-
մք ։ և դիքն բարեդոյթք · բան որումն դիք
բարեդոյթք ։ որպէս թէ ոչ զոք կամին պատու-
հասել , վասն այսորիկ ոչ ոք կամիմ թէ խաբիցի
զի եթէ դիքն զանց առնեն անիրաւութեցն ընդ-
դէմ ինքեանց արարեցելոց , սակայն ոչ վասն
այսորիկ թողուն առանց պատուհասելոյ · զան-
դատաստանութիւնս այլոց ։ Չի դիքն 'ի պատ-
ժելն իւրեանց , նմանին նոցա , որք կամին տալ
զապտակ այլոց , զի ոչքան առաւել 'ի բաց
տարածեն զձեռս այնքան առաւել սաստկա-
բար վիրաւորեն զծնօթն ։ Սմին հանդոյն , որ-
քան առաւել զամն բազումն զանցառնելով համ-
բերեն մեղաց մերոց այնքան առաւել յետ այն
որիկ վիրաւորեն զմեզ պատժովն իւրեանց։ Իրաւի
զի տեսեալ իմ 'ի դիցն բազումս անդամ , 'ի բազ-
մաց զբազում մեղս զանց արարեալ զբազում ժա-
մանակս բայց տեսի և ես , զի մինչ ունելին զին-
քեանս անբղգուշ եղեն պատուհասեցեալք ամ-
նեքեան միայնդամայն միով պատժով ։

Յարտաւելով Կայսրն 'ի՝ զբուցասարութիւնէ իւրում, պարզաբանեալ զդիտաւորութիւնն իւր, թէ որպէս կեալ, և ապրիլ պարտին, 'ի տան, և 'ի յասպարանի իւրում։

Գլուխ Քսանեւհինգերրորդ։

Եւ այնորիկ յորում դիւքն կարդապրեցին, և բախտն իմ խոստացաւ, որ եղէ ընտրեցեալ 'ի Կայսերութիւն, վասն ոչ լինելոյ դատարկակեաց, աշխատեցայ առաւել որքան կարէր, այցելանել Կայսերութեան։ Զոր երկուքեքդ որք ասատէք, հարքն ձեր եւոուն զձեզ ինձ զի 'ի պալատն իմում զարդանայցէք, և որոյ 'ի չափ հասեալ քէք, մինդ ազաչեաց զիս, զի ընկալայց յուսալով արդիւնաւորութիւնչ, և զմիւսքդ ես ընտրեցի վասն ոստասութիւնոյ, Դիտաւորութիւն հարցն, մինչ բերեն զորդիս իւրեանց 'ի յասպարանս թագաւորաց, է զի 'ի բաց հերքիցեն յօգնականութիւնէ ազգականաց։ և աքսորիցեն 'ի միայն կութիւնէ մարցն, ինձ այսպէս թուի, թէ լաւ արարք իցեն, քանզի երեխայքն մինչ երեխայք են ուսանին զաշխատանս յոյժ աշխատակիրս, յորս անցուցանեալ պարտին զկեանս իւրեանց, և զանօգտութիւն, և հակառակութիւն զոր 'ի բախտէ ձախողակէ ունելոցք իցեն։ և ոչ էք եկեալք յերկրէ ձերմէ առ 'ի ընդունիլ զմոլութիւս Հռոմայ, եթէ ոչ բազում բարի սովորուիս, որք գոն 'ի Հռոմ, և թողուլ զլենուին, և զչարասովորութիւնն երկրին ձերոյ, խորհեցարուք դուք զինչ

ոչ կաեն ասա եթէ ոք խորշեցի յաշխատանաց ։ և տացէ զինքն ստուգիւ 'ի դատարկութիւն ։ Թ. տուաւն Հոգի, առաւել հարկաւորութիւն ունի հոգագործի, զի դրծիցէ զերկիր, քան թէ բնակիչս զի զբօսնուցուն 'ի նմա ։ Երդնում ես, զի վասն ոչ աշխատեցուցանելոյ զբաղուկս, յոսատանութեան, կամ կարպետագործութեան, և զբուրթս 'ի մանելոյ զդուկս, են այսօր պատն կատարունք առաւել լցեալք վատաշուէր կանամբք, քան թէ տաճարքք բարեգոյնք քահանայիք ։ և դարձեալ երդնում թէ առաւել դիւրաբար դատանին տան հազար կանայք վատաշուէրք 'ի Հոգի, վասն հաճեցուցանելոյ զմոլութիւնս, քան թէ զտան մարդիկս բարիս ։ վասն սպառուն տաճարաց ։ Հարցանեմ, ով սպանանէ զվանաճառականս 'ի ճանապարհի, ով կողոպտէ զճանապարհորդս 'ի լերինս, ով հանէ զշէմս դրանց և խորտակէ զդրունս դրացեաց, ով կողոպտէ բանութեամբ զտաճարս, եթէ ոչ գողք, և աւազակք, որ վասն ոչ աշխատելոյ 'ի տունջեան, մտածեն գողանալ 'ի դիշերի, Ո՛վ Հոգի մարքան չարիք գան 'ի վերայ քո ։ վասն մի մեայն չարի ։ ով ածեցուցանէ զդաշտս, այնքանեաք կորուսելովք, և զպարտս այնքանեաք անյարմարաք ։ և զերիս այնքան աւազակք, զեկեղեցիս այնքան կատակարկուաք, և զպատուանս այնքան վատաշուէր կանամբք, և զհրապարակս այնքան ունայնակեցաք, եթէ ոչ խեցգետնացուն, այսինքն կերցուն գատարկեցութեան, որ աւերեն ։ և խանգարեն զբարի սովորութիւնս քո ։ առաւել քան զհոգն, և զհեղեղս զհնագոյն պարիսպս քո ։ Հաւատացեն ամենեքեան, զիր մի զի ես դիտեմ, որ զձիմարիսն ասեմ 'ի նմա, զի 'ի դործարանին ոսանի, զոր գործեն զամանիրաւութիս, և զնարդախուիս և 'ի սերմնացանի ամենից մոլութեց, և անձուկ, և գժուարագոյն առաստաղքն ամենից բարութեց ։ և տեղի սահեցման, և վրիպման ամենից չարեաց ։

և

և զարթուցանող ամենից աւազակաց, ոչ դոյ։
եթէ ոչ դատարկակացութիւնն, և ուռնայնակե-
ցութիւնն։ Դարձեալ ասեմ, ոչ դոյ մոլութի
յամի մոլութիւն զոր 'ի տղայս ածեցուցանէ,
այնքան հուր, և 'ի ծերս ծնանիցի այնքան ցեց, և
զբարիս գիցէ յայնքան 'ի վատանդի և չարեաց առ-
նիցէ այնքան ինքաս, որքան առնէ դատարկակե-
ցութիւնն։ Ո՛ ոք դնէ զաղմուկ և զվրդով 'ի ժո-
ղովուրդն', և զգայթագղութիւնս 'ի դաւառս,
եթէ ոչ նոքա, որք զբօսնուն, զի կամին ուտել
զբրտուն նոցա որք աշխատին։ Ո՛ ոք ճարէ, և
գտանէ զհարկապահանջութիւնս անարդարս, եթէ
ոչ սոքա ուռնայնակեացք, որք որպէս զի մի՛ աշ-
խատիցին ձեռամբք իւրեանց, ճարակեն զկա-
շառս 'ի գիւանի զանհունս։ Ո՛ ոք դնէ գտա-
բաժանութի 'ի մէջ դրացեաց, եթէ ոչ սոքա դա-
տարակեացք, ընդդիմոց ոչ զբաղեցուցանեն զկա-
ղաղութիւն, և զուժեղութիւնս իւրեանց 'ի գործս
քարիս, սանձընկեց առնեն զլեզուս իւրեանց
վասն կենաց այլոց։ Ո՞ոք խորհի, և ըղձայ
ատանօր զայնքան նենգաւորութիւն 'ի Հռօմ,
զոր ոչ երբեք լուան հարքն մեր, և ոչ ընթեր-
ցեալք եղեն 'ի գիրս մեր, եթէ ոչ 'ի դատար-
կակեացիցն։ զի ոչ պարտպեցուցանեն զնմանակա-
նութիւնս իւրեանց 'ի յիր իմն։ ոչ զայլ ինչ մտա-
ծեն, եթէ ոչ զինաս այլոց, Կայսր որ կարս-
զասցի 'ի յանքսորանս առաքել զամենայն դատար-
կակեացսն, 'ի Կայսերութենէ իւրմէ, կարէ
գովել որպէս զի արարեալիցէ արմատախիլ ամ
մոլութիւնն աշխարհի։ Հաճիցին գիրքն անմահք,
զի որքան յաղթանակուն եղև 'ի Հռօմ ընդդէմ
օտարաց, զբաղելով 'ի բարի կրթութիւնս տե-
սանէի ես զմինն 'ի նոցանէ, արտաքսեցեալք զամ
դատարկեացսն 'ի Հռօմայ որպէս զոչմա-
բարեաղ կորուսեալս։ Կամիմ ասել զհնագոյն
պատմութի մի, որ է արժանի, յաւիտենական
յիշատակի։ Էին օրէնք վաղեմագոյնք, զի ոչ ոք
կարիցէր դոլ ընդունեցեալ 'ի Հռօմ, բնակիլ

'ի նմա , եթէ ոչ իցէր նախ 'ի դիտապետէն յոյժ քննեցեալ, և զննեցեալ 'ի ժամանակս Կատոն Սենեսորի : Մինչ ոք կամիր լինիլ քնակոչ 'ի Հռոմ այսէր քննութիւնն նորա , զոր առնէր : Ոչ երբ քէք հարցանէր թէ ուստի՞ իցէր , կամ թէ մ՚ ոք իցէր , կամ թէ ուստի՞ գայր , կամ վասն ո՞ ոչ իցէր , կամ յորմէ ազգէ , կամ յորմէ հնադոյն . առհմի իցէր սերեալ . այլ առնոյր զձեռն նորա , 'ի ձեռն իւր , որ եթէ իցէր փարիսեադոյն և գիրք որպէս մարգոյ գատարակակեացի, իսկոյն յուղարկէր : և եթէ խաղոր , և կարծրամտութիւն և լիսկրամտութիւնք , իսկոյն բնակիչ Հռոմայ հրամայէր կացուցանել : Ոչ և այսու շատանայր , մինչ ասատաւորքն կալնուին զայրագործ ոք , և արիանէին 'ի բանսն մամբարինու, փոխանակ հարցաքննութեան , նախ նշմարէր զսին ձեռաց առն պղերգի , և ծուլի , որքան փոքր իցէին յանդանքն , տայր յոյժ ծանրագոյն պատիժ : Սոմսրէր նա ասել բազում անգամ , թէ այր որ ունիցի զձեռս լաւ , ոչ կարէ գող , զի ունիցի զսովորութիւն բարի , և այլ անգամ ասէր , թէ ոչ երբէք պատժեցի զմշակս , որ ոչ զիս ցաւակցիցեր , և ոչ երբէք դան հարի զծուլ և զյուլս , որ ոչ հանոյ թուիցեր ինձ : Ուրեմն ասացիր և առաւել զայսմանէ Կատոն Սենեսորէ , զի էր այնքան խրոխտ , մինչ զի որպէս երբեխայքն 'ի վարժարանի , մինչ տեսանէն զի մոտ նէ առ նոսա վարպետն իւրեանց , ամենեքեան իսկոյն առնուն զտեսարիկս իւրեանց , այսպէս կատոն մինչ շրջիւր 'ի Հռոմ դնելով զտս 'ի հրապարկս , դնէին ամենեքեան զձեռս իւրեանց 'ի գործ : Ոչ երանելի այր , որոյ առաջնն առաջելի երկնչէին լինիլ դատարկակեացք , քան թէ առաջն այլոց գործել զմոլութիւս : Ուրեմն նայեցա-

ցարրուք դուք այժմ, թէ զմրքան ուժգնութիւն
ունի առաքինութիւնն, և որքան կարողագոյնէ
այլ առաքինի. զի երկնչելով բոլոր աշխարհս
'ի Հռոմայ, վա՜ կարողուն իւրոյ, բոլոր Հռոմ
երկնչեր 'ի կայսոնէ վասն առաքինութեան նոր։
Եւ այնքան զանազանք հանդիսմունք մարդկան,
և տայ նոցա զայնքան հակառակորդութիւն բախան
երկբաբելի, մինչ զի 'ի վախճանի յետ բազում ժա-
մանակի տայ մեզ երբեմն զցանկալի հաճութիւնս,
և խոկոյն կոչէ, և մատնէ զմեզ, թէ վերառեւ-
չութիւնք գալոցէ այդ առնելոյ ընդ յանկարծահաս
աշխատանաց։ Ոչ երջանիկ Կայսոն Աէնասր,
բան որում ընդ ամ հեռաւորացն, զկնի դրաշն
իւրոյ են վաղուբեամն ապահովք 'ի յերրթ, և յեկ-
ցութիւնք բախտին։ Ուրեմն ո՞ւր կամի ունել
զմիառս 'ի կեանս իւր, և ժամանել 'ի բարի համ-
բաւ յետ մահուան իւրոյ, և դալ սիրեցեալ 'ի
բազմաց, և աներիւղալից 'ի համայնից, լնցն
առաքինի 'ի յարարս, և 'ի գործս, և ոչ պատրի-
ցի բանիւք, 'ի յօրէնս բարեաց երդնում ձեզ,
զի այսպէս դիքն լցուցանեն զցանկութիւնս իմ,
զի վա՜ իմ ես առաւել կամի լինել կայսոն բազ-
մաց առաքինութիւնք հանդերձ, զորս գործեաց 'ի
Հռոմ, քանթեր Ընկիպիոն, ընդ բազմաց արեանց
զորս եհեղ 'ի յաֆրիկայ։ Բարւոք գիտեմք ամենեքեան, զի Ընկիպիոն արայ զինքն համբաւալի
այրելով զքաղաքս և գլիատորով զանմեղս։
իսկ Կայսոն ժամանեաց 'ի մշանջենաւոր յիշատակ
վերակերպելով ըստ ժողովուրդս, ներելով մեղաւորաց, և ուսուցանելով զարդս։ Ուրեմն
հայիցեն ամենեքեան, թէ ունիցիմ զիրաւունս,
առ 'ի ցանկալ լինել մանաւանդ Կայսոն ընդ Կայսոնու 'ի յօգուտս բազմաց, քան թէ լինել Ընկիպիոն ընդ Ընկիպիոնու, 'ի վնաս, և 'ի զրկանս այնքանից։ Զայս իր ասութիւնս ասեմ, բա
բեկամք զի տեսանիցեք թէ որպ նախնիքն մեր,
մինն 'ի յերկրի օտար, և միւսն 'ի յերկրի իւրում,
մինն գոլով մանուկ, և միւսն գոլով ծեր,

'ի ժա-

'ի ժամանակի իւրեանց վայելեցին զփառս յան-
ձինս իւրեանց ։ վասն ապագայից ժամանակաց և վա-
յելանայմնացեալ իւրեանց թողին՝ ոչ զանկաւ յիշա-
տակ զայս ամենայն առնելոյ մեզ զհակառակն ։
ես գոլով Կայսր ։ քարկուք հրամայեմ և վատ-
թար ։ և պաշտօնեայքն իմք վասն օգտի իւրեանց
առնեն զվատթարագոյն ։ և դնելով 'ի մոլուխս
մեր մեղսամածելք անկանիմք յիւրաքանչիւր ժա-
մու 'ի բազում թշուառութիւն ։ և եղանիմք նշա-
նակեցեալք ։ և նշաւակք մեծի նվաստութեան ։
Սոյն պատճառի դիքն արդարք ։ վասն անար-
դար գործոց մերոց ։ տալով մեզ զարդար վճռա-
հատուն ։ հրամայեն մեզ կալ այսրիկ երկեցայ-
բար ։ և մեռանիլ վատահամբաւութեամբ ։ և թաղել
ընդ մոռացմամբ ։ յոյժ մոռացողութեամբ Ուրեմն
լաւապէս բացեք զզայութիւնս ձեր ։ որք կայք
'ի յապարանի ։ և 'ի բանակի 'ի մէջ ։ զոր ասա-
ցի ձեզվասն զի յօրէ յայսմանէ առ ապագայն ։ ոչ-ոք
'ի ձէնջ տեսանիցեմ գոլ գաւառակ իւրաքանչիւրոք
ունիցի զինքն ուղղաւորեցեալ ։ որ 'ի ձէնջ ու-
սեալք էք գրել ։ և ընթեռնուլ ։ կարէք գրել և
ընթեռնուլ ։ որք էք ձիավարք ։ կրթեցէք զձեզ
'ի զէնս ։ որք էք պաշտօնեայք ։ պարապեցէք
'ի Պաշտօնս ։ և 'ի յարտեսս ձեր ։ և ունիցիք
զեր ինչ 'ի հաւատի ։ զի եթէ զազգեցողու-
թիւնն զոր ետու ձեզ 'ի թաքստեան ոչ ընդու-
նիցէք ։ պատիժն եղիցի յայտնի ։ և 'ի լուր ա-
մենեցուն ։ և որպէս զի առաւել ունիցիք 'ի մտի
ձերում ։ և վասն թոգաւորաց հանդերձելոց յա-
յտնայցէ 'ի վարդապետութի ։ ես ունիմ զայս
զուցս գրեցեալ ամենից լեզուաց ։ և եդեալ 'ի
քարձր Կամիթիտոլուն ընդ այլոց բազմաց գրեանց
իմոց ։ զի գիքն լիցին պահպանք ձեր ։ և զա-
տիցեն զնս 'ի ձախողականէ բախտէ ։

Յա-

Յաղագս ահեղատեսիլ գազանի միոյ, զորս տեսին 'ի կղզւոջն Սիչիլիու, և յաղագս մատեան միոյ արեամբ գրեցելոյ 'ի միում դրանց քաղաքին։

Գլուխ Քսանևվեցերրորդ։

ԶԱմ հիմարկուն Հռովմա չորս հարիւր և քսան և իբ տիւնոյն հասակին մարկոսի Կայսեր, երկու ամաւնախ քան զենդուն նիլն զժաւանդութիւն Կայսերութեան դնացեալ քսան աւուրք ամսոյն վեցերրորդի որ այժմ կոչի Օգոստոս, մերձ 'ի ժամն մտանելոյ արեգական 'ի Կղզոջն, Տրինակրիու, որ այժմ կոչի Սիչիլիա, 'ի քաղաքի միում անուանեցելոյ Բելինայ, որ այժմ կոչի Պալերմօ 'ի նաւահանգստեան 'ի վերոյվուս հանդիպեցաւ պատճառ մի յոյժ վտանգաւոր, վասն նոցա որք տեսին յայնժամ, և ոչ սակաւ զարհուրելի նոցա, որք լսեն այժմոյս։ Արդ գոլով Բելինեայքն Հռչակելով զսոն մի մեծաւ խնդութեամբ, և վասն ուրախութեան նաւավարաց իւրեանց որք մարտնչեալք էին, և սա տերազմեալք ընդ բազմութեան նաւուցն նուազդիանացւոց, և կալեալք էին զտան նաւս, և ընկղմեալք լինն նաւս, զի յայնմ ժամանակին յոյժ թշնամիք էին միմեանց և վնասդործոց չարաց, զորս գործէին, ցուցանէին զմեծագոյն նախանձ, և զոխակալութիւն որք 'ի մէջ նոցա գոյին։ և որպէս է սովորութիւն, զորինչ զաւար 'ի ծովու, առնեն յետայնորիկ բաժանեն 'ի միասին 'ի մէջ իւր-

իւրեանց միայն։ Եկեալք արտաքս ամենեքեան ի ծովէ անտի մեծաւ խնդութիւն, և այն զոր ստացեալք էին մեծաւ աշխատանօք, եղև իրն արժանի վերանշանման. յորում սիրաբք բարիք և չարք ունէին զժամանակ պատեհաւոր վասն դնելոյ։ զի բարիքն ունէին զմեծադոյն նախանձ յաղթանակին իւրեանց, և ժլատքն վասն հարստութեան իւրեանց. քանզի այնպէս սիրեն մարդիկք, որպէս զի յետ փոքրու ինն ժամանակի արհամարհիցեն, և այպէս ատեն, որպէս զի յետ փոքրու ժամանակի սիրիցեն։ Արդ հրամայեցին կառավարիչքն քաղաքին, զի համայնք այնոքիկ, նաւքն, և հարստութիւնքն լինիցէին ի միում տեղւոջ արդելեցեալք ի նոյն նաւավարիցն, որպէս զի ոչ նոքա կարիցէին վաճառել, և ոչ ժլատքն դնել։ և պատճառն եղև այս, զի սովորութիւն էր ի մէջ կղզոյն, զամ ինչ զոր ստանայցէին յարտաւեալով պատերազմն, դնիցէին ի յաւանդս մինչև ի վախճանն պատերազմին, կամ մինչև դառնալ ի խաղաղութիւն որպէս առաջն։ Արդարև էին օրէնք իրաւապարարեցեալ։ Քանզի բազում անգամ թողոյն յինքեանս ի միաբանելոյ, և պատճառեն զմեծադոյն վնասակարութիւն ի մէջ մեծամեծաց թշնամութեաց, ոչ այնքան վն թշնամութեց առաջնոցն, որքան վն ոչ ունելոյ. թէ իւ իւրք տայցեն զվճարումն վնասոյն ներկայից։ Հաւաքեցեալք ամենեքեան մարդիկք ի տունս իւրեանց, և գոլով ժամ ընթրեաց զի էր ամառն, յանկարծապէս եկեալ դպան մի սարսափատեսիլ ի մէջ քաղաքին այսու կերպարանաւ։ Ինքն երևիւր բարձրութեամբ երեք կանգնոց, ոչ ունելով, եթէ ոչ զմի միայն զաչ։ Գլուխն բոլոր մորթով առանցքերաց, որոյ միայն դանգն երևիւր, ոչ ունէր զականջս, եթէ ոչ զսակաւ ինչ պատռուածս յետ կոյս գլխոյն, որով կարծիւր թէ լուիցէր։ Ունէր զերկուս եղջիւրս որպէս այծոյ։ շրջանակութիւք կռնակացն էին առաւել եր-

երկար աջն քան զահեկանն։ զձեռս ունէր որպէս
ձիոյ, ոչ ունելով զպարանոց հաւասարէր յուսն
ընդ գլխոյն։ մէջն նմանիւր ձկան ունելով զիրող։
և զկուրծն ունէր լի բրթով, և երեսն բոլորա-
վին էր որպէս մարդոյ, բայց 'ի ճակատի ոչ ու-
նէր, եթէ ոչ զմի միայն ակն։ 'Ի քէնեթն գոյր մի
միայն ծակ հոտոտելոյ, և 'ի պորոքեցն 'ի վայր ոչ
երևիւր։ քանզի երթայր ծածկեցեալ։ և հե-
ծեալ 'ի կառ մի չորից անուից, ընդ որում էր
թային 'ի մեաւն երկու առիւծք ընդ առաջ, և
ինքն երկուքզկնի նր, և կառն, կամ սայլն ոչկա
րէր քացայայտիլ թէ պիտոյ նիւթոյ։ իցէր
զուգեցեալ, փայտե կամ այլ նիւթոյ։ Իսկ կէր
պարան սայլին ոչինչ իրօք զանազանիւր 'ի հասա-
րակ կառէ. զոր իկիր արկանէն մարդիկք։ 'Ի
մէջ նորա գնայր պատուկ, կամ կճուճ մի կերպիւ
թակուկի, ունէ լով 'ի յերկուս կողմանէ զունկս,
'ի մէջ նորա էր գազանն այն, վա այսորիկ ոչ էր
ևիւր, եթէ ոչ պորսէն 'ի վեր։ շուրջ անցա-
նէր 'ի մէջ քաղաքին յոյժ ծանրագնացութիւ 'ի
գրանէ 'ի գուրս։ երթայր տալով զկայծակս,
և 'ի հրոյ կայծականց եղև այնքան ահաբեկումն.
մինչ զի բազումք յոլիք վիժեցին, և բազումք
փոփկասուանք կանայք ուշաթափեալք անկան, և
միանգամայն մեծամեծք և փոքունք աբք և կանայք
'ի տուաճարս ֆուփիսերի, մարսի, և Ֆեսորուա
փախչէին, և երկինքն ձայնիւ խրով գոռայր
զարհուրելեաւ ստիպմամբ։ Էին յայնմ նահանգի
նաւավարքն ամենեքեան հրաւիրեցեալք, և զե
տեղեալք 'ի պալատն քաղաքապետին, որ կոչիւր
Սալենոս, ըստ որում էր յաղգէ Կայսուացի և
անդ ունէին զամ հարատուութիս իւրեանց եղեալ
'ի պահեստի, և 'ի յաւանդ։ Ուրեմն շրջելով ընդ
բոլոր քաղաքն, կամ մեծագոյն մասն նորա
գիշերագակ գազանն կառօք, առիւծիւք, և ըն-
ձիւք իւրովք հաւեալ 'ի դրուանս պալատին, ուր
էին նաւավարքն ներ փակեցեալք, առ յոր մեր-
ձեցեալ 'ի հուպ և հատեալ զկանգն միոյ առիւ-

ծոյն։ Նովմբ արեամբն գրեաց զգիրս այս։
Հ. Ա. Թ. Ի. Խ. Ի. Վասն գրեանցս այսոցիկ
եղև փորձաքննութիւն 'ի ձեռս ամենից հան-
ճարեղ, և դերբաբարձր խելաց, առ 'ի տալ ըզ-
մեկնութիւն նորա։ և եղեն առաւել թարգմա-
նութիւք քան զգիրսն, Վերջապէս կին մի կախարդ
յոյժ մեծ վարկեցեալ, և համարեցեալ 'ի յար-
հեստս իւր, ետ զձշմարիտ մեկնութիւն նորա այս
պէս։ Հ. կամի ասել։ հաստուցէք, Ա. այլոցն։
Թ. թէ կարիք Ի. քոյոյինսն, Խ. խաղա-
զութիւն։ Ի. ժառանգաւորել։ և համայնքս 'ի
միասին։ կամին ասել, Հաստուցէք այլոցն։ թէ կարիք
զքոյոյինսն խաղաղութիւն ժառանգել, կամ վայե-
լել։ Իրաւի զի նաւավարքն եղեն յոյժ ահաբե-
կեցեալք 'ի յայնքան զարհուրելոյ պատուիրանէ
այնմանէ, և կինն որ զայս պարզաբանեաց, եղև
մեծապէս գովեցեալ վասն այնքանոյ խորին
մեկնութեանն։ Զայս արարեալ իսկոյն գաղանն
այն յայնմ գիշերի եղ 'ի լեառն մի բաձրադոյն,
որ յայնժամ կոչիւր Դամիսիա, և անդ էր երկա-
բուբ երից աւուրց 'ի յաչս քաղաքին, և յայսմ ժա-
մանակի գոռային առիւծքն։ և գոչէին ահարկու
ձայնիւ։ ինքն, և 'ի գազանէն այլանդակէ եղա-
նէին յոյժ ահարկուք, և սառասռնիք բոցք։ 'Ի բո-
լոր ժամանակի այսմիկ ոչ երևիւր թռչունի յօդս,
օձև անասունք 'ի յանտառս և 'ի դաշտս, և մար-
դիկք մատուցանէին զմեծագոյն նուէրս, և
զպատարագս դիցն իւրեանց ծակելով զերակուսա-
ռուից, և ձեռաց և զոտիցն զարիւնն առ-
'ի տեսանել, թէ կարիցին հաշտեցուցա-
նել զդիսն իւրեանց։ Անցեալք երեք աւուրքն,
յանկարծակի երևեցաւ ամպ մի մեծագոյն և
մրրիկ 'ի վերայ երկրի, և իսկոյն ըսկսաւ
տալ, և տալ զկայծակունս, և եղև այնքան
մեծ շարժումն երկրի։ մինչ զի 'ի քաղաքի բա-
զումք տունք աւերեցեալք փլան, և ոչ սակաւք
մեռան բնակիչք։ և առաւելքան զայս եղև։ զի յան-
կարծակի ելեալ կայծակ մի յերկրէ ուրեր գա-
զանն,

զանն, այրեաց զպալատն ամ նաւավարքն հան-
դերձ, և զհարստութիւն որք կային 'ի միջի նո-
բա, և եղև այնքան սաստիկ, մինչ զի յետ մա-
շելոյ զամ որք կային ընդ այն, կիսեալ տոչո-
ր էին և զբարին, որոյ այնքան եղև վնասն մե-
ծագոյն, մինչ զի անկան աւելի քան զերկու
հազար տունս, և մեռան աւելի քան զբիւր
անձինք։ Իսկ զայն տեղին ուր էր գաղանն,
հրամայեաց Կայսրն շինել զտաճար դիոյն։ Իսու-
պիթերի որ է Լուսնեթաղնեան ժամանակաց Կայ-
սրն Աղեքսանդր տալով զպատերազմ ընդ դա-
վառին, շինեաց զամրոց մի յոյժ անպարտելի։

Յաղագս այնորիկ, որ պատահեցաւ բնակչի
միում Հռոմայեցոյ, որ կոչիւր ան-
թիոքոնոս։

Գլուխ Քսաներեքերորդ։

Սոյն ժամանակիս, յորում այս պա-
տահեցաւ 'ի քաղաքի այնմիկ բնակիւր
ոմն Հռոմեացի, կոչեցեալ անթիոքոնոս,
և էր այր 'ի յազնուականն տոհմէ և սակաւ
ինչ լցեալ ամօք։ Իսին ամք երկուք սա-
կաւ ինչ աւելի կամ պակաս, յորմէ հե-
տէ աքսորեցեալ եղև 'ի Հռոմայ ինքն և
կինն իւր, հանդերձ դստերաւ միով, զի ուս-
տերքն ոչ եղեն աքսորեցեալք և պատճառն էր
այսինչ։ Զի 'ի Հռոմ դոյր սովորութիւն յոյժ դո-
յժելի, և յոյժ հնադոյն 'ի ժամանակէ Կուինդիոս
Չինչինատոս է սահմանեցեալ, որէր քաղաքա-
պետ։

պէտ։ Յամենեանն Դեկտեմբերի, արք երկուք խորհրդարանին առաւել ծերագոյնք, ի միասին ընդ դատաւորին նորագունին, և ընդ դատաւորին հնագունին, այսինքն տարոյն անցելոյ գնային ի տեսանել զբոլորն Հռովմ, և կոչէին զեւրաքանչիւր Հռովմէացի ի մեկուսի, և ցուցանէին զերկոտասան նախատական ըստ օրինացն իւրեանց, և զհրովարտաքս յատուկս ի խորհրդարանէն և հարցանէին յետոյ, եթէ ո՞ր ի փոքոցի իւրում ծանիցեր զայնպիսի ոք, որ բէկեալ իցեր զօրէնն, և զայս հարցմունս առնէին երգուեցուցանելով զնա ցոր հարցանէին։ զի Ճշմարիտն ասիցեր զոր իկիր արկեալ. տային զայն հարցաքննութիւնն գրեցեալ ի քարտիզի առ խորհրդարանն, ամենեքեան ի միասին կարդաւորէին զպատիժս ըստ զանազանութեանն մեղաց։ ոչինչ կերպիւ կարէին պատժել զմեղուրուրք որ գործեալ իցեր յառաջնում ամի, այլ միայն աղդ առնիցէին զի զսպիցեր զինքն և զկեանն իւր առապագայն։ Իսկ նա որ եղև առաջին անգամ սպդարարեցեալ, և սպառնացեալ. յորժամ միուսանդամ դային ի տեսութիւն, և ոչ դատանէին ի նմա զուղղութիւն վարուց, այսպիսիս ծանրապէս պատժիւր, և երբեմն աքսորիւր էս։ Էին բանքս այսոքիկ յօրէնս Հինկ երրորդ տախտակին, և ի յերրորդ տողն որ ասէր կանոնադրէ սրբազան խորհրդարանն, համայ զգայցէ բախտաւոր գումարն, ընդունիցեն զինն գոյն նշանս ի Ճակատս իւրեանց, եթէ մարդիկք որպէս մարդիկք մեղանչիցեն ի յամ մի զանց առնիցի զնոքօք, բայց եթէ չարքն որպէս չարք ոչ զսպիցին, բարիքն որպէս բարիք զնոսա ծանրապէս պատժիցեն։ Ասէր էս օրէնն, թէ առաջին չարն ներիցի, զի գործեն զայն որպէս տկարք և տգիտութիւն, բայց եթէ յաՃախիցեն զնոքօք պատժիցին, զի յայնժամ ոչ է եթէ ոչ վասն ծուլութեանն, կամ նենգաւորութեանն։ զայս քննութիւս առնէին յամենեանն դեկտեմբերի վերայ

այսր պատճառի, զի խակոյն ի յամենեանն Հուն-
վարի բաժանէին զպաշտօնս ի Հռոմ։ Զի իրաւ-
ունք էր գիտելն, թէ մեմ պարտ իցէր տալ,
կամ խնայել զարժանաւորութիւն, որպէս զի մի
ընդդիմիցեն չարքն որպէս բարիք. կամ բարիքն
որպ չարք։ Բայց յատուկ պատճառն աքսորելոյ
զայս Անթիկոնոս ընդ կնոջն և ընդ դստերն եղև.
այս Երկրորդ Կայսրն Հռոմայ Օդոստոս, հրա-
մայեաց, զի ոչ ոք Հռոմայեցի համարձակեսցի մի
զել ի գրունս տաճարաց. և Կարիսիօլա չորրորդ
Կայսրն հրամայեաց. զի ոչ ոք կին տացէ ուստիք
զգիր կախելոյ զդարանոցէ առ ի բառնալ զդ
տենդս, և Կատոն, Սէնսորն արար զորէն մի,
զի ոչ ոք տղայ ընդ աղջկայ, կամ աղջիկ ընդ
տղայի համարձակիցի խօսել, և լինել ի միասին
ի յափս աղբերաց ուր առնուն զջուր, ոչ ևս
առ յափս դեռոյ ուր լուանան զհանդերձս, և
ի հաց եփեացս, ուր թխեն զհաց, զի բոլոր
մանկութիւնն Հռոմայ դիմէին անդր որպէս
զև արծուիս, կամ առ կարթս ձկուանն։ Եւ
եղև, զի մինչ եկին ի հարցաքննութի դատա-
ւորքն խորհրդարանին ի Հռոմ, և ի փողոց մի
կոչեցեալ Մենթէչիլիս, եղև ամբաստանեցեալ
Անթիքոնոս այս, զոր տեսեալք էին միգերով
ի պարիսպն տաճարին մարսի։ Այնպէս և ամ-
բաստան եղև կինն նորա, թէ վաճառէր և
տայր զգիրս վասն տեղոյն։ Համանապէս ամբաս-
տանեցաւ գուսար նորա, թէ ի յաղբիւրս,
ի գետս, և ի խանութս հացի խօսակցէր, և
ծիծաղէր ընդ մանկանցն Հռոմայեցւոց, ուր
երևիր մեծագոյն գայթակղութի, և խոյտա-
ռակութի ի կոյս աղջկանն Հռոմայեցւոց։ Եւ
քանզի ի յերկրորդում ամի ոչ կամեցան ուղղիլ
ըստ նախկնոյ ազգեցութե զայնց իրացն, եղեն
աքսորեցեալք ինչ զին Սիցիլեայ ոլքան եղիցի
կամքն խորհրդարանին։ Եւ որպէս ի չինուածս
մեծակառոյցս, որք ունին զպատուանս, կամ
զնանգարուն ինչ, ոչ երբէք խախտի վեմ մի,

որ ոչ խախտիցէ զայլ վէմ առ 'ի խախտել զհա-
մայն վէմն։ Նոյնպէս և 'ի զանազան դիսուածս
մարդկան ոչ դայցէ անյաջողութիւն մի, առանց կոչե-
ցն զվնի իւր, և հետևելոյ զայլս բազումս։ զայս
ասեմ, զի Անթիգոնոսս այս Հռովմայեցի, ոչ
միայն կորսոյս զպատիւս, և զատացուածս հայ-
բենական, այլև եղև աքսորեցեալ։ և ոխա-
կալ բախտն երկրաշարժութիւք այլանդակ դա-
զանին աւերեաց զտունն, ուր բնակէր և մնաց 'ի
ներքոյ յոյժ սիրեցեալ դուստրն իւր։ Ընդ
բոլոր այսմ ժամանակիս, յորում այս էանց 'ի
Հռովմ, և որք հանդիպեցան 'ի Սիցիլիայ 'ի յայ-
լանդակ դազանէն, Մարկոս Կայսրն էր 'ի պա-
տերազմի ընդդէմ Արգոնաւութոց, եւուն նմա
զթողութ մի դրեցեալ 'ի Անթիգոնոսէ, յորում
պատմէր զաքսորանն իւր, և Կայսրն բարի առեալ
զթուղթն մեծաւ ցաւակցութիւք, և խղճալով
նմա, ուստի առ 'ի մխիթարել զնա, դարձեալ
վերստին պատասխանեաց նմա։



Յաղագս ժանդայ մահի միոյ մեծի, որ եղև 'ի յամ՝ Իտալիա 'ի ժամանակի Մարկոսի Կայսերն։

Գլուխ Քսանևութերրորդ։

Զեռ մահուանն Անտոնինոսի Կայսերն Պիոյն Անտերին Մարկոսի Աբէլիոսի, որ և էր հայր Քառասնայ եկն մահ տարաժամ Իտալիա, և այս եղև միոն 'ի հնգից մահտարաժամաց, որք ժողովրդեանն Հռոմայ արար զտապալումն մեծագոյն, և կոտորումն յոյժգին։ Տևեաց մահս այս երկարութիւն երկուց ամաց, և ընդ հանուր 'ի բոլոր Իտալիա. և եդ 'ի մեծի ահաբեկմանն զժողովուրդն Հռոմայ։ զի կարծէին թէ դիւքն կամիցէին տալ իսպառ աւարտումն Իտալիու։ Զսան գոսման ինչ, զոր ունէին ընդ նոսա։ Մեռան այնքանք, և այնքան մեծամեծք անձինք 'ի փարթամաց, և 'ի յաղքատաց, 'ի մեծաց, և 'ի փոքերց, 'ի մանկանց, և 'ի ծերոց. մինչ զի գպիրքն դժին զսակաւ զաշխատանս դնելոյ 'ի քարտիսն զնիւն սակաւուց, որք մնային կենդանիք քանիցէ 'ի բազմութենէ նոցա, որք մեռան։ Այսպէս, ոչ մինչ կամի անկանիլ մեծադոյն շինուած մի, նախ անկանի երբեմն փոշի ինչ, կամ հող, նոյնպէս և ոչինչ պատահեցաւ Հռոմայեցւոց երբէք 'ի ժամանակի իւրեանց մեծագոյն մահ տարաժամ, որ նախ ոչ լցէ սպառնացեալ նշ, աբանելեօք իւիք, կամ նշանաւ երկնից, երկու ամաւք յառաջագոյն, յորս Անիբալ մոտենիցէր Իտալիայ, տեսեալ յաւուր միում մեր-

երեկոյի, զի դողով օրն պարզ, ըսկսաւ անձրևել զարիւն, և զկաթն 'ի Հռօմ, և զայս պարզաբանեալ կինմի ասաց, թէ արիւնն յուշանէր զպատերազմ խստագոյն, և կաթն զմահ և զմահ տարաժամ։ Մինչ Սիլլա դարձաւ 'ի դավառէն կամ պանիս յաղագս արտաքսելոյ զմարիոս թշնամին իւր 'ի Հռօմայ, տեսանելք ձիավարքն իւր զաղբիւր մի, որ բղխէր զարիւն, և ամենեքեան որք անդ ընթանային, ոչ թոյն, և մահադեղ երևիւր, որում աքանչելիքն հեռևեցան, զի յերկերորդ, և 'ի յինսուն հազար ընտանեայն 'ի նոցունց որք անկան սրով, և 'ի նոցունց, որք մաշեցան տարաժամ մահուամբ, և 'ի նոցունց որք արտասահմանք եղեն դրամն Սիլլայի, և 'ի նոցունց, որք փախեան ընդ Մարիու, 'ի յայնքան բազմութիւն Հռօմայեցւոց ոչ մնացին քառասուն հազար ընտանիք։ Իրաւի ոչ երբեք Հռօմ 'ի յամս վեց հարիւրս ընկալաւ զայնքան վնաս 'ի թշնամեաց իւրոց, զորքան 'ի յամս քսան միայն չարաչարեցաւ 'ի յորդւոց իւրոց։ Նոյնքն ինքեանք բոլոր անագորուն, ոչ եղեն այնքան անողորմք ընդդէմ երկրին, որքան եղեն ընդդէմ երկնին իւրեանց։ Այս երևի հաւատիքանզի յաւուր յորում Սիլլա եդ զսուր, և ըդսրածուեցեալ 'ի Հռօմ բոլոր, ասաց ցնա մի ոմն 'ի հարիւրապետից իւրոց զբանս այս։ Աստ ինձ Սիլլա, թէ նոքա որք զզենս ունին սպանանիմք 'ի պատերազմի, և նոքա որք ոչ ունին զզենս, սպանանեմք իսան իւրեանց, ուրեմն ընդ որում եմք կալոցք, կամ ապրելոցք, 'ի դիսն երդմնեցուցանեմ զքեզ, զի ծնեալք եմք 'ի կանանց։ մի սպանցուք զկանայս, և քանզի եմք մարդ, մի սպանցուք զմարդիկս։ Կարծես դու թէ սպանանելով զնմ Հռօմացիսն 'ի Հռօմ, արասցե՞ս զգումարուումն ինչ ժողովրդեան, 'ի յանանոց լերանց։ Սոսանես 'ի յանուն Ջատագովութեան, ոչ օրենական ընելոյ ժողովոյն արքունական, և արտամերժել զանազորունն, իսկ տապալեալ

աւերեալ

աւերեա զժողովուրդն , մեանալով մեք անադ-
ռունք, և անողորմք։ Ընտ իմացման իմում, զայն
քան փառս , և զպատիւս ստացաւ հարիւրապետս
այս վասն բարեաց խօսիցն զորս խօսեցաւ , զոր
քան Սիլան արդիւնաւորեցաւ զպատիժս վասն
գոյթ գոլոյն , և վասն անողորմութեանն զոր
արար։ Զայս ասացաք , քանզի եթէ նախ-
քան զվնասս այս յառաջեցին նշանք ոմանք ,
ոչ սակաւ՝ մահկանացուութիւն եղև 'ի ժամա-
նակի բարւոյ Կայսերս , այսորիկ զի , նախ
ընթացք եղեն նշանք ոմանք ահաբեկելիք , որոց
պատճառն եղև այս։ Զի յաւուր միում գոլով
Կայսրն 'ի տաճարին կուսանացն վկայարեաց ,
յանկարծակի մտեալք յայնր խոզք երկուք
կացին հուպ առաջի ոտից նորա։ ԵՒ հապա էին
ժամանեալք առ յոտս նորա , իսկոյն անկեալք
մեռան երկոքեանքն իսի , և 'ի նոյն կի-
սաւմ։ Յետ այսորիկ զկնի սակաւուց աւուրց
ոմանց , գալով 'ի քարէր Կամիթիսոլին առ 'ի ելա-
նել 'ի դրանէ սալարիսս , յանկարծակի հասեալք
երկուք սեւագոյնք արծուիք , փակեալք զեղջն
դունս իւրեանց անկան առ յոտս Կայսերն ,
իսկոյն աւարտեցաւ կեանն նոցա։ Եւ զկնի
սակաւուց յաւուրց ոմանց , գալով Կայսր 'ի
յորսէ անասնոց վայրենեաց , արշաւելով շունքն
զկնի եղջերուաց ոմանց , և 'ի մէջ նոցա գոլով
երկուք շունք յոյժ վաղականք , որք 'ի Կայսերէ
էին յոյժ սիրեցեալք յաղագս արագընթացու-
թեան իւրեանց , որք և դառնալով ուղղեցաւալք
'ի վազելոյն։ Կայսրն ետ բռամք իւրով զշուր ,
և նոքա 'ի ըմպել զշուրն , յանկարծակի անկեալք
եատակեցան, Արդ յիշելով զնոսա , զարծիւն , յե-
տոյ սատակումն շանց , եդ զկայսրն 'ի մեծի ահ-
աբեկութեան։ ուստի ժողովեալ զքահանայս ,
և զմոգս , և զհմայս , Հրամայեաց զի իւրա-
քանչիւր ոք ասիցէր զկարծիս իւր։ Իսկ նոքա
վճռելով , և դատելով զանցեալս , և զներկայս
պատահմունս , վերաբերեցին ասելով , թէ

'ի մէջ երկուց ամաց դէքն պատժելոց իցեն ըստ
Հռօմ յուժգնակեաւ , և ծանրագունիւ հա-
ռեաձով : Արդ ոչ անցան աւուրքք բազումք ,
յորս յարեաւ պատերազմն պարթեւաց , որում
հետուեցաւ հետագայ տարուցն առ սաստկա-
գոյն , և մահտարաժամն 'ի մէջ Հռօմէացւոց : և
մահտարաժամն այն եղև որպէս կերպ իմն վէ-
րաց , զորս արտահանեալք խակոյն մեռանէին :
Իսկ Կայսրն Թէոպէտ բոլոր խորհրդարանն էր
'ի փախստեան , սակայն ինքն տեւեաց 'ի Հռօմ,
բայց ոչ ելանէր 'ի Կամպիտոլէն : և մնալով օդն
այնքան ապականեցեալ , Թէոպէտ ինքն ոչ էհան
զվէրս այս , սակայն հիւանդացաւ ջերմախտիւ ,
որոյ պատճառաւ Թողեալ զՀռօմ , զճանա-
պարհ արարեալ դնաց 'ի կամպանիայ : և վեր
ջապէս եկեալ 'ի Պարտինուպոլիս , որ այժմ
կոչի Կէսարիոն , և անդ արար զառաւել բնա-
կութիւնն իւր 'ի բոլոր ժամանակին այնմիկ ,
յորում տեւեաց մահտարաժամն 'ի Հռօմ :

Յաղագս պատասխանուոյն զոր եւ Մարկոս կոչ Աբրելիսն Կայսրն առ. ոմանս բժիշկս, որք զայրանային, զի գոլով նա հիւանդացեալ ոչ թողոյր զընթերցումն գրոց։

Գլուխ Քսանեւինն երրորդ։

Ոլով Կայսրն 'ի քաղաքին այնմիկ Պարտենուսպոլիս, որպէս այլք հնարեն անցուցանել զժամանակս պարապուորդ թեաբ առ 'ի պահպանելոյ զկեանս, այսպէս ինքն զքաղուբ 'ի յընթերցումն գրոց առ 'ի յաւելուլ զգիտութիւնս, ոչ գոյր այն պիսի իր իմն, որով կարիցեր ոք առնել նմա զմեծագոյն գործ ինչ, որպիսի էր հնարել ոք գտանել զգիրք իմն նորագոյն։ Ոչ ասեմ ես զգիրս նման նոցա, որք գրեին 'ի ժամանակի իւրում, այլ ասեմ զգիրսն այնս, որք էին յոյժ հնագոյնք, և վա՜ հնացեալք գոլոյն 'ի մուռացման կային, զի այսպիսեաց գրոց էր բարեկամ։ և ոչ միայն էր բարեկամ գրոցն հնագունից, այլեւ հնագունեցն հնութիւն, և վա՜ այսոցիկ առնէր զբաղում պարգեւս։ Արդ գոլով սա յայնմ քաղաքին հիւանդացեալ 'ի քաղաքէ Էլիսու որ այժմ կոչի Երուսաղէմ, բերեալ եբոյեցի ոմն զգիրք մի գրեցեալ լեզուաւ եբրայեցականաւ, զոր ընկալաւ այնքան համակրութիւն 'ի յընթեռնուլն և զայնքան իրգ տալոյ զկատարումն ընթերցմամբ. մինչ զի բազում անգամ 'ի վերայ սեղանոյն մինչ ուտելն ընթեռնոյր, և վարժիւր։ եւս գոլով 'ի ժամու ջերմանն տենաի, ոչ դադարէր 'ի յընթեռնելոյ։ Եւ քանզի բժիշկքն ասեն,

գատարկակացութիւնն 'ի յանձինս ձեր բուսու-
ցանէ զժանդամահ։ Մինչ ես կարեմ օգտիլ
դրօքն իմովք, ոչ ոք ցաւակից լիցի աշխատանաց
իմոց, զի մանաւանդ կամիմ մեռանիլ իմաստուն
'ի մէջ իմաստնոց, քան թէ դոլ կենդանի տգէտ
'ի մէջ մարդկան։ Արդ հարցանեմ զձէնջ զբան
մի։ Մարդ մի որ յանոգնեալ կոչէ զինքն մարդ,
և ոչ ունիցի զշրջութիւն գրոց, զինչ զանազանու-
թիւն գոյ 'ի մէջնդ, և անասնոց։ Իրաւի առաւել
օգտակարագոյնք են անասունքն, առի գործել
զերկիր, քան զմարդ տգէտ առ 'ի ծառայել,
իբրեն հրամայարակի։ Եղն մի տայ զմարթն իւր
վա՞ կօշկաց, զմարմինն իւր 'ի կերակուր մարդ-
կան, մատուցանէ զոյժն իւր առ 'ի վարել զեր-
կիր։ Անմեղ ոչխար մի, զբուրթն իւր օգտա-
կարէ վա՞ չուխայի, և զկաթն վա՞ առնելոյ զոյա-
նէր, բայց յիմարն վա՞ որոյ իրի է օգուտ, եթէ
ոչ բարկացուցանելոյ զդիսն, և դայթակղեցու-
ցանելոյ զանմեղս, ուստ զհացն փոքրկանց, և
է գլուխ դատարկակացից։ Արդարև, եթէ իցէ
'ի ձեռի իմում տալ զկեանս, մանաւանդ կամի-
ցիմ տալ զկեանս հորթկան միում, քան թէ
տգիտի միում խորհմանէի։ քանզի անասունն
այն կեայ 'ի յօգուտ բազմաց, և թարց մեսաս-
ումքդ, իսկ այր տգէտ կեայ 'ի մեսաս ամենե-
ցուն, և առանց օգտի ումքդ։ Վասն այր իրի
ուրեմն կարծէք դուք թէ թշնամի իցեմ տգի-
տաց, և այնքան սիրիցեմ զմարդ ապէտս։ Լուա
ցուք ուրեմն, զի ասացից ձեզ։ Լաւագոյն թուի
ինձ, զի մարդ մի իցէ բարուքն աղաւնակերպ,
բանիւքն քաղցր հանդարտ անձամբ իւրով,
հաճելի 'ի զրուցատրութեանէ իւրում։ և հակադար
ձապէս, յոյժ անհաճոյ թուի ինձ մարդն այն,
որ արտաքերիցէ զբանս իւրս աղմկով, և իցէ
վրդովիչ վարուք իւրովք, և սրտմտուն բարուք,
'ի խոտանանալն երկմիտ և կարծր սրտիւ։ Բայց
կամիմ ասել զայլ ինչ, զոր 'ի յիս զգամ։ զի սա
իմաստուն, որում պակասէ իր ինն 'ի բնութէ,

Աբրելիոսի Կայսեր։ ։ ։

Աստ խօսի, և ընձեռի, թէ առաւել վնասակարէ իշխանաց, և թագաւորաց ոգիտութիւնն, քան թէ այլոց։

Գլուխ Երեսներրորդ։

Զաստաւելով Կայսրն 'ի յառաջադրութիւրումյաւել ևս ասաց զբանս այս 'ի վերոյ ասացելոցն, այսպէս Կայեցարուք բարեկամք, դիցուք թէ ամենեցուն վնասակարիցէ ոգիտուին, և իրաքանչիւրումէք պիտոյիցէ իմաստութիւնն բայց առաւել ևս հարկաւորէ թագաւորաց, որք ոչ պարտին շատանալ դիտելով զայն, զոր գիտէ մինն 'ի յիմաստնոյ, այլ պարտի գիտել զամ, զորս գիտեն ամենեքեան զի տէր է ամենեցուն ըստ կարծեաց իմոց։ ոչ ընտրեն զթագաւորս առ 'ի մտածել, թէ ուտիցեն առաւելքան զամենեսեան։ զգենուցուն առաւելքան զամենեսեան, արշաւել առաւելքան զամենեսեան, ունիլ առաւելքան զամենեսեան, եթէ ոչ զի երևակայիցէ թէ գիտիցեն առաւելքան զամենեսեան։ Թագաւոր զբ յորժամ կամի զդայականութիւնքն զենքն սանձաւորել առնել, պարտի հայիլ, թէ անձն իւր հարկէ լինիլ յոյժ համեստ, և պարտաւորի յիշել միայն զբանս այս, թէ որքան մեծագոյն իցէ կարողութիւնն իւր, քան զայլոցն։ այնքան պարտի լինիլ մեծագոյն առաքինի քան զայլս ամենեսեանս։ Իրաւի մեծ խայտառակութիւն է, տեսանել զմարդ մի առաւել

ելել կարող քան զամ կարողն, և առաւել փար-
թամ քան զամ փարթամն և ի յայլ կողմանէ
ճանաչիցեն ամենեքեան զնա գոլ առաւել ոգի-
ուագոյն քան զամ ոգեսան։ Ամենայնք պակա-
սաւորութիւք, և տկարութիւքն կարեն ծածկիլ
նոր. որ կատաւարէ, բայց ոչ կարէ ծածկիլ ոգի
տուին։ քանզի եթէ իցէ չարաձիկ իցէ չարաձ
ձիկ վա՞ իւրեան ինքեան, բայց ոգիտուին թա
գաւորին է մահտարաժամ՝ որ բուսանելով՝ ինման
սպանանէ զքաղուս, ընկղմէ զամենեսեան, և
անտարատ առնէ զգաւառս, առնէ երկիրղալից
զբարեկամանն, զարհուրեցուցանէ զսուարականս.
և ի վախճանի ինքեան և վերջապէս գայ
թակղեցուցանէ զոյլս։ Մինչ Կամիլն յաղթա-
նակեաց զԳալլիացիսն, յաւուրն յաղթանակին
իւրոյ գրեաց զբանս այս առ բարձր Կամիլիոսն։
Ո՛վ Հռօմ, դու ես մայր իմաստնոց, և խոր-
թամայր ոգիոց։ Եղև բանքս այսոքիկ ար-
ժանիք այնպիսւոյ մարդոյ։ Եթէ ոչ պատրէ
զիս յիշողականութիւն իմ, իրաւի առաւել ա-
նուանի եղև Հռօմ իմաստնիւք, որք մնանէին
ի նմա, քան զզիւնորսն զորաց, որք ելանէին ի
նմանէ։ Հնագոյնք Հռօմայեցիքն մեր, առաւել
եղեն ահ, և երկիւղ իմաստութեան իւրեանց,
քան զնուաճելն բոլորիկ գաւառաց և տիրապե-
տելն, ի նոցանէ որք չրջապատեցեալք. էին
գրովք ի Հռօմ առաւել զարհուրեր բոլոր եր-
կիր, քան թէ ի նոցանէ, որք երթային բար-
ձեալք զզէնս պատերազմաց։ Վասն այսորիկ
ոչ եղև յաղթեցեալ Հռօմ, զի թէպէտ բե-
կեալք ցրուէին զօրքն, սակայն ոչ ապաւիր,
և ոչ պակասիր ի նմա իմաստունք։ Ոչ թարգ
արտասանաց ասեմ, զի անկեալք Հռօմ՝ի բարձ
րութեէ կացութեան իւրոյ, և այս պատահի, ոչ
վասն պակասութեան գրամի, կամ պակասութեան
զենուց պատերազմելոյ, այլ զի ոչ ունի զիմաս-
տունս և զմարդիկս հանճարեղս վասն հոմանե-
լոյ զնա։ Հարքն մերք ստացան որպէս իմաս-
տունք,

տունք ։ և մեք որդիք նոցա Կորուսանեմք սեղ
ուդիտք ։ Ամ ինչ որք ի մարդկանէ են յոյժ
ցանկացեալք , մեծաւ աշխատանաւք ժամանեն
առ այնս , տառապանաւք պահեն , և Կորուսա-
նեն տհաճութիւն , և պատճառ սորինէ այս քանզի
ոչինչ դոյ այնքան բարի , և այնքան սիրեցեալ ,
որ երկարութիւն ժամանակի ոչ սոխալիցէ զմիզ
կամ թողուլ զնա , կամ սակաւ համարել , կամ
արհամարհել զնա , կամ ձանձրանալ ի նմանէ ։
Չի է ունայնութիւն այնքան ունայն , և աշխարհս
այնքան աշխարհ , և կորուսան այնքան կորու-
սեալ , մինչ զի երիտասարդական ցանկութիւն
ասանձնկէց առնելով . զփափաքս սրտից , իւր-
եանց , և հակեն բաղում անգամ առ ի ժամա-
նել ի յիր ինչ , իսկ յետ այնորիկ տագնապին
առ ի զերծանիլ ի նմանէ ։ և առ ի ցուցանել
առաւել զփոփոխութիւն յեղեղկութեանէ իւրեանց ,
զայն , զոր այնպիսեաւ տենչմամբ էին սատ-
ցեալք , տան , և ոչինչ համարեն , և զոր սի-
րէին յայնժամ , արհամարհեն այժմոյս , և զայն
առ որ մեծաւ օգտիւ ժամանեցին , մեծաւ սրտ-
մրտութեամբ , և կատաղմամբ թողուն ի բաց ։
Եւ երևի ինձ , թէ այս իցէ դատողութիւն դիցն ,
զի ծանիցէ եամ ոք , թէ , որովհետև նա , որ
սիրէ վախճանելոցդ , և իրն սիրեցեալ ունելոյ է
վերջ , ժամանակն յորում սիրի վերջանալոցդ ,
ուրեմն արդար իմն է , զի սէրն որովհետի ինչ ,
աւարտեսցի , և սիրեցեալն վերջասցի , և ժա-
մանակն յորում սիրի կատարեսցի ։ Բայց այնքան
անպատեհ , և դառնիկք են ըղձակատութիւնքն
մեք , մինչ զի զոր տեսանեմք , իսկոյն ցանկանք ,
և ցանկացեալք հետաքրքրիմք , և հետաքրքրեալք
ժամանեմք , և ժամանեալք արհամարհեմք , և
արհամարհեալ թողումք ։ Իսկ յետոյ հետևիմք
այլում իրի , և հետաքրքրեալ ի նորոյ արհամա-
րհեմք և զայն ։ Ասա կերպի իմիք զի մինչ սկսա-
նեմք սիրել զայն , աւարտեմք ատել զայն , և
աւարտելով ի ատելոյ զմինն ։ ըսկսանիմք սիրել
զմիւսն

զմիութեան, և Վերջապէս յառաջագոյն աւարտեց
ցի կեանն մեր, քան զժլատութիւն մեր, Ոչ պա
տահի այսպէս իմաստութեան, որոց 'ի սիրտս,
իւր միանգամ եմուտ տայ մոռանալ զաշխատանս
ընդ որով ժամանեաց, ունի բարեպէս զժամա
նակն անցեալ վայելէ զՀնչմարիտ վայելչութիւն
զժամանակս ներկայս դնէ 'ի ճանձրութիւն զդա
տարկակացութիւն ոչ բաւականանայ ընդ նոսա որ
գիտեն զարթուցանել զուձակտութիւն առ 'ի առա
ւել գիտելոյ, սիրէ զայն, զոր այլք թողուն,
և թողու զայն, զոր այլք սիրեն։ Վերջապէս,
նա որ Հնչմարիտ գիտուն է հրճուելով, 'ի վերայ
երկրի, աշխատի, և աշխատելով 'ի գրեանս իւր,
առնու զհանգիստ։ Որպէս զայլոց ամենից իրաց
ոչ կարեմք խօսիլ եթէ ոչ զորս ըստ զամբ զնամա
նէ (քան զի այլով կերպիւ խօսեալք ըստ կար
ծեաց այլոց, և ոչ փորձառութիւն սեփականաւ։)
Ուստի 'ի պատճառս այս ասեմ, թէպէտ ոչ
ունիցեմ զյոյս առնելոյ զվարձս 'ի դիցն, ուստ
զպատիւ 'ի մէջ մարդկան, և ոչ զմիշտաւակ յա
պագայիցդ ժամանակաց, սակայն ցանկայի լինիլ
Փիլիսոփայ միայն առ 'ի սեսանել, թէ օրքան
փառաւորապէս Փիլիսոփայն ծախէ զժամանակն
իւր։ Հարցանեմ ձեզ զբան մի։ Յորժամ իմա
ցականութիւն իմ խաւարեալ լիցէ 'ի յիրս, զորս
առնելոյ իցեմ, յորժամ յիշողականութիւն իմ
մոռանայցէ զայն զոր յիշելոյ է, յորժամ մար
մինն իմ շրջապատիցի ցաւօք։ Յորժամ սիրտ իմ
բեռնաւորիցի հոգվաք, յորժամ ես իցեմ թարց
գիտութիւն, յորժամ շրջապատիցիմ անթիւ
վշտօք, ուր զիս կարեմ գտանել բաւական, եթէ
ոչ 'ի յինկերակցութիւն իմասանոց, կամ ներսա
մուծելոյ 'ի մէջ գրեանց։ Չէ 'ի գիրս գտանեմ զի
մաստուն, յորոց կարեմ ուսանիլ, կամ զհոգս,
որոց կարեմ հեռանիլ, կամ զանհեսս, յորոց
կարեմ առնուլ զնարատ բարի։ գտանեմ զար
տուսմս, առ 'ի յորջալ ընդ նոսա, գտանեմ զու
բախս, ընդ որոց ծնիցուղեցիմ, գտանեմ ան
միտս,

միտս , ընդորոց ծաղը առնեմ գտանեմ զբա-
րիս , որք պիտոյքեն գտանեմ զչարս , յորոց
զիս պարտիմ պահպանել։ Եւ վերջապ՝ ի զիրս
գտանեմ թէ որպէս պարտիմ ունել զիս ի ժա-
մանակի յաջողութեան , և կառավարել ։ և ի ժա-
մանակի ձախորդութեան թէ յումմէ պարտիմ
խնդրել զօգանպակութիւն։ Ո՞հ թէ որքան երա-
նելի է մարդն այն , որ պարապի ի յիմաստուն։
և ս առաւել երանելի է նա , որ ի մէջ բազում
դիտութեան իւրում , խղերէ անսալ զիրատ ։
Եւ թէպէտ զայս ամ պարտին ունել ամենե-
քեան , և պատկանի ամենեցուն , սակայն առա-
ւել հարկաւորէ նմա , որ կառավարիչ ամե-
նեցուն։ Այգ անողալ կանոնէ , զի թագաւոր
իմաստուն , ոչ երբէք կարէ լինել լոկ բարի ,
եթէ ոչ յոյժ բարի։ և թագաւոր ոչ էր
բէք կարէ դալ լոկ չար , եթէ ոչ յոյժ չար։
Թագաւոր որ ոչիցէ բախտաւոր , կարի հար-
կաւորէ իմաստուին առ ի սրտապատելոյ զինքն
առ ժողովուրդն իւր ի յամ ձախորդութիս զոր
տոյ բախտն։ Յորժամ թագաւորն է յոյժ սիրե
ցեալ ի յիւրայնոցն , և է առաքինի ի յանձինս
իսկոյն ասեն ամբն մինչ ոչ հանդիպի բարուք
ընդ բախտին , թէ թագաւորին մերում թէ-
պէտ պակասեցաւ բախտն սակայն ոչ պակասեցաւ
խոհեմութիւն , եթէ ոչ եղև յաջողեալ վախճանն
զ ործոյն , եցոյց արդեաք զինքն իմաստուն իկիր
արկուն նը , և զոր այժմ խնայեաց բախտն ,
յայլում ժամանակի զինքն դարձուցանէ իմաս-
տութեանն իւրով։ Եւ հակադարձեալ , թագա-
ւորաբ , որ տդէտ իցէ , և իցէ ատելի ժողո-
վրդեան իրաւի ի ձախորդութեանէ վերահասանիցի
վտանգ իմն , և ի մեծի իրակութեանէ գիպիցի չար
ինչ , խկոյն ասասցեն՝ , թէ այս եղև վ՝ անգի
տութեանէ ինձին իւրոյ , կամ վ՝ վատխրատոյն
իւրայնոցն , զորս ետուն նմա ։ Իսկ եթէ ան-
գամ մի դիպիցի բարի , զբարին այն ոչ վերա-
բերեն ի նա։ որպէս թէ բարուք իցէ կատ-
վ-

վարեալ, այլ ասասցեն, թէ բոխսն խոստացաւ
ոչ վա՜ խոհականութեա՜ զոր ունեալ իցէ 'ի կիր
արկումն, այլ բարեգթութեա՜ դիցն եղև, ոյք
ունին զգոյթ առ ամենեսեան։ Անպատրեմն ո-
րով հետև այսպէս է, խոհեմ թագաւորն, 'ի
ժամանակի պարապման պարտի առանձնակի
ընթեռնուլ զգիրս, և յայտնապէս հաղորդակ-
ցիլ, և խորհրդակցիլ ընդ իմաստնոց։ Իսկ
եթէ 'ի պատճառս անելոյնկութեա՜ իւրոյ ոչ ընդ
ունիցի զնորատս նց, գոնեա ստանայցէ զանօշ
իմաստնոյ 'ի մէջ հայատակելոց իւրոց։ Ոչ կամիմ
ասել առաւել քան զայս, թէ ես այնքան մեծ
համարեմ զգիտելն, և զիմաստութիւն իմաստ-
նոց, մինչ զի եթէ իցեր խանութ ուր վաճա-
ռիցիւր գիտութիւն, որպէս գոյ այլոց վաճա-
ռից, ես տայի զամ ստացուածս իմ միայն վա՜
նլ՝, զոր իմաստուն մի ընթեռնլով զգիրս կարէ
ուսանիլ միումն միայնում աւուր։ 'Ի վախճանի
ասեմ, թէ զայն սակաւն զոր ուսանիմ 'ի ժամ մում
միում, ոչ տայցեմ վա՜ամ ոսկւոյ որ կայ 'ի վի՜
երկրի։ և առաւել մեծագոյն փառք իմ համար
եմ զգիրքն, զորս ես ընթերցայ, և զգործա
ռութիս, զորս շարագրեցի, քան զպատերազմն
յինէն յաղթեցեալս, և զթագաւորութիս զոր
նուաճեցի ձեռամբ իմով։

Յաղագս այնորիկ , զոր ասաց դառնալիկ լինական մի խորհրդականացն Հռովմայեցոց առաջի Ներկայութեան Մարկոսի Կայսերի ։

Գլուխ Երեսուն և միերրորդ ։

Ապով վշտացեալ Կայսրն Ներմախիս (սակաւագոյնքանչելումդ լինոյ) յաւուր միում գոլով ընդ նմա բազումք քաջիւք , և ասենադպիրք , շարժեցաց զդրուցս իւր խօսելով , թէ որքան փոփոխեցեալէր Հռովմ ոչ միայն շինուածօք , այլև ազգութեաբ , իւրով , և որքան աճեցեալէր ի նմա շողոքորթութիւն , նաև չքաւորեցեալ ի մարդկանէ որք համարձակագոյնս խօսէին զճշմարտութիւն ։ Յայն ժամ զկնի զրուցատրութեանն իմաստնականի սկսաւ Կայսրն ասել զբանս այս ։ Յամին առաջնոյ , յորում եղէ ես խորհրդակից , եկեալ աղքատ մի դառնիկ , և շինական , ի դեսպանութեան Դանուբայ ի խնդրել զդատաստան ի խորհրդարանէն , ընդդէմ իշխանի միում , որ առնէր զբազում զրկողութիւն , և անիրաւութիւն ի ժողովրդեանն իւրոյ ։ Ունէր նա զերեսն փոքր , զշրթունս մեծամեծս , զաչս խորանկեալս , զհերս կանգունս և զլուին թարց զլխակի ,ոչկօ շնկս մորթեղինաց փշախոզի , կամ կոշուոյ , և վերնաշորս . մորթոյ այծենոյ , զգօտիս ի խատեղինոյ ծովու այսինքն կաղաքուսից , և ուներ զփայտ մի ի վայրենի ձիթենեաց ի ձեռին իւրում ։ Եղև իրիմն տեսանել զայնձն նորա օտարատի , և այլանդակ ի լսել զբանս նորա ։

Իրաւի

իրաւի մինչ տեսի մտանել 'ի խորհրդարանն, կարծեցի թէ իցէր անասուն իմն իկերպարանս մարդոյ. բայց մինչ լուայ զբանս նոր, ենթադրեցի զոլ մի ոմն իդիցն եթէ 'ի մէջ մարդկան։ կարելի է լինել։ Եւ քանզի սովորութիւն էր 'ի խորհրդարանին, զի նախ և յառաջ անասցեալ իցէ ինն դանդաղքն աղքատաց, քան թէ հայցուածքն հարստից, տալով զտեղի շինականին այսպիսի սկսաւ ասել նա զբուցն իւր։ Որով եցոյց այնքան համարձակեալ։ որքան էր զգեստն իւր արտաքոյ սովորութեան, և ասաց այսպէս։ Ո՛վ հարք համագրեցեալք. ով ժողովք քարեբխոք, ես միւնոյ դեղ ջէն բնակիչ 'ի դեռատին դանուբայ, ողջունեմ զձեզ խորհրդակիցք, որք էք ասա սրբազան խորհրդարանիս համադումարեցեալք։ Բախան խոստանալով, և զիւրն մերք լբելովըզ մեզ, զծրագրեալքն Հռոմայեցւոց հպարտութիւնն իւրեանց ենթայլծեցին զազգս ողորմելեաց Գերմանացւոց Մեծ են փառքն ձեր, ով Հռոմիացիք, վա պատերազմացն, զորս աշխարհն ետուք, բայց եթէ պատմագրիչքն ղշմարիտն ասեն, մեծագոյնք եղիցին խայտառակութիւն ձեր 'ի ժամանակի հանդերձելումն, յորոգայ անողոր մութիւն ձերոյ, զոր ընդ անմեղաց արարիք։ Նախնիքն իմք արարին զշինութիւնս, և զնանկութիւնս 'ի ծագս դանուբին, ոչ զի առնելով երկիրն ջորային ապաւինեսցեն առ խոնաւութիւն ջուրց. իսկ եթէ ձանձրացուցանէ ջուրն անհաստատութիւն իւրով դարձուսցեն զինքեանս ապահովապէս 'ի յերկիր հաստատուն։ Բայց զինչ ասացից։ Ահաւասիկ եղեալէ այնքան հանճարուն ժլատութիւնն ձեր առ 'ի յանփնտակել զբարիս այլոց, և այնքան համբաւուն հպարտութիւնն ձեր, առ 'ի հրամայել երկրիցդ օտարաց, մինչ զի ոչև ծոմն կարողէ օժանդակել ըմ մեզ անդնդոյն իւրով, ոչև երկիր անքոյթ առնել զմեզ 'ի փապարս, և 'ի յայրս իւրս։ Բայց ես յուսամ 'ի դիքն արդարք, զի ոչ դուք թարց

իրաւանց եղաք արտաքսելով զմեզ 'ի տանէ , և
'ի բնակութեէ մերմէ , եկեսցեն այլք , որք ի-
րաւամբ արտաքսիցեն զձեզ Իտալիս , և 'ի քա-
ղաքէն Հռովմայ , Անողորմելի է օրէնս այս , զի
նա որ յափշտակէ զիրս այլոց , կորուսցէ զիրաւ-
ունն զոր ունէր 'ի վերայ ընչից իւրոց : Նայեցա-
ցուք Հռովմէացիք , ես թէպէտ իցեմ գոռեհիկ ,
սակայն առ 'ի ճանաչելթէ զ՞ինչ արդար 'ի յայնս
զոր ունի , կամ ով ինչ յափշտակող 'ի յայն որոց
տիրապետէ . ունիմ զկանոնս այս , զի այնք ա-
մենեքեան վատութարքն , որք բռնադատութեամբ
իւրեանց ժողովեցին յաւուրս բազումս , կողոպ-
տեցեալք եղեն 'ի դիցն յաւուր միում , և հա-
կադարձապէս , զամ ինչ զոր կորուսին բարիք
անձինք 'ի բազում աւուրս , դարձուցին առ յին
քեանս գիշն 'ի ժամում միում : Հաւատացէք
ինձ զիր մի , և մի՛ երկբայիք 'ի նմա , զի եթէ
տեսանին ինչքն չարապէս ստացեալք յաղողա-
պէս շահեցեալ հարքն ժամանակ ինչ , սակայն
եկեսցէ արդար կորուստ նոցա յետ այնորիկ առ
որդիսն : զի եթէ դիցն ոչ հատցեն 'ի չարեաց .
իւրաքանչիւր իրս զոր շահեն . իսկոյն ոչ շահեն
իրաւունք են զի զանցառնիցեն զնոքօք ոչ զի ժո-
ղովեսցեն . սակաւ առ սակաւ , զբազում իրս , և
յետոյ մինչ իցեն անհոգք , և անզգոյշք , բարձցին
'ի նոցանէ համայնքն 'ի միասին : Այս է արդար
դատաստան դիցն . զի նոքա առնելով զչարիս
բազմաց , իցեմ այնպիսի ոք , որ արասցէ զա-
րդարդոյն նոցա : Իրաւի այր իմաստուն , և զգոյշ ,
որկայցէ երկիւղիւ դիցն , ոչ հնար թէ կամիցի
տիրել իրացն այլոց : Եւ դարձեալ ասեմ , թէ
այր որ ընդունի զինչս այլոց , զարհուրեալ դար-
մանայմ . թէ որպէս կարէ կալ կենդանի զժամ
մի միայն տեսանելով զինքն անիրաւեցեալ ընդ-
դէմ դիցն , և դայթակղեցուցիչ դրացեաց իւ-
րոց , զուարճացուցիչ թշնամեաց իւրոց , և կո-
րուսիչ բարեկամաց , և զինչս զոր յափշտակեա-
լէ , արարեալէ զմեծագոյն մեղս այլոց , և 'ի

զեր

վեր քան զամենեսեան ՚ի քանանէ, զի զանձն իւր դնէ ՚ի մեծագունի վտանգի, խայտառակեցեալ ՚ի մէջ մարդկան, և եղեալ յանցաւոր գիցն, այր որ ունի այնքան զչար ցանկութիւն սրտի իւրոյ, և այնքան լուծեալ զզլխոցս չարահաւանութիւնք դարձոց իւրոց։ մինչ զի զասկաւն այն, զոր ունի աղբատն երևի ինքեան կարի բաղում, և բաղումք ինչք զոր ինքն ունի, երևի ինքեան յոյժ սակաւ։ Ո՞հ թէ որքան անիծեցեալէ մարդն այն՝, (ոչ է ինձ փոյթ եթէ Յոյն իցէ, կամ Լատին) որ թարց հանայ նկատման կամի փոխել զբարի համբաւն իւր ընդ խայտառակութիւնք, զարդարութիւն ընդ անիրաւութիւնք, և զաղքատն ընդ զրկողուն, զձշմարտութիւն ընդ ստութեան, և զհաւատին ընդ երկբայութիւնք, որ և ունի զձանձրութիւն՝ ի վերայ ընչից իւրոց։ և զանյայտ տեսնելումն առ ինչս այլոց։ Նա որ ունի զնախաս պետական դիտաւորութիւնք ժողովելոյ զստացուածս վասն որդւոց իւրոց, և ոչ ունի զիրոյն զբարեոյ համբաւէ իւրմէ, և ոչ համարէ զայն ՚ի թիւս բարեաց, արդար իմն է։ զի կորուսանիցէ այնպիսին զստացուածս, և մնայցէ խայտառակեցեալ թարց համբաւոյ բարւոյ, նաև համարիլ՝ ի թիւս չարաց։ Ծանիցեն համայնք ապահ եթէ ոչ գիտեն, զի ոչ երբէք ՚ի մէջ արանց ազնուականաց ժամանեաց ոք ՚ի բարի համբաւ, եթէ ոչ հեղգով, և ցրուելով զստացուածս չարաչար ըստացեալս։ Ոչ կարէ հանդուրժել զաւուրս բազումս, ոչ ևս կարէ ծանկիլ զամս բազումս, թէ այր հարուստ պատուեցեալ իցէ ՚ի մէջ պատուեցելոց, կամ համարեցեալ իցէ փրթամ ՚ի մէջ փարթամաց։ Վա՜ զի կամ վատահամբաւեն թէ ժողովեաց զփարթամութիւնս մեծաւ ապահութիւնք, կամ զանհէ այժմ անչափ ժլատութիւնք։ Ո՞հ եթէ ցանկացողքն և տրփունակքն ընչից, ունիցին զայնքան տրփունակութիւն՝ ի վերայ բարի համբաւոյն իւրեանց, զոլքան ունին՝ ի վերայ ստացուածոց այլոց, ես երբ-

նում ձեզ, զի ոչ ցեղն ագահութեան ուսիցէք զհանդարտութիւնն կենաց, ոչ ի խեղճեանային ախտն այսինքն կերցաւն վատահամբաւութեան աւերի-ցէր զբարի համբաւն զկնի մահուան։ Լուարուք Հռովմայեցիք, Լուարուք զոր կամիմ ասել որոց օշնեալ հաջոյ թուիցին դիցն զի կարիցեք ճաշակել և հաւանիլ։ Տեսանեմ, զի ամենեքեան գարշին բանիւք ի հոլարարութենէ, և ոչ ոք հեաւեի հեզութեան, և խոնարհութեան։ ամենեքեան դատապարտեն զպոռնկութիւն, և ոչ զոք տեսանեմ ողջախոհ և պարկեշտ, ամենեքեան անիծանեն զանժուժկալութիւն, և ոչ զոք տեսանեմ ժուժկալ։ ամենեքեան գովեն զհամբերութիւն, և ոչ ոք տեսանեմ համբերող։ ամենեքեան ուրանան զնուլութիւն, տեսանեմ զամենեսեան ի զբօսանս։ Ամենեքեան հայհոյեն զագահութիւս, և տեսանեմ զամենեսեան զի յափշտակեն։ Զմի ինչ ասեմ, և ոչ թարց արտասուաց ասեմ։ Զի ամենեքեան միայն լեզուաւ բարբանջեն, և շրթունքքն զինքեանս գոլ առաքինիս, յետոյ բոլոր ան դամովք իւրեանց ծառայեն մուլուեց։ Ոչ ասեմ զոյս վասն Հռովմայեցւոց, որք են ի դաղմատիոյ, և Իլիրիկոյ, եթէ ոչ առ ծերակոյտդ, զորս տեսանեմ ասա ի խորհրդարանիս։ Դուք Հռովմայիքդ, ի նշան գրոշին ձերոյ շուրջանակի գծագրեալք էք ոտանաւոր չափով զբանս այս։ ՀՌՈՄԷԱՑՈՅԵ ՎԱՆԵԼ ԵՒ ՆՈՒԱՃԵԼ ՀՁՊԱՐՏՍՆ ԵՒ ԻՆԱՔԵԼ ՀՁԱՏԱԿԱՑ ԵՒ ՀՆԱՀԱՆԴԵՑԵԼՈՅ։ Իրաւի բարւոք կարիցիք ասել և գծել այսպէս։ ՀՌՈՄԷԱՑՈՅ ՑԱՏԿՈՒԹԻՒՆԷ ԿՈՂՈՊՏԵԼ ՀԱՆՄԵՂՍՆ ԵՒ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԱՄԻՆԵԼ ՀՀԱՆԴԱՐՏՍՆ։ Քանզի դուք Հռովմայեցիքդ ոչ յայլ յինչ պարարիք, եթէ ոչ ի վստահելոյ ըստ հանդարտան, և ի կողոպտելոյ զբարութիւնս այլայնոց։



Յաղագս իրաց առաւել մասնաւորաց, զորս ասաց նոյն գոռեցիկ շինականն գանաւք գեղոյն, առաջի ատենին Տերակուսից։

Գլուխ Երեսունևերկուերրորդ։

Աղաչեմ ձեզ, ով Հռոմեացիք, զինչ են գործք ձեր, և զինչ ունիք գործոց ձերոց, որք անեալք եք առ գետն Տիբերիայ 'ի վերայ մեր, որք կամք 'ի յարիքն գեղոյն Տրնաւիսի, այսինքն Դանուբին։ Մի թէ տեսիք արդեօք զմեզ ընդ թշնամիս ձեր առնել զբարեկամութիւն, կամ հաստատեցաք զմեզ թշնամի ձեր լինիլ։ Մի թէ լուա՞յք արդեօք 'ի մէնջ ասել, թէ թողցուք զերկիրս մեր, և գնացեալք առոգանիցուք զերկիրս օտարաց։ Մի թէ լուայք 'ի մէնջ, զի ապատամբելք մեք ընդդէմ տեարցն մերոց, գնացեալք խցեմք յաղմիլ զգաւառս այլոց։ Մի թէ առաքեցիք առ մեզ զդեսպանս, առ 'ի հրաւիրել զմեզ լինիլ բարեկամ ձեր, և մենք ոչ անսացաք ձեզ, կամ եկեալ ոք 'ի կողմանէ մերմէ 'ի Հռօմ ազգառնել ձեզ զթշնամութիւնս մեր։ Մի թէ մեռաւ թագաւոր ոք յերկրի մերում, որ իկտակի իւրում թողեալ իցէ զմեզ 'ի ժառանգութիւն ձեր, կամ դատեալ իցէք զօրէն ինչ հնագոյն, որոյ յաղագաւ մեք լիցուք ձեզ հարկատուք, և հպատակիւ իրաւի 'ի Յալամանիա այնքանութեամբ զդաշացաք զբռնութիւն ձեր, ոչ լուաք զհամբաւն ձեր, և առաւել ասեմ, թէ անուանն Հռոմէացւոց, զանդթութիւն, և անապատութիւնն

յայտներ միում 'ի միասին ժամանեալք հասին 'ի
սահմանս մեր։ Ոչ դիտեմ, թէ իցէ ոք որ
ասիցէ 'ի Հռոմայոց, թէ անզգուշութիւն
դիցն իցէ, կամ յանդգնութիւն մարդկան քան
զի տեսանեմ, նա որ ունի զբազումս, անիրաւ
'ի նա, որ ունի զսակաւս, և նա որ զսակաւս ու-
նի, թէպէտ իցէ վատահամբաւութիւն։ Ծառայէ
նմա, որ ունի զբազումս։ ԵՒ ընչասիրութիւն
անկարդ, զուգակցէ զինքն ընդ գաղտնի նենգա-
ւորութեամբ և գաղտնի. նենգաւորուն տայ զտե-
ղի յայտնի յափշտակութեան և յայտնի յափշտա-
կութիւն ոչ ոք է, որ զերծանի 'ի ձեռաց յոր-
մէ յայսմանէ դայ և յառաջանայ, զի ընչասիրու-
թիւն միոյ չարի, հարկաւորի ընտիլ 'ի վեսաս
բազմաց բարեաց։ Զմի ինչ կամիմ ասել։ զի կամ
դիքն անզգուշանան, կամ մարդիքն վերջաւո-
րին, կամ աշխարհս զկատարուին առնու, կամ
աշխարհս ոչ ևս եղիցի աշխարհ, կամ բախտն
կեռացուցանէ զբևեռնիւր, զի զոր սաացաք 'ի
յուսի հարիւր ամն տեսանիցէք կորնչեցեալ 'ի մէջ
ուրեք աւուրց։ Եւ ոչ գուք արարիք զձեզ տէր
բազմաց, տեսանիցէք զձեզ ծառայ ամենեցուն։
Իրաւի ոչ լինիցին դիքն արդարք։ եթէ ոչ նշմա-
րիցեն որ գալոցէ 'ի ժամանակի հանդերձելումն։
զի մարդն այն, որ բանութեամբն իւրով արար
զինքն ինիրաւ, արդար իմն է զի գարձցի 'ի
ծառայութիւն իրաւամբ դատաստանի։ Որովհետև
տիրապետեալ կալայք զազգրմանի երկիրն մեր,
արդար իմն է։ զի հովուիցէք և պահիցէք զմեզ
իրաւամբ դատաստանի։ Զահեղհարեալեմ 'ի ձէնջ
մեզ Հռոմայեցիք։ զի առաքեցիք առ մեզ զոմանս
դատաւորս այնքան ստէտս, և երդնումն ձեզ 'ի
դիսն, զի ոչ օրէնքն ձեր կալեն մեզ պարզա-
բանել։ և ոչ 'ի մացուածքն մեր կարեն ըմբռնել։
Ես ոչ դիտեմ զորպիսի հրամանս ասայք ասա։
բայց ասացիս զայն, զոր նոքա առնեն անդ։
Առնուն զոր տան նոցա յայտնապէս, և ապա-
կանին կաշառաւք, որոց ցանկան 'ի թաքստեան։
պատ-

Աւրելիոսի Կայսեր։ ։ ։

իշխանքն ձեր 'ի դանուբի անդ զի լուիցէք զբողոքումն մեր, որք ասա կայք 'ի խորհրդարանիս գի տեսք թէ զինչ առնէք լուսարուք զի ասացից ձեզ։ Գայ աղքատ մի յոյժ աղքատացեալ, 'ի խնդրել ասա զդատաստան, և քանզի ոչ սէնի զդրամ բաւական տալոյ, և ոչ զգինի նուիրելոյ, ոչ և զիւղ ձիթոյ զոր խոստանայցէ, ընուք զականջս նոր բանիւք ասելով թէ նկատելոցք էք զդատաստանս նոր։ Եկ առնէք, զի ծախիցէ զայն սակաւն զոր ունի, և ոչ զինչ տեսք 'ի բազմութենէն, զոր խնդրէ, և այսպէս սղոյմելի թշուառականն այն, որ եկեալէ առ 'ի բողոքել զմիոյ միայնոյ իշխանէ, դառնայցէ յետս բողոքելով զբազմաց անիծանէ լով զնստացեալ բոխսան իւր, և աղաղակելով առ դիքն արդարք զի արասցեն զդատաստանս իւր։ Արհեստն որով անցուցանեմ զկեանս իմ են։ զի աղամ զեղջիւրս խողից ձմերայնի, և չորացուցանեմ և առնեմ զհունձս յամառայնի, և երբեմն երթամ 'ի յորս ձկանց առ 'ի անուցանել զժամանակս, ըստ կերպի իմն զի զկեանն իմ և առաւել մասն նորա անցուցանեմ 'ի դաշտի, և 'ի յանդաստանի միայն, և ոչ գիտէք թէ վասն որր պատճառի առնեմ ուրեմն լուարուք։ զի ասացից, քան զի տեսանեմ։ զայնքան անդոյթ բռնաւորութիւս 'ի դատաւորս ձեր, որք առնեն զայնքան յափշտակումս առ ողորմելիս աղքատս, լսեմ զայնքան աղմուկս և զկռիւս 'ի դատարանի անդ, և յուսամ այնքան սակաւ ճարակս ունիլ յայսմանէ խորհրդարանէ։ մինչ զի վերասահմանեմ զիս որպէս վատաբախտ, աքսորելով զիս 'ի տանէ իմմէ, և 'ի քաղցրապունէ ընկերակցութենէ, որպէս զի մի զդայցէ սիրտ իմ զայնքան տառապանս։ Մեծագոյնք աշխատանք են ըմբերել միում ընդդիմադարձութեամբ բախտի, բայց առաւել ևս մեծագոյնք են, յորժամ ըսկանի զդալ զչարն, և ոչ կարէ դատանել ճարակ, բայց առանց համաբաղդաստութեամբ իմիք առաւել մեծագոյնք են, զի մինչ կորուսան իմ

կա

կարելի է գտանել հնար, բայց նա որ կարէ օգ-
նել զիս, ոչ կամի, և նա որ կամի, ոչ կարէ
գտանել զհնար ինչ փրկութեան։ Ով խստասիրտք
Հռովմայեցիք, եթէ միայն յիշել կարէի զաշխա-
տանս մեր, զոր կրեմք կապանագեին ներքուիմ, և
անդամք իմք արտացնդէին 'ի տեղոջէ իւրեանց
աչք իմք արտասուէին զայրուն, և մարմին
իմ մաշեալ թալկանայր, ապա զինչ եղիցի ա-
սացեք ինձ 'ի դաւառի մերում, որ տեսանեն
աչքք, լսեն ականջք, և զգան անձամբ, իրաւի
պայթին սիրտք, և նուաղին հոգիք, նաև, դա-
լարին աղիք ներսանայինք, և հաւատամք, զի
գեղեա գիրքն ունին առ մեզ ցաւակցութեան։ Ես
ոչ աղաչեմ զձեզ, զի բանիւք իմովք մի գայթակ
զիցիք, զի գուք Հռովմայեցիքս, եթէ եղիցիք
ձչմարիտք Հռովմեացիք, բարուրք տեսանեք, զի
վիշտքն որք դան 'ի վերայ մեր են 'ի մարդկան,
և 'ի մէջ մարդկանց և 'ի մարդկանէ, և 'ի ձեռս
մարդկան։ ոչ է զարմանք թէ ըզգայցեն մար-
դիկք, որպէս մարդիկք։ Մի միայն իր մխի-
թարէ զիս, և բաղուստ անդամ ընդ այլոց վա-
տաբախաց ոչգի եմ ես դնեմ զիս 'ի զուսցաբա-
նուն, և ասեմ այսպէս։ Գիտեմ ես, զի գիրքն
են այնքան արդարագարդ, մինչ զի սարսափելի
պատիժք նոցա, ոչ ժամանեն առ մեզ, եթէ ոչ
վասն սատկագունի չարաձձկութեան մերոյ, և
ծածուկք մեղքն մեր զարթուցանեն զդիան, զի
առնիցեն զգատաստան յայսմանի 'ի լուր ամենե-
ցուն։ Բայց 'ի միոյ իրէ միայնոյ եմ, յոյժ զարհուռ
լեալ, և վրդովեալ, զի 'ի դիցն ոչ կարողացայ
այնքան խելամուտ լինել, և իմանալ զայս,
թէ վասն այր պատճառի, և ընդէր ընդ բարուոյ
ուստեք, վասն փոքրագոյնի յանցանաց ուրուք
հատուցանեն զբազում, և զծանրագոյն պա-
տիժս, և զպատուհասս, իսկ չարի ուստեք, և
լի մեղքք ոչինչ պատուհասս տան, կամ զպատիժս
զանցառնելով միոյն և ոչ ներելով ընդ միուսոյն։
Թուի մեզ և երևին թէ մեծագոյն անիրաւութի-

առ-

առնիցեն մեզ դիքն , որք կամին չարչարել զմեզ
'ի ձեռս այնպիսի աբանց , որք եթէ գոյր դա-
տողութիւն դատաստանի 'ի յաշխարհի մինչ պատ-
ժեն զմեզ ընդ ձեռօք իւրեանց ոչ արդիւնա-
ւորիցեին ունիլ զդլուխս իւրեանց 'ի վերայ ու-
սուց իւրեանց : Զայս ասեմ ոմ Հռովմէացիք ,
և երդմնում 'ի դիան անմահս , զի արդէն են աւ-
ուրք հնդետասան յորս կամ ես 'ի Հռոմ , տեսի
առնել ասա զայնպիսի . և զայնքան գործառու-
թիւնս 'ի յայսմ ծերակուտ 'ի խորհրդանիս , որոց
եթէ զփոքրագոյն մասն արասցեն 'ի դանուբի
առաւել բաղում եղանիցէին կախաղանք դողից ,
քան թէ ճիթքն հաղողք ողկուզիւք 'ի վերայ
փայտակաղ ամայից կամ ձողակերտից : Արդ
որովհետև ցանկութիւն իմ տեսեալ եղեն , ուր
ցանկայր սիրտ իմ , և հանդեալ դադարեցաւ
'ի հեղուլ զթուն զոր ունէի : Եւ եթէ զոր 'ի
ձէնջ վչացուցեալ իցէ լեցու իմ , ահաւասիկ
ասա անկեալ ունիմ զիս 'ի գետնի , որպէս զի
վճարիցէ պարանոցն իմ : քանզի մանաւանդ
կամիմ ես ստանալ պատիւ մատուցանելով զիս 'ի
մահ , քան թէ ըստանայցէք դուք ընդիս բառ-
նալով զկեանն իմ Ասա աւարտեաց գեռհիկ
շինական զբանս իւր : Յայնժամ ասէ Կայ-
սրն ուրեմն , զինչ թուի ձեզ բարեկամք :
Ահա զինչ ընկուզ փափուկ 'ի մէջ կեղևոյն իւ-
րոյ , զինչ ոսկի 'ի մէջ աղբիցն հրահալելեաց , զինչ
ցորեան 'ի մէջ յարդից զինչ վարդ փթթեալ 'ի
մէջ փշոց , զինչ եղուզ 'ի մէջ ոսկերաց , անդ բա-
ցայայտեցան , որպէսի իրաւունք բանականու-
թեան այնքան բարձրագոյն , որպիսիք բանք
այնքան բարուք ասացուածք , որպիսի ճշմար-
տութիւնք այնքան ճշմարտագոյնք , որպիսի բա-
ցայայտող նենգաւորութեան : 'Ի յօրէնս բա-
րեաց ձեզ երդնում , և այսպէս տեսանիցեմ
զիս ազատ 'ի յաղտէ իմմէ զոր ունիմ , զի զժամ մի
անկեալ դնիւր գռեհիկն այն 'ի գետնի , և մեք
ամենեքեան խոնարհեցուցեալք զդլուխս մեր , և
զահի

գահի հարեալք ոչ կարողէաք պատասխանել զբան մի։ 'ի վաղուեանն աւուրն գոլով մեք համախուհք և միաբանք 'ի խորհրդարանին, նախահոդացեալք նախա պատրաստեցաք զդատաւորս վասն դանուբին, և պատուիրեցաք զի տացէր մեզ դրեցեալ 'ի քարտիզի զամենայն խօսակցութիւնն զայն, որպէս զի դնիցիւր 'ի մէջ դրեանցն լաւ ասացուածոցն օտարականաց, որք են 'ի խորհրդարանին։ և հրամայեցեալ եղև, զի գուեհիկ շինականն այն էցէր մշտաբնակիչ քաղաքին, և անձն իւր էցէր ընտանի 'ի Հռօմ, նաև միշտ 'ի հասարակ գանձարանէ նախահոգացեալ էցէր նմա կերակուր։ և այլ ամենայն պէտս որքան յարմարեցէր կենդանի։



Յաղագս թէ որպէս Կայսրն Մարկոս ասէր, թէ ինքն յոյժ սիրէր զժողովուրդն իւր։ և հակադարձաբար, ժողովուրդն ասէր, թէ առաւել սիրէին ինքեանք զԿայսրն։

Գլուխ Երեսունևերեքերորդ։

Ամի երկրորդի, յորում ընտրեցեալ եղև 'ի Կայսերուն, և յամի խե երրորդի տիոյն հասակի իւրոյ դաւանալով 'ի պատերազմէ, յորժամ յաղթեաց զգերմանացիսն, և զարգուճնաւտիսն, յորմէ ստացաւ զմեծագոյն փառք վասն իւր, և զՅարս տուեալն բազումս վասն Կայսերութեանն Հռօմայ, յաղաղեաց 'ի Սալօն զաւուրս ոմանս առ 'ի ունել զհանգստութիւն, և վասն կարգադրելոյ զզօրս, նաև որպէս զի ունիցիւր ժամանակ 'ի Հռօմ առ 'ի պատրաստել զաղթականն մարտին

տին յոյժ փառաւորեցեալ, և ոչ սակաւ փար-
թամ։ և արարին զպատրաստութիւն մի այն-
պիսի, որ ոչ երբեք եղև յառաջ, և ոչ յետոյ
'ի Հռոմ վասն այլոյ ուրուք։ Եւ յաւուրս
այսմիկ յաղթանակին իւրոյ եղև ընտրեցեալ
Կայսր ընդհանրական 'ի համայնից ժողովրդեանց,
և հաւանութիւք ծերակուտից, և լեգեա աւուրց
իւրոց Կօմոդոս որդին իւր։ բայց հայրն արդե-
լեալ զընտրութիւնն որդւոյն իւրոյ ասելով,
թէ Կայսերութիւնն ոչ պարտէ տրիլ որդւոյ
ումեք վասն արդեանցն մեռեալ հօրն; այլ վա-
բարեաց գործոցն զտրառնեն կենդանիքն։ Ա-
վորեալ բաղումս ասել այս բարի Կայսրս,
թէ յայնմ ժամանակի եղեցի կորուստն Հռո-
մայ, յորժամ ընտրողութիւնն եղանիցի հա-
տեալ 'ի խորհրդարանէն, և Կայսրն ժառանգես-
ցէ զկայսերութիւն 'ի պատճառս տոհմականու-
թեան։ և յարենակցութեան։ Արդ դառնալով
առ վերոյ ասացեալն, գոլով Կայսրն 'ի Ա-
լն, հսկեր յոյժ առ 'ի մտանել բարեկարգու-
թեամբ 'ի Հռոմ, և Հռոմ հոգայր, և տքներ
առ 'ի յինքունիլ զնա բարեդոյն կերպիւ որպէս
յաղթանակիչ յայնպիսի պատերազմ։ Եղև յոյժ
սիրեցեալ 'ի բոլոր Կայսերականէ իշխանութիւն,
և միշտ խորհեր, թէ որով կերպիւ առնիցէ
զհամայն ժողովրդեան իւրոյ, և նոքա ցանկային
մեռանիլ 'ի ծառայութիւն նորա, բազում ան-
գամ 'ի խորհրդարանին շարժէին զվիճաբանու-
թիւն, յոյժ քաղցրագոյն, թէ ո՞ք արդեօք ա-
ռաւել սիրէր, այսինքն Կայսրն զհպատակեալսն,
կամ թէ հպատակեալքն զԿայսրն, և եկեալ այն
քան ջերմեռանդութիւն իրին. մինչ զկայսեր
միամ միաբանեալք կացուցին զդատաւորս վն
այս պատճառիս, և դատաւորքն եղեն դեսպ-
պանքն պարթևաց, և Ռօքսանացոց, և վասն
այսորիկ եռուն գրել 'ի քարտիզի զկարծիս իւ-
րեանց։ Կայսրն պատմէր անդ զբարիսն զորս
արարեալէր, և զչարիսն զորս արդելեալէր։ Իսկ
ծերա-

ծերակոյտքն ասէին զգործս սպասու, զորս ինքն ոչ ներկայ գոլով արարեալք էին, և զնշանս սիրոյ, զոր առաջի ներկայութեան իւրոյ ցուցեալք էին։ Նոյնպէս և Կայսրն յայլոմ տուեր շարժեաց զայլ վիճաբանութիւն ի խորհրդարանին ասելով, թէ առաւել մեծագոյնք էին փառքն իւր, վասն ունելոյ զայնպիսի հպատակեալք, քան զփառքն ծերակուտից ունելով զայնպիսի Կայսր։ Իսկ խորհրդարանն հակառակեր հաստատելով, թէ զմեծագոյն փառս ունէին ինքեանք ի ձեռս նորա, քանզի նա՛ի ձեռս իւրեանց։ Կամի ասել, թէ առաւել փառաւորիր խորհրդարանն Կայսերէ, քան թէ Կայսրն խորհրդարանաւ։ Եւ այսու կերպիւ Կայսրն տայր զփառս ժողովրդեան, և ժողովուրդն տայր զփառս Կայսեր։ Եւ ի միջոցքս թեթև խաղիս այսորիկ, ընտրեցին մուսանգամ զգատաւորս։ Եւ եղև իր զարմանալի, և լի քաղցրութիւ, տեսանել զինգութիւս, և զհրճվումն, որով իւրաքանչիւր ոք ջանայր փորձ առնել զդիտաւորութիւս իւր։ Եւ Կայսրն բարի եռ զիշատակումն զբազմաց հնազանդութեաց, և զմեծագունի ծառայութեց։ և զվերայյաւելեալսերն, զոր գտեալեր ի նոսա։ և առաքինի ժողովուրդն պատէր զմեծագոյն գոյնն նորա ի ներեալն, և զուշիմութիւ ի կոռավարեալն, և զհամեստութիւնն կենաց նորա, և զուժգնութիւն, և ըզբախտն իւրոյ տիրապետութեան։ Էր գեղեցիկ ինն տեսանել զպատիւն, զոր տայր ժողովուրդն Կայսեր, և զբարի համբաւն, զոր Կայսրն վերաբերեր ժողովրդեան իւրում։ Եւ եղեն համայնք գրուածքս, այսոքիկ օրինակեցեալք ի համայնից, զեսպանացն օտարականաց, որպէս զի ամենեքեան ուսանիցին, հնազանդիլ թագաւորացն իւրեանց, և թագաւորքն զի բիցէին զժողովուրդս իւրեանց Վասն զի այս պիսեաւ օրինակ իրաւունքէին բարիքն քաշալերիցէին, և չարքն հալածէին. ուրեմն պատ-

բաս-

բաստեցեալ Կայսրն ընդ զօրապետացն , և ընդ
գերեցելոց վասն մտանելոյ ի քաղաքն , և Հռովմ
պատրաստեցեալ ընդ ամենայն ծերակուտից ,
և ժողովրդեան առ ի յնդունիլ զնա ։ եղև
մուտն նորա իր զարմանալի և արտաքոյ . սա-
ժորութեան այսպէս վասն նոցա որք կային ի
Հռովմ առ ի յելանել որպէս վասն նոցա , որք
կային ընդ Կայսեր առ ի մտանել ։ Ոչքա որք
ի Սալոն էին ունէին զաչս անդ , և զսիրտս ի
Հռովմ՝, և նոքա որք կային ի Հռովմ , ունէին
զսիրտս ի Սալոն ։ և զաչս ի Հռովմ ըստ կերպի
իմն զի աչք կուրանային, զոր տեսանէին, և սիրտք
ճմլեալք տառապէին վասն որոյ ապասէին ի տե-
սանել ։ Ոչ գոյ տառապանք զոր տացէ այնքան
տառապումն որպիսի է սիրտն զոր յուսայ մինչ
դանդաղէ զինքն յայնմանէ զոր յուսայ ։

Յաղագս պարգևի մոյ։ զոր ընկալաւ դշխուհին Քաւուսային ի Կայսերէ յառնէ իւրմէ խնդրուածով բազմաց միջնորդով։

Գլուխ Երեսունևչորքերորդ։

Իտելի է այն, զի սովորութիւն էր Հռոմայեցւոց, յամենայն հունուարի տալ զյաղթանակ Կայսերացն իւրեանց։ Արդ հանդիպեալ յայսմ ժամանակի, յորում պատրաստիւր յաղթանակն, քաւուսային դշխուհին 'ի ձեռն բազում միջնորդաց աղաչեաց զԿայսրն զի հրաման տայցէր հանել զմի գուստր իւր 'ի վարպետուհոյն իւրմէ, և բերել 'ի պալատն առ 'ի վայելել զտոնայմբուն։ և գուստրն այն կոչիւր Լուչիա, կամ Լուչիլլա, որ էր մեծագոյն հասակաւ, և էրեց քան զԿոմոդոս որդին իւր։ յոյժ գեղեցիկ տեսլեամբ, և յարմարեցեալ անդամոք մարմնոյ, նաև յոյժ սիրեցեալ 'ի մօրէ իւրմէ, որում մանաւանդ մօրն ոչ միայն գեղեցկութիւն, այլև վարուք։ Արդ քանզի խնդիրն էր յոյժ գեղեցի, և որք խնդրէին էին յոյժ ընտանեցեալք, յումմէ խնդրէին էր հայր, և որ աղաչէր էր մայր նոր, և մն որոյ խնդրէին էր գուստր իւրեանց։ զայր գևեաց Կայսրն, բայց ոչ առանց յոյժ խոժոռութիւն, և ծանրութիւն։ Եղև քաւուսային մնար յոյժ բերկրեալ, և իսկոյն 'ի յառնուալ զհրամանն։ եւ բերել զգուստր իւր 'ի պալատն։ Արդ եկեալ օրն այնքան մեծի տօնայմբութիւն, և հռչակմանն յաղթանակին, գուստրն Լուչիլլա

սպասեցեալ յայնքանից անձկութեան, և տեսա-
նելով զինքն 'ի յայնքան ընդարձակութեան, և
հաւատալով 'ի յանմեղութիւն իւր սեփական, և
ոչ նշմարելով զնենդութիւն այլոց, ծիծաղէր ընդ-
նա, որք ծիծաղէին, խօսէր ընդ նա, որք խօսէին
և նայէր առ նա, որք նայէին 'ի նա դողովեալ ան-
ըզգուշ. թէ ոչ որք գասէր ուրեմն ինքն ոչ ու-
մեքէ կարծէր գոլ գասեցեալ: Յայնմիկ ժամս
նակի ծիծաղելն կոյս աղջկայ միոյ Հռոմէացւոյ
ընդ մարդկան, էր այնքան համարեցեալ, որ-
քան պոռնկելն քահանայի ուրեմն ընդ կնոջ միում
յուսնականի: Էր այնքան մեծ համարեցեալ պար
կեշտուն կանանցն Հռոմայեցւոց, և էր այնքան
վատահամբաւեցեալ զլբաւելն 'ի մէջ աղջկանց
մինչ զն առաւել մեծապոյն պատիժս տային վա-
հրապարակական լբաւեթն միոյ, քան թէ եր-
կուց մեղաց գործեցելոց 'ի գաղտնի: 'Ի մէջ այ-
լոց իրաց, զայս յեօթնից իրացս առաւել պա-
ռաւանդէին զգուշանալ կանայքն Հռոմէացիք,
պատկանի գիտել: Խօսիլ յոքնակի 'ի տօնախմ-
բութեան, ուտել որկրամոլութեամբ 'ի խրախճանի,
ըմպել զգինի գոլով առողջ, խօսիլ գաղ-
տաբար ընդ մարդկան, համբառնալոյ զաչս 'ի
տաճարի, կալով յաճախակի 'ի լուսամուտս, որք
հային 'ի փողոցս, և ելանել 'ի տանէ առանց առն
իւրեանց, և կին որ որ զայսպիսի իրակութեանց
ըմբռնեցեալ գտանիւր, համարիւր վատահամ-
բաւեցեալ մշանջենապէս: Բազում իրաց ըմբե-
րին անձինք ոմանք, որք են անպատիւք: Բայց
ոչ երբեք խոտացեալ լինի ըմբերումն նոցա,
որք եդեալք կան 'ի յատուիճանս ամօթխածուն,
և պատուոյ: Քանզի տիկինք ազնուականք ոչ
կարեն պահպանել զվարկումն կացութեան իւրեանց
առանց ունելոյ զանձինս իւրեանց 'ի մեծի ամրս
փակուն: Եմ ինչ մինչ ելանեն արտաքոյ հրամա-
նացն բնութեան իւրեանց, արդ իւնաւորին ունել
զմեղսդրութիւն: Բայց կինն անհամեստ, և ա-
նամօթխած, միշտ մնայ խայտառակեցեալ: Տի-
կինքն

կինքն աղնուականք. եթէ ճշմարտութիւնքն կամին զոլ համարեցեալք տիկինքն, որքան՝ առաւել պե բաղանցք են քան զայլս փոխեմանութիւնքն, այն քան զսակաւ ընկալցին ընդ արձակութիւն շրջելով ունայնաբար, և դատարկացութիւնքն։ Խրատ ի հարատութիւն և առատութիւն ընդեց, և աղատութիւն անձին ոչ պարտէ զոլ խայթոց, կամ մի բակ առ՝ի շրջել ատա և անդ. այլ պարտէ զոլ սանձ առ՝ի արդելուլ՝ի յօթևանի իւրում, և ամրապատել զնա ինքեանքս տան իւրոյ։ Զայս ասացաք վասն այսորիկ. զի գուսարն Լուսինլան ոչ էր մանուկ և մայրն իւր ոչ էր այնքան պառաւ երբեմն հեռուակ և երբեմն հեծեալ երբեմն յայտնի և երբեմն ծածուկ մերթ միայն և մերթ ընդ ընկերօքն անդամ մի՝ի տունջան և անդամ մի՝ի գիշերի, երթային շրջելով դատարկացութիւնքն՝ի փողոցս Հռոմայ. կամ առ՝ի տեսանել զզարաշս վուրկանին, այսինքն զհրացնդումն, որ ելանէին՝ի յերկրէ, կամ առ՝ի բռնուլ առ յափն գետոյն տիբերիայ կամ՝ի քաղել զպատուոս՝ի բուրաստանէն Պատուրնիու, կամ առնել զնիթրիս՝ի ջրմուղս և՝ի ջրաթափիչս Ներոնականս, և այլ տեղիս առի անցուցանել զժամանակս, որում աբքունք հաստակի նոցա պահանջէր, և ժամանակն գարնանային հրաւիրէր. թէպէտ ծանրութեանն այնպիսեաց մեծագունից տիկնաց ոչ պատշաճէր։ Կամիմ ասել զիր իմն որով բաղումք ազնիվք տիկնայք ըզգուշացին՝ի նմանէ, որ է այս ոչ գիտեմ, թէ որն եղև առաւել մեծապէսն անտամեստութիւն որբերէրը և պատճառէր Լուսիլլայի, կամ մօրն նոր Փաուստինայ շրջելն նոցա՝ի փողոցս, և՝ի հրապարակս, կամ թէ համարձակութիւնն չարաձգկաց, ՝ի քամբասելն զնոս, և՝ի խօսիլն ըզհամբաւոյ և անձանձոյ նոցա։ Ասդ առանձնակացութիւն կանանց, է սանձ մի պատրաստեցեալ զոր լեղուաց ամենից մարդկանց և կապոյտ մի, որ փակէ զբերանս նոցա։ կին մի որ ոչ կեայ առանձին, դնէ՝ի վտանգի զհամբաւն իւր։ (Ի-

բաւի Լին վատահամբաւ ոչ էր պարտ ճնանիլ։ Այրձ առ Հռովմայիսն) մեծ բախտաւորք եղեն համարեցեալք տոհմականութիւնքն Կուռնէլիոսաց, զի ոչ երբեք Կուռնէլիոսքն եղեն երկչոտ ի մէջ արուաց, և ոչ ի մէջ ի գաց կին ոք դատաւ վատահամբաւ։ Աստեն պատմաբանքն, թէ ոմն տիկին յայնմ տոհմի միայն վա՜ դուլոյն ներ շրջող ատտ և անդ, և սակաւ ինչ լերբ, ի ձեռս տգգականաց իւրոց եդաւ ի կախաղանի։ Արդարև եղև այն յոյժ բարի արար և դործ, դովելի Հռովմացւոց, ոչ զի կնոջի չար ոչ պարտի ըմբերել, որ վատահամբաւ առնիցէ զազգատոհմութիւն մի բոլոր։ Ուր դոյ Ճշմարիտ, և հաւատի աղնուականութիւն և ամօթխածութիւն ի յիրս որ պատկանին առ պատիւս, Անդ ոչ պարտին սպասել առ ի Ճարակել զնայ դատաստանաւ եթէ ոչ այր կամ կին։ որ ի յամենեցուն հատանէ ըստ համբաւս ամենեքեան հատանիցեն զնայ ի կենաց ոչ է բաւական, թէ անձն ոք իցէ բարի, այլ և պարտէ բառնալ զաւրութիւն, որ ածէ զնա առ չարն։ Համայնք կորուստք զոր մարդիք։ կարեն ունիլ յայսմ աշխարհիս, ի բարեաց ժամանակականաց ոչ կարեն հաւասարիլ կորաւսեան փոքրկի իմիք բարւոյ համբաւոյ։ Այր ոք որ դնէ զնպատակ ի վերայ հողաբերոյ յայսմ աշխարհի զհամբաւն իւր ի հարիւր նեռից, հազիւ գիւսիցի մինն։ Եւ հակադարձաբար։ Նա որ կորուսանէ զամօթխածութիւն, և ոչ կամի պահել զատտիճանս անձին իւրոյ, ոչ դոյ յոյս, թէ այն պիսին կարիցէ առնել զգործ իմն բարի, Ուրեմն Կայսրն որպէս նաւապետ հմտագոյն, և զեկավար Ճարտար, որ ի պարզագունի ժամանակի հաւաքէ վա՜ տհին ապագայ ալէկոծութիւնք, ի մէջ ծովախմբութիւնն մեծագունի փառաց իւրոց կայր ի տագնապի, և ի հոգս վա՜ կանանցն այնոցիկ, զի մի գուցէ հետևիցէ վատահամբաւութիւն ինչ, և իրաւի զի ունէր զմեծ իրաւունս քանզի է կանոն անաղալեալ նախանձոտ բախտին,

որ

որ ներկայականաւ երջանկութիւն նախագուշակէ զմեզ զանկարծահաս անյաջողութեան իմն, և այս տեսանի 'ի յիրս բնականս։ Զի սակաւիցս տեսանի 'ի ծովն հանդարտութիւն, որում ոչ հետևիցի իսկոյն վտանգաւոր մրրիկ, և ալէկոծութիւն։ Նմա նայիլ, մեծագոյն հոգւոյն հարաւային, կամ հողմն ջերմային 'ի մէջ աւուրց շնչեցեալք, նշանակեն զորոտումն։ և զգուշանալ ամբոց 'ի յերեկոյն։ Կամիմ ասել, թէ մինչ բանտն զմեզ գգուէ և շողոքորթէ, և զգէմս իւր ուրախս ցուցանէ խոստանալով, և տալով զյաջողութիւն և զուրախութիւն զայս ամ 'ի նշանէ թէ, այսու ամենայնիւ լարէ, և պատրաստէ զորոգայթ յայնժամ, յոր ժամ կամք թարց կարծեաց և յերկուղի առ 'ի ձքել 'ի մէջ յորոգայթից։ Այր ջրաղաց յորժամ է առանց երկիւղի և ապահով 'ի ներկայ ժամանակին, յիշելով զապագայ կասկածանքն, շինէ և զուրէ զտեղիս ջրմղաց։ և հաղագործն մինչ ոչ անձրևէ յարմարէ զտունն իւր մտածելով թէ երբեմն յաւուր միում վրդովին ամբունքն և ածեն զանձրևս։ Այնպէս նակ, այր զգուշ, և զբօն պարտի 'ի նշմարել, և խոկալ զրքան ապրիցի յայսմիկ կենաց, թէ երջանկութեն, և յաջողումն իցեն իւրեան 'ի յաւանդ եդեալ, և 'ի փոխ տուեալ, և ձախորդութեն տուեցեալք իցեն ոչ բնական ժառանգութիւն։ 'Ի մէջ համայնից, որք գիտացին վայելել զաջողութի, և ընդդիմանալ ձախորդութե, եղև Սարկոս Աբրելեան Կայսրս այս որոյ որքան յոյժ գրդուանս և համոզմունս զոր առնիցեր բանան. ոչ երբեք հաւատաց, և ոչ բաղում ընդդիմադարձութեց. ձախորդութե որ քանիցս զոր ընկալաւ 'ի կենցաղումն. յայսմիկ ոչ բնաւ երբեք եղև յուսահատեալ։

Յաղագս բանիցն, զորս ասաց Մարկոս Կայսրն միում'ի ծերակուտիցն, որ գովաբանէր յոյժ զյաղթանակն։

Գլուխ Երեսունևհինգերրորդ։

Ընդեալք տօնախմբութիւնքն յաղթանակին (զոր որում'սեք Սեբաստոս Զէբօնացին) ասաց Կայսերն ոմն 'ի ծերակուտից, որոյ անունն էր Ալուինոս զբանս այս։ Տէր բարւոք կարես ուրախանալ, զորով հետև եղեր զայսքան հարստութիւն 'ի դանձարանի Հռովմոյ, և զանձն քո տեսանես այսօր 'ի յաղթանակի փառաց, և վա՛ն անձին և տունքոյ 'ի յապագայ ժամանակի թողեր զիշատակ մշանջենական Ձայս լուեալ Կայսրն, պատասխանեաց նմա, այսու կերպիւ։ Արդար իրէ ով Ալուինոս, զի որսորդաց ոք հաւատայցէ զկատաղուն բարս անասնոց, զորս որսորդքն պատմեն նուաւարաց, զվտանգն տապաւժից որք են 'ի յատակս ծովու, զբարդլեսաց զերս և զտաղնապս պատերազմի, բժշկաց զպիտանաւորութիւն և զբնութիւն խոտոց զինաց նոյնպէս և հաւատալ Կայսերաց որք չահեն զնախանձս 'ի յաղթանակի։ Այսպէս դիքն անմահք վերատեսուչ լիցին ինձ, և օրհնութիւնքն նախնեաց իմոց հետևիցեն զիս և չար բախտքն ոչ հանդիպիցին եթէ ոչ է լեալ զորտմութիւն իմ մեծագոյն յայսմիկ տօնախմբութիւնս առաւելքան զերկիւղն որ դնէր ինձ վտանգաւոր պատերազմունքն և պատճառ սորինէ յոյժ պարզագոյն ուրգոն իմացուածք պարզունք։ Քանզի 'ի պատե-

թազմի սպասէլի միշտ բարւոյ յաղթութեան և փա-
ռաց, իսկ յայսմիկ յաղթանակի և պատուոյ երկն-
չէի զհակառակութեան ինչ բախտի։ Չինչ կարէի
կորուսանել՝ի պատերազմական մարտին, եթէ
ոչ զկեանն իմ, որ իր փոքրիկ իմն զոր ունին մար-
դիկք։ Իսկ՝ի յայսմ յաղթանակի միշտ, երկնչէի
՝ի կորուսանելոյ զհամբաւս, որ է պարգև մե-
ծագոյն։ զոր դիքն ետուն ինձ։ Ո՞հեթէ որքան
երանելի է այրն այն որ կորուսանիցէ զկեանն, ե-
թէ կորուսանելով զկեանն թողուցու իւրեանց զ-
համբաւս յաւիտենական։ Զգայցէ՞ ամ՞ զոր զայն,
զոր կամի զգալ, և ասիցէ՞ իւրաքանչիւր զոր զոր
կամի ասել։ զի՝ի մէջ արանցն քաջաբարոյից, և
փառասէրից, ոչ մեռանի նա, որ կորուսանէ
զկեանն, և թողու զհամբաւ և զանուն բարի,
և ոչ սակաւ կեայ նայ որ ունի զհամբաւ չար,
թեպէտ և ունիցի երկար ամօք զկեանս։ Եւ
դարձեալ ասեմ, զի հնագոյնք փիլիսոփայքն
ոչ համարէին զկեանս մարդկան մի՞ բաղմութեամ-
ամաց որոց անցուցեալք էին եթէ ոչ՝ի գործս
բարիս, զորս արարեալք իցէին։ Ես եղէ յոյժ
սաստիկեալ՝ի խորհրդարանէն, զի կամիցէի
ընդունել զյաղթանակս այս և ոչ դիտեմ, թէ
որն իցէ առաւել մեծագոյն, (որպէս դու բա-
ւոք գիտես) մաղթանքն նոցա. կամ ընդ դի-
մութիւնն իմ, և ոչ գիտես թէ վասն էր ու-
բեմն ճշմարտութիւն ասեմ՝ քեզ զի ոչ սրարի քան-
զի ոչ եմ ամբարհաւաճ՞ ամ՞ անարհամութեան
եթէ ոչ զուգ յերկիւղէ նենգութեամ մարդկան
Զի յաւուրն յաղթանակի, ոչ է այնքան հա-
ճութիւն խնդութեան որոցուցանեն փոքրա-
գոյնքն որքան է նախանձն, զոր թագուցանեն
մեծագոյնքն։ Անցանի փառքն այն յաւուր մի-
ում, և մնայ նախանձն՝ի բովանդակ յամն բարս։
Այն հարստագոյն թագաւորութիւնն Եգիպ-
տոսի, այնքան երանեցեալ արեամբ թշնամաց,
որքան էր ջուրն նեղոս գիտոյն, ուներ անբա-
նագտուելի, և անապական զօրէն, թէ ոչ եր-
բէք պարտէր խնայել զողորմութի գերեանցն յաղ-
թեցե-

թեցելոց, և ոչ տայի յաղթանակութիւն զորագլ-
խացն յաղթողաց։ Ցանկէն քաղդէացիքն զյաղ-
թանակն Հռովմայեցւոց, հաստատելով, թէ թա-
գաւորին եգիպտացւոց ոչ տայ զայնքան պա-
տիւ զորագլխայն յաղթեցելոյ, զորքան պատիւ
տայ Հռովմական Կայսերութեանն, զորագլխացն
իւրեանց յաղթողաց տալով նոցա զյաղթանակն
և ճշմարտաւոր ունին իրաւունք, Քանզի ողոր-
մելի զորագլուխն ահացուցանելով զթշնամին,
զորս ունէր Հռովմ'ի յերկրի օտարականի, սե-
փական դեղարդեամբ իւրով. վա՜ վարձատրուե՜ և
աշխատանաց իւրոց, ատանայ զթշնամիս 'ի տան
իւրում։ Երդնում ես զի զայնք զորագլուխք
Հռովմացիք ոչ սպանին զայնքան թշնամիս եր-
կաթեաւ, զորքան նախանձայ սիրոս ոտացան յաւ-
ուրն յաղթանակին իւրեանց։ Արդ թողցուք
զքաղդէացիսն, և եկեսցուք առ նախնիքն մեր
Հռովմայեցիք, որք եթէ կարիցէին դառնալ յաշ-
խարհ, առաւել կամիցէին երթալ կապեցեալք
զկնի կառացն որպ դերիք քանեթէ գնալ և բազ-
մել'ի վերայ նոյն կառին որպէս զորագլուխ յաղ-
թող։ Եւ պատճառ սորին է, զի տեսանելով
զինքն երթալ որպէս դերի, թշնառութիւնն
այն շարժիցէր զսիրտս դրացեայ իւրոց, զի
առնիցէին ազատել զնոյ, իսկ փառքն յաղթա-
նակին շարժեն զսիրտս, զի եղիցին հալածե-
ցեալք նոքօք։ Մինչ ընթերցայ զգրեանս, և
լուայ 'ի նախնեաց իմոց, և աեսի 'ի գրացիսն
իմ, զի առատութիւն յաղթութեանն մերոյ, պատ-
ճառէ զհոգատոյն նախանձաւորութիւնս առ
քաղաքս։ Ո՛հ թէ 'ի մէջ որքանից վանգիցեն
եղեալք նոքա, որք կամին երևիլ յատուկ պա-
տուոքք զինքեանս նշանակելով'ի մէջ այլոցն։ Զքան
որքան առաւել բարձրանան, այնքան առաւել
ցուցանեն նոցա հոգմունքն զզորութիւնս իւր-
եանց և շինուածք բարձրաշէնք առաւել բա-
խեցեալք լինին 'ի կայծակէ, և պահավիժեցեալք։
և 'ի լերինս յոյժ բարձրագոյնս առաւել զորա-
նան

նան խստութիւնք ցրտոց։ Կամիմ ասել, թէ ի նոսա, յորս առաւել յաճախէ բանտն յայսողութիւնք, այնքան առաւել հեղու նախանձն զմեծադոյն թոյնս իւր։ Զայս ունիցին հաւատոք առաքինիքն ամենեքեան զի որքան առաւել թշնամիս հպատակեցուցեն իրին հրապարակի, այնքան մեծապէս զնախանձ վաստակիցեն և ըստանայցեն ի համբաւս իւրեանց։ Սեծ ցաւակցութիւն է ունելի առն հզօրի, և առաքինւոյ։ քանզի բայց ի յաչխատանացն, զորս կրէ առ ի գոլ բարի, ի միոյ իրէ, որոյ միայն ի մահուանն տեսցէ զվաղճան, և իւն այն է։ զի մինչ նա որ ըստանայ առաւել համբաւ ի մէջ օտարաց, այնքան առաւել հալածեն զնա նախանձովք իւրայինքն։ Պատմէ Հուսէբիոս ի գիրս իւրս, թէ Կալ վիսիոս արքայն Արջնացոց, էր իմաստուն ի գիրս, և հզօրացեալ ի զէնս, զարդարեցեալ բազմաթ շնորհօք, և սիրեցեալ ի ժողովրդենէ իւրմէ, և ի վեր քան զամ մեծադոյն պաշտօղ, և ջերմեռանդ դիցն իւրոց։ Արքայս այս բարի ունէր զսովորութիւն, զի յամ իրա, զորս առնելոցէր, նախ երթայր ի տաճարս դիցն առ ի առնուլ ի նոցնէ զխորհուրդս։ ոչ ըստ սէր պատերազմ ընդդէմ այլոց, ոչ կարդադրէր զհրով արտաքս ի դաւառի իւրում, ոչ պատասխանէր դեսպանաց, որք դային առ նա, ոչ ըստանանէր զչարագործս, ոչ դնէր զհարկս ի վերայ ժողովրդոյն, եթէ ոչ նախ մատուցանիցէր զբազում պատարագս ի տաճարս առ ի դիտել զկամս դիցն իւրոց և որպէս զի։ Բազում անգամ առաքիցէր, և կամ ինքնին իսկ երթայր առ դաբերայան այսինքն տաճարս դիցն որոց հարցեալ եղև, թէ զինչ կամիր զորս այնքան ստիպէր աղօթիւք, առ յորս արքայն պատասխանեալ ասաց այսպէս, Ես խնդրեմ իդիցն, զի մի տայցեն ինձ այնքան սակաւ, որով ամենեքեան զիս բառնանիցեն, ոչևս տացեն այնքան բազում, որով ամենեքեան նախանձիցեն, եթէ

ոչ տայցեն ինձ զկացուն մի միջակօրէն որպէս զի ա-
մենեքեան սիրիցեն զիս։ քանզի, առաւել կամիմ
ունել զնկերակցութիւն ընդ բազմաց սիրով, քան
թէ լինիլ թագաւոր, և հրամանատու ամենե-
ցուն նախանձուք։

Յաղագս մեծագունի յանդիմանութեան մոց,
և ազդեցութեանէ, զոր Կայսրն ետ Քառաստի-
նայ կնոջ իւրում և դստերն իւրում
Լուչիլլայ։

Գլուխ Երեսունևվեցերորդ։

Բրև անցին վերոյ ասացեալք տօնայ խմ-
բութիւնքն յաղթանակին, Կայսրս այս
բարի, կամելով'ի սրտի իւրում տալ զվճա-
ռումն, և զաղդ առնել Քառաստինա և ան-
մեղ դստերն իւրում, որպէս զի մի' խա-
բիցին, և մի' ոք լուիցէր, հրամայեաց կոչել զնա
մեկուսի, և ասաց նոցա զբանս այս։ Ոչ հաճիմ
ես ընդ այն, ով Քառաստինա, զոր առնէ
դուստրն քո։ և ոչ սակաւ անհաճոյ թուի
ինձ այն, զոր առնես դու, որ ես մայր նոր։
Դուստր ոք առ'ի լինիլ դուստր բարի պարտի
գոլ հնազանդ մօրն իւրում։ և մայրն առ'ի գոլ
մայր բարի, պարտէ դիտել զարդացուցանել
յոյժ բարւոք զդուստրն իւր։ Ոչ են պիտոյք
հօրն տալ զնարատ դստերն յորժամ մայրն ինքն ա-
ռաքինի, և դուստրն ամօթխած։ Մեծագոյն
ամօթէ հօրն, որ գոլով այր, և կինն իւր գոլով
կին պատժիցէ զորդին իւր'ի ներկայութիւն հօրն։

և են

և են մեծ նախատինք մօրն, որ դոլով մայր, 'ի ձեռս մարդոյ պատժիցի դուստր նորա Եղև 'ի մեջ Ռոգոսացւոց օրէն, զի հայրն ոչ պարտ սիցէր 'ի զարդացուցանել զդստերս, և ոչ մարքն զուստերսն։ Եւ էր այնքան հաստատ օրէնս այս, մինչ զի բնակելով ամենեքեան 'ի միում տան; թէպէտ թէ հարքն ոչ ունիցեին զդստերս, և մարքն ոչ ունիցէին զուստերս։ Ո՛վ Հռոմ ես ոչ ողբամ տեսանելով զքարինս աւերեցեալս փողոցին քոյ; և զտանիսն քո խանդաբեցեալ, և զպատոսն քո փլեալ, զպարիսպն քո անկեալ և զանտառս քո այրեցեալ, և զբնակիչս քո նուազեցեալս, ոչ լամ ես վա՛ այսոցիկ, զի զայս ամ որպէս ժամանակն բերեալ, այնպէս և ժամանակն տանի։ Այլ ողբամ զքեզ և վերս տին դառնամ ողբալ, զի տեսանեմ զքեզ զրկեցեալ 'ի բարեաց հարց, և մոռացեալ 'ի զարդացուցչաց քո բարեպէս զորդիսն քոյ։ Անդ հայրենին մեր զվախճան էառ, և կորեաւ, յորժամ վարդապետուն ուսուցաց, և դստերաց մերոց սկսաւ թուլանալ այնքան, մինչ զի ամենեցուն պատկառութի ուստերաց, և անամօթխտութի դստերաց, նաև անպարկեշտութի մարդ։ Ո՛հ, ո՛հ, ուր հայր մի միայն վասն քանից ուստերաց, և մայր մի միայն վասն երեսնից դստերաց բաւականք էին, այժմ քանի հարք վասն ուստեր միոյ, և երեսուն մարք վասն դստեր միոյ ոչ համարձակին առ 'ի բարւոք սնուցանել զնոսա։ Զայս ասեմ վա՛ այսորիկ, զի դուս փաստս տինա, ոչ յիշելով զքեզ թէ իցես մայր, տուս առաւել զարձակութի քան որ վայելէ դստերն քում, և դու Լուսիլլա ոչ յիշելով զքեզ թէ իցես դուստր, ցուցանես զքեզ առաւել լուծեցեալ, քան որ դուստր գոլոյն քում պատկանի, և պի տոյանայ։ Մեծագոյնք պարգևքն, զորս դիքն հուսն տիկնացն Հռոմէացւոց էին։ որպէս զի վասն գոլոյն իւրեանց կին իցէին ամօթխածք, և գոլով ամօթխածք իցէին սիրօղք առանձնա-

կացութեան։ Յաւուր որում պակասիցէ 'ի կանանց երկիւղ դիցն 'ի դաղտնի, և ամօթն 'ի մարդկանէ յայտնապէս, հաւատայցեն ինձ, զի կամ իւրեանք յաչխարհս, կամ աշխարհս ինոսա իցէ աւարտեալց։ Զայնքան հարկաւորութիւն ունի իրն հրապարակի, զի կանայքն որք մնան 'ի տան, իցեն համեստք, որպէս զորագուխքն, որք ելանեն 'ի տանէ են հզօրք, զի նոքա ելանելով ջատագովեն։ Իսկ կանայքն մնալով 'ի տան պահպանեն զտունն, և զինքեանս։ Եւ նոյնպէս ամէն չորք յորս զանցեալ մահ տարաժամն տեսցէք, հրամայեցի թուել զժողովուրդն, և գտին զի հարիւր և քառասուն հազար կանանց ունողաց զկեանս բարիս, ութսուն հազարք էին մեռեալք։ Եւ 'ի տան հազար կանանց ունողաց զկեանս անպարկեշտս դոնեայ ամենեքեան փրկեցան։ ոչ գիտեմ, թէ զսրն 'ի նշոյլ ողբայցեմ յառաջագոյն, զպակասումն այն սիրեաց բարեաց կանանցն զոր առնեն յիրին հրապարակի, կամ խանգարումն, զոր առնեն չարքն 'ի յանձինս երիտասարդացն Հռովմէացւոց։ Ոչ միասէ այնքան հուրն էթնայ լերինն նոցա, որքան կանէ մի միայն կին 'ի միում փողոցակին Հռովմայ։ Գանանաբարու կենդանի, և վտանգաւոր թշնամի է վաղաղուն կինն յիրին հրապարակի։ Քանզի կարող է պատճառ լինիլ եմիայն բաւականէ առնելոյ զբազում չարիս։ Ոչ է ընդ ունակ առնելոյ զիր ինչ բարի։ Ոհ թէ որքան թագաւորութիւնք, և թագաւորք կորեան որպէս ընթեռնումք, վասն չարաճճկութեան միոյ կնոջ, ուստի առ 'ի գտանել ճար և դեղ յաղագս այսր իրիս։ պիտոյք եղեն խոհեմութիւք, վտանգ, աշխատանք, և ուժգնութիւք բազմաց արանց արիացելոց։ Հապա մայնք մոլութիւք 'ի կնոջ միում, են որպէս արքայական կանանչ որ կորանայ։ բայց լուծմունք։ և անամօթխածութիւնքն են որպէս փայտ չոր։ որ 'ի կեռացնելն խորտակի։ ուստի այսպիսիքս մինչ առակացին կարեն կարծրանալ, բայց ոչ

երբեք

երբեք ուղղեցին։ Նայեաց, ով Քառաստինա, ոչ գոյ այնպիսի ատեղծուած, որ առաւել ցանկայ պատուոյ, և զպակաս համարիցէ զերն ընդ որով շահի, որպիսի է կինն։ որպէս զի ճշմարիտիցէ այս, տեսցուք ընդ իրաւամբ, և արգարութիւն։ Այր մի ատենաբութիւն գրելով, շաբադրելով ճանապարհորդելով և շրջելով զաշխարհ։ զերկիր ընդ ձեռամբ նուաճելով կարէ առնել զինքն համբաւաւոր, քայց կանայքն ոչ գիտեմ որով իրաւ էարտացեն ունիլ զբարի համբաւ, եթէ ոչ խօսելով և բարբանջելով, Մինչև այժմ ի գիրս հնագունից, և նախնեաց զանկաւուց, կամ ոչ գտանիք կնոջէ ընթերցաք, թէ 'ի ձեռս գրելոյ կարդալոյ խմբելոյ, կամ մանելոյ կարելոյ և քաշուած առնելոյ թողեալ իցէ զմեծագոյն համբաւ իմն։ քայց ոչ ասեմ մինն առացից և միւսն իրաւի 'ի բազմաց ընթերցաք, զի թողին կանայքն բարի համբաւ մի գոյոյն ներփակեցեալք 'ի տունս իւրեանց, և պարապեցան 'ի պաշտօնս իւրեանց, չափաւորք եղեն 'ի խօսակցութիւնս իւրեանց, հաւատարիմ առն իւրեանց, հանձարեղ յանձինս իւրեանց, խաղաղասէրք 'ի մէջ դրացեաց, և վերջապէս զի եղեն համեստք, և ամօթխածք 'ի մէջ իւրայնոց, և օտարականաց, որոց սակս ժամանեցին մեծագունի համբաւոյ իկեսնս, և թողին զյաւէտ տենական յիշատակ զկնի մահուան իւրեանց։ Արդ ասացից զպատմութիւն մի հնագոյն այնքան օգտակար, առ խանձահարել զմոլութիւնս մեր այժմ որպէս եղև յայնժամ առ 'ի յաւելուլ զառաքինութիւնս այսքան։ 'Ի թագաւորութիւնն Լաչէդեմոնացւոց, (ըստ որում պատմի ՇԾայինն պղատոն) եղև 'ի ժամանակի միում այնքան և այնքան մեծ անհամեստ, և լրբացեալ անզգամութիւն կանանց, որքան էին վատահամբաւութիւն, խստութիւն, և անգթութիւն մարդկանց, և էր իրակութիւնն 'ի յայնմ աստիճանի որք յամենեցուն անուանեալ կոչէին բարբարոսք։ ոչ

զմայրն իւր ; այսինքն երկիրն յունաց կոչէին Փի-
լոսոփայ Փիլիսոփայից : Լիքուրգոս յոյժ իմա-
տուն Փիլիսոփայն գիտութիւն , և յոյժ արդար-
թագաւոր 'ի կառավարութեան որոյ մինն ընդ , ող-
ջամիտ վարդապետութիւն և միտան ընդ վարուքն
իւրովք մաքաղուներիւք արար զօրէնս յայնմ
գաւառին , որովք ապահովեաց զնամ մոլու-
թիւն , և ունկեաց զնամ առաքինութիւն : Ոչ գի-
տեմ , թէ որն 'ի նոցանէ եղև առաւել երջա-
նիկ 'ի յերկուցուցանն , այսինքն թագաւորն ունե-
լով ժողովուրդ այնքան հնազանդեալ , կամ գա-
վառն ունելով զայնպիսի թագաւոր արդարա-
գատ : Ի մէջ այլոց օրինացն կանանց արար
զայս յոյժ հանգաւուն : Հրամայեաց , զի ոչ
ումեք դասեր հայրն թողուց որ զօժիտ 'ի ժամ
մահուան իւրոյ , ոչ և ամուսնացուցանիցէր զաղ-
ջիկն իւր ընչիւք իւրովք մինչ կենդանիէր , զի
ամուսնութիւն աղջկան իցէր ոչ վասն հարստութե-
օժտին , այլ վասն մաքրութե կենաց նորա , ոչև
վասն գեղեցկութե , այլ վասն առաքինութե :
և որպէս այժմ մնան բազումք առանց ամուս-
նանալոյ , վա՜ աղքատութե , նոյնպէս յայնժամ
մնային վա՜ վատահամբաւութե , և մոլութե :
ոչ ժամանակ արժանի , և ցանկալի , յորում
կանայք ոչ յուսային 'ի ստացուածս հարց իւր-
եանց , այլ յառաքինութիւն , զոր անձամբք իւ-
րեանց արդիւնաւորէին : Եւ դարձեալ ասեմ ,
թէ էր ժամանակն այն , ժամանակ ոսկի ստատ ,
յորում ոչ գուսարն երկնչիւր 'ի ժառանգահա-
տութենէն հօրն 'ի կեանս իւր , և ոչ հայրն
մեռանէր թախանձանաք սրտի վա՜ թողլոյ ըզ
գուստրն իւր թարց ճարակութե 'ի մահուան :
Ո՞հ հռոմ , անիծեցեալ լիցի նա , որ յառաջա-
գոյն էբեր զոսկիս խոտոնն քո , և անիծեցեալ
լիցի նա , որ յառաջագոյն դանձեաց զդանձս 'ի
դանձարանս քո , որ արար զքեզ այնքան
հարուստ փարթամութիւ , և այնքան աղքատ
առաքինութիւ : Ո՞ տարար արդեօք , զի ամուս-
նա-

նանայցեն դստերքն գռեհկաց, և շինականաց։ Եւ մնայցեն յամուսնանալոց դստերքն Ծերակուտից խորհրդարարսին։ ի արար զի զդստերս փարեցա մաց խնդրեն ինքեանք ոչ կամելով, և զդուստր աղքատին ոչ ոք կամի ինքն աղերսելով։ ի արար զի յառաջագոյն ամուսնանայցեն մանաւանդ մինն հինք հարիւր դահեկանաց, քան զմիուսն որ զար դարեցեալէ տասն հազար առաքինութիւն։ Ու բեմն ոչ ասացուք թէ ասա մարմինն յանձիկ ըզ մարմին, այլ մանաւանդ ունայնութիւն է յաղ թեցեալ՝ի նենգութիւնէ, քան զի ագահ ումն այսօր առաւել կամի զկին մի հարուստ, և տգէղ, քան թէ զայլ աղքատ, և գեղեցիկ։ Ով վատաբախտք կանայք, որք՝ի ժամու ծնելնդեան ցաւին երկ նելով, և առաւել վատաբախտք դստերք, որք ծնանին վասն ամուսնանալոյ ընդորոց ոչ ընդունին՝ի համարումն. արեան նախնեաց, ոչ օգնականութի ապագանաց, ոչ ուշմութի գործոց ոչ գեղեցկութի անձանց, և ոչ մաքրութի կենաց իւրեանց։ Ո՜հ ժամանակ անիծեցեալ, յոր բում դստուր ոմն բարի ունելով զանձն իւր երա նելի եթէ ոչ ունի զդրամս, ոչ կարէ գտանել զայր։ Ուրեմն ոչ պարտեր գոլ այսպէս վա՜ զի՝ի յառաջնում ժամանակի, մինչ խոսէին զա մուսնութիւնք, նախ ընտրեանէին, և զհարցումն առնէին զանձանց, յետ այնորիկ զընչից, այլ ոչ որպէս այժմ՝ի յանիծեցեալ ժամանակիս այս միկ, յորում նախ և յառաջ ընտրեալ զընչից։ ապա թէ յետոյ զանձնէ։ Նոյնպէս՝ի յայնմ ան կէ զօծ դարումն նախ և յառաջ խոսէին զառա ջնութիւնք անձին, և յետ այնորիկ յետ ամուս նութիւնք, և որպէս՝ի ծագրի ի ծագրէ խոսէին զընչից, և զդրամից։ Մինչ կամիլս յաղթեաց զդալիսցիսն, ոչ ունէրաւելի քան զորդի մի։ որ էր այնպիսի ոք արդեամբ անձին իւրոյ, և համբաւով հօրն իւրոյ, մինչ զի բազումք թագաւորք ցանկային առնել զնա որդի գիր, և բա զումք

զուամք 'ի ծերակուտիցն ընտրել զնա 'ի փեսայուն թի։ և գոլով ամաց երեսնից, և հայրն նը ուներով զամն առաւել քան զվաթսուն, և եղև յոյժ սատիպեցեալ հայրն 'ի բնական ազգականաց, և 'ի թագաւորաց օտարականաց եթէ կամիցէր ամուսնանալ, և ամուսնացուցանել զորդին իւր իսկ նա միշտ հրաժարիւր զնորհրդակցուն բաբեկամաց և 'ի բաց մերժէր զտիպուն օտարական նաց։ և եղև հարցեալ, թէ ընդէր ոչ եգերէր 'ի յամուսնութիւն իմն առ 'ի տալ որդւոյն զկեանս հանդարտ, և զհանգստութիւն ծերութիւն իւրում։ Սա յորս պատասխանեաց բանիւքս այսոքիւք։ Ոչ ամուսնանամ ես, ոչ ևս ամուսնացուցանեմ զորդին իմ, զի ոմանք մատուցին ինձ զդուստրս հարուստս, այլք զդստերս ազնուականս, այլք զդստերս նորահասակս, և մանուկս, և այլք զդստերս գեղեցիկ տեսլեամբ։ բայց ոչ ոք 'ի նոցանէ ասաց, թէ տացեն զդուստր մի առաքինի վարուք։ Իրաւի Կամիլոս արդիւնաւորեցաւ զպաղթականն այն, զոր արար, բայց առաւել արդիւնաւորի զմշտնջենաւոր յիշատակ վասն այսորիկ, զոր ասաց։ Կամիմ ասել քեզ քառաստինա, թէ վասն այսորիկ ասացի զայս ամ, զի դու կամիս տանել զդուստրքո 'ի թէաւորոնն, և երանեա 'ի վերայ Կամպիտոլն, և հաւատաս զնա 'ի մէջ զինուորացն պահապանաց լինել, և թողուս զնա տեսանել 'ի կատակարկուաց։ և հանդերձ այսու ամենայնիւ ոչ յիշես, թէ նա գոլով երիտասարդուհի, և դու ոչես պառաւ, երթայք 'ի զբօսանուլ 'ի փողոցակս, և 'ի եզրս դեռոյն։ ես ոչ զբաղարտեմ զդուստր քո թէ իցէ վատթար, այլ ասեմ թէ դու տաս նմա առիթ, զի մի՛ լիցի բարեգոյն։ Հաւատաս ինձ քառաստինա, թէ յայամ պատանուն մարմնոյ մի՛ հաւատար երիտասարդութիւն, և մի յուսացիս ծերոյ ուսքէ վասն զի ոչ գոյ ճշմարտութիւն 'ի յամանն եթէ ոչ փախչիցն 'ի տեղւոջէ, և 'ի ժամանակէ, ուր իցեն կասկածանք։ Վասն այսորիկ կուսանքն վէստալիք են առանձնացեալք 'ի մէջ

'ի մէջ բարձրադոյն պարապաց, առի փախչել 'ի յառաջիցն հրաշալարակին։ Լուտի ոչ որպէս խելագարքն հեռանան և անդնդոտին եթէ ոչ որպէս խոհեմքն փախստական լինին։ Մինասկիզ տղոյն թէ տղայեմ և առաքինի, և միասիրեցէ ծերն, թէ ծեր եմ և յուժ վատակեցեալ։ Քանզի հարկաւորք են, զի քաջաբանն չորացեալք, այրիլ 'ի մէջ բոցոյ հրոյն, և փայտն կանաչ մնանալ 'ի մէջ կայծականց բորբոքեցելոց, կամիմ ասել թէ այր ոք, թէ և իցէ պատուական գոյն քանզ քարն անդամանդեայ զետեղել 'ի մէջ ոսկոյ, հարկաւորի 'ի մէջ մարդկան և հեշտացեալ փափկանայ, մինչ լինի ընտանեցեալ ընդ կանանց։ Ուշկարեմք սուրանալ զի 'ի հրոյն թէ և 'ի բաց բառնայցեն զփայտն և շիջուսցեն զդրծելիսն, սակայն, միշտ, ջեռուցեալք մնան քարինքն։ Այն դուռնակ մարմնոս այս թուռնաւորեցեալ թէ պէտ պատժիցի ախտիւք հիւանդութեամբ, և ցամաքիցի բազմօք աշխատանօք և տառապանօք և մաշիցի ամօք բազմօք, սակայն միշտ մնայ 'ի նմին շանթն ցանկութիւն, և ս 'ի մէջ ոսկերաց։ Զինչ պիտոյանայ մեզ պարծիլ զառաքինութեամբ, և ուրանալ զբնութիւն մեր։ Իրաւի ոչ գոյ երիվար այնքան երկչոտ, և անդամանայծ, որ տեսանելով զմատակ ձի մի, ոչ տացէ զոյգ իմն հառաչանաց, և խրխնջայցէ։ Ոչ գոյ ծեր այնքան ծերացեալ, և ոչ մանուկ այնքան առաքինի, որք տեսեալք զաղջկունս ոչ տացեն զգոյդ մի հառաչանաց, և ոչ վրդովիցին։ Ի յիրս կամաւորս, ես ոչ բաց ասեմ. թէ որ ոչ կարիցէ գոլ առաքինի։ Բայց 'ի յիրս բնականս և բնութիւնականս խոստովանիմ, իւրաքանչիւր ոք գոլ յոյժ տկար և բեկանաւոր։ Մինչ բարձցի փայտն 'ի հրոյ, դադարեսցի 'ի յայրելոյ։ Մինչ եղիցի խաղաղութիւն 'ի ծովի, թողցեն զուրքն զալէկոծութիւն։ Մինչ ծագիլ արեգակն, լուսաւորի զտիեզերս։ Մինչ գոյ ամառն, թողու ձմեռն զնստուերն իւր։ Կամիմ ասել, թէ յայնժամ և ոչ յառաջագոյն թողու մարմինն զայլ զվիշտս, և զնեղութիս,

թիւ , մինչ տեսանիցեմք յապիշտակեցեալ և ե-
գ՚ալ ՚ի գերեզմանի : Ի մարմնոյ եմք ծնեալք ,
՚ի մարմնի կեամք , և մարմնով մեռանիմք : Ուս-
տի հեռուի , թէ նախ աւարտի կեանն մեր քա-
րի , քան զմարմնին մեր չար : Բազում անգամ
կերակուրք սխորժք , և փափուկք ապականին
՚ի մէջ վատթար լճիմոց , և լաւ գինիք առնուն
զհոտ ինչ ՚ի վատթար ամանէ , Կամիմ ասել , թէ
որքան յոյժ մաքուր , և գերազանցք իցեն գործքն
կենաց մերոց , միշտ տան զվատթար հոտ ինչ
զնիւթի այսմիկ չար և տկար մարմնոյ : Զայս ասեմ
Քառաստինա , զի ՚ի վերայ յառնուն մարմնոյ
ոչ կարէ ընդիմանալ արդեւական պարիսպն բռե-
ցեալ , ՚ի գործարարդոյն կաւոյն հնապոյն ՚ի ծերոց ,
որպէս ճնչիցէ , և ըմբերիցէ զյենուն գերա-
նափակաց գործեցեալ ՚ի յանդամոյ յոյժ փափ-
կացելոյ : Զլուծն զոր ոչ ըմբերեաց եղն , որ-
պէս ըմբերեսցէ զայն հորթն : Նոյնպէս , եթէ
գուռ ոչ եւանիցես ՚ի ձեռաց գոլով մայր , ոչ ել-
ցէ նայ գոլով գուսար քո : Տիկնայքն Հռովմա-
յիք եթէ կամիցին բարւոք սնուցանել զգաստես
իւրեանց , պարտին պահել զկանոնս այս : Մինչ
տեսանեն երեթալ զնոսա , խորտակիցեն զբար-
ձան , եթէ կամիցին հայիլ : հանցեն զաչսն :
եթէ կամիցին լսել , խցիցեն զականջն , եթէ
կամիցին տալ , և առնուլ , հատցեն զձեռսն .
եթէ համարձակիցին խօսիլ , կարիցեն զշր-
թունսն , եթէ կամիցին զփորձ առնուլ զանզ
դամութիւն , կենդանոյն թաղիցեն զնոսա :
քանզի դստերացն վատաշուեարից , փոխանակ
օժտի պարտեւ տալ զմահ , փոխանակ զդեստուց
որթունս և փոխանակ տան զգերեզման : Կայեաց
Քառաստինա , եւ տամ քեզ զխրատս , եթէ կա-
միս ունիլ զբարի խնդութիւն ՚ի դուստրն քոյ ,
հատ զպատճառս , որ կարէ առնել զնայ վա-
տաշուեար : Վա՜յ հաստատելոյ զտուն մի , հարկա-
ւորք են բազումք յենմանք , և սիւնք նպաստա-
ւորիչք , յորմէ բառնալով զմիւն մի միայն , ան-
կանի

կանի 'ի դեռին տուն բոլոր 'ի յաւերումն։ Կա-
միմ ասել, թէ են այնքան տկարք կանայքն, մինչ
զի հազար պահապանօք, հազիւ կարեն պահպանել։
և միով փոքերք պատճառաւ բոլորովիմբ կորու-
սանեն զինքեանս։ Ոչ թէ որ քանիք վատթա-
բացան, ոչ վա՜ այնորիկ զի կամեցան լինել եթէ
ոչ վա՜ զի եդին զինքեանս 'ի յայնպիսի առիթս
տեղոյ, և ժամանակի յորում ոչ կարացին յե-
տոյ 'ի բացկալ 'ի վատթարութէ։ 'Ի ձեռս իմէ
մտանել 'ի պատերազմ, բայց ոչէ 'ի ձեռս իմ ժա-
մանել 'ի յաղթանակն մարտին։ 'Ի ձեռս իմ է
մտանել 'ի ծովն, բայց ոչէ 'ի ձեռս իմ դերծա-
նել 'ի վտանգացն։ 'Ի ձեռս կնոջ է դնել զինքն 'ի
յաւիթս, և տալ զտեղի պատճառանաց։ բայց
յետ դնելոյն, զթողութի չնորհիցէ զի ոչևս է
'ի ձեռս նորա փրկել զինքն 'ի յանցանաց և 'ի
մեղաց։

Կայսրն յարատևէ զզրուցատրութիւնս
իւր և խրատէ զՔաւստինն ,
զի հատցէ զառիթս զդստերէ
իւրմէ ։

Գլուխ Երեսունևեօթներրորդ ։

Երևա ասիցես ինձ , Քաւստինա , թէ ոչ ոք կարողէ խօսիլ ընդ դստերն քում Լուսիլլա առանց լսելոյ քոյ , և ոչ ոք կարէ տեսանել զնա , թարց տեսանելոյ քոյ , և ոչ կարէ թաքուցանել զինքն թարց գտանելոյ քո ։ ոչ ևս կարէ ընձեռել գաշինս , առանց որոց զգայցես դու ։ Եւ այժմ յայսցանէ գիտացիր զի նոքա որք կամին զչար , լեզուս ոչ խօսին , և նոքա որք սրտի մտօք սիրեն , միայն սրտիւ խօսին զի սէրն նորագոյն , որ 'ի նորագոյնի արեան բուսանի և կանաչի 'ի յեղանակի գարնան մանկութեան ։ Եթէ նոյն ինն , որ իսկոյն հեղանի 'ի բոլորը երա կուանն ։ Է մահագեղ իմն խատ որ իսկոյն տարածի ինչերս յորովայնին և ուշաթափութի մի , որ իսկոյն զզրգէ զանդամսն , ժանդամահէ , որ իսկոյն սպա նանէ զսիրտս , և վոխճան մի է , որ տայ զվախճան ամենից հանճարեղաց։ Ոչ գիտեմ թէ զինչ խօսիմ թէպէտ զգամ զոր կամիմ ասել ։ Քանզի ոչ երբեք պանծայ սէրն լեզուաւ ։ եթէ ոչ ի՞նչ յոյժ վիրաւորեցեալ նոսաւ ներս նային սրտի ։ Ասէր Օվիդոս ։ 'ի գիրս արհեստին սիրոյ ։ թէ սէրն է իր մի , որ ոչ գիտեմ զինչ ի՞նչ ուստի՞ գայ ։ ոչ գիտեմ յումմէ առաքի ։ ոչ գիտեմ ուստի՞ ծնանի , ոչ գիտեմ որպէս հաւանեցեալ լինի ։

ոչ գիտեմ ընդ ոմ, նասի, ոչ գիտեմ երբ ըսսլ
անեմ, ոչ գիտեմ վասն էր, Վերջապէս, սէրն
թիւնաւորեցեալ թարց պատասուելոյ զմարմինն
արտաքուստ, ցամաքեցուցանէ զարիւնն ներս
նային 'ի յաղեն։ Ես ոչ գիտեմ, թէ զինչ կամի
ասել աստ Օվիդիոս, բայց զայս գիտեմ, զի
մինչ ասէր զբանս այս, էր այնքան յանշտակեալ
ցեալ, և աքսորեցեալ սիրտ նորա 'ի յինքեան։
որքան ես եմ այժմ 'ի յիս։ Օհ Քաւաստինս,
նոքա որք կամին սիրել միմիանց յոյժ, 'ի յաւ-
տարակէ հսկման սրտից իւրեանց մուխտանեն
'ի մէջ երազի զրուցատրեն, ակնարկութեամբ և
նշանաւ ազդեն զմիմանս։ Բազումք ձայնք ար-
տաքինք նշանակեն զսէրն գող փոքրագոյն 'ի
ներքս, իսկ սէրն բազում գոլով 'ի ներքս, դնեմ
զլուռն 'ի յարտաքս։ Աղեկքն գալարեցեալք 'ի ներ
սուստ սիրով առնեն համր զլեզուս 'ի յարտաքս։
և նա որ սիրով վարեմ զկեանն իւր, ունելոցեմ
զբերանն իւր փակեցեալ։ ուստի մի՛ կարծեր,
թէ ես ունայնաբանիցեմ ընդ քեզ, և զայս կամիմ
փորձաւութիւն ցուցանել քեզ 'ի ձեռս հնագու-
նից պատմութեանց։ Գտանին 'ի գիրս նախ-
նեաց մերոց, թէ յամի 270. յորս հիմնեցաւ
Հռոմ, թէ երիտասարդ մին Հռոմայեցի Ե-
թրասկո կոչեցեալ գոլով համր, և 'ի Սալոն
երկիրն գաղմատացոց կայր գեղեցիկ կին մի կոչ-
ցեալ լատինա, էր ևս նա համր, տեսանելով
զմիմիանս 'ի Մենթէչելիս 'ի տունախմբութեան
միում սկսան սիրահարիլ ընդ միմիանս, և ոչ
հեքնութիւն քանզի եղեն այնքան արձակեցեալք
սիրտք նոցա 'ի սէրս, որքան կապեցեալք էին
լեզուք նոցա 'ի խօսիլ։ Էր իրաւի իր գարմա-
նալի յայնժամ 'ի տեսանել, և զարհուրելի
աստ նշանագրերն։ Չի կին դայր 'ի Սալոնէ
'ի Հռոմ, և երիտասարդն 'ի Հռոմայ երթայր
'ի Սալոն քաղաքն անգամ և երկարութիւն, ժամա-
նակաւ երեսնից ամաց, առանց գիտելոյ ուրուք
և թարց խօսելոյ նմա, մինչև 'ի մեռանիլն առն լա-

տինայ և կնոջն Էթրասկոյ։ Եւ գոլով յայտնե-
ցեալ իրն, ընձեռեցին, և պատրաստեցան ա-
մուսնանալ ընդ միմիանս։ Երկուք հաներքս այ-
ռբիկ և ծնան զորդի մի, յորմէ սերեալք ածե-
ցան բարեբախտք տոհմանքն Ըշկիպիոնացն մի-
ջոց, որք եղեն առաւել զգաստք զինուք, քան
զծնօղն իւրեանց կապակցելեալքս։ Արդ նայեաց
Ի յիրս այնքան բարձրագոյնս, զի այսոց երկոցունց
համերցս վասն ճաշակելոյ զսէրն իւրեանց սակաւ
փոյթ իցէր եթէ հատանիցէին զնեղուս իւրեանց
որոց բաւականեր, զի մի՛ արտահանիցէին զսիրտս
իւրեանց։ Աստուց ուրեմն և Սասինիսա աղ-
նիւ ձիավարն Նումիդիանացի, և ԼոփՇՆիսբայ
մեծահամբաւ տիրուհին Կարթագինացի, տե-
սանելով միանգամ միայն զմիմիանս 'ի վր՝ աստի-
ճանի մերոյ, յայտնելով զցանկութիս իւրեան
միմիանց։ մինն յայտնեաց զցանկութիւն իւր և
միւսն տալով նմա զհաւանութիւն, խորտակեցին
զթինն երկիւղն, և համբարձին զնարիսխն ամե-
թոյ, և իսկոյն պատրաստեալ զառագաստն սր-
տից իւրեանց, նաւքն անձանց իւրեանց միա-
ւորեցեալք շաղկապեցան։ Կարեմք յայսմանէ
համահաւաքել, թէ նախկին տեսութիւն աչաց,
և ճանաչումն անձանց իւրեանց, և կապն սրտից
իւրեանց, և շարաղուղումն մարմնոց իւրեանց,
և կորուստն կացութեանց իւրեանց, նա և խայտա-
ռակութիւն համբաւոյն իւրեանց, 'ի միում աւ-
ուր, և 'ի միում ժամուն, և 'ի միում վայրկեա-
նոջ, և 'ի միում քայլի 'ի վր՝ աստիճանին համա-
խոհք եղեն 'ի միասին։ Արդ զինչ աւելի կամիս
դուք ասել զ ասիցեմ քեզ յայսմ առաջագրուեալ։
Ոչ դիտես դու, թէ հեղինայսն, և փարէզ Տրո-
եանացին, գոլով այնքան օտարք երկոքեանքն
ազգացեղութեամբ, և այնքան հեռացեալք յերկ-
րէ 'ի միմիանց, միայն տեսանելով միանգամ ըմ-
միմիանս 'ի տաճարի միում, կացին և մնացին կամքն
նոյ այնքան կապակցեալք, մինչ զի, կինն եղեալ
դեր 'ի նմայ և նա եղև բանտարգեցեալ իւր։ 'Ի

փարէզ

փարէզ երևէին սակաւ ուժեղութիւնք, և 'ի նմա սակաւ ընդդիմութիւն։ Ուստի իմանկանեցայոյս ցանել, մինն ջանայր յաղթել, և միւսն թոյլ տայր դոլ յաղթեցեալ։ Փարէզ եւս զզրաւ վա՜ հօր իւրոյ, և հեղինէ եւս զվատահամբաւութիւն առն իւրում, և երկոքեանքն զմահ ինքեանց, և զկորուստ դաւառաց և թագաւորութեց իւրեանց, և զգայթագղութիւն ընդհանուր սիրելեաց, և զպատճառն այսքան աւերման եղև մի միայն տեսողութիւն։ Յորժամ մեծն Աղեքսանդր կամեցաւ պատերազմել ընդ Ամաձոնիսն, որք էին կանայք քաջամարտիք, դոլով թագուհին նոցա զօրագլուխ, և ոչ սակաւ գեղեցիկ, և կորովի և կալով առ եղբն գեստոյ միոյ երկարաբաժամու միոյ սկսան հայիլ զմիմիանս աչօք իւրեանց թարց խօսելոյ զբան ինչ լեզուաւ, բարբոքեցեալք սիրով առփողականաւ դարձան 'ի բանակս իւրեանց, և սրտմոութիւն, զօրագլխաց, դարձաւ 'ի դգուանս սիրահարեցելոց։ Մինչ Փիլոս հաւատարիմ նպաստաւորին Տարէնթինու, և արքայն մեծահամբաւ Էփիրոթաց կայր Իտալիա, և եկեալ 'ի քաղաքն Պարտենուպոլիս, բաւ որում քննեցեալ եղև, ոչ յառաջ, և ոչ յետոյ եկաց անդ, եթէ ոչ օր մի միայն։ Յայնմ ժամանակի կայր տիկին մի յայնմ քաղաքի կոչեցեալ Գեմիլիսիա, 'ի մեծատոհմ յարենէ, և յոյժ պատուեցեալ դեղեցկութիւն. միայն յաւուրն այնմիկ ողորմելին եղև յղացեալ, և բոլոր Իտալիա եղև վատահամբաւեցեալ, և եղև 'ի քաղաքէն արտաքսեցեալ, և զկնի ծնանելոյն 'ի ձեռն եղբօր իւրոյ եղև խեղդեցեալ։ Կէսօպատրա 'ի դաւառին Բիլիկիոյ, և 'ի յանտառին Սէֆիմի արար յոյժ մեծահռչակ հրաւիրումն և խրախճանութիւն Մարկանդոնի բարեկամին իւրոյ։ և թէպէտ ինքն ոչ էր այնքան յոյժ համբաւ, սակայն զիւրայինսն պահէր յոյժ ներփակեցեալս։ և յարտուեալով խրախճանն մինչև 'ի մեծագոյն մասն գիշերոյն. և գոլով անտառն

յոյժ թաւ և խիտ առխիտ տերևաք, եւ ոչն զայն քան կերպիւ հնարս կանայքն թաքուցանելոյ զնոսա, և երիտասարդքն Հռոմայ հետաքրքրեալք սա՛ի գտանելոյ զնա՝, մինչ զի՛ի վաթնից դատերացն ծերակուտից, յիսուն և հինգքն եղեն յղացեալք՝ի մէջ փչոց։ Որոյ յաղագաւ եղեալ մեծ դայթակղութի՝ի ժողովրդեան, և աճեցումն խստասակութեանն, Կէսարատրոյ, և նուազեցաւ հաւատարմութիւն։ Մարկանաւնու։ Եւ զոր ասացի զայսցանէ սակաւուց, կարեմ ասել զայլոց բազմաց։ Ոչ՝ամ մարդ մարդէ։ ոչ և՝ամ կին կնէ։ Զայս, ասեմ՝ վա՝ որոյ կամիմ ասել, դիպիցի ումն դիպիցի, և՝ի մանայցեն որք կարեն իմանալ։ Գոն նաւք երբեմն այնքան թեթևք մինչ զի սակաքուք հողմովք իւրք ընթանան։ Եւ գոն ջրաղացք այնքան նրբայոյնք, մինչ զի փոքերքք ջրովք իւրք աղան։ Կամիմ ասել թէ գոն կանայք ոմանք այնքան վոնդաւորք, մինչ զի որպէս զչիղ, կամ ասպակի միոյ տակառ իրաք խորտակին, և փորձեցեալք յոյժ փոքերքք սղմաւ իւրք սահին և սղտեղին։ Ասասցես թերևս, ով քաւաստինա, թէ գուստր քո ոչ թողուս խօսիլ, եթէ ոչ ընդ հօր եղբօր իւրում, և ընկերակցութիւն շրջագայիլ, եթէ ոչ ընդ որդւոցն քերդ մօր իւրոյ։ ասեմ՝ քեզ յայսմիկ գիպուածնոջս, թէ զայնքան պատրուակ ունի մայրն, զորքան վոնդ ունի գուստրն։ Արդ գիտեա, զի հուրն յոյժ հրդեհեցեալ, ոչ միայն ոչ խնայէ գալոյ, կամ չոր փայտից, այլ ոչ զվէմն ապառաժս թողու առանց մաշելոյ։ Ոչ գիտես, զի յանկարծահասքաղցն անասնոց, զձագս զրոս ծնան յորավայնէ իւրեանց, ատամաք իւրեանց պատառեն։ Ոչ գիտե՞ս. զի յամիրս զիրքն տիչք օրինաց, եդին զորէնս, բայց խէրն, զի ոչ հանդուրժին օրինաց նոքա։ որք ախրահարեցեալք են։ Իրաւի է իր արդար, ուրեմն Հռոմ ոչ դատապարտէ զնեղչաւարսն, վա՝ զի ոչ ունին զնեղչաւ և դիքն ոչ պատժեն զսիրահարսն։ ուրեմն զը-

կեալք են զնա՝ ի զգայմանէ։ Ոչ գիտես դու գոլով
ես վերատեսուչ քաղաքիս, աղջիկ մի ծնաւ յղա-
ցեալ՝ ի հօրէ իւրմէ, և մայր մի՝ ի սեփական որ-
դւոյ իւրմէ, և դուստր մի հօր եղբօր յղացաւ՝ ի
յորդոյ հօր եղբօր իւրոյ։ ԵՒ ետու զդատակնիք,
և հատի զՀիա, զի զհայրն ձգիցէին առաջն
առիւծոյ, և թաղել զորդիսն կենդանի և որք
՝ի նոցանէ ծնան։ այրեսցեն զնոսա՝ ի կամին
Մառսիու։ Եւ եղև պատահումն այն այնքան
զարհուրելի, առ՝ ի լսել, մինչ զի զանիծեցեալս
դարան այնոսիկ, ոչ կամեցայ տեսանել աչք ի-
մովք և հրամայեցի՝ ի հրով արտաքին իմում, զի
մի՛ ոք իշխիցէ խօսիլ ընդ նա։ Եւ եթէ այս պատ-
ճառն եղև՝ ի յահարկութենէ մարդկանց, իրաւի
վա՜ տիկնացն Հռօմայ պարտի լինիլ՝ ի պատիժ
Աբրեմն, եթէ հուրն հօր խորտովեաց զդուստրն
և մնացեալ զազգայինսն, և այրեաց ինքն զինքն
իմասցիս ուրեմն, զի եթէ դատանիցեն զդուստր
՝ի մերձակայ ուր ուրեք զդուստր եղբօր, կամ
զքենակալ՝ ի քենի, զայն հուրն այնքան հրդե-
հումն ցանկութեամբ թողուն արձակիլ՝ ի վերոյ, վա՜
դոլոյն աղդականք։ Զի եթէ մարմինս այս կա-
տաղուն, հղատակիցէ զինքն բանականութեամբ,
բարւոքք իցէր խօսիլն ազատաբար դատեր ընդ
որդւոցն քերց մօրն իւրոյ, Բայց որովհետև
ըղձակատութենն մարմնոյ յայսմիկ դիպուածումս
աքացէ բանականութենն, ես ազդ առնեմ զքեզ,
զի դու մի՛ հաւատայցես ոչևս եղբարց իւրոց։
Տեսցես դու փորձառութեամբ, զի՝ ոչ՝ ի փայտս
ծնանի ցեց, որ գոյանայ՝ ի նոյն փայտէ, և՝ ի
զգեստս ծնանի ուտիչ որ ուտէ զնոյն զգեստն,
կամիմ ասել, թէ այր ոք, որ իտան իւրումանու-
ցանէ զոք, կարէ լինիլ, թէ յետոյ բառնայցէ
զկեանն, և զպատիւն։ Այսոքիք ամ՝ ի վերոյ
ասացեալքս զեկուցանեն քեզ, ով Քաւաստինա,
և զայս վերջին բանս տամ քեզ ով զնորհուրդ
զի եթէ կամիս դու բառնալիքէն զհոգս, և՝ ի
դստերէ քումմէ զվտանգս, կալ զնա միշտ՝ ի կր

Թու-

թուլթեն և ամբարիշտութեան ։ զի մինչ ձեռքն ըղ-
բաղին 'ի գործ ինչ բարի կրնթուլթեն , յայնժամ
սիրտն եղիցի դատարկ 'ի յուսայնոյց մտածմանց ։
Իւրաքանչիւր լքուելի գործեցեալ 'ի մանկութեան ,
սուրբ , և քակէ զսիւն , և զնարիսիս մի կենաց
մերոց ։ Իսկ ուր դատարկակացութիւն մտանէ ,
է թշնամի մի , որ բանայ զդրսունս ամենից մո-
լուեց ։ Կամիս գիտել Քառատինա , թէ ուստի
տեսանեմ ես զկորուստն կոյս աղջկանցն Հրա-
մացուոյ , որք 'ի ծնանիլն իսկոյն յանդգնին առ-
նել զսիրահարութիւն ։ Ուրեմն լուր ինձ , զի
ասացից քեզ ։ Ողորմելիքն այնք 'ի յանհոգութիւն
հարցն , և փափկանուցմամբ մարցն թողուն զար-
գար աշխատանս , և առնեն զանարդար զբօսանս ,
'ի դատարկ անցուցանելոյ զժամանակս , 'ի յանոպա
տեհ մտածմանէ , և 'ի յնդսարձակութիւն ակաց ,
այսոքիւք այլապուանին խելքն , և ապականին
կամքն ։ Եւ վերջապէս մտածեն զոչ նպատակք
նեռից , ուր ուղղի սիրահարութիւն , միայն լի-
նին նշանատեղք ի հեղով հասարակօրէն վա՛ ամ-
նից մոլութեց ։ Եւ աւարտեմ տալով զլքութի
բանից , և ասեմ , թէ ոչ դոյ այնպիսի իր , որ
առաւել 'ի քաց հեռքէ զնոսոս տայ , և զգնդակս
մտածմանց , որպիսի է դնել զձեռս 'ի գործ ։



Յաղագս հոգաբարձութեան, զոր ունէր Մարկոս Կայսրն 'ի յամուսնացուցանելն զդստերս իւրս։

Գլուխ Երեսունեւութերորդ։

Իրեն Մարկոս Կայսրն բարի ունելով զխելամտութիւն պարզեցեալ, և խելասատակս հանդարտ, էր յոյժ հանձարեղ 'ի յիրս անցեալս, և խոհեմագոյն 'ի ներկայս, նաև զգոյշ 'ի հանդերձեալս։ Այս տեսանելով, թէ կորուստն թագաւորաց կայանայր 'ի կամին տալ զինքեանս բոլորովիմբ 'ի յիրս այլոց, մոռանալով զիւրայինսն, կամ խորհիլ միայն զիւրեանցն, ոչ խորհելով զայլոցն, էր այնքան անդրադարձ սիրտն նորա, մինչ զի ոչ բացուրութի բանից, և գործոց արքունեայն արգելոյին առ 'ի ոչ առնել, զիրս ցանկանսն իւրոց, և ոչ բոլորովիմբ հոգածութիւնս տան իւրոց արգելոյր զգործս Կայսերականս։ Զայս ասեմ. քանզի ունէր Կայսրն զդստերս չորս, որոց անուանքն էին Լուցիլլա. Փաբսէնա, Մարտինա, և Դօմիցիա։ որք եղին գեղեցիկք տեսլեւամբ որպէս զմայրն իւրեանց, բայց ոչ որպէս հայրն իւրեանց հաստատուն, և ուշիմ։ Եւ թէպէտ ունէր զնա ընդ դաստիարակի և ընդ վարպետուհեաց արտաքոյ ներկայութեան իւրոց, սակայն, ունէր միշտ զնա 'ի մտի իւրում։ Եւ որքան տառուել ածէին զտերքն ամօք հասակի իւրեանց, այնքան առաւել բազմանայր հոգածցողութիւն սրտի հօրն իւրեանց, և որքան դաստերքն

տերքն ժամանէին 'ի լուսն հասակի , այնքան հայրն յուսայր . առի ձարակել և գնալոս առնել նՁ ։ Էր սովորութիւն դովելի , թէպէտ ոչ էր օրէն ։ զի դստերքն պաշտօնէից խորհրդարանին ամուսնանայցէին հրամանաւն Կայսեր , և դստերքն Կայսեր 'ի յամուսնանալն իւրեանց , առնուցցին զնորհուրդս ծերակուտէն ։ Արդ մինն 'ի դստերաց նՁ ունէր զկամք ամուսնանալոյ , Մարկոս հայրն նՁ եղերեաց 'ի պատեհ ժամու ընուլ զցանկութիւն նՁ ։ Զի ինքն գոլով հիւանդ 'ի յանկողնի , հրամայեաց Քառուստինոյ , զի նա հաղորդակցիցիւր ընդ ծերակուտան խորհրդարանին , բայց Քառուստինն ամ կարողութիւն իւրով հակառակ կայր այսմիկ , զի դաղտաբար խօսէր զայլ ամուսնութիւն , կամէր արդելուլ զամուսնութիւնս այս , և 'ի յայտնի պատճառէր ըզմեղս իւր , ասելով թէ դուստր իւր չեւսէր ժամանեալ 'ի տին հասակի , և եթէ զինքն տայցէին զկնանս հօրն իւրում , բաւական ինքեր յետոյ խօսելոյ զամուսնութիւն դստերն իւրոյ ։ Զայս իմացեալ Կայսրն կոչեաց զնա մերձ առ յանկողինն իւր , յորում անկեալ գնիւր , և ասաց նմա զբանս այս ։ Բազումք իրք յապաղեն , և անտես առնեն անձանցն յատկացելոց, որոց փոքրագոյնն ոչ ըմբերիցի 'ի նոցանէ , որք են պատպանիչք , և հսկողք ամենեցուն ոչ երբեք բարուք հնազանդեցեալք են թագաւորաց , եթէ ոչ ունիցին զբարի հաւատարմութիւն 'ի ժողովուրդն ։ Զայս ասեմ քեզ , Քառուստինոս , տեսանելով զի առնես դու դաղտնի զիր իմն , և ասես ինձ զայլ իմն 'ի յայտնի , որ խանդարեալ զհաւատարմութիւն այդքան մեծագոյն տիկնոջ , և առնես զնախատինս հեղինակութիւն այսքան մեծագունի Կայսեր։ Եթէ բարւոք ցանկութիւնքն իմք գտանիցեն 'ի սրտի քում ձախողակութիւն վՁ բարեաց որդւոց քոց սեփականաց ։ Որպէս կարէ յուսալ ոք իքեն բարիդործ վՁ որդոց այլոց ։ Թուի քեզ թէ բարեգոյն իցէ , զի դուստր մեր ամուսնացեալ լիցի ընդ նմա , որ խնդրէ զնա , 'ի մօրէ եւրմէ ,

ուրանալ նմա, զոր ընտրեալ իցէ հայրն նորա։ Իրաւի վասն դոլոյ քո կին, արգիլնաւորիս զի շնորհիցեմ քեզ զթողութիւն։ բայց դոլով դու մայր յաւելուս զմեզ։ Ոչ գիտես դու, թէ ամուսնութիւնս այդ առաջնորդեցեալ է 'ի բանս։ և այս 'ի խոհեմութէ։ Նոքա որք հայցին զդուստր 'ի ծնողաց իւրեանց, հաւատս ինձ, զի առաւել ունին զաչս 'ի յօդուտն իւրեանց, քան զսիրտ 'ի վերս բարեացն այլոց։ Լուայ ինքն անդամ մի որասելիր, թէ դու ծնանելիր զդստերս։ բայց գիջն ամուսնացուցանէին զարդարեին և օծանէին զնա զարմանալեաւ դեղեցկութիւն։ Եւ ոչ գիտես դու թէ դեղեցկութիւնն կանանց դնէ 'ի յոտսս զցանկութիւն, 'ի դրաց ցնսն զերկիրպայութիւն, 'ի մեծուս ուժգնութիւն խիղճունս զնախանձ, 'ի յազգականսն զհայտառակուն, և 'ի յինքեանս անձին իւրում զվանգ։ Յոյժ մեծաւ աշխատութիւն պահպանի նա, որ 'ի բազմաց ցանկացեալ լինի։ Իրաւի դարձեալ ասեմ քեզ, զի դեղեցկութիւն կանանց ոչ այլ ինչ է, եթէ ոչ որոգայթ մի գատարկեցուցիչ, և մոլորելոց սրանց, և արիանացուցիչ անզգամաց, ուստի 'ի ցանկութիւն այլոց կախի զնամբաւն իւրեանց սեփական։ Եւ ոչ բաց ասեմ թէ լերբք անձինք առաւել որոնեն զմ ամուսնութիւն իւրեանց զկին մի դեղեցիկ տեսլեամբ, քան զայլս, համեստակենցաղս, բայց ասեմ ես, թէ կին ոք, որ ամուսնանայ միայն զմ դեղեցկութիւն, այնպիսին սպասիցէ 'ի ժամանակի ծերութիւն ունիլ զկեանս չարակենցաղս։ Անսխալելի կարգադրութիւն է, զի նա որ սիրեցեալ եղեալ յոյժ վասն դեղեցկութեան, եղիցի յոյժ արհամարհեցեալ յետոյ վասն, ուզեղութեան։ Ո՞հ թէ 'ի յորպիսի աշխատանս մատուցանէ զինքն նա որ ընդ դեղեցիկ կնաջ ամուսնանայ։ զի այնպիսին պարտաւորի համբերել հպարտութիւնս նոր, քանզի դեղեցկութիւնն, և խեղաթարութիւնն միշտ ընկերակցութիւն քայլեն 'ի միասին։ Պարտաւորի ըմբերել 'ի ծանս նոր, քանզի խելագա-

պարութիւն 'ի գլուխս , և գեղեցկութիւն 'ի պատ-
կերն , են երկուք որդունք , որք ստեն ըմ-
կեանս , և ծնիսեն զատացուածս , Պարաւանդի
հանդուրժել հակաճառութիւն , և խրոխտանաց
նոր , քանզի եմ կին գեղեցիկ կամ միայն զկրա-
ման տալ 'ի տանն : Պարաւանդի համբերել հեշ-
տութիւն և փափկութիւն նոր , զի եմ կին գեղեցիկ
կամ 'ի հրճմունս անցուցանել զկեանն իւր : Պա-
բաւանդի համբերել ամբարտաւանութիւն նոր .
զի եմ կին գեղեցիկ կամ դող նախատահ քան
զամենեսեան : Վերջաբար նա որ ամուսնանայ
ընդ կնոջ վա գեղեցկութիւն , պարտաւորէ զինքն
բազմայ վատաբախտութեց համբերել , և ա-
սացից քեզ զպատճառն : Իրաւի ոչ եղև այնքան
շրջապատեցեալ Կարթագն 'ի Ըշկիպիոնացն , որ-
քան տուանն գեղեցիկ կնոջ 'ի յանդգամայ , և լը-
քից : Ո՞հ վատաբախտ այր գեղեցիկ կնոջ , որ
դոլով հանդատեցեալ հոգի նորա , և իքուն ննջէ
մարմին նորա , երթիան 'ի շրջապատել զտուն ,
լրտեսել զանձն , հայեն 'ի լուսամուտն , սան-
դուխտ դնեն 'ի պարիսպն , նկարեն զքաշուածս
'ի յրրմն , նուագեն զտաւիղս , հակեն 'ի գրունս ,
ընձեռեն ընդ կաւատից , առնեն ընդ նոսա զդա-
շինս , քակեն զտանիսն , և հայեն 'ի յանկիւնսն
փողոցին : Եւ զայս եմ ուղղեն առ նշաւակ կնոջն
գեղեցիկ , բայց սառնեն համայնքս այսոքիկ 'ի
վերայ հողակուտ նշաւակին , համբաւոյն ապեր-
ջանիկ սառն : Եւ թէ որպէս ճշմարիտ այս ,
հարցանիցեն ցիս , որ ամուսնացայ ընդ քեզ վա
գեղեցկութիւնդ և հարցանիցեն ցհամբաւն իմ , թէ
որպէս հաճի 'ի Հռօմ : Զքաղաքս իրս ասեմ ,
բայց հաւատ ինձ , զի ևս առաւել զգամ : Մի-
ոք տրտնջիցէ զդիցն վասն տալոյ նմա զկին տգեղ
'ի մէջ բախտին իւրում : Արծաթն ապիտակ ոչ
զուդի , եթէ ոչ կպրով յոյժ սևացելով , և
ծառն յոյժ նորաբոյս ոչ պահպանի , եթէ ոչ
խոշորագունիս կեղևով : Կամիմ ասել , թէ այր
ունելով զկին տգեղ ունի զհամբաւս իւր անասյ
թակ

թակ։ Ընտրիցէ իւրաքանչիւր ոք զոր կամի, իսկ ես ասեմ, թէ այր ոք, որ ամուսնանայ ընդ կնոջ գեղեցկի, ձգէ ի վանական հրապարակս կանանց զհամբաւս իւր, և դնէ ի վտանգս ըղկեանն իւր։ Եմ զնուորութեն նախնեացն մերոց, էին իկրթութիս զնոսա։ Այժմ տեսանեմ, զի եմ պարապմունք մանկանցն Հռովմայեցոց, է ի ծառայել կանանց։ Յաւուրն այնմիկ, յորում ոք հրատարակի զոլ գեղեցիկ, յօրէ այնմանէ ամենեքեան սրոնեն զնա, նոքա աշխատին առ ի ծառայել նմա, և նա ոչ խնայէ ցուցանել զանձն իւր ամենեցուն։ Ասեմ քեզ Քաւուտինա, թէ ոչ երբէք տեսի ես ի մէջ կոյս աղջկանցն Հռովմացւոց մեծաւ համբաւով գեղեցկութեամբ, որոց վասն արարմանց իւրեանց, կամ վասն կարծատութեան ոչ հեռեւիցէր խայտառակութիւն։ Իսկապէս գրեանս պատմութեան, զոյս ընթերցայ և տեսի զլիշումն ածել վասն գեղեցիկ կանանցն յունաց, լատինաց, եգիպտացւոց, սպարտինոց, և Հռովմացւոց, և մինչ լիշատակեն ոչ զնեն վասն զի եղեն գեղեցիք. կամ մի՞ գեղեցիկ գոլոյն իւրեանց, եթէ ոչ վասն մեծի վտանգիցն, որք նոցա և որոմանի հանդիպմունք ապրեցան ի պատճառս գեղեցկութեան նոցա պատահեցան յայնմիկ ժամանակի։ Ըստ կերպի ինչ զի վասն գեղեցկութեան նոցա եղեն տեսեալք ի յերկրի իւրեանց, և մի՞ վատահամբաւութեն նոցա, խայտառակեցեալք եղեն ի յանդհանուր տիեզերս։ Մինչ թագաւորութիւն կարթագինացոց այնքան բախտաւոր փարթամութեամբ, որքան անբախտք ի զէնս, հովուեին ի ձեռս փիլիսոփայիցն իւրեանց, և պահպանէին ի ձեռս խելամուտ, և հանճարեղ նաւապետաց։ Ասմինիոս Փիլիսոփայն այնքան սիրեցեալ եղև ի պէնատ, որպէս Հռովմոս ի Յունաց, և Զիկերոն ի մէջ Հռովմացւոց։ Մինչ դիքն ի փոխս եռուն նմա զկեանս առ ի կեալ յաշխարհի, և դարձեալ տարան բառնալով զկեանն նորա ի ձեռն մահուան,

անցեալք

անցեալք հարիւր քսան և երկու յամս և ութ սուն ամս խմանէ զայն բարեբախտ իւն հրա պարակի կառավարեցէ՛ եղև 'ի նմանէ։ Այրս այս այնքան հանդարտեցեալն խոհեմութիւն։ եղև այնքան հրաժարեալ 'ի կանանց, որքան մերձե ցեալ էր առի գիրս։ ուրեմն տեսանելով ծերա կուռն զի տկարացեալէր 'ի յիրս առհասարակս և թուլացեալ 'ի հանդստուիս բնականս։ եղև աղա չեցեալ 'ի ծերակուտից մեծաւ ստիպմամբ, զի կամիցէր ամուսնանալ, որպէս զի այնքան նշա նաւոր իմաստնոյ յարամայցէր զաւակ 'ի յիշատակ յապագայ ժամանակի։ Եւ որպէս զի եղիցի այն քան մեծագոյն ըստիպումն ծերակուտին որպէս և զընդիմութիւնս նորա, պատասխանեաց այսպէս։ Ոչ կամիմ ամուսնանալ։ Չի եթէ տգեղ իցէ, արհամարհելոցեմ զնա։ Եթէ հարուստ իցէ պարտիմ համբերել, եթէ աղքատ իցէ, պարտիմ կերակրել։ Եթէ դեղեցիկ իցէ, պար տիմ հսկել, և պահպանել։ ուրեմն իւրաքանչիւր մահաժանդս այս, բաւականէ ապանանել զնա զար այրս։ Այսոքիւք բանիւքս արտաքինաստեաց զինքն իմաստունն այն, որ զկնի մեծագունի ու սումնականութիւն 'ի ծերութիւն իւրում կորուսեալ զտեսութիւն աչացն յաղագս կալոյ միշտ միայնա կեցութիւք ընդ դրեանցն իւրոց քաղցրագունից։ Ուստի ստիպեցաւ առնել ընկերակցութիւն ընդ կնոջ զոր զտանջանք համարէր, յորմէ ծնաւ դուստր մի որ 'ի նմանէ սերեալք աճեցան տոհմ ունքն Ամիլքարացն կարդաղինացւոց ոսոխացն Ըն կիպիոնաց Հռոմէացւոց, որք ոչ ունեցին զպակաս քաջութիւն, նպաստաւորելոյ զկարթագն, քան թէ մերայինքն զբախտ 'ի յաւելուլ զՀռոմ։ Կա բես ասել ինձ ով Քաւուստինա, թէ 'ի դուստր քո ոչ կարէ անկանիլ այնպիսի երկիւղութիւն, զի առաքինութիւնքն իւրք նպաստաւորեսցեն 'ի վտանգէ, և համեստութիւն անձին նորա տպա հով արասցէ զնա։ Արդ կամիմ արդեօք, բա ցայայտել քեզ զգաղանի իմն։ Ոչ դոյ այնպիսի իր

իր քաջալերեալ գործեցեալ, ոչ կին մի, որ ողջախոհականաւ պահպանութիւն, և կանացի ամօթխածութիւն իցէ շրջապատեցեալ։ սակայն գաղջաբար ցանկան, և թուլալերեալ ջանան առ իրս զոր դիւրաբար ժամանեն։ Ոչ դոյ իր առաւել հաւատոյ, քան զբարին այլոց ընելոյ նիւթ և պատճառ վա՛ն ինքասիրութեան։ Եւ այժմ գիտեմ դու Քաւուստինա, թէ կանայք յոյժ համեստք վա՛ն նենգութեան մերոյ են առաւել խնդրեցեալք և իրաւի զի ամօթխածութիւնքն իւրեանց և առանձնակացութիւն նոցա են նեղք ընդդէմ հաճեստութեան մերում։ Թերևս ոչ ընթեռնուսք, թէ ոչ արիւն։ և ոչ փարթամութիւնքն, և ոչ զգեղեցկութիւն չարաբախտ տիկնոջն Լուկրեցիայի հրաւիրեալք լցեն զոք առ 'ի ցան կանալ նմա, այլ մանաւանդ բերկրութիւն երեսաց, ծանրակացութիւն անձին, մաքրութիւն կենաց, առանձակացութիւն 'ի տան իւրում, կրթութիւն ժամանակի հաւատարմութիւն 'ի մէջ դրացեաց, և մեծ համբաւն 'ի մէջ օտարականաց սրթնացուցին զնեալագար Տարքուինան գործել զբռնադատական շնութիւն։ Եւ զի ուստի կարծես, թէ դայլէ իրակուիս այս, եւ ասասցիս քեզ։ Չի եմք մեք այնքան չարք չարացեալք, մինչ զի չարալեր իկիր արկանեմք զբարին բարեաց, և այս ոչ մեզ 'ի կանայս Հռովմէացիս այլ մանաւանդ առաջի անմահ գլիցն անդորրականն համեստութիւնքն նց, զ ողոքս բառնայցեն ընդդէմ խոստագոյն անառակութեան մերում։ Եթէ ասես ինձ, ով Քաւուստինա, թէ յոյժ մանուկ զդուստր քո առ 'ի յամուսնանալ, ոչ գիտես զի ծնողքն բարիք կրթեն զուստերս իւրեանց վարդապետութիւ՛ն, և զդստերս ճարտարեն մինչ զեռ մանկութիւնք իցեն, իրաւի եթէ հարքն իցեն ճշմարիտք հարք, և մարքն ճշմարիտք մարք, յաւուրն յորում գիքն տացեն զդստերս նոցա, իսկոյն պարտանդեսցեն կապել զսիրտս իւրեանց մերկութի՛ւ, և կուրութի՛ւ, և ոչ երբեք

 իցեն

իցեն արձակ եղեալք, մինչ և ցօրն այն, յորում մ
տացեն զգուստրն իւրեանց առն։ Վա՜ ոչ կամ
լոյ հարքն ազատք տալ զօժիտ, և մարքն վա՜
կամելոյ առաւել բարւոք ամուսնացուցանել,
մինն վա՜ ազատութեա՜ն, և միւսն վա՜ հպարտութեա՜
անցուցանեն զաւուրս յորս պառաւին դստերքն,
և այսու կերպիւ վա՜ ամուսանանալոյ դստանին պա
ռաւեալք, և վա՜ մայն բնակելոյ մանկունք են մե
ծաւ վտանգաւ և վա՜ սպասաւորուն՝ են յոյժ
կանացեալք, նե՜ք կայցեն տանջանք, ծնողքն 'ի
հոգս, և ազգականքն 'ի կարծոտուն թէ գուցէ կո
րուսանիցեն զնա՜։ Ո՞հ թէ զոլբանս կանայս ձա
նաչէմ ես դստերս մեծամեծայ և ծերակուտից,
ոչ վա՜ պակասուն ընչից, և օժտի, և ոչ վա՜ առա
քինութեա՜ն անձանց. այլ վա՜ անզգուշութեա՜ ձգե
լով յօրէ 'ի յօր, յանկարծաբար էհաս մահն ծնող
աց, և աներևոյթք եղեն հնարքն 'ի դստերան։
Ցաւ կերպի ինն զի մինն եղև ծածկեցեալ հո
զով դոլով մոռեալ, և միւսն թաղեցեալ մոռաց
մամբ։ Սակայն ես, եթէ ոչ իցեմ ընթերցեալ
յօրէնսն Ռօդոսացւոց, խօսելով զամուսնութի
զբանս այս։ Զատուիրեմք զի հայրքն վա՜ ամուս
նացուցանելոյ զտան ուստերս մի՛ ինչ աշխա
տիցեն զօր մի միայն, քայց վա՜ ամուսնացուցանե
լոյ զգուստր մի առաքինի աշխատիցեն զամ
տան։ Ամբերիցեն ծնողքն, եթէ հասցէ ջուրն
մինչև իբերանս, քրտնիցին զկայլակս արեան, վա
րիցեն լանջօք, և կրծօք իւրեանց, զբկիցեն
'ի ժառանգութեա՜ն զամ որդիսն իւրեանց, կորուս
ցեն զամ ինչս, և դիցեն խմիչ վտանգի զկեանս
իւրեանց։ Եղեն բանքս օրինիս այսորիկ բարե
գոյնքն վա՜ դստերաց, և ոչ ծանրագոյնքն վասն
ուստերաց, քանզի տասն ուստերք 'ի յօրէնս
մարդոյ պարտաւորին բացայ յայտել զբոլոր աշ
խարհ։ Բայց դուստր մի 'ի յօրէնս բարեաց կա
տարումն տայ ոչ երանել յարտաքս 'ի տանէ։ Աա
ցից ուրեմն ես, թէ ոչ՝ ամ ինչ անհաստատ,
պարտնան անկանիլ, այպէս պատահի կոյս աղ
ջկանց,

ջկանց, որք են փոքու հասակի, քան որում զամ ժամանակս ունին որպ աւելնորդս և վասնիարս մինչև 'ի յօրն ամուսնու

Յաղագս հիւանդութեան, և մահուանն Մարկոսի Կայսեր, և տիոյ հասակի նորա, նաև տեղոյն ուր մեռաւ։

Գլուխ Երեսունևիններրորդ։

Երբ զհեալ վաղուբեմն Մարկոս Կայսրն ոչ միայն տիւք, այլև վա՛ մեծի աշխատանաց զորս անցուցեալեր ՚ի պատերազմի, յամի ութ և տասն երորդի Կայսերութե՛ն իւրոյ, և վաթսուն և երիս հասակին իւրոյ, նաև ՚ի հիմնադրութե՛ն Հռովմայ. 740. Գոլով՚ի պատերազմի ընդդէմ պանոնիս, որ այժմ կոչի յունգարիայ, ընդ բանակի իւրում, և Կոմոդոս որդւովն իւրով՚ի վա՛ր քաղաքին, որ կոչիւր Վէնդեբոնա, որ այժմ կոչի Վիէնա, և քաղաքն այն էր առ յեզր գետոյն, և ունէր զչորս հազար հուրս։ ԵՒ քանզի եղեւն ձմերնային էր մեծ, և ջուրքն էին յոքունք, և խոնաւութի՛ն մեծ, նաև գոլով՚ի գաւտի յերեսուն աւուրսն գեկտեմբերի, յանկարծօրէն՚ի գիշերի միում, գնալով Կայսրն ընդ զնեւորացն պահպանաց շուրջանակի բանակին իւրոյ, պատահեցաւ հիւանդութի՛ն իմն անդամալուծիչ առ բազուկն մի, մինչ զի ոչ միայն ոչ կարէր՚ի գործ ածել զգեղարդս, այլ ոչ և զսուրն՚ի պատենէ հանել կարէր, ոչ և կարէր զգենուլ զհանդերձս։ Արդ բարձեալ և բեռնաւորեալ Կայսրն բարի աւուրքք, և ոչ սակաւ հոգւոք, առաւել սաստկանալով ձմեռն և վերացուցելով բազում ձիւնս և սառնանալով աւուրս յերկիր, վերայ յաւելան այլ հիւանդութի՛ն

որ կոչի Լեթարգо, որ բերէ զքուն խորագոյն, և զննջումն, որոյ իրակութենն եւ բարբարոսաց մեծ համարձակութիւն, և բանակին իւրում ըզ բազում որոմութիւն, սնձին իւրում զվոսնդ, և բարեկամաց զերկբայութիւն առողջանալոյ նոր։ Աբարեալ ուրեմն զամ փորձառութիւնս, որք վասն դեղոց, և բժշկութիւն կարեն գտանիլ, և որպէս նոյն գոյնակ, և այնքան դերազանց տեւանց սովորք են առնել, սակայն համայնիւք այսոքիւք ոչինչ օգտեցաւ քնաւին։ Եւ պատճառ սորին էր։ զի հիւանդութիւնն էր մեծ, Կայսրն էր լցեալ աւուրբք, երկիրն, և օդն հակառակք էին, և ժամանակն ոչ օգնէր, և ինքն զինքն ոչ հովուէր բարւոք։ Եւ ոչ սրք պատուոյ, և մեծարանաց, սիրեն առաւել զպատիւ, քան թէ զկեանս, և կամին մանաւանդ մեռանիլ պատուով, քան թէ կեալ առանց պատուոյ, և առ՝ի ապահովս առնել զպատիւս, կամին մատնել՝ի վտանգս ըզկեանս, իբրեանց յամենայ ժամուն, և կամին մանաւանդ ունիլ զժամ մի միայն պատուով, քան զհարիւր հազար ամս կենաց առանց պատուոյ։ Զբազում դիշերս ոչ ննջէր, այլ շրջէր՝ի բանակին մինչև ցառաւօտն, և դնայր՝ի տեսանել զգունդսն զինչոյց, և կամէր ննջել՝ի դաշտի, բազում անգամ, որ ոչ էր առանց մեծի վտանգի դնել զկեանն իւր և թարգ աշխատ առնելոյ զանձն իւր։ Յաւուր միում հանդիպեալ զկնի առնելոյ զարիւնչերակացն, էհաս մեծագոյն ջերմմի. վասն որոյ եղաւ յանկողնի։ Եւ լուեալ յանկարծակի զչիսթ, և զաղմուկ ինչ և զձայն զինուց՝ի բանակի, զի զինուորքն իւրք բերեալք էին զերամակսն, և զոչ ոչնաթաց, և թշնամիք բարբարոսքն յարուցեալք էին առ՝ի յափշտակել զայնս, մինն վասն օգանդակելոյ, և միւսն վասն խլելոյ։ Հռոմէացիքն գոլով քաղցեալք, կամէին ուտիլ. և յուշգարքն ընդդիմանալով վասն որոյ յարուցեալք՝ի վրայ միմեանց, բորբոքեցաւ ճակատամարտն, և եղև այնքան սատակցուցեալ՝ի մոյ կողմանէ, և՝ի միւսոյ զմարտն մինչ զի՝ի Հռոմէացւոյ ան

կան հինգք զօրագլուխքք , որք փոքրագոյնն 'ի նոցանէ առաւելարժէր գրօշն իւր , քան զամ ձիաւորքն : և 'ի կողմանէ յունգարաց թարց համեմատութեամբ առաւել մարդիկք եղեն սպա- նանեցեալք , քան զերամանն զոր բերեալք էին : Իրաւի զնստակցութիւնն որ անդ եղև , և սակաւ օգուտն , որ անտի յառաջեաց վասն Հռո- մայեցւոց , կարի քարի իցէր ոչ բերել զերամանն այն , և ոչ սակաւ պանծնացուցն ընդդիմացեալք իցէին : Տեսանելով Կայսրն զչար պատահումն , որ պատահեցաւ և դոլովառեալ զարիւն 'ի յերա կաց , և վասն մեծի ջերմանն ոչ կարաց ըմբերել եդ զինքն այնքան մեծի որտմամբ սրտի , մինչ զի պատճառեաց 'ի նմա ուշաթափումն , մինչ որոյ եկաց նուազեալ , և ուշաթափեալ , այնքան եր- կար ժամանակ , յորում յամենեքեան զնա մե- ռեալ կարծէին : Գոլով 'ի յայս պիսում կացու- թեամբ , զերիս գիշերս , և վաւերս երկուս , ոչ կամեցաւ տեսանել զլոյսն երկնից , ոչ և խօսիլ ընդ ումեք 'ի յերկրի : զի սաստիկէր ջերմու- թիւն , և տագնապ տաժանմանց յոյժ , ծարաւն բազում , և ուտելակերն յոյժ սակաւ , և քունն ոչինչ բնաւ : Էր դեղնեցեալ գիմաք և ունէր սև ացեալ զշրթունս : Երբեմն և երբեմն համ- բառնայր զաչս , և այլ անգամ կցեր զձեռս : Լռէր միշտ , և հառաչէր յաշխակի , և ունէր զբիմս յոյժ ցամաքեցեալս յորոց ոչ կարէր ըզ թուքս արձակել , ունէր զաչս խոնաւեցեալ 'ի յարտասուս : Էր մեծապէս ցաւակցելի տեսանել զմեռանիլն նր , և մեծագոյն աւաղումն 'ի տեսա նել զվրդովումն տանն իւրոյ , նա , և կորուսան պատերազմին : Ոչ ոք համարձակէր տեսանել , կամ խօսակցիլ ընդ նմայ զբան ինչ : Պանուցիոս հաւատարիմ խորհրդակիցն իւր ցաւակցեալ սր տիւ 'ի մեռանիլն նր , 'ի գիշերի միում առաջի ներկայութեամբ ամենեցոյն , սկսաւ ասել զբանս այս ։

Յաղագս այնորիկ, զոր ասաց Պանուցիոս խորհրդակիցն Կայսեր 'ի ժամու մահուանն նորայ։

Գլուխ Քառասներրորդ։

Վ Մարկոս Տէր իմ, վաղուրեան ոչ գոյ լեզու, որ լուիցէ։ և ոչ սիրտ որ ըմբերիցէ, ոչ աչք որ յապաղիցէ, ոչ խելապատակ, որ խոստանայցէ, արիւնն իմ սառնանայ, և ջիլք իմք չորանան 'ի բաց արձակին ծանրութիւնք մարմնոյս, և հոգիս յինէն 'ի բաց խլի, կաղմուածք անդամոյս անդատին, 'ի տեղւոջէ իւրեանց, շունչ իմ նուազի վասն քոյ որեսդ իմաստուն զնոյն խորհուրդն, զոր տայիր այլոց ուղիտաց։ Տեսանեմ զքեզ որ զի մեռանիս և բա բուռք դիտես թէ որքանիցէ կարն իմ և յոր քան պարտաւորիմ շրջապատիլ տխրութիւն 'ի մեռանելն քոյ։ բայց զոր 'ի սրտի ըստամ առաւելիցն զի կեցար որպէս իմաստուն և այժմ մեռանիս որպէս անմիտ։ Յամս տասն տայ կերակուր ճիւաղար մի երիվարին իւրում, որպէս զի յաւուր միում ղերծուսցէ զնա 'ի վտանգէ, և զայն զոր ուսա նի իմաստուն յամս բազումս, պարտէ գոլ առ 'ի անցուցանել զկեանն իւր պատուով, և ընկալուլ զմահն յուժգին խոհեմութիւն։ Հարցանեմ քեզ, ով պայծառագոյն տեր։ զինչ օգուտ նաւավարին դիտել զգիրս ծովընթացութիւն որպէս զի յետոյ տայցէ զինքն 'ի կորուստ ալեաց։ զինչ օգուտ զօրագլխին խօսիլ յոգնակի զպատերազմաց, և յետոյ ոչ կարողանալ տալ զմարտն

պատերազմիս։ Զինչ օգուտ ձիավարի միում ունիլ զաս երիվար, և անկանիլ 'ի ճանապարհի։ Զինչ օգուտ ուսուցանել այլոց կիսաւասար ճանապարհ և հարթ և զինքն կորուսանել 'ի ծերպս վիմացկամիմ ասել, թէ զինչ օգուտ եղև քեզ, որ 'ի ժամանակի հզօրեղուն կենաց քոց, այնքան սակաւ համարեիր զկեանն, մինչ զի բազմիցս որոնեիր զմահն իսկ այժմ որ դուեր զմահն ողբաս զմ դառնալոյ ի կեանս։ Զինչ դաձրեցի ես ձեռամբ, իմով դոլով խորհրդածուքդ, կարդադրեցեալ 'ի ձեռն վեհագունի հանճարեղութեանդ։ Զինչ եղև 'ի տեսանել զԹուխան այն զոր առաքեցեր առ Լաբինայ կնոջն Կլաստիս 'ի վրայ մահուան առն իւրոյ։ Զինչ պատասխանեցեր Կաթուլուսի նախարարին, ուր խոհեմութիւն քո մխիթարեաց զնա 'ի արտմութիւն իւրում, զոր ունէր վասն մահուանն Վէրիսիմոի որդոյն քոյ։ Ուրեն վերհամբարձաք և իմաստնանուէրքդ յորդորմունքն, զորս գրեցեր առ ծերակուսան յամի մահտարաժամին, մխիթարելով զմեծ մահկանացութիւն անցեալ, ուր ցուցանէիր հանճարեղադունիւ պատճառաւ, թէ յոյժ սակաւ պարտէ համարել զմահն, և զբազում օգուտն, զոր 'ի ներեն մահուան կարէ ունիլ մարդ։ Եւ ես, որ տեսի զքեզ քամահիչ մահու իկեանն քո, այժմ սեռանեմ 'ի լաց, որպէս թէ կալոց իցէիր յաշխարհի այսմիկ 'իմ չունչդեան յաւիտեանս։ Այժմ դիքն հրամայեն, և տինհասակի քո պահանջէ, հիւանդութիւն պատճառէ բնութիւն խոստանայ։ Հրամարդիւնաւորի, բախտն հաւանի, և 'ի նախասահմանուն մերում հատատի զի մեռանելոցդ եմք։ Աշխատանաց որք 'ի հարկէ են գալոցք, քաչասրտութիւք պարտէ ապասել։ Քան զի սիրտն արիացեալ ոչ զգայ զանքան մարտն պատերազմի, իսկ թուլայ սիրտն անկանի յառաջքան զմենամարտիլն։ Մարդ մի ես դու, և ոչ երկու, և զմահ մի պարտիս դիցն, և ոչ դերկուս։ Արդ, ընդէր կամիս դու վասն կենի

մեզ ունիլ զերկուս մահս, թաղելով զմարմնդ, և սպանանելով զհոգիս հառաչմամբք։ Զկնի այնքանից վտանգից 'ի ժամանակի մոռանելոյ 'ի նաւահանգիստն անկասկած, կամ'ս բանալ զապաստաս, առ 'ի խորասուզ առնել զքեզ միւսանգամ'ի վտանգն։ Դու քաջաբար ընդդիմացայր ցլուն յարուցելոյ 'ի վրդ քո, այժմ երկիւղալի փախչիս 'ի նմանէ, և հրաժարիս 'ի յանապատաբնակ տեղւոջէ, յորմէ կարես հարել զցուլն այն ապահովապէս։ Եկանես 'ի կենաց յաղթանակաւ, և կամիս մեռանիլ 'ի ժամանումն մահուն։ Ընդդիմամարտեցար զամս վաթսուն և երկուս 'ի դաշտի թշուառութեան, այժմ երկնչիս ամրանալոյ 'ի քերթին դերեզմանի։ Ոչ դահավէժ եղեր 'ի վտանգէ, յորում էիր վտանգաւորեցեալ, իսկ այժմ ապրդիս 'ի հաւասար ճանապարհի։ Ունէիր հաւասալ զնեան կենաց, և այժմ դնես 'ի յերկրայութեան զոգուան մահուան։ Սուեր 'ի դաշտն այնու դիտաւորութեամբ առ 'ի մարտնչիլ ընդդէմ աշխարհի, իսկ այժմ կամիս դարձուցանել զքիկունդ 'ի ժամանակի առնելոյ զքէնն 'ի ձեռաս։ Զվաթսուն և երկուս ամս առ յոտս աքացեր զբախտն, իսկ այժմ կրփուցանես զաչդ մինչ կամի տալ քեզ զվէրս ինչ։ Կամիմ ասել, թէ կամաւորապէս ոչ ընդաւնիս դու զմահն ներկայ, ուրեմն պարտիմք ունիլ զերկբայութիւն 'ի վերայ անցելոց կենաց քոց։ Զիարդ դանդաղես, ով պայծառագոյն թագաւորիմ, զիարդ լաս որպէս երեխայ։ Զիարդ հառաչես որպէս յուսահատ։ Եթէ ողբաս վասն մեռանելոյդ, ոչ ապաքէն ծիծաղելիր մինչ էիրառաջ, զի 'ի բազմաց ծիծաղեց կենաց եկեալք ժամանեն բազում ողբս 'ի ժամուս մահուան։ Կամիս դու զայն, զոր ոչ կարես, և ոչ շատանաս այնու զոր կարես։ Զերկիր անպտուղ, և զհասարակ կամիս վարել լծով քով, և զամ անապատս ժողովոյն արքունոյ կոչես ժառանգութիւն քո։ Զմարքս և զհարկս պահանջես 'ի հողմոյ, և կամիս առնել զեկամուտս մշանջենաւորս

ւորս 'ի նմա։ Կամիմ ասել, մեռան. մեռանին ; և մեռանելոցքեն ամենեքեան, և 'ի մէջ ամենեցուն կամիս դու միայն կալ։ Կամիս դու իդիցն, թէ ոչ են անմահք ինքեանք, նոյնպարասցեն զքեզ անմահ, և ունիլ դու զյաւիտենութիւն զայն ազատութիւնք զոր նոքա ունին ըստ բնութիւնք։ Եւ որ եմ ուզէստ հարցանեմ քեզ զիր իմն ով տէր իմ, որ եղբ իմասատուն, և ծեր։ Որն իցէ բարեբոյն (կամ ասասցուք բարւոք) որնէ պակասագոյն չար, բարւոք մեռանիլն, թէ չարապէս կեալն։ Ա՛ռ բարւոք կեալն, և ապրելն ոչ ոք կարէ ժամանել իրաւապէս։ քանզի ցաւրտ, ծարաւ, միայնակեցութիւն, հալածանք, տառապանք, թշուառութիւնք, հիւանդութիւնք, այսոքիկ ոչ կարեն կոչիլ կեանք. այլ մանաւանդ մահ երկար կենաց։ Եթէ այր ոք ծերացեալ ասասցէ զցուցակ իմն կենաց իւրոց 'ի յօրէ յայնմանէ, յորում ծնաւ յորովայնէ մօր իւրոյ, մինչև 'ի մտանիլն իւր 'ի յորովայնն երկրի, և մարմինն նորա սատմիցէ զամ ցաւակրութիւն զորս կրեալ, և անցուցեալ է, և սիրտն բացայայտիցէ զամ հարուածս գանիցն բախտին, կարծեմ թէ դիքն աքան չանայցեն, և մարդիկք ահաբեկք լիցին, լսելով թէ մարմին մի զայնպիսի անցս իցէ կրեալ։, և ըմբերեալ, և սիրտ որ զայնպիսիս իրս համբերութեամբ իցէ տարեալ։ Եւ վարկանեմ առաւել հանճարեղ զյոյնն, որք ողբան մինչ ծնանին երեխայքն, և երգեն մինչ մեռանին ծերքն։ Իրաւի ուրախութիւնք մահէն ծերոյ, որովհետև մեռանին առ 'ի խնդալ. և տրտմալի է ծնունդն երեխայից, զի ծնանին առ 'ի ողբալ։ Ուրեմն յարաւնան կեանքն վճռանա տեցեալ որպէս չար, և ոչ այլ ինչ ճոյ, եթէ ոչ փոքաւութիւնք հաստատեցուք բոլորովիմբ զքաջի գոլն մահուան։ Ասէ կամիս զի ասասցից քեզ զճշմարտութիւն իմն։ Միշտ տեսի, զի այր առաւել իմաստուն առաւել պակասն առնուլ զնորհրդածութիւնս վա՛ իւր։ Զայն ամ, զոր

կամի

կամի ոք ըստ հաճոյից իւրոց առաջնորդել, 'ի հարկէ յոմանս, կամ 'ի մեծի մասին աղալի։ Ո՞վ Սարկոս տէր իմ, թերևս ոչ պարտէիր խոկալ թէ որպէս թաղեցեր դու զայնքանս, դուցէ երբէք ոմանք որք թաղիցեն զքեզ։ և եթէ տեսեր դու զվախճանս աւուրց նոցա, եղիցին այլք, որք տեսցեն զվախճանն ամացքոց։ Ուրեմն, ըստ կարծեաց իմոց, թէ բարեգոյն իցէ վասն քո, զի մեռանիցիս, և երթիցես առ այնքան բարիքն, քան թէ զերծեալ 'ի մահուանէ, ապրիցիս 'ի մէջ այսքանից չարեաց։ եթէ զգաս ինչ զմահն, ոչ զարմանամ, զի մարդս, բայց զարմանամ, թէ որպէս ոչ զանցառնես, որովհետև հանճարեղես։ Ցոքա որք պայծառա ցեալք են խելօք, զբաղումիրս զգան 'ի սրտի, որք վշտացուցանեն զնոսա, բայց զանց առնեն 'ի յարտաքս, յաղագս շգեղուլթեան պատուոյ։ Եթէ համայնք թոյնք որք 'ի սրտի են ներփա կեցեալք տրտմագուն միոյ, եղեալք հասք հեզանիցին 'ի մարմնոս տկարս ոչ բաւականք էին պարիսպք առ 'ի յենուլ մեզ և ոչ եղընգունք առ 'ի քորել զմեզ։ Իրաւի մահքնէ խաղ մի, յորում եթէ խաղացողքն իցեն զգաստք, փակաւ վանդաւորին, և բաղում շահին։ Բայց հայիցեն մեծաւ նկատմամբ նոքա, որք խաղան, զի խաղնէ հընարագիտութեան, և խելամտութեան, այլ ոչ բռնաւորութեան, կամ ուժեղութեան, այսպէս կորուսանեն ոմանք սակաւուք թեղեմովք ոչ երկնչելով 'ի մահուանէ, որպէս կորուսանեն այլք բազումք թեղեմովք առաւել սիրելով զկեանս։ Զինչ այլ ինչէ մահն, եթէ ոչ գերեան մի, որով փակի խանութն, յորում վաճառին համայնք թշուառութիք կենաց մերոց։ Զինչ անիրաւութեի առնեն դիքն մեզ, եթէ ոչ 'ի հնացելոյ տանէ եղեգնակաղմէ փոխարկեն զմեզ 'ի խորան նորագոյն, և 'ի պարտս արքունականս։ Զինչէ զերեզմանն, եթէ ոչ ամրոց մի, յորում ամրանամք ընդդէմ երկիւղի տառապանաց կենաց։

և հոդացողութեան նորա , նա և ընդդէմ յեղեղումն փոփոխմանն բախտի ։ Իրաւի առաւել զցանկութիւն պարտիս ունիլ առ գտանել ի ըզմահն , քան թէ զպատուական վարկումն , զոր թողոյս իկեանս յայսմիկ ։ Հարցանեմ քեզ պայծառագոյն Տէր , և թագաւոր , զինչէ որ զքեզ առաւել տանջէ , և վն որոյ տանջանացն թողուս զկեանս զի եթէ տայ քեզ տանջանք։ Էլիայ քահանայի կիներն քո թէ մեայ մանկուհի , ոչ պարտիս հոգալ վասն այսորիկ , ոչևս վասն մեալոյն Նորա որք և այրի , զի նա յոյժ անհոգէ գոլով ի Հռոմ ի վասանգէն որով չարչարի կեանն քո . և մինչ լուիցէ զմահն քո , հաւատեաւ գիտեմ , զի ոչ վշտանայցէ յոյժ վասն չուերոյն քոյ , ուրեմն ոչևս գոս պարտիս տրտմիլ վասն թողլոյ զնա ։ Ողջիկք մանկահասակք ամուսնացեալք ընդ ծերի ումեք , ունին զաչս , թէ զինչ գողանայցեն , և զսիրուս թէ ընդ որում պարտիցեն ամուսնանալ , և եթէ այնպիսիքն արտասուեն աչքք , զրկեն զծիծաղ ի կուրծս իւրեանց , և մի՛ հաւատար , թէ գշխաւհին ոչ կարասցէ գտանել զայլ Կայսր առ ի ամուսնանալ ընդ նմա , զի այնպիսիքն (ներեա ինձ) սահմանեն , և հաստատեն ի սիրտս իւրեանց փոխարկել զբեհեզս , և զծիրանիս , և զազնիւ պատմուճանս, ընդ դառ հիկ քրձոց մազեղինաց ։ Կամիմ ասել , թէ առաւել կամին զհովիւ մի երիտասարդ , և մանկահասակ ,քան թէ զկայսր մի ծերացեալ ։ Եթէ անձկացուցանեն , և նեղեն զքեզ որդիքն քոյք զարս թողուս , ոչ գիտեմ թէ վասն այլ պատճառաի ։ Զի եթէ քեզ անհաճոյ թուի մեռանիլն քո , առաւել անհաճոյ թուիւր նոցա զկեանն քո , զի հազիւ դտանի այնպիսի որդի , որ ոչ ցանկանայցէ մահուանն հօր իւրոյ , զի եթէ աղքատիցէ հայրն , կամի զմահ նորա , զի մի՛ կերակրիցէ , և եթէ փարթամ , կամի զմահն նոր , զի փութով ժառանգիցէ զինչս ։ Երդեն նոքա , և դու ողբաս , երկնչիս ի մահուանէ , և արա-

տասուեսն թէ զիարդ թաղուս զկեանս, և ոչ գի-
տես, թէ զկնի երկարագոյն դիշերի եկեսցէ ա-
ռաւօտ խոնաւեցեալ, և զկնի խոնաւոյն առա-
ւօտոյ, եկեսցէ արեգակն պարզագոյն, և զկնի արե-
գականն պարզագունի։ Գան ամպք մթացեալք,
զկնի ամպոյն մթացելոյ, գայ ծանրացեալ ջեր-
մային հողմն հարաւային և զկնի ծանր և
ջերմ հողմոյն հարաւոյ, գայ որոտումն ամպոյ
ահաբեկողն։ և զկնի ահաբեկք որոտմանց, գան
կայծակունք յանկարծահասք, և զկնի կայծա-
կանացն յանկարծահասից, գան կայծք վտանգա-
ւորիչք, և զկնի կայծից վտանգաւորչաց, գայ
կարկուտ ստիպող և զկնի կարկտին ստիպողի,
գայ ուրախարար մեծ պարգևութիւն օդոյ Կամիմ
ասել, թէ զկնի երեխայական հասակի, գայ
տղայութիւն, զկնի տղայութեանէ գայ մանկութիւն,
և երիտասարդութիւն, զկնի մանկութեանէ, և երի-
տասարդուն, ծերուն, և ալևորութիւն, և զկնի
ծերութեան, և ալևորութենէ գայ մահն, և
զկնի մահուանն երկիրղալոյ, յուսամք ունիլ
զկեանս անապառս և ապահովս։ Հաւատա Տէր
իմ աբգայ, զի սիրեցն, և զմիջակ, և վերջն ու-
նիցին ամ մարդիկք զվաղճան, ոչ թուի ինձ,
թէ արանցն հանճարեղից իցէ փափակելի կեալ
և ապրիլ զամս բազումս։ Իրաւի եթէ արմա-
տայ խլեցէին զքեզ 'ի ժամանակի ծաղկացելոյն քոյ
'ի վերայ նորաբոյս խոտոյ, եթէ անշուտիցէին
զքեզ 'ի յեղանակի կանաչեալ ծառոյ, եթէ քա-
ղեցէին զքեզ 'ի գարնան, եթէ ուտիցէին զքեզ
տհաս 'ի յայգոյ, կամիմ ասել։ եթէ յառաջ
նում ննջման մանկութեանէ մինչ քաղցրէ կեանն
յանկարծաթռիչ, և դաղտագող մահն բախիցէր
կռանաւ զդուռն քո։ էր իրաւուն զի գան
գատիցէիր։ Բայց այժմ որք վաղուրեամն պա-
ղիսպքն են խախտեալք։ ծաղիկքն թարշամե-
ցեալք, ողկոզիքն հոտեալք, մորթն ցամաքե-
ցեալ, դեղարդն բթեցեալ, դանակն անկիսոր
եղեալ, ունիս զփափաք ճանալոյ յաշխարհի,
որ-

որպէս թէ ոչ երբէք ձանձրանալոցես զաղաւարս։
վաթսուն, և երկու ամս, յորս կացեր 'ի կապանս
բանտին մարմնոյ, և իշնուութիւն կամին խորտակել
զոտնակապս քո, իսկ դու տէր իմ կամիս զուգել
'ի նորոյ, զայլ նորագոյնս։ Մարդ ոչ իցէ յագ եցել
կիր ամօք ապրելով յայսմ մահկանացու թեանս,
կամ ննջել 'ի կենանս յայսմիկ, և ոչ երբէք յա-
դիցի յամս կոռ։ Օգոստոս Կայսրն ասէր, թէ
զնեի յիսնից ամաց յարս մարդիկ ապրիցին, կամ
ինքեանք բնականաբար մեռանիցին, կամ արաս-
ցեն կերպիւ իւիք զի մեռցին. քանզի մինչև ցայն
հասանն է ծայրն երջանկութեան, մարդկայնոյ,
և զայլ ամ, յորում առաւել ապրին, անցուցա-
նեն ողորմելիք ծերքն մեծաւ հիւանդութեամբ
տեսանելով զմահ որդւոցն, կորուստ ընչից,
ասիպու

նէ, սկսաւ որոնել զկեանն քո։ Եւ ոչ գի-
տես դու, զի եթէ պատուէրիր զդեսպանսն Թա-
գաւորաց օտարականաց, առաւել պարտիս պա-
տուել զսայ, որ դայ 'ի գիշեր։ Զինչ սէրս ունիս թէ
կորուսանես դու այսօր 'ի կեանս, զոր ոչ դա-
ցես մեծագոյն 'ի մահուան։ Ոչ յիշես արդեօք
զի մինչ, Աւրելիոս փեսայն իմ եա ինձ զմա-
հագէզ, զի յայժ ցանկայր ընչից իմոց, քանզի թէ
կենաց իմոց, գոլով դու ՝ուր իմ յաղթեցեալ 'ի
սիրոյ իմմէ, զոր ունէիր առիս, եկեալ դու ուր
անկեալ դնէի ես, և միխիթարեցեր զմահն տրտ-
մալի երիտասարդութեն իմոց, և ասացեր ինձ,
թէ դիքն անողորմք են, մինչ սպանանեն զման-
կունսն, և դորովալոյնք են, մինչ տանին ըզ-
ծերսն։ Եւ ասացեր ինձ առաւել։ Միխիթա-
րիայ զքեզ ով Պանուցիոս, զի եթէ ծնար առ-
'ի մեռանիլ, այժմ մեռանիս առ 'ի կեալ, և
ապրիլ։ Ուրեմն, ով պայծառագոյն տէր իմ,
զոր ասացեր ինձ, ասեմ քեզ, և զորպիսի խոր
հուրդս եասաբ ինձ, տամ քեզ, և զոր եսուր
ինձ, զնոյնն դարձուցանեմ առ քեզ։ Եւ վեր-
ջապէս յայնց քաղուածոց պտղոցն այդուոյն ըն-
կալ զսակաւս այս, որք մնացին 'ի ներքոյ ծա-
բոց։



Յաղագս թէ ո՞րպէս հրամայեաց Կայսրն, զի խորհրդակիցն դիցէր 'ի քարտիզի զայն ամ զորասաց։

Գլուխ Քառասունեւմիերրորդ։

Ի քանզի բազում անդամ 'ի խնդութիւն կամաց յառաջագոյն առողութի, եւ անդորրութի մարմնոյ, եղեւ յոյժ զոհունակ Կայսրն ընդ զուցատրուհս այս քանզի Պանուցիոս էցոյց զինքն մեծ 'ի Հոխաբանութիւն, եւ 'ի խորհուրդս խորագէտս։ 'ի ներկայութիւն որոց առաջի ասաց, եղեւ հաստարձակ, եւ կերպն պատմութիւն էր ընտանի սեփական, եւ 'ի ժամանակի յորում Հառեաց լաւագոյն բարեկամ։ Մեծ ցաւակցութի ենոցա, որք կան 'ի կէտ մահուան, եւ ոչ ունին զոք, որ 'ի յայնպիսի հարկաւորութիւն ասիցէ եւ խրատիցէ շուրջ զայնու, զոր պարտին առնել, Ամենեքեան որք շուջանակի պատեցեալք են զանկողնոյն մեռանողին, ոմանք յափշտակել կամիմ զդրամս, ոմանք առնեն զբարեբարութիւս, ոմանք ունին զաչս 'ուռասանել, թէ զինչ են ժառանգելոցք. ոմանք թէ զինչեն զորս տալոցքեն, ոմանք ողբան զայն զոր կորուսանեն, այլք խնդան ընդ այն, զոր կարեն շահիլ։ Եւ այսու կերպիւ ողորմելի հիւանդն անկեալ անդ ունի զբազում անձինս, որք ժառանգելոցք են, եւ ոչ զոք ունի որ խրատիցէ զնա օգտակարաւ խրատիւ։ Յիւրաքանչիւրում աւուր, եւ միշտ տե-

տեսա-

սանեմք զի ծառայք և սպասաւորքն մինչ արդէն տեսանեն սպառիլ լապտերն կենաց ոն իբրեանց, զոչինչ հոգան առ 'ի հերքել և մերժել։ 'ի մոլութիւս յայսմանէ յառաջագոյն, զի 'ի յաւարտիլ կենաց մեռանողին, իսկոյն ըսկսի ժահահոտիլ։ Կամիմ ասել, թէ վասնզանն կենաց իւրոց, սկիսալ նէ վատահամբաւութիւն իւրում։ Ամենեքեան որք անդ կային, այսպէս 'ի ծերագունից ծառայեցն Կայսեր, որպէս 'ի նոր զօրագլխացն պատերազմողաց եղեն ոչ սակաւ նախատեցեալք, քան թէ զարմացեալք, և ամենեքեան գովէին զորս ասաց և ասէին, թէ արդիւնաւորիւր գոլ կառավարիչ, և պէտ Կայսերութիւն։ Իսկ Կայսրն քարի, 'ի յամ բուսէս յորս սուտեաց զուցաբանութիւն Պանուցիսի, զայլ ոչ ինչ արար, եթէ ոչ հեղուլ զարտասուս, և զհոգոց հանել 'ի խորոց սրտէ, և վա դոլոն իւրոյ յոյժ սքանչեցեալ և անձկացեալ, ոչ կարաց իսկոյն պատասխանել, և կոչեալ զՊանուցիսս, հրամայեաց, զի իսկոյն գծագրիցէր 'ի քարտիզի, և տացէր ինքեան զզուցաբանութիւնն, զի կամէր կրկնածամել, և որոշալ զայն, քանզի իրքն այնպէս բարուրոք ասացեալք, ոչ էին իրաւունք զի մոռանայցէին։ Եւ 'ի բոլոր գիշերն մնացեալ ջանաց գծագրել Պանուցիսս զնմա զզուցաբանութիւնս իւր։ զոր ասացեալքդ, և 'ի վաղիւն ետ զայն Կայսեր, որ առեալ զՊողէն, զոր մի ամբողջ ոչ անկան 'ի ձեռաց նորա և ոչ դադարեցան աչք նր 'ի յինթեռնելոյ, և 'ի գիշերն հեռեալ։ հրամայեաց Կայսրն կոչել զՊանուցիսս։ խորհրդածուն, և առաջի ներկայութիւնն ամենեցուն ասասել զբանս այս։

Յաղագս պատասխանւոյն այնորիկ զոր Կայսրն ետ Պանուցիոսի խորհրդակցուն իւրոյ։

Գլուխ Քառասունևերկուերորդ։

Որ հնեցեալ լեցի կաթն, զոր Ջամբեցեր 'ի դայեա, և զհացն զոր կերար 'ի Հռոմ և զոսսումն զոր ստացար 'ի յաթենս, և անուցումն զոր ընկալար 'ի տան իմում։ քանզի իկեանս իմ ծառայեցեր ինձ որպէս բարի և հաւատարիմ ծառայ, և 'ի մահուանս ետուր ինձ զնորհուրդս որպէս բարեկամ սեփական։ Պատուիրեմ Կոմոդոսի որդոյն իմոյ, զի հատուցանիցէ քեզ զվարձս, և աղաչեմ զդիսն, զի հաճիցին ընդխրատն և 'ի խորհրդատրութենն քո։ Զվարձս բազմաց ծառայութեց կարողէ մարդ մի հատուցանել, բայց վասն միոյ խորհրդոյ բարւոյ տալ զվարձս, համայնք գիքն պիտոյանան 'ի հատուցումն և 'ի վճարումն նորա։ Մեծագոյն, և վեհագոյն քարերարութիւն, զոր քարեկամ ոք կարէ առնել քարեկամին իւրում է հաստնիլ 'ի թիկունս նորա քարեաք խորհրդատրութիւ, 'ի մէջ մեծագունի, և դժուարակրի հարկաւորութեաց։ Համայնք աշխատանք կենաց են դժուարինք, բայց մահուանն առաւել դժուարագունեղք են։ Համայնքն են մեծք, բայց այս առաւել մեծագոյն է։ Վտանգաւորք են համայնքն, բայց այս առաւել վտանգաւորեղ։ Ամենեքեան 'ի վախճանի մահուան վերջնաւորին և վախճանին

նին եթէ ոչ միայն մահն. զի ոչ դիտեմք, թէ զինչ իցէ վերջն իւր։ Նա որ վիրաւորեցեալն 'ի մահուանէ, նման է առն որ իցէ խստացեալ հիւանդութեամբ հարնքի, զոր պարսիկք հապայ կոչեն, որ ունելով զնեղամտութիւն սմբողջ, սակայն ոչ կարէ ճանաչել զոք բնաւին, և մատուցանելով նմա զբաղում իրս, ոչ կարէ սահմանադրել զայնս 'ի յիր իմն։ Դառնամ միւսան գամ ասել, թէ հաւատարիմ, և ճշմարիտ բարեկամէ դա, որ յայնպիսի ժամու օգնական լինի բարեկամին իւրում միով բարեաւ խորհրդականութեամբ։ Եւ զայս զոր ասեմ, ամենեքեան ոչք լուիցեն ատասցեն, թէ ճշմարիտ։ Բայց երբ նում, զի կատարելապէս ոչ ոք կարէ ճանաչել զայս, եթէ ոչ նա որ տեսանէ, որպէս տեսանեմ ես զիս այժմս 'ի մեռանիլ։ Եւ ասեն ամք կիր, յորմէ հետէ ընթանամ զհետս սուրհանդակին կենաց, և աւարտելով այժմ ընթացս, հրամայեն ինձ 'ի նորոյ, զի կիսուցեալ ալջք ընթանայցեմ զհետս սուրհանդակին մահուան։ Այսու ամենայնիւ սոյզ ոչ ճանաչես զհիւանդութիւն, ոչ կարես ժամանել և հնարաւորել զբուժումն նոր։ Ոչէ ցաւն յայն սիրեն, ուր եդ եր զպարեանին։ Ոչէ ախտն յայնմիկ տեղւոջ, զոր շանթացեալ երկանթով կիրեա, ոչ են փակեցեալք, և խցեցեալք այն տեղիքն առ յոր առադրես զդեղորայս բժշկութեան, ոչէ եբակն այն, զոր ծակեցեր սրով արիւնաւորաւ, կամ նշտարիւք, և ոչ կալեալ կապեցեր բաւոքք զվերն, ուր կարեցեր ասղաւ։ Կամիմ ասել, թէ առաւել ևս առաւել 'ի յիս պարտիս մտանել առ 'ի ճանաչել զքաւս իմ։ Զհաւաչումն զոր հաւաչէ սիրտն, մի' կարծիցես նա որ զայն լսէ. թէ իսկոյն կարիցէ իմանալ. այլ միայն դիքն դիտեն, և ճանաչեն զիրաւ սրտի։ Իրաւի բազումք իրք կան 'ի յիս, զորս ոչ ճանաչեմ ես 'ի յիս, ոլորան ևս առաւել սնծիանօթ եղիցի նմա, որ է արտաքոյ յինէն։ Ով Պանուցիոս, ամբաստան վնիս յինէն թէ երկնչիմ

յոյժ 'ի մահուանէ զերկնչին յոյժ ուրանամ քայց երկնչել որպէս մարդ խոստովանիմ : Իրաւ եթէ ուրանայցեմ զերկնչին իմ 'ի մահուանէ , ուրանայցեմ զգոլն իմ մեղէն . Տեսանեմք , զի փիղքն երկնչին 'ի յառիւծոց , առչքն 'ի փղից դայլն 'ի յառչէ , դառն 'ի դայլոյ , մուկն ի կատուէ , կատուն 'ի շանց , և շունն 'ի մարդկէ , և սքանչելեան երկնչին , զի մի՛ սպանանիցեն : Արդ եթէ ունասուն՝ն հրաժարին 'ի մահուանէ , որք ոչ երկնչին դիմադրելով ընդ տարտարոսն , և ոչ խնդալ ընդ դիցն , ապա որքան առաւել մեք , որք մեռանիմք երկրայութեամբ , եթէ պատուառեն զմեզ տարտարոսաբն ընդ պատժովքն իւրեանց , կամ դիքն ժողովցեն զմեզ 'ի մէջ հրաձուանաց իւրեանց : Արդ կամիմ զի դիտացես , թէ խոստութիւն երկիւղին բնութենականի մեռանելոյ , տիրապետաալ ունիմ պախոցիւ , և սանձիւ բանականութեամ : Կարծես դու Պանուցիոս , թէ ես ոչ տեսանեմ զի հասեալէ հունձն խոտից իմոց , զայդին իմ կիթեցեալէ , քանդեցեալ աւերի տուն մարմնոյ իմոյ և ոչ գոյ եթէ ոչ կեղևն ողկոզին : ոչ գոյ 'ի յիս , եթէ ոչ միայն մորթն մարմնոյ իմոյ , ուստի հնչումն միայն նուազագոյն բաւականի քայքայելոյ , և աւերելոյ զբոլոր շինուածն կենաց իմոց : Բարբուռք գիտես դու , որ 'ի տեղւոջէ աշտարակին հանկելով հայիս առ զօրսն թշնամեաց , և առ եղջն դեռոյն կալով ձգես զուռկանս , և 'ի շինեալ յամուր տեղոջէ , ուր ցոլն ոչ վերահասանի քեզ արշաւեցուցանես զնայ , կամ մերձ առ հուրն , ոչ զգալով զցուրտն , կամ առ ատուերս յոչինչ հանարես զջերմն ձանձրացուցիչ միջօրէի : Կամիմ ասել , թէ ծաղր առնես զմահն , և ծիծաղիս զնովաւ , զի ունիս ազատ զկեանն քո : Այլ ինձ տրտմամածիս , զի այժմ զինուորեցեալ պատանեաւ մահուան մարտնչիմ ընդ մահուան : Այժմ մերկացեալ 'ի կենաց մնանեմ 'ի ներքոյ դերեզմանին : Այժմ մնանեմ 'ի տեղիս զուգեալս . ուր

ցուլն ոչ կարէ հարել եղջերովք իւրովք, այլ 'ի յարգանց եղջիւրի կերակրեցեալ։ Եւ վերջապէս տեսանեմ զիս 'ի տեղւոջ միում, ուստի ոչ կարեմ փախչել և խոյս տալ, ուրեւ ոչ այլ իմիք սպառեմ, եթէ ոչ մահուան։ Զայս ասեմ քեզ, զի գիտայցես թէ գիտեմ, և զգայցես զոր ըզգամ, զի մի սպրիցիս պատրեցեալ, կամիմ յայտնել քեզ զգաղտնի իմն։ Զազգեցմունս զոր տեսեալ 'ի յիս, որք են, առեալ զկերակուրս, արտաքսել զքուն, սիրել զմիայնակեցութիւնն, տանջանք լինիլ ընկերակցութիւն, ունիլ զդիւրութիւն 'ի հառաջման, և 'ի հոգւոց հանելն. և անցուցանել զժամանակս 'ի յարտասուս։ Ուրեմն տես թէ որքան ծփանք ալէկոծութիւն պարարին գոլ 'ի ծովի սրտին իմոյ, որովհետև զայքան երկրաշարժուիս, և զանձրևս մրրկաձին 'ի յերկրի մարմնոյն իմոյ տեսանեմ։ Արդ կամիս տեսանել, թէ զիարդէ 'ի մէջ մտածմանց և հոգացողութիւն մարմնոն իմ և այնքան նուազեալ։ սիրտ իմ։ Իմն ուրեմն, ոչ վասն այլ իրի հոգամ, և զգամ այնքան զմահն իմ, եթէ ոչ վասն այսորիկ, զի թողում զորդին իմ Կոմոդոս 'ի հասակի վատգաւորի 'ի կեանս այսմիկ վասն նորա, և երկբայութիւն վասն Կայսերութիւն։ Թշուառիկ ճանապարհն, և 'ի ծաղկանէ սրթոյն վերաճանաչին ողկոյզքն, 'ի յաստուծմանց ճանաչի երիվարն եթէ կակղագոյն իցէ վասն բեռնաբարձութիւն, կամ չարագլուխ վասն ճանապարհի, և 'ի երեխայութիւն ճանաչի տղայն։ 'Ի սակաւուց յաւուրց, յորմէ հետէ որդին իմ Կոմոդոս 'ի կեանս իմ տեսի, յոյժ սակաւ, և ես որ ի նեղոցէ զկնի մահուան իմոյ։ Ոչ դիտես ընդէր ասեմ։ Ուրեմն ոչ եմ առանց պատճառի։ Զի թագաւորացու որդին իմ տղայէ հասակաւ, և յոյժ առաւել տղայէ խելամբ։ Ունի զհակումն առ չարն, և ոչ կանայ առնձել զչարն առաքինութիւնն։ Հովուեալ զինքն խելամբ իւրով, որպէս թէ իցէ այր փորձառեալ։ սակաւ դիտէ, և

ոչինչ հոգայ զսալոյ զինքն դիտութիւնն , և ոչ պիտէ տալ զգին նորա ։ Ի յանցելոց ոչ է տեսեալ զիր ինչ բնութիւն , և նէրկայիւք միայն զբաղի , Վերջապէս զոր տեսանեմ այժմ աչօք , կարծիկահաւ լինիմ սրտիւ , և նախադատաշակեմ , թէ յոյժ փութանակի անձն իւր վտանգաւորեացի , և յիշատակ տանն հօր իւրոյ կորնչեցի ։ Այլն իւր քաւաւտինա անոյշ զնա յոյժ փափկութիւն , և առ ի երթալ ի քարանձաւս յոյժ ապառաժս մնայ նմա բազում ճանապարհ ։ Մուտկ նա այժմ ի շաւիղս ողոյութեան միայնակ , և թարց առաջնորդի , ուստի երկնչիմ ի յլոյս , զի մնայցեն ի մէջ անտառախիտ բազմութեանց մոլութեանց ։ Օվ Պանուցիսս լուր զոր ասեմ քեզ , զի ոչ թարց արտասուաց ասեմ զայս ։ զի մնայ որդին իմ հարուստ , մնայ ողջ , մնայ միայնակ , մնայ ազատ , Արդ եթէ ի մոյ հողմոյ այսոցիկ չորից հողմոց կարէ անկանիլ ծառ մի փափկասուն և նորատունկ , ապա որպիսի ընելոց անկումն այսոքիւք չորիւք հողմովքն ընկեցելովք ի միասին։ Չի հարատութիւն , միայնաւորութիւն ազատութիւն և ողջութիւն , այսոքիւք չորք վերքս են մահացուցիչք որք թանաւորեն զթագաւորս ցուն , են մահադեղք իրին հրապարակի որք , սպանանեն զկենդանիս , և վատահամբաւեն զմարեալս ։ Հաւատա ինձ զիր իմն , զի բազումք ընորհք պիտոյանան , առ ի պահել զոք ի յաւաքինութիւս բազումս ։ Ի գեղեցկութեանց գիմաց բազմանան տունքն բոզից ։ և առաւել տրամադրեցեալքն ի նմա , եղանին հոմանիք , և կաւառք , առաւել ուժեղքն լինին աւազակք , և որք յոյժ սրացեալ միտս ունին դառնան ի խելագարութի , և առաւել ներքագոյնքն տեսանեմք լինիլ գողնչանաւոր։ Կամիմ ասել , թէ նոքա որք զգեցեալք են զբազում ընորհս բնութիւն , եթէ նոաազիցի ի նոսա ընկերակցութիւն առաքինութեց , առաւելագունից կարեմք ասել թէ ունին զդանակն ի ձեռս իւրեանց , առ ի վիրաւորել

բել զինքեանս զհուր բարձեալ 'ի յուսս իւրեանց առ 'ի այրել զինքեանս, զտառուն 'ի պարանոցի իւրեանց առ 'ի խեղդել զինքեանս, զսուրս 'ի կուրծս, առ 'ի սպանանել զինքեանս, զտատասկս 'ի յոտս իւրեանց առ 'ի հարիլ նոքօք, զարա-ռաջս առաջի աչաց իւրեանց, ուր ստեալք գլորիցին, և գլորելով անկցին։ Եւ անկանելով կորուսանիցեն զկեանս, և չտեսցեն զմահ։ Ծառ-անառիք, և հատատամանք, յորոց յուսամք ու-նել զվտուղս 'ի յաշխան և զհովանի ամարայ-նի, նախ տնկեն զարմատս հաստատունս 'ի յոտ-վայնի երկրի, որոց ոտքն խելագարեալք ոչ վտանգաւորեսցեն 'ի յոգս։ Ծանիր Պանուցիոս Ծանիր զի։ Այր, որ ար 'ի յերեխայութիւն եդ առա-ջի աչաց իւրոց զերկիւղ դիցն, և զամօթ 'ի մարդ-կանէ, և ունակացեալ 'ի յառաքինութիւս, ընկերակ ցի ընդ առաքինեաց, զպահէ զշնչմարդութիւն առ ամենեսեան, ապրի և կեայ թարց անիրա-ւելոյ ընդ ումք, Այսպիսոյ ծառայս կարէ կա-տարուն բարեաւն տարահերել զկեղեւն առողջ-ութիւն նորա, թարշամերուցանել զծաղիկն ման կութիւն նորա, ցամաքեցուցանել զտերեւս օդ-նականութիւն նորա. քաղել զվտուղս աշնաստա-նաց նորա, խորտակել և ոստաքանց առնել զոստս պաշտօնից, և արհեստից նորա։ Եւ կո-ցուցանել և առաւել բարձրացեալք ճիւղս իւր խոնարհեցուցանել 'ի վայր։ Բայց 'ի բազ-մաց, և որքան 'ի յամենից հողմոց իցէ մարտն չեցեալ, ոչ երբեք, և ոչ բնաւ եղեցի արմա-տախլեցեալ։ Իրաւի հայր ոք որ ունի զորդի յոյժ զարդարեցեալ շնորհօք, և որդին վասն նանրուն իւրոյ ծախեցէ զամ 'ի մոլութիւս։ կարի բարի իցէր եթէ ոչ էր ծնեալ 'ի յաշխարհ, և յետ ծնանելոյն կենդանոյն գոլ թաղեցեալ։ Քանզի հարքն քրտնին զօրն իբուն, և հոգան գիշերն ողջոյն առ 'ի թողուլ զպատիւ որդւոց իւրեանց, զոր գնեցին 'ի դիցն հառաչանօք, և

մայրքն իբրեանց ծնան ընդ ցաւոքն և հեծուելքն և զարգացուցին երկոքեանքն բազում աշխատանօքն, և նա ելանէ այնպիսեաւ կերպիւ, մինչ զի տայ նոցա զչարագոյն ալեւորութիւն 'ի կեանս, և զմեծագոյն վատահամբաւութիւն յետ մահուան : Զյիշումն ածեմ 'ի յիս, զի արքայն Կոմոդոս դոլով տղայ, և եւ դոլով ծեր, ընդդէմ կամաց նորա հատանեմք զնա 'ի սանդեանցն մոլութեց : Երկնչիմ 'ի յիս, զի յետ մահուան իմոյ արհամարհեսցէ զառաքինութիւնս : Զյիշումն ածեմ զբազումս, որք 'ի հատակի իւրում ժառանգեցին զկայսերութիւն, որք ամենեքեան եղեն այնքան համարձակեալք իկեանս, մինչ զի արդիւնաւորեցան կրկին դոռողք, և բռնաւորք 'ի մահուան : Զյիշումն ածեմ զդէոնէսիոս համբաւաւոր և անողորմ բռնաւորն Սիչիլիայու, որ հատակաւ էր տղայ, զայնքան պարդևս բաշխէր նոցա, որք նորագոյն հնարիւք բացայայտէին զնորագոյն մոլութիս, որպէս մայրն մեր Հռօմ պարդևէր նոցա, որք յաղթանակէին զգաւառս, և զթագաւորութիս : Այլ ինչ մեծագոյն բռնաւորուն կարէ դոլ բռնաւորին, զի առաւել մեղս ամենեալք, և սիրողքն մոլութեց էին առաւել սիրելիք, և ընտանիք իւրք : Յիշեմ զչորս թագաւորս, որք զկնի մեծին Աղէքսանդրու աջորդեցին, այսինքն Պտղոմէոս, Անտիոքոս, Սիլվիոս, և Անթիոքոս, զորս ևս կոչեն յոյնքն մեծագոյն բռնաւորս, և անագորունս, որպէս կոչէին զտեսուն իւրեանց մեծագոյն Կայսր : Զայն զոր Աղէքսանդր ցուցացելէր հռչակաւոր, և համբաւելեաւ յաղթանակս, նոքա կորուսին վատն դոլոյն իւրեանց յոյժ մոլեսէրք : և այսու կերպիւ, զանշարհս զոր Աղէքսանդր բաժանեաց միայն 'ի մէջ չորից արանց, յետ այնորիկ եկեալ 'ի ձեռս աւելի քանզ չորից հարիւրոց արանց : Յիշեմ 'ի յիս զի Անթիոքոս սամարելով սակաւ զայն, զոր ոչն իւր Աղէքսան

դր համարէր բազում, եղև այնքան անառակ
'ի տղայութիւնն իւրում, և այնքան լերբ, և հա-
մարձակեալ 'ի թագաւորութիւնն իւրում, մինչ զի
վասն անարգուն և ծաղր առնելոյ փոխանակ պա-
կի ոսկեղինի դնէր 'ի գլուխն իւր զաերև գդմ-
նոյ, և 'ի տեղւոջ գահոսի։ որ է գաւազան
թագաւորական, տանէր 'ի յաջ ձեռն իւր
զղջաս մի եղնջի. և այսու կերպիւ նստէր 'ի գա-
տաստան ընդ իւրայինսն, և 'ի զբօսանս ընդ
օտարաց։ Գայթագղեցուցանէ զիս տղայն առ-
նելով զայս։ Բայց ահաբեկեն զիս մեծ յար-
գութիւն իմաստնոցն յունաց, 'ի ըմբերելն սղնալի
սեաց իրաց։ Զմտաւ ածեմ զԿալիգօլա չորրորդ
Կայսրն Հռովմայ, և հասակաւ Տղայ, որ 'ի յոյնմ
ժամանակին, ոչ դիտեմ, թէ որն եղև մեծա-
գոյն, անհնազանդութիւնն, զոր ունեաց ժո-
ղովուրդն ընդ նմն իւրում, կամ թէ զատե-
լութիւնն զոր ունեաց տէրն առ ժողովուրդն։
Եղև այնքան անհանդուրժելի 'ի յանիրաւութեան
իւրում, և արտաքոյ ճանապարհի ընթացայր մա-
նաւանն այն իմանկուն իւրում և այնքան անկիրթ
'ի բռնաւորութիւն իւրում, մինչ զի եթէ ամենա-
քեան ոչ հակիցէին առ 'ի բռնաւալ զնա 'ի կենաց
նա հոգայր բռնաւալ զկենաս ամենեցուն։ 'Ի մ-
տալն միում ոսկեղինեում որ տանէր ընդ ինքեան
ունէր գրեցեալ զգիրս այս։ ԵՐԱՆԻ ԹԷ
ՀԱՄԱՅՆՔ ԺՈՂՈՎՈՒՐԴՔՆ ՀՌՈՄ,
ՈՉ ՈՒՆԻՑԷԻՆ, ԵԹԷ ՈՉ ՄԻ
ՄԻԱՅՆ ՊԱՐԱՆՈՑ ԶԻ ԷՍ ՄԻԱՅՆ
ՀԱՐՄԱՄԲ ՄԻՈՅ ՍՐՈՅ ՀԱՏԱՆԻՑԷԻ
ՄԻԱՅՆԳԱՄԱՅՆ։ Զմտաւ ածեմ այժմ
զՏիբերիոս որդեգրէրն բարւոյն Օգոստոսի, և կո-
չէին զնա օգոստոս քանզի եղից առատութիւն զՀռոմ
յոյժ։ բայց ոչ այնքան եղից բարի ծերն այն իկեանս
իւր, զոչքան մանուկս այս հետեւեալ նմա աւերեաց
յետ մահուան նորա։ Զատելութիւնն զոր ժո-
ղովուրդն Հռոմայ ունէր առ Տիբերիոս իկեանս
իւր, յետ այնորիկ եցոյց յետ մահուան նորա։

Զի յաւուր յորում մեռաւ Տիբերիոս, կամ ապան անեցաւ, ժողովուրդն Հռովմայ արար զհռչակաւոր բաղում թաքօրս, և ծերակուտքն մատուցանէին զմեծագոյն մատուցմունս 'ի տաճարս; և քահանայքն մատուցանէին զզոհս դիցն, ոչ զի զհոգին անիրաւ բռնաւորին Տիբերիոսի, ոչ ընդունիցէին 'ի յինքեանս, այլ մատնիցէին 'ի տարտարոսն անդնդոց: Զմտաւ ածեմ զՊարտոկլոս երկրորդ արքայն կորնթացւոց, որ ժառանգեաց զթագաւորութիւն 'ի հասակի ամաց իւրոց տասն, և վեցից, որ և եղև այնքան անժուժկալ ըստ մարմնոյ, և այնքան սանձարձակ 'ի յորկրամոլութիւս, մինչ զի ուր հայրն նորա թագաւորեաց զամս իւ. որդին ոչ ժառանգեաց զթագաւորութիւն, եթէ ոչ յամիս երեսուն: Զմտաւ ածեմ զՀնագոյն Տարբուինոսն հպարտն է. երորդ թագաւորն Հռովմա, որ կազմուածով մարմնոյն եղև յոյժ գեղեցիկ, հզօր զինուք, և արեամբ յոյժ մաքուր: չարաբախտս այս ոգեղացոյց զինքն բաղում չարութիւք, մինչ զի զգեղեցկութիւն իւր դարձոյց իբզնախոհութիւն, զհզօրեղութիւն իւր ծախեաց 'ի յանողորմ, և 'ի բռնաւորս կան անիրաւութիւն. յաղագս դարանակալութիւն, և բռնադատութիւնն զոր արար ընդ Լուդրէցիսի ողջախոհ տիկնոջն Հռովմացւոյ: վասն որոյ ոչ միայն կորոյս զթագաւորութիւն, այլև զանունն Տարբուինոսի, մշանջենաբար եղև աքսորեցեալ 'ի Հռովմայ: Զմտաւ ածեմ զԷբրոնն անդոյթ, և անողորմ բռնաւորն որ ժառանգեաց զԿայսերութիւն, որև մեռաւ դողով մանուկ, և ետ զվախճան յիշատակի, ապուսակացնաց Կայսերաց, և վերանորոգեաց զյիշատակս Անթիոքոսացն խստագոյն անիրաւաց: Արդ կարծեմ, թէ անողորմս այս տարոյց, և շնորհելոյց իցէր ուստք զկեանս մինչ ետ մօրն իւրում զմահ: Ասա ինձ եղաչեմ: Սիրոն այն, որ էսպան զմայրն որ ծնաւ զնա, պատառեաց զկոթծն, որ գիւեցուց նմա զկաթն, է հեղ զարիւն 'ի նմա

նէ, յորմէ ծնաւ, կապեաց զբաղուկն նոր, որ մնոյց ցնա, և ետես զորովայնն, յորում էր կերպաւորեցեալ և առեալ զկազմուածս բնութեան։ Արդ զինչ զգաս թէ ոչ առնիցէր այլոց որովհետեւ զայնպիսի չարուն 'ի գործ էած։ Յաւուր յորում էապան Ներսոն զմայրն իւր, ասաց ստենաբանելով փաստաբան մի առ Ծերակուտն, թէ արդար դատաստանաւ արդիւնաւորեցաւ զմահ Ագրիպինա վասն զի ծնաւ զայնպիսի չար ծնունդ և զորդի 'ի Հաօմ։ Ուրեմն 'ի յայսոսիկ երիս առուրս, յորս տեսեր զնս այսպէս յափշտակեցեալ, և օտարացեալ 'ի խելաց իմոց, զամ զբանս զայսոսիկ մատչէին 'ի յիս, և 'ի խորս սրտի իմոյ, զորոց 'ի յիս արամախտեի։ Այս որդիս իմ ունի զնս գահավիժեցեալ 'ի մէջ երկիրս զալի ալեաց, և 'ի խարսխի յուսոյ, զի խորհիմ զաս դոլ բարի զի բարւոքեն զարդացեալ։ Եւս կամ 'ի յերկիւղի, գուցէ լինիցի չար, վասն զի մայր նորա Քառասունա անոյց զնա չարապէս, և ողջանէ յեցեալ առ չարն, ոչ տեսանեմք զի կերտեսցն արհեստիւ կորնչի, և բնականն յաքսաուեէ, վասն որոյ տագնապիմ 'ի յիս, զի յետ մահուան իմոյ ողջոյն դառնայցէ առ մայրն իւր, որ ծնաւ, և ոչ առ այն զոր էս զարդացուցի։ Ո՞հ երանի թէ ոչ երբեք ունիցէի զորդի առ 'ի ոչ թողուլ նմա զկայսերութիւն. զի յայնժամ ընտրիցէի զորդիս հարանց բարեաց, և ոչ լինիցէի կապակցեալ 'ի սայ զոր ետուն ինձ դիքն։ Արդ հարցանեմ քեզ զբան մի, ով Պանուցիոս, զո՞ ոք կոչես դու առաւել բարեբախտեցեալ, զԱէսպազիանոս բնական հայրն Դօմիցիանոսի, կամ զՆերուա խորթա հայրն Տրայեանոսի։ Աէսպազիանոս եղև բարի ևս Ներուա յոյժ բարի, և 'ի յորդւոցն նոցա Դօմիցիանոս ծայրագոյն ամբարիշտ, և անողորմ խստասանց Տրայեանոս եղև հայելի ամենից բարեգթութեան։ Հայեաց ուրեմն, թէ ոչ Աէսպազիանոս գոլով երջանիկ վասն ունելոյ զորդի եղև աներջանիկ։

Իսկ Ներվա 'ի յաներկնակութիւն, վասն ոչ ունելոց զորդի, եղև երկնանկատոյն։ Ուշ դիտեմ, թէ հարքն ընդեր ցանկան ունելոյ զորդիս, որք պատճառեն այնքանեաց վշտից, և տառապանաց։ Ով Պանուցիոս, կամիմ ասել քեզ զիր իմն, որպէս բարեկամ ընդ բարեկամի զի գիտասցես, թէ ով լցեմք մեք, և որ լցեալ աշխարհ։ Ես ապրեցայ զամն կէ, յորս ընթերցայ զբազումս իրս, և լուայ զյոգուսնս, և տեսի զսոլովս, ցանկացայ բազմաց իրաց, և ժամանեցի զբազումս իրս, ժառանգեցի զիրս բազումս ստացայ զինչս բազումս և վայելեցի զբազում իրս, և ըմբերեցի բազմաց իրաց, և տեսանեմ այժմ զիս մերձ 'ի մեռանիլ, և ոչինչ տանիմ ընդ յիս վասն զի նոքա և ես ոչինչ եմք։ Զմեծագոյն հոգս ունին ոմիրոքն 'ի ստացումն բարեաց այսոցիկ, և զմեծագոյն աշխատանս զգան 'ի ժամանիլն առ այնս, բայց առանց համաբաղդաստութեան է մեծագոյն դաւ 'ի ժամու մահուան բաժանել զնա։ Զինչ մեծագոյն հիւանդութիւն մարմնոյ, Զինչ երկիւղ թշնամեաց։ Զինչ վտանգ ծովու և ոչ կորուստ բարեկամաց կարէ դոյ համարուիլ 'ի տեսանել զայր մի խոհեմագոյն 'ի ժամու մահուան թողու զբարութիւնս երեսաց իւրոց, զիշխանութիւն կայսերութեան, զպատիւն անձին իւրոյ զծածուկ խորհուրդս բարեկամաց իւրոց, զճարակս ընտանեաց, և զզգեստանաց իւրոց և զարքայ ծառայից իւրոց, որդւոյ միում, որ ոչ արդիւնաւորի, և ոչ արժանէ, ոչ և կամի դոյ արդիւնաւորիչ։ 'Իսինն երորդի տախտակին օրինաց նախնեացն մերոց գրեցեալք գտանին բանքս այսոքիկ։ Պատուիրեմք և հրամայեմք զի իւրաքանչիւր հայր, որ 'ի կարծիս ամենեցուն իցէ բարի, կարօղ լիցի զրկել զորդին իւր 'ի ժառանգութէ, որ 'ի կարծիս ամենեցուն իցէ չար։ Դարձեալ իւրաքանչիւր որդի, որ լինիցի անհնազանդ հօրն իւրում, կամ կողոպտեալ իցէ զտաճար իմն, կամ հանեալ իցէ զարիւն 'ի յայրի կանանց, կամ փախ

ըստական իցէ 'ի պատերազէ , կամ դարձանա-
գործ իցէ եղեալ օտարականի ուսեալ , և պանդխ-
տեցելոց ։ որ օր 'ի յայսոցիկ հինգ իրս գտանիցի ։
այնպիսին 'ի յինտանելոցն Հռոմայ , և 'ի ժա-
ռանգութեան հայրենականէ եղիցի 'ի բաց վարե-
ցեալ մշանջենաւոր։ Արդարև օրէնն եղև բա-
րի , և 'ի ժամանակի Կուինցիոս Չինչինատոսէ
եղև կարգադրեցեալ , թէպէտ այժմ վերատա-
բախտութեան մերոյ եղեալիցէ 'ի մոռացումն ։
Թարց երկայնութեան ։ Պանուցիոս , եմ յոյժ
թաքկացեալ , և յաղագս թանձից կրծոյծս ոչկա-
րեմ հանել զշուկս իմ , և նուաղեցեալ է յիշողու-
թիւն իմ , եթէ ոչ իցէր այս ։ ես պատմելոցէի
քեզ կարգաւ , թէ որքան Պարթևաց , Սարաց ,
Աստրոց , Քաղդէացւոց , Հնդկաց , Եգիպտա-
ցւոց , Եբրաեցւոց , Յունաց , և Հռոմայեցւոց
թողին զորդիս իւրեանց աղքատս , որք կարէին
թողուլ հարուստս զի եղեն սիրօղք մարդութեաց ։
և զորդիս այլոց աղքատաց թողին հարուստս ,
զի էին առաքինիք ։ Ես երդնում քեզ 'ի դիս ան-
մահս , զի մինչ եկի 'ի պատերազմն պար-
թևաց , և Հռոմ ետ ինձ զյաղթանակն մար-
տին , և որդոյն իմում հաստատեաց զԿայսե-
րութիւն , զի եթէ թողեալ իցէր զիս խորհրդարանն ,
ես զորդին իմ Կոմոդոս թողուցուի աղքատ ընդ-
մուսե իւրոյ , և զծերակուտն առնիցէի ժառանգ
Կայսերութեան , զի այս լինիցէր պատիժ նո՛ր , և
օրինակ բոլոր աշխարհի ։ Ցանուցանեմ քեզ ,
զի զհինգ իրս տանիմ ես հուպ մնալով յայսմ
աշխարհի , որք նուաճեն մեծաւ ցաւակցու-
թի՛ զերիս իմ ։ Նախ , զի ոչ եղև հաստատե-
ցեալ , և սահմանադրեցեալ , վէճն զորու-
նի , և առնէ ազնիւ տիկինն Դրուսիա ընդ Ծե-
բակուտին , քանզի վասն աղքատ գոլոյն նո՛ր , ոչ
ոք գոյ որ արասցէ դատ նմա ։ Երկրորդ , զի ոչ
մեռանիմ 'ի Հռոմ , առի կոչել զմնդիկ մի յա-
ռաջ քան զմեռանիլն իմ , զի ծանուցանիցէր ։
եթէ ոք ունիցէր զբողոք ինչ ինչ ։ Երրորդ ։

զի որպէս կատորեցի չորքք տասան սրիկայս գէչ
խաւորս , որք ամար հարկանէին զգաւառս ,
ոչ քնաջինջ արարի զաւազակս , և զգողսն , որք
շրջին 'ի մէջ ծովու : Զսրբորդ , զիարդ Թողի
մեռեալ զմանուկն իմ Վերիսիմոն , զսիրելի որ
դեակն իմ : Ե երրորդ . ընդէր Թողում կենդանի
զա Ժառանգութեան Կայսերութեան զկօմոդոս երեց
որդին իմ : Ով Պանուցիոս , Մեծագոյն բանսան
զոր դիքն պալ կարեն մարդոյ ոչ է ժլատօրէն
այլ առաքինօրէն , տալ զբարի համբաւ իկեանս ,
և տալ զբարի ժառանգ , որ պահպանիցէ 'ի մահ
ուան : Վերջապէս այսու եզրափակեմ : զի ես
աղաչեմ զդիսն (եթէ ունիմ զմասն ընդ նա) զի
եթէ նքա զայրանայցեն , և հրամայեսցեն ,
և համբաւն իմ նուազիցի , և տունն իմ 'ի կորուստ
մատնիցի զա մոլութեան որդւոյն իմոյ , բառնայ
ցին զկեանն 'ի նմանէ , նախ քան տալն զմահ ինձ :



Յաղագս այնոցիկ։ զորս առաց Կայսրն վարպետացն որդոյն Իւրոյ, և կառաւարչացն Կայսերութեան։

Գլուխ Քառասունևերիքերորդ։

Տեսանէք, ով ազնիւք ազգականք իմք, և հնագոյնք Հռովմէացիք, և յոյժ հաւատարիմք սպասաւորք, զի արտաքնչեմ զհոգիս, և վերասարեմ զիս մահուան, թողում զկեանս, և կուեմ զդաշինս ընդ դերեզմանի։ ցաւակիցք լերուք ցաւոյն իմում, անձկացէք ընդ անձկութեանս իմում, և տառապեցարուք ընդ տառապանս իմ, և ոչէ զարմանք, զի յատկութիւն պայծառից խնայց, արեանց մաքրագունից, և բարեկամաց հաւատարմասրտից մոռանալ զաշխատանս իւրեանց, և ողբալ զայլոցն։ Եթէ անասուն մի ցաւակցի այլում անասնոյ, ապա որքան մարդոյ մարդի առաւել պարտի ցաւակցել այլ մարդոյ։ Զայս ասեմ, զի ի զարտասուաց աչաց ձերոց ճանաչեմ զզգացումն սրտի ձերոյ։ Եւ որովհետև մեծագոյն վճարումն բարերարութիւնք, ճանաչել, և շնորհակալ լինիլ, և ես այնքան, որքան կարեմ շնորհակալեմ։ Իսկ եթէ սակաւ շնորհակալութիւն իմ ոչ պատասխանեմ աւանդեցաց արտասուաց ձերոց, հայցեմ ի դիցն, զի հատցեն այնքան համառօտաբար զկեանս իմ։ Եւ նոքա հատուցցեն զպարտն իմ։ Հրաման քեզ իւրայնոցն երթալ ոքառ դիւք, և մեծագոյն տանջանք են թողուլ զիւրայինսն, քան զի զընկերակցուն երկարից ամաց յաւելեալ տա-

ռապանք են թողուլ միայնդամայն 'ի միում աւ-
ուր ։ Իկեանս իմ արարի ես ընդ ձեզ , զոր
պարտէի առնել , այժմ առնեմ զայն զոր կա-
րեմ ։ Դիրքն տանելոցք են զհողին իմ ։ Կամ-
դաս որպէս իմ զկայսերութիւն ։ դերեզմանն ըզ-
մարմինն իմ ։ Իսկ դուք սիրեցեալք բարեկամք
զսիրտ իմ ։ Եւ է այսիրաւուն արդար , զի ո-
րովհետուն մինչ ես կենդանի էի , դուք էիք 'ի
սրտի իմում, այժմ իրաւունն պահանջէ զի լի-
նիցի ձեր զկնի մահուան իմոյ , և զայլ մնացեալ
յատուկ զրուցատրութիւնս արարից 'ի յայսմ գիրս
ի պատմաբանականաւ խօսակցութ ։ Արդէն տե-
սանէք , օվկարևորք , և ներսնա սրտէ բարե-
կամք իմք , թէ որպէս եմ 'ի յետնում և 'ի յետնա
դրունում պանդոկին մարդկանց , և 'ի սկզբան
առաջնոյ պանդոկին դիցն ։ Ես ձեզ վասն ան-
ցելոցն , և դուք ինձ վասն ներկայիցս իրաւունք
են զի միմիանց հաւատասցուք ։ Քանզի ժամա-
նեալք հասաք 'ի ժամանակ իմն , յորում ոչ ու-
նէք զոր ինչ զոր յինէն խնդրիցէք , և ոչ ես
ունիմ զայնպիսի ինչ , առ յոր հրաւիրիցեմ ըզ
ձեզ , ոչև ունին իմ կարէ լսել զշողքորթութիւն,
և ոչ սիրտ իմ ըմբերել կարէ զատիպմանց։ Եթէ
ոչ ճանաչեցիք զիս , ճանաչեցէք այժմոյս , ես
եղէ այն որ եմ , և ես եմ նա , որ եղէ ։ Ըստ
կարծեաց ձերոց 'ի յանցեալս ժամանակս եղէ եր
բեմն զիր իմն ։ Տեսանէք զիս աստ զի եմ ես սա
կաւ իր ։ ուրեմն զկնի փոքու եղէց ոչինչ ։ Մար
կոս ծերն և բարեկամն ձեր այսօր առնէ զզրաւ
կենաց իւրոց ։ Մարկոսի ազգականին ձերոյ
այսօր աւարտին զբախտն իւր ։ Մարկոս Տէրն
ձեր այսօր վերջացուցանէ զտէրութիւնն իւր ։
Մարկոսի Կայսեր ձերոյ այսօր զկատարումն ըն
կալնու Կայսերութիւնն ։ Ես յաղթեցի զբազումս ,
և այսօր յաղթիմ 'ի մահուանէ ։ Ես եմ նա , որ
բազմաց ետուս զմահս բազումս , և ոչ կարեմ
տալ գոնեա այսօր միայն զկեանս ինձ ։ Ես եմ
նա , որ մոռանէի 'ի կաւս ոսկէղէնս ։ և այսօր

դնեն զիս 'ի դագաղս փայտեղէնս։ Եւ եմ՚նա, վասն որոյ երդէին, և եղանակէին քաղցրութիւն, և այսօր լան ամենեքեան։ Եւ եմ՚նա, որ եղէ յոյժ շրջապատեցեալ զօրօք, որք հետուէին զկնի իմ, և այսօր ընկերակցին ինձ սովալուկ որդունքն։ Եւ եմ Մարկոսն այն յոյժ համբաւաւորն, որ հաշակաւոր յաղթանակութիւն երանէի 'ի բարձրագոյն Կամպիտօլն, և այսօր մուռացմամբ 'ի ջանեմ՚ի դամբարանն։ Աղաղակեմ տեսանեմ աչօք մերձ առիս այն, յորմէ երկնչէի։ և երկբայեր սիրտ իմ՚ի հեռաստանէ։ Այսպէս դիքն իցեն ինձ ներիչք, և նպաստաւորիչք, յաշխարհի աստ, և քաւիչք լիցին ինձ՚ի հանդերձելումն, որպէս ոչ երբեք սիրտ իմ ընկալաւ զկաճառութիւն, և զբօսանս առ՚ի անցուցանել զկեանս այս, առանց ունելոյ զսիրտ իմ զտաղնապ, և զերկիւղ մուաձելով զայս ժամս մահուան։ Ուրեմն մի՛ ունիցիք զարտմութիւն տրտմմամբեալ, և զտառապանս, զի կամ դուք զիս, կամ ես զձեզ տեսանելոցք եմք՚ի վախճանի, և զնորհակալութիւն, և զփառս մատուցանեմ դիցն, զի տանին զձերս այս՚ի հանդուցանել ընդ ինքեանս, և թողուն զձեզ, որպէս զի դոլով դուք մանկունք։ կարիցիք ծառայել Կայսերութեան։ Ոչ կարեմ ուրանալ, թէ ես ոչ երկնչիցիմ՚ի մահուանէ որպէս մահկանացու։ Քանզի ոչ գոյ համեմատութիւն խօսելոյ զմահուանէ իկեանս, և ճաշակել զմահն՚ի մահուան։ Մինչ ոք կորուսանէ զկեանն, ոչ գոյ խոհեմութիւն խոհեմին, ոչև զօրութիւն հզօրին, և ոչ տիրութիւն այնքան տիրապետեալ, որ կարիցէ՚ի բաց մերժել զերկիւղ հոգւոյն, և զցաւն մարմնոյն։ Ի յայսմ ժամուս այնքան շաղկապեցեալք, և այնքան ազգականութիւն սեւ ունեցեալք միանան հոգւին ընդ մարմնոյն, և չուզեն ընդ արեան, մինչ զի անջատիլն միոյն՚ի միւսոյն, է առաւելք զարհուրելի, առաւել սարսելի, և առաւել տխրագին և ծայրագոյն տեղեքան զամ երս ահագինս, և սարսափելիս։ Իրաւի ընդ-

ունակէ բանականութիւն առ 'ի վերահասու լինիլ, զի հոգին չուէ աւաղ և եղուկ թողլով զմարմինն 'ի մէջ որդանց, և մարմինն մնայ ոխակալութիւն. մինչ տեսանէ թէ հոգին երթայ 'ի զմայլիլ ընդ դիցն։ Ո՛հ թէ որքան անզգուշք եմք մեք իկեանս մինչև դլորիցիմք 'ի կենաց յայնժամ ուղղեցեմք զաչս 'ի հայեցումն մահու։ Հաւատացեք զայս, զոր կամիմ ասել։ Զի անցեալք են ժամքն այնք, զորս այժմ ունիք դուք 'ի ներկայ, և այժմ փորձատեսս առնեմ զոր տեսանէք։ զի անզգուշացուցան զմեզ այնքան ունայնութիւնքն իրաց ունայնից, մինչ զի մինչ սկսանիմք զկեանս կարծեմք և թուի, մեզ թէ յարատևելոցք իցեմք այնքան որքան յարատևելոցդ աշխարհ, և մինչ ելանեմք 'ի կենաց, երևի մեզ թէ լեալ իցէ փչումն մի ինչ չոյ։ Եւ զիցուք թէ զգայականութիւնն վշտանայցէ վասն զգալեաց, և մարմինն վասն մարմնոյ։ բայց բանականութիւնն որ է առաջնորդ, և ճանապարհացուց մահկանացուաց, ասէ ինձ թէ մի՛ նեղանար 'ի չվումն, և 'ի բաժանումն հոգւոյս 'ի մարմնոյս, զի եթէ կացէր, և ապրեցար ոչ անքան անասուն, իրաւունք են զի մեռանիցես որպէս մարդ խելամուտ և հանճարեղ։ Ի մեռանիլ իմ ոչ մեռանիմ ես, այլ մեռանին այսօր հիւանդութիւնքն իմք։ Մեռանի քաղց, և ծարաւն։ մեռանի ցաւքն, մեռանին վիշտք և անձկութիւնքն իմք, մեռանին տառապանքն և տրտմութիւնքն, մեռանին ցաւք, և ախտակրութիւնքն, և համայնքն այնոքիկ որք տանջէին զիս։ Այսօր տարամերժին յինէն ամպքն մթացեալք և եղուցին պայծառք և պարզք երկինքն։ Այսօր 'ի բաց հեռքին քօղունք յաչաց իմոց, և տեսից զարեգակն ճառագայթեալ։ Այսօր հարթք և հաւասարք եղուցին ճանապարհքն առ 'ի չուել ընդ շաւիղս ուղիղս։ Այսօր են աւուրքն այնք որք աւարտին և կատարին ընթացքն, և պանդխտութիւնքն և վերջանան և պանդոկքն քաշալերեն զիս, զի մի՛ երկեայց 'ի յերթ, և 'ի յեկ-

ցու-

ցութիւն բախտին։ զգոհութիւն, և զփառս մա-
տուցանեմ դիցն անմահից, վասն զի թողին զիս
կեալ, և ապրիլ այնքան մաքրութիւն, և 'ի յայս-
քան երկարութիւն ժամանակի կենացս, ոչ ա-
պերջանիկ բախտն ինձ, այլ ես նմայ և նախան
ձաւորութիւն նորա այսօր տացից զվախճան, և
զզրաւ։ Իրաւի, եթէ դիքն հրամայիցեն թա-
քուցանել զմարմինն իմ 'ի գերեզմանի, վասն
զոլոյն նորա մահկանացու, բայց նոքա որ-
դրաքք գոլով խոստանայցեն, զի համբաւն իմ
յարամայցէ անմահութիւն յաղագս բարւոք կեն-
ցաղավարութեան իմոյ։ Ո՞հ թէ որքան երջա-
նիկ, և ցանկալի փոխարկութիւն է այս, այսինքն
փոխարկել զձանձրալի կեանն, և զընկերակցու-
թիւն մարդկան, ընդ քաջացրագոյն դիցն։ զերկ-
բայութիւն կացուցեալ բախտին, ընդ անսայթաք
և ապահով կացուցեալն։ մշտակիր զերկիւղն, ընդ
մշտնջենական խաղաղութիւն, զկեանն չար, ընդ
համբաւոյ բարւոյ. ով իցէ այնպիսի անմիտ,
որում վատթար թուիցի նմա փոխարկութիւն
այս։ Են ամք կէ. յորս երկիրս այս հոգային
անոյշ զմոխիրս այս. ահա է հաս ժամանակ. յո-
րում դառնալով ես առ նա, նա զիս վերաձա-
նաչիցէ յորդիութիւն իւր, և ես զնա 'ի մայրութիւն
իմ։ Եւ իրաւի զի է մայր յոյժ գորովագոյթ.
զի թէպէտ այնքան երկար ժամանակաւ նրբա-
կոխս արարի զնա 'ի ներքոյ ոտից իմոց, ասկայն,
նա կամի այժմ ընդունիլ զիս 'ի մէջ յորովայնի
իւրում մշտնջենապէս։ Եւ թէպէտ ես եմ այն,
որ եմ, և նա գոլով այն որ է։ ասկայն սոռոգիս
գիտեմ, զի զիս ունելոցէ 'ի մէջ որդանց առաւել
անսայթաք, և անվրդով, քան թէ 'ի Հռոմ 'ի
մէջ ծերակուտից իւրոց։ Թէպէտ ձեզ սան-
ջանք, և դառն թուի, ինձ ոչ է փոյթ, միայն
թէ դիցն իմոց հաճոյանայցեմ բարւոք է։ Ո-
րեմն լինելոցէ, և ոչ կարէ յօդել զպատճառանս
Հրաշուէի ես, եթէ հինաւուր այս վաղվաղակի
խոնջիւր, և կտաւս այս 'ի յեռս քանդիցին, և

գժառանգութիւն գերեզմանին տացէին ինձ ; և
թենիդէր սկիզբնական իր , զորս 'ի յիս իւրացու-
ցանէի , և մշտնջենապէս մայրէր ընդիս , թարց
ունելոյ զկասկած կորուսանելոյ զայն երբէք ,
Ամենայնք իրք մահկանացուաց , զորս մահկա-
նացուքն ունին , և սիրեն 'ի նախանձոյ մարդ-
կայնոց են ցանկացեալք , բաց 'ի մահուանէ , և
'ի գերեզմանէ , յորս գոն մանաւանդականք ա-
զատութիւք , ընդդէմ կատաղոյ քաղցին նախան
ձոյ , և սխալալութեան : Բարւոք տեսանեմ
հեղուլ զարտասուս յաչաց ձերոց , դառնապ
հոգոյ հանումն , և զհառաջումն տրտմալի 'ի
խորոց սրտից ձերոց . վասնզի ասեմ զայս : Չէ
է , զի ոչ կամիք զն ցանկանայցեմ մահուան :
Ահաւասիկ բժիշկքն ոչ խոստանան ինձ , եթէ
ոչ զժամս երիս ունելոյ զկեանս , և 'ի սրտի
իմում շաղկապեցեալք , և յօդեալք են բողո-
քումն երից հազարաց ամաց , որոց օծանելիքն
նորա և ծաղեանիքն մահնէ : Թէպէտ տկարք , և
անզօրք են տկարութիւնքն մեր , սակայն այնքան
զգացեալք են պատիւքն մեր , մինչ զի , 'ի մա-
հուան որքան առաւել թեթևանան զծանրու-
թիւն տակերաց 'ի մարմնոյն , այնքան առաւել
քեռնաւորին , և ծանրանան զսիրուս հոգացո-
ղութիւք , և վարանմամբ : Զոր օրինակ , զի մինչ
արձակին ջիլքն , և զոսկերն մարմնոյ , յայնժամ
մայ մերկացեալ , և կորացեալ զսիրտն : ուրեմն
թողլով զայն , որք յատկապէս պատշաճին ինձ ,
կամիմ խօսիլ հասարակօրէն , որք պատկանին
առ մանուկ թագաւորս այս , և առ ձեզ , որք
էք վարպետք նորա և ալեւորք : Տեսանէք անդ
զորդին իմ Կոմոդոս միայն , և միայնակ , ժա-
ռանգ , որ յուսայ ժառանգել զկայսերու-
թիւն ոչ վասն գոլոյն իւր բարի արդիւնաւո-
րի զգովասանութիւն , և ոչ վասն գոլոյն ինչաբ
արդիւնաւորի զանդիմանութիւն : Քանզի զբնու-
թիւն ընկալաւ իւրոցն , և զզարգացումն 'ի ձենդ :
Բազում անգամ մինչ էր երեխայ , դնէիք զնա
'ի

'ի գիրկս ձեր, ուստի այժմ որ եղև այր կատա-
րեալ, դիք զնա 'ի սիրտս ձեր։ Մինչև ցայժմ
էիք վարպետք նորա, այսուհետև եղերուք հայր
նորա։ Գոլով ես կենդանի, ունիք դուք զնա
թագաւորելոց առ 'ի սնուցանել, և 'ի Կայսր առ-
'ի ծառայել, և առ 'ի ազգակից առ 'ի օգնել, և 'ի
յորդի առ 'ի վարդապետել։ Մինչև ցայժմ էր 'ի
հոգածութեան հօր։ և մեր իւրոց, և վարպետաց
իւրոց, այսու հետև ձեզ միայնոյ մնայ։ Չի նմա
նի ոչ նաև մի ներաչէն, որ ուղղաւորի և ածի
այսոր 'ի մէջ հզօր, և կատաղուն ալեաց ծովու,
և դահավիժեացի 'ի ծոց ծովու, որ ոչ ունի զյա-
տակս, յորում առաքասքն յաջողութեան կորա-
ցուցեալք թեքեն զնա, և ապառաժք ծածկեցեալք
ընդ ջրով ձախորդութեան ընկղմեն զնա։ Ուրեմն
'ի մէջ այսպիսւոյ նաւակոծութեան, և այսպիսեաց
հողմոց սաստիպողաց, և հեղեղուկ ջուրցն անհաս
տատութեան, յոյժ հարկաւորեալ պիտոյանայ նմա
ղեկ և թի բարեգոյն։ Իրաւի ես ունիմ զմ-
ծուգոյն ցաւակցութեան Կայսերութեան և ոչ սակաւ
ցաւակցութեան 'ի վր մանկանս այսորիկ, և որ զք
բարեկամ նմա, և սիրէ զնա, առաւել ողբայցէ
զկեանս նր, քան թէ զմահն իմ, քանզի ես փր-
ծանեալով 'ի ծովէ, տեսանեմ զիս 'ի նաւահանգս
տեսակ անապատաք, և ապահով և 'ի յերկրի հան-
տատութեան, և նա թողլով զապահովն, որ այժմ
ոչ ճանաչէ և դնէ զինքն 'ի վտանգի ընթանալով
'ի ծովն ուր ոչ գիտէ հասակն տիոյն իւրոյ նորա-
քողբոց, և երկարութեան փորձառութեան իմոյ,
առնէին զնա իրաւաքար զկայսր մի կատարեալ
ամենայնի։ Բայց զինչ արասցէ Հռօմն տրտում,
որ մինչ ունի զզարդացեալ թագաւոր մի բարի,
կամ բախտքն աներջանիկք հասուցանեն զնա 'ի
զրաւ, կամ նախանձքն չարաց ապանանեն, կամ
անդթութիւնք դիցն տանի, կամ մարմնոն վերա-
ցուցանէ զձեռս իւր։ Բան կերպի իրիք, զի փոր
ձելով զթագաւորս չուեն բոլոր կեանքն իւրք,
ողբալով զմանկութիւն մանկանց ներկայից, և

հառաջելով վա՛ ծանրակացութե՛ անցելոց ծերոցն իւրեանց։ Ո՛հ եթէ հաւատայցէին թագաւորքն, որք նորա՛ւ սկսեն թագաւորել, և լի՛նիլ կայսր, թագաւորացն այնոցիկ, որք կամին ելանել յաշխարհէ աստի, որքան բարւոք ուսանիցէին, թէ որքա՛ն անտանելի է առն միոյ միայնոյ բառնալ՝ի վրայ իւր զայնքան գաւառս և զթագաւորութիւն, և թէ ո՛՛՛ նայ ոչ կարէ եթէ ոչ առնուլ՝ի հպատակաց իւրոց զինչս նո՛՛՛, և նք կողոպտեալ զպատիւ, և զհամբաւն նո՛՛։ Թագաւորն առաքել՝ի յաքսոր զանձինս նո՛՛՛, և նք տառապեցուցանեն զսիրտս նո՛՛՛՝ի նայ աւարտի զկեանն և հպատակեալքն ոչ երբեք աւարտեն զբողոքս, և զդանդատս իւրեանց։ Թագաւորն գոլով միայն, ոչ կարէ առնել առաւելքան զմի ոք, և հպատակեալքն գոլով բազումք սպասեն, թէ արասցէ վա՛ ամենեցուն։ Հայեցարուք, թէ որքան վատաբախտաբար կեայ թագաւորն, զի յետնագոյն գուեհիկն Իլիրիկու կարծէ, թէ վա՛ իւր միայն, և՝ի նա միայն ունիցի սեւեռեցեալ զաչս իւր Կայսրն Հռովմայ։ Եւ որպէս յաշխարհ իցէ այնքան դանդատիչ, և որք յաւելուն աճելով՝ի նմա, են այնքան անկրթելք։ Յաւուր որում արքայն գնէ զթագն՝ի գլուխն իւր, և առնու զգաւազանն արքունի՝ի ձեռս, յայնժամ հպատակեցուցանէ զինչս իւր ազահաց, զարտուում կեանն իւր բախտին, զպարանոցն անիրաւաց, և ամբարշտաց, զհամբաւն նախանձողաց, և զամ կացութիս իւր՝ի կամս և՝ի կար ծիս այլոց։ Հայց՝ի յայսմիկ ցուցանեն զիրքն ըզկարողութիս իւրեանց։ Զի յամ խելամտութիւքն լիցին կապեցեալք, և մի միայն իցէ ազատ։ զկարծիս, և զերեւակայութիս համայնից գտատպարտեցցի և զմինն գոլիցի, տան զտէրութիւն միոյն, և զհպատակուն այնքանից։ Մի՛ոյն տացեն զպատիւ ամենեցուն և ամենեցուն ոչ զպատիւ միոյ։ Վա՛ ախորժանաց այնքանից տան զմի միայն կերակուր, որոյ համն վա՛ միոյ է քաղցր, և վա՛ ամ-

ամենեցուն է դառնացել։ Միոյն վիճակի ոսկր, և միւսոյն միս փափուկ և թարց ոսկերաց, և 'ի կատարումն գործոյն մինն խեղդի և միւսն զզուի և տաղտկանայ, և 'ի վախճանի ամենեքեան ընդունին զվախճան։ Կամի՞ր հարցանել ցյոյժ քաղցեալն զի պատասխանիցէ՞ն ինձ, թէ զինչ պտակն Կայսերութիւն, զինչ գաւազան ոսկեղէն, զինչ մանեակ մարգարտեայ, զինչ մետալքն Աքայիսու. զինչ զգեստքն Աղէքսանդրիու, զինչ անօթքն կորնթոյ, զինչ կառք յաղթանակութիւն, և զինչ պաշտօնք բգեշխից և քաղաքապետաց ցան կան ունիլ փոխանակ հանգստութեան իւրեանց։ Հաւատի՞ էայս. զի ոչ կարէ հաստատիլ միոյն, եթէ ոչ իցէ կորուստ միւսոյն։ Այսչ պատճառն, զի որոյէն վատթարագոյնք ծովքն թացք, և համարձակեալք յանդգնունք նաւավարքն որք պարտէ՞ինք, փախչիլ 'ի ծովէ առ ցամաք, խոյս տամք 'ի ցամաքէ առ ծովն։ Զմի՞ ինչ կամիմ ասել, թէպէտ իցէ ընդդէմ ինձ։ Զի ամենեքեան ատեն զպատերազմն, և ոչ ոք ցանայ հետևիլ խաղաղութեան։ Ամենեքեան դանդատին զվրդովմանց, և զաղմէ՞, և ոչ ոք շտանայ հանդարտութիւն։ Ամենեքեան աղաղակեն թէ աշխատանք և տառապանք իւրէ՞ հրամայեն, և ոչ ոք կամի գալ 'ի ներքոյ հրամանաց։ Մինչ ա՞ն զեն 'ի ժամանակի անցելում, է՞ և ես այժմ 'ի ներկայումս, զի են այն քանք անդրամք, և լերբք լրբացեալքն, մինչ զի կամին նոքա ընտրել զհրամայելն ընդ վատնդաւ, քան թէ հնազանդիլն ընդ հանդարտութիւն։ Տեսանելով իմ, թէ աւուրք իմք նուազեին, և հիւանդութիւն յաւելանայր, երկրայելով յայնժամ, զոր տեսա նեմ այժմոյս, դառնալով 'ի պատերազմն Սիրիլիսու, զմտաւ ածի առնել զկտակագիրս, և է՞ այս, զոր ասա տեսանէք բացէք և նայեցարուք, և նովաւ տեսանէք, թէ որպէս թողի զձեզ լինիլ վարպետք որդւոյն իմոյ, և կառավարիչք Կայսերութեան։ Հայեցարուք, զի թէ

պէտ ի՛ցէք բազումք հարք որդւոյն իմոյ սիրով
'ի միջի ձերում և հաւատարմութիւն ընդ նմայ մի
լինիցիք առաւել, եթէ ոչ մի միայն։ Զվերագոյն
վտանգ ունի թագաւորն, և ոչ զսակաւ թշուա
ռութիւն իւրն հրապարակի ուր ի՛ցեն այնքանք դի
տաւորութիւնք, որքան ի՛ցեն խորհրդատուք։ Իրաւի
նա կոչի թագաւոր փառաւոր, և ազինք բարե
բախտք և խորհրդարան և ծերակուտ աջողական,
յորս յամենեցունց յառաջանայ մի միայն խոր
հուրդ, և խորհրդատուքն ի՛ցեն ծերունիք, և
ուր խորհրդատուքն ի՛ցեն բազումք, դիտա
ւորութիւն ամենեցունն ընդ ամենայնի ոչ ի՛ցէ
յառաւելքան զմի միայն։ Յայնժամ Հռոմ եղև
ապաստարեցեալ 'ի բաբեաց, և զահի հարեցեալ
'ի անիրաւ բռնաւորաց մինչ միաբանեալք խոր
հրդարանն իւր մտանէին երեք հարիւր այրք փոր
ձեցեալք, որոց թէպէտ առ 'ի փալն միջնորդու
թեան էին զանազանք, սակայն զիրաւն ասեմ զն
'ի կամն, և 'ի բարի վախճանն իրին հրապարակի
ամենեքեան էին մի միայն։ Յոյժ աղաչեմ, և
'ի դիսն երդմնեցուցանեմ զձեզ, զի ի՛ցէք յոյժ
բարեկամք 'ի ջրուցատրութիւս, և համակերպե
ցեալք 'ի խորհուրդս։ Համայնք տկարութիւնք
թագաւորաց են ըմբերելիք, բայց 'ի չար խորհր
դականութեան, և համայնք պակասաւորութիւնք
խորհրդատուաց են տանելիք, բաց 'ի նախան
ձուց, և 'ի յղձից չարաց։ Յորժամ ուտիլս այս
ներմանեմ 'ի յայնս, պատճառեմ զվտանգս 'ի դա
տաստանի, զվարդի համարումն թագաւորին
զերեսպաշտութիւն, և զկողմնապահութիւն 'ի մե
ծամեծս, և զդայթագղութիւն 'ի փոքրկունս։
Զբնաւանի հաւատարիմն արքային որ ունի զանե
լամութիւն մեծնացեալ կրիւք չարակնութիւն, և
ունի զանիրան զբաղեցեալ 'ի բարկութեան, և զնս
ակցութիւնս արտաքոյ չափից 'ի յօտենս բարեաց,
և արդարութիւն զի առ դիան կորուանիցէ զոգ
նականութիւնն, առ թագաւորն զնտանեկցութիւնն
հաւատարմական և առ ժողովուրդն զհաւատար
մու-

մութիւն, և դառնամ ասել, թէ արդարագոյնէ։ Վասն էր զի այնպիսի յանդգնութիւն բարկացուցանելոյ զդիսն ընդ չար դիտաւորութեան իւրով, և ոչ ծառայել թագաւորաց ընդ իւրով ոչ բարեաւ խորհրդականութեան և մի զանչել ընդդէմ իրին հրապարակի ընդ ամբարտաւանութեան, և փառամոլութեան իւրով։ Ո՛հ թէ որքան տգէտք են թագաւորքն, որք զգուշանան 'ի խոտից, որք 'ի մէջ կերակրոց կարեն զնոսա մահադեղել, և թունաւորել, և ոչ զգուշանան 'ի մահադեղէն, զոր առանձնականք ընտանիք իշխանքն իւրեանց 'ի մէջ խորհրդոց կարեն տալ։ Եւ իրաւի ոչ գոյ համաբաղդատութիւն և նմանութիւն քանզի խոտոնքն թոյնաւորք, ոչ կարեն տրիլ, եթէ ոչ միանգամ յաւուր միում։ Բայց մահադեղն չար խորհրդածութեամբ, յամենայնում, և իւրաքանչիւրում ժամում։ Դարձեալ, թոյնն ունի ընդդէմ ինքեան 'ի յեղջերուոյ միեղջերուէ և ճարակ 'ի աղնիւ թրիաքէ, և 'ի դեղաթափէ, և այլոց դեղոյսէից, որք տան փախել զմահադեղն, բայց մահադեղն չար խորհրդատրութեամբ ոչ ունի զհնար և ոչ զդայ զբժշկուն ոչ և օգնութիւն ինչ նպաստ յինքեան ունի։ Վերջապէս ասեմ, զի թոյնն տուեցեալ 'ի թշնամեաց 'ի մէջ կերակրոց, կամ ըմպելեաց, ոչ սպանանէ, եթէ ոչ զկայսր մի Հռովմայ։ Բայց մահադեղն զոր տոյ առանձնական ընտանին չար խորհրդատրութեամբ, սպանանէ զկայսրն, և քայ քայեալ աւերէ զիրն հրապարակի, և որպէս ամ թագաւորք խոհեմք։ ունին առաւել մեծ համարեցեալ զհամբաւն մշտատև, քան զկեանս անցաւորս, գոլով գուք կառավարողք Կայսերուն, և դատեսարակք որ գոյն իմոյ։ ոչ ունին այնքան կարողութիւն որք չար կամն 'ի վերայ կենաց նորա, զորքան գուք 'ի վերայ համբաւոյ նորա։ և վասն այսորիկ հայիկ որպէս հակել վասն թշնամեաց օտարականաց այսպէս և պարտէ տքնել և հոգալ 'ի մէջ առանձնականաց ընտանեաց, և բարեկամաց տան իւրոյ

Զմի իր պատուիրեմ ձեզ, որպէս սպասաւորաց և ծառայից իմոց, և աղաչեմ որպէս բարեկամաց իմոց: զի մի՛ ցուցանիցէք այնքան առանձին ընտանիք հրապարակաւ, ոչ իցէք ի գաղտնի, և ի ծածուկ: որպէս զի մի՛ երևիցին մինն բնական. որգի, և միւսն գնուածոց ծառայ: Կա՛ որ հանձարեալ, կարէ ունիլ զբաղում խոհեմութիւն առ ի օգտակարին՝ ի մէնէ իւրմէ՝ ի ծածուկ, և զբաղցրագոյն զրուցատրուն ընդ ամենեսեան՝ ի յայտնի: Քանզի այլ կերպիւ առանձնական ընտանեկցութիւն իւր ընդ նմա սակաւ ուրեք, և աստեղութիւն թագաւորին ընդ ժողովրդեանն յոյժ բազում: Միշտ ընթերցայ՝ ի նախնեաց, և տեսեալեմ՝ ի ներկայ Հռովմացիսն, զի մինչ սակաւքն ունին զբաղում խնդիրս ընդ միոյ, այն մինն ունի զսակաւ ընդ սակաւուց, և յոյժ սակաւս ընդ բազմաց, ընդորոց առ քարշեն այնքան տարակացութիւն կամաց, որքան են մերձակայութիւնք անձանց: Եւ որպէս չարութիւնք ժամանակի, և անկայութիւնք բախտին ոչ թողուն զերս միշտ իմի և՝ ի նոյնում կացուցեալ, եթէ ոչ յերբայն առաւել անայթակք, և ապահովք անկանին՝ ի վտանգս արթնացողքն: Յայնժամ թագաւորքն մինչ անցեալք հաճոյակութիւնքն իւրեանց վտանգաւորեցեալք՝ ի յաշխատանս, որոնեն զամենեսեան և գտանեն ոչ ոք բնաւ: Այս պատահի, զի մինն ընդ ներկայ երկիւղիւ կամի խոյս տալ, և միւսն յաղագս ոչ ունելոյ՝ ի ներկայ զոգնականութիւն, և զնպաստութիւն, ոչ կամի ջանադրել: Կամիմ՝ ասել ձեզ զբան մի, զոր տայցէք միշտ մտադրել որդւոյն իմում: զի ուրդնեմք զաշխատանս մեր յոյժ՝ ի հեռաւոր վկայմն իւրեանց պարտիմք շահել՝ ի մօտուց: Հողագործն ուշիմյամ մի բոլոր դործէ և վարէ զերկիր, և՝ ի միւսում ամի հնձէ և քաղէ: Մի՛ առնուցուն զձեզ՝ ի ծառանդուն յանդգնեցեալքն, և պարծողքն զանձնէ. քանզի յանդգնութիւք առանձնականի ընտանւոյ, ալեւորի աւերէ զկարօղութիւն, և հեղինակութիւն թագ-

դա-

գաւորին, որ տակաւին դեռևս մանուկ, և ոչ
վասն այսորիկ արհամարհիցէք, և յետս քարշ-
ցիք, զի փոքր կերպարանք, և կացութիւնք թե-
բամտականք են, ծնանի զանամօթխածութիւն, և
զհամարձակութիւն 'ի ծառայս։ Եւ թողի բացայ
այտեցեալ 'ի կտակի իմում, զթագաւորն Կո-
մոդոս 'ի յորդիութիւն ձեր, և զձեզ 'ի հայրուն
նորա։ Բայց ևս կամիմ, և պատուիրեմ ձեզ,
զի ամենեքեան վերաճանաչիցէք զնա տէր ձեր
'ի հրամայելն, և դուք ծառայք իմք, և հպա-
տակք նո՛ւ 'ի հնազանդիլն։ 'Ի բանս դժուարա-
կիրս առ 'ի լինել բարւոք յառաջնորդեցեալ դա-
տողութիւն վերատեսցի ընդ իմաստնովք, ատե-
նաբանիւք, և երևակայութիւք ձերոյ կառավար-
ջօք իւրովք, բայց զահմանումն իրաց առնու-
ցուն 'ի թագաւորէն, որ է տէր ամենեցուն։
Զնորհուրդ մի տամ ձեզ. զի եթէ 'ի նմանէ
չար լինի դիպիցի ձեզ, բողոքեցիք զնոսն 'ի
դիպն։ Յայնժամ լիցի հաստատուն Կայսերու-
թիւն որդոյ իմոյ 'ի Հռովմ, և ապահով առանձնա-
կան ընտանեկցուն ձեր 'ի տան նո՛ր, մինչ խոր-
հուրդքն, ձերք եղիցին չափաւորեցեալք ընդ բա-
նականութեան, և կամք նո՛ր լիցին կարգադրեցեալք
ընդ խորհրդովք ձերովք։ Յոյժ աղաչեմ զձեզ,
զի մի՛ լիցիք ժլատք, վա՜ այսորիկ եռու ձեզ
զմեծամեծ պարգևս ի նեանս իմ, զի 'ի բաց հեր-
քիցիք զժլատութիւն 'ի ձէնջ յետ մահուան իմոյ։
Եղիցի իրն յոյժ այլակերպ, և այլանդակ, զի
նոքա որք սանձահարելոցք են զժլատութիւնն այ-
լոց, ունիցին միշտ տարածեցեալ զձեռս 'ի առնուլ
վա՜ սեփական շահիցն իւրեանց։ Խոհեմք առանձ-
նականք ընտանիքն ոչ պարտին առնել զամ՛ չարս,
զորս կարեն առնել, և ոչ խնդրել զամ՛ առ յորս
կարեն հասանիլ, զի ոչ տայ թագաւորն զայնքան
ըստ ացուածս վա՜ տանց իւրեանց, զորքան նա-
խանձք, և սխակալութիւնք ժողովրդեան տան վա՜
անձանց իւրեանց։ Եւ ոչ նաւք միջակք առա-
ւել ղերծանին 'ի միջակ ծովէ, քան զմեծադոյն
նաւ

նաւն գահավիժեցեալ՝ի մէջ մրրկեալ ալեաց ծո-
վու, այսպէս և կացութեն միոյ՝ի մէջ միջոց
նախանձաւորաց առաւել ապահով կայ, քան
զմեծագոյն կացութիւն, և փարթամ առանձնա-
կանութիւս ընտանեաց՝ի մէջ թշնամեաց ոխակա-
լաց և չարաղձից։ Է կանոն կարգաւորեցեալ՝ի մէջ
իմաստնոց, և անսղալ փորձառութիւն՝ի մէջ
բարեաց, և կարծեմ թէ լսելով գիտասցեն չարքն,
թէ փառքն առն միոյ՝ի մեծամեծս գնեալ արհա-
մարհանք, ՝ի հաւատարս զորոգայթ, և՝ի փոքր-
կունս զնախանձ։ Ի յիրաց բազմաց զմի ինչ պար-
տին ունիլ ՝ն՝ք, որք կամին բարւոք կառավարել,
այսինքն ազատութիւն։ Որքան լինիցիք սակաւա-
պէս ժլատք, այնքան եղիցիք առաւելագոյն ազատք։
Քանզի՝ի կատաղմանէ ժլատութեն նուազեսցին
ուղղութիւք դատաստանի։ Ե՝ն բազումք աւուրք,
յորս հաստատեցի՝ի յիս, և սահմանեցի յանձնել
ձեզ զկառավարութիւն Կայսերութեն, և զզար-
դացումն որդւոյն իմոյ, և իսկոյն նախապատ-
րաստեցի զարդարել զտունս ձեր առատայ ձեռ-
նութ՝ն, տալով ձեզ զինչս իմ առ՝ի մերժել
զժլատութիւն որ՝ի վ՝ր բարեացն այլոց կարե-
լի է ունիլ։ Հաւատացէք ինձ զմի իր, զի եթէ
ունիցիք զաչահութիւն՝ի ձեզ, և զոխտ ընդ դրա-
ցիս ձեր, միշտ ապրիցիք ընդ տանջանաւք։ Չի՝ի
գործառութիւս այլոց սիրտք եղիցին ըղձիք
ոխակալութ՝ն, և խեղամտութիւք՝ն՝ի յաչիշութեն։ Եւ
յետ այնորիկ անդ ուղղիցիք զդատաստանս այլոց,
ուր տեսանիցիք գոլ շահեկանութիւն ձեր սե-
փական։ Վերջապէս կամիմ ձեզ տալ զխորհ-
ուրդ մի զոր միշտ ընկալայ վ՝ր իմ։ Մի երբեք
զպատիւն ձեր յանձնիցիք ապաւանութեամբ
տին, և մի՝ մատնիցէք զձեզ՝ի վտանգս այնու
յուսով, թէ դատանելոցք իցէք զՀարակ, և
զչեզ։ Վ՝ զի կարծունակ բանիսն ունի միշտ աբ-
ձակ զդուռն վ՝ն վտանգի, և զպարիսպս քարձ-
բադոյնս, և զոտնատեղիս անձկագոյնս վ՝ն դատ-
նելոյ զհնար ինչ փրկութ՝ն։ Ե՝ւ քանզի զգամինձ
լքեցեալ, թողէք զիս հանդչիլ սակաւիկ մի։

Յաղագս թէ որպէս Կայսրն Մարկոս 'ի ժամու մահուան իւրոյ հրամայեաց կոչել զԿօմոդոս որդին իւր, և որպէս բացայայտեաց զայնոսիկ, որք ընելոցք էին կառավարիչք Կայսերութեան։

Գլուխ Քառասուն և չորսերորդ։

Ընդեալ մեծագոյն մասն գիշերոյն, և եղեալ ժամ մերձ արշալուսոյ առաւօտեան, թէպէտ բարի Կայսրն ժամանէր ժամն տալոյ զհոգին, ոչ վասն այսորիկ կորուսանէր զհոգացողութիւնն իւր կարգաւորելոյ զիրս վասն վէնի մահուան իւրոյ։ Էին յայնմ ժամանակին պատերազմի բազմութիւնք գերազանցք անձինք 'ի ծերակուտիցն Հռովմայ։ 'Ի մէջ այլոց իրաց, յայսմիկ եցոյց զինքն յոյժ իմաստուն. զի ոչ երբէք կամեցաւ ունել 'ի տան իւրում զարս սիրօղս մոլութեաց։ Բերէր ընդ ինքեան 'ի մէջ այլոց զիսաւն ձիավարս 'ի յնկերակցութիւն իւր, որոց իւրաքանչիւրումք 'ի նոցանէ կարէր հաւատալ զբոլոր Կայսերութիւնն Հռովմայ։ Բազմիցս սովորէր ասել, թէ թագաւորք առաւել ապահովք, և անկասկածք կեան դիպելով 'ի տան իւրեանց զգանձս բարեաց արանց, քան թէ 'ի յարկսն իւրեանց զչար դրամս։ Զարաբախտ թագաւորն, որ պատուական համարէ զարկսն իւրս լի գանձուք։ և զխորհրդարանն իւր արամբք կորստականօք։ Աչք վատթարք առնեն զթագաւորն հասանիլ

'ի

'ի յետին աղքատութեան, և այր մի բարի բաւա-
կանէ առնել զԹագաւորութիւն մի հաստատ, և փար-
թամ։ Ստուգիւ զի բարւոքք ասէր զայս Կայսրս
բարի, քանզի ամենայնիւ առաւր տեսանեմք.
զի հայր մի զոր ժողովեաց 'ի յամս յիսուն որ-
դին նորա կորոյս յամիս վեց։ Ընտրելով ու-
րեմն 'ի բաղմաց զսակաւս, և 'ի սակաւուց զբա-
ւորեցեալս, նշանակեաց զարս վեց յոյժ նշանա-
ւորեցեալս, որոց երիցն 'ի նոցանէ պատուի-
րեաց, զի իցէին վարդապետք տղային, և այլք ե-
րեքն կառավարիչք Կայսերութեան։ Որոց մինն
եղև Պետրոնաքս միւսն Պոմպէոս ամուսնա-
ցեալ ընդ դստերն իւրոյ այր առաւել կատարեալ
'ի խորհուրդս քան թէ յամս հասակին։ Եր-
րորդն եղև Գնէոս Պարտոկլոս հնագոյն տոհ-
միցն Պոմպէացոց, որ ոչ ունէր զսակաւ զկեանն
մաքուր, քան զգլուխն սպիտակացեալ հերօք
Միւսն կոչիւր Անդրիսկոս, որ գեղեցկութիւն
շարժման, բարձրութիւն հասակի մարմնոյն յար-
մարութեան անդամոց քաջութեան սրտի, խոհեմու-
թեան, և խղճի մտաց, ոչ ոք հաւասարիւր նմա 'ի
բոլորն Հռոմ։ Հինգ երորդն անուանիւր Բոն-
նոնիոս, որ էր վերատեսուչ խորհրդավար յայնմ
ժամանակին, և 'ի յօրէնս հնագոյնս յոյժ հմտաւոր։
Եւ յետինն կոչիւր Յունվարիոս բարի, և կո-
չիւր բարի, զի ոչ ոք ետես զնայ 'ի յամս վաթսուն
զգործ ինն անարգ ինչ գործել, և ոչ ոք լուաւ
'ի բերանոյ նորա զդատարկաբանութիւն, և զոչ-
ինչ արար, որ ոչ իցէր օգուտ իրին հրապարա-
կի։ Եւ թէ պէտ ամենեքեան իցէին հաւասարք
'ի կառավարութեան Կայսերականի. սակայն յայ-
սոց երիցս յետնոց, յայտնապէս զայս Յուն-
վարիոսս էթող զօրագլուխ զօրայ, և հրամայ-
եաց, զի նմա տայց իւր ժառանգութիւն գանձուց
իւրոյ, և 'ի ձեռս նր եդ զկտակագիրն, և
բաղում արտասուօք յանձնեաց նմա զԹագաւորն
Կոմոդոս, Արդ գոլով ծանր հիւանդութեան,
և 'ի յիւրաքանչիւր ժամու սպասէր մահուան,

արար

արար 'ի նոյն գիշերի զարթուցանել 'ի քնոյ զոր-
գին իւր Կոմոդոս, որ անհոգ, և անզգուշա-
բար ննջէր ի քնունս իւր, և բերեալ զնա առաջն
նոր, և մեծ ցաւակցութիւն ցուցանելոյ, տեսա-
նելով զայն ծերունւոյ հօրն եղեալք աղբիւրս
արտասուաքուխս, և զայն արդուոյն կփուցեալ
'ի քուն։ Մանուկն ոչ կարէր արթնանալ 'ի
պղերգուէ և 'ի յանհոգութէ, և հայրն ոչ կա-
րէր կփուցանել զայն իւր 'ի հակմանէ վարան-
ման, և 'ի տագնուութէ հոգացողութէ։ Բերեալ
ուրեմն զաղայն առաջն ներկայութէ նոր, և
տեսեալ թէ որքան սակաւ համարէր նա զմահն
հօր, և հայրն որքան ցանկայր, և փափակ
իւր զի ունիցէր սրդին իւր զկեանս բարիս, շար
ժեցան սիրտքն ամենից մեծամեծաց իշխանաց,
որք անդ կային առ 'ի ունել զնկերակցութէ ընդ
բարւոյ ծերունւոյն, և ոչ զսակաւ շարժումն
բարկութէ առ մանուկն։ Յայնժամ բարի ծերն
ուղղելով զզրուցատրութէն իւր առ որդին և
ասաց առնա այսպէս։

Յաղագս այնորիկ, զոր ասաց Կայսրն, առ որդին իւր Կոմոդոս։

Գլուխ Քառասունևհինգերորդ։

ՈՐ վարպետքն քոյք, և առ կառավարիչքն իմ ասացի, թէ որպէս տալոցք են քեզ զխորհուրդս, այժմ կամիմ ասել քեզ որդի, թէ որպէս դու նոքոքվք սակաւուք, և նոքա ամենեքեան վնքոյ միոյ լինիջիք 'ի հովուել։ Եւ ոչ է իր սակաւ համարելի. քանզի իրն առաւել դիւրագոյն յաշխարհի են տալ զխորհուրդ այլոց, և դժուարիւնէ առնուլ զխորհուրդս վնքոյ։ Ոչ գոյ մարդ այնքան ուղիղ, որ ոչ ասցէ զխրատ ինչ այլոց, թէ և ոչ իցէ դիտանաւոր նոցա, և ոչ գոյ իմաստուն որ քան յոյժ իմաստուն և իցէ որ ոչ հրաժարիցի 'ի խրատուց, թէպէտ ունիցի զհարկաւորուն 'ի նմա։ Զմի ինչ տեսանեմ, զի դուք ամենեքեանդ ունիք խորհուրդս վասն ամենեցուն, և 'ի վախճանի ոչ ոք ունի վասն ինքեան։ Բարւոք խոկամ, որդեակ, զի ըստ որում են բաստքն իմք որոտուումք և առվորութիքն քոյք վատթարք, ոչ են լինելոց օգտակարք խրատք և խորհրդատրութիքն իմ որ տամ քեզ, քանզի, զայն զոր ոչ ասրբեր երկիւղիւ, և 'ի ներկայութեն կենաց իմոց, պակաս յուսամ թէ առնելոց իցես զկնի դնելոց 'ի մոռացումն զմեռանիլն իմ։ բայց զայս առնեմ մանաւանդ առ 'ի ընուլ զցանկութիւն սրտի իմոյ, և տալ զվճարումն իրին հրապարակի։ ԵՒ ժո-

ղովրդեան քան թէ առ 'ի յուսալ ուղղել, և զսպել դկեանն քո 'ի մէջ վասն թարգաւոյն ամբաստանութեանց ոչ գոյ այնքան մեծագոյն ամբաստանութիւն, որքան մարդ կարէ ունել 'ի յինքենէ։ Եթէ դու, որդեակ, եղիցիս չար, բողոքեսցէ Հռոմ զքեզ, որք ետուն քեզ զայնքան չարագոյն հակառամառմոլութիւն։ Բողոքիցէ զքաւատինն մերէ քումմէ, որ անոյշ զքեզ այնքան փափկանաց, և հեշտասիրութիւն։ Բողոքեսցէ զքեզն ինքենէտ, որ ոչ դիտես արիանալ, և զօրանալ ընդդէմ մոլութեանց։ Եւ ոչ բողոքիցէ զծերունոյս յայսմանէ հօրէ քումմէ, թէ ոչ իցէ տուեալ քեզ զբարեգոյն խորհրդականութիւն։ Եւ ստուգիւ գիտեմ, և եմ հաւատի, զի ոչ է այնքան մեծագոյն ցաւն քո տեսանելով դու զաւարտումն կենաց իմոց յայսմ դիշերիս, որքան մեծէ հրաշալումն քո, տեսանելով թէ գայ օրն, յորում է զանիցիս Կայսր Հռոմայ։ Եւ ոչ զարմանամ ընդ այս, քանզի ուր թագաւորէ զգայականութիւնն։ քանականութիւնն տայ զինքն 'ի փախուստ։ Բազումք իրք են սիրեցեալք, քանզի ճշմարտապէս ոչ են ճանաչեցեալք. Ո՞հ թէ որքան իրք դան, որոց եթէ ճշմարտութեամբ իցէին ճանաչեցեալք, յոյժ ըստ իրաւանց, և ճշմարտութեամբ իցէին արտամերժեցեալք և տարհերքեցեալք։ Բայց մեք եմք այնքան երկմիտք 'ի յամ իրս, և երթամք 'ի յամ գործս մեր այնքան իւեղագաբաար, մինչ զի երբեմն խելամտութիւնքն մերք արտացնդին, և պայթին 'ի սրութենէ, և այլն գամ ոչ զինչ կարեն հաստատել վասն բնութեանց։ Կամիմ ասել, թէ մա չարեաց եմք այնքան ըզգաստք, և արթնացեալք, մինչ զի. կորուսանեմք առաւել թղթովք, և 'ի բարիս եմք այնքան տխմարք, մինչ զի կորուսանեմք թղթովք սակաւուք։ ԵՒ 'ի վաղճանի համայնքն են 'ի կորուստ։ Կամիմ զեկուցանել քեզ որդեակ բանիւք զայն, զոր ես 'ի յամս վաղճաուն, և երկուս ծանեայ 'ի ձեռն երկար փորձառութիւնք։ Սրբեմն որով-

հետեւ գուցես որդի իմ, և մանուկ իրաւունք է զի հաւատայցես ինձ, որ եմ հայր քո, և ծերունի։ Թագաւորքս որպէս զի իցեմք 'ի տեղի դիտողութեան ամենեցուն, մեք ամենեցուն, և ամենեքեան 'ի մեզ դիտեն։ Այսօր ժառանգեսս զկայսերութեան տիեզերակալութեան, զաթոռս, և զդահոյս Հռովմական, բարւոք գիտեմ, զի բազումք գոն 'ի պալատս թագաւորաց, որք ոչ գիտեն, թէ զինչ իցէ օգտակարիլ, և ունիլ 'ի մէջ այնքանեաց պատանաց, ոչ առնեն զսուր, և զառութեան իսուսնս թագաւորաց։ Կամիմ զի գիտիցես, զի 'ի յապարանս թագաւորաց գոն կոչմնապաշտութեան հնադոյն, և անմիաբանութեան ներկայ, անզգուշ դատումն, վկայութիւնք յայտնիք, որովայնք իժից, և լեզուք կարճից, բանսարկուք բազումք, խաղաղասէրք սակաւք, ուր ամենեքեան առնուն զձայնս իրին հրապարակի, և իւրաքանչիւր ոք որոնէ, և ջանայ զօգուտն իւր յատուկ։ Ամենեքեան քարոզեն ունիլ զցանկութիւն բարիս, և ամենեքեան զբաղին 'ի գործս վատթարս։ և վերջապէս ամենեքեան կեան արտաքոյ չափաւորութեան։ Չի մինն չանկութեամբ ադահութիւն կորուսանէ զհամբաւն։ և միւսն ոչ անառակ, և շռայլ, դատապարտեալ վատնէ զինչս և զտաքցուածս հայրենականս։ Զինչ կամիս առաւել զասացիցս քեզ։ 'Ի յապարանս, և 'ի պալատս թագաւորաց յամենայնումս աւուր փոփոխեն զպարոնայս, և վերնորոգեն զորդինս։ զարթուցանեն զիղձս ոխակալութեան, յարուցանեն զոչ-ղանջմունս շփոթմանց, ցանուցանեն զանձիս, և բարձրացուցանեն զանարժանս, աքսորեն զանմեղս, և պատուեն զարշտակողս, սիրեն զչղջորթողս, և խորտեն զառաքինիս, գրկեն զմեղս, և աքացեն զառաքինութիւն, ողբան վշարաց, ծիծաղին և ծանակեն զբարեաց, և վերջապէս ունին փոխանակ հարազատ մարդ զանդամութիւնս, և ոչ զկարթամայրս զառաքի-

քինութիւն։ Որբեան եւս առաւելագոյնս ասեմ քեզ որդեակ, զի բանակն, և զգահոյս արքայական զոր դու այսօր ժառանգելոցես, ոչ այլ ինչ, եթէ ոչ խանութի մի վաճառի, և պանդոկ մի մոլորելոց, յորում մինն վաճառէ ի համբարանոցի, և միւսն գնէ զսուութիւն, մինն զհաւատարմութիւն, և միւսն զհամբաւն, մինն զինչս, և զստացուածս, միւսն զկեանն, և ահ մեներեքեան իմիասին ժամանակն կորուսանեն։ և վատթարագոյնն համայնիցէ, զի երթան ամենեքեան այնքան խեղդեցեալք, և լլկեալք։ յայնժամ զգան զվերս ընկալեալս յինքեանս, մինչ ի օրսն իսկ զմահադերն։ Հռօմ ունի ըստ պարհպա բարձունս, և զառաքինութիւս յոյժ ցածունս։ Պարծի Հռօմ թէ յոյժ մեծաշէն իցէ, և թիւն բնակչաց իւրոց յոյժ առաւելեալ։ Որբեան ողբայցէ Հռօմ, զի են եւս առաւել, և թարց կարելոյ թուել զմոլութիւնքն իւրք։ Այլ մի ընդ միում ամենայն կարողէ թուել զհամայնս վեմս շինուածոց նր մեծաշինից, իսկ ի յամս հազարս ոչ ոք կարէ բովանդակել զչարութիւնն սովորութեան նր։ Երդնում քեզ ի դիսն անմահս, զի յամս երիս վերանորոգեցի Հռօմ զամ աւերեցեալսն, և յամս երեսուն ոչ կարացի բարձրք կենցաղավարութիւնք վերակերպել զփոխոյս մի։ Հաւատա ինձ որդեակ, զի քաղաք մեծամեծք ազարտին պարծիլ բարեաք բնակչաք, այլ ոչ մեծակերտ շինուածովք։ Ասիանիքն մերք յաղթանակեցին, և պարտեցին զօտարականն ուղ պատկաւ ուժեղս, և այժմ օտարականք կարեն պարտել զմեզ ուղ զմարդիկս առաւել յաղթեցեալս ի մոլութենանց։ Ասան արիութեամբ նախնեաց են բազմաք պատուեցեալք ներկայքս, և վասն պղերգութեան ներկայիցս, եղիցին վատահամբաւեցեալք հանդերձեալքն։ ոչք դալոցք են։ Իրաւի զի մեծագոյնք ամենայնք են առ ի ասել, և ոչ սակաւք խայտառակութիւք առ ի առնել։ զի հուշակելի գործքն, և քրտունքն հնագոյն

նախնեացն մերոց վերայ դարձեալք են 'ի խե-
լագարութեի , և 'ի յանդգնութեի ներկայից ։
Բարձրք նայեաց 'ի քեզ , և 'ի վերայ քո , որ
դեակ , զի սաստկութեի մանկութեք քո . և ապա-
տուութեին կայսերութեք մի առնիցին զքեզ սան-
ձարձակ առ 'ի անկանել 'ի մոլութեի ինչ ։ Ոչ կո-
ղի ազատ նա , որ ծնանի յազատութեք , այլ նա ,
որ մեռանի 'ի նմին ։ Որ թէ որքանք ծնան 'ի
դերութեան , և մեռան ազատք , վասն գոլոյն
իւրեանց բարիք , և որքանք մեռան 'ի ծառայ-
ութեք , որք ծնեալք էին յազատութեք վա՜ չարք
գոլոյն իւրեանց ։ Անդ է ազատութիւն , ուր
յարատեայ ձգմարիտ ազնուականութեի , Առաւել
համարձակութեի , և ազատութեին տացեն քեզ ,
արիութեի , և զօրութեի անձին քոյ , քան թէ
իշխանութեի , և կարողութեին Կայսերութեք ։
Այս է կանոն հասարակ , զի ամ մարդ առաքի-
նի 'ի հարկաւորուն , է համարեցեալ որպէս հա-
մարձակեալ , և հզօր ։ և ամ մարդ մոլեգնա-
հար 'ի հարկաւորութեէ համարեցեալ երկչոտ
և տկար ։ Համարձակապէս պատժէ նա , որ 'ի
մոլութէ այնմանէ ոչ է նշանաւորեցեալ , և գաղ-
ջապէս պատժէ նա , որ յաղագս նոյն մոլու-
թեն արդիւնաւորի ինքն զոլ պատժեցեալ ։ Թա
գաւորքն ունիցին հաւատոյ զերբ մի , զի զաեր ժո-
ղովրդեան , և զազատութեի պաշտօնի իւրեանց
ոչ պարտին պաշտպանել , և հովանաւորիլ զի
նուք սփռեցելովք 'ի վա՜ երկրի , եթէ ոչ մեծաւ
առաքինութեաբ կուտեցելովք 'ի յանձինս իւրեանց
Ստուգիւ , և իրաւի առաւել զազգ , և զաքինս
հնազանդեցոյց Օգոստոս Օթաւիանոս , համ-
բաւով առաքինութեք իւրոյ , քան թէ Յուլիոս
Գայիոս հօր եղբայրն իւր զորօք բազմութեաբ
մարդկանց ։ Առ թագաւոր մի առաքինի բոլոր
տիեզերս հպատակի , և առ թագաւոր մի մո-
լեգնահար , թուի թէ բոլոր աշխարհս վերայ սա-
նիցէ ապստամբել 'ի նմանէ ։ Չի առաքինութենէ
ամրոց մի անմարտնչելի , գետ անանդրանցանե-
լի ,

լն, ծով որ ոչ կարէ նաւել, հուր որ ոչ շիջա-
նի, գանձ որ ոչ սպառի, ջուր որ ոչ երբեք յաղ-
թի, բեռն յորում բեռնաւորեալ ուրուք ոչ երբեք
լքեալ վաստակի, լուսեւ որ միշտ վերադառ-
նայ, աշտարակ հսկման որ ոչ երբեք պատրի
ճանապարհ որ ոչ երբեք վաստակի և դադարեալ
լինի, սպեղանի որ փուրթանակի բժշկէ, և
համբաւ որ ոչ երբեք կորնչի։ Ո՛վ որդեակ
եթէ գիտիցեիր թէ զինչ լիցէ գոլն բարի, որ-
քան բարեգոյն ընտիցեիր զնա գոլով առաքինա-
սէր, դիցն առնիցեիր զծառայութիւն, և քեզ
տացեիր զբարի համբաւ 'ի քոյանման դիցեիր
զզվարճութիւն, և 'ի յօտարականան ծնանիցեիր
զսէր, և վերջապէս բոլոր աշխարհս սիրիցեր
զքեզ, և երկնչիցեր 'ի քէն։ Զմտաւ ածեմ, զի
'ի տարեցուցս պատերազմին Տարէնթինու դտի,
զի յոյժ համբաւաւորն Փիլոս արքայն Էփիրո-
տաց տանէր 'ի մատանոց միում գրեցեալ զբանս այս։
ԱՌԱՔԻՆԱՅԻՐԻՆ ՍԱԿԱՒԻԷ ՎԱՄՁ
ԼԻՆԻԼՏԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԻ։
ԻՍԿ ՄՈՂԵՍԻՐԻՆ ՍԱԿԱՒԻԷ ՊԱՏԻՃ
ՀՐԿԵԼ ՀՆԱ 'Ի ԿԵՆԱՑ։ Իրաւի վճռա-
այս եղէ արժանի այնպիսւոյ առն։ Զինչ իրք
այնքան գիժուարին կարէ գոլ առաքինոյ դումբ
որ գոլով սկսեալ զեր ինչ զոր ոչ յուսացին
նմա ունի զկատարումն բարի։ Սատեմ, եթէ ոչ
իցեմ տեսեալ 'ի զանազանս կողմանս Կայսերուն
իմոյ, զբազում մարդիկս յոյժ մեծացեալս համբա-
ւոք, յոյժ ցածունս ընդ ելեալ, և ստացուածովք,
յոյժ անծանօթս արեամբ տոհմից, որք ձեռնա-
մուխս լեալք զայնպիսեաց մեծագունից իրաց, որք
թուեին, և երևէին ինձ անզգուշութիւն յոյժ
'ի սկսանիլն, և յետոյ թեւոք առաքինութեաց
միայն, եռուն զհաշակերի կատարումն 'ի նոսա։
Երդնում 'ի դիան անմահս, և այսպէս ժուփի-
տերն տանիցէ զիս 'ի տուն իւր, և զքեզ հաս-
տատիցէ 'ի յիս, եթէ ոչ կայր պարտիզապան մի,
և բրուտ մի 'ի Հռօմ, որք գոլով միայն առա-

քինիք եղեն պատճառ 'ի բաց վարելոյ 'ի ծերակուտէն զտասն խորհրդատուս ծերացեալս սիրոջս մոլութեց։ Եւ նախկին պատճառն եղև այս։ զի միւոյն սափորի միոյ, և միւսոյն բուսուց կանաչացելոց ոմանց զգինն ոչ կամէցան վճարել։ Զայս ասեմ, որդեակ, զի մոլութենն համարձակաց բառնայ զգաղտնութենն և նուաղեցուցանէ, և առաքինութենն զնուազելն արիացուցանելով զօրացուցանէ։ 'Ի յերկուց իրաց զգուշացայ ես իկեանս իմ, և են այսոքիկ։ զի ոչ ընդ դիմամարտեցայ վիճելով ընդդէմ յայտնի արդարութեանն, և ոչ հակադրեցի զիս ընդդէմ անձանց առաքինեաց։ զի առաքինութիւն հովանաւորին, և գարմանին դիւքն, և արդարութիւն կառավարեն զմարդիկք։

Յաղագս առաւել յաւտկաց խորհրդոց զորս ետ Կայսրն որդւոյն իւրում Կոմոդոսի։

Գլուխ Քառասունևվեցերորդ։

Ոլով՝ Էյիրս առաւել յաւտկագոյնս, տեսանեմ զի մեռս մանուկ տիսք։ և զի՝ ի բնութիւնէ ոչ է կայ հրաժարիլ, կամ ուրանալ, և որպէս վա՞ դժուարակրից գործառութեանց հարկաւորք են կաւ՝ տարեալք, և հասունք խորհուրդք, այսպէս առ՝ ի տանիլ զբեռն կենաց մարդկան, ցանկամբ ունիլ զմանս զհանգաստութիւն և զսփոփմունս։ Վասն քոյոյ մանկութեան թողում քեզ զոյդիսն իշխանաց մեծամեծաց, ընդ որոց անցուցանիցես ժամանակդ, և վասն վարդապետութեան քոյ, թողում քեզ զալէորս Հռովմայիս, որք սնուցանիցեն զքեզ, որք և ծառայցին ինձ, ընդ նոսա խորհրդակցիցիս, ՝ի հնարս գտուս թէ ատրոնաց, ՝ի ձկնորսալ՝ ի տեղիս տղմայինս, ՝ի յորսալ զանասունս, կամ զվայրենիս զձիրանութիւնս՝ ի դաշտի, ՝ի թռուցանել զբազայս և զայլ թռչունս, վարժիլ՝ ի զէնս։ այսքիկ են իրք, զորս պահանջէ հասակ տիոյնքոյ, և ընդ մանկութեան մանկանց՝ ի կիրարկանին։ Բայց նայեաց որդեակ, զի առ՝ ի կարդադրել զոչորս հետամուտ լինիլ պատերազմաց, յաղանելել յաղթութիւն, ընդունիլ զվինագադարութիւն հաստատել զխաղաղուն, ձգել զհարկապահանջութիւն գտուածաց, դնել զոչիս, տալ զիշխանու-

նութիւն միոյն, և բառնալ զիշխանութիւնն միւսոյն, պատժել զչարագործս, տալ զպարգևս բարեաց։ զնորհուրդս այսոցիկ իրացն, որք են ոչ ժուարակիրք պարտիս առնել ի նոցանէ, որք են հանձարովն ոչ պայծառք և զմարմինս ունին ոչ ժամանակեցեալս, և զհերս յոչ սպիտակացեալս։ Ուրեմն դու ըստ որում եթե մանուկ ի յարտաքս բերկրիր ընդ մանկանց, և ըստ որում ես կայսր, գաղտաբար փակեա զքեզ, առ ի առնուլ զկնոր հուրդս ի ծերոց։ Զգուշացիր որդեակ, յամ անկարդութիւն, զի այնքան չարէ թագաւոր ոք, որ ենթի պատճառանաց ծանրակացութիւն կամի հովուել բոլորովիմբ ի ծերոց, որպէս ընդ հանմանմանեաց իւրոց, անցուցանել զոչ ժամանակս և ընկերակցել միշտ ընդ մանկանց։ Ոչէ կանոն հաստարակ, զի ամ տղայք միշտ լինիցին տղայք, և լերբք, և ոչ ամ ծերք լինիցին միշտ ծերք ուշիմք, կամ խոհեմք։ Հաստատեա դիտեմ զմի ինչ, զի եթէ տղայքն ծնանին խելագարութիւն, ուրեքն կեան, և մեռանին ոչ ահութիւն։ Ուրեմն պահեա զքեզ, որդեակ, վերատին դառնամ ասել պահեա զքեզ յանկարգութիւնս այսմանէ։ քանզի տղայքն ապականեսցեն զբարս քոյս թերամտութիւն իւրեանց, և ծերքն ապառեսցեն, և ապականեսցեն զնեալս քո ագահութիւն իւրեանց։ Զինչ առաւել այլմանդակ, և դժնդակ կարէ գոլ քան զայս, զի թագաւորն որ հրամայէ ի վերայ ամենեցուն, թողու զինքն ի ներքոյ հրամանի միոյ միայնոյ։ Ինչաւ զի կարէ ամենեցուն թաղմաց յամենայնէ կառավարել բարեպէս կարծեօք և հանձնութիւն միոյ միայնոյ։ Չի թագաւորն որ հովուէ զբազմս, զդիտաւորութիւնս և զկարծիս բազմաց զարտեսն առնուլ ի տարեցուցս Պոմպիէականս ունիմ ի մտի, զոր գալ գիրք մի համառօտ յիշողութիւն, զոր տանէր ընդ ինքեան մեծն Պոմպիէոս, յորում էին բազումք իրք, զորս ինքն ըստ ինքեան էր շարադրեալ, և բազումք խրատք, և զեկուցմունք

մանաւ բարիք, զորս 'ի զանազան կողմանս աշ-
խարհի առեալք էին նմա, յորում 'ի մէջ այ-
լոց կային բանքս այսոքիկ։ Նա որ կառավարէ
զիրս հրապարակի, և յանձնէ զնա կառավարու-
թեան ծերոց, ցուցանէ զինքն գով անընդունակ։
Նայ որ հաւատայ բոլորովիմբ մանկանց, է
թեթևախել։ Նայ որ հովուէ միայն ինքեամբ,
է յանդուգն, և համարձակ, իսկ նա որ կա-
ռավարէ ըստ ինքեան, և ընդ այլոց, է զգուշ,
և հանձարեղ իրաւի եղեն բանք արժանի զայն-
պիսի մարդոյ։ Հաճեաց ուրեմն որդեակ առ-
նալ զնորհուրդ մանաւանդ 'ի յիրս դժուա-
րինս, քանզի եթէ ոչ յաջողիցի որպէս պարտէր
յաջողիլ, յայնժամ քանզի բաղմաց էր խոր-
հուրդն զինեան եղեալ բաժանեսցի 'ի վրայ ամ-
նեցուն, թեպէտ սահմանադրութիւն բանից և
գործոց լինիցի ընդ սակաւուց, սակայն զնոր-
հուրդն ընկալ 'ի բազմաց։ 'Ի մէջ այլոց զայս
բարութիւնս ունի խորհրդականութիւն և միան-
գամայն, զի մինն զանպատեհանութիւն և միան-
գամայն զանազանութիւն այլք զմիջնորդութիւն
զինաս, այլք զոգուտս, և այլք զձարակութիւն
ասեն քեզ, և ունեաց զաչադ այնքան 'ի յանպատ-
կանաւորութիւն զոր դնեն քեզ, որպէս զձարա-
կութիւն զոր մատուցանեն քեզ։ Յորժամ սկ-
սանիցես զիրս դժուարինս, ինդրեա, և հա-
մարեաց այնքան զինաս փոքրունս առ 'ի արդե-
լուլ, և կապել իսկոյն, որպէս զմեծագոյն զան-
բախտութիւն, առ 'ի հնարաւորել յետոյ։ Իրաւի
զի բազում անդամ ամրաշէնք նուաք, վասն անզ-
գուշութեան նաւավարաց ընկղմին 'ի ջուրս սակաւս,
և այլք նաւք որք ոչ են այնքան այնպակաղմբ։
և ամրաշէնք զերծանին 'ի ծովածոցի ջանգա-
դրութեամբ, և հոգաւնակութեամբ ղեկավարաց։
Մի թռուցի քեզ ծանր 'ի յիրս փոքրունս յիւր-
աքանչիւր ժամու առնուլ զնորհուրդս, զի
դոն բազումք իրք, որք խնդրեն խնդրոյն տալ
զվատաբանութիւն գործոյն, և ինքեանս կրեն սպասե-
լով

լով խորհրդոց ։ Զայն գործն զոր կարես հաստատել 'ի կատարումն իշխողութիւն քոյոյ ինքեանդ թարց առնելոյ զնչաս իրին հրապարակի , մի՛ առաքիցես զայն առ այլ ումեք ։ Եւ այսպէս իբ մի յոյժ արդար զի որովհետև պաշտօնն քո կախի միայն 'ի քոյոցն և վարձատրութիւն նորա կախիցի 'ի քէն միայնոյ ։ Յամի 633. հիմնադրութիւն Հռօմայ , յետ սասնիկ պատերազմին ընդ Թագաւորին Նումիդեանացոց յաւուր յորում Մարիոս յաղթանակեաց , թարց դնելոյ զքր իմն 'ի հարատութիւն անտի , զոր քերէր , 'ի գանձարանն Հռօմայ , քանզի բաժանեաց զամ՛'ի մէջ զորաց իւրոց ։ Գոլով ամբաստանեցեալ նախ առնուլ զնորհրդուրդ 'ի ծերակուտէն պատասխանեալ ասաց , Ոչքա որք ոչ ընկալան զնորհուրդ և զնարատս այլոց , առ 'ի ապաստաւորել , և ծառայել ինձ , ոչէ իրաւունք թէ ես առնուցուս զնորհուրդ 'ի յայլմէ առ 'ի առնել նոցա զպարգևս ։ Այլ իրաք , որդեակ կամիմ ազդ առնել քեզ ։ զի բազումք գոն , որք կամիցին տալ քեզ զնորհուրդ թարց խնդրելոյ դու 'ի նոցանէ ։ 'ի յայսմ դիպուածումս ընկալ քեզ դու զայս կանոնս հաստատակաց ։ Ոչ երբեք ապաստիցես երկրորդ խորհրդեան առն , որ ետ առաջադոյն առ 'ի քեզ այլոց ։ Քանզի այնպիսին զնոսս իւրս մատուցանէ 'ի ծառայութիւն , և զգործառութիւնս առաջնորդէ և ուղղէ 'ի յօգուտ իւր ։ Ո՛հ որդեակ , բազումք իրք են պիտոյք առ 'ի ճանաչել զմարդիկս ։ Յամի 15 եղէ ծերակուտ , խորհրդաւոր , հոգաբարձու , զօրագլուխ , և դատաւոր , և յամս տասն և ութեղէ Կայսր Հռօմայ , յորս բազումք խօսեցան ընդիս 'ի քեզ առ այլոց , և առաւել յոյժ բազումք 'ի յօգուտ իւրեանց , և ոչ ոք երբեք պարծապէս խօսեցաւ 'ի յօգուտս այլոց , և 'ի ծառայութիւն իմ ։ Սեծադոյն ցաւակցութիւն ունիլ պարտին վասն թագաւորաց , զի ամենեքեան

վան օգտի իւրեանց, և ոչ քնաւ երբեք ոք
վան սիրոյ, կամ սպասաւորութեան նորա հետ.
և ին։ Զիսորհուրդ մի ընկալայ վասն իմ 'ի քո.
վանդակ ժամանակն այն, յորում կառավարեցի
զՀռովմ։ զի ոչ երբեք պահեցի 'ի տան իմում
այրոք մինչ իմացայ, թէ առեալ էր իրին հրա.
պարակի։ Յամի հիմնադրութեան Հռովմայ. 639.
և յամի Օլիմպիադէ. 177. երթալով Լուկուլ.
լոս Պատրիցիոս մեծագոյն բարեկամն Սիլլայի
'ի պատերազմն Միտրիդատու, հանդիպեալ
'ի Տիգրանակերտ քաղաքն քաղդեացւոց, է.
գիտ անդ զարձանագիր մի, գրեցեալ 'ի վերայ
պղնձի 'ի դուռն արքայի, յորում գրեցեալք էին,
զորս ասէին, թէ իցէին քանդակեցեալք անդ
'ի վարպետէն Աղէքսանդրու մեծին, և տուքն
էին քաղդէականք, և պարունակէր զՀիւս.
այս։ Ոչ է իմաստուն թագաւորն այն, որ կա.
մի ունել 'ի վտանգի զկեանն իւր, պաշտպանե.
լով զյատուկ ընտանեկցութիւն միոյ, և ոչ կա.
մելով անկանկած առնել զկեանն իւր, և զկա.
ցութիւնն իւր սիրով ամենեցուն։ Ոչ է խոհեմ
թագաւորն այն, որ առ 'ի տալ միում զքաղաք, կամի զի այլք ամենեքեան ունիցին զսակաւ։ Ոչ է արդարադատ թագաւորն այն, որ մա.
նաւանդ կամի հաճեցուցանել զզանկութիւն
ազատութեան միոյ, քան զմոլութիւս ամենե.
ցուն։ Խելագարէ թագաւորն այն, որ քամա.
հելով զսարքութիւնս ամենեցուն, հաւատայ,
միայն զկարծիս միոյ, և վերջապէս յանդուգն է
թագաւորն, որ վասն սիրոյ միոյ, կամի գրգռ.
տեցեալ յամենեցունց։ Բանքս այսոքիկ, են
արժանիք մշտնջենականի յիշողութեան, զորս ի.
րաւի թագաւորքն պարտին ունել միշտ ներկայ
ինքեանց։ Ուրեմն և առեմ քեզ, որդեակ, զի
Լուկուլլոս պատրիցիոս եդ զամ գանձս առա.
ջի ծերակուտին, զորս բերէր, և 'ի միւս կողմն
զարձանագիրս այս, յորում գրեցեալք կային
բանքս այսոքիկ, որպէս զի ընտրիցէին զմին,
և

և թողուցուին զմիւսն : Իսկ ծերակուտն արհամարհեալ զամ դանձն , ընտրեաց զարձանագիրն խորհրդաւորութեան :



Յաղագս այլ յատուկ յանձնարարութեան , զոր յանձնեաց Կայսրն որդւոյն Իւրում Կոմոդոսի :

Գլուխ Քառասունեւեօթներորդ :

Սացի քեզ որպէս հայր առ յորդին , որք պատկանին 'ի յօգուտն քո : Այժմ կամիմ ասել քեզ զայն , զոր պարտիս առնել յետ մահուանն իմոյ առ 'ի ծառայել ինձ : Զիրս զորս ես սիրեցի 'ի կեանս իմ , եթէ կամիս լինիլ որդի հօր քոյ , պարտիս ունիլ զայնս մեծաւ ընդունելութիւն զենի մահուան իմոյ : Յանձն առնեմ քեզ , որդեակ պատուել , և մեծարել զտաճարան : Մեծ յարգել , և պատուել զքահանայսն , 'ի պատիւ դիցն : Անքան տուեաց , և յարամնաց պատիւն Հռոմէացւոց , որքան յարտուեաց , և յարամնաց ծառայութիւն նոցա առ դիսն իւրեանց : Ոչ կորեաւ թագաւորութիւն կարթագինացւոց , վասն դոլոյն իւրեանց սակաւ հարուստ , և առաւել երկչոտք քան զՀռոմէացիսն , եթէ ոչ վասն դոլոյն իւրեանց առաւել սիրողք դանձուց . և սակաւապաշտք , և սակաւ երկիւղածք , և երկրպագողք տաճարաց : Յանձնեմ քեզ որդեակ , զելեա խորթամայրն քո , և յիշեա 'ի քեզ , զի եթէ ոչ է մայրն քո ,

քո, սակայն է կին իմ։ Ի ներքոյ պատժոյ անի-
ծանաց իմոյ լիցիս, եթէ թոյլ տայցես զի իցէ
թշնամանեցեալ, և վշտացեալ, զի ինքան
հաճեալ ի նա, լինիցի նախատին մահուան իմոյ։
և առնեն անիրաւ զկեանն քո։ Ես թողի նմա
զմուտն, և զմաքսն օտարու վասն կենաց, և
ապրելեաց նորա, և զբարեսատանն Աւրկանին,
զոր ես սնկեցի վասն հանգստութեան նորա, և
զբօսանաց։ Մի՛ իշխեր բառնալ զայն ի նմանէ։
Քանզի բառնալով զայն ի նմանէ ցուցանես զա-
ղարութիւն անձին քոյ։ և թողով զայնս նմա, որ-
պէս ես պատուիրեցի քեզ, ցուցանես զհնա-
զանդութիւն քո, առ ի տալ քեզ առաւել զբա-
ղութիւն, և զառատաձեռնութիւն։ Յիշեա՛ զի է տի-
կին Հռոմէացի, մանուկ տիւք, և այրի, և ի
տանէ Տրաեանոսի Տն իմոյ։ և զի է մայրապիր
քո, և բնական ամուսին իմ, զոր թողում քեզ
յոյժ յանձարարեցեալ։ Յանձնեմ քեզ զբնինս
քոյս, և զփեսայսն իմ, և զբոյրսն քոյս, և
զդստերսն իմ։ Ես թողի զամենեսեան ամուս-
նացեալս, ոչ ընդ օտարականաց թաւաւորաց,
այլ ընդ բնակչաց բնականաց, որք ամենեքեան
են ի ներս պարսպին Հռոմայ, ուր նոքա սպա-
սաւորիցեն քեզ, և դու արասցես նոցա զպար-
գևս։ Ունեա որդեակ զբազում հանձարեղութի-
ւն տուր, և ի առուութիւնս այնպիսեաւ կերպիւ,
որպէս զի մի՝ եղիցին աննպաստաւորեցեալք վա-
զի մեռաւ ծերունի հայրն նոցա, ոչ և դարձ-
ցին ի խեղճարարութիւն տեսանելով զի եղեալէ
Կայսր եղբայրն իւրեանց։ Զի են յոյժ փոփկա-
բնութիւն, և նազելիք կանայքն, մինչ սակաւու
պատճառաւ սկսեն գանգատիլ, և յոյժ սակաւ
պատճառանաւ հպարտանան։ Պահեսցես զնոսա
զկնի մահուան իմոյ, որպէս ես ունէի զնոսա
ի կենդանութիւնս իմում։ զի այլով կերպիւ զրու-
ցատրութիւնք նոցա եղիցին գանկատանք ժողո-
վրդեան, և ատիպէ զքեզ։ Յանձնեմ քեզ
զԼիպարիոս քոյրն քո, որ է ընդ կուսանացն Վէս-
տա-

տալեաց յիշեա զնէ դուստր մօր քոյ, և Քաւուս տինին իմոյ, զոր ես յոյժ սիրեցի 'ի կեանս իմ, և մինչև 'ի մահնիմ ողբամ զմտաւ նորա։ Յիւրաքանչիւր ամի տայի նմայ զերկու հազար դահեկանս արծաթիս վասն պիտոյից իւրոց, զորս ես ամուսնացուցեալէի որպէս զայլսն, եթէ ոչ իցէր այրեցեալ երեսն իւր հրով, զոր ամենեքեան համարեցան զպատճառն զաներջանկութեան տեսակաւոր, և զՔաւուստինա մայրն նորա որ միշտ ողբայր։ Բայց ես զաներջակութիւն այն համարեմ զերջանկութիւն։ քանզի ոչ եղև այնքան այրեցեալ երեսն նորա հրով, որպէս յայսմ աշխարհիս լինիցէր տոչորեցեալ համբաւն նորա 'ի լեզուաց բազմաց։ Ես երդնում քեզ որդեակ, զի վասն ծառայութեան դիցն, և վասն համբաւոյ մարդկան, առաւել անկատած է նա ընդ կուսանացն 'ի տաճարի անդ. քան թէ դու ընդ ծերակուտիցն 'ի խորհրդարանին. Ահա յայժմոյս նախագուշակեմ քեզ, զի 'ի վախճանի պան դոկացն, և 'ի վերջն ճանապարհի, նա դատնէ զինքն առաւել քարուքոք 'ի ամբաստանութեան։ իւրում', քան թէ դու զքեզ քոյով ապատութիւն 'ի գավառին Լուկանիու թողի զերկու հազար դահեկանս արծաթոյ, մի' մտածիցես յափշտակել, և մի խոկայցես տիրել վնայ։ Յանձն առնեմ քեզ Դրուսիա այրին Հռոմէացի, որ բերէ զմեծագոյն վէճս 'ի խորհրդարանն. քանզի 'ի յաղմկից, և վրդովմանցն անցելոց եղև այրն իւր աքսորեցեալ, և 'ի բանս մատնեցեալ։ Ես յոյժ ցաւակցիմ նմա, քանզի, երեք ամիսք են, յորս եդ զգիր պաղատանաց իւրոց, և ես յաղագս մեծդունի պատերազմին իմոյ ոչ կարացայ ունել զժամանակ առ 'ի յայտնել, և ուղղել զդատաստանն նր։ Սառգիս կարես իմանալ, որդեակ, զի յամս 33. յորս կառավարեցի զՀռոմ, ոչ երբեք կին ոք այրի առաջի իմ ունեաց զվէճ կամ զբողոք ինչ 'ի վեր քան զաւուրս ութն։ Լեր ցաւակից այնպիսեաց, վասն զի յոյժ վատանդաւորքեն

քին կանայքն այրիք, և կարօտեցեալք, քանզի
երկարելով զվէճն, նուաճին 'ի հաւատարմու-
թենէ իւրեանց, և 'ի վարձանի երթալով երա-
կուութիւնն բանին 'ի երկարադոյն, ոչ վերադառ-
նան այնքան զինչս իւրեանց, որքան կորուսա-
նին զհամբաւն իւրեանց։ Եր ցաւակից արանց
տնանկաց, և ալքատաց, և ունիցին դիպն ըստ
քեզ յոյժ հարուստ, և փարթամ։ Յանձն առ-
նեմ քեզ, որդեակ զհնագոյն սպասաւորսն իմ։
որք երկարադունիւք ամօք իմովք 'ի սաստիկ պա-
տերազմի իմում։ 'ի պիտանաւորութիւնս քա-
զումս 'ի ծանրանալ մարմնոյս, և 'ի հիւանդաւ-
թիս իմ երկայն, և յոյժ հաւատարմաբար ծա-
ռայեցին ինձ, և եղէ պատճառ բազում տան-
ջանաց նոցա։ Նոքա առ 'ի տալ ինձ զկեանս,
յանձն առնէին զմահ ինքեանց որպէս ծառայք
հաւատարիմք։ արդարութիւն, և իրաւունք է
ուրեմն, զի ես ընդունիցիմ զմահն նոցա, և
նոքա ժառանգեսցեն զկեանն իմ։ Չմիոյ իրէ
լեր հաւատի։ զի թէպէտ մարմինն իմ մնայ-
ցէ ընդ որդանց 'ի դերեզմանի, սակայն ես միշտ
առաջի դիցն ունիցիմ զինչատակ նոցա 'ի միտս
իմ։ Յայսմիկ ցուցանիցես զքեզ գոլ բարի որ-
դեակ, եթէ հաստատանիցես և վաստակիցես նոցա
զբարի, որք այնքան բարւոք ծառայեցին հօրն
քում։ Նայեաց որդեակ։ ամենայն թագաւորք,
որք առնեն զդատաստանս, և զիրաւունս, միշտ
ստանան զթշնամիս 'ի կատարումն հատուցման
գործոց։ քանզի թագաւորն առնէ զհատուցումն
գործոց 'ի ձեռս նոցա, որք յատուկք, և առան-
ձինք ընտանիք են թագաւորին, և որքան առա-
ւել նպաստաւորեցեալք են 'ի թագաւորէն,
այնքան առաւել ատելիք լինիցին 'ի ժողովրդե-
նէն։ Եւ որպէս իւրաքանչիւր ոք սիրէ զի-
րաւունս, և զարդարութիւն հասարակաբար, և
ամենեքեան արհամարհեն զհատուցումն գործոց։
մանաւանդ մինչ մեռանի արդարադատ թագա-
ւորն, ժողովուրդն կամի առնուլ զվրէժ 'ի ծա-
ռայից

ասայից նորա անիրաւաբար։ Մինչ երեխայ էիր սնուցին զքեզ ծառայքն իմք, որպէս զի կերակրիցես զնոսա, այժմ որք են ծերացեալք, իրաւի մեծագոյն վատահամբաւութիւն լինին Կայսերութեանն, և մեղանչումն 'ի դիւքն, անիրաւութիւն ընդդէմ ինձ, և ապերախտութիւն քեզ, որ գտանելով դու յամս 18 'ի գիրկս նոցա բարցեալս, գտանիցեն նոքա յաւուր միում ըզդուռն քո փակեցեալ ընդդէմ իւրեանց։ Զայսոսիկ իրս կամեցայ յանձն առնել քեզ յատկաբար, զի միշտ պահիցես 'ի մտի քում։ Եւ որոմհետեւ յայսմիկ ժամուամ մահուան իմոյ յիշեմ ես զայսոսիկ, պարտիս խոկալ, թէ որքան իրաւէ սիրէի զնոսա իկեանս իմ։

Յաղագս վերջնոց բանիցն զորս ասաց Մարկոս Կայսրն առ Կոմոդոս որդին իւր։ և զսահմանակացն խորհրդոց, զորս ետ նմա։

Գլուխ Դ առաջնութիւն երորդ։

Իարտեալ զանձնարարութիւնն, զոր Կայսրն ետ Կոմոդոսի որդւոյն իւրում, 'ի լուսանալ արշալոյս առաւօտուն, սկսան խորանկանիլ աչքն, դրդվիլ լեզուն, դողալ ձեռքն, եւ որպէս զայս զգալով բարեբախտ Կայսրն հանելով 'ի տկարութիւնէ զարիւթի, և 'ի նուազեցմանէ սրտին զքաջութի, հրամայեաց Պանուցիոսի խորհրդակից դրագրին իւրում, զի երթիցեր 'ի գրքատունն իւր, և բերիցեր զարկղ մի մեծ առաջի նր, և բանալով զայն էհան զսահմանակ մի փոքրիկ, որ ուներ զլայնութիւն երից ոտից, և զերկայնութիւն երկուց։ Տախտակներ 'ի Լիբանանու, և շրջապատեցեալ 'ի չորից կողմանց 'ի յեղերէ մի եղջերուի։ փակիւր երկու գրամբք յոգ ներբաղոյ նիւք 'ի փայտէ միոյ կարմրէ, զոր ասէին գոլ յայնմ ծառէ, ուստի զարգանայր փիւնիկ հաւն։ որ և կոչի ռաձինս և որպէս 'ի բոլոր աշխարհի ոչ գտանի, եթէ ոչ մի միայն թռչունս այս փիւնիկս, և զարգանայ 'ի յերջանիկն Արաբիայ, այսպէս և ոչ գտանի 'ի բոլոր աշխարհի ծառ իմ հանգոյն ծառին այնմիկ։ Արտաքոյ կողմանէ միոյ տախտակին քանդակեցեալ կայր պատկերն

Փուրիտերը դիցն, 'ի միւս կողմն տիկնայ դիցն Վէների այսինքն փայլածուին, և 'ի ներսն կողմն, որ զտախտակն փակէր, էր քանդակեցեալ պատկերն դիցն Մառսի այսինքն հրատին, և տիկնայ դիցն Լիբերի։ 'Ի նոյն տախտակին գագաթն կայր քանդակեցեալ ցուլ մի զարմանալեաւ քանդակագործութիւն, և ընականաւ արհեստիւ յոյժ տպաւորեցեալ։ և ստորև տախտակին, կայր նկարեցեալ թագաւոր մի, զոր ասէին գոլ ձեռագործ մեծահամբաւ Աղդիէնի հնագոյն պատկերահանին։ Ուրեմն առեալ Կայսրն զտախտակն 'ի ձեռն իւր, հայեաց կարալով խօսիլ ասաց։ Արդէն իսկ. տեսանես, որդեակ թէ ոչ 'ի ձեռաց երթ և 'ի յեկցութենէ բախտին փրծանիմ և մտանեմ 'ի տրամադրին նախասահմանութեանն մահու։ Ոչ դիտեմ թէ վա՞ էր դիքն ստեղծին զմեզ, որովհետև իկեանս այնքան տառապանք, և 'ի մահուան այսքան վտանգս սպասեն մեզ։ Էս ոչ իմանամ, թէ վա՞ դիր ոլատճառի դիքն զայսքան մեծ անողորմութիւն 'ի կիրարկանեն ընդ ստեղծուածս։ Վաթսուն, և երկուս ամս նաւեցի մեծագունեւ աշխատութիւն ընդ երկիւղալի և վտանգաւոր ծովն կենացս այսորիկ, և այժմ հրամայեն, զի երեալ 'ի նաւէ մարմնոյս մտանիցիմ 'ի յերկիրն գերեզմանի։ Ահա կապարձակ լինի մաքոյ քն ոստանին։ Ահա լուծանի գործին մանուածոյ։ Ահա շրջաքանդի հինածն գործոյն։ Ահա հատանի կտաւն։ Ահա աւարաի կեանքիմ։ Ահա պարթնուում յայսմ յուշաթափուէս և 'ի խրոթէ քնոյս։ Յիշելով զայնս զորս անցուցի 'ի կեանս ոչնա ցանկամ կեալոյ։ Եւ ոչ զի տեսեմ զճանապարհն առ յոր ընթացեալ առաջ նորդէ մահն, հրաժարիմ 'ինմանէ։ Զինչ արարիցուսահմանադրեմ դնել զիս 'ի ձեռս դիցն, հանգերձ յատկաւ կամաւ իմով, որովհետև լինելոցէ 'ի հարկաւորութէ։ Եւ հայցեմ 'ի նոցանէ որք եթէ ստեղծին զիս վասն բարւոյ իրիք, մի՛ զրկիցեն զիս յայնմանէ յաղագս անարդիւնաւորութեան իմոյ։

իմոյ։ Եվ արդէն, նայսմիկ վերջնում վայրի։ Վասն վերջնոյ ժամոյս այսորիկ ունիմ 'ի պահեստ զմեծագոյն, և առաւել դերազանց մարգարիտն, զոր վայելեցի եկեալս իմ։ Գիտացիր, զի յամի տասն երրորդի Կայսերութեան իմոյ, յաղթութեալ ընդդէմ ինձ պատերազմ ի՛ն 'ի պարթևաց։ Ըստ այսմ պատճառիս ես ինքնին անձամբ իմով դնացի տալ զպատերազմն։ Յետ յաղթութեան, և յաղթանակութեան, և առարման պատերազմին եկեալ իմ 'ի հնադոյն Թեբաիսն Եգիպտոսի, առ 'ի տեսանել զհնագոյն ինչ, 'ի մէջ որոց գտի 'ի տան քրմապետի միոյ զսախտակս այս, զոր յաւուրն այնմիկ, յորում նստուցանէին յաթոռ թագաւորութեան զեղիպտացի մի իսկոյն կախէին 'ի գլուխն անկողնոյն իւրոյ։ Եվ ասաց ինձ քրմապետն այն, թէ տախտակս եղև զուգեցեալ 'ի թագաւորէ միոյ Եգիպտացւոյ, որ անուանեալ կոչիւր Թոլոմէոս Արսաչիտէ, որ եղև յոյժ առաքինասէր, և վասն յիշատակի նորա, և օրինակի այլոց ունէին զայն մեծաւ զգուշութեամբ 'ի պահեստի քահանայք, և քրմապետքն։ Ես որդեակ առեալ զայս ունէի ընդիս, և աղաչեմ զդիսն, զի այնպիսիք լիցեն գործք քոյք, որպիսի 'ի սմին գտանիցես ըստ խորհրդականութիս։ Ոչ կայր թողի զքեզ ժառանգ այնքանեայ գաւառաց, և թագաւորութեաց, և ոչ հայր թողում քեզ զսախտակս այս խորհրդոց։ Եղիցի քանս այս բան վերջին, զի կայսերութեամբ լիցես ահագուցիչ, և խորհրդով տախտակիս այսորիկ առնիցես զքեզ սիրեցեալ յամենեցուն։ Զայս ասաց և տուեալ զտախտակն 'ի ձեռն Կոմոդոսի և դարձոյց զաչս իւր։ Բացատրութեամբ միով մասամբ ժամու անցեալ աւանդեաց զնոգին։ Դառնալով ուրեմն առ վերոյ ասացեալսն, որք էին գրեցեալք 'ի տախտակին այնմիկ 'ի մէջ ցլոյն և թագաւորին, և էին գրեցեալք յունարէն 'ի կերպարանս ոտանաւորի տաղաչափութեամբ, և շարադրեցեալք վիպասանական

ոճով, որք բառքաւ մերով կամին ասել այս-
պէս։ Ոչ երբէք պատուեցի զհարուստս անիրաւ
և բռնաւոր ոք, ոչ և արհամարհեցի զաղքատս և
տնանկ ոք թարդար։ Ոչ երբէք ուրացայ՝ առնել
զդատաստան աղքատաց, վասն աղքատ գոլոյն իւր-
եանց, և ոչ արձակեցի զհարուստս թողլով զմեղս
վասն գոլոյն իւրեանց հարուստ։ Ոչ երբէք ետու
զպարգևս միայն վասն ցանկութեան, և փափագանաց
սրտի, ոչ և զպատիժս ումեք, վասն միայն ունե-
լոյ զիրաւս առ կիրս վատթարս կամ ոխակալութեամբ։
Ոչ երբէք թողի զչար ինչ թարց պատժելոյ, և
ոչ զբարեգործութեան առանց վարձատրելոյ։
Ոչ երբէք զայլոնի դատաստան արարի այլոց։
և ոչ խրթնացեալ դատաստան սահմանադրեցի
վասն իմ։ Ոչ երբէք ուրացայ առնել զիրաւունս
դատողութեան ումեք զոր խնդրեաց յինէն, ոչև
զողորմութեան զոր արդիւնաւորիւր։ Ոչ երբէք
պատժեցի զոք, գոլով զայրացեալ, ոչև խոս-
տացայ ումեք զպարգևս, գոլով 'ի խրախճանի
ուրախութեան։ Ոչ երբէք եղէ անզգոյշ 'ի յաջո-
ղութիս, ոչև յուսահատեցեալ 'ի ձախողութեան։
Ոչ երբէք արարի զչար ինչ վասն նենգութեան,
ոչև գործեցի զնոսան ինչ վասն ագահութեան։ Ոչ
ետու զմուտ շողոքորթողաց, ոչև զունկդրու-
թեան բամբասողաց։ Մինչև ջանացի աշխատանօք
գոլ սիրեցեալ 'ի բարեաց, և ահարկու երևիլ
չարեաց։ Եվ վերջապէս օգնական լինէի տնան-
կաց, և աղքատաց, որք զսակաւ ինչ կարէին,
և եղէ ես օգտեցեալ իդիցն, որք կարողքեն առ-
նել զբաղումս։

Մինչև յասա պատմեցաք յոյժ համառօտաբար,
որ կարէր առնել և շարադրել գովաբանե-
լոյ կենին, և արժանի յիշատակելոյ
Մարկոսի Կայսերն Աւրելիոսի և
մահուան նորա։

ՀԵՏԵՒԻՆ ՀԱՒԱՍՏԻՔ ԹՈՒԽՄԷ, ՅՈՒՂԱՐԿԵՑԵԱԼՔ, Ի ՄԱՐԿՈՍԷ ԿԱՅՍԵՐԻ ԱՒՐԵԼԻԱՆԷ

Առ ոմանս յատուկս։

Առ Պիրամոն իւր յոյժ յատկագոյն բարեկամն, որպէս յոյժ վշտագնեցեալ,

Թուղթ Առաջնորդական։

ԳԱՐԿՈՍ ատենագրիր Հռոմայեցի, ծնեալ ի Մոնթէչելլո, առ քեզ Պիրամոն Լուդովսնայ, իմ յատկագոյն բարեկամին, ցանկայ զառողջութիւն անձին քո, և ապրիլդ ընդ իմ ձախողակ բախտին։ Ի յերեքն ամսոյն յունուարի ընկալայ ի քէն զթուղթ մի, և նովաւ երևի։ զի ևս դու ընկալեալ իցես զթուղթն իմ։ Եթէ ոչ համարիմ զբանս քոյս, բայց սակայն մեծ համարիմ զանս։ զորս նովաւ կամիս ասել, Որ ելեմն թարց պարզաբանելոյ քո զայն, պարզաբանեմ, և միայն նշանակութիւն իմանամ քեզ։ Իցէր իր իրաւունակ, զի ի ձեռս բաղում իրաց զորս գրեցի առ քեզ, արդէն իմացեալ իցէիր, բայց դուեռ այն քան հեզգ մինչ զի ոչ կոչեն զքեզ լսես, և մինչ ոչ խոցեն զգաս։ Եկեսցուք ուրեմն ի սկիզբն բանից։ Ահա գիտես դու Պիրամոն, թէ որքան մերձակայ իցեմք ազգականութիւն, որքան հնագոյնք բարեկամութիւն, որքան հաստատուն սիրով, որքան ըղձունակ արտիւ, և որքան փոր-

ձեցնալք ըստ ամենայնի , որով փորձին Ճշմա-
րիտք բարեկամք : Կարես բարուոք զմտաւ ածել ,
մինչ էաք 'ի կղզոջն Ռոդոսու , ուր 'ի միումտան
բնակեաք և 'ի միումտ սեղանի ուտեաք : Զայն
զոր դու մոռածէիր ես կատարէի գործով , և
զայն զոր ես ասէի , դու ոչ հակառակէիր :
Իրաւի դու 'ի սրտի իմում , և ես 'ի յաղիս քոյ :
ես գոլով դու , և դու գոլով ես , գոլով երկուք
մեք ըստ անձամբ բայց ըստ կամաց , ոչ է աք
եթէ ոչ մի , ունելով զմի կամք , և զմի կամ-
ցողութիւն : Չինչէ այս Պիրամոն իմ , որ գրես
թէ տրտում իցես , և ոչ գրես թէ ուստի իցէ
տրտմութիւն քո : Բողոք ես թէ մերձ ես իմահ ,
և ոչ կամիս ասել , թէ ով կամիցի հանել 'ի քէն
զկեանն : Եթէ ոչ կամիս աղաչել զչարաբախտու-
թիւն քո , որովհետև բարեկամ իմես ծանուցա-
նեմ քեզ . զի իրաւամբ խնդրեմ ի քէն : Եթէ
ոչ գիտես , գիտացիր , զի դիքն գիտածք սահ-
մանադրեալք են , զի համայնք հաճութիւնք ,
օգուտք անջատիցեն 'ի տանէ իմմէ , և համայնք
վնասք , և տրտմութիւնք ներաքնիցեն զանձն իմ :
որովհետև թագաւորեմ ամենից մարդկանց վա-
տացելոց , թէպէտ կամիցիս , ոչ կարես զեր-
ծանիլ 'ի տերութենէ իմ մէ : Զի եթէ գանդատես
զքէն , թէ անարքանիկ իցես 'ի յերքանկութենէ , ես
զիս պատուական վարկանիմ գոլ երքանիկ 'ի
յաներքանկութենէ : Հարցանեմ քեզ զիր մի : Երբ
տեսեր զիս յագեալ , գոլով դու քաղցեալ : երբ
ննջեի ես , մինչ հսկէիր դու , երբ աշխատէիր
դու , գոլով ես 'ի զբօսանս : Իրաւի թէպէտ
անձինք , և սատացուածք էին յատուկք , սակայն
աշխատանք , և նեղութիւնք եղեն միշտ առհասա-
բակ : Զմի իր պարարիս առնել , եթէ կամիս յա-
ռամնալ 'ի բարեկամութեան : այսինքն , զի բա-
րիքն իմք իցեն քոյք , և չարիքն քոյք իցեն իմք :
որովհետև ծնար դու վա՛ հրաճուանաց , և ես
կեամ վասն աշխատանաց : և զայս ոչ ասեմ քեզ
կեղծաւորութի՛ւ ուրեմն դու արդէն զիրորձա-
ներ ,

աեր, և ինքնին իսկ դիտես։ Զի մինչ մեռաս յունայրիս քոյին քո, որ ոչ էր սակաւ զարգացրեցեալ առաքինութիւն քան թէ գեղեցկութիւն, բարուք տեսեր, զի մինչ թաղէին զմեռեալն, ես զիս կենդանւոյն փակէի 'ի գերեզմանի։ Եւ 'ի ձայն արտասուաց իմոց, կաքաւէին յաչս քոյ։ Ուրեմն ունիս զայս քան ապահովութիւն 'ի յանձն իմ, առանց կասկածանաց կարես բացայայտել ինձ զվիշտս քոյս։ Ցամաքում անգամ մինչ հարցի քեզ, ոչ երբէք բանք կեղծաւորաւք պակասեցան 'ի քէն 'ի պատասխանելս։ Ցոյժ աղաչեմ զքեզ, և դառնամ աղաչել, և վա դիցն մաղթեմ, և 'ի նոյնքան երդմնեցուցանեմ զքեզ, զի զարկցն անձկութեաց քոց դնիցես յաւանդ 'ի սրտի իմում վասն զի 'ի Ճանապարհի ընդ յոր երթայցես, ոչ արտաքոյ ամենի ոչ մի քայլիս միայն։ Զի եթէ ընթանաս, ընթացայց, եթէ զկայ առնուցուս առիւ, եթէ աշխատիցես, աշխատեցայց. եթէ հանգչիցես, հանգայց, եթէ կամիս զմահ, բարուք ծանուցաս քեզ. զի ես ոչ կամիմ զկեանս։ Ընտրեա զոր կամիս Պիրամոն իմ, և մատնաւորեայ ոչ հրամայեա։ քանզի չարիքն քոյք, և իմք զսիրտս մի միայն ասնջեն։ Ուրեմն, եթէ կամիս ունել զարտմութիւն այլոց, եղիցի քոյոր յովիմբ զհաճութիւն իմ։ Եթէ կամիս ողբալ, յայսմ հետէ երդնում զի ոչ երբէք ծիծաղեցայց։ Եթէ կամիս բեռնաթափ լինել 'ի տանջանաց քոց, այսու հետև առիւ զամ 'ի վերա իմ։ Եթէ կամիս չուել միայն, ես անիծեցից զընկերակցութիւն։ Եթէ կամիս զընկերակցութիւն, ես հոյն 'ի բաց մերժեմ զմայնակեացութիւն։ Ուրեմն զինչ կամիս զի ես կամիցիմ, զի զամ զոր դու կամիս, կամիմ և ես։ Գանդատես դու զքէն, զի 'ի մէջ այնքան անձկութեաց, ոչ գտանես զայգական, որ քեզ ճարակիցէ հնար ինչ, ոչև բարեկամ զի մխիթարիցէ զքեզ։ 'Ի յօրէնս բարեաց երդնում քեզ Պիրամոն իմ, զի զայսցանէ երկուց իրաց դոյ այնքան չքաւորութիւն 'ի տան

իմում, որքան տրամութեի 'ի քեզ։ Բարեաւ զի տես։ զի հնար, և Ճարն դալոցէ 'ի հարատաց, և մխիթարութիւն 'ի յիմաստնոց, և որպէս զի պղերկութիւնն իմ էրարձ զգիտութիւն, և վատթար բանսն ձախողակ ոչ խոստանայ ունիլ զնչս գիտեայ հաւատեաւ, զի ողբամ յոյժ զբազում թշուառութիւնս քո, և զսակաւ հնարաւորութիւնս իմ։ Ասես 'ի թուղթն քո, թէ բարեկամք և դրացիքն քոյք խոստացան քեզ զբազում ինչս, և 'ի տալն զոչինչ տան։ Ընդ այս ոչ զարմանամ, զի զդուշ ձեռն ոչ է պարաւանդեցեալ առնել զայն, զոր ասէ լեզուն խելագար։ Արդարև եթէ ոտքն մեր կաքաւիցեն, և ձեռքն մեր դործիցեն ընդ հնչման ձայնի լեզուին, 'ի սակաւ աւուրս աւարտիցին կեանն, և յոյժ սակաւագոյն համբաւն։ Այսչ պաշտօն և սովորութիւն յոյժ հնագոյն, և 'ի մէջ որդւոցն ուանայնութեց յոյժ կիրարկեցեալ. զի լեզուն բառբառիցէ վսղվաղուն, և փութանակի, և ձեռքն դործիցեն յամրապէս։ Արդ խօսելով սաւաւել յատակաբար, ոչ պարտիս դանդաւաղել թէ վա՞ էր դատանես դու 'ի սակաւ զայն, զոր դտին բազմք 'ի քեզ միայնում։ Այս է սովորութի, առնուլ փութով, և ուրախութեամբ, և տալ յամեցմամբ և տրամութիւ, միոյն պարծանաք, և յանդգնութեամբ, և միւսոյն յուլութիւ, և թուլութիւ, Յոյնքն ասեն, թէ բարի է բարեկամն այն որ խոստանայ, թէպէտ կատարէ յամեցողութիւ։ Իսկ մեք Հռովմայեցիքս ասեմք, Լաւագոյնն նա, որ իսկոյն զտալն ուրանայ զի խնդրօղն մնայ պատրանահատեցեալ և ոչ խաբեցեալ։ 'Ի Յոյսմ իրակութեն ասեմ, թէ նա որ կարէ տալ, և ոչ տայ, է յայտնի թշնամի, և նա որ խոստանայ իսկոյն, և կատարէ յամրապէս, է բարեկամ երկքայելի։ Զինչ պիտոյեն բարեկամաց մերոց ասացուածք, մինչ կարողք եմք օգնել նոցա գործով։ Ոչէ իր արդար, զի նա որ տայ մեզ զսիրտն իւր, (որ է բարեգոյն մասն անդամոց յորովայնի։)

նորա) մեք տամք նմա զլեզուն, որ է չարագոյն իրն կենաց մերոց։ Իրաւի ոչ կամին դիքն, և ոչ հանդուրժէ օրէնն բարեկամութեան, զի մինչ ես խնդրիցեմ 'ի բարեկամէ իմմէ զօժանդակութեան մի իսկոյն, իսկ նայ նատիցէ երկարութեամբուց առ 'ի տալ ինձ զնորհուրդս։ յոյժ երկարագոյնս։ Աստ ասեցին Պղատոն յօրէնս իւր այսպէս։ Հրամայեմք 'ի քաղաքավարութեան մերում։ զի յաջողակաց տացի զնորհուրդ, զի մի անկանիցին, և ողորմելեաց տրամցելոց տացի ճարակ հնարութեան, զի մի յուսահատիցին։ Իրաւի զի 'ի ներքոյ բանիցս այսոցիկ, գոն յոյժ մեծագոյնք զօրութիւք բանից։ Ահա գիտես Պիրամոն իմ, զի սիրտ վշտացեալ ասկաւ մխիթարի, բանիւ քաղցրախօսութեամբ, և լոկ խօսակցութեամբ, եթէ ոչ երթիցեն ներծրարեցեալքն ընդ նմայ գործ իմն բարի։ Ոչ կամիմ ուրանալ, թէ նշ որոց տուաք զբարի կամն մեր 'ի ժամանակի յաջողութեան մերում, ոչ են պարաւանդեցեալք տալ մեզ զտացուածս իւրեանց, և զնպաստս 'ի ժամանակի ձախորդութեան մերոյ։ Բայց հարցանեմ քեզ զբան մի։ Ընդէր ունիս դու զնամարձակեալ հրաման 'ի խնդրելն, և յանդգնեալ զազատականութիւնն այլոց, 'ի ուրանալն։ Իրաւի զի որպէս ամօթխածն 'ի խնդրելն, դնէ զպարաւանդութիւնն 'ի մեզ, զի զուրկն իր խնայեցեմք նմա։ Այսպէս և անամօթքն և բստիպողքն զամ պարգևաց անարժանքն են, Գիտացիր, եթէ ոչ գիտես, Պիրամոն իմ, զի հաստատեալն առ ամ զոր ոք հայցէ, է յատուկ գործք դիցն, տալ զամ զոր խնդրի, է նշան ծառայութեան ուրանալ զման այնորիկ ամենից որ խնդրեցեալ լինի, է գործ ազատի, ողբալ զայն զոր ուրանան, է գործ անիրաւ բռնաւորի, ոչ լինիլ շնորհակալ վա այնորիկ զոր նմա տան, է գործ բարբարոսաց, ունիլ զսիրտ քաչութեան վա այնորիկ, որ ինքեանց ուրանան, է գործ հեռամացոց։ Մեք էր 'ի յայնցանէ, որով Գայիոս

Կայսրն

Կայսրն եցոյց դոլ զինքն մեծասիրտ եղև , զի յայնժամ ուներ առաւել զուրախութիւն , յորժամ ծերակուտքն խնայէին և ոչ կամէին տալ նմա զիր իմն զոր խնդրէր 'ի խորհրդարանին ։ Բազում անդամ ասէր նա , թէ ոչ դոյ այնպիսի իր որով Հռօմ տայցէ ինձ զմեծագոյն փառք և զպատիւ և անձին իմում զհամբաւ , որպիսի է ։ այն զի մինչ ես ցուցանեմ զիս յոյժ վաղվաղոտ 'ի խնդրելիս , նոքա դնիցեն զինքեանս առաւել խստացեալս ընդդէմ այնմիկ , զոր խնդրեմ , վասն զի այնու հետև ճանաչիցեն , թէ որքան իցէ կարողութիւն իմ առ 'ի հասանիլ , և որքան սակաւ զոյժն իւրեանց առ 'ի յինդիմանալ ։ Այսպէս թուի ինձ (եթէ ևս քեզ թուիցի) թէ բարեգոյնէր առնուլ 'ի դիցն 'ի ձեռս առաքինութեց , քանզի զայրանալ առաւել եալ զգանգատս ։ Վա՜յ տալոյ զհաջուական զվարձութիւն առ հանդուրտեցեալ կամն քո , մինչ տեսանես զքեզ վաղտագնեցեալ , թէ զոր խնդրես 'ի դիցն , կամ 'ի մարդկանէ ոչ ընդունիս , պարտիս չափել ուղղիւ չափով , և կշռել ուղղիւ կշռով զբազումս զորս ետուն քեզ , և զսակաւս , զորս ոչ պարգևեցին քեզ ։ Ո՞հ թէ որքան ապերախտք եմք առ դիսն , և անճանաչ առ մարդիկս , զի ընդունումն նուազ զեցուցանեմք . մոռանալով և զորս ուրանն մեզ մեծացուցանեմք ընդ դանդատանօք ։ Եթէ ոչ խաբիմ 'ի յիս Պիրամոն իմ , ահա ունիս զամն յիսուն յորս ոչ զայլ ինչ արարեր երբէք , եթէ ոչ ընդունիլ զպարգևս , և այսու ամենայնիւ ոչ ոք ետես զքեզ , թէ յաւուր միում արարեալ իցես ումեք գործ ինչ արդիւնաւոր ։ Արդարև ոչէ իրաւուն զի գանգատիցես յուեթ աւուրս 'ի ձախորդութիւն բախտին , որովհետև եղեր ապերախտ նմա յամն յիսուն ։ Ասես 'ի թուղթս քոյս , թէ ունիս զբազում տանջանս քան , զի ճանաչես զդրացիս քոյ , ունիլ ամենեքեան զնախանձ ։ Իրաւի ցաւիմ ես ընդ տանջանս քոյ , և յաղագս զարմացման քոյ , զարմանամ ես վասն , զի

ղի զարմացումն ոչ յայլ ուստեքէ գայ, եթէ ոչ ի յաւելուածոյ ոգիութենէ, և ի պակասութենէ փորձառութենէ։ Ահաւասիկ այնքան սրացեալք են խելամտութիւնքն մարդկային, և այնքան կարդադրեցեալք կեանն մահկանացուոց, զի մինչ ոչ զգան զգալն նեղուած մոյ, խոկոյն ունին ի ձեռս զնար, և զգարման նորա։ եթէ ունին զբաղդ, ուտեն, եթէ զցուրտ ջերնուն, եթէ ունին զքուն ննջեն. եթէ վաստակին, հանդչին, եթէ հիւանդանան, կոչեն զբժիշկ, եթէ ունին զտրտմութիւն ջանան գտանել զուրախութիւն։ և այսու կերպիւ բոլոր կեանն մեր տրտում անցանի, ծակելով զմինն խթանաւ և միւսն պատրատելով զհանդէս։ սոցայ առնելով զնորագիւտ մեքենայս և նոցա վերակերտելով զամրոցս։ Կամիմ ասել, թէ աշխարհս, և մարմինն յայլ ոչինչ պարապին, եթէ ոչ մարսն չիլ ընդ մեզ, և մեք յամենայնում ժամանակի ունիմք զպիտանութիւնս առ ի ընդդիմանալ նոցա։ Համայնք ճարակութիւնքս այսոքիկ իմանին ընդդէմ աշխատանաց մարմոյ։ Բայց զինչ արացուք, զի ասա՝ ի մէջ այսոց ոչ իմանայ նախանձն անիծեցեալ։ Ո՞հ չարալեխութ պատացուածք, որոց ամենեքեան նախանձին։ Իրաւի զի ընդդէմ նախանձու ոչ ոք ունի զբերդ և զամրոց յորում կարիցէ ջատագովել զինքն, յայրս. յորս կարիցէ թաքչիլ, փապարս, յորս կարիցէ զետեղիլ, զլեռան որում կարիցէ ապաստանել. անտառ որում կարիցէ ծածկիլ, նաւ յորում կարիցէ փրծանիլ, ձի որով կարիցէ փախչիլ, դրամ որով կարիցէ զինքն վերադնել։ Նախանձն է իմիմն այնքան թոյնաւոր, մինչ զի ոչ ոք եղև երբեք, ոչևս եղիցի ոք մահկանացու ի մէջ մահկանացուաց, որ ի յատամանց նոր ոչ իցէ խայծատեցեալ, և ի մատղեաց թաթիցն նորայ ոչ իցէ քերաեցեալ, ի յոտից նորա ոչ իցէ աքացեցեալ։ և ի լեղոյ թունից նոր ոչ իցէ թոյնաւորեցեալ։ Ես երդնում քեզ Պիրամն իմ, ի դիան անմահս,

զի զնա՝, զորս բախտն բարձրացոյց մեծագործ
նիւք փարթամութիւն , ոչ անողորմ և անգոյութ
եւ նշ , և տայ միշտ զմեծագոյն ատամնախա-
ծութիւն : Դառնամ , և դարձեալ ասեմ , քեզ
միւսանգամ , զի նախանձնէ այնքան նախանձոտ,
մինչ զի նիւ ոչք 'ի նմանէ առաւել խոյս տան ;
տայ նշ առաւել խստագոյն աչացի : Դառնամ ,
և դարձեալ երդնում քեզ միւսանգամ , զի մի՛
անզգուշասցես 'ի նենգագործ նախանձէ , վասն զի
նշ , որք են հանգուցեալ 'ի բազում փափկութիւն ;
ունի նա 'ի պահեստի , և գաղտնի զաճեալսահար .
խայթումն ինչ առ 'ի վերամորել յոյժ գին : Ընդ-
թերցայ ես զբազում գրեանս եբրայեցերէն ,
Յունարէն , Դաղմատերէն , Քաղդէացերէն , և
խոսակցեալեմ ընդ արանց յոյժ իմաստնոց , առ 'ի
տեսանել , թէ կարելիցէ գտանել հնար ինչ եր-
քեք ընդ դէմ առն նախանձոտի . խոստովանիմ
քեզ զճշմարտութիւն մի , զի զամ ընթերցա , որ
ընթեռնելի էր , և զամն տեսի , որ տեսանելի
էր , և հարցի որ հարցանելի էր , ոչ երբեք գտի
զայլ բժշկութիւն վասն սխտին նախանձու , եթէ
ոչ զբարեմասոյ լինիլ ընդ յաջողաւն , և զսոթ-
եանս ընկալուլ մեզ ընդ հակառակ բախտին :
Որ չարաբախտք յաջողմունք , և տրտմալի կա-
ցութիւն մեծութեան , որք ոչ կարեն փախչել 'ի
քարավիժէն , թարց անկանելոյ 'ի պտուտս ջուրց
ոչ կարեն զերծանիլ 'ի վտանդէ , թարց արիանե-
լոյ 'ի ծով զգանձս իւրեանց : Կամիմ ասել թէ
հիւանդութիւն նախանձու ոչ փրծանի մահուամբ .
և սպեղանին գեղոց զոր առադրեմք , ոչ առնէ
առատով զկեանս : Ոչ կարացի դիտել , և սահ-
մանադրել , թէ որն իցէ բարեգոյն , (կամ ա-
ռաւել բարւոք ասել) որն իցէ ոսկաւ չարա-
գոյն , ծայրագոյն թշուառութիւն թարց այլայ-
լութիւն բախտի , կամ ծայրագոյն աջողութիւն .
որ միշտ սպառնայ զանկումն 'ի վայր : Յայտ
պատճառի : վասն գոլոյն այնքան ծայրագոյն
այժմոյս ոչ սահմանադրեմ ինձ , զի 'ի միւս
վասն

վանդաւորի կեանն, և 'ի միւսումն ոչ է ապա-
հով համբաւն։ Կամիմ ասել քեզ Պիրամենիմ,
զոր ասէր իմաստնագունեղն Զիլէրօն, որ մինչ
տեսանէր զինքն հալածեցեալ 'ի Հռօմէ։
Նայեցարուք Հռօմէացիք, ես ոչ ունիմ զձեզ
այնքան բարի, ոչև զիս այնքան վատթար, զի
ընդ ամենայնի ասիցէք դուք զՀիմարիսն, և ես
ընդ ամենայնի 'ի կիր արկիցեմ զստութիւն։ Ես եմ
'ի հաւատսն, զի դուք ոչ ունիք զնախանձ, թէ
զիարդ ես ոչ եմ իբրև և զձեզ, այլ զի դուք ոչ
կարիք գալ իբրև զիս։ ԵՒ ես յայսմ պատճառիս
մանաւանդ կամիմ զի թշնամիքն իմք ունիցին
զնախանձ առիս, քան թէ բարեկամքն իմք դատս
նիցեն 'ի յարատս և բիծ ինչ։ Իրաւի զի ատենա-
բանս այս խօսեցաւ ըստ բաղձանաց աջողակա-
նաց, թողլով զձարակ արամեցելոց։ Ուրեմն ես
երդնում քեզ Պիրամէն իմ, զի յետ այնորիկ
տեսեալ Զիլէրօն 'ի դաշտին Քարաքիոս, առ-
նուցոյր նա զկիր ինչ խորհրդականութեան և ճա-
րակութեան 'ի Հռօմ։ Վասնզի եթէ Կայսրն չնոր-
հեաց զինչս, և զկեանն, ոչ վերադարձոյց զհա-
ւատարմութիւն նորա, և զհամբաւն։ Ոչ դի-
տեմ Պիրամէն զհաւատսին, թէ զորպիսի ճա-
րակութիւն կարեմ տալ քեզ ընդդէմ նախանձու,
որովհետև տեսանես զի բոլոր աշխարհս այս լի է
նախանձով։ Տեսանեմք, զի եմք որդիք նա-
խանձու ծնանիմք ընդ նախանձօք, ապրիմք
նախանձով և մեռանիմք ընդ նախանձօք, և որ
թողու զյոքնագոյն բատացուածս, թողու զյոք
նագոյն նախանձ։ Իմաստասէրքն նախկինք տային
զնորհուրդս հարստաց, զի մի՛ ունիցէին մերձ
առ յինքեանս աղքատսն, և զսպառնային աղքա-
տաց, զի մի քնակիցէին մերձ առ հարուստսն։
Եւ իրաւի ունէին զնրաւունս։ քանզի 'ի հարս-
տութիւն հարստից, առնէ ագարակ սեմանելոյ
յինքեան նախանձն աղքատաց։ 'Ի յայնմանէ զոր
պտկաս է աղքատին, և 'ի յայնմանէ, որ առաւել
լու 'ի հարուստն ծնանի զաղարաձայնութիւն 'ի

ժողովորդեան։ Երդնում Պիրամն 'ի դիսն ան-
մահս (թէպէտ չարաձձ'ին կամիցին երդնուլ
ստոյածութիւն) թէ որքան հարուստս, և ճո-
խացեալս անուցանիցէ ազահութիւն, զայնքան
նախանձուտս, և զդահիճս վասն նոցա անուցա-
նէ նախանձն։ խորհրդատուրեմ քեզ զի՛ իմն այս
ինքն, թէ ոչէ բարի խորհուրդ վասն փաղչելոյ
'ի նախանձու, և հեռացուցանել զքեզ յառաքի-
թեց, որք են հակառակք նմա։ Ասէ Հումէ-
րոս, թէ 'ի ժամանակի իւրում եղեն երկուք
յոյնք ամիս չափազանցութիւն չափազանցեալք։
որոց մինն յոյժ արտաքս քանզչափն հուչակաւո-
րոք գործովք պերճանայր, բայց յոյժ հալածե-
ցեալ էր նախանձուք որ կոչիւր Աքիլլէս։ և միւսն
յոյժ նշանակեցեալ 'ի չարութիս խայտառակ իւր
գործոքք խարդախութիւն և ոչ ոք բնաւին ունէր
նախանձ ընդ նմա, որ կոչիւր Տրեսուէս։ Ի-
րաւի ես մանաւանդ կամէի զոլ Աքիլլէս ընդ
նախանձով, քան թէ Տրեսուէս թարց նախան-
ձու։ Բարւոք գիտես զու Պիրամն, զի մեք
Հաւատացեալքս ոչ զայլ ինչ որոնեմք, և առյ-
ջինչ ջանամք, եթէ ոչ զհանդարտութիւն, և
զհանգիստ 'իկեանս, և զպատիւ յետ մահուան։
Ուրեմն եթէ այս այսպէսիցէ, ոչեն կարելիք,
եթէ ոչ զի այր մի որում ամենեքեան նախանձին
զպարտի ունիլ վերհամբարձեալ զհամբաւն իւր,
և 'ի հանդստի զկեանն իւր։ Ուրեմն զայսոսիկ
երկուս իրս տեսանեմք որքեմք բարեկամք
քոյ սակաւ փոյթէ մեզ, եթէ բամբասեն զքեզ
նոքա, որք են թշնամիք քոյ։ Դու գրես առիս,
թէ այդր 'ի Լուգդունի ամենեքեան կան բարւոք,
և ուրախք բաց ի քեզ որ կաս վատթարօրէն, և
տրտում։ Ուրեմն որովհետև նք ոչ ցուցանեն
զքերկրութիւն քոյոյ տխրութեն, մի՛ ցուցաներ զու
զտխրութիւն նոցին խնդութեանցն։ քանզի կարէ լի-
նել, թէ գայցէ օր մի, յորում նք իցեն տր-
տում, և դու ուրախ, և այսպէս եղիցիք զու-
գահաւասարք։ 'Ի չարի միում ոչ կարէ զոլ առա-
ւել

ել մեծագոյն չարակնութիւն, և 'ի բարեսիրութիւն մեծագոյն պակասութիւն, քան զտխրին վասն բարեացն օտարաց, և խնդալ ընդ չարիսն այլոց։ Արդ դիցուք թէ ամենեքեան ինքեանն զմեզ նախանձուք, սակայն յոյժ առաւել ինքեանն բարեկամքն քան թէ թշնամիքն։ քանզի 'ի թշնամոյն կարեմ զգուշանալ և նա վասն երկիւղին հեռանայ յինէն, բայց բարեկամն բարեկամութիւն իւրով խաբէ զիս, և ես վասն հաւատարմութեան ոչ զգուշանամ 'ի նմանէ։ 'Ի մէջ մահաբեր թշնամեաց ոչ գոյ այնքան չարագոյն թշնամի, որքան բարեկամն այն, որ նախանձի ընդ յաջողութիւնն իմ։ 'Ի Յաւարտման Թղթոյս ասեմ քեզ Պիրմանն, եթէ դու հսկես առ 'ի պահել զքեզ 'ի թշնամեաց օտարականաց, առաւել յոյժ պարտիս ուշնիլ 'ի մէջ քոյոց ընտանեաց։ ոչ գիտեմ, թէ առաւել ինչ գրիցեմ քեզ, եթէ ոչ զվիշտս և զտրտմութիւնս քոյ տանջէ զսիրտ իմ։ Արդէն գիտացեալ էցես։ թէ որպէս դատեցին եղբօր քոյ բրիսիայի եսպան այրն իւր աշտէնիւ։ Եւ ունիմ իրաւի զգաւակցութիւն մեծ ընդ կեանս զոր կորոյս, և ընդ համբաւն զոր է թող։ այժմ ետուն զիշնանութիւն, Քլաւիոսի Բրիսկոյ հօր եղբօրն քում նորոյ հոդաբարձութեամբ քաղաքիս։ Աէձն եղբօր քոյ Քօրմոնին ընդ Բրիսքրիսի արդէն աւարտեաց խորհրդարանն, և սահմանեցաւ։ Հաճեցայ ընդ այս, զի բարեկամք եղեն միմեանց, և իւրաքանչիւր ոք ինքսյանէ ասաց ինձ, թէ հաւանիս յօժարութիւն, և չուեն ուրախութիւն։ զԳիրքն որ կոչի Սխիթարիչ տրամեցելոց, ահա կատարեցի, և աւարտեցաւ, և եդի 'ի կամիկիդօլուն, և դրեցի բարեւ յուսնա կանաւ, մա այսորիկ ոչ առաքեցի քեզ։ Զսուրմի ընդ մէջ արկանելի յոյժ հարուստ։ և զգօտի մի յոյժ դեղեցիկ առաքեցի քեզ։ Քառատինն իմ ողջունէ զքեզ, և ահա առաքեաց քեզ, և կողակցին քում զերկուս ծառայս։ Դիքն լեցին պա-

պահապանք իմք, և մխիթարիչ քո 'ի ներկայ վշտակրութեանս քում։

Մարկոս այր բարեբախտ առ քեզ Պիրամոն յոյժ անմխիթար ողջոյն։

Առ Կոռնէլիոս, ընդ որում խօսի վասն զաշխատանաց պատերազմի, և զուշակութեանցն յաղթանակաց։

Թուղթ Երկրորդ։

Մարկոս Կայսր Հռովմէացի առ քեզ Կոռնէլիոս հաւատարիմ բարեկամիս ողջոյն և առողջութիւն անձին քում, և երանական բախտ իկեանս քո ցանկայ։ Որպէս 'ի յանցեալս ժամանակս եղեր ընդիս ընկերակից 'ի մէջ նեղութեանս իմոց, այսպէս առաքեցի կոչել զքեզ վասն տալոյ քեզ զհաճութիւն 'ի յաղթանակս իմս։ այնչափ առատութիւն հարստութեան, զանազանութիւն դերեացն, և խստաբարութիւն զօրագլխաց, զորս բերաք 'ի Հռովմ կարեա տեսանելոյ թէ զորքան վիշտս անցուցաք յայնմ պատերազմի։ Պարթևքն են արք պատերազմողք յորժամ դտանին 'ի յերկրի իւրեանց, իւրաքանչիւր ոք ջատագովէ 'ի սրտէ զտունն իւր, և իրաւի առնեն որպէս արք բարիք։ վասն զի մինք ուանց իրաւանց մեռանիմք առ 'ի կողոպտել զայլոցն։ Նոքա իրաւամբ աշխատին առ 'ի ջատագովել զիւրեանցն։ Ոչ ոք ունիցի զնախանձ 'ի վերայ զօրագլխին Հռովմէացւոյ, վասն յաղթանակին, զոր տայ նմա մայրն իւր Հռովմ, որ վասն աւուր միոյ պատուի վտանգաւորէ

ասրկ զինքն ողորմելին այն , և հազար անգամ դնէ իկասկածանս զկեանն իւր ։ Ուրեմն լռեմ զայն , որ առաւելնէ , զի որք են ընդ նմա 'ի պատերազմի , և նոքա որք մնան 'ի Հռօմ , են անազորոյք դատողք համբաւոյն նորա ։ Եվ սակ համբաւն խեփական կախի 'ի լեզուաց այլոց , այնպիսին ոչ դատի այնպէս որպէս արդիւնաւորի անձն իւր , եթէ ոչ այնու , զոր ուսուցանէ նախանձն իւրեանց ։ Բայց խելագարութիւնն մեր է այնքան խելագարեցեալ , և վարկողութիւն մարդկան է այնքան ընդունայն , մինչ զի վասիոյ ունայնի ասացուածոյ առաւելքան զօգուտն մեր կամիմք գտանվիժել զկեանն մեր , և վտան գաւորել զոյատիւս , աշխատելով առաւելքան թէ վայելել զկեանս , և ապահով առնել զկամքս ընդ հանգստութիւն ։ Երդնում քեզ իդիսն անմահն , զի յաւուրն յաղթանակուն իմոյ մինչ երթայի մտանել 'ի կաւն , խոկայի 'ի յիս , թէ որքան թերամիտ իցէ խելամտութիւնն ամենեցուն կենցաղոյս այսորիկ ։ Ո՛վ Հռօմ անիծեցեալք լիցին խելագարութիւնքն քոյք , և անիծեցեալք լիցին նոքա , որք անուցին զքեզ զայնքան հպարտութիւն , և անիծեցեալ լիցի նայ որ նոքա գրգիռ արար 'ի քեզ զմեծագոյն հանդէս այս փառամոլութիւն ։ Զինչ մեծագոյն լրբութիւն , կամ զինչ հաւասար անզգամութիւն կարէ լինիլ , զի զօրագլուխ մի Հռօմայնցի վասն նուաստեալ ընդ ձեռամբք զգաւազան , զիդովեաց զնա , զաղասէրս , կողոպտեաց զքաղաքս , աւերեաց զամրոցս , յափշտակեաց զինչս աղքատաց , հարս տացոյց զանիրաւս , էհեղ զքաղաքս արիւնս , արար որբս , և այրիս բազումս , իսկ 'ի հատուցումն այսքանեաց ինքասուց ընդունի Հռօմ մեծաւ յաղթանակութիւն զնա , որ արար զայսքան չարիս ։ Ուրեմն այլ մեծագոյն խելագարութիւն կամիս քան զայս , մեռան անթիւք 'ի պատերազմի , և տունի մի ոք միայն զյաղթանակն բարձրանալով 'ի փառս , ողորմելիքն այնոքիկ չլեալս արդիւնա

ուրեկան մարմինք նոցա մտանել 'ի գերեզմանս ։
և ես երթայի յաղթանակելով 'ի հրապարակս
Հռովմայ ։ Եւ երդնում 'ի քեզ անմահս , (և այս
մայրեն ծածկեցեալ 'ի մէջ մերում) զի մինչ 'ի
կառեալ անտի յաղթանակութեան հայեցեալ տեսա-
նէի զողորմելս գերիսն բարձեալք երկաթովք ,
և խոկայի զանթիւս դանձս չարապէս շահե-
ցեալս, և լուեալ զողբումն տառապեալ այրեացն
վասն արանցն իւրեանց , մտածէի որպէս թէ
այնքան բարեկամք իմք իցէին մեռեալք։ վասն ո-
րոյ , թէպէտ ուրախանայի 'ի յիս հրապարա-
կաւ սակայն ողբայի հեղլով զկաթիլս արեան 'ի
դաղտնի արտին իմոյ ։ Ոչ գիտեմ , թէ ո՞ իցէ
այնպիսի ոք , որ զվնասս այլոց առնիցէ սեփական
հեշտութիւն յինքեան ։ Յաղագս այսր պատճա-
ռիս ոչ դողեմ զասորեստանեայսն, և ոչ նախան-
ձիմ Պարսից ոչ և վշտանումն ասն զիս մտկե-
դոնացիքն , և ոչ հետաքրքիր լինիմ Քաղդէա-
ցւոց , ոչև հաւանիմ Յունաց ։ զՏրօեանացիսն
անիծանեմ եմև զկարթագինացիսն դատապարտ-
եմ ։ զի ոչնախանձայուզութիւն այդարութիւն և
իրաւանց այլ կատաղեցեալ հպարտութիւն 'ի ժա-
մանակի իւրեանց և դաւառացն իւրեանց ետուն
յոյժ դայթակղուն և մեղեցուն 'ի զառիթ կորու-
սանելոյ զմեզ ինքեանս։ Ով Հռովմ անիծեալ , զի
եղեր 'ի յանէծս , ես 'ի յանէծս , և եղեցիս 'ի յա-
նէծս , և առաւել ևս 'ի յանէծս ես լինելոց ։
Քանզի , եթէ բախտքն ոչ ստեն և խելամտու-
թիւն ոչ պատրել զիս , և բաւական բախտին ոչ
կասակցիցի , տեսանիցին 'ի Հռովմ 'ի հանդեր-
ձեալ ժամանակի զայն , զոր տեսանեմք այժմոյս
զիթագաւորութիւնս որ յառաջքան զմեզ եղեն ,
զի որպէս բռնութեամբ արարեր զքեզ տիրուհի
տերանց , այսպէս և արդարութեամբ դարձցիս ա-
զատին ծառայից ։ Ով Հռովմ ապերջանիկ և
դարձեալ ասեմ քեզ յոյժ թշուառական , քանզի
եղեր այսօր այնքան սուղ և թանկ 'ի հանձնարե-
ղութիւն և այնքան աժան և ձրի խելագարութիւն ։

Մի

Մի թէ իցես արդեօք առաւել հնագոյն քան զԲաբելն, կամ առաւել գեղեցիկ քան զԵղեսա առաւել հարուստ քան զԿարթէանն, կամ առաւել ամրագոյն քան զՏրոեա, առաւել ունի՞ցիս զբազմութիւն ժողովրդեան քան զԹեբայիդն եգիպտոսի, կամ առաւել շրջապատեցեալ քան զԿորնթոս, առաւել աշտարակապատ քան զԱսպուս, կամ առաւել հանճարի, և բերկրալի քան զտիւրոս, առաւել անպարտելի քան զաքուիլեա, կամ առաւել բարեբախտեցեալ քան զնումանցիա, և առաւել ամրացեալ և անառիկ քան զԿանթաբրիա։ Ահա տեսանեմք, զի ոչքա ամենեքեան անպիտանացան որք զգեցեալք էին զայնքան առաքինութիւն իբրև զգեստ, և ամբա փակեցեալք այնքանիւք առաքինասէր արամբք։ սակայն մաշեցան զգեստքն, և կորեան զգեստաւորեցեալքն։ Իսկ դու, Հռօմ, յուսաս յարտաւանել որ եղեալես որպէս կրկնապատ հանդերձ այնքանեաց մարուութեց, և ամենեցեալ այնքանիւք արամբք մարեսիլոք։ Ունեցայ զքո մի յոյժ հաւատուն, զի փառքն որ այժմ է՝ի քեզ, նախ կնաբար եղև՝ի նոսա։ և աւերուին, և քակտուին, որ այսօր, և այժմոյս է՝ի նոսա, յետ այնորիկ լինելոցէ՝ի քեզ։ Ով Կուռնելիոս, կամիս զի ասացից քեզ զկորուստ ժողովրդեանն Հռօմայ, թէպէտ ոչ առանց արտասուս։ Ես որ եմ Կայսր Հռօմայ, զհրաման տամ դնել զհրոմարտաքս պատերազմելոյ՝ի յերկրի ուրեք, ուր է ապատամբութիւն ինչ եղեալ։ Հարկանի փող առ՝ի ժողովել զզինուորս, հանեն զդրօշս առ՝ի կացուցանել զզօրագլուխս զհազարապետս, և զհարիւրապետս։ Ահա արհաւիրք են առ՝ի տեսանել։ զի մինչ առնուն զնշանս դրօշից պատերազմելոյ, իսկոյն ունին զհրաման գործելոյ զամ գործս աղտեղիս որով կերպիւ և իցէ։ որդիքն թագուն զդէպրատունսն, սպասաւորքն զտեսարան, արհեստ ասագործքն զարհեստս, որպէս զի ընդ հովանեաւ,

և պատճառանոք թէ երթան 'ի պատերազմ դա-
տաստան յատենին ոչ կարէ պատժել զնոսայ։
Ոչ ունին զերկիւղ 'ի դիցն, ոչ զամօթանս 'ի տա-
ճարաց, ոչ հնազանդին ծնողաց իւրեանց, ոչև
ամաչին 'ի մարդկանէ. սիրեն զանիրաւ դատաւ-
կակացուին, և ատեն զարդար աշխատանս ուրեմն
զկրթութիւն զոր առնեն, վնասակարէ յինքեանց
զի մինն կողոպտէ զտաճարս, միւսն յարուցանէ
զդգդգուն ոմանք խորտակեն զդրունս, և
ոմանք գողանան զինչս։ Երբեմն կանուն զա-
զատան, և երբեմն արձակեն զբանտարկեցեալս։
Անցուցանեն զպիշերն 'ի խաղս, և զօրն ոգջոյն
'ի հայհոյեանս. վերջապէս են վա՜մ՝ ցեղ բա-
րեաց անընդունակք, և վա՜մ՝ ցեղ չարեաց յոյժ
յարմարք. և ընդարձակք։ Արդ զինչ ասացից
քեզ զյրբութիւնն, զոր արկանել 'ի քարտիզի
են ամօթք մեծագոյնք թողուն զկանայս իւրեանց
սեփականս, և ասանին զկանայս այլոց։ Բռնա-
դատեն զաղջիկունս արանց բարեաց, և պատրեն
զդուստրս բարիս։ Ոչ դոյ հիւրասուն, զոր
ոչ բանադատեն, և ոչ դրացի, զոր ոչ հրաւի-
րեն. և վատթարագոյնն քան զամ՝ են, զի նոքա
որք երթան, դնեն զնոսա 'ի յատաւնախայծուն
որք ինան։ և այսու կերպիւ ոչ ոք փրծանի,
ոմանք կորուսանեն զպատիւս իւրեանց դնալով,
և ոմանք վիրաւորեն զսիրտս նոցա որք ինան
Կարծես Կուռնէլիոս թէ սակաւք են ան-
բոխն կանանց, որք երթան 'ի պատերազմ։ Բա-
ւուրք դիտես, զի ընդդէմ յունաց առաւել պա-
տերազմեցան կանայքն՝ամաձօնեալք, քան զսա-
տրիկ թշնամին իւրեանց, ոչ վա՜ այնորիկ զի ունէին
զսակաւ մարդիկս, այլ վա՜ այնորիկ, զի ունէին ա-
ռաւել զկանայս եղև յաղթեցեալ Փիլոս թա-
գաւորն 'ի Յաղէքսանդրէ, և այլանդակ զօրա-
գլուխն Անիբալ այնքան ժամանակ եղև տէր
Իտալիու, որքան ոչ խոստացաւ, թէ կին ոք
մերձենայցէր 'ի բանակն իւր, և հաղորդակցի
ցիւր ընդ զօրաց նորա։ Եւ մինչ եղև սիրահա-
ր-

բեցեալ սիրով աղջկայ միոյ 'ի կայուսա քաղաքի, իսկոյն տեսին զթիկունս նորա, և դարձուսին իւր 'ի կրունկս անդ 'ի Հռովմ։ վասն զի Հռովմ զբա նակս իւրս մաքրեաց 'ի բղջախտութենէ, և անպարտ տեղին Կամանցիաեղև աւեր և աւար տարկեցեալ վասն բղջախտութեան։ Եւ 'ի յայսմ պա տերազմս Պարթևաց ունեցայ զտասն և վեց հազար ձիաւորս, զութսուն հազար ոտնաւորս, երեսունևհինգ հազար կանայս։ Եւ այնպիսի իրա կուեց պատճառն եղև, մինչ զի ստիպեցայ յուղար կել զամսն արտաքս 'ի բանակէ զօրաց, վասն քա ուստինին իմոյ, և զայլ ծերակոյտից, և վասն կանանց նոցա առաքել իտուանս իւրեանց, զի ոչ աղախնիք ծառայիցեն ծերոց, և սնուցանիցեն զերեխայսն իւրեանց։ Եւ եթէ զայս առնեն աղքատքն աղքատագոյնք, զինչ արասցեն զ ղարդուքն իւրեանց։ Յաւուրն յայնմիկ, յորում վերակոչի ոք բնակիչ և ընտանի Հռովմայ ներա ղնեկ խորհրդարանն 'ի թեատրոնի, և տանի զնա բդեշխն ընդ ինքեան 'ի Հռովմ, և դնեն զարծուին 'ի կուրծսն, և զբեհեղս ծիրանեաց վասն նշա նի առնուն 'ի յուսն, աճին այնքան հպարտութիւն մինչ զի ոչ յիշելով զանցեալ աղքատութիւն իւր էանց իսկոյն համարեն զինքեանս գոլ Կայսր Հռո մայ։ Աղդ նաեաց զոր առնեն։ Հատանեն զկերս մորուացն, կանչնին 'ի ցասմանէ զկերան խատս նան բանիւ, փոխարկեն զդեսպս, դարձուցա նեն զաչս, առ 'ի երևիլ ամենեցուն գաղանա բարոյ։ Վերջապէս սիրեն զի ամենեքեան երկիցեն 'ի նոցանէ, և ասեն գոլ սիրեցեալ յու մեքէ. և ոչ գիտես թէ որքան կամին գոլ ահար կուք։ Չի յաւուր միում դոլով ես 'ի Պէնտա պոլիս զօրագլուխ ոմն իմոյ դրօշն լսելով իմ, և նայ ոչ տեսանէր զնա ասաց ընդ պառաւի միոյ զայ բաբար զբանս այս, որ ընկալեալէր զնա որպէս զհիւր խառնն իւր։ Դուք շինականդ ոչ ճա նաչէք զզօրագլուխս զօրաց, դիտեա դու ով մայր իմ, զի ոչ երբեք դողացեալ շարժի եր

կիր, եթէ ոչ յայնժամ, յորժամ սղաւնայնմա զորագլուխ ոք Հռոմէական, ոչև առաքեն եր բեք դիքն զորոտու�, և զկայծակունս ինչ, եթէ ոչ 'ի յայն տեղն, յորում ոչ են հնազան գեցեալք մեզ։ Հայեաց ուրեմն Կուռնելիոս իմ որ եթէ լուար զնազարծութիւն նորա, լուր այժմ և զքաջութիւն նորա։ Երդնում քեզ, զի գոլով ես 'ի սատակագոյն պատերազմի միում, այս զորագլուխս եղև առաջինն որ փախեաւ 'ի հանդիսեն, և անտէրունչ է թող զդրօշն արքունի, և զայս արար յայնպիսում կիրում ժամանակի, յորում մերձ էր զի առնիցէր զնս պարտեցեալ յայնմ պատերազմի, որ մինչ աւարտեցաւ, ետուս գլխատել զնա։ Զիսոյսկ կանսն անսզաւելի, զի զնեւաբքն այնք, որք մեծապէս խրախտանան բանիւք, նոյնքն են 'ի գործս ազաւել երկչոտք։ 'Ի քաղաքս գիրս զորս ընթերցայ, և 'ի քաղմաց լուայ, և 'ի քաղաքս անձինս տեսի, զի որպէս 'ի յարանց բաւականապէս հանգուժողաց ոչ կարէ պակասիլ քաջութիւն։ այսպէս և 'ի մարդիկս ոչ համբերօղս, ոչ կարէ լինիլ քաջութիւն ինչ։ Ազդ զինչ առաւել կամիս, զի ասացից քեզ Կուռնելիոս իմ։ գանիրաւութիւնքն զորս առնեն 'ի գաւառս ընդ որ անցանեն, և զգողութիւնքն զորս գողանան 'ի յիջևանսն յորս 'ի ջևանին։ Ազդ առնեմ քեզ, զի ոչ առնէ զայնքան վնաս որդն, և ցեցն փայտի, և հանդերձից, ոչ մարախն հնձոցն ցորենոյ ոչ կայծն զաւին, և ոչ ապիտակ մրջիւնն զորայից և համբարոց, զորքան մի միայն զորագլուխս առնէ զվնաս աղքատաց։ Ոչ թողուն զանասունս չորք ոտանիս առանց մորթելոյ, ոչ զայգի առանց կթելոյ, ոչ զգինի առանց ըմպելոյ։ ոչ զորս աւանց փախուցանելոյ, ոչ զապուխտ տառանց օտելոյ, ոչ զաղջիկ առանց շօշափելոյ։ Եվ առաւել և քան զայս առնեն, զի ուտեն աւանց հատուցանելոյ զգինն ուտելեաց, և ինքեանք ոչ ծառայեն առանց առնելոյ նախ զվարձն իսկոյն։ Ոչ գոյ ոք որ կարօղ լիցէ խշնել 'ի վերնց։

նոցա։ Մինչ առնուն զվարձս իսկոյն ծախեն 'ի խաղս, և եթէ ոչ տան զվարձս, իսկոյն գողանան, կամ սպասամբին։ Եւ իրակուին եղեալ այնքան ապականեցեալ մինչ զի եթէ տեսանիցես, ոչ զայլ ինչ ասասցես, եթէ ոչ, թէ իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ է գլուխ սպասամբողաց գլխաւոր մարդասպանաց, սկիզբն գաւազանողաց, թոյն առաքինուէ, նաւապետ ծովագողոց, զօրապետ չարագոյն աւազակաց։ Լուաւանց աթանասուելոյ ասեմ, զի է սնագլեմն այնքան սնանգելի և իրակուին ընթանայ 'ի յայնքան կորուստ, մինչ զի չարաբախտքն այնք, թէպէտ են ընտանի թշնամիք մեր, սակայն ոչ գոյ Կայսր, որ տիրեսցէ զնոսա, ոչ գատաստան, որ պատժիցէ զնոսա, ոչ ահ որ պանձահարիցէ, ոչ օր էն որ ենթաշնիցէ, ոչ սմանթ որ նուաճիցէ, և ոչ մահ որ աւարտիցէ։ Եթէ ոչ որպէս մարդիկս, որոց ոչ գոյ ճարակութիւն թողուամք զնոուսել զամ ինչ։ Լով տրտուամէ վասն աւարացեալ իհՀռոմ, արդէն ոչ էր ըմբռն 'ի քէզ ունել զվատս քախտութիւնս այս։ Իրաւի, զի 'ի հնագոյն ժամանակս, յորում եղեր դու բազմացեալ, և աճեցեալ ճշմարտիւք Հաւատկանաւք, և ոչ որպէս այժմս որդոյք պոռնկաճնաւք, այնքան կրթեցեալք էին որք ծնանէին 'ի քէն, և էին այնքան վարժեցեալք, որպէս զպարտունն Փիլիսոփայից, որք էին յերկիրս յոռնաց։ Եւ եթէ պատմութիւնքն ոչ ստեն զիս, Փիլիպոս ալքայն մակեդոնացւոց վասն այնորիկ եղև այնքան անուանի 'ի պատմութիւնս, և որպէսզի իւր Աղեքսանդրոս մեծն, եղև այնքան բարեբախտ 'ի պատերազմի, զի ունէին զզօրս իւրեանց այնքան ուղղապէս կառաւարեցեալս, մինչ զի թուէին գոլ մանաւանդ խորհրդարան մի ծերակուտից որք հովուէին, քան թէ զաշտ բազմաւակ։ Յորում մարտնչէին։ 'Ի յօրէնս բարեաց երդնումքեզ, զի 'ի Կուինցիոս Հինգինատոսէն, մինչև 'ի ազնիւն Մարկոս Մարէլլոս։ Յորում եղև առաւել զգ

զութի Հռոմայ, այնքան ժողովուրդն Հռոմայ ունեաց զմեծահանդէս փառք, և զպատիւ, որքան կրթութիւնն զինուորական եղև յոյժ բարուք զպղեցեալ։ Եւ յայնժամ ընկալաք մեք զաւարտ, և զկործանումն, մինչ զօրադլուխքն մերք սկսան ինքնաբար վատթարանալ։ Ահ անիծեցեալ լիցիս դու Ասիա, և անիծեցեալ լիցի օրն այն, յորում զքեզ առաք, և տիրապետեցաք։ Զի բարին որ իցէ հետևեալ վասն մեր, մինչև ցարդ ոչ տեսաք երբեք, և զվնասն որ հետևեցաւ 'ի քէն եղեցի ողբացեալ մշտնջենապէս։ Ծոխեցաք 'ի քեզ զգանձս մեր, և դու վաճառեցեր մեզ զմոլութիւնս քոյս։ Փոխանակ արանցն արիացելոց մերոց, առաքեցեր մեզ զփափկականս հեշտութիւնս քոյս, մեք մարտեաք ընդ քաղաքս քոյս, և դու յաղթանակեցեր զառաքինութիւնս մեր, մեք կործանեցաք զամուրս քոյս, և դու քակտեցեր զբարս բարի սովորութեց մերոց, դու բռնութեամբ եկար 'ի ձեռս մեր, և մեք յօժար կամաւ եղաք քոյոք։ Անիրաւութեամբ տիրեցաք փավառաց քոց և թագաւորութեց, և արդարապէս 'եղաք մեք հպատակեալք մոլութեց քոց։ Վերջապէս, եղեր դու Ասիա դերեզման Հռոմայ, և դու Հռոմ եղեր ներքնային անդունդ Ասիայի։ Պարտ էիր շատանալ դու ով Հռոմ, երկրաւն թագաւոր, որ է միջակետ, և պարտ էր մեք յաղորդք նոցա եմք յանդունկք։ Ուրեմն ես երդնում քեզ, զի յաւուր միում առ 'ի պատիժ դարձցին մեզ 'ի գլուխս։ Համայնք հարստութիւք և յաղթանակութիւք, զորս նախնիք հարքն մերք բերին 'ի յԱսիու իրքն, և ինքեանք միջնորդութեամբ ժամանակի 'ի վաճառնի ընկալան զաւարտումն, և վերջացան։ իսկ միայն փափկութիւք, և մոլութիւքն հեշտութեց

ընդ-

ընդ մեզ որդւոցս իւրեանց մինչև ցայսօր յա-
րմանացին։ Ո՛հ եթէ գիտիցէին Թադաւորքն,
թէ զինչ իցէ հնարագոյն արհեստիւս գոգռել
զպատերազմն ի վիր երկրի օտարականի, զոր-
պիսի աշխատանս գոտանեն անձանց իւրեանց,
զորպիսի հոգս ի մտածմունս իւրեանց, զոր-
պիսի աղմուկ, և զվրդովումն ի հպատակեալս
իւրեանց, զորպիսի սպառումն գանձուց իւր-
եանց, զորպիսի աղքատութիւն բարեկամացն
իւրեանց, զորպիսի հրաժարումն թշնամեաց իւր-
եանց. զորպիսի վնաս գաւառացն իւրեանց բնա-
կանի, զորպիսի թոյնս թողուն ժառանգացն
իւրեանց սեփականաց. ես երդնում քեզ, զի
եթէ որպէս ես զգամ, նոյնպէս զդայցին նոքա
ոչ ասեմ թէ հեղմամբ արեան և բռնութիւն նուա-
ճիցէին, և տիրապետիցէին, այլ կամաւ յօժա-
րականաւ, և արտասուօքս մատուցանիցէին նոցա
և նոքա ոչ ընդունիցէին։ Ասեմ քեզ զիր մի
եթէ յիշողութիւն իմ ոչ զպատրէ զիս, զի ոչ եր-
բեք էապան զորագլուխս ոք մեր զքսան հազար
ոսկեցի զինուք, զորս տարաւ Իտալիոյ, որ ոչ
կորուսանիցէր աւելի քան զերկու հարիւր հա-
զար Հռոմէացիս մինչեւ մեռանիցք, զորս էքեր ի
Հռոմ։ Ուստի զՀաշ մեծահռչակ ի հրամարա-
կի, առնել զնեթիս իսան իւրեանց ի դաղանի,
զգեցուցանել կանանց զգեստս արանց, զմար-
դիկս խառնել որպէս զկինս ընդ կանանց, դնել
զդիմայլակս յերեսան իւրեանց ընկի ընակիչքն,
ի կիրարկանել զանուշահոտս ուամիկ ժողո-
վուրդն, և զծիրանիս կայսերքն։ Չայսոսիկ է
մոլութիւն Ասիու, Ասիա առաքեաց նուէրս ի
Հռոմ ի ձեռս եօթն պայծառադունից զօրա-
գլխաց մերոց, որոց զանուանսն լսեմ, առ ի ոչ
վատահաբաւել զնոսա մեղօքս այսոքիւք։ Ու-
րեմն եղեն պայծառադունեղք դերահռչակ գոր-
ծովք իւրեանց։ Հայիցեն ուրեմն Թադաւորքն
պատերազմողք, թէ զինչ օգուտ հանիցեն առնե-
լով զգաստս օտարաց։ Թողումք խօսիլ զմի-
լու-

լութեց, զորս ըստանան, և զառաքինութեց ; զորս վատնեն, և տեսանեմք զդրամս զորս սիրեն։ Իրաւի ոչ գոյ Թագաւոր, և ոչ Թագաւորութիւն եդեալ 'ի ծայրագոյն աղքատութեն ; եթէ ոչ առնելով զգաւառս այլոց չափազանց սիրապետութիւն։ Հայցանիմ քեզ, ով Կուսանէլիոս իմ։ ով առնէ, զի Թագաւորքն կորուսանիցեն զգանձս իւրեանց, և խնդրեն զինչս այլոց ոչ բաւելով և շատանալով իւրեանցն առնուն 'ի տաճարաց փոխս տոկոսիւ և ոչ հատուցանել և բռնութիւն ձգել զհարկս 'ի վրայ գաւառացւոյն հնարել զկաշառս և տան զտեղն զի օտարքը բամբասիցեն զնա, և առնեն Թշնամիս իւրեանց զիւրայինսն, աղաչեն զամենեսեան, և ունին զկարիս իւրաքանչիւրոց, և դնեն 'ի վտանգի զանձինս իւրեանց, նա և գահավիժեն զհամբաւս իւրեանց։ Արդ եթէ ոչ գիտես լուր ինձ, և եա ասացից քեզ։ Քանզի Թագաւորքն զիսորհուրդ առնեն ընդ մարդկանց, և կեան ընդ մարդկանց, և վերջապէս են կա ինքեանք մարդիկք ; մերթ վա հպարտութիւն, զոր առաւելու 'ի նա, մերթ խորհրդականութիւն սր պակասի 'ի նա պատկեր ակերպեն յինքեանս, և Ալք ասեն նց, եթէ ստացուածք նոցա են մեծագոյնք, մեծագոյն կա պարտ լինիլ համբաւն նց, և թէ ոչ եղեցի յիշատակ 'ի նմանէ, եթէ ոչ հնարիցեն զպատերազմ իմն, թէ Կայսրն Հռովմայ զիրաւունս ունի լինիլ տէր 'ի վրայ համ երկրի։ և այսու կերպիւ որպէս զի ցածունէ բախտն, և բարձրագոյն մնացմունքն նոցա, խեստանան դիքն, զի մնացելով նց անիրաւաբար առնուլ զինչս այլոց, ինքեանք իրաւամբ կորուսանիցեն զիւրեանցն։ Ով Թագաւորք ես ոչ գիտեմ թէ ո՞ զպատրէ զձեզ, որք կարելով դուք խաղաղութիւն գոլ հատուցուք, կամիք աղքատանալ պատերազմաք։ Դառնամ վերստին ասել ձեզ, ոչ գիտեմ թէ ո՞ զպատրէ զձեզ, զի կարելով գոլ դուք սի-

թեցեալք, կամիք գոլ արհամարհեցեալք։ Դառնամ վերստին ասել ձեզ, թէ ոչ դիտեմ՝ ոք պատրէ զձեզ, զի կարելով վայելել զկեանն ձեր ապահովութիւն հանդերձ, կամիք արկանել զձեզ 'ի ներքոյ երթ, և եկցուցեալ քախտին։ Վերջապէս, ամենեքեան ունելով զկարիս 'ի ձէնջ, գոլս հարկաւորիք ունիլ զկարիս յամենեցուն։ Թէպէտ թագաւորն ոչ առնուցոյր զպատերազմ, եթէ ոչ մեր ոչ հանդուրժելոյ արանցն պատերազմի, առ կայն պարտէր թողուլ զամ՝ցեալ պատերազմն որպիսի և իցէր։ Հարցանեմ քեզ Կուռնելիոս իմ, զինչ զուգակշիռ աշխատան կարէ գոլ անձին իւրում, զինչ մեծագոյն ինքս թագաւորութեան իւրոյ կարեն առնել թշնամիքն իւրք առաւելքան զայն, զոր առնեն զօրքն իւրք։ Արդ թշնամիքն կողոպտեն զեզբաւահմանս գաւառաց, բայց մերայինքն զբոլոր տերութիւն երկրի մերոյ։ Նոքա կարեմք ընդդիմամարտիլ բայց ընդ սոքա համարձակիմք խօսիլ։ Թշնամիքն յափշտակեն յաւուր միում, և չուեն, բայց զինուորքն մերք դողանան հանապազօր և մնան։ Բարբաջոսքն երկնչին երբեմն ունելով զահ, և զերկիւղ։ բայց սոքա ոչ երբեք պատկառին։ Եւ վերջապէս թշնամիքն որքան առաւել երթան թուլանան, և զօրքն մերք օրաստօրէ առատկանան չթուլանալ։ Եւ խառնեան այնպիսեաւ կերպիւ, մինչ զի մնան մեղապարտք առաջի գիշն, և առաջի թագաւորաց ստիպիչք, և ձանձրացուցիչք ժողովրեան կելով, և ապրելով 'ի ինքեան ամենեցուն և առանց օգտակարութեան ոչ ումեք բնաւ, ուստ պիտանիք իրի իմիք։ Երդնում իգին հրատ, և նա այնպէս 'ի ճակատամարտի հովուեսցէ զբազուկս իմս ոգի 'ի յամում, աւուր առաւել զդանդաւոս լսեմ՝ 'ի խորհրդարանին 'ի զբաղեալսն Իլիրիկու, քան թէ զամենից թշնամեաց ժողովրդեանն Հռոմ։ Առաւել երկնչիմ յօրինել զդրօշ մի հանդերձ հարիւր ատամբ, քան թէ տալ զպատերազմ մի յիսուն հազար թշնամ-

նամեաց։ Քանզի դիքն և բախտն բարւոք, և չարւոք զաւարտումն իմն տան 'ի միում ժամում. բայց ընդ սոցա ոչ կարեմ զնմ աւուրս կենաց իմոց։ Ուրեմն զենչ կամիս զի առնիցեմք Կուռնէլիոս իմ, զի այսպէս եղիւ իսկ զբանէ, այսպէս ի այժմոյս։ և այսպէս եղիցի, այսպէ դարձ, այսպէս ունիմ, և այսպէս եմ թողլոց։ Հնարդիւտք եղեն նախնիք հարքն մերք, պահեմք, և 'ի կիրարկանեմք մեք որդիքս նոցա, և վասն չարութեան իւրոց յարատևիցէ ժառանգաց, և յեռնամնացիցս մերոց։ Արդ ասեմ քեզ զբան մի, և կարծեմ։ թէ ոչ սղալեցիմ յոյժ 'ի նմա։ Զի 'ի մարդիկս զայսոսիկ, տեսի զբաղում ինչաս և զօրուտ ոչնչ. և մոռանեմ համբերել կամ մեծագոյն խելագարութեան մարդկան, կամ մեծագոյն պատուհաս հասեալ իցէն։ Զի այնքան արդարք են դիքն 'ի յամենայնում արդարութեան, և ճշմարիտք 'ի յամենայնում ճշմարտութեան, զի թոյլ տան, թէ որովհետև մեք առանց իրաւանց առնեմք զչարիս յերկրի օտարաց, որոց ոչ երբեք արարաք զչարիս 'ի տան մերում, առնիցեն մեզ զչարիս այնոքիք, որոց արարաք մեք միշտ զչարիս։ Զայսոքիկ գրեցի քեզ Կուռնէլիոս իմ, ոչ վասն այնորիկ, որպէս թէ պարտիցէ քեզ դիտել զայս, այլ վասն այսորիկ, զի հանգիցէ հոգի իմ 'ի յասելն բանիցս այսցիկ։ Պաննուցիոս դրաքիր խորհրդակիցն իմ դայ 'ի տեսանել զերկիրդ այդ, 'ի Ճանապարհի ետու նմա զթուղթս այս։ Ահա առաքեցի քեզ զերկուս ձիանս, որք կարծեմ թէ իցեն լաւագոյնք։ Զինս, և զակունս պատուականս, զորս ընկալայ 'ի պարթևաց, ահա բաժանեցի յիւրաքանչիւր մասունս։ բայց 'ի նմանէ առաքեմ քեզ զմասն մի 'ի ըրից մասանց։ Քաւուստինն իմ ողջունէ զքեզ, և առաքէ զհայելի մի յոյժ փարթամ վասն ամենանուհոյն քոյ, և զմանեակ մի 'ի քարանց պատուականաց վասն դստերն քոյ։

Հայ-

Հայցեմ 'ի դիցն տալ քեզ զկեանս բարիս, և ինձ զմահ բարի։

Մարկոսն քո գրէ, առ Կուռնելիոսն իւր։

Առ Տօռքատոս բնակիչն դաւթայ, մխիթարելով զնա 'ի յաղօրանս ինչ։

Թուղթ Երրորդ։

Մարկոս 'ի Մենթէ Զէլիու 'ի սպասաւ Կայսերուն, առ քեզ Տօռքատոս բնակիչ 'ի դաւթայ, և քաղաքացի Հռոմայ, ողջոյն անձին քում, և արիութիւն ընդդէմ ընդ դիմակաց բախտին ցանկայ։ Ահա են ամիսք երեք, յորս բերին զլեռոյլ մի ինձ, զոր ոչ աչք իմք դադարեցան յնթեռնելով, ոչ և կարէի պատասխանել այնմիկ. զի ունէի զիս այնքան արտուում 'ի տրտմութեանքս, և այնքան տուժեցեալ ընդ տուժանքն քոյք և այնքան աւաղուն աւաղումն քս, մինչ զի զոր դու ողբաս աչքս արտաքնօք, ես ողբամ աղէօք ներսնայնովք։ Բարւոք գիտեմ, զի որքան տարակացութիւն դոյ ծառայն առ ատուերն նորա, և երդի առ ճշմարտութիւնն, այնքան գոյ 'ի լսել զաշխատանս անձին այլայնոց, և ճաշակել զայնս 'ի յանձին իւրում, կամ զփորձ առնուլ զոր անձամբ իւրով։ Բայց ուր է բարեկամութիւն ճշմարիտ, 'ի միջի նոցա վիշտն է հասարակ։ Վա՜ մոյ իրի տանելիք են մեծաշոյնք չարաբախտութիւք որովք յայտնեցեալք ցուցանին մեզ, այսինքն, թէ։ոյք իցեն բարեկամք ճշմարիտք։ Արդ ասա իմոցայ թղթովքով, թէ եղեր աքսորեցեալ 'ի Հռոմայ, կալեցեալ և մատնեցեալ 'ի բանտ, նաև յափշտակեցեալք համայնք

սատ-

ստացուածք քոյք ։ և թէ 'ի տրամութիւն եղեր հիւանդացեալ յոյժ, և կամ անկեալ 'ի յանկողինս։ Եւ կամիցէի դալ 'ի տեսանել, և մխիթարել զանձն քո, որպէս զի տեսանիցէիր, թէ որքան 'ի բոլորեն սրտէ և յոյժ ար կամաւ լամ զի շուա-ռուութիւն քոյս։ Բայց եթէ ունիս զիս որպէս զձշմարիտ բարեկամ քո, հաւատա ինձ, զոր ես հաւատացի քեզ։ այսինքն թէ որքան ճշմար-տութիւն զգամ զայս տրամալի դիպուածն քո։ Իրաւի եթէ դու աքսորեցեալես մարմնով, ես աքսորեցեալ եմ սրտիւ։ և եթէ 'ի քէն կողոպ-տեցին զնչս, յինէն յափշտակեցին զբարի ըն-կերակցութիւնն քո։ Եթէ դու չքաւորիս 'ի բարեկամաց քոց, ես մեռանիմ 'ի մէջ թշնամեաց իմոց։ Բայց որովհետև ոչ բաւեմ առնել ըզ-ճարակ ինչ աքսորանաց քոց դործովք, կամիմ ասկաւուք մխիթարել զոգին քո բանիւք ոմամբք։ Եթէ ոչ պատրէ զիս յիշողութիւն իմ, ոչ բնաւ երբէք տեսի զքեզ դոհունակ 'ի յայսմիկ կեն-ցաղումս։ Քանզի 'ի յաջողութիւն քում, անհա-մեղք թուէին քեզ համայնք իրք, և 'ի ձախող-թութիւն էիր միշտ ձանձրացեալ, և զոր այժ-մոյս զգամ, է տեսանել զքեզ յուսահատեալ, որպէս թէ այժմոյս իցես նորոգեալ եկեալ յաշ-խարհ, և Դառնամ ասել եթէ ոչ պատրէ զիս խոհականութիւն իմ, են արդէն ամք երեսուն և երիս։ և յորս ճանաչելիմ զքեզ 'ի մեծի խան-դութիւն, և այժմոյս բոլոքեաս զքէն վասն վե-ցից ամսոց, թէ բախտն դարձոյց զանիւն իւր։ Ո՛վ Տօրքատոս, մ՚ գիտես դու, թէ մարդիկք հանճարեղք առաւել երկնչին ունիլ զաւուրս երկուս 'ի յաջողութիւն, քան թէ զերկու հա-ւիւր ամս 'ի ձախողութիւն բախտին։ Ո՞հ թէ որ քանիցս անգամ, և 'ի յորքան քաղաքս դու և ես տեսաք 'ի յաջողութիւն իւրեանց զերծանիլ բեռամբք այլոց, և սեփականաւ մոլութիւք իւրեանց, և թշնամութեամբ օտարականաց, այնու կերպիւ։ մինչ զի փառքն ունայնք, և ա-

ջաղութիւնքն անցաւորք տեսեցին յաւուրս սա-
կաւս , և աւաղ և եղուկն այնոցիկ զորս կո-
րուսին , և սասարիկ թշնամութիւն զոր շահե-
ցան յարատևեաց մինչև ցայսօր 'ի յեռամեայս ,
և 'ի ժառանգս իւրեանց ։ Եւ հակադարձա-
պէս հակառակին տեսանելեաք զայլս ներսամ ու-
ծեալ և ընկղմեալք 'ի տառապանս ընդ որոց փբ-
ծեալք մերկացեալք 'ի մոլութեց , կրկնապատ
կեալք առաքինութիւն , պարտաբեկ առնելով չա-
րեաց , և նախանձայուզք բարեաց , բարեկամք
ամենեցուն , և թշնամիք ոչ ուրուք ։ Արդ զինչ
կամիս առաւել քան զայս զի տեսցեմ քեզ , եթէ
ոչ զի բարեբախտքն յաղթեցեալք են 'ի խաղա-
ղութիւն , և վատաբախտքն դան յաղթօղք 'ի պա-
տերազմի ։ Որ եթէ այսպէս թուի ինձ , եթէ
և սքեզ թուիցի Տօրքսատս , թէ ոչ սահաւ պի-
տոյս հարկաւորութիւն ունին բարեաց խորհր-
դատրութիւն ազողակքն յոյժ ազողեցեալք քան-
թէ ճարակի , և հնարի տրտուքն յոյժ տրտ-
մեալք ։ Քանզի ոչ սահաւ վատակին նոքա , որք
միշտ երթան 'ի ճանապարհս հարթս , քան զնո՝ ,
որք վատակեալք բեկանին անգամ և եթէ ելա-
նելով 'ի բարձրաւանդակ դարս 'ի վեր ։ Ի
թուղթն քո ճանաչեցեալք եղեն թէ որպիսի 'ի
ժամանակի , յորում յուսահիր ունիլ զհանդիսաս ,
և զանդորրութիւն անձին քում , դեղեալ պատա-
հեցաւ քեզ առաւել հակառակ բախտն ձախոր-
դութեան ։ Ի ահաբեկիցիս յայսցանէ , քանզի
այնպէս դիցուք , թէ ամ փոփոխութիւն նորա-
գոյն պատճառեալ զնորագոյն վիշտ , և զանհան-
գստութիւն 'ի ներկայս , բայց է պատճառ մեծա-
գոյնի հանգստութեան և հաստատութեան 'ի յապա-
գայն ։ Իրաւի ծառն ոչ տայ զայնքան պտուղ
յայնմ տեղւոջ յորում բուսանի , զորքան յայն
ժամ յորում տեղափոխս առնեն զնայ ։ և բու-
սումն այնքան են առաւել անուշահոտ , որքան
առաւել ծեծի և հարի։ Ասա ինձ աղաչեմ զքեզ ,
բնակելով քո յաշխարհի , դրամ որպէս աշխար-
հի ,

հի, և սիրելով դու զաշխարհս, զինչ յուսայիր դու 'ի յաշխարհէ, եթէ ոչ զինչս աշխարհի։ Աշխարհս միշտ եղև աշխարհ, այժմոյս ևս է աշխարհ, և և լինելոցէ աշխարհ. և բստ որումէ աշխարհ. ընդ աշխարհականաց իւրոց ընձեռնէ աշխարհօրէն։ Եթէ ճանաչիցէիր զքէզ և զոկարութինքդ եթէ ճանաչիցէիր զբախտն, և զփոփոխութինն ներ, եթէ ճանաչիցէիր զմարդիկս, և զենգութիս նոցա, եթէ ծանիցէիր զաշխարհս, և զգովումն նորա, համբառնայցէիր դու կամաւորապէս զձեռս քո պատուով, և նք ոչ զքեզ յուղղաւորիցէին անհամբառութեամբ։ Ո՛հ թէ որքան անհոգք և անպատրաստապէս յուսամք 'ի բախտն։ Ո՛հ թէ որքան ան կարծողութիք անցուցանեմք զկեանս։ Ո՛հ թէ որքան առանց զգուշութե, և զգաստութեան առնումք զինչ քնոյ։ Ո՛հ թէ որքան անզգայաբար հաւատամք մեք աշխարհի։ զի այնպէս հաւատամք բանից նոր, որպէս թէ ոչերբէք, և ոչ ումեք արարեալ իցէ զտնաղ ինչ, և զկատականս։ Ես ոչ ասեմ թէ լուաք ականջք, ոչև ընթերցաք իդրեանս, եթէ ոչ զի տեսանեմք օր ըստ օրէ աչք մերովք զոմանս մարդիկս, որք սահեալք կորուսանեն զստացուածս այլք ապրդեալք, կորուսանեն զհաւատարմութիս ոմանք անկեալք 'ի յաչաց կորուսանեն զպատիւս, ոմանք անկանելով 'ի յորոգայթս կորուսանեն զկեանս։ Բայց սակայն հանդերձ այսու ամենայնիւ կարծեն ամենեքեան, և մտածեն դոլ ազատք յատկորինութիք, ուր ոչ ոք եղև բնաւին ազատութիք յատկորինեցեալ։ Ո՛վ Տ՝օրքատոռ իմ, զմիոյ իրէ եմ հաւատի, և ունիցին ամենեքեան դոլ ճշմարիտ։ Զի են այնքան չարապէս ընկղմեցեալք մարդիկք յորոց ծնեալք եմք և է այնքան դազանաբարու կենդանի աշխարհս յորում կենցաղավարիմք, և է այնքան թոյնալի օձ բախտն, ընդ որում ընձեռեմք, մինչ զի աքացեալք 'ի յոտից նորա, և խայծեցեալ 'ի յատամանց նորա, կամ քերձեցեալ 'ի յեղնգանց նորա,

կամ

կամ թունաւորեցեալ 'ի թունից նորա, ոչ ոք առնու զմահ, ուրեմն սակաւ կամի անցանել 'ի կենանայ։ Եվ եթէ տեսանիցես զոմանս անցուցանելով զկեանս իւրեանց երկարապէս թարց ուներոյ երբեմն զհանգուցեալ բախտն. մի՛ նախանձիր ընդ նոսա, զի այն ոչ է վասն երջանկութեան նոցա, այլ վասն մեծի թշուառութեան նոցա։ Քանզի աշխարհս է այնքան նենգաւոր, մինչ զի անդ ապատէ պատրասոել. և լարել ըզդաւաճանութիւնն իւր, ուր յեռոյ դահավիժեալ տայ 'ի դէռին մեծագունիս աւաղութիւն։ Առաւել փութանակի մեռանին որք յոյժ առողջ են ընդ հիւանդութիւն սակաւուց աւուրց, քանզի յոյժ տկարքն հիւանդութիւն բազում մամց։ Զայս ասեմ, քանզի ես ունիմ առաւել ան սայթաքս և ապահով, զի մարդ թշուառականն (որովհետև ոչ կարէ անցուցանել թարց թշուառութեն) ճաշակիցէ զտառապանս սակաւ առ սակաւ, քանզի կլանիցէ համանգամայն 'ի միասին։ Բազումք իրք ուտին պատառ առ պատառ, զոր եթէ ուտիցին յամենքէ ամբողջ, հանգամանայն 'ի միասին խեղդուիր ուտողն, նմանապէս զանազան աշխատանաց ըմբերամք 'ի զանազան աւուրս, որք եթէ համայնքն 'ի միասին գայցէին, աւարտիցէին զմեզ յաւուր միում։ Բայց որովհետև դիրքն կամեցան խոստանալ, և 'ի յաներջանկութիւն քում, դիպեալ պատահեցաւ անկումն այս, զի դեռն ելանէ 'ի մօրէ իւրմէ, և զայն զոր կարծէիր առաւել անսայթաք 'ի քեզ, 'ի նոյնում գտար զմեծագոյն վտանգ, աւադրեմ քեզ զմանս սպեղանիս, որպէս զի մի' կորուսանիցես զհամբաւս քարիս, որովհետև կոթուսեր զինչ չարս։ Աստ ինձ աղաչեմ զքեզ Տօնքատոս. զնարդ գանգատես զքէն որպէս աղտաժէտ։ Վասն էր արձակես զձայնս աղաղակելով որպէս խելագար, ընդէր հառաչես որպէս յուսահատեալ, զի արդ լաս իբրև զերեխայ։ Քայլես ելանելով առ ադարս, և դարս դժուա-

բակիրս , և ողբաս թէ վասն էր սահեցեալ սն-
կանիս , արձակեալ յառնես 'ի վր՛ փշոց և դան-
դաւեա թէ պատուաւին զգեստդ : Ընթանաս ընդ-
յապառաժս քարանց , և լաս զի հարին սուքբոյք
'ի քարն : Կամեցար դնել զքեզ 'ի վտանդս , և
կարծեիր ոչ անկանիլ երբեք 'ի վտանդն : Վեր-
ջապէս , Կամեցար նստիլ ընդ աշխարհի , և խոր
հեցար գոլ ազատ 'ի յերկինս : Կամիս զու զա-
զատ ուղաւորու� 'ի բախտէն թշնամւոյն բազ-
մաց , ոչ կարալով տալ քեզ բնական քնութիւն
որ է մայր ամենեցուն : Չիր իմն կամիմ հարցա-
նել քեզ : խոստացեալ է քեզ ծօրն միշտ զանդոր
լուութիւն . երկրին զմեծ պարզութիւն , ամաւն
զձիւն ձմեռն զծաղիկ , ոչ երբեք իրաւի Ո՛վ
Տօնքաստոս . զայն զոր ոչ խոստացաւ տալ քեզ
քնութիւն , որ է դիթածագոյն մայր քո , կար-
ծէիր թէ տալոց է քեզ բախտն որ է ա-
նարդար խորթամայր քո : Ընկալ զկարդացորու-
թիս այս իրաւի , և մի՛ մոռանալ երբեք , թէ
համայնք ընթացմունք բնակաւք են ենթարկե-
ցեալք փոփոխութիւն յիւրաքանչիւր ամի , և հա-
մայնք աշխարհականք , որք քարշքարշին զկնի
բախտին , չարչարելոցքեն և ըմբռնին հանդոյն
խաւարման լուսնի յիւրաքանչիւր կիսի : Ուրեմն
բարիքն բնակաւք ոչ կարեն կեալ միշտ մի և 'ի նոյ
նում կացութիւն դալով հարկաւորք , և արդա-
ւադունեղ իրք են , զի բարիքն բախտին կոյն-
չիցին զի՞ զի աւելորդք են : Անարդարք իցեն
դիքն արդարք , եթէ զայնս , որք ինքնակար-
քեն բազմաց , առնիցեն յարակայականս , և
զայն որ է օգուտ ամենեցուն , սուղծիցեն զան
կայուն և սահելի : Այլ կամիմ խօսիլ ևս զաջո-
զութիւն քումմէ անցելոյ , այլ դամ այժմ՝ 'ի յաք-
սորանս յորս դու կրես այժմոյս 'ի ներկայութիս :
Կարծողակիր և երկբայական բախտն եդ 'ի ծախս
զդրունս քոյս վաճառաս հրապարակականս առ 'ի
վաճառել , դիտելով զվաճառականութիւն զորս
վաճառէր , բայց դու ոչ դիտէիր և ոչ ճանա-
չէիր

չեիր զայն զոր գնեիր , զի զայն որ էր թան-
կագին եւ քեզ սակաւագին , և զայն որ էր
սակաւագին , վաճառեաց քեզ կարի թանկա-
գին , եւ քեզ զգառն փոխանակ քաղցեր և ըզ
քաղցրն դարձոյց քեզ յոյժ դառնագին , զչարն
եւ քեզ փոխանակ բարւոյ. և զբարին դարձուց
քեզ չարագին ։ Եւ վերջապէս պատրեաց զքեզ
'ի հաւատսն և ուղիղ գինն իրին , դու ոչ մոռ-
ծելով թէ քեզ առնելոցդէր զնաս մեծամեծս ։
և դիցուք թէ նաւելև նենգաւոր 'ի վաճառելն ,
սակայն դու ոչ եղեր սակաւ յանցաւոր , զի յի-
մարացեալ գնեցեր 'ի նմանէ . մինչ զի մանաւանդ
'ի խանութս բախտին երկրպագելք են համայնք
մթերմունք վաճառականութեան ։ Ո՛հ մեք թշուա-
ռականքս , զի ոչ այլ ինչ վաճառի յայսմիկ վա-
ճառականութեան բախտի , եթէ ոչ ստութի . ոչ
հաւատան մեզ , եթէ ոչ վերադարձելով զհամ-
բաւն մեր , և ոչ հատուցանի 'ի վախճանի , եթէ
ոչ վճարմամբ կենաց մերոց ։ Եւ այն որ է ա-
ռաւել աւաղելի , է այս , զի դիտելով ամենե-
քեան թէ 'ի քէն ոչ զայլ ինչէն ունելոց եթէ
ոչ զչարիս և կորուսանել զբարիս , ոչ բախտ
սակայն ամ՝ որ կամի մեծաւ ստիպմամբ առնել ընդ-
քեզ զտուր և զառուն և դնել 'ի քէն ։ Ո՛հ անի-
ծեցեալ իրակութի , զարհուրելոցդ անեռ վիս ,
ոչ Տօքատոս , Քանզի համարէի ես զքեզ մոռ-
ելիս և զգօնունակ , իսկ այժմ դու զքեզ բա-
ղուզես դոյ յիմարացեալ և կորուսեցեալ։ Այդարև
յորժամ 'ի մանկութեան տեսի զքեզ 'ի գահեթայ ,
ենթագաւոցն զքեզ արժանի դոյ կառավարե-
լոյ զՀռոմ , և այժմս որ եղեր ծերացեալ ,
ոչ այլում իրի արգիւնաւորիս , եթէ ոչ ձգե-
ցեալ դոյզ 'ի լաստն այսինքն գալերն առ 'ի քար
շեալ զթիս ։ Ո՛հ թէ որքան դոն առ 'ի ձն-
մարտապէս ճանաչել զմարդ մի ։ Ոչ դոն այն-
քան բարձրագոյնք դագաթք լերանց որ ընդ
ոտիւք ոչ կոխիցի , ոչ դոյ այնքան խորագոյն
ծով որ 'ի վախճանի գրկաւ սառճմի ոչ չափե-

ցի. իակ 'ի սիրտ մարդոյ մեղ ոչ ոք յամն հա-
ւրիւր կարէ հասանել։ Ասա ինձ աղաչեմ զքեզ,
զինչ յուսայիր ունել դու 'ի բախտէ։ Կեալով
դու յաշխարհի. յետ այնքանից բախտաւո-
ւթեանց, մտածէիր թէ և ոչ երբէք լինէիր
աղտեղի։ Երթալով երթիցեն որդիքն ունայ-
նութեամբ, զի 'ի վախճանի անկարգք ցանկութիւնքն
իւրեանց, ոչ 'ի բաց մերժեն յաշխարհէ զհնա-
ցեալ զանօրէնութիւնս իւրեանց զորս ոչ արար
բախտն ընդ նոսա զորս բարձրացոյց մինչև
'ի երկինս. յուսաս դու թէ առնիցէ քեզ որ
ընկճեալ և խոնարհեալ կաս մինչև յանդունդս։
Ո՛հ խենթադոյնեղար Տօնքատոս, մտածէիր դու
երթալ 'ի ծովթարց վտանգի և կամակծանաց,
ուստէ զմիս առանց ոսկերաց, ըմպել զգինի ա-
ռանց մլուրի, գնալ 'ի ճանապարհ առանց քա-
բանձաւի, և դնել զցորեան առանց յարդի և
ծղի։ Կամիմ ասել թէ խոկայիր դնել ըզգակ
չարս առանց վնասելոյ համբաւոյնքում բարւոյ,
և պահպանել զանուն բարի, թարց կորուսանե-
լոյ զինչս վատթարս։ Կամէի զիտել ես իքեն,
թէ զինչէր այն զոր յուսացեալ, և ապաւի-
նեալ էիր դու յաշխարհէ ցուցանելով զդէմս
իւր այնքան ժամանակս ուրախալի ընդ քեզ։
Յամս երեսուն և երկու եղեր 'ի շնորհս նո՛ր,
արդէն մերձեցաւ ժամանակն, յորում ծնանի-
ցէր 'ի միջի ձերում ճանձրութի և տարաձայ-
նութի իմն։ Բէելայ արքային Աստուց ոչ ապա-
ստեաց, եթէ ոչ զեօթն ամս աջողութիւն։ Թա-
գուհւոյն Շէմիրամի միայն զվեց ամ։ Լաբէ-
լոս արքային Լաչէդէմոնացւոց զամս հինգ։ Են
Թրէտոս Թագաւորին քաղդէացւոց զամս դ.
Աղէքսանդրու յունաց արքային զամս երեք։
Ամիլքարա մեծին կարտագինացոյ զամս երկցւ
և մեր Գայիոսին Հռովմայեցւոյ միայն զամ մի և
անթուից առաջնոց և յետնոց ոչ ետ բնաւին
պէր իմն։ Ուրեմն գոլով դու առաւել ծածկե-
ցեալ առհմնականութ, առաւել քթացեալ 'ի յի-
մա-

մացուածս չհանձարեղութիւն, և առաւել փո-
քրագոյն 'ի յանձինդ, առաւել մեծացեալ 'ի համ
բաւս, նաև առաւել անօգուտ 'ի յարգիւնաւո-
ղութիւն, այսու ամենայնիւ հանդերձ վերա-
ցոյց զքեզ բախտն։ Ուրեմն զիարդ գանդա-
տես 'ի բախտ էն։ Եթէ դու լեալ լիցիր այր
հանձարեղ ընդ ամն յայնոսիկ երեսուն ամ
ոչ երբեք ուտիցէիր առանց հոգոյ և վարան-
ման, ոչ խօսիցէիր առանց երկմտութեան, ոչ և
ննջիցէիր առանց տագնապի, մտածելով թէ
դու կարէիր սղալել, թէ բախտն կարէր վշ-
տացնել քեզ, թէ մարդիկք ենթադրուք կա-
րէին խաբել զքեզ։ Այր ոք որ յայնքան ժամա-
նակս, և 'ի մէջ այնքանեաց թշնամեաց եղև շր-
ջապատեցեալ, ես ոչ գիտեմ թէ այնպիսին որ-
պիսեաւ կերբուիս կայսէ բոլոր մի միայն տալ
զքուն ազազ, և զնինջ արտաքանց սպահովա-
բար։ Ո՞վ Տօռքաստոս Տօռքաստոս աշխարհս
ունի զայնքան տեղիս գահավիժելոյ, և գիտեմք
զի զայնքան չարիս ունի պահեցեալ վասն մեր
աշխարհականացս, մինչ զի հաղիւ թէ անկեալք
իցեմք, իսկոյն որպէս զգենուածու ծառայս ու-
նի շղթայեակապեալ զձեռս, և զոտս մեր, վա-
նի թէպէտ և կամիցիմք, ոչ կարեմք արձակել
զմեզ զի ծածկէ անձինս մեր 'ի մոլորիս, բռ-
նադատէ զմիւս մեր 'ի հիւանդութիւն, նվաղե-
ցուցանէ զսիրտս մեր 'ի յառաքինութենց, և
վերջապէս ձգելով 'ի հոգիս մեր գյուշաթա-
փութիւն, և 'ի խելապատակս մեր զանգայա-
կանութիւն, և 'ի հանգութիւնս մեր փոխարկէ 'ի
յայլ հանգութիւն, խոստանալով թէ զգաւս մեր
միով հառաջմամբ որպէս անսասանք ցուցանի-
ցեմք զդալ։ բայց ոչ որպէս մարդ համարձա-
կիցեմք ասել։ Եւ եթէ զայս իցէ ճշմարիտ,
Ո՞ն թէ զմրքանս տեսանեմք որք գիտեն զնն-
քեանս կրուսանել։ Ո՞հ թէ որքանք և որքանք
գիտեն զնքեանց գանդատել. և ոչ ոք երբեք
գիտէ զնքն քաջալերել։ Զայս սակաւս գրե-

ցի քեզ որպէս զի այսուհետև կայցես մեծաւ
զգաստութեամբ ։ Զքուռանն ձիոյ զոր առաքէ-
ցեր բարեւաքանչ , և շունն երկացեղ լաւապէս
եհաս, բայցէ բոլորովիմբ բորոտեցեալ ։ Էրինն
եղև յոյժ պարարտեցեալ , կամեցայ ես զի ու-
սիցեաք իսկոյն , իսկ Քառասունն իմ ուսիպեաց
պահել զնայ , և կարծեմ թէ գողացան 'ի բու-
բաստանէն։ Զհա առաքեցի քեզ վերկու հազար
գահեկանս արծաթոյ , առ 'ի օժանդակել զառ-
ուստանս քո ։ Եւ այն որ պատկանի յաքսորանս
քոյ , ունելով զդիպող ժամանակ ։ Ես ուղղա-
ւորեցից 'ի խորհրդարանի ։ Մխիթարութիւն
դիցն , և սէր մարդկանց բարեաց եղիցին ընդ
քեզ Տօռքատոս ։ Որոգայթք ծածկեցեալք չա-
բաց , և բարկութիւնք կատաղելոց անջատիցին
յինէն Մարկոսէ ։ Քառասունն իմ ողջունէ
զքեզ և 'ի կողմանէ իւրմէ , և մերմէ զոգբանէն ։
և զկողակիցն քո յանձնեմք զմեզ։

Մարկոս 'ի Հռոմայ գրէ առ
Տօռքատոս որէ 'ի գահեթայ ։

Առ Դիոմիդիանոս 'ի Կապուայ մխիթարելով զնա 'ի յաքսորանս իւր։

Թուղթ Չորրորդ։

Սակայն առենաքան Հռոմայեցի ծնեալ 'ի Սանթէչէլիս, առ քեզ Դիոմիդիանոս Կապուացի. ողջոյն անձին քոյ և մխիթարութեան 'ի դիցն մխիթարչաց։ Սաստկութեան ամենայն յարոյց 'ի զաւակս ի այսմիկ յոյժ մեծագոյն հոգմաշնչումն, և մեծագոյն շնչումն հոգմոյ զարթոյց զբազմութիւն ցուրց, և բազմութեան ցուրցն պատճառեաց զբազում խոնաւութեան, և բազում խոնաւութիւնն զարդուցանէ զբազում հիւանդութեան, և 'ի մէջ ամենից հիւանդութեց երկրիս այսորիկ, մինն է գօրն ձեռաց և ոտից իմոց, 'ի յԱռողջութեան քաւաստինին իմոյ. զի ոչ կարեմ շրջիլ ոտոյք ոչ և գրել ձեռամբ։ Ասեմ զայս զի ոչ կարեմ գրել քեզ այնքան լայնատարածաբար որպէս պահանջէ հարկն, և որպէս արդիւնաւորին արդիւնքն քոյք, և հեռեւապէս ցանկայր ցանկութիւնն իմ։ Սացեալ եղև ինձ, թէ 'ի պատճառս ձիոյ մեոյ կադեալ ընդ Պատրիցիոս դրացոյն քում, զքեզ աքսորեցին 'ի Կապուայ, և եդին նայև 'ի բանդն Մամերթինու։ Յարիւսակեցին զինչս աքսորեցին և զորդիքս և քակեալ զատուն, և 'ի վեր քան զամ զի զկնի բառնալոյ զքեզ 'ի պաշտօնէ խորհրդարանին, աքսորեցեալ եղեր դու ընդ եղբօր որդւոյն քում զամս տասն, սասցին և թէ կաս 'ի յայնպիսի տանջանսի, մինչ զի լաս 'ի տունջեանն, և ոչ ինչեան 'ի դիշերի, 'ի յինկերակցութեանէ նեղասրտիս 'ի միայնակեացութեանէ հանգիստ, դարձիս 'ի զբօսանաց, և սիրեա զորտմանն։ Եւ ես ոչ տարմանամ քան

զի սիրտք տրտումք լան ապրելով, և մեռանին
ծիծաղելով։ Ունիմ զմեծ ցաւակցութիւն վասն
կորստեան քո, բայց առաւել մեծապէս ցաւիմ,
մինչ տեսանեմ, թէ 'ի պատճառս ձիոյ միոյ,
յարուցեալիցէ այնքան մեծ աղմուկ և կորուստ
բազմաց կացութեանց քոց։ Ո՛հ թէ որքան այլայլ
լեալ և փոփոխականէ բախտն, և ոչ վասն միոյ
սակաւ իրի պատահին այնքանք անհաղորդութիւնք։
Ունիմք զչարիս առաջի աչաց մերոց,
և ոչ տեսանեմք, շօշափեմք ձեռամբք, և ոչ
զգամք, 'ի ներքոյ ոտից ունիմք և ոչ ճանաչեմք,
խօսին յականջս մեր և ոչ անսամք, աղաղակեն
յուժգին, և ոչ իմանամք։ Եղէ պատճառն սո-
րին է, զի ոչ կամիմք, և վերջապէս յայնժամ
զգամք զվտանդն, յորժամ ոչ գտանիցի ճար,
և հնար։ Արդարև փոքրկաւ հնչմամբ հողմոյ
անկանի պտուղն 'ի ծառոյն, և փոքրկաւ կայծիւ
հրոյ եհեալ այրի տուն իմն, և փոքրկաւ քարաժա-
ռիւ դիպելոյ բեկանի և ընկղմի նաւ, և փոքր-
կաւ քարիւ վիրաւորի սրունկն։ Կամիմ ասել,
թէ բազում անգամ զնմանէ յորմէ ոչ երկնչիմք
ծնանի մեզ համ վտանգ։ Արիուն հեղուումն է
հիւանդութիւն իմն յորովայնի, որ բժիշկքն կուգեն
վտանգաւոր յայնմ որ փակեցեալ իցէ. քան զայն
որ արտահերն։ 'Ի ներքս առաւել խորութիւն յա-
պաժի ուռնի զերկիւղ նաւապետն, այլ ոչ 'ի
բարձրացեալս ալիսն, քաջամարտ պատերազմողն
ոչ երկնչի 'ի յայտնեալոյ իմբից զորաց, այլ 'ի գաղ-
տնեալոյ դարանակալութիւնէ։ Կամիմ ասել թէ ոչ
յօտարականաց, այլ 'ի իւրայնոց, ոչ 'ի թշնա-
մեաց, այլ 'ի բարեկամաց, ոչ 'ի պատերազմի
յոյժ սաստկագոյնէ, եթէ ոչ 'ի խաղաղութիւնէ
առաւել ապահովի, ոչ 'ի յայտնեալոյ վնասէ, եթէ
ոչ 'ի գաղտնեալոյ և ծածկեցեալ վտանգէ պարտ-
զգուշանալ մարդն հանճարեղ։ Ո՛հ թէ զոր-
քանս տեսեալք եմք, զորս 'ի ձախորդականի
պատահման ոչ կարաց բախտն ընկենուլ 'ի վայր։
և սակաւ ժամանակս մինչ կային անհոգացեալք,
մի-

մեծաւ խայտառակութիւն ընկէց զնա 'ի գետին։ Հարցանեմ զքեզ, զինչ կամ զորպիսի հանգստութիւն կարէ ունել անձն ոք, եւ ով հաւատայցէ երբէք յաջողականի բախտին, որովհետեւ վասն իրի մոյ այսքան թեթեւագուներ տեսանք արդէն զայն քան մեծ աւերումն 'ի Հռոմ եւ զայնքան կորուստ եւ մեծագոյն կործանումն 'ի տան քում։ Տեսանելով զայն զոր տեսանեմ, ոչ կամիմ երկնչել 'ի հողմայնոյ անձրեւ աշխատանաց, եւ ոչ հաւատալ պարզութիւն զբօսանաց, ոչեւ ահաբեկիցեն զիս որոտմունք նոցա, եւ ոչ հաւատայցեմ համոզմանց նոցա, ոչ եւ ունելոցեմ զհաճութիւն վասն այնորիկ որ տայ, եւ ոչ ներիմ վասն այնորիկ, զոր յինէն բառնայ, ոչեւ հակեմ զն ասիցէ ինձ զճշմարիտն, եւ ոչ ոքնիմ թէ զարդ ասէ ինձ սուտ, ոչ ծիծաղեցայց վասն զի խնդրէ զիս, ոչեւ լացից վասն զի ուղաւորէ զիս։ Եւ եթէ ոչ գիտեա զպատճառն սորա ես ասացից քեզ։ Է՛ կեանն մեր այնքան երկայնելի, եւ բախտն այնքան յանկարծահաս մինչ զի ոչ միշտ վերաւորելով սպառնայ, ոչեւ միշտ սպառնալով վերաւորէ։ Մարդ հանճարեղ ոչ պարտի երկիւղ այնքան կարծողութիւն, եւ խոկալով թէ յամենայնում վայրկենում անկանելոց իցէ, ոչեւ կայցէ այնքան անզգուշ, որ ոչ խոկայցէ, թէ կարելի է սահիլ եւս 'ի հարթ ճանապարհի։ Քանզի ստասէր բախտն բաղում անգամ նետաձիւք սուն եւ ոչ վիրաւորէ, եւ այլ անգամ վիրաւորէ եւ ոչ նետահարէ։ Հաւատա ինձ Դիոմիկլանոս զիր մի, զի յայնմ կողմն կենայց է առաւել վտանգաւոր զոր յոյժ անզգուշութիւն ոք առանէ ապահով։ Արդ կամիս տեսանել, թէ ճշմարիտ իցէ այս։ Նայեաց առ Հերքուլես, որ զերծաւ 'ի յայնքանից վտանգից 'ի ծովի, եւ 'ի ցամաքի, եւ յետոյ եկն մեռանիլ 'ի ձեռն սիրատարեցեալ կնոջ մոյ հարձին իւրոյ։ Լաոմեդոն ոչ վտանգաւորեցաւ 'ի վրայ Տրոյու, եւ սպանին զնայ 'ի տան իւրում։ Եւ յոյժ բազմաբախտն Ա՛ղէքսանդր ոչ մեռաւ պատերազմելով ընդ բոլոր երկ-

երկրի, և վճարեաց զկեանն իւր սակաւուք թուն
նիւ մահադեղեաւ։ Եւ քաջասիրտ Գայիոս
Կայան ազատեցաւ 'ի յիսուն և երկու ճակա-
տամարտութենէ 'ի պատերազմի, և յետոյ նստեալ
'ի խորհրդարանին, ետուն նմա քան և երկու
հարուածս այտէնիւք։ Ակիլիոս եղբայրն Գամ
ալէի ոչ վտանգաւորեցաւ յամս քսան զոր եղև
ծովազարկ աւազակ 'ի ծովի, և յետ այնորիկ խեղ
դեցաւ 'ի գրիւի միւմ քարշելով զՀուր անտի։
Զտանն Հօրագլուխս, զորս ունէր Ըշնի-
պիօն ընդ ինքեան 'ի յԱֆրիկայ, որք բարե-
բախտեցեալք յաղթեցին զպատերազմն (երկ-
բախս թէ այնպէս իցեն անձինքն իւրեանց) ի-
բաւի խաղալով 'ի վերայ կարմրջի միոյ ծաղր
առնելով զմիմեանս և առասպելով, անկան 'ի
վայր և ամբն 'ի միասին խեղդեցան։ Դրուսիոս
բարին յաղթեալ զպարթևսն յաւուրն յաղթա-
նակութեան իւրոյ դնալով 'ի կառն իւր, անկաւ
ուղիւ մի որ կիսեաց զգլուխն, մինչ զի փառքն
այն ունայն, աւարառեաց զկեանն նորա բարի։
Զինչ աւելի կամիս զ ասայից քեզ։ Բարբ-
գիտես թէ Լուսիա քոյրն իմ, ունելով զասել
մի 'ի կուրծն, և զերեխայ մի 'ի դիրկն իւր, տա-
լով երեխայն զբունցի մի խաղալով ընդ մօրն,
'ի յայն կողմն ուղղեցաւ մնանել սաեղն, ընդ
յոր էհան զհոգին մօրն։ Գնէոս Ռուֆինոս
հաստատեցեալ բդեշխ ընդդէմ դերմանացւոց
(որ թէպէտ իցէր 'ի ժամանակի մերում ուժեղ,
սակայն իզէնս ոչ ոք դերազանցեաց զնա 'ի նախ
նեացն) սանդրելով զհերս իւրս բարի ծերու-
նին, եմուտ փուշ մի 'ի սանդրէն և հարաւ 'ի
գլուխն եղև շշուկ մի, որոյ պատճառաւ ու-
նեաց զվախճան կեանն նորա պատուելի, յանդգն
պատահման միոյ այնքան փոքր իրի։ Զինչ թուի
քեզ Դամիցիանոս, զի որպէս ասեմ զանկաւուցս
յայսցանէ, կարէի տալ զայլ օրինակս անթիւս։
Զինչ վատաբախտութիւն զկնի այնքան բախ-
տաւորութեան, զինչ խայտառակութեի զկնի այն-
քան փառաց. զինչ աներջանկութեի զկնի այն-
քան

քան երջանկութեան, զինչ վախճան այնքան վատ-
թար մահուան զկնի ակզբան այնքան բարի կե-
նաց։ Գոլով նոքա երբեմն զիս, ոչ դիտեմ զայն,
զոր կամ էին նոքա։ բայց գոլով ես երբեմն զնոսա,
նախնապէս ընտրիցեմ զկեանս աշխատակիցս,
և զմահս պատուելիս։ քանզի զմահս չարս և պա-
տուելի կեանս։ Ըստ որում թուիցին, թէ նա որ
կամիցի դալ մարդ 'ի մէջ մարդկան և ոչ անա-
սուն 'ի մէջ անասնոց, պարտի յոյժ աշխատիլ
առ 'ի կեալ բարւոք, և առաւել յոյժ աշխատա-
կիլ ընելոյ առ 'ի մեռանիլ բարեգուշակապէս։ Քան-
զի ոչ 'ի վախճանի մահն վատթար դնէ զերկրայ-
ութիւն 'ի կեանս բարիս, և մահն բարի ոչ առնէ
փոյթ ինչ զկեանս չարս։ Աստ դրեցի առ քեզ
'ի սկզբանն թղթոյս թէ այսու խոնարհութիւնս
վշտացուցանէ զիս ցաւն ոտիցս, զի առ 'ի վշտա-
բեալ ցանկութեաց քոց կամէի գրել առաւել լայ-
նատարածաբար ձեռօք իմովք։ Եւ աւուրք
երկուք յորս մարտնչին սէրն զոր առ քեզ ու-
նիմ և զցաւն զոր պատուելի յիս, կամքն իմ ցան
կայր գրել առ քեզ, և մատուանքն իմք ոչ կարեն
կալնուլ զգրիչ։ Դեղն սորինէ, թէ որովհետև
ես ոչ կարեմ զայն զոր կամիմ որպէս քոյոցն,
կամիցիս դու զայն զոր կարեմ ես որպէս իմոցն
Քառատինն իմ սղջունէ զքեզ, և վասն հիւան-
դութեան իմոյ ոչ է բարեպէս որամոդրեցեալ։
Ասացին թէ յոյժ երևի վերն երեսաց քոց
վասն որոյ առաքեցի քեզ զնչիռ մի բարատամ, ոչ
զի մի՛ երևիցին ամենևին կարուածքն նոր։ Եթէ
դացես զնուշ կանանչ, և զնգուզս նորահատս,
և զքնդուղս վայրենիս, Քառատինն զքեզ ա-
ղաչէ առաքել նմա ատկաւ ինչ։ Գոտանեմ զիս
ներկայումս ատկաւուք դրամովք, Առաքեմ
քեզ զդեստ մի և կնոջն քում ագանելի մի, ոչ
աւելի, եթէ ոչ աղաչեմ զդիան, զի տացեն քեզ
զայն զոր ես ցանկամ վասն քո, և տայցեն ինձ
զայն, զոր դու ցանկաս վասն իմ, և թէպէտ
ձե-

ձեռամբ այլոց գրեմ, սակայն գրեմ սրտիւ իմով։

Առ Կլաւդիոս և Կլաւդինա, զի գոլով ծերք կենցաղավարէին որպէս երիտասարդք։

Թուղթ Հինգերորդ։

Մարկոս 'ի Մենթէէլիս, առ ձեզ Կլաւդիոս, և Կլաւդինա այր, և կին, բնակիչք փողոտակին իմում, ցանկայ զկեցուցեալն անձին, և զթուղթս այս ձեզ առաքէ։ Արդարև բարեկամք իմք դուք ինձ էք պարտանդեցեալք. ոչ բեռն քանզի համայնից այնոցիկ որք այդրուստ դան հարցանեմ զորպիսութիւնն ձեր, և համայնք այնոքիկ որք դան այդր, առաքեմ զողջոյն յանձնարարութեամբ։ Եթէ դուք էք յինէն սիրեցեալք, հարցէք զսիրտս ձեր, և եթէ եմ ես 'ի սիրտս ձեր որպէս բարեկամ երկբայական, ես զիս տամ դատապարտեցեալ, զանստադոյն մոռացումն, որ կարէ պատճառել հեռակացութեան և ոչ ներկայ գոլն իմ, յուսամ զի սքսորիցեն բարեգործութիւնքն իմք, զորս ընկալայք անդ յանձնէ իմմէ, իսկ եթէ 'ի յիրս ինչ 'ի կիր արկի ընդ ձեզ զատութեամբ 'էյոյնչ իրս 'ի կիր արկէք դուք ընդիս խնդրեմ 'ի էնչ զշնմարտութեան։ Վասն որոյ որովհետև եղէ միշտ բարի մարձակայ և դրացի ձեր, եթէ պասիւն իմ անդ լինիցին պիտոյք, եղերուք ինձ բարեկամք բարիք։ Գայիոս Քուրիանն այնքան բարեկամ իմ, որքան ազգական ձեր, անցանելով ընդ այս ճանապարհս առ 'ի երթալ Աղեքսանդրիա, ասաց ինձ զբաղում իրս 'ի Հռովմայ, և 'ի մէջ այլոց իրաց եղեալ

մինն այս, որ պատճառեաց 'ի յիս բազում ծի-
ծաղս յորժամ լուայ զայն, և ոչ զսակաւ աւաղ
և եղուկ յորժամ առաւել խոկացայ և 'ի միտ
ածի։ Գոն իրք ոմանք զորս խկոյն ըմբռնեմք
'ի ծաղր և 'ի կատականս։ և յետոյ բարւոք խո-
կալով առածեմք 'ի բազում վիշս և 'ի տան-
ջանս։ Ասաց ինձ թէ ըստ կարծեացն ամենե-
ցուն գուք էք յոյժ ծերացեալք, բայց ըստ դա-
տողութեան ձերում, յոյժ մանկտիք և մանկուք
համարիք զձեզ։ Ասաց և ես թէ այնպէս պէտք է,
և զարդարիք զձեզ չքեղաբար, որպէս թէ կամ-
ցիք երթալ 'ի հորոյ 'ի յառաջատոն հարսանեաց.
և մինչ պատուեն զձեզ որպէս զծերունիս.
գուք ցուցանէք զձեզ յոյժ զայրացեալս։ և թէ
կամիք տեսանել և ընթանալ 'ի յասպարէզս կա-
պելով զդրաւ 'ի յարշաւէն ձիանց, և 'ի ընթա-
նալն ձեր ոչ էք գուք յետնագոյնք քան զայլս։
և թէ 'ի Հռովմ ոչ գտանի, այնպիսի թեթևաս-
թիւն, և խեղկատակութիւն, որ ոչ իցէ նշանակե-
ցեալ 'ի տունս ձեր։ և թէ այնպէս տուեալք էք
գուք զձեզ 'ի զզբօսանս որպէս թէ ոչ երբէք
իցէք վաստակեալք, կամ ասպատիցէք ձանձրու-
թիւն տիոյ հասակին ձերոյ, և վերջապէս յոր-
ժամ գուք յուղաւորեցաք 'ի բարձրացումն ձե-
ռաց ձերոց, մոռանէք նորապէս զինաւորեցեալք
'ի յաշխարհ։ Իրաւի բարեկամք և դպացիք իմք
(իսօռելով պատեհաւորաւ, և պարտաւոր հա-
մանկատմամբ) ես ունիմ զմեծ ամենի վասն անա-
մենիասծութեան ձերոյ, և ոչ զսակաւ վիշտ վասն
բազմաց մեղանաց ձերոց։ բազումք մեղք գոն,
որք թէպէտ ըստ ինքեանց են ծանրագոյնք,
սակայն 'ի հնչումն առ 'ի պարզաբանելոյ զանմե-
ղութիս իւր, առնեն զայնս թեթևաս, և այլ-
անգամ գոն և սրք թէպէտ և իցեն մեղք
փոքունք, սակայն վասն ոչ գտանելոյ զդուռն
անմեղադիր լինելոյ, առնեն մեծագոյն։ Երդ-
նում 'ի դիան, զի ես ոչ գտանեմ զարդիւ առ 'ի
անմեղադիր լինելոյ զձեզ վասն մեղաց ձերոց թէ

պէտ և տեսանեմ զբաղում յոգնակի պատճառս առ'ի դատապարտելոյ զձեզ։ Ա՛մենայն որիկ հայցեմ զԹողութիւն, զի եթէ ոչ եմ այնքան խոհեմ 'ի յասելն իմ ոչ են բաղում, ուրեմն դուք թերևս ոչ էք խոհեմ 'ի կենցաղաւարումն կենաց ձերոց երբեմն ես ոչ ուրանամ թէ դու Կլաւդիոս ոչ իցես յոյժ սանձնկէց և ընդարձակ 'ի յանձին քում, և դու Կլաւդիանա բաղում դեղեցկութիւն 'ի դէմս քո, մինչ զի ուժն քո ով Կլաւդիոս նախանձէին բաղումք, և դեղեցկութիւն կնոջն քում ցանկայցին ամենեքեան վասն իւրեանց։ Բայց սակայն հարցանեմ, թէ երիտասարդութիւն միոյն, և դեղեցկութիւն միւսոյն, զորս ունէիք յանցեալում ունայնութեան, զինչ վարձս ունել յուսայք 'ի յանձկապոյն դերեզմանն։ Ո՛հ խելագարք, խելագարք, այժմ դիտէք, զի թռչի ժամանակն թարց շարժելոյ զգթեւսն։ Ընթանայ կեանն առանց փոխելոյ զտուն դէպ ի մի։ Արձակէ զնետս իւր բախան թարց շարժելոյ զբազուկն։ Բաժանի 'ի մէնջ և բարեւնոց լինի աշխարհս։ առանց ասելոյ մեզ զբան մի։ Մաշի մարմինն թարց իմանալոյ ուրուք։ Անցանի փառքն մեր, որպէս թէ ոչ իցէ եղեալ երբեք։ Եւ վերջապէս, մահն արձակեցեալ յանկարծօրէն յառնէ 'ի վր մեր թարց նախ բախելոյ զգաւառն մեր։ Իրաւի են իր ինն անկարելի 'ի յարենէ առնուլ զՔրիստ և 'ի յերակայ առնուլ զողորմս։ առնել 'ի յապառաժ քարան ձաւս զՀանապարհ հարթ և դիւրին, և զկարելիս առնել անկարելի։ Կամիմ ասել թէ, մի՛ զբ մոռանիցէ, թէ ծաղիկն կանանչ ողոյութեան ոչ դարձցի թարշամեցեալ 'ի ձեռն Տերութեան։ Ո՛հ աշխարհ, և սրպէս ես աշխարհ է այնքան սակաւ ոյժն մեր, և այնքան մեծագոյն սակրուն մեր, մինչ զի դու կամելով և մեք ոչ կարելով ընդդիմանալ քեզ, 'ի մէջ վոանդաղունեղի խորութեան խորասուզ առնես զմեզ, և 'ի մէջ թաւ և թանձրագոյն անտառի դարանա-

նակալեա զմեզ 'ի վտանգս, և 'ի շաւիղս առաւել
փակեցեալս մոլորեցուցանեա զմեզ, նաև 'ի լայ-
զիս առաւել քարանձաւս և վտանգաւորեցեալս
զմեզ յուղաւորեա։ Կամիմ ասել թէ 'ի վտանգս մե-
ծագոյնի օգնականութիւն վտանգաւորեա զմեզ, ոչ
զի կարիցես յեւոյ անտի ընդ մեզ թափիս ոտից
աքացմամբ դահավէժ առնել զմեզ։ Ո՞վ աշխարհ
յորում համայնքն են աշխարհ։ Ահա են ամբ 52
յորս ես ծնայ 'ի քեզ յորոց ըստ ամի օրերքէք
ստացեր ինձ զՁնմարտութիւն մի, և հետեւապէս
դոմի 'ի քեզ պատան հազար ստութիւն։ Ոչ երբէք
խնդրեցի 'ի քէն զեր ինչ զոր ոչ խոստանայցէիր
ինձ, և ոչ երբէք զեր ինչ խոստացար զոր եր-
բէք տուեալ լցես, ոչ երբէք ընձեռեցի ընդ
քեզ զառ և զարութիւն յորում ոչ խաբեցէիր զիս,
ոչևս երբէք մերձեցայ 'ի քեզ որ ոչ կարուսա-
նիցէիր զիս։ Ոչ գոյ 'ի քեզ իր այնպիսի մի-
որոյ պարտ լցեմ սիրել զքեզ. զի ամ ինչ որ
'ի քեզ են արժանի են խոտելոյ, և այսու հա-
մայնիս ես ոչ դիտեմ թէ զինչ կայ 'ի քեզ ով
աշխարհ. կամ զինչ պակասեն մեզ ի լոյս աշխարհս
կանեացս։ Եթէ խոտես զմեզ ոչ կարեմք խոտել
զքեզ, եթէ զմեզ ընդդիմանաս, զայրանալով
'ի վերայ մեր, կամիմք զանցառնել, եթէ աքա-
ցես զմեզ, կամիք համբերել, եթէ ճաղանա-
հար առնես զմեզ, կամիմք լռել, թէպէտ հրա-
ժարիս 'ի մէնջ ոչ կամիմք թողուլ զքեզ։ և որ
չարագոյն քան զամ է, զի առաւել կամիմք
ծառայել քեզ ձրի հանդերձ աշխատանաք, քան
թէ դիցն վարձառութիւք, և հանգաւութիւք։
Երդնում ձեզ 'ի դիսն անմահսն, զի բազում
անգամ խոկամ որամաբանելով 'ի յիս զամս և
ժամանակս իմս անցեալս, այլ անգամ զնեելով
զգիրս իմ ստ'ինկատել զորս ընթերցայ, և ոչ սա-
կաւ հարցանելով երբեմն զբարեկամս իմս, ոչ
զի տացէին ինձ զնորհուրդ ինչ առ 'ի դիսել
զայն թէ յորում կայանայ այս, զոր կամիմ ասել
դո-

գոլով ես ընթեռնլով 'ի կղզին կողմանացւոց, այ-
սինքն 'ի Ռոդոս, և ուսանելով զնուեռորականու-
թիւն, և ունելով զնս անդ Ադրիանոս տէրն իմ
գոլով տիրով հասակին իմոյ քան և երկու ամաց.
մարմինն իմ տղայական ոչ սակաւ տկար քան թէ
փափուկ, դրեցեալ 'ի յայնմ հասակին դարձա-
նայնոյ, գտուաւ 'ի միայնակուութեան, և միայնականու-
թիւնն ընդ ազատութիւն, հաստատեցին զաշխարհս,
և հոտոտելով զգացին նաև զգալով հեռուեա-
ցան, և հեռուելով հասին, և հասանելով ընկա-
լան, և ընկալեալք զփոքրիկ առին զառհաւաստ-
չեաւ կերպիւ, և զփոքրիկ առեալ ճաշակեցին, և
ճաշակեալք դառնացուցին զնս, և դառնացեալ
արհամարհեցի, և արհամարհելով թողի, և
թողլով վերատին դարձայ առ նա, և վերատին
դառնալով ընդունեցի, և այսու կերպիւ զամս չ
'ի միոյ հացէ կերալք, և բնակեցաք 'ի միաբանութեան։
Մինչ ես տեսանէի զնա ցասուցեալ Ծառայէի
նմա, և մինչ նա տեսանէր զիս տրտում պատուէր
մինչ ես տեսանէի յաջողակ կորուսանէի զնս,
և մինչ նա տեսանէր զիս ուրախս պատրէր զիս
և այսպէս ես եղայ մինչև ցայսօր առանց
զիս 'ի նմանէ բարև մնայ լինելոյ, ոչ և ես կա-
մեցայ լինիլ 'ի նմանէ բարև մնացեալ։ Ո՛վ աշ-
խարհս ահա ունիս զայնքան ուշիմութիւն 'ի յա-
նուշիմութիւն, քո տրով քարշես զմեզ քան ամի 'ի
անուշիմութիւս քոյ։ Զեռ այնորիկ որք թո-
ղաք զմեզ լինիլ ըմբռնեցեալք 'ի քէն, ոչ բնաւ
կամեցար արձակել զմեզ։ Եթէ երբեմն վասն
երջանկութեան մերոյ, հանեցեալք գտանիցեմք
զոտս մեր 'ի միայտեղէն ոտնակապէ, ձգես խա-
կոյն զմեզ 'ի յոտնակապս երկաթիս։ Իսկ եթէ
կարելի իցէ խզել զոտնակապս երկաթիս, խա-
կոյն ձգիս զմեզ 'ի կոճեղս խստադոյնս։ Կամիմ
ասել, զի թէպէտ եղիցի ճանապարհն անձուկ,
և շաւիղն լի ապառաժ քարամբ, և պանդոկն
երկարաձիք, և մարմինն տկար, ոչ երբէք լի-
նիցին մարմինքն մերք, եթէ ոչ բեռնաւորեալք
մո-

մոլութիւն և սիրտքն մեր լի հոգացողութիւն ; և վարանմամբ։ Ընդ միոյ իրէ եմ յոյժ հիացեալ, և ոչ կարեմ հասանել խելքիս իմովք այսինքն։ Առանց բռնադատեցեալ գոլոյ մեք յումեքէ, և առանց արդելեցեալ գոլոյ միջարկութիւն ուրուք, կարելով երթալ մեր ընդ կարմունջն, և շրջադարձեալք որոնելով զանցս կամ զհունս դեռոյն, Եւ գոլով հուն գիտոյն, այսինքն գեշնուն ապահով, և աներկեայ, տամք զմեզ վտանգաւորեալ ի ծոցս անյայտակ դեռոյն, և գոլով ճանապարհն ցամաք, երթամք ի շաւիղս թուժամուժս, ունելով զկերտուր կենայ ; որոնեմք զթոյնս մահաբերս ; կարելով քարուք զերծանել, հոգամք կորուսանել զմեզ, թարոյ ծգտի և շահի իմիք, գործեմք զմեզս տեսանելով թէ նովաւ յառաջագոյն պատիժ խստագոյն։ Եւ վերջապէս, որպէս զի ունիցեն զմեզ գարշ քարին կեանքս առ նշանաւորս առաքինութեան, և անպատրաստք անկեալք կամք առաջի հոգմանելոյն մոլութեան։ Կամիմ զիր մի խոսանվանել, թէպէտ իցէ չարահամբաւութիւն վասն իմ, գաւցէ ի ժամանակս ապագայս որ եղիցի ի ծգուտ ալոյ։ Իսկայն ։ կենայ իմոյ, կամեցայ ես փարձ առնուլ զնմ մոլութիւս կենցաղոյս այսորիկ ասէ ի սեռանել, թէ իցէ արգեօք կարելի հաճեցուցանել զնենգասուրութիւս մարդկան, և տալ վճարումն նորա ; և յետ այնորիկ սեռեալ զնմ գասայ ի յիս ; զի որքան աճաւել ուտեմ, այնքան առաւել ծովալուսի մեռանիմ, որքան առաւել ըմպեմ, այնքան առաւել ծարաւիմ, որքան առաւել զբաղիմ ի խնդութիւնս, այնքան առաւել բեկանիմ ; որքան առաւել ննջեմ, այնքան առաւել տքնիմ յանքնութիւն, որքան առաւել ստանամք զինչս, այնքան առաւելումք ի ժլատութիւնս, որքան առաւել որոնեմք, այնքան զսակաւագոյնս գտանեմք։ Եւ վերջապէս ոչ երբեք ի կիրարկի զիր իմն ; որ յետոյ ոչ զղջիցեր զիս, և իսկոյն ի յայլ իզձ

ցանկութեան ոչ կոչիցեր։ Այլ ոչ խոկայցէ, թէ մինչ կայ 'ի մարմնի, կարիցէ հաճեցուցանել զմարմնոյն, և տալ վճարումն նմա, վասն կարողանալոյ, կարէ հատանել զմեզ 'ի կենաց, բայց մեք ոչ կարեմք հատանել զանկարգութիւն ժլատութեան նորա։ Եւ կամիլ գիտել բազմիցս 'ի դիցն, թէ վասն էր արարին սահմանեցեալ գաւառս մեր, և անսահմանելի զչարացան կութիւն մեր։ Օ՛վ զիք անգոյութք, զինչ է այս, զի ոչ երբեք անցուցանեմք գոնեա զօր մի միայն զկեանս բարիս, եթէ ոչ առնուլ զառհաւատչեայս յայսմանէ և յայնմանէ, անցանի մեզ կեանն մեր. և որ 'ի վերէ քան զամ են երալ մի կեանն մեր, և զարթուցանօղ նորա է մահն։ Գիտուցեն նոքա որք ոչ գիտեն, զի աշխարհս առնու զկամքն մեր, և մեք կամաւորապէս կամիմք տալ. և առնելով զանգրուածս մեր, վասն այսորիկ զի մի՛ դուցէ խառվիցիմք։ Գովէ զի գովիցեմք զժամանակս անցեալս, միայն թէ կեայցեմք ըստ ժամանակի անիծելոյ ներկայիս, և վասն առաքինութեաց թողուս մեզ ունիլ զբարի ցանկութիւն միայն, ընդ այնուկերպիւ զի հասցնք արարմունք մերք մնայցեն մոլութեամբք հանդերձ։ Զայս ամ ասացաք ձեզ ով Կլաւդիոս, և Կլաւդիանա. զի եթէ 'ի կ. ից ամաց ոչ կամիմք ելանել 'ի բանտէ յայսմ աշխարհէ ունելով զոտս ներխեալս 'ի կոճեղս, զինչ պարտիմք յուսալ 'ի մանկանց քսան և հնգից ամաց։ Եթէ ոչ խաբեն զիս յիշողութիւն իմ, մինչ ես էի անդ ունէիք գուք զթուռնս ամուսնացեալս, և զծուռս նշանեցեալս։ Ուրեմն թուի ինձ, թէ մինչ դայ գուլնարն կամ ալբալուն, ոչ պարտի ունիլ վաղուրեան կեռասն ժամանակ։ Եւ մինչ փակի որթն հաղորդի 'ի հնձանն առ 'ի առնել դգինի նոր վասն մարդկան, այլն ժամ արտաքս թափեն զչենչն չորացեալ 'ի տեղիս աղտեղացեալս։ ոչ կարէ ըմբերել բարեկամք, ունիլ զբազում թուռուն 'ի տան, և յամս փոքրունս 'ի յանձինս.

վասն զի սակաւ անդամ տեսանեմք Ծաղիկն, և պտուղն լինելի միասին համանդամայն, այլ մինչ ուստի զժամանակ մինն, թառամի միւսն։ Եւ նկատելով խոկամ 'ի յիս, թէ զինչ իցէ այն որ զձեզ կարողացուցանէ, զի երևիցիք դուք ձեզ երիտասարդք և մանկունք, և հատանել զամն ձեր։ Ոչ դիտեմ զայլ ինչ, եթէ ոչ. զի մինչ ամուսնացուցանեիք դուք զԼամբերթաս դուստր ձեր ընդ դրուսիս, և զԱտարինա թոռն ձեր ընդ Լամբերթոսին, որք ամենեքեանք սղայք էին յոյժ հասակաւ. և որպէս յաւելուին ամք հասակին ձերոյ, և նուազէին սուացուածք ընչից, եռուք իւրաքանչիւր ոք 'ի ձէնդ զամն քան 'ի ձերոյ անտի 'ի տեղի դրամոյ 'ի յօժիս նոցա, և այսու կերպիւ բեռնաթափք եղայք 'ի յամաց սեփականաց, և բեռնաւորեցայք ընդ դրամաքն այլոց։ Ուրեմն սակաւ է անց 'ի մոր իմում, զի որպէս չուխայ նեղ 'ի ձեռս խաբեփայ դոր-ծարի եդիք զձեզ 'ի քարշումն, և 'ի ձկուումն առ 'ի երկարացուցանել զկեանս։ Եթէ եղնջիք էբրև զկաշի կակղագոյն որովք կօշկակարքն մոմով կամ կղրով կակղացուցանեն և քարշելով ձքանեն, այս քարի իցէր վասն ձեր։ Բայց դուք ոչ այլ ինչէք, եթէ ոչ որպէս պատուղք Քնդուխի, և յոյժ թեթևացեալք, որք 'ի յար տաքոյ են յոյժ չորացեալք, և 'ի ներսուստ կերեալք 'ի ցեցոյ։ Արդ վասն սիրոյ, զոր ունեցայ առ ձեզ, և վասն դրացի դուլյն, զոր ունեցիք ընդ իս, յոյժ ցանկամ ունելոյ զբարեկամութիւն ընդ ձեզ, և որպէս Ճանաչէցի զձեզ 'ի մանկութիւն յոյժ մանկացելոյ, կամիմ Ճանաչել 'ի ծերուն յոյժ ծերացելոյ։ Ոչ ասեմ զտիոյ հասակն որ յաւելու առաւելեալ 'ի ձեզ, այլ խոսիմ զհանճարեղութիւն, որ պակասեալ նուազ զի 'ի ձեզ։ Ո՞վ Կլեոդիոս, և Կրաղինա, ահա ազդեմ զձեզ զի դիտիցէք, թէ զատատարել զմանկութիւն, տարահելքել զծերութիւն, երկարել զկեանն, փախուցանել, և 'ի քաջ մեր-

ժել զմահն ոչ են 'ի ձեռս մարդկան որոց ցան-
գան , այլ են 'ի ձեռս գիցն զորս տան որք ըստ
արդարութեան իրաւանց իւրեանց , և ոչ ըստ ժա-
ռութեան մերոյ , տան մեզ զկեանս ընդ կշռով ,
և զմահն առանց չափու : Իսկ դիտեք դուք թէ
քնութիւնք մեր են ապականութիւն մարմնոյ մե-
րոյ , և մարմինք մեր են ծեծիչք զգայութեան մե-
րոյ , և զգայութիւնքն մերք նախ ընթացք և ա-
ռաջնորդողք են հոգւոց մերոց , և հոգին մեր
մայրէ ցանկութեան , և ըղձից մերոց , և ցանկու-
թիւն դահիճն մանկութեան մերոյ , և մանկութիւն
մեր են աշտարակ հակեցողութեան , և լրտես ծե-
ղութեան մերոյ , և ծերութիւն մեր լրտեսագոյն
հակողք մահուան մերոյ . և մահնէ պանդոկ , և
տեղի 'ի ջևանի կենաց մերոց . յորում մանկու-
թիւն երթայ 'ի մէջ հետևակ , և ուռքայլ , և
'ի ծերութիւն ոչև ձիաւորեալք կարեմք լինիլ
փախստական : Հարցանեմ ձեզ զբան մի , թէ
զինչ էք գտեալք կամ ընդէր հաջոյանայ ձեզ
կեանն յետ ութսունից ամաց անցուցելոց կե-
նաց ձերոց : Կարելի է թէ դուք եղեալք իցէք
բարիք , կամ չարք , եթէ բարիք ոչ է կարելի ,
թէ երթիցէք 'ի զմայլել ընդ դիցն չարաց : Իսկ
եթէ չարք , պարտիք ևս վասն այսորիկ ցանկալ
մահուան , որպէս զի մի' եղանիցիք առաւել չա-
րագոյնք , ապայ թէ ոչ , արդարապէս զձեզ
կարեն ապանանել դատաստանաւ և իրաւամբ ,
զի նա որ զամս եօթանասուն իցէ չարապէս
կենցաղավարեալ , ոչ յուսամք երբէք , թէ յե-
տոյ կարիցէ ուղղել զվարս : և զկեանս իւր :
Մինչ մեծն Պոմպիէոս , և քաջասիրան Յուլիոս
Գայիոս եղեն թշնամիք միմեանց , և 'ի սաս-
տիկ պատերազմն ընտանեկան 'ի կիր արկին , ո-
րոյ յաղագաւ վատահամբաւ եղև Հռոմ , և կո-
ղուսին զինքեանս , պատմեն տարեցուցքն ժա-
մանակին իւրեանց , թէ եկին յարևմտից 'ի յօգ-
նութիւն Յուլիոսի , և 'ի յօժանդակութիւն Պոմ-
պէոսի բոլոր արևելեանքն , 'ի մէջ որոց եկեալ
աղգ

ազգ մի բարբարոս, բնակիչ 'ի յայն կոյս լերինն կովկասու, որ տարածեալ 'ի հնդիկս։ Ունէին սոքա զսովորութիւնս այս։ զի մինչ էին հասակաւ յինքեանց ամաց, առնէին զհուր իմն մեծաբորբոք, և բոցակէզ։ և անդ այրէին կենդանոյն յիսնամեանին այն։ և զոհէին գիւն իւրեանց։ Եւ 'ի յայնմ աւուրն ազգականքն։ և որ դիքն կիզեցելոյն առնէին զմեծագոյն ուրախութիւն։ և ուտէին զմարմնոն կիսայրեցեալ։ և ըմպէին 'ի մէջ գինւոյ զփոշիս մնացեալս յսակեցեալոյ։ Այս եամ եառես Պոմիէոս աչքք իւրովք։ զի ոմանք 'ի սոցանէ 'ի բանակի իւրում հասեալք ժամանեցին 'ի յիսուն ամս տիոյն իւրեանց։ Ո՛հ ժամանակ Ոսկէզօծ, որ ունեաց զայնպիսիս մարդիկս։ Ո՛վ ազգ բարբարոսք։ որք 'ի ժամանակս ապագայս, և 'ի հանդերձեալս թողին վասն իւրեանց զայնպիսի յիշատակս զինչ արհամարհուն աշխարհի։ Զինչ մուռացումն ինքեան։ Զինչ աքացումն ամենոցուն։ Զինչ ճաղանք մարմնոյ։ Զինչ սակաւ վարկումն կենաց։ Զինչ զուշաքեայ համարումն մահուանն կարէ դոլ մեծագոյն։ Ո՛հ թէ հիպիսի սանձ էվասն մոլութեց, և մոլորելոց։ Ո՛րպիսի խենթութիւն, և խայթէ վասն սուաքինեաց, Ոչ ամենքանք են վասն նոցա, որք սիրեն զկեանս։ Ո՛ՐՊԻՍԻ զօրինակ առ 'ի ոչ երկնչելոյ 'ի մահուանէ թողին մեզ։ Ուրեմն սոքա արհամարհելով զկեանս սեփականս և դուք սիրելով զկեանս երկարս և յաւելորթս, Այսոքիւք երևի, թէ ոչ մեռանէին առ 'ի յաւիտեանակ զինչս այլոց այնու մտածմամբ, թէ ոչ երբեք իցէր վերջ կենաց իւրեանց, և ոչ գոյ քնաւ վախճան ազահութեն մերոյ։ Օ՛վ ազնիք փառաւորեցեալք, և տան հաւար անդամ երանեցեալք, զոր 'ի քաց մերժեալ զգայական ցանկութիւնս, և յաղթելով զքնութիւն, որ կամի միշտ կեալ, ոչ հաւատալով զայն, զոր տեսանէիք աչքք, ունելով զհստատուն հաւատս 'ի վերս այնմիկ, զոյս ոչ երբեք

տեսլիք որպէս նա, որ ոչ ինչ խօսի հրաժարելով, և թողլով 'ի ձեռաց զաջողութիւն նախասահմանութեան, և ելանելով 'ի ճանապարհն բախտին յարելցիք զորոգայթս կենաց, և խոյստալով մարմնոյն առ մահն, շահեցիք զպտուիւ 'ի դիցն, ոչ թէ երկարացուցանէին առաւել զկեանս եթէ ոչ զի առնուցուին որք յաւելնոյր 'ի կենաց։ Աւագապետ Վիրաբուժն, և Անտոնիոս մուսաբժիշկն, և Եսկոլապիոս հայրն դեղագիտից կարծեմ թէ զսակաւ իրս շահիցէին 'ի յերկրի այնմիկ։ Ո՛ւր պատուիրեսցէ բարբարոսացն այնոցիկ առնուլ զջուլապ յառաւօտու, ընկալնուլ զհալ 'ի դիշերի, առնուլ զդեղորոյս առ 'ի մաքրել զմղձս, առնուլ զգարէջուր առ 'ի դիրացուցանել զստամոքսն, առնուլ զլուացումն ներքնային, և առնուլ զարիւն 'ի յերակաց այսօր, Եւ 'ի վաղիւն մաքրապարծել զորոյվայնն, ուտել միայն զմի իր, և զգուշանալ 'ի քաղմաց իրաց։ Ուրեմն ինձ այսպէս թուի, թէ նոքա յիանմեայք, և դուք ուրեմն ամայք, թէպէտ դուք ամք և հաստակք դերազանցէք զնոքաք, գոնեա փոքր ինչ եղերուք հաւասար նոցա ուշիմութ։ և հանճարեղութեամբ։ Եւ եթէ ոչ կամիք ընդունիլ զքաղցրալի մահն, գոնեա զսպեցէք զձեզ 'ի կենաց չարեաց։ Զմոռաւածեմ, զի են ամք բազումք, զի ֆաբրիցիոս դրացին մեր պատրաստեաց վասն իմ զծաղր մի, զորմէ եթէ դուք ոչ պատրանահատիցէք հետ և իցէին ինձ յոյժ անպատուութիւնք։ Ապաուրեմն, որովհետև արարիք դուք ինձ զայնպիսի գործս բարութիւն 'ի յայնմ ժամանակին, այժմ կամիմ հատուցանել ձեզ զնոյն դրամն, զոր եառաք ինձ։ Ազդ առնեմ ես ձեզ զի դիտիցեք եթէ ոչ դիտէք, որ խղճալիք ալեւորք։ Ար դէն ունիք զաչս տկարացեալս 'ի հայիլն, զբինեթս խոնաւեցեալս, զհերս սպիտակեցեալս զլրու�ականջաց կորուսեալս զլեզուս վրդովեցեալս, զատամունս անկեալս, զերեսս կնճռոտեցեալս

զոտս

զոտս ուռուցեալս , զԹիկունս կորացեալս , և զսիրտս Թալկացեալս։ Վերջապէս , եԹէ կարիցէր խօսիլ դերեզմանն , որպէս տանուտէր տան ձերոյ կարէր պահանջել 'ի ձենՋ դատաստան և իրաւամբ , զի որպէս բնականք բնակՋոՋ տանն իւրոյ դնացեալք բնակիցէք անդ , և առնէիք չէն զտսունն իւր։ Արդարև մեծի ցաւակրութեան է ասԺանիք , ունիլ 'ի Ժերութեան զխմարական տգիտութիւն , վասն զի յայնԺամ բանայ ոք զաչս իւրս առ 'ի ճանաչել զանբախտութիւն այսր կենցաղոյս , մինչ արդէն իսկ դայԺամանակն առ 'ի խփել զաչս և մնանել 'ի գիրս դերեզմանի։ 'Ի յայսմանէ յառաՋադայի , զի տղայոցն ունայնակեացից 'ի զուր տամք զնրատաս կան խորհուրդս քան զի տղայութիւնէ իր լիցի առանց փորձառութեան այն . զոր գիտէր , և երկ բայի ընդ այնր զոր լսէ , ոչ հաւատայ այնմիկ զոր ասեն նմա։ Արհամարհիչէ խորհրդականութիւն և խրատուցն այլոց, և յոյժ աղքատ իւրոցն ուսեփականաց։ Բայց ես ասեմ . ով Կլաւդիոս , և Կլաւդիոս բարեկամք ! ի՞նչ , զի ես դուն առանց համանմանութեան ոչ գոլ այնքան չարադոյն անգիտութեի զոր ունին 'ի բարեաց տղաքն որքան է յամառութիւն զոր ունին առ չարն Ժերքն և ալևորքն , չարէ ոչ գիտել զայն . զոր մարդ պարտի , և կարէ գիտել։ Բայց յոյժ մեծապոյն չարութիւն է ունիլ զգիտութեի իմասանոց , և ըստ կեանս անքանից անասանոց։ Ո՛հ խղՋալիք ալևորք , որք մոռանալով դուք զձեզ ինքեանք ընթանայք զկնի սուրհանդակին կենաց , և ոչ երբէք նկատէք , թէ զինչ էք լինելոցք , մինչև լինիցիք այն , որ ոչ կամիցիք լինիլ թարց կարոզանալոյ դառնալ 'ի լեռս։ Յայսմանէ յառաջագոյն , զի որ պակասի ձեզ 'ի կենաց , կամիք լնուլ խելադարութիւն։ Չարթիք ուրեմն , զի 'ի քունս խորին էք ընկղմեցեալք։ Բացէք զքնաշաղաղ զաչս ձեր , և արարէք զսովորութեի դորՋել զարիս ով մոլորեալք , ուսարուք զայն որ

'ի եկիր արկանեն միամիտքն , և վերջապէս աբա-
ռեալք զդաշինս սակաւ առ սակաւ ընդ մահուան ,
յառաջ քան զժամն այն , որ տացէ զկատարու�
գործոց իւրոց 'ի վերայ կենաց ձերոց : Եւ այդէն
ամբ ՃՀ յորմէ հետէ Ճանաչեն զնս , և ես Ճա-
նաչեմ զնոսա որք են յայսմ կենցաղումս , որք ոչ
երբեք Ճանաչեցի զպատաւոր զայնքան բարձեալ
ամօք , և ոչ զծեր որ սյնքան հոտեալ անդա-
մօք , որ ոչ ունիցին զսիրտս առողջաւ 'ի մոա-
ծել զաղաչեղութիս , և զլեզուս անիերիս վասն
խօսելոյ զատութիւն : Հայեցարուք ով աղքատք
ծերք թուխ ինձ , թէ ուրեմն անցեալք են ա-
մառն , բարձեալ բան ժամանակին զգործիս ձեր ,
իսկ եթէ մեռցեն սակաւ ինչ աւուրք ձեզ փոխ-
թացարուք , և վաղվաղեցեք տալնուլ ձեզ զբ-
նակութիւն : Կամիմ ասել զի եթէ անցուցիք
զցերեկն 'ի ծովի ընդ վոտանդաւ , գուցէ գիշերն
մահոս ընկալցէ զձեզ 'ի նաւահանգիստն փր-
կութեան : զի կատարեն անցանեն որպէս կատակ ,
և զհաւատին ընկալցուք որպէս զհաւատի :
Պատկանի դիտել , զի եթէ Ճանաչեցաք զձեզ
աղայ քոյժ համարձակեալք տեսանիցեմք զձեզ
վաղուրեմն ամենեքեանքս որպ զծերուանիս յոյժ
համեստակենցաղս , և միայնակեացս : Սինչ
ձիաւոր որ անցանի 'ի Ճանապարհ ինչ , մի՛ մե-
զադրիցեն զնա , թէ ձին իւր տանի առանց
սանդրելոյ զբաշն : բայց ժամանելով նորա 'ի
պանդոկն , և 'ի տեղի 'ի զևանի , իրաւունք են զի
կաղդուրեսցէ զերիվարն իւր , Եւ մի՛ խաբի-
ցես զձեզ որք սովորք են խաբել զբազումս , և
են : զի վասն այսորիկ եղայք դուք վարկագրե-
ցեալք և պատվեցեալք , քան զի ունիք զբա-
զում դրամս : Բարուրք հաւատամ , զի հետևի-
ցին ձեզ բազումք , և ունիցին ընդ ձեզ զնա-
խանձ ամենեքեան : բայց սակայն հաւատա-
ցեք ինձ , զի 'ի վերջն վախճանի պատիւն տա-
ցի նախկնասէս մանաւանդ տղայի միոյ աղքա-
տի , և պառաջինւոյ , քան թէ ալևորեցելոյ հարս-
տի ,

տի, և սիրոյն մոլութեան։ Վասն կարող գալոյն իւրոյ հարուստն կարէ գալ համարեցեալ, և վարկադրեցեալ առաւել քան զաղքատն, և ընկերակցեցեալ ընդ ագահաց։ բայց աղքատն առաքինի եղիցի առաւել սիրեցեալ, և սա կաւ ևս արհամարհեցեալ։ Զնրպիսի առաւել ամօթանք կարէ ընկալ անձին ուսմբ, և համանդէս նախատինք մօրն մերոյ Հռովմայ, քան զանեանել ի փողոցի, և ի յանկիւնս ոչ սակաւ ունայնութեան ջղջիլ ծերքն, որք մերձեն ի յանկանիլ վասն դոլոյն իւրեանց փոտեալ և նեխեալ, քան զաղայս, որք այժմոյս ծաղկին որպէս գծաղիկ սրտոյ։ Զինչէ տեսանել զծերսն ժամանակիս մերոյ ուսելով զարդարեցեալ զծերսն, և հարթեալով յանձախակի զմորուս, ագանելով զկոշնկս յոյժ յարմարեցեալս, և զպաճիճս ոտից անձկաբար առքարշեցեալս, զշապիքս յոյժ բացարձակեցեալս, և զլերարկուս կարմրագոյնս, և զնշանս Հռովմայոյ յոյժ արհեստիւ ձևեցեալս, և ունելով զմանեակս ոսկեայ ի պարանոցի, և զքղանցս զգեստուց զարդարեցեալս. և զվեստուրս ի սաղաւարդի գլխակաց հանդոյն յունաց, և զմարգարիտս ի մատս որպէս դնդիկքան, և ունելով զգեստս որպէս դերասանաց, և զձևս լայնարձակս որպէս քրմապետից, և վերջապէս այն որ է վատթարագոյն քան զամ, է այս։ զի մինչ մահն ագաքեալ զգեստանս կոչէ զնոսա պատասխանեն ասելով, թէ կամին ծառայել նորապէս տիկնոյ ուսմբ։ Ոչ թէ զորքանս, և քանիցս անգամ ճանաչեալ եմ ի Հռովմ, որք եղեն մեծահռչակ համբաւոք ի տոլոյսեւ. և յետոյ այսպիսեաւ լրբութիւն կորուսին զբարի համբաւն իւրեանց ի ծերութիւն, և չարագոյնն քան զամ էն. զի նոքա կորուսին զբարի համբաւն ի ծերութիւն, և ագգականքն իւրեանց զոգնութիւս, և զնպաստուսն, և սրդիքն իւրեանց զոգուստն։ Իրաւի Գագուինս կատոն ի հնագոյն տոհմէն կատնաց եղև ի Հռովմ նախապէս զամ, ե-

Ե. դիտապետ զամն Դ. հոդաբարձու զամն. Ճ. և միապետ զտարի մի, և բդեշխ հինգ անդամ։ և դոլով 'ի հասակի կէս ամաց, և անցեալք ամքն Կիմատերիկօ, այսինքն ինն անդամ եօթն, որք են կդ. ետ զինքն 'ի ծառայութիւն Ռօսանայ գտուերն գնէոսի կուրցիոյն, որ իրաւի էր տիկին մի 'ի հասակի մանկութիւն, և դեղեցիկ յոյժ, որում յաւելաւ այնքան սիրահարութիւն, և կրոյս այնքան զգայութիւն, մինչ զի ծախէր զորքան ինչս որ ունէր 'ի ծառայութիւն նորա, և լայր որպէս երեխայ առ 'ի տեսանել զնա։ Հան դիպեալ տիկնոջն ջերմ ի մն ախտաւոր, յաղագս որոյ գարշէր 'ի ամ կերակրոց. և 'ի ասել տիկնոջն, թէ յօժարապէս կամիր ուտել զողկուզ. քանզի ժամանակն ոչ էր ողկուզի, զի 'ի Հռօմ չկաս էր հասուն, առաքեաց 'ի դանուպ վասն հաղորդ առ կողմն այն, որ էր առաւել քան զհազար մղոնաւ հեռի 'ի Հռօմայ։ Եւ դոլով գիտացեալ 'ի Հռօմ իրակութեանն յայնմանէ, զգացուցին խորհրդարանին, և հրաման եղև 'ի հարանցն համագրեցելոց, զի Ռօսանն ներփակեցեալ լինիցի ընդ կուսանացն վէստալեանց, և ծերն մշանջենաբար իցեր աքսորեցեալ 'ի Հռօմայ։ և այսպէս որդիք նորա մնացին աղքատք, և հայրն նոցա մեռաւ վատահամբաւ օրէն։ Բայց ոք հաւատամ, զի լուեալք զայսոսիկ եղելոյն բազումք ոք տգեղացուցանեն յոգնակի զարարմունս ծերոյն սիրահարի, և գովեսցեն զվճռահատուն խորհրդարանին։ Բայց կա խակամ, զի եթէ զայնքան տղայս ունիցեր Գագուինոսն ընդ ինքեան 'ի յաքսորանս իւր, զորքան ունէր զծերս սիրահարս հետևօղս օրինաց նին իւրում, ալ դարև ոչ լինէին այնքանք մարդիկք կորուսեալք ոչև այնքան կանայք վատաբար ամուսնացեալք։ Արդ բարեբոյնքն 'ի նշնէ մինչ են ազդեցեալք 'ի սպասաւորաց իւրեանց և յանդիմանեցեալք 'ի յաղգականաց իւրեանց և աղաչեցեալք 'ի բարեկամաց իւրեանց քերեն զղատ-

Ճառանս ասելով, թէ ոչ են սիրայհարք։ եթէ ոչ կատակմամբ, և ծաղրոյ։ գոլով ես տղայ յոյժ տղայացեալ ոչ սակաւ խելամբ քանիցէ։ ի սրբունս հասակի, ի գիշերի միում մերձ ի Կամնիլիոսն հանդիպեցայ ի միում դրացոյ իմոյ, որոյ էի ես ի տեղւոջ թռուին իւրոյ, ասացի ցնա։ Ով քաջբիցիոս տէր իմ, ելցես սրդէօք ևս դու սիրահարեցեալ, զի յայսմ նհանդիպիս դատանիս ասա ի գիշերի։ Եւ նա պատասխանեալ ասաց։ Ո՛վ տէր, զայս առնեմ առ ի անցուցանել զժամանակն։ Իրաւի կալաս զիս հիացումն, ընդհանդիպման նմա յայնպիսում ժամում, և համանգամայն գայթագղեցայ լսելով զայնպիսի պատասխանի ի նմանէ։ Զի ի ծերս բազմահասակ և ծանրացեալս ամաց, այնպիսի ըղձաձկութիւն ոչ կարեն կոչել տէր, կամ սիրահարութիւն, այլ ցաւագարութիւն, ոչ անցուցանումն ժամանակի այլ կորնչումն ժամանակի, ոչ ծաղր, այլ պատուակոծատութիւն։ զի ի սիրոյ ծաղրաբար կիրարկեցելոյ, հետևիւ վատահամբաւութիւն հաւասարի։ Հարցանեմ զձեզ, ով Կաւդիոս, և Կաւդինա զինչ այլ ինչէք դուք ծերք, և ծերուհիք սիրահարեցեալք, և յոյժ զուգեցեալք, որպէս դուք էք այժմուս, եթէ ոչ նման գիւնատանց, ուր ոչ գոյ այլ ինչ, եթէ ոչ քացախ ձու յոյժ սպիտակ, և ի ներսուստ փտեալ, և նեխեալ։ կամ վէր, որ գոլով բուժեցեալ արտաքուստ, ունի ի ներքս շշուկ մի յոյժ թարախակալ, և հատ ոսկէ զօծ կամ վարագաստաս, որ ի ճաշակելն է դառնագոյն քանզի լեղի, անօթ ապակեայ շշոյ բեկեալ, և ի վէր դրեցեալ նորագոյն, կամ ոչ կովկորուսկի թռչուն և այլ մնաղամուխց, և ծածկեցեալ հերամբք, աղտաղտուկ սառուցեալ, որոյ վերայ անցանելն ոչ է ապահով այլ վտանգաւոր։ Դուռն նորաշէն, և ներս ի տունն աւերակք ամենեքիմբ։ և վերջապէս ծերք ոք սիրահար, է որպէս երիվար ասառանջի խաղացողաց նկարեցեալ, որ հրա-

հրաւիրէ զմարդիկս 'ի խաղալ, և լինի պատճառ կորստեան դրամոց, և ոչ կարէ ազատել զոր 'ի վտանգէ։ Իրաւի ծերն մոլէ հար, և բղջախոհ ոչէ, եթէ ոչ որպէս պատաս որ ունի զմտրուանն սպիտակ, և զագին կանանչ։ Ուրեմն ինձ այսպէս թուի, եթէ ձեզ և թուիցի, զի էք դուք ծերք դրացիք, և բարեկամք իմք, մի՛ սպասիցէք բեկանել զթեվս 'ի ժամանակի յորում ոչ իցեն իրաւունք, զի լինիցին փետուրք 'ի նոսա։ և մի՛ խաբիցէք զձեզ ասելով, թէ վասն ամ իրաց դոյ ժամանակ։ Հաւատացէք ինձ, զի սրք կարողք էք երթալ 'ի տունդեան, մի՛ թողուցուք վասն գիշերի ծերութեան։ քանզի վատապէս կորէ դանակն մաշեցեալ ընդ պողվատաս։ Չի նա որ արար զսովորուն ուտելոյ դիս ձանձրալէս յարմարել զինքն ուտելոյ զսակերս։ Արդ եկեսցուք առ 'ի ձարակումն, և առնել զձար ինչ վասուցս այսոցիկ, և եղիցի այս։ Եթէ տուն ինչ փոտեալ և կերեալ 'ի ցեցից սպառնայ զանկումն, պարտիմք դարմանել նմա ձողաբարձ յենարանաւ։ բայց ոչ համարաւ դերանօք փայտեղինօք։ այլ անձկադունիւք համարովք, զորս տալոցք եմք դիցն զկենաց մերոց, և առ մարդիկս զհամ բաւոց մերոց։ Եւ եթէ այդ ինն ամենից առաքինութեամբ մերոց են եղեալք ոստաքանցք, և կթեցեալք, որոնիցուք զանկեալս պտուղսն 'ի ներքոյ ծառից։ և եթէ ոչ գտանիցուք զայնեւս զսպասումն վարուց։ և զդարցումն 'ի գործոց չարաց, և զզջումն ապաշխարութիւն հանդերձ բաւականք են մեզ ուրեմն փեթակք և շտեմարանքն մեր երից, և պտղոց մերոց, եթէ ապականեցեալք են չարութեամբ գործոց մերոց, վերայնուցուք նորա ոչ 'ի նորոյ բարեաւ ցանկութիւն։ Չի են դիքն այնքան բարիք առ 'ի հաւանիլ ծառայութեան մերում զոր պարտիմք նոցա վասն արդեանցն զորս մեզ առնեն, մինչ զի եթէ ոչ կարեմք հանանիլ զսկիզբեալ գործունակութիւն վճարեն։ ընդ պղնձացեալ բարեաւ ցանկութեամբ մերով։

Եւ

Եւ վերջապէս ասեմ ձեզ, ով Կլաւդիոս, եւ Կլաւդինա, եթէ մինչեւ յայժմ մատուցիք զա-
լիրն մանկութեան առ մոլութիւն, այժմ զթեպէս
ծերութեան ընծայեցէք ծառայութեան դիրն։ Եւ
գրեցի զայս ձեզ երկարաբար առաւել քանզայն
զոր ունէի 'ի մտի։ Եւ վասն զի ոչ ունիցեն մարդիք
զձեզ որպէս յիմարք եւ երկչոտք եւ զիս որպէս
յանդուգն եւ համարձակաբար ունիցէք զփոյթ մաս
նակցելոյ զերս թղթոյս այսորիկ այլուսմ ուստիք։
'Ի Հռովմ ողջունիցէք յինէն զամ դրացիսն մեր մա
նաւանդաբար զԴրուսիանա պատուելի այրին։
Ահա առաքեցի զերկու հազար արծաթս, տա
յեք զհազարն Կորվինային թոռան ձերում, եւ
առաքեցի զայս նամս վասն հացուցեալ միոյ, զոր
արար ինձ 'ի մուսմ տօնախմբութեան։ Քառաս
տինն իմ է հիւանդ 'ի մահճի, վասն որոյ զայլ
հազարն տուք կուսանացն վէստալեաց, զի աղա
չիցեն զդիսն վասն նորա։ 'Ի քեզ Կլաւդինա
առաքէ Քառաստին իմ զարկդ մի, եւ երդնում
'ի դիսն զի ես ոչ գիտեմ զինչ կայ 'ինմին, Դիւքն
ուրեմն էք ծերացեալք տացեն ձեզ զմահ բա-
րի, եւ ինձ. եւ Քառաստինին իմում թողցեն առ-
նել զկեանս բարիս։

Մարկոս դրացին ձեր գրէ ձեռամբ իւրով։

Առ Լաբինա տիկինն Հռոմէացի մխիթարելով զնա վասն մահուան առն իւրոյ։

Թուղթ Վեցերորդ։

Մարկոս 'ի Մենթէէլ ինու առաջի խորհրդական Հռոմէացի, կարդեցեալ, և տրամադրեցեալ ընդդէմ դացիու, առ քեզ Լաբինա տիրուհի Հռոմէացի, և կողակից բարեբոյն Կլաուդիոսին իմոյ առաքէ զողջոյն, և մխիթարութիւն 'ի դիցն մխիթարչաց։ Բարուք խորհիմ, զի երկբայական կարծողութիւն քո լեալ լիցէ յոյժ ցասուցեալ ընդդէմ զանցառութեանն և անհոգութեանն իմում, տեսանելով թէ առ աւաղելի վերն քոյ անաղան դիմեցին յապաղեալք մխիթարութիւնքն իմք, բայց յիշելով իմ զաղնուականութիւն քո, որ ոչ կարէ պակասել, և յոժարութիւն կամաց իմոց, որով միշտ ցանկամ քեզ ծառայել, եմ ես հաւատոյ, զի խոհեմութիւն քո մերժեսցէ զլսրթիւն դանկարդութիւն կարծոտութիւնն քոյ։ քանզի եթէ եմ յետանագոյն 'ի մխիթարելն զքեզ, սակայն եղէ, և եմ նախկին զգացող զցաւն քո, և ոչ եղեցյենինն օգնելոյ քեզ։ Դիցուք թէ անդիտութիւնն իցէ վանիչ առաքինութեանն, և խթան վասն ամենից մոլութեանց, սակայն երբեմն հրճուանք առաւելեալք անհանդիստ առնեն զիմաստունս և տան զգայթակղութիւն անմեղաց։ Բարուք դատանիմք մեք լաթիկքս հանդերձ ոգիտութեամբ որ ունիմք առ մոլութիս քան զյոյնսն ճանաչողութեամբ առաքինութեանն, քանզի զայն զոր ոչ գիտեմք ոչ տանջեն զմեզ առ 'ի հատանիլ, ուստ ցաւիմք ընդ կորուստս նորա։ Զայս ասեմ, քանզի զիտացի զայն, զոր

ոչ կամիի գիտել, և են ի ահա զվախճան առ-
ին աշխատաքն Կաւագիտսի առն քոյ, և այժմ
սկսին աշխատանքն Լաբինայ կնոջ նորա։ Են
աւուրքք ինչ յորս իմացայ, և ոչ կամեցայ յայտ-
նել. քանզի էր անգթութիւն նմա, որ էր վիրա-
ւորեցեալ հեռացմամբ այնքանից ժամանակաց,
լինելիւր ազդեցեալ ի ձեռս իմ բօթն, և մահն
այնպիսւոյ ցանկալի առն։ Կամապէս և ոչ էին
իրաւունք, թէ նա յորմէ ես ընկալեալէի զայն-
քան բարերարութիւն, նոյնն ընկալնուցայր յինէն
զբօթալի համբաւս, և տրամալի լուրս։ Իսկ
այժմ գիտելով իմ, թէ գիտես դու զմահն առն
քոյ զերկապատիկս ունիմ զսանջանս։ Մինչև
ցայժմ զգայի միայն զմահն նորա, բայց յետ այ
սորիկ զգամ զմահն նորա, և զմիայնակեացութիւն
իմ, և զանմխիթարութիւն քո։ Ուստիս զիրաւունս
ողբալոյ, ոչ վասն նորա որ է ընդ դիսն հան-
դուցեալ, այլ վասն մեր թշուառիցս որք մնամք
'ի նեղքոյ կարօտութեան այնքանից չարեաց 'ի տան
Ջանս։ Ով Լաբինա, բազմիցս ես 'ի լրս տրամա-
բանեմ. թէ զմարն իցեմ ողբալոց յառաջագոյն,
զչարքն որք ասային, կամ թէ բարիքն որք մեռա
նին. քանզի այնքան վիրաւորէ չարն որ գոտանի,
որքան զբարին որ կորուսանեմք։ Մեծագոյնք
տանջանք են տեսանել զմահ, և զմեռանիլն ան-
մեղից. բայց իրաւի ոչ են փոքրագոյնք տանջանք
տեսանել զկեանն, և ապրիլն չարեաց, և նեն-
դաւորաց։ Բայց այն որ հարկաւորապէս դալոցէ
յորժամ եկեսցէ, ոչ պարտիմք դադարեցուցանել
'ի յայնս։ Ասա ինձ Լաբինա այժմ գիտես, զի են
այնքան բարեգործն ընդանալն ընդ գիշն առ յորս
չուեմք, և են այնքան չարագործք մօրդիկք ընդ
որոց կենցաղավարիմք։ Եվ որպէս ծնանին
չարքն առ 'ի մեռանիլ, այսպէս մեռանին բարիքն
առ 'ի կեալ, և ապրիլ։ Քանզի բարիքն միշտ
ապրին մեռանելով, և չարքն միշտ մեռանին ապ-
րելով։ Ուրեմն զիարն կամեցան տանիլ զարդն քո
վասն իւրեանց, ոչ են յոլով, թէ հատցեն 'ի
քէն։

քեն։ Հաւատուաւ դիտեմ, զի Կլաւդիոս այրն
քո բաղձալի, և հաւատարիմ բարեկամն իմ,
տեսանելով զայն զոր ունի, և յիշելով զայն յոր
մի զերծաւ, կամի առաւել ընկալ զնա։ քան
թէ դառնալ առ քեզ այսր։ Իրաւի զի հնար,
և Ճարն այրի կանանց է ոչ ներաստրիլ զնկերակ-
ցուէն անցեալոյ ոչ և մոռանել զմիայնակեացուս
թէ ներկայի, եթէ ոչ մոռանել զհանգիստն
զոր 'ի հանգերձելումն յուսամք ունիլ։ Զի եթէ
մինչև ցայժմ տանջեիր սպասելով դու նմա
'ի տան քում, խնդայ և զվարձացիր այժ-
մուս, զի սպասէ քեզ երթալ առ յինքն։ Զի
բարեդոյն իցէ վասն քո ընտրելանալն անդ ընդ
դիցն, քան զկենցաղավարիլ սատ 'ի մէջ մարդ-
կան, և ոչ հաւանիմ զի տրտմիցես այնքան զի եր-
և ետցի թէ դու միայն իցես կորուսեալ, ուրեմն
ամենեքեանս վայելեցաք զնայ 'ի կեանս իւր։
ամենեքեանս ունիմք պարտաւորութիւն առ 'ի լալ զմահն
նորա, 'ի մէջ ամենից ցաւոց դերագոյն ցաւքն են տե-
սանել թէ ուրախանան այլք 'ի ցաւիլն իւր, և
հակադարձաբար զմեծագոյն միխիթարանք 'ի մէջ
մեծագոյն փոփոխութիւն բախտին են տեսանել։
թէ այլք ցաւակցին և զգան զաշխատանս իւր։
Զայն ամ զոր բարեկամն իմ լայ վասն իմ ընդ
ալեաց իւրովք, և զամ ցաւս զորս զգայ վասն տա
ռապանաց իմոց։ և քառնալով զայնս 'ի վերայ
ուժոյն իւրոյ։ զայն առնէ բեռնաթափ առնե-
լով զիս 'ի յաղեաց։ և 'ի սրտէ իմմէ։ Պատմեն
տարեցուցքն ժամանակին Օգոստոսի Կայսեր,
թէ նոյն Օգոստոս Կայսրն 'ի յեզրն Տօնաւիս
գետոյն եդիտ զաղգ իմն։ որք ունէին զայս սո-
վորութիւն։ զի որպէս այժմոյս ամուսնանայ այր
ընդ կնոջ այսպէս և միաբանեալք ընկերանային
բարեկամք ընդ բարեկամաց։ և դնէին զուիտս։
և զտաշինս երդմամբ 'ի դիան։ թէ ոչ երբէք
ողբայցեն։ ոչև վշտանիցեն երբէք վասն ան-
բախտութեան իւրեանց։ եթէ ոչ մոռանալով
զանձինս իւրեանց։ մեռանիցէին վասն գտանե-

լոյ զենար, և զՀայր բարեկամաց իւրեանց Ո՛հ ժամանակ փառաւոր. Ո՛հ բարեհասակութիւն բախտաւոր, Ո՛հ ազինք արժանիք յաւիտենական յիշատակի, յորում կային այնքան մարդիկք աղաւնակենցաղք, և բարեկամք այնքան ճշմարտասէրք, որք մոռանալով զսեփական վիշտս իւրեանց, ողբային զթշուառութիւն այլոց։ Օ՛վ Հռօմ գոլով դու Հռօմ, Ո՛հ ժամանակ 'ի զուր կորուսեալ, Ո՛հ կեանք չարաչար 'ի կիր արկեցեալ, Ո՛հ անզգուշք յոյժ անհոգացեալք։ Են աստանօր ազիքն մարդկայինք այնքան արտաքսելեալք 'ի բարեաց, և սիրտք այնքան յուղեվրեցեալք 'ի չարն, և այնքան անճարք 'ի վատթարութիւնս զորս մոռանալով մարդիք զգոյն իւրեանց մարդիկք անդրադարձեալք են դազանք վայրենիք։ Եւ Ջանամ աշխատելով տալ քեզ զմահ, և դու մեռանիս վասն հատանելոյ զկս 'ի կենաց։ Դու ողբաս մինչ տեսանես զկս 'ի ծիծաղս, և ես ծիծաղիմ մինչ տեսանեմ զքեզ 'ի լացս, զի թարց օգտի ումք կորուսանեմք զմեզ, և միայն վասն օգտի և ժլատութեան մերոյ հաճիմք կորուսանել զմեզ։ 'Ի յօրէնս բարեաց երդնումք քեզ, Լաբինա զի եթէ հնար, և ճարն քո իցէ 'ի ձեռին իմում. որպէս ցաւն քո է 'ի արտի իմում, ոչ վիրաւորիցեր զկս ցաւագնելի արտասուքն քո, ոչ և զքեզ վշտացնիցէր տրտում միայնաւորուն քոյ բայց ուրեմն հնարն քո, և ցանկութիւն իմ ոչ կարէն ընանիլ. քանզի ընդ մեռելոց, ոչև մեռեալք ունեմք ըզկարողութիւն։ Դիցուք ուրեմն զմեզ 'ի ձեռս դիցն, որք առաւել բարւոք դիտեն բաժանել, քան թէ մեք ընարել։ Տեսանեմք փորձառութիւնք, զի գոն ոմանք հիւանդութիւք, որք ոչ բժշկին բանիւք զորս ասեմք, այլ բժշկին խոտեղինօք. զորս առադրեմք 'ի վերայ։ Եւ հակադարձաբար, գոն այլք հիւանդութիւք, որք բժշկին բանիւք թարց դեղոյեից։ Հայտասեմ, քանզի սիրտք տառապեալք եղեալք ծով հոգ-

սունակութիւնք և վարանմամբ ։ զօրութեան երբեմն առաւել բարերարութիւնք արարեցեալ յանձինս նոցա ։ քանիցէ բանիւք ասացելովք յականջս նոցա ։ Երբեմն սիրտ տրամեալ առաւել մխիթարի բանիւք ասացելովք ի բարեկամէ միոյ, քանիցէ համայնիւք բանիւք և գործովք աշխարհի ։ Ո՛հ ողորմելիս ես , զի ըստ ամի պակասիմ և նուազիմ հանախորհելով զմեծութիւնն քո այնքան մեծի և պատուեցելոյ Հաւատոյնոյ անձին քոյ , և զնուաստութիւնդ իմ Մարկոսի գրեալս Սնոնիէլիու , և տեսանելով զիս այսպէս անընդունակ , մինչ զի առ ի մխիթարել զքեզ ոչ ունիմ զգիտութիւն , և առ ի հասանել ի թիկունս ոչ ունիմ ուսացուածս ։ Բայց ունիմ վասն քո զմեծագոյն ցաւակցութիւն, եթէ ցաւակցութիւն կամիս համարել ի վարկանումս հաշուեցուս։ Ոչ կամիմ հատուցանել թեղեթով , և մեղանաւ զայն , զոր կարեմ առնել անձամբ իմով ։ Քանզի մարդ մի որ մխիթարէ բանիւք կարողանալով գարմանել գործով , ցուցանէ զինքն գոյ բարեկամ կեղծաւորեցեալ ի յանցելում ժամանակի , և ի յապագայում ժամանակի ունել զնա ոչ բարեկամ կամ կածելի , և ոչ հաւատարիմ ։ Արդ եթէ մինչև ցայժմ ունեցեր զիս ոչ դրացի քո , և ազգական առն քո , աղաչեմ զի այսու հետև ունիցիս զիս փոխանակ առն բարեաւ սիրով , և որպէս զհայր առ ի տալ զնորդդ , ոչ զորդի ի ծառայութիւն , և որպէս փաստաբան ի խորհրդարանին , և յուսամ զի ըստ կերպի իմիք լիցի , զի ասասցես թէ զոր կոյուսի ի բաղումս , գտի զայն ի Մարկոսն միայն ։ Արդ ի մեծի մարտի շփոթման և աղմկի , ուր հնարն մոռացեալ լինի , խելամտութիւնն այլայլի , բանականութիւնն խոյս տայ , այնքան հարկաւորէ բարի խորհուրդն որքան հարկաւորէ օգնութիւն մի միջակօրէն ։ Կարդիոս արդէն ուր մեռեալ եղև իմ և ես Մարկոսս կենդանի եմ քո ։ Արդ ուրեմն որպէս դու վասն որ-

արդեան քոյ ինձ կարես հրամայել զայն զոր կա-
միս, այսպէս և ես

քինա, որպէս թէ գուցէ կամիցիս առնել զնոյնն, զի երգնում քեզ 'ի դին հրատ, զի ոչ սիրոն Մարկոսի զայս կարծէ, ոչէ արքունէք հաճակի քո մեծադոյնի ըմբերէ, և ոչ հեղինակութիւն այդքան մեծի տիկնոջ պահանջէ։ Բայց պատուիրեմ քեզ, զի մի՛ մոռանայցես զհամեստութիւն, որում պարտանդեցեալես որպէս Հաւատացի, և զառանձնակացուին, որ է հարկաւոր այրի կնոջ։ Քանզի եթէ վչտացուցանէ զքեզ միայնակեացութիւն զոր զգաս զմեռելոյն, մխիթարիցէ զքեզ բարի պատիւն, և ազնիւ վարկանուն զոր 'ի քեզ ունին և ունելոցեն կենդանիքն։ Ոչ կամիմ ասել աւելի զայլ ինչ այժմոյս, եթէ ոչ զի այնպիսի եղիցի համբաւն քո 'ի մէջ ամենեցուն, որով չարացն դիցես զանձ առ 'ի պատանձեցուցանել զլեզուս նոցա, և բարեացն դիցես զնայիթոց առ 'ի ծառայել քեզ։ Եթէ զայս առնես 'ի բաց հերքեա 'ի քէն զհոգս, զոր ունիցիս ընդ խորհրդարանին 'ի գործ ածել։ Քաւստինն իմ ողջունէ զքեզ, և ելաց վս աներջանկութեան քոյ։ Ահայ Առաքեցի քեզ դրամս ինչ առ 'ի հատուցանել պարտատիրացն քոյ։ Դիքն որք եւուն զհանգիստ Կլաւդիոսի առնքում, տացեն զմխիթարութիւն Լաբինա կնոջն։

Մարկոս 'ի Մոնթէչելիու գրէ քեզ ձեռամբ իւրով.

Առ

Առ Զինչինատոս, բարեկամն իւր, որ գոլով նախ ազնիւ ձիավար, դարձոյց յետոյ զինքն ի վաճառականութիւն։

Թուղթ Եօթներորդ։

Արկոս վարպետս վերատեսուչ առ քեզ Զինչինատոս կապուտայի, առաքէ զողջոյն վասն անձին քոյ, և զգոհութիւն ընդդէմ ձախողակ բախտին։ Դիտօնա խմբութիւնքդ Բերեչենթիոյ մօրն ամենից դիցն ի վայր մինչև յայսօր, ոչ զսոսասաւոր ոք ի տանէ քումմէ տեսի, և ոչ զլթուղթ ՝ի քէն գրեցեալ եմ ընթերցեալ։ Որոյ յաղագս կարծեցի, թէ կամ առողջութիւն քումմ պատահել իցէ վասնդ ինչ, կամ սակաւ վարկանես զբարեկամութիւն մեր։ Մի անզգուշացիս ՝ի քեզ ընդդ այնքան մեծի անզգուշութիւն և մի մոռանայցես ընդ այն քան մեծի մոռացման, զի ոչէ այնքան աշխատանն քո ՝ի գրելն. որքան է մխիթարութիւն իմ ՝ի յընթեռնուլն թղթոց քոյոց, և եթէ են ծոյլ ձեռն քո վասն աշխատանաց իւրոց, արիացուցանիցէ սիրտն քո։ վասն հանգստուութեան, և հաճութիւն իմոյ։ Ի յայսմ երևի ճշմարիտ բարեկամութիւնն, զի ես հակեմ առ ՝ի մերձել ՝ի քէն զամ հոգս. և դուք աքնիցես առ ՝ի առնել ինձ զամ հաճութիւնս։ Բարւոք գիտես, թէ որքան սակաւ տարակացութիւն դոյ ՝ի մէջ դպուսայ քաղաքին քոյ, և մենք ՝ի չէլն իմոյ, այս ոչ եղև պատճառ զի մեք եղիցիմք բարեկամք։ Ուրեմն տարակացութիւնն որ դոյ սատոր մինչև ՝ի դաղմատիայ, եթէ իցէր ՝ի մէջ բնակութիւն մերոյ, ոչ էին իրաւունք զի մեք անդրադարձցուք ՝ի օտարութիւն։ Գիտնիք անուշակամ [illegible]

քան առաւել Իսկեռատանէ եկեսցեն , այն-
քան առաւել Եղիցին հզօրագոյնք : և որք ձչ-
մարիտք բարեկամք են , որքան առաւել են հե-
ռացեալք բնակութիւն ոնձանց իւրեանց , այն-
քան առաւել եկեսցեն 'ի միաբանել զկամս իւր-
եանց : Այս ինձ աղաչեմ զքեզ Զենոփոնատոս ,
ուրեմն միշտ գտեր զիս հաւատարիմ 'ի ծառայ
ութեան քում , ընդեր ես երկիպա 'ի ցանկու-
թիս իմ : Տերեւքն կանանչք որք են 'ի յարտաքս ;
պատասխանեն թէ չեն չորացեալք ներանպտինքն
ծառից , և գործքն բարիք արարեցեալք 'ի հրա
պարակս , բացայայտեն . թէ այնպիսիք իցեն
դաղտնիքն ծածկեցեալք 'ի մէջ սրտի : Իւր սե-
րեք ոչ գոյ կատարեալ սէր , միշտ գոն բեկ-
մունք 'ի բանս և 'ի գործս , և նա որ կատարե-
լապէս սիրէ , կատարելապէս և մշանջենապէս
ծառայէ : Ես եմ նախատինս ընկալեալ այնքան
վն պղերգութիւն քոյ 'ի հրամայելդ ինձ որքան
վասն երկչոտութիւն իմոյ 'ի գրել առ քեզ : Կա-
միմ խոստովանիլ քեզ զձշմարտութիւն մի , զի եթէ
ունիցէի ես զայնքան համարձակութիւն , որպէս
ունիմ զկամեցողութիւն , և մոռանէի թէ զփոք-
րութիւն թղթոյն իմոյ կարիցեր տալ զվճարումն
մեծութեան հանձարեղութեան քոյ , վերամոյին
վատապէս ձգեցեալ . բայց ոչ կառնապէս որդի
թէ որ ձգեսցէ զտեգս : Ի յանցեալ ժամա-
նակս մինչ ես ողջ էի . և դու սկսեիր ծերա-
նալ դու տայիր ինձ զխորհուրդս , և ես տայի
քեզ զբրամս : Բայց այժմ մինչ ապիտակեցեալք
են հերքն քոյք վճարահատեն զքեզ գոլ առաւել
ծերացեալ , և գործքդ քոյք ամբաստանեն զքեզ
որպէս զողայ , իրաւունն պահանջէ , զի գու
օգնիցես ինձ գրամաքք յաղքատութիւն իմում , և
ես թեթեւութիւն քում ճարակիցեմ ընդ խորհր-
դս արութիւն : Վասն մեծի սիրոյ , որով սիրեմ
զքեզ , և վասն օրինի բարեկամութեան որով պարա-
ւանդիմ , կամիմ զեկուցանել քեզ զայն , զոր այլ
խոհեմ պարտի առնել , և են այս : Յիշել զքա-
ղաքն

բերարութիւն ընկալեալ յայլոց, և մուռանալ զանիրաւութիւն, զոր արարեալք իցեն այլք քեզ։ Բաւական և բազում համարել զանկաւն որք են քոյքն, և առ ոչինչ համարել զայնս բազումս, որք են այլոց։ Օգնական լինել բարեաց, և զանց առնել զչարեաց. զոլ ծանրակաց ընդ մեծամեծաց, և հաղորդակցիլ ընդ փոքերց։ Առնել զգործս բարիս ներկայից, և զհեռակայից ասել զիւսս բարիս, զմեծագոյն վնասն, և զկրուսար բախտին սակաւ ինչ համարել, և յոյժ սակաւագոյն զիրս պատուին իւրոյ, և զիրս հաւասարմութեամբ համարել յոյժ բազում։ Վասն միոյ իրի ոչ դնել 'ի վտանգի զիրս բազումս և զբազումանհաւատի իրաց ոչ գնել 'ի վտանգի զիր մի հաւատի։ Վերջապէս լինիլ բարեկամ միոյ, և թշնամի ոչ ուրուք։ Զայս իրակութիւն պարտի ունել նա, որ 'ի մէջ բարեաց կամի համարիլ, և գոլ բարի։ Լուայ ես թէ թոզեր զպաշտօն կատարմարութեամբ և սպարապետութեամբ, և եղեր զքեզ 'ի ծով, և 'ի ցամաքք, առ 'ի լինիլ վաճառական։ Զահին հարեցեալ եմ 'ի յիս, զի թոզեր զարիրել, և նաւաձել ընդ ձեռամբ զքիշնամիս որպէս Հռովմէացի, և մոռանիլ 'ի յարհեստ ինչ, որով հալածես զբարեկամս քոյս ոչ անարդարիմ բռնաւորս։ Կամիս առնել զչարիս ընտանեաց, և թողուլ 'ի բաց օտարականս։ Կամիս տալ զմահ նմա, որ տայ մեզ զկեանս, և հատանել զմահն 'ինմանէ, որ հատանէ զմեզ 'ի կենաց։ Կամիս տալ զհանդարտութիւն շփոթողաղմայուզիչ, և 'ի հանդարտելոյ հատանել զհանգստութիւս։ Կամիս տալ նոցա, որք առնուն զմերս 'ի մէնք, և առնուլ 'ի նոցանէ, որք տան մեզ զիւրեանցն։ Զատես զդատապարտեցեալս, և գատապարտես զանմեղսն։ Կամիս, գոլ անգոյթ 'ի մէջ ժողովրդեան քոյ, և ոչ կամիս նպաստաւորել զհայրենին քո։ Ուրեմն 'ի յայս ամ վտանգս մտանէ զինքն նա, որ թողէայ զզէնս, մուծանէ զինքն 'ի վաճառականութիւն, մտանելով

իմ'ի խորհուրդս և'իյիս խոկալով, թէ զինչ լցեր պատճառն որոյ ասկս թողեր զաղնիւ ձիավարութիւն, նորուն ունելիր զայնքան պատիւ, և ա-ռեր զարհեստս իմն այնքան ընչին դործոյ միոյ, որում հեռևին այնքան վատահամբաւութիւք։ Իրաւի ոչ զդամ զայլ պատճառ, եթէ ոչ զայս զի գոլով դու ծեր, և ոչ կարելով արշաւել 'ի վր ելանց, այժմ նատեալ 'ի շուկայն կողոպտես զինչս նոցա որք անցանին առ քոյն։ Նոքա որք ծերքնեն. ունելով զինադոյն հիանդութիւն, այսինքն զնուազումն կարողութեան, և ուժիցդ 'ի յարտաքս, իսկոյն զինաւորին նենդաւորութիւք, 'ի ներս, և զայս ասեմ յոյժ ապահաց որպէս ես դու։ Զիր իմն կամիմ ասել քեզ, զի առեր դու զարհեստ իմն որով այլք ընկերքն քոյք գողանան 'ի յաւուրս բազումս, դու կաշառաւորիս 'ի միում ժամում, և յետ այնորիկ եկեսցէ ժամանակ, յորում կորուսցես 'ի կիսոջ միում։ Զի այսպէս խոստանան գիքն թէ մինն եղեցի պատիժ բազմաց, և ժամանակն երկարադոյն պատժեսցէ զամենեսեան։ Զինչ է այս, ով Զինչինատոս իմ։ 'Ի ոտան Զինչինու հօրն քոյ կային կախեալք տէդ և զէնք, և ոչ խրձունք և կաղամբարք։ տեսաք զսենեակս լցեալք զինուք, և ոչ ըռզակք։ ըզդրուանս առատս ձիավարաց, և ոչ վաճառական-նաց էին լցեալք։ Իրաւի անդ տեսաք զդպրատունս ազնիւ անձանց, և ոչ որպ այժմ յայրս աւազակաց։ Ո՞հ Զինչինատոս, անիծեցեալ լիցի այս պիսի տուեղ արհեստն քո, յորում կամիս կալ մանաւանդ որպէս վաճառական աղքատ, առ'ի մեռանիլ հարուստ, քան թէ կալ ձիավար հարուստ, և մեռանիլ բարեհամբաւ։ Եւս դառնամ ասել անիծեցեալ լիցի, զի ագահութիւնն չարի միոյ առնանի վնասուք բազմոց բարեաց։ Ոչ կամիմ վերաւորել զքեզ ընդ անցելոց հայրենեաց քոց և նախնեաց, այլ կամիմ աղդել քեզ զթշուառութիւս քոյս, և զաւակաց քոց որք հետևին քեզ 'ի ժամանակս ապադայս։ Եթէ ես խո-

խոկայցէի, թէ խոհեմութիւնն քո իցէր այնքան, որպէս դու ես յետին ծայրն աշխարհիս, և լրութիւնն իւր որպէս աշխարհ ունի 'ի քեզ, և ամառաւուրան քոյ, ըստ որում ցուցանեն սպիտակեցեալք հերքն քոյք, պատճառանս յօդէի ինձ զաշխատանք առ 'ի ծանուցանելոյ քեզ, և քեզ ձանձրութիւն առ 'ի լսել ինձ։ Բայց հարկաւորք զի դուռն այսպիսի մեծի անհոգութիւն բախիցի կամանաւ իւիք և տալ ազդումն ինչ, որքան լաւ արեցեալ իցէ ածելին, հարկէ անցուցանել 'ի վերայ կաշւոյ։ Այնպէս ևս որքան պարզ և իցէ իմացականութիւն ուրուք երբեմն, և երբեմն ունի զպիտոյս խորհրդակցութիւն։ Բազում անդամ ոչաղին մարդիկք խոհեմագոյնք, ոչ վասն այնորիկ, թէ կամին սղալել, եթէ ոչ զի իրակուութիւնքն են այնպիսւոյ որակութիւն, ամ յորս խոհեմութիւնքն իւրեանց ոչ են բաւականք հասուցանել զոյնս իկատարումն։ Վասն այսորիկ հարկաւորք զի զկամն իւրեանց անջատիցեն 'ի զբաղմանց, և մերժել զնեալս մթութիւն, և զսեփհականն դատողութիւն իւրեանց, սրել 'ի բթութենէ նա և երբեմն և երբեմն առնուլ զթել իմն 'ի կարծեացն այլոց։ Հայեաց բարեպէս ով Ձեր չինատոս, զի ուր ուրեք ոչ են բարւոք հասատատեցեալք հիմունքն, համայնք շինուածքն կան 'ի վտանգի։ Խարխսիք աշխարհիս այսորիկ, 'ի վրայ որոյ յենուն որդիքն ունայնութիւնք, են հիմնեցեալք 'ի վրայ աւազի, և որքան իցեն մեծաշէնք, և բարձրագոյնք, դոյն ինչ հողմով շրջին, և սակաւ ինչ ջերմութեամբ այողութիւնք պատառին և բացուին, և փոփվթեթիւ անձրևիւ ձախորդութիւնք քակտին, և սակաւ ժամանակաւ մինչ անհոգ կամք, համայնքն 'ի յերկիր վայթին։ Թէ ևս իցեն բահքն արծաթոյ, և բրիչքն ոսկւոյ, մշակքն թագաւորք, որք գործիցեն, և բրիցեն զամս հաւարս, մինչև արտաքսիան ձիցէ յերկիր 'ի յանդունդս, ոչ կարեն դատանել զվէմ հատատուն, կամ զսղաւաժ իմն կարծ-

լսադոյն որովք հաստատիցեն զանգրանկութիւնս իւրեանց, և մշանջենաւորել զկացութիւս իւրեանց։ Զամ իրս դիքն հաղորդակցեցին մարդկան մահկանացուաց, բաց 'ի յանմահութէ, մանաւորիկ կոչեմք զնա անմահս։ զի ոչ երբեք մեռանին, և մեք զմեզ կոչեմք անցաւորս, զի 'ի վախճանի ամենեքեան ունիմք զվերջ։ Որքան և կարծրադոյն իցէ պարիսպ մի բազում հնութիւն նր առնէ զնայ կերակուր ցեցի։ Երկոքեքն իրք միայն են ազատք, զորս ոչ բանան կարէ դարձուցանել զձեռս 'ի յետս, ոչ և ժամանակն գնէ 'ի մոռացումն, այսինքն, համբաւն բարի կամ չար, առ մարդիկս տանջանք կամ փառք, բարեաց կամ չարեաց առ դիսն։ Ով Զին չինաւոս իմ։ Եթէ կարեն աւարտիլ անձինքն, ինչպէս կարէ լինիլ, թէ ոչ աւարտիցին ստացուածքն։ Զինչ կանաչեցեալ, զինչ հասեալ, և կատարեալ, զինչ հոտեալ, և ապականեալ առ 'ի բաժանել զինքն ունիցի ժամանակ ինչ պտուղն 'ի ծառոյ ծաղկեցելոյ, և ոչինչ համարիմ զայս, վասն զի է այս մահ բնական։ Եթէ ոչ զի բազում անգամ, տերևն ընդ ծաղկան տանի ցուրտն ոչնչեալ, և հիւանդութիւն կամ կարկուտ մի հողմամրրիկ բերէ զաներջանկութիւն մի։ Զանձ բացուցիչ աշխատակիր տաժանելի. և երկարաձիք է գործել զկտաւ կամ զայլ ինչ գործ։ Բայց մինչ գործի 'ի յաւուրս բազումս հատանի և կորի 'ի վարկեան միում։ Այնպէս և աւաղելի իմն է տեսանել զմարդ ոք. որոյ այնքան աշխատանօք ստացեալ լինի և 'ի կացութիս պատրաստ դնի։ Իսկ յետոյ մինչ ոչ նկատեմք 'ի նա, տեսանեմք զնա բոլորովիմք կորնչիլ, առանց թողլոյ զյիշատակ ինչ։ Ով Զինչինաւոս իմ, վասն սիրոյ զոր 'ի միջի մերում ունիմք աղաչեմ զքեզ, և երդուանեցուցանեմ զքեզ իդիան անմահս, զի մի' երբեք հաւատայցես աշխարհի, որոյ բարքն են 'ի ներքոյ սակաւ ինչ ոսկւոյ և ունի թագուցեալ ժանկս բազումս, և ենթ պատրուակի ճշմարտու-

տութիւն մոյ, բեռնաւորեալ զմեզ հազար այտու-
թիւբ, և ընդ միով սուտակասպաս հեշտութեան
իրիւք, ներքսառնէ յաւուր միում հազար սրտ-
մուխս. նշ որոց ցուցանէ զսէր առաւել, խաբէ
զնա առաւել խաբեութիւբ, նշ որոց տայ զբար-
եաց իւրոց, զանայեալ տալ նշ զմեծագոյն ինչսա
նշ որք ծառայեն նմա հեքնեալով, տայ զվարձս
հաւատոյ, և նշ որք սիրեն զնա հաւատաբար,
տայ նշ զբարիս սնաղաբար։ Աերջապէս 'ի քնոյ
մերմէ մինչ քնիմք ապահովք, զարթուցանէ զմեզ
մեծագունիւ վտանգաւ, Արդ զինչ յուսաս գու-
ունիլ 'ինմանէ տայ ինձ։ Զմի իր կամիմ ասել
քեզ, և կարծեմ, թէ ոչ պարտիցես մոռանալ.
և են այս։ Մի առաւել պարտին ունիլ մարդկիկ
զոչ հաւատալն զնանիր ունայնութեն, զորս տե-
սանեմք աչօք մերովք, քան թէ հաւատալ զմե-
ծագոյն հրաշագործութիւն, զորս լսեմք ընդ ա-
կանջօք։ 'Իմ ինչ նոյեցեալ եմ ես, և երկարա-
գոյն փորձառութիւբ ճանաչեցեալ եմ զայն։ Զի
զսակաւ տուն նկարեցեալս, և ոչ զկացութիւն
վերացեալս, և զբարձրացեալս տեսաք 'ի հոսմ,
որք խակաւ ժամանակս ոչ ունիցին զմեծա-
գոյն հոգս 'ի սրտի իւրեանց, զաստագոյն թշ-
նամութիւն ընդ գրացեաց իւրեանց, զմեծագոյն
նախանձս ընդ ծառանդացն իւրեանց, զամար-
գութիւն, և ստիպողութիւն առ բարեկամս իւր-
եանց, զկրկնակի նենգաւորութիւն առ թշնամս
իւրեանց, զգուելի ներշընչումն և 'ի վերա 'ի խոր
հրգարանին, և 'ի յատենի դատաստանին, և եր
բեմն վասն խնայելոյ զմի իր 'ի ստացուածոց իւր-
եանց, հատուցանեն զչորեքկին 'ի պատուոց իւր-
եանց, և վերջապէս զայն առ յոյս բազմօք հոգ-
սունակութիւբ, և վարանմամբ ժամանեցին մա-
տրգուոց իւրեանց, զորս առաւել սիրէին ընդ
բազում հանդատութիւբ վայելեցին այլք ժառանգք,
զորս ոչ երբեք կարծեալք մտածէին։ Արդ
այսպէս արդար վճռահատուն, զի որք խաբեցին
զբազում բազում գործովք չարեաք 'ի կեանս
իւր-

իւրեանց, դատանիցէին և զինքեանս խաբեցեալս
'ի յունայն մտածմունս իւրեանց 'ի ամանակի
մահուան իւրեանց։ Աղոյթք լինիցէին դիքն,
և յոյժ անտանելի և անբմբերելի 'ի մարդկանէ,
եթէ զայն զոր ժողովեցին չարքն վաղ միոյ, և
միայնոյ ժառանգի վնասուք բաղմաց բարեաց,
թողուցուին նոցա վայելել խաղաղութք զամս բա-
զումս։ Առաւել խելագարութի երևին ինձ,
ծնանիլ ողբալով ապրիլ և մեռանիլ հառաչանօք։
Քանզի չափուց յամենից կողմանց պարտին դոլ
հաւասարք։ Օվ Զինչինատոս, ո՛ոք խափեաց
զքեզ վաղ սափորի միոյ ջրոյ, զինչ պիտոյս ունիս
դու, հետազօտիլ 'ի ստացումս անդնդոց ծովու
աշխարհիս, յաղագս անցուցանելոյ զկեանս այս
թշուառական, կամիս մանչիլ զձեռաց չվանով
հոգոց, և վարանմանց, և բեկանել զմարմնդ
'ի յինդ դիմամարտումն այնքանեաց աշխատանաց,
նաև վտանգաւորել զոգատիւն քո, վաղ դուլոյ
միոյ ջրոյ։ Զայլ ինչ կամիս թէ ասիցեմ քեզ,
եթէ ոչ։ Զի առ'ի ընուլ զսափուր մի բարեաց
այսոցիկ, կամիս ըմբերել հազար վտանգաց, և
'ի կրթութիս այնքան անարդ արհեստից ոչ եր-
կնչելով կորուսանելոյ զհաւատարմունդ։ Արդ
'ի վախճանի և 'ի վաղճանի երդնում քեզ, զի
ճայեցես այնքան մեռեալ 'ի ծարաւու, ինչերքոյ
ոսկեն անդնդոց ծովու որպէս թէ իցես առանց
ջրոյ 'ի յանջրդայնում անապատի։ Եթէ ընդիս
կամիս խորհրդակցիլ տեսանելով զհասակ տարե-
կանութեանդ, հայցեա 'ի դիցն զմահ առ'ի հանդ-
չիլ ոչ զծեր խոհեմ, և ոչ զհարստութիս վա-
կելոյ չարաչէս ոչ տղայ խելագար, Զբաղումս
ողբացի ես 'ի Հռոմ արտասուաթոր աչօք։ մինչ
տեսանէի զնա չուել յամմ աշխարհէ։ Եւ զքեզ
Զինչինատոս իմ ողբամ կամ մամբ արեան որսի
մոյ, տեսանելով, զի նորոյ դառնաս 'ի յայշ-
խարհ։ Բարեկամութիւն իմ և հաւատարմու-
թիւնն ատենին ծերակուտի, որիւնն վաղեմից
անցելոց նախնեացն քոց։ և արժանաւորու-

թիւն

թիւնն յարգականութեան անձին քոյ, նաև պատիւն հայրենեաց քոց պարտէր սանձահարել զազգասիրութիւնն քո։ Ո՛վ Զինչինատոս, մոռուանս սպիտակացեալ, և պատուելի, որ սպառնայ զանկումն քո սակաւ առ սակաւ, պարտէր զբաղեցուցանել զքեզ իկրթութիւնս ազնուականս։ Նայեաց բարեկամ, զի առաւել արժանէ հետևիլ իրաւանց ընդ շաւիղս արանց բարեաց. քան թէ առ հասարակ կարծիսն, որքեն ճանապարհ լայնագոյն արանցն չարեաց։ Քանզի թէպէտ ճանապարհն նեղ, և անձուկ վերոյից միոյն տակաւին ոչ ունի զփոշիս, որովք կուրացուցանեն զաչս, որպէս զմիուսն, Տղայքն լրբակացք, որք ջանան առնել զանզգամութիւն, այնք պատճառք են 'ի յանգիտութենէ իւրեանց։ Բայց անկարդ ազատութիւնք ծերոց առնեն զի տոժանմամբ աշխատանաց ունիցին կեհանս, և ձանձրութեամբ ընդունիլ զմահն։ Եւ որպէս միոքն նոյնպէս և միուսքն, մնան միշտ վատահամբաւեցեալք։ Ո՛վ Զինչինատոս, ընկալ ընկալ զիսորհուրդս այս բարեկամական, և մի բեռնաւորել զքեզ Ճարպով կսկծութեան բարեացս այսոցիկ, ուրեմն ունիս զպատրուքս այնքան սակաւս կենաց քոց։ Քանզի զայսպիսիս նմանիս քոյս տեսաք հալեցեալս, և ոչ լուսաւորեցեալք Ճառագայթիւք. զի ունէին զինքեանս բեռնեցեալս բազում Ճարպովք ընկից աշխարհիս և ունէին զսակաւ պատրուքս կենաց։ Մի հաւատար բարեկամ ազողութեան ներկայս կանիս որպէս թէ գուշակումն բախտին խոստանայ զերջանկութիւն։ Եվ որովհետև եդեր դու զքեզ 'ի վտանգս յայսպիսի մեծի վտանգի ծայրագունեղի, որպէս խելագար, թուի ինձ թէ պարտիս ինքանել անոի տուիք քովք նման խոհեմի որպէս զի ասիցեն զքէն ամենեքեան, թէ Զինչինատոսն ինքն կամաւ իւրով, և ոչ կամեցաւ անկանիլ 'ի վայր ակամայ։ Ոչ զայլ ինչ

ինչ կամիմ ասել քեզ, եթէ ոչ, զի դիւքն իցեն պահապանք քեզ, և զքեզ և զիս զգաստացուցեալք նպաստաւորիցեն 'ի պատրիչ բախտէն։ Քաւաստինն իմ ողջունէ զքեզ, և խոյս տու յինէն փախստեամբ մինչ դրէի զթուղթս այս առ քեզ։ Եւ երդմնեցոյց զիս դրել քեզ զբանս այս 'ի կողմանէ իւրմէ, թէ յայնժամ ունիցիս զնեղամտութիւն հանձարոյ, յորժամ արտաքանցիցես դերծելով զհերս 'ի յետոկոյս դլխոյ քոյ։ Եւ եթէ այսպէս իցէ, թուի ինձ թէ հարիւ քեզ կոչել իսկոյն զասփաբիչ մի զի հատանիցէ զհերսդ, որպէս զի արտաքուանիցէ խեղամտութիւնդ հանձարոյ։ բայց այն որ երևին ինձ են, զի ոչ լքէն ագահութիւն և ոչ 'ի քաւաստինէն խելագարութիւն, ոչ և յինէն ցաւս ոմից յամբացեալ կարէ ելանել։ Չի մանաւանդ նախապէս ելցէ հոգին մեր իմաստնոյ, քանթէ սիրաք մեք հեռանայցեն ի' յապերաստութէ։

Մարկոս 'ի Մանթէչլիս դրէ քեզ ձեռամբ իւրով։

Զ. Կաթուղիոս նախարարին գոլով յոյժ վշտացեալ ցեալ վասն մահուան Վերիսիմոսին յոյժ սիրեցելոյ որդւոյն իւրոյ։

Թուղթ Ուղերորդ։

Զարկոս նախարար նոր, և երիտասարդ առաքէ զողջոյն, և զվերապատուութիւն առքեզ Կաթուղիոս նախարար հին, և ծերագոյն։ Եւ գրելովքեզ զթուղթս երկուս, ոչ կամեցայ զատասխանել գոնեայ միոյն։ Եթէ են վասն ոչ կարելոյդ, լռեմ, և եթէ են վասն ոչ կամելոյդ, դանգաւեմ զքէն։ և եթէ են վասն մոռացման, ամբաստանեմ զքէն, իսկ եթէ են առ'ի քամահել զիս, քաղքեմ զքէն, և եթէ իցէ վասն երաղի, մի հաւատայցես. եթէ ոչ կամիս զի դիմիցեմ'ի կատակդիրս փտաւորել զիս նոքօք որպէս ընդ քարեկամի, դիմեցից 'ի դիրս ազդ առնելով, և յանդիմանելով ինձ որպէս հայր զորդին իւր, Պարաւանդին տղայքն առաքինիք պատուել զծերս խոհեմս, և ոչ սակաւ զծերս իմաստունս որպիսի եղդ դու, առ'ի Լուսաւորել, և վարդապետել զտղայսն յոյժ տղայեացեալս, որպիսի եմ ես։ Արդար իմն է, զի նորագոյնքդ ուժեղութիւնքն տղայեականք ծառայիցեն, և ընուցուն զկամս այնոցիկ, որք արդէն բեկեցեալք են ծերութիւնքն։ Սոյնպէս և ես երկարագոյն փորցսառութիւնքն ծերոց զգուշացուցանիցեն զդեռաբուս արբունս հասակին մերոյ, և զբնական տգիտութիւնն մեր։ Այն տղայութիւնն է չարապէս 'ի կիր արկեցեալ, որոյ մինչ յաւելուն ուժեղութիւնն մարմնոյն պակասին առաքինութիւնն հոգւոյն։ Եւ այն ծերութիւնն է պատուելի և մեծարելի, որոյ որքան առաւել ցամաքին զորութիւնք, և երակունքն մարմնոյ 'ի յոտատաքս, այնքան առաւել կանաչ

նացեալք վերաբուսանին առաքինութիւնքն 'ի ներ
սուստ հոգւոյն : Զայս տեսանեմք 'ի ձեռն փոր
ձառութեան , զի ծառն որոյ մինչ քաղեն զպտուղն
և անկանին տերևքն , և թարշամին ծաղկունքն ,
մնայ առաւել կանանչ և գալարաբար , և առաւել
օգտակար արմատն իւր : Կամիմ ասել , թէ ան
ցանելով դարուոնն մանկական , և ամառն երի
տասարդութեան , և եկեալ ձմեռն ծերութեան , որոյ
ապականեցեալք են պտուղքն մարմնոյն , և ան
կեալք տերևքն օգնականութեամբ թարշամեցեալք ծաղ
կունքն ցանկական հեշտութեան , և չորացեալ
կեղեւն ունայնի յուսոյ 'ի յարտաքս , իրաւունքն
պահանջեն , զի յայնժամ եղանիցին յոյժ բարե
գոյնք արմատքն գործոցիւրեանց 'ի ներքս , ծերքն
որք են ճշմարիտք ծերք , պարտին առաւել պա
տուական համարել առ 'ի գործել զբարեգործու
թիւս , քան թէ զսպիտակութիւն հերաց , զի պա
տիւն տուեցեալ լինի բարի կենաց , և ոչ հե
բացն սպիտակեցելոց : Ամենք ժողովուրդ փա
ռաւորեցեալ , և բարերախտ թագաւոր , որ
տիրէ այնմիկ . ուր գոն տղայութիւնք վասն աշխա
տանաց և ծերութիւնք վասն խրատուց , և խորհր
դակցութեաց , որպէս զի կերակրիցի , և զար
գանայցէ բնութիւն առ 'ի ապրիլ սոյնպէս ևս բա
րի քաղաքավարութիւն առ 'ի կառավարել : ոչ
թէ համայնք պտուղք գան համանգամայն 'ի
միասին , և ոչ միանգամայն վերջանան 'ի միասին
եթէ ոչ ուր սկսի մինն աւարտի միւսն : Այսու կեր
պիւ գուք վարդապետելով . և մեք հնազանդե
լով ձեզ որպէս ձայք նորատիեսուրք հարցն
ալևորեցելոց 'ի բունս ծերակուտին անկանելով
փտուրն միոյն , ունելիցին տակաւին փեթորուկս
սոյնքն : և այսպէս ոչ կարելով թռչիլ հարքն վաս
տակեցեալք , լինիցին պահպանեցեալք 'ի ձեռս
որդւոցն գեռահասակաց : 'Ի յօրէնս բարեաց
երդնումքեղ և այսպէս տեսանիցեմ զքեզ 'ի հան
գստութեան , ով Կաթուլոս , զի առաջագրեալէի
ևս ոչ գրել քեզ զտողմի երբեք , քանզի գրիչն
իմ

իմ զայրացեալ գտանիր ընդդէմ ծուլութեան քում, եթէ ոչ սակաւութիւն խելաց իմոյ, և վտանգն մեծ պաշտօնին իմոյ միշտ վերադարձէին զկարասն և զհորհրդականութիւնքս։ Զայս յատ կորինութիւս ունի իմաստութիւն, զի 'ի տան ուր բնակի առնէ զինքն ոչ յիմարաց և յիմարս դարձուցանէ դերիս գիտնոց։ Կարծեմ զի մոռացեալ իցես, թէ տակաւին մահն Աբրիսիմոնին սիրեցեալ որդւոյն իմոյ վասն երկարութեան ժամանակի ունիցիմ եղեալ 'ի մուռացումն։ Ընենիս զպատճառս խոկալոյ վասն զի զբաղում իրս քուքէ ժամանակն, զորս բանականութիւն ոչ բժշկէ, բայց 'ի յայսմ իրակութիւնք ոչ դիտեմ թէ որն ինչ մեծագոյն խաբեցեալ գոյն քո թէ ցաւն իմ։ Ես երդնում քեզ 'ի դիսն անմահս զի ոչ են այնքան տիրապետեալ սովալուկք որդուքն 'ի փորոտիս աներջանիկ որդւոյն իմոյ, որքան ցաւն ատատիկ 'ի սրտի ցաւակիր հօրն և Ճշմարտեաւ, ոչ գոյ համանմանութիւն վասն զի որքին մեռաւ միանգամ միայն, իսկ ողորմելի հայրն նորա մեռանի իւրաքանչիւր վայրկենում։ Զինչ առաւել կամիս զի ասացից քեզ, եթէ ոչ, զի առնոյ զնախանձ մահուան, և ինձ զցաւակցութիւն կենաց պարտի ունիլ։ Քանզի նա մեռանելով կենի դանի է և ես տարբերով մեռանիմ։ 'Ի ճախորդս կան դիպուածս կենաց, և 'ի խրթին հակադարձումն բախտին, ուր հնարագիտութիւն ասկուս օգնէ, և զուժեղութիւն, փոքրագոյն երևին ինձ թէ բարեգոյն դէղն սորին եղիցի, զգալ որպէս մարդ, և զանց առնել համբերութիւն ոգի հանձարեղ։ Եթէ ամենեքեան զամ իրս որպէս զգան 'ի ներքս սրտից իւրեանց, ցուցանիցեն 'ի յարտաքս ընդ լեզուաւն իւրեանց, կարծիմ թէ ճայթիցեին օդքն հաւաչանօք իւրեանց, և առոգանիցեին զերկիր արտասուօքն իւրեանց։ Ո՛հ եթէ սիրտք վիրաւորեցեալք իսկականաւ վիրաւորութեամբք կարիցին տեսանել աչք մարմնաւորք ես երդնում քեզ զի անդ տեսա-

նիցէին , թէ որպէս ասաւել մեծապոյն է մի մեայն կամիլ արեանն , զոր քրտնի 'ի ներս ինքեան , քան զամենայն արտասուս , զորս լան և հեղուն 'ի արտաքուստ : Ոչ երբէք սուներն զհամեմատութիւն մեծապոյնք ցաւքն մարմնոյ , ընդ փոքրագոյն ցաւոյն զոր ունի հոգին : Վասն ամենից տառապանաց , և աշխատանաց մարմնոյ դոքին մարդիկք զդեղ , և զդարման : Բայց աղօրմելի սիրտն եթէ խօսի , ոչ լսեն , եթէ լայ , ոչ տեսանեն եթէ դանդաղի , ոչ հաւատան : Արդ զինչ արասցէ այնպիսին , եթէ ոչ ասել զկեանն ընդ որում մեռանիցի , և սիրել զմահն ընդ որում կեայ : Առաքինութիւնն գերահաչակ 'ի յանձինս գերահաչակս , ոչ կայանայ 'ի բմբերելն կրից մարմնոյն , եթէ ոչ 'ի պանդուխթն և 'ի համբերութիւն , որք են 'ի հոգւոջ : Աղքա են որք այլոյլեն զհիւթս , և զմաղձս թարց ցուցանելոյ զկերպն , և զեռաղն մարմնոյն 'ի յարտաքս , և ձգենն զերմութիւն 'ի թարց վերդովելոյ զերակունսն , առնեն զի վարեսցուք լանօջք մերովք , և լիցուք ծեցեալք , անկանիցուք 'ի ծունկս , և բմբերիցուք 'ի ջուրս ընկղմեցեալ մինչև 'ի բերանս , առնուլ զմահ առանց թողլոյ զկեանս , և վերջապէս երկարացուցանեն մեզ զկեանս , ոչ զի առաւել վշտադնիցիմք , և անխայեն ուրանալով մեզ զդերեզմանն , որպէս զի մի՛ կարիցեմք հանդչիլ : Բայց խոկալով , զի եթէ վշտադնեն զիս տառապանքն , նմանապէս տաղտկացուցանեն զիս մխիթարանքն , և միշտ ունիմ կամ զքաղցառ մինն , և կամ զզովումն առ միւսն , վասն որոյ առնում զայս Ճար , և զկնարս , այսինքն մասն ինչ զանցառնելով լեզուաւ , և մասն ինչ արտասուելով աչօք , և մասն ինչ զգալով 'ի սրտի , անցուցանեմ զկեանս իմ , որպէս նա , որ սպասէ կորուսանելոյ զայն , զոր ունի , և ոչ քնաւ դտանել զայն , զոր կորոյս : Զայս ասեմ , զի եթէ ոչ տեսանես զիս առնել զմուխս արտասուաց , և զաղաղակս հառաջման , որպէս պարտէր

տէր առնել՝ի մահուանն որդւոյն իմոյ, մի՛ կար
ծեր, թէ են վա՜ղ ոչ տոչորի սիրտ իմ՝, եթէ
ոչ տապալն ներքնայնոյ ջերմանթեան, մաշեալ
սպառեցաւ խոնաւութիւն աչացս. այսուհետոյ և
եղեալք կայծակք հրոյ, տոչորեալք կիզէն զոս
տում աղիքս՝ի ներքս իմ։ Ա՛վ Կաթուղիս իմ՝,
այժմ գիտես, թէ որքան համարիցէ հայր զք
վերապատուելի զկորուսան որդւոյ միոյ բարե-
գունի։ Ընդ ամ՝ իրս են դիքն ազատականք,
և առատաձեռք. եթէ ոչ միայն առ՝ի ոչ տալոյ
մեզ զորդիս առաքինիս։ Ուսումնականաւ ջանա
ցողութեամբ նկատեալեմ ես, զի ուր ուրեք
գոյ մեծագոյն առատութիւն. և բարձրագոյն կա-
ցութիւն գոն և ես անդ մեծագոյն սօվ և չքաւո-
րութիւն բարեաց ժառանգից։ Մեծ ցաւակիրու-
թիւն է լսելն, և առաւել մեծագոյն առաղելի, և
եղկելի են տեսանել զհարս՝ի վեր ելանել առ
հարստութիւն, և տեսանել զորդիս՝ի վայր իջա-
նել գոլով մոլեսերք։ Տեսանել զհարս պատուել
զորդիս իւրեանց, և տեսանել զորդիսն վատա
համբաւել զհարս իւրեանց։ Տեսանել զհարս
տալ զհանգիստս որդւոյն իւրեանց, և զորդիքն
տալ զվիշտ ծերութեան հարցն իւրեանց։
տեսանել, թէ հարքն մեռանին վասն էր զի մե-
ռանին որդիքն իւրեանց այնքան կանխապէս,
և տեսանել զորդիս՝ի լաց, և՝ ի յողբս վա՜ էր
զի մեռանին հարքն իւրեանց այնքան անագան,
և յուշապէս։ Զայլ ինչ կամիս, զի ասիցեմք։
եթէ ոչ. զի զպատիւս, և զհարստութիւս, զորս
հարքն ջանացին ստանալ բազմաւ հոգացողութ-
նք կորուսանեն մեծաւ անհոգութիւք, և անրդ-
դուշութիւք։ Զմի ինչ հաւատեաւ գիտեմ, զի
հարքն կարեն ժողովել զհարստութիւս կարողու-
թիւք, և հնարագտութիւք. բայց պարտին սնուցա-
նել, և կերակրել, ընդ միայնով առաքինութիւք
զորդիսն իւրեանց։ Դիքն ոչ երբեք թողուն,
զի մնայցեն մշտատեւք այնք, որք ընդ չար գի-
տաւորութիւք եղև սկիզբն իւրեանց, և զրկ-

մնամք այլոց են հիմնեցեալք, նաև ի չար ժառանգ դէ լիցեն սիրեցեալք։ Եւ ոչ վատթար բախտք տալցն խոստանան, զի հարստութիւնքն թողեցեալք որդւոց իւրեանց պիտոյացին, և ծանելիցին ի մուրթիս վա՛ զբաղմանց նոցայ, որք են մոլեգնալք. նք արդիւնաւորելով և դիպն հրամայելով, կորնչին ժառանգն և ժառանգեցեալքն։ Արդ նկատեայ բարւոք զոր ասեմքեզ։ Եւ արդէն ունիս զերկուս որդիս, այսինքն զՅովսեփ անդրանիկն, և զՎերիսամ կրտսերն։ Սեռաւ կրտսերն փոքրերք հասակաւ, և անդրանիկն առաքինութիւ՛ , և ես միշտ մտածեմ եթէ բարին ապրիցէր լնելոցէր աղքատ, և այժմ որ մեռաց ինձ վասն, կարծեմ թէ լինելոցէ հարուստ։ Եւ ասեմ քեզ, զի դիպն են այն քան դիտածադոյնք, զի հօրն աղքատի ոչ տան զորդիս վատթարս, և հօրն հարստի հաղիւ տան զորդիս բարիս։ Եւ ոչ ի յամ յաջողմունս ունեալք են միշտ կամ երբեմն ձախորդականք բախտք եթէ անագան և յեսի, և եթէ կանուխ և փութանակի անդ պատրաստեալ լարէ մեղ զորոգայթ, ուր տեսանէ զի եմք անկանելոցք մեծագոյնիւք աւաղօք, և թշուառութիւ՛ք։ Եւ վա՛ այսորիկ խոստանան զի զոյն զոր հարքն ագահք ժողովեցին բաղմաք տուապանաք, մեռանիցին այսու թշուառութի՛ , և թողուն վասն որդոցն մոլեգարաց յոյժ չարապէս գրաւեցեալս։ ԶՃշմարիտն ասեմքեզ զի այնքան ողբամ վա՛ որդւոյն, զոր դիպն թողին ինձ, որպէս պնա, զոր բարձին յլեռն։ Քանզի նուաստութիւն կենդանւոյն առնէ անմահական զյիշատակն մեռելոյն։ Զարապէս կեալն, և վատթար կենդաղավարութիւնն նոյ՛ որք կեան, առնեն զմեզ զի հառաչիցեմք, և հեծեծանօք յիշեցեմք զընկերակցութիւնս նոցա. որք մեռան։ Վատթարն միշտ աղաղակէ վա՛ վատթարութի՛ իւրոյ զի հատանիցի կեանն յինքենէ, և բարին միշտ արդիւնաւորի, զի ողբացեալ լիցի մահն իւր։ Ասեմ քեզ Ճշմարտապէս, Կա-

թուլոյս իմ, զի կարծէի կորուսանել զիմացակա-
նութիւն իմ, մինչ տեսի զմահն կլուսեր որդւոյն
իմոյ, բայց այսու մխիթարիմ, զի կամ ես 'ինա-
և կամնա 'ի յիս տեսանելոցդ եմք զմիմեանս, զայս
և սատմ թէ դիքն փոխեսուն ինձ այլ ոչ պար
գևեցին։ Զի նոքա են ճշմարիտք ժառանգք, և
ես տնտեսեմ զի համայնք իրք չարիելիք են ըստ
արդար կամաց նոցա, և ոչ ըստ սնկարգ ին-
դրուածոց մերոց. ուստի կարծեմ, 'թէ մինչ
առին յինէն զորդին իմ, ես դարձուցի զնա ոչ
զիրս այլոց 'ի տեարս իւր, և ոչ թէ առին զնա
յինէն։ Արդ որովհետև եղև կամն գիցն, տալ
զհանդիսս որդւոյն ոչ առն բաբելոյ, և վշտաց-
նել զհայրն վա՜ զի էր չար, զդոհութիւնս մատու-
ցանեմ վա՜ ժամանակին այնորիկ, զոր թողին ինձ
առ 'ի վայելել զկեանն նո՜ր, մատուցանեմ զհամ-
բերութիւն, զոր ունեցայ 'ի մահուանն նո՜ր։ Եվ
աղաչեմ զնա՜, զի զիջուցանիցեն այսու պատժովս
զբարկութիս իւրեանց, և հայցիմ, զի որովհետև
բարձին զկեանն կլուսերին արասցեն բարեբա-
խութեամ զանդրանիկն։ Ասա 'ի Հռովմ
իմացայ զոր մատութիւնն, զոր ընկալար վասն տրտ-
մութեան իմոյ այդր 'ի Սամնիա, Աղեր-
սեմ զդիսն դթածս, զի թողցեն զքեզ
տեսանել զբարի վայելչութիւն որդւոյ քոյ,
և ինձ թողցեն վճարել քեզ ընդ ուրախու-
թիւն զայն, զոր ողբացեր վա՜ նեղութեանց իմոց։
Քաւատինն իմ ողջունէ զքեզ, զոր եթէ տե-
սանիցէիր զնա, իրաւի խղճայցէիր նմա, զի
արտասուէ աչօք, հառաչէ սրտիւ, ձեռօք
ձաղէ և վիրաւորէ զինքն, և լեզուաւ անիծա-
նէ։ Ոչ ուտէ 'ի տունծեան, ոչ ննջէ 'ի ջիղերի,
սիրէ զտեղն խաւարային, և դարձի 'ի լուսոյ։
Եվ ոչ զարմանամ ընդ այս, թէ զայն զոր զոր
դացոյց 'ի յարդանդի, զգայցէ ղցաւ վա՜ նո՜ր 'ի
յաղիսն իւր։ զի այնքան օտարէ սէրն մարդ առ
որդիս, մինչ զի գոլով որդին մեռեալ 'ի գե-
րեզմանի, նոքա ունին զնա կենդանի 'ի սիրտս իւր

եանց . զի է կարդ հասարակօրէն , զի նայ ոչ
եղև յոյժ սիրեցեալ Լիկեանս , միշտ թողու զբա-
զում վերաւորումն 'ի մահուան : Աղդ առնեմ
քեզ , զի անցուցանեմ զկեանս իմ յոյժ թշուա-
ռաբար , և թէպէտ ցուցանեմ զերեսս իմ ու-
բախ , սակայն զուրկէ սիրտ իմ 'ի յուրախութէ :
Եւ 'ի մէջ մարդկանց ուշիմից ունելով զքաւս սան
տիկս , և ցուցանելով զերեսս ուրախ , ոչ այլ
ինչէ , եթէ ոչ գոլ թաղեցեալ կենդանւոյն և
չքաւորեցեալ 'ի գերեզմանէ : Աղդ զորինչ մինչև
ցայժմ ասացի , թերևս թուիցի քեզ յոյժ բա-
զում , բայց երդնում քեզ 'ի դիսն անմահս , զի
են առաւել յոյժ բազումք այնք զորս զգամ մինչ
զի բազում անդամ թուի ինձ թէ կամիցիմ ձայ
թիլ . յաղագս ոչ համարձակելոյս ողբալ աչօք
զայն , զոր ունիմ ներկաեացեալ ներս 'ի սրտի :
Եւ ունիմ զպիտոյս հաղորդակցիլ ընդ քեզ
եկ ուրեմն 'ի բրիէտս , զի անդ խօսակցիցուք :
Արդ որովհետև զիքն բարի համարեցան տա-
նել զորդին իմ այնքան ցանկալի , կամիմ միթե-
բիլ ես քև , որ եսդ բարեկամ իմ կարի սիրե-
լի : Սակաւք ինչ աւուրք են յորս եկին առիա
դեսսանք 'ի Ռօդոսայ , որոց ետու զբազումս
երիվարաց իմոց : Եւ 'ի վերջնոյ սահմանացն 'ի
սպանիս բերին ինձ զերեզարս ութն , յորոց
չորսն առաքեցի քեզ , որք կամիլ զի եղեն այն
պիսիք , որոց ունիցիս զհաւանութիւն : Դիքն ի-
ցեն քեզ պահապանք , և ինձ ընդ Քաւաստինին
իմում տացեն զուրախութիւն ինչ :

Մարկոս յոյժ վերաւորեցեալ գրէ քեզ
ձեռամբ իւրով :

Առ Մերկեռիոս բնակիչն սամիոս, որ այժմ կոչի Բենեվենթոս։

Թուղթ Իններորդ.

Եսակաւոր բարեկամին իմոյ Մերկեռիոսի, և հին ընկերակցին իմոմ մի ոմն 'ի լը տեսից քոց, և մի 'ի սպասաւորաց իմոց հանդիպեցեալ միմեանց 'ի Կապուաորոց մինն տանէր զցանկութիւն իմ վասն քոյ, և մեսն բերէր զթուղթն քոյ վասն իմ։ Եթէ բարւոք նշմարիցես, տեսա նիցես զսիրտ իմ այնքան լցեալ հոգւովք, և տքնութիւբ, որպէս ես տեսի զթուղթն քո լցեալ բեռամբք դանդաւտանաց, և բողոքանաց, զոր առաքես ինձ, առ 'ի մխիթարել զիս 'ի ջերման տենդին իմոյ. որոյ սակս չնորհակալեմ զքէն։ Քանզի եկեալ հասին բարւոք դիտող ժամու, զի փարատումն 'ի երակացն իմոց զջերմութիւնս ախտից, և ուրախարար թուղթն քո 'ի հոգիս իմ, ամենեքեան միաւորեցեալ հասին 'ի միում վայրկան ժամու։ Իրաւի եթէ պատճառս այս մեայ ցէ 'ի ձեռս իմ, ոչ ջերմութիւն ախտից իմոց գայ, ոչ և մխիթարութիւն քո երթայցէ յինէն։ Բայց նայեաց 'ի թշուառութիս մարդկայինս, զի վատահիմ ընդ ձեռամբ իմով նովաձել զբաղում դաւառս, և տիրել թագաւորութեցն այլոց. բայց ոչ եմ կարող ապաքինել զջերմութիւն ախտի մոյ 'ի յոսկերս իմս։ Վաղուբեան դիտես, զի սիրեմք զմիմեանս, և երկարաւ ժամանակաւ ճանաչեմք։ Յաւուրն այնմիկ յորում բարեկամութիւն քո հաւատաց ինձ. Իսկոյն հաւատն իմ պարտաւորեցաւ, զի չարիքն քոյք իցէին իմք, և բարիքն իմք իցէին քոյք։ Զի ըստ առացելոյն Պղատոնի, Ընդ դոյ ճշմարիտ

բարեկամուն , ուր թէպէտ մարմինքն իցեն զա-
նազանք , սակայն սիրտքն ոչ իցեն եթէ ոչ մի ա-
ցեալ 'ի միասին, և այն սերն է քաջախեալ , նո-
ւրում իցէ այնքան տարակացութի սրտից , որ-
քան իցէ օտարութի մարմնոց : Ուրեմն նայեաց
տղաչեմ զքեզ , զի սերն մեր ոչ է ախտացեալ
թոյնիւք երախտամոռացութեա , և ոչ յիշողու-
թի՝ն մեր մահադեղեալ ընդ անոգուշութիւ :
Արդ ես գոլով այլ դու իցես ասա և դու այլ ես
իցեմ այդր : և այսու կերպիւ հեռակացութի՝ն
իմ ընդ ներկայութեա քում , և ներկայութի՝ն քո
ընդ հեռակացութեա իմում միշտ 'ի միասին դատ-
նին խոստակցելով , և այսպէս տեսցեն 'ի ծերա-
կուտին բազումք 'ի դրակցութիս երկուս բայց
'ի սերս ոչ առաւել եթէ ոչ մի , 'ի թղթաբերէ-
քում մէ ծանեայ զկսրուսան ստացուածոց քոց ,
և թղթոյն քով իմացայ զբողոքումն անցին քոյ
և պաճառն ասացին ինձ , թէ ընկղմեցաւ մի 'ի նաւ-
ուց քոց , և զբաստացեալք նաւավարքն քո առ 'ի
փրկել զկեանն իւրեանց , արկին զնչս քոյս
ի ծովն , Ուստի թուի ինձ , թէ նաւն թեթեւա-
նալով ըստ յինքեան , զբեռինն է բարց 'ի վերայ
քո , և ըստ խելաց իմոց , և ըստ զգացման քում ,
ոչ արարին ընկէցիկ զայնքան ինչս 'ի ծովն , զորքան
հոգս 'ի սիրտս քո . արդ ճանաչելով զորպիսութի՝ն
քարուց քոց նախ զիս զարտաւոր առնէի որոնել
զկապարն քոքան թէ զսիրտքս վա՛ էր զի կապարն
քո կապարեցեալ եղև 'ի իմում տեղւոջ խորոց անդն
դոց , և ազահութի՝ն քո սփռեցեալ տարածա-
նի ընդ ամ աշխարհ : Եթէ դու մեռանիցիս
այսօր , և բանայցեն զորովանն քո , ճշմարտեաւ
կարծեմ , թէ մանաւանդ դատանիցեն ընկղմ-
կեալ զսիրտդ ընդ կապարին 'ի ծովն , քան թէ
հենդանի կցեցեալ ընդ մարմնոյտ : Օ՛վ մերկե-
ռիս , դու ոչ ունիս զհիւանդուն լոջ ջերման ,
ոչ ունիմ ես , զի ջերմութի՝ն մարմնոյ , և
ցաւն հոգւոյ , զտեսնես կրկինս պատճառեինքեզ ,
և այնոքիսի հիւանդուն՝ն , ոչ 'ի յանկողինս եթէ

ոչ 'ի նաւի, ոչ ցամաքի այլ ծովու, ոչ ընդ բաժշ
կաց, այլ ընդ Փիլիսոփայից տամ քեզ զիսոր-
հուրդս բաժշկութեան։ Զի անդ 'ի ընկղմեցեալ
կեանն քո, ուր զետեղեցեալ կայ առաձիձն քո։
Մի ամբաստան լինիլ զբէն, զի եթէ դու ոչ
ունիս զկապարն, և զառաձիձն ընդ քեզ, նոքա
ունին զքեզ ընդ ինքեանս։ Որքանիցս անգամ
ապահովութիւն որոնեսցէ զագահն, որոնեսցէ
ագահն միանդամ զագահութիւն։ Ասացին ինձ,
թէ վասն այսորիկ ես դու այդքան տրտում։
քանզի զնասցն քոյ ոչ կարես հնարել զձար ինչ
ոչ գիտես, զի ուր ոչ գոյ ձար, անդ հարկէ 'ի
կիր արկանել զհամբերութիւն։ Ո՛վ մերկեռիոս,
այժմ գիտես զի յաւուր յորում կշռեցեր զինչս
քոյ հաւասարով երկբայական քարաժեռաց, և
զղցանկութիւս քոյ, ջուրցն բարձրագոյն ալեաց
և զկատակի ագահութիւն քո հոգմոցն ստիպո-
ղաց, և զկապարն քոյ ջուրցն այլոց և որքան վա-
ճառականքն քոյք ցանկացեալք երթային 'ի շա-
հուն, պարտէր քեզ զի այնքան ունիցէր հա-
ւաստի զկորուստն ընդդէմ քոց, և այսու կերպիւ
ընկղմիցեին ցանկութիւնքն իւրեանց, և զերծա-
նիցուր յոյսն քո։ Ոչ միշտ ածես թէ, Սո-
կրատէս Փիլիսոփայն ուսայց մեզ, ոչ բանիւք,
այլ գործով, որ ընկեց 'ի ծով, ոչ առձիլ, այլ
զսակի, ոչ սակաւ այլ բազում, ոչ այլոցն, այլ
զիւրան, ոչ դիպմամբ չարաբախտութեամբ այլ ու-
շիմութեամբ, ոչ մերկաւ ծովու, այլ խոհեմութեամբ
իւրով ասելով, ով պարտիցէ հարստութիւնք, կա-
միմ ընկղմել զձեզ, զի մի՛ դուք ընկղմիցէք զիս
Կարծեմ, զի եթէ դու յայնպիսում կացուցեալ զքեզ
տեսանիցէիր, լսէին 'ի քէն ասել թէ։ Ո՛հ քաղ
ցրագոյնք հարստութիւնք իմք, մանաւանդ կամիմ
ընկղմել զիս 'ի ծով յաւաջ քան թէ ես մնայցեմ
առանց ձեզ 'ի ցամաքի։ Ոչ համարձակեցաւ
իմաստասէրն այն հաւատալ ոսկոյն, իսկ դու
հաւատաս անագաւոյն, և առձիձն։ Արդ ար-
կէք

կէք զվիճակ 'ի միջի երկոցունցդ , Սօկրատէս 'ի յամէնս և դու 'ի Սամիայ , և այսու կարէք տեսանել , թէ ո՞ ոք 'ի ձէնջ աղաւեցաւ , կամ շա հեցաւ նա 'ի ցամաքէ տանելով զոսկին 'ի ծովն , և դու բերելով զկապարն 'ի ծովէ առ ցամաք : Եւ դիտեմ , զի հնագոյնք Հռօմէացիքն ասէին , թէ Սօկրատէս շահեցաւ , և ներկայք ազահքն ասասցեն , թէ դու : Բայց այն որ զայսցանէ թուի ինձ , են , զի դու զատուելով , և մեծարելով եղիցիս արհամարհեցեալ , և նա անարդելով , և ոչինչ համարելով , է յամենեցունց պատուեցեալ , և մեծարեցեալ : Ասայ ինձ լրտեսն քո , թէ իցես դու յոյժ որոուամ , և զձայնս արձակես 'ի դիշերի բողոքելով առ դիսն , և զարթուցանելով զդրացիսն , և գանգատելով 'ի բախտէն : Տանջէ զիս որտմութիւն քո , վասն զի է՝ բարեկամ միայնակեցութիւն և թշնամի ընկերակցութիւն , նա և ժառանգ յուսահատութիւն : Սեղմի ես զի արձակես զձայնս 'ի դիշերի , որ է նշան խելագարութիւն , որ գոլով ծածկեցեալ բոլոր աշխարհ խաւարմամբ մթութիւն , դու միայն բացայայտես զսիրտդ ձայնիւ աղաղակի : Տրտմեցուցանէ զիս անհամբերութիւնն քոյ : Քանզի բողոքես առ դիսն , զի եթէ զիր ինչ աւուն 'ի քէն տեսանելով զքեզ փքացեալ , և բարձրացեալ , դարձուցցես զայնս քեզ , առ 'ի տեսանել զքեզ այժմ խոնարհեալ , և վայր անկեալ : Տառապիմ ես , զի արթնացուցանես զդրացիս քոյս . քանզի , եթէ առատութիւն ընչից քոց պատճառէաց նոցա զնախանձ , և զոխակալութիւն , այժմ համբերութիւն քո շարժէ զնոսա 'ի ցաւակցութիւն , Ցաւիմ ես , զի չանդատես դու զբախտէն որ գոլով նա ճանաչեցեալ 'ի յանքանեաց , ոչ ըմբերէ զոլ վատահամբաւեցեալ 'ի միոյ ջէ : Օվ մերկեռիոս , այժմ յիշես , զի ընդ որում ամենեքեան առնեն զդաշինս խաղաղութիւն ելանես դու ընդդէմ և դռգռես զնա 'ի մարտնչիլ մեք ընկենումք զչէնս 'ի ձեռաց և զկապարձն աղեղան իսկ դու առնուս 'ի ձեռդ զգեղարդն : Ոչ գտար

դու

դու 'ի դաշտի մենամարտութեան, և կամիս վայելել զաղթականն մարտին։ Ամենեքեան անկեալք կան և սահեալք, և դու միայն յանդգնեալ կամիս անցանել ապահովապէս, և ընդդէմ բախտին զքեզ կամիս դիմադրել։ Ոչ դիտես, զի սայ ընդ բարձրացեալ պարիսպս մարանցն, և զայնս որք կերեալք են 'ի ցեցից պաշտպանելով ջատագովէ, զանապատն առնէ զլէն մարդաբնակ, զլէն տեղիս, և զմարդաբնակս առնէ զաւերակ 'ի թշնամեաց առնէ զբարեկամս, և զբարեկամս առնէ թշնամիս, զաղթօղն կողոպտէ, և զաղթեցեալսն յաղթականաւ պատէ։ Զդաւաճան նենգադործս առնէ հաւատարիմս, և զհաւատարիմսն առնէ երկչայելիս և կասկածելիս։ Եւ վերջապէս սայ ինքնէ որ վրդովէ զթագաւորութիւն, պարոյր զզօրս պատերազմի, ցածուցանէ զթագաւորս, և բարձրացուցանէ զբռնաւորս, և զանողորմս։ սայ զկեանս մեռելոց, և զմահ կենդանեաց։ Տայ զհամբաւ դերասնոչակ միոյն, և առնէ վատահամաւ զմիւսն։ իսկ դու իշխես դիմադրել զքեզ ընդ նմա։ Ոչ մոածեալ յիշես զտաղաչափ ոտանաւորն այն, զոր թագաւորն Լաչէդեմոնացւոց ուներ կախեցեալ զդրանէ պալատին իւրոյ, որ ասէր։ Այսպէս սուն աւանդապահ հիցն բախտին։ իրաւի են բանք դերագոյնք, և ոչ 'ի դերագոյն իմացականութիւնք շարադրեցեալ բարւոք ճանաչէր սայ զորպիսութիւն բարուցն բախտին քան զոր ճանաչես դու, ուրեմն ուներ զինքն որպէս աւանդապահ և ոչ որպէս ժառանգող։ Ուստի մինչ կորուսանէր զկիր ինչ որոշ դու, համարէր թէ վճարէր զայն զոր այլոց պարտէր, և ոչ թէ առնէին զիւրն 'ի յինքենէ ուրեմն զիրաւունս ունի հաւատարմութիւն իւր, առ 'ի վճարանել ընդ դաւաճանութիւն, և անհաւատարմութիւն քոյ։ Քանզի առնելով զքեզ սաւանդապահ, ապստամբեալ 'ի նմանէ, արարեր զքեզ ժառանգ, և տէր այնր իրին, որ ոչ էր քո։ Կա որ կենդանի է ժառանգէ զինչս մեռեալ

ուելոյն և ոչ թէ մեռեալն ժառանգէ զինչս կենդանոյն, ուրեմն մեռանին ամենեքեան և նա մնալով կենդանի ժառանգէ զամենեսեան իկեանս իւր։ Արդ կամիս առնուլ զվրէժ 'ի նմանէ, որ յնդաքան ետ քեզ պատիժ, ուրեմն ընկալ զխորհուրդս այս։ Լեր բարեկամ թշնամոյն իւրոյ, որպէս դիրս գերեզմանին, զի թաղաւորիցէ նա և հրամայէ 'ի վերս նոցա որք ծնանին, և ոչ 'ի վերայ նոցա որք մեռանին։ Որքան տէր եղեն և տիրեցին հոգեք և վարանմունք 'ի սիրտս քոյ, այն քան լինելոցքեն անդ որդունքն 'ի մէջ մարմնոյ քոյ։ Զինչ մեծագոյն յաղթութի կամիս քան զայս։ զի յաղթօղն ամենից կենդանեաց եղիցի յաղթեցեալ 'ի քէն միայնոյդ 'ի ձեռս մահուան։ Ասեմ քեզ զբան մի։ Չի մի միայն նայ որ ամրացեալ, և դիակեցեալէ 'ի բերթն գերեզմանի, է ապահովեալ և անասյթեալ 'ի յերթ, և եկցուցէ այսր կենցաղոյս։ Ասայ ինձ թղթաբերն քո, թէ յայսմիկ ամաւան կամիս գալ 'ի Հռոմ, և այժմոյս որ ձմեռնէ, կամիս նաւել 'ի յԱղէքսանդրիայ։ Ով մերկեռիոս իմ, մինչ աւարտին կեանն քո, առնէ ակնզն ուգտութիւն քո։ Գոտեր զերկուս քաղաքս յաշխարհի այնքան 'ի վերքան զչափն այսինքն Հռոմ գլուխ մոլեսիրաց, և զԱղէքսանդրիա աւարտուումն առաքինեաց։ Այլ ասեմ զեզ վաճառականութիւնն քո որ 'ի Հռոմ բառնաս զմարմնոտ մոլութեամբ, և 'ի յԱղէքսանդրիայ բառնաս զսիրտդ հոգւովք աշխարհականաց։ Ի յօրէնս բարեաց երդնում քեզ, զի առաւել զքաղց, և զծարաւ պատճառէ քեզ զայն զոր թողուս, քան թէ ընդ փորձանաց այն, զոր բերես։ Ոչ յիշես դու, և ոչ զմտաւ ածես, թէ ահա ձմեռնէ, և անցանելոցես ընդ ծով, զորմէ եթէ նաւավարքն ոչ ատեն զնս, ապահովեալ խաղաղութիւնն հողմոյ, և դոլն խաղաղ յերեսս ծովու հսկումն է մրրկաց մեծագոյնից հողմոց։ Թերևս ասասցես, թէ նաւքն քոյք երթալոցք են անկասկածք, զի են թափուրք, քայց ես հա-

սատամ, թէ երթիցեն առաւել բեռնեցեալք ագահութեամբք քան թէ դոյցեն բեռնեցեալք կերպասաւ։ Ո՛հ թէ որքան բարեգոյն փոխարկումն լինէր զի ագահութեն Իտալիու փոխարկիցէին 'ի կերպասս Աղէքսանդրիու։ Եմ ես հաւատով, զի կերպասն քո կարէ լինիլ բեռն նաւի միոյ և ագահութիւնն մեր բոլորխուռմք մի նաւից։ Մեծէ ագահութիւնն, զոր ոչ ամենեքեանքն աշխարհի կարէ նուաճել ոչ երկիւղն մահու կարողէ կասել, ոչ և բանականութիւնն ընդ նմա համաձայնի։ Ցայսասեմ վասն զի ո՞ք 'ի յայնպիսում ժամանակի մատուցանէ զինքն 'ի վտանգս, կամ յաւելուն 'ի նմա ագահութիւնքն կամ նուազին խոհեմութիւնքն ուրեմն ես ոչ ըզդամ զայլ պատճառանս վասն վճարումն տալոյ զիս, և զպատճառանս յօգելոյ քեզ, եթէ ոչ զի ես այնքան ճանաչեցեալ 'ի ծովու, որքան ան ճանաչ 'ի դիւցն, և են զի ջուրքն անկայունք, և անհաստատք ճանաչեն զերուս անհանգիստս, և զքարաժառս կարծրս ծածկեցեալս ջուրքք ըզմարդն անժուժկալ, և հողմ մի ճանաչէ զայլ հողմն։ Արդ սաս ինձ աղաչեմ զքեզ, զինչ երթաս 'ի որոնել, և չուես 'ի ծովածոցն Աքսինու որոնել զառՀիՀն քո։ Կայեաց ուրեմն մի՛ գուցէ զի մոռանելով դու առնուլ 'ի ձկանց զկապարն կարծրագոյն, թողցես ընդ նոսա ըզմարմինն քո փափկագոյն, Երթաս արդեօք որոնել զստածուածս դնելով զկեանն քո 'ի վտանգս, առ 'ի թողուլ զհամբաւս փարթամութեան 'ի ժամու մահուան, և ոչ դիտես, զի այն պիսի համբաւն է որպէս ծիսանելի անուշահոտ վասն այնպիսւոյն, որոյ գլուխն պաղեցեալիցէ առ 'ի ոչ հոտոտել ամենևին։ Պաստան վասն անպէտայից։ Արիւսակ առաւօտու վասն կուրացելոց, և ձայն քաղցրալուր վասն խլից։ Արդ կամիմ բացայայտել քեզ զորոգայթ մի, ծածկեցեալ, նախ քան զանկանիլն քո 'ի մէջ նորա։ Դու որոնես զվարանումն հոգացողութեան վասն

քո, զնախանձ վասն դրացեաց քոց, խոյթիչ վասն թշնամեաց քոց. արթնացուցիչ վասն աւազակաց, զվտանգս վասն մարմնոյ քոյ, զվնասակարութիւն վասն համբաւոյ քոյ, զաւարտումն կենաց քոց, զզարհուրումն վասն բարեկամաց քոց, զվէշն վասն որդւոց քոյ, զանէծս վասն ժառանգաց քոց։ Արդ ջերմ ախտն վաղվաղելով աւիս, էառ զգրիչն 'ի ձեռաց իմոց զի մի՛ երկարիցէի, և առաւել քառատինն իմ, ողջունէ զքեզ, որև յոյժ տանջի վասն կորստեան ընչից քոց։ Ահա առաքեցի քեզ զհրամանագիր մի, զի տացեն քեզ զնաւ մի, որպէս զի մի՛ կորուսանիցես միանգամայն զնեալդ։ Եթէ երթիցես 'ի Աղէքսանդրիա, մի՛ դայցես 'ի Ռոգոս, զի մի՛ անկանիցիս 'ի ձեռս աւազակաց նոքայ։ Դիւքն եղիցին պահապանք քոյք, և քեզ։ և ինձ տացեն զկեանս բարիս ընդ Մերայնոցն, և զհամբաւս բարիս օտարացն։

Ա-

Առ Անթիոքոնոս, փիլիթարելով զնա 'ի գի-պուածոյ միում յոյժ տրտմականի։

Թուղթ Տասներորդ։

ԳԱրկոս նախարար Հռոմայեցի վարպետ, և հոգաբարձու բովանդակիչ Կայսերութեան, առ քեզ Անթիոքոնոս աքսորեցեալդ առաքէ զողջոյն 'ի կողմանէ իւրմէ, և զյուս բարի 'ի խորհրդարանէ ծերակուտին։ Արդ գոլով ես 'ի դաշտին կամպանիու պատմեցին ինձ զարտմալի գիպուածն քո, և այժմ 'ի տաճարին Ջուպիթերի եռուն ինձ զաւաղելի թուղթն քո։ Զգամ ես այնքան զցաւն քո, և վիրաւորեն զիս այնքան վերքն քոյք, մինչ զի ոչ դու ես հեռացեալ 'ի դրացեաց քոց, այսպէս, և ես եմ աքսորեցեալ 'ի զգացութեաց իմոց, և ողբամ այժմ վասն քո զոր դու ողբացեր վասն իմ 'ի վշտացութեան իմում, և լացամ վա՜ քո զոր լացացեր դու վա՜ իմ։ Քանզի բարեկամաց տաւտալելոց պարտիմք հասանիլ 'ի թիկունս օգնականն ընելով անձանց իւրեանց, և փիլիթարութիւն և զցաւակցութիւն ունիլ սրտից իւրեանց։ 'Ի յօրէնս բարեաց երգնում քեզ, Անթիոքոնոս իմ, զի 'ի յայսմ իրս կութեամբ ոչ եղէ ապերախտ 'ի ժամանակի անցեալում, և ոչ խիստ 'ի զգալն 'ի ներկայումս։ Յորժամ ընթերցայ զտեղն կարդաց թղթոյն քոյ, ոչ կարացի ունիլ զձեռս առանց դողալոյ, զերեսս առանց այլագունելոյ, ոչ զբիրսս առանց հառաչելոյ, ոչևս զաչս առանց արտասուելոյ, ասեմանելով, թէ են յոյժ սակաւ զրիս առաքեցեր 'ի խնչրել, և ես եմ յոյժ սակաւագոյն վասն ոչ կարելոյ առաքել քեզ, Մեծագոյն վատաբախտութիւն 'ի մէջ ձախորդութեանց, են, մինչ մարդ ոք զսա-

զսակաւ կարէ, և զբաղում կամի, և զմեծագոյն բարեբախտութիւն 'ի մէջ աջողութեց ամենից են մինչ այր ոչ'կամի զսակաւ և կարէ բաղում։ Յայս միկ տեսանի, եթէ բարեկամութիւն մեր իցէ դրեցեալ 'ի մուռացումն ըստ այնմ կերպի, զի վտանգաւորեցեր դու 'ի յիս մի անդամ զայն, զոր ես հաւատացի քեզ բազում անդամ։ Քարոզք գիտես, զի տղայութիւն իմ տղայական զամն բեռնաթափ առնէր 'ի սրտէ իմմէ, և բեռնաւորէր 'ի կարծիս խելաց քոց, ուրեմն աբդար իմմէ, զի աշխատակիր վիշտս քոյ այժմ արտահանեցեալ 'ի սրտէ քումմէ, բառնայցես 'ի սրտի իմում, և այսու կերպիս տեսանիցես դու, և տեսանիցեն այլք։ լուիցես դու և լուիցեն այլք, թէ ոչ են այնքան կարճացեալք ձեռքն իմք, առ'ի ճարակ լինիլ քեզ, և որքան երկայնացեալք ընթանան արտասուքն իմք առ'ի ողբալ զվնասն քո։ Արդ եկեսցուք այժմ առ դիպուածս ձախորդութիւնքդ։ Չեկուցանես ինձ, թէ զիքն բարձին 'ի քէն զի դուստրն քո, և այլանդակ դաղանն, կամ երկրաշարժութիւն փլոյց զտունն քո, և ծերակուտն ետ ընդդէմ քեզ զվճիռ մի, զի հատցեն 'ի քէն զամ ատացուածս քոյ, և աքսորեցին զանձն քո։ Այնպէս դիքն իցեն ընդիս հեղաբարուք, որպէս եղեն ընդ քեզ խստաբարուք։ Ունիմ զայնքան մեծագոյն զարհուրանս յղացեալ 'ի հոգւոջ իմում ասա, որպէս զկորուստն զոր դու և կինն քո զգացեալէք այդր։ Արդ եթէ ոչ գիտես զպատճառն ես ասացից քեզ։ Ես ոչ զարհուրիմ 'ի յայլանդակ դաղանէն զորս զարհուրեցուց զմարդիք և ոչ երկրաշարժութէն, որ փլոյց զտունն քո, և ոչ 'ի հրոյն զորս այրեաց զծովագողսն, ոչ և 'ի գիցն, որք խոռոտանան զայնպիսիս իրս։ այլ զարհուրիմ 'ի յիս զի դոն այնքան չարութիք 'ի քեզ, և նենգութիք 'ի դրացիս քո, որոյ յաղագաւ արդարապէս արդիւնաւորեցար զայնքան սարսափելի, և այնքան զարհուրելի պատիժս։ Հաւատա ինձ

զոր

զեր մի, ով Անթիդօնոս, և մի՛ երկչայիցես։ Զի եթէ մարդիկք ապրիցէին որպէս մարդիկք, և ոչ արտահեստիցէին 'ի պատուիրանացն, և 'ի եղեալ պայմանէ ստեղծողին իւրեանց բնականի, միշտ դիւքն առնիցէին որպէս դիք, և ոչ թոյլ տային դող 'ի վր մեր այսպիսի սատանիկ պատուհաս 'ի ձեռս այլանդակ դազանաց։ Իրաւի արդարք են և արդարագոյնք, զի պատժիցեն զա նատունս ընդ այլով անասնով, և այլանդակք դազանս ընդ այլով այլադէմ դազանաւ, և նոքա որք վշտացուցանեն օտարակերպ մեղք, վիրաւորեսցին օտարակերպ տանջանօք, և պատժօք։ Ասեմ քեզ զբան մի, որ երևիցի քեզ նորադոյն, որ են, զի առաւել մեղանչեն չարքն վատատամ բաւութիւն զոր դնեն 'ի վր դիցն վա պատժոյն զոր տան նոցա, քան թէ այլ չարութիւնքն, զորս գործեն ընդդէմ նոցա։ Զի որպէս դիքն գոլով բնականաբար դթածք, և առ գթութիւն ունին միշտ զքաղց, և մեք գոլով միշտ չարք, և չարութիւք, և անիրաւ գործքն մեր արդիւնաւորելով զպատիժս անիրաւագոյնս։ Տխմարքն կոչեն զդիսն անգոյնք, զի տեսանեն զպատիժս իւրեանց 'ի կիրարկեցեալ յայտնապէս, և ոչ տեսանեն զչարութիւս մեր զորս գործեմք 'ի գաղտնի։ Ուրեմն զերաւունս ունին դիքն գանգատելոյ 'ի մէնք, զի մենք մեղք մերովք մեղանչեմք, և նոքա վասն մեր որպէս անգոյնք վատատամբաւեցեալք լինին. են օրէնք անսղալելի, զի դիքն գթածք ոչ երբեք ելանեն 'ի չափէ անչափ պատժօք, եթէ մարդիկք մոլեսերք նախ ինքեանք ոչ ելանիցեն 'ի չափաւորութէ չափազանց մեղքն իւրեանց։ 'Ի ժամանակի. յորում Կամին արտաքսեցաւ 'ի կայսրայ, և գալեցիք տիրէին Հռոմայ, Լուտիոս Կլարիոն բգեշնն եղև առաքեցեալ 'ի ծերակուտէն առ դաքիրայն տաճարին Աղոլոնի, առ'ի խնդրել զնորհուրդ, թէ զինչ էր առնելոց ժողովուրդն Հռոմայ, առ'ի ազատել 'ի յայնքան մեծագոյն

վասանդէ, և էկաց քդեշին 'ի մէջ տաճարին զաւ-
ուրս 40 'ի ծունկս անկեալ առաջի Աստուծոյն մա-
տուցանելով զշնորհս յոյժ օտարալուրս հեղլով
զարտասուս իւր, և ոչ երբէք կարողացաւ առ-
նուլ զպատասխանին, և այսպէս ոչ սակաւ նա-
խատանաւ դարձաւ յետս 'ի Հռոմ։ Յայնժամ
զնորհուրդ արարեալ սրբազան ծերակուտն,
առաջադրեաց զի երթիցէին յիւրաքանչիւր տա-
ճարաց զերկակի քրմապետք, որք գնացեալք,
անկեալք երկիրպադին պատկերին Աստուծոյն,
առ յորս ասաց Աստուծոյն զբանս այս։ Այսպէս
որպէս ակիզբն մի համապատասխանէ այլում
սկզբան, և միջակ մի այլում միջակի. մի՛ զարմա-
նայք, եթէ նոցա որք յոյժ սուրբմամբ խնդրե-
ցին, ես ևս ցուցանիցեմ զիս յոյժ յամառեալ
'ի պատասխանելն։ Դուք Հռոմէացիքդ, յորոց
մինչ պակասին օգնութիւնքն մարդկային, յայնժամ
դայք խնդրել 'ի դիցն։ վասն որոյ մեք ևս ոչ կա-
միմք տալ զբարի խորհուրդս ձեզ յոյժամ ունկիր
զպիտոյս, ոչ և խոստանամք, զի մարդիկք օգ-
նիցեն ձեզ յոյժամ երթայք խնդրել 'ի նոցանէ։
Այլեցարուք բարեկամք. ոչ վասն զոհիցն զորս
այժմ մատուցանէք ինձ, այլ վասն բարեկամու-
թեան, զոր ընդ նախնեաց ձերոց ունէի յանցե-
լեալ ժամանակնում, կամիմ բացայայտել ձեզ
զնորհուրդ մի դաղտնի։ Ասացէք առ Հռոմէա-
ցիսն 'ի կողմանէ իմմէ զեօթն բանս այսոսիկ, նախ
թէ ոչ ոք 'ի մարդկանէ է թող երբէք զդիսն,
վասն այլ մարդոյ ուրուք, զոր դիքն ոչ լքիցէին
զնա 'ի մեծի հարկաւորութեան նորա։ Երկրորդ,
թէ առաւել օգուտ նոցա ունիլ 'ի կողմն իւր-
եանց զմի 'ի դիցն անմահից, որք են 'ի յերկինս,
քան թէ ունիլ զամ մարդիկս մահկանացուս,
որք են 'ի յերերիր։ Երրորդ, զգոյշ լիցին 'ի զայրա-
ցուցանելոյ զդիսն։ Քանզի առաւել վնասին
բարկութիւնք միոյ դիոյ, քանթէ 'ի թշնամութիւն
համայնից մարդկանց։ Չորրորդ, թէ ոչ երբէք
դիքն մոռանան զմարդիկս մի անդամ, եթէ ոչ
նախ

նախ մարդիկք մուռանայցեն զքիսն տասն հա-
հազար անդամ։ Հինգերորդ. ոչ երբեք խոս-
տանան դիքն, թէ մարդ ոք լիցի հալածեցեալ
'ի չարէ ուստիքէ, եթէ ոչ նախ լիցի հալածեալ նա
զբարի ոք երբեմն, և վասն այսորիկ այժմ ե-
ղեալք էք հալածեցեալք 'ի դալիցաւոց օտարա-
կանաց, զի դուք հալածեալք աքսորեցիք զկա-
միլն քնական բնութենակիցն ձեր։ Վեցերորդ.
եթէ մարդիկք կամին ունիլ զքիսն նպաստաւո-
րիչ, և օգնական իւրեանց 'ի ժամանակի պա-
տերազմի, պարտին ծառայել նոցա նախկնապ
'ի ժամանակի խաղաղութեան։ Եօթներորդ. ոչ
երբեք տան զհարուածս, և առաքեն զպատիժս
դիքն գթածք 'ի վերայ գավառի, կամ թագա-
ւորութեան ուրուք, եթէ ոչ յաղագս յոյժ չափա-
զանց չարութեանց գործեցելոց 'ինոյն գավառի, և
թագաւորութեան, և առաւել ասացէք ծերակու-
տին, թէ ես ոչ կամեցայ պատասխանել Լու-
չիոսի Կլաբիոնին, զի զայնպիսի չարաճճիկ
մարդն, ոչ էր պարտ առաքել 'ի դեսպանութի-
ան պիսի իւրեանց Ապոլոն։ Առէք յինէն Հաս
մէացիք զայս խորհուրդս, և և պահեցէք զայս
բարուրք 'ի միտս ձեր, յորում եթէ զչար ինչ
գոանիցէք, մի և հարցանիցէք կամ առնուցուք
յինէն զնորհուրդս յայլում ժամանակի։ Ա-
հրելտակութիւն զոր առաքէք առ յոտարականն,
ընտրեցէք առաւել ճոխաբանս, և ճարտասանս։
'Ի համբաւաւոր ծերակուտն, և խորհրդարանն
ձեր դիք զմարդիկս հանճարեղագոյնս։ Չի-
նուորս ձեր յանձնեցէք զօրագլխի հզօրագոյնն
զի։ Ա-դիս ձեր առաքեցէք միշտ զմարդիկս
առաւել անմեղագոյնս, զի ոչ երբեք դիքն զի-
ջուցանեն զբարկութիւն իւրեանց ընդդէմ մարդ
կանց անարդարից, եթէ ոչ նոքա որք աղերսեն
իցեն յոյժ սրբակացք, և անմեղք։ Քանզի ա-
նօթ մի աղտեղի ոչ լուանի առանց ջրոյ մաքրե
ցելոյ, և 'ի ձեռաց աղտեղից ոչ ելանէ անօթ
մաքուր, Չի են դիքն այնքան արդարք, մինչ զի

թէպէտ խնդրիցեն ՝ի նոցանէ զիրս արդարս ;
ոչ կամին տալ , եթէ ոչ ձեռամբ արդարոց
արանց ։ Վերջապէս ասեմ ձեզ , զի եթէ կա-
միք արտաքսել զդալեացիս թշնամիսն երկրին
ձերոյ , արտաքսեցէք նախկնապէս զկիրս չարու-
թեան ՝ի սրտից ձերոց, զայս ունիցիք ՝ի հաւատի զի
ոչ երբեք եղցեն թշնամիքն ձեր խաղիս , եթէ
ոչ կամիցն ընդ ամենից աքսորեցելոց անմեղից
Դաւանայցէ ՝ի Հռօմ ։ Իրաւի Զպատերազմն
ասատիկս , զորս խոստանան դիքն գթածք ՝ի
ժամանակս ներկայս , ոչ այլ ինչ են , եթէ ոչ
պատիժ , և հարուած մի անցելոց մեղաց։ Քանզի
զոր չարքն արարին անմեղաց ՝ի բազում աւուրս
յետ այնորիկ ՝ի ձեռս այլոց չարադոյնից վնա-
րեսցեն յաւուր միում ։ Զայս պատասխանիս
եւ Ապօղոն քրմապետացն որք գնացին առ նա ՝ի
Հռօմայ ։ որոց իրակուելն եդ զայնքան զար-
մացումն ՝ի ծերակուտն , որպէս անդ ՝ի Սիկի-
լիա վա՜ ձեր եդ գազանն այն սլանդակ ։ Զայս
ընթերցայ ես ՝ի դիրս պատասխանատուութեան
դիցն , որք եդեալք կան ՝ի Կամփիտօլիումն , որ
ընթեռնանիւր յառաջնումն աւուրն ամենից ամ-
սոց ՝ի խորհրդարանին ՝ի ծերակուտէ միոյ տա-
ջի ամենից ծերակուտիցն խորհրդարանին ։ Ու-
բեմն զնոսա թուին քեզ բարեկամ որպէս խոսե-
ցաւ դին Ապօղոն ։ Արդ եթէ ոչ հաւատաս ինձ
բարեկամին քում , դոնեա հաւատայ Ապօնոզի-
որ է դին քոյ ով Անթիգօնոս , նայեաց նայեաց
թէ որքան թեթեւաբարք են զիմացուածս մարդ-
կանց ունայնից ՝ի յիմացուածոց դիցն որք ՝են
յոյժ գազանի, և ուր խօսին նք ամենեքեան պար-
տին լռել ։ Քանզի առաւել արժէն խորհուրդ
մի տրեցեալ ՝ի դիցն կատականօք քան զամ խոր-
հուրդս մարդկան տուեցեալս , հաւատեաւ ։
Եւ ուստի կարծես դալն սորին ես ասացիցքեզ ։
Են դիքն այնքան բարիք ամ բարութիք , և
այնքան իմաստուն ք ամ իմաստութիք ։ Եւ մեք
ենք այնքան չարք ամ չարութիք , և այնքան
յի-

Յիմարեալք եմ՝ յիմարութիւն, մինչ զի նոքա թէ պէտ և կամաւորապէս կամիցին սղալլել, շահին անսղալապէս վասն զի զոր ոչն իւրեանց իսկ մեք կամելով շահիլ, սղալիմք վասն մարդ դոչոյն մերոյ։ Յայսմիկ բարւոք տեսանի։ Թէ որքան անընդելի անասուն իցէ մարդն, և որքան յամառեալք են 'ի կամս իւրեանց հանմայնք մահկանացուք, զի մանաւանդ կամին կորնչիլ հեռուելով յատուկ կամաց իւրեանց, և կարծեաց, քանզի թէ շահիլ խրատով այլոց, և որ է չարաչոյն քան զայլ եմ, է այս, զի վասն չարութեան այնքան վատանդաւորեցեալք, մինչ զի ոչ գոյ սանձ այնպիսի, որ սանձահարիցէ, և վասն բարութեան են այնքան երկչոտք, մինչ զի ոչ գոյ այնպիսի դաւազան, որով գանեցեալք մղիցին յառաջ։ բո՛ղոք ես դու զդիցն գլխածիլ, բողոք ես զսրբոյն ծերակուտն բողոքես զբանտն աղմամբիրեթ։ Այսոքիկ են երեք իրք, որոց իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ միով քարաձգութեամբ կարողէ բառնալ 'ի քէն զկեանդ և թաղել զհամբաւգոպա որքան առաւել ևս զի ձգեն իւրաքանչիւր ոք յատուկ 'ի կողմանէ իւրեանց, և քարկոծեն այժմ զքեզ երեքեանքն 'ի միասին։ Զմեծագոյն ոսոխս արարեր քեզ հակառակ, և ոչ գիտեմ թէ որքան իցէ կարն և զօրութիւն քո։ Կամիմ պատմել քեզ զզօրեղութիւս ոմանց, և զսիժեղութիւս զորս ունեցան արք հնագոյնք անցեալսմ ժամանակի, և նոքօք տեսցուք, զոր ունէք 'ի ներկայ ժամանակիս։ Ընկերն Ընկիսոլիոնի նասիկայ կալաւ զօձ մի 'ի լերինն եգիպտոսի, զոր ապանանելով հանեաց զմորթն, և չափեալ զայն 'ի դաշտին մարցիու, և ունէր մորթն այն զերկայնութիւն հարիւր, և քսան ոտից։ Հերքուլոս թէ բացին փորձառնելով զսիժն իւր ընդ վիշապի, որոյ կարելով զդլուխն միոյն բուսան եօթն դլուխք։ Միլոնն հսկայ, կրթելով զսիժեղութիւն իւր, ունէր զայս սովորութիւս, զի յիրաքանչիւրում աւուր զցուլ մի վայրի ընթանա

լով հեաթոռս զկնի նորա , որոց կալեալ դնէր զնայ 'ի վերայ ուսուց իւրոց , և ելանէր 'ի հրապարակս քաղաքին առնելով զմեծագոյն դրաւականս ի թիւնս առ 'ի յինթանալ մերկ ընդ նմայ և որ առաւել զարմանալի է , երայսն զի միով բանիմբ բանից իւրոց ապանանէր զցուրն , և 'ինքն ում աւուր ուտէր զբովանդակն : 'Ի լերինն Օլիմբիոս Սերաստոս հսկայն տղգաւ յոյն , դ՝ ոտէ մարտելով առաւել քան ընդ յիսուն հազար արանց , և ոչ ոք կարաց տալ զնա 'ի գետին , Եւ եթէ Հուստերոս ոչ խաբէ զմեզ , խօսելով զնկայեա յայսմանէ այնքան հուչակեցելոյ 'ի յայս գործոյ , այնքան համբաւունակի , ասէ թէ մինչև 'ի յայս ի երեթային տղգք և ապինք յամենից կողմանց աշխարհի , և գոսէ մարտելով ընդ նոսա 'ի լերինն Օլիմբիոս , և յաղթէր զամենեսեան ուստի ասասուսա հեռուեցաւ թիւն համարելոյ զհամրս տարոջն Օլիմբիոս : 'Ի յերկրորդ պատերազմի Ճակատամարտին տրտուսմ կարթաքայ , 'ի մէջ այլոց գերեցելոց , բերեալ Ըշկիպիոն զգերի մի մաւրիտանացի որ էր այր յոյժ ուժեղ , և գաղանակերպ , և հուչակելով 'ի Հռոմ զտեսարան ինչ մեծահուչակ ուր արշաւէին անհամարք անասունք և գազանք , գերին այն թաւեալ 'ի մէջ հրապարակին , էսպան գերկուս ինձա և ըմբշամարտեցաւ ընդ առիւծոյ միոյ բազում կէտս , և վերջապէս թէպէտ վիրաւորեցաւ եղունգաւ թաթից նորա , սակայն խեղդեաց զառիւծն ձեռամբ իւրով , որ եղև իրն յոյժ սակայկու առ 'ի տեսանել , և թուին անհաւատալի այժմ առ 'ի պատմել : Յամի 420. հիմնադրութեան Հռոմայ , Կուրիոս դէնթատոս սպարապետն յոյժ անուանի , գոլով 'ի տարէնթու ընդդէմ Փիւռոս թագաւորին Էփիրոտաց , սա եղև նախկինն , որ էբեր զչորս փիղս 'ի Հռոմ յաւուրն յաղթանակին իւրոյ , և գոլով պատրաստեցեալ թէատրոն մի պարունակիչ յինքեան 30 հազար մարդիկս առ 'ի տեսանել զարշաւուն փղից և բեկեալ

տա-

տախակէն Թէատրոնին 'ի դիպող ժամու, և ես պան առաւելքան զհինգ հաղար արա, հանդիպեալ զի այր մի Նումիդիանացի կալով անդ, պահ-պանեաց 'ի վերայ ուսուց իւրոց զմի կողմն տախ-տակացն որ պարուանակէր աւելի քան զերեք հա-րիւր մարդիկս, և այսպէս զերծոյց զինքն, և զերեք հարիւր մարդիկս 'ի վտանգէ անտի։ Գայիոս Կայսրն դոլով տղայ տակաւին, և փախ ելեալ 'ի բարկութէն Սիլլայից։ Քանզի ինքն Մա-րանէր դոլով 'ի մէջ կղզւոյն Ռոդոսի առ 'ի շա-հել զապրելիս կենաց իւրոց, առնէր զհրաւի-րումն առ 'ի արշաւեցուցանել զերիվարս, և ինքն կապելով զձեռս իւր յետոյս իւր թոյլ ասէր արշաւել զերիվարն որոյ վերայ հեծեալէր ինքն, և մինչ կամէր կանգնեցուց անել զերիվարն, էր իր զարմանալի 'ի տեսանել որպէս պատմեն տարեց ուղքն այնքան զնդապէս մաձէր ծնկամբ իւրով որպէս թէ քարշիցէր ոք զպախոյցն, և այնպէս մնայր անշարժ երիվարն։ Յամի 15 երորդի, յո-րում պարապեան կարթադիանացւոց էմուտ 'ի Տուա-լիա, հնադոյնք նախնիքն մերք առաքեցին առ Թադաւորութիւնն Քրիժիու, առ 'ի կոչել զբերէ չինթիա մայրն ամենից դիցն, և բերեալ զնա առ նաւահանգիստն Օստիու, և նաւն այն յո-րում գայր խրեցեալ եղև 'ի յաւազուտ տեղ-ւոջ քաջատրութեամբ չորից աւուրց, ոչ կա-րացին շարժել արք երեսուն հազարք, որք գային զինաւորեցեալք 'ի նմայ։ Եւ հանդիպեալ զի կոյս մի վէստալին կապելով զոտին իւր 'ի նաւն այն, և այնքան զիւրատպես էհան 'ի ցա-մաք որպէս թէ ոք հանիցէր զթել մի 'ի մանա-ծէ։ Եւ որպէս զի հաւատայցեսք զայնս զոր լուաք զեղելոցն 'ի յանցեալս ժամանակի, տե-սանեսք այժմ 'ի ժամանակի ներկայիս։ Զիշումն ածեմ, զի Աֆրիանոս տէրն իմ դոլով 'ի դա-ցիս, հրաշակեցին 'ի Հռօմ զտեսարան մի, ուր կային դազանք առաւելքան զերկու հազար։ Իսկ զորոց տեսաք զեր մի առաւել նշանակելի եղև։

Չի ձիապահ մի 'ի դանուբ դեռոյն, որ մոռալ երիվարաւ 'ի տեսարանն այնքան վստահացեալ, մինչ զի 'ի հրապարակի անդ առնելով զմեծագոյն կոտորու�անանոցն այնոցիկ, այնպէս փախչէին 'ի նմանէ ինձքն առիւծքն, բորենիք, առՁք փիղք, միեղջերուք, որպէս մեք փախչիմք 'ի նոցանէ, և առաւել է ոսան նա միայն 'ի յանաս նոցն անտի, քանզի նոյնք անասունքն զմարդիկքս։ Զայսքան զարմանալիս, և զայսպիսիս զարհուրելիս իբս պատմեցի քեզ, որպէս զի իմանայցես դու, թէ համայնքս այսոքիկ ոչ զարհուրեցուցին զիս այնքան, որքան զարհուրեցուցանեսս զիս դու միայն. մինչ տեսանեմ զքեզ զնեռորեցեալ ընդդէմ դիցն, և ընդդէմ մծերա կուտին, և ընդդէմ բախտին։ Ոչ ապաքէն աՁքեն երեք հսկայքն այնք, որք են հզօրացեալք ամենայնիւ հզօրեղութիՁ, և երանեցեալք ամենայնիւ երանութիՁ, որոց այնքան համատարած է հրամանն իւրեանց, մինչ զի 'ի վերայ ամենեցուն ընդհանրապէս տարածեսի։ Դիքն բնութիՁ իւրեանց, և կարողութիՁ փակեն զատարտոսն, և հովուեն զաստեղսն։ Ծերակուսն դատողութիՁ իւրով նուաՁէ զգալաւս, և ՁՆչէ զանիրաւս, և բախտն անդթութիՁն իւրով առնու 'ի նոցանէ որք թողուն, և թողու նոցա որք առնուն։ պատուէ զնոսա որք անարդեն, և պատժէ զնս, որք ծառայեն, պատրէ զամենեսեան, և ոչ զոք թողու անպատրելի։ Խոստանայ զբազում, և ոչ երբեք կատարէ, եղանակէն նորա ՁայնիւէՁ ողբալն, և ողբալն է եղանակէն։ զմեռեալս 'ի մէջ որդանց, և զկենդանիս 'ի մէջ ՁախորդութեՁ գներկայս աՁացելով և զան ներկայս ապառնալով։ Բոլորովիմք խոհեմքն 'ի պարտութիւն մատնելով. բայց միայն դու խելագարդ ընդդիմամանանս։ բողոքելով դու 'ի ծերակուտէն ոչ զարնամ 'ի յիս, զի 'ի վախՁանի գոլով նոքա մարդիկք, կարեն որպէս մարդ սղալել, թէպէտ

ՀՇմարտութիւնք կարեմ հաւատալ, թէ 'ի յիրս դա
տողութիւնն են, և պարտին գալ առաւել քան զգ
մարդիկս, Ոչ և սա վասն այսորիկ զարմանամ,
զի բողոքեսս զբախտն, զի 'ի վախճանի բախտն
է բախտ, և 'ի մէջ մահկանացուաց, և 'ի յամ
դարի աշխարհի է հնագոյն յոյժ բողոքումն զն
մանէ։ Լուսոյ օրքան կերպաւորիմք 'ի մեզ զամ
բաստանել զնմանէ, այնքան վիրաւորէ զմեզ մե
ծագոյն վիրօք։ Այլ վասն իրի մոյ զարհուրե
ցեալ, և համանգամայն դայթակղեցեալեմ իքէն։
զի գոլով դու մի 'ի Հռովմայեցոց իշխես բողո
քել զդիցն, որպէս թէ ոչ իցես Հռովմացի, այլ
մի ոք 'ի բարբարոսացն։ Մեք Հռովմայեցիքս ոչ
ունիմք զայնքան համբաւ 'ի մէջ ամենից ազգաց
վա՜ բազմութիւն դաւառաց, զորս յաղթելով ընդ
մեօք ստորադրեցաք, զորքան ունիմք վասն մե
ծաշէն տաճարաց, վասն խոնարհաբար ծառայե
լոյ, և վասն բազմութիւն զոհից, զորս մատու
ցանելով դիցն 'ի կիր արկանեմք։ Դու բողոքես
զդիցն, թէ նոքա քայքայեալ փլուցին զտուն
քո, և թէ երկրաշարժութիւնքն սպանին զդուստրն
քո ընկերակիցն յաքսորանաց քոց, և թէ զայս ամ
արարին ներ յաւուր միում, և ոչ յիշես զմեղս
քոյս, զորս ընդդէմ նոցա գործեցեր 'ի յամս բա
զումս։ Ով Անթիոքոնոս իմ, լուր, լուր և ոչ գի
տես դու թէ 'ի մերոց վատթարագունից վիճացն
երանեն վճռահատութիւնք բարեգոյնք, և ոչ գի
տես դու, թէ գժնդակ գործքն մերք ոչ այլ
ինչ են, եթէ ոչ արթնացուցիչք մի, արդա
րադատ, և յոյժ ուղիղ գատաստանաց նոցա,
և ոչ գիտես դու, թէ սատակագոյնք պատիժքն
նց ոչ այլ ինչ են, եթէ ոչ յորս մի որ որսայ և
կալնու զմեծամեծ յաւաղագայութիւս մանկակա
նի ցանկութիւնք մերոյ, և ոչ գիտես դու, թէ
որպէս ոչինչ են պատիժքն այնք, որովք դիքն
պատժեն զմեզ յայսմանի հրապարակաւ, հանդէպ
զանցաւութիւնք, և երկայնամտութիւնք զորս գաղտ
նապէս 'ի կիր արկանեն դէպ 'ի մեզ։ Եւ դու ոչ
գի-

գիտես, թէ 'ի վախճանի են դիքն դիք, և մահկա-
նացուքն մահկանացուք, և թէ առաւել զբա-
րութիւս առնեն մեզ 'ի միում աւուր, քան թէ
մեք 'ի ծառայութիւս նց յամս ՃՌ։ Եւ դու ոչ
գիտես, թէ փոքրագոյնք չարքն որք դան մեզ
'ի ձեռաց դիցն դիածից, առաւել բարիք են,
քան զամ բարիսն, որք դան, կամ կարեն գալ
'ի ձեռս անդոյթ մարդկանց։ Ընդէր ուրեմն
բողոքես 'ի քէն։ Յոյժ աղաչեմ զքեզ զի լռիցես
գոլով դու 'ի միջի օտարականաց համբերեայ գա-
նեայ, եթէ կամիս վասն պատուոյ, մի՛ անպա-
տուեր զդիսն Հռոմայեցոց։ Վասն զի մեծագոյն
չարն արանցն անտրդարոց է, վատահամբաւել
զմարդիկս արդարս։ Այպա որքան առաւել մե-
ծագոյն չարէ, վատահամբաւել զդիսն արդա-
բագունեղս։ Իրաւի ըստ ասացելոյն Զիւրբո-
նի, մեծագոյն պակասութիւն, զոր առնէ մարդ-
մի բարի, է ընտրել զչարն 'ի տեղի բարւոյ, և
մեծագոյն չարն չարի միոյ է դատապարտել զբա-
րին 'ի տեղի չարի։ Արդ եթէ ՃՇմարիտէ այս,
որպէս, և դու իսկ գիտես, թէ որքան բարիք
իցեն դիքն, արդարք։ Զիրաւն ասեմ քեզ, զի
ոչ թիւրին աղաչանօք, ոչ և թուլանան սպառ-
նալեօք, ոչ խրատին բանիւք, և ոչ ապականին կա-
շառօք։ Մեծագոյն պարտէ լինիլ ուրեմն մեզն
քո, զի երկիրն առնու զվրէժ վասն դիցն, և
դուստրն անմեղ հատուց զպարտս յանցանաց
հօրն մեղաւորի։ Օ՛վ Անթիոքոս, արդէն ոչ
գիտես, զի դիքն 'ի յամ իրս կարողքեն գործել
ըստ կամայ, և կարծեաց իւրեանց, եթէ ոչ միայն
'ի դատաստանի զի որպէս են դիք ամենեցուն
պարտին դոլ հաւասարագատ ընդ ամենեցուն,
և դու ոչ գիտես, թէ ոչ բարութիւն իւր-
եանց պարտաւորէ զնոսա հատուցումն առնել
մեզ վասն բարեաց, իրաւունն իւրեանց ոչ սա-
կաւ ստեպէ զնոսա առ'ի պատժել զմեզ վասն
չարեաց։ Եւ ոչ գիտես դու, թէ է կիրարկուել
յոյժ սովորական, և դատաստան արդարագոյ-
նեղ,

նեղ, զի նա որ կամաւորութեամբ իւրով անկաւ 'ի մեղս ընդդէմ կամաց իւրոց կրեցէ զպատուիժս : Զայս ասեմ, զի դուստրն քո կամ եթող առնել զբարի ինչ յայտնի հրապարակաւ, կամ արար զչար ինչ 'ի դաղտնի. վասն այսորիկ դատերն պէտանն, և հօրն զդուստրն բարձին դիքն, վասն պատժելոյ զմինն և տալոյ զօրինակ միւսոյն : 'Ի վերջն թղթոյս թուի ինձ, զի դանդատես, թէ մեծագոյնք լցեն պատիժքն զորս ետուն քեզ մարդիկք. քան զանցանս զորս արարեր ընդդէմ նոցա, և ընդդէմդիցն : Եթէ այսպէս լցէ Անթիոքոս իմ, ոչ պարտիս տխրիլ, այլ մանաւանդ հաճոյականապէս դմայլիլ, ոչ տրտմութիւք վարանիլ, այլ ուրախութիւք բերկրիլ 'ի դիան անմահս քեզ երդնում, զի ես հաճիմ փոխանակել զաղատութիւս իմ ընդդէրութեցքոց, և զկացութիւս տէրութեան Հռոմայ, ընդ աքսորանացն Սիչիլիու : Ես ասացից քեզ թէ վնաս էր : քանզի նա է մարդ 'ի մէջ մարդկան, զոր բախտն ստորարկանէ, և հայածէ ոչ ունելով զմեղս, և նայ է չարահամբաւ 'ի մէջ չարահամբաւից, զոր բախտն բարձրացուցանէ, ոչ ունելով նայ զարդիւնաւորութիւն ինչ : Քանզի վատահամբաւութիւնն ոչ կայանայ 'ի նախատինս, զորս տան մեզ մարդիկք, եթէ ոչ կայանայ 'ի մեղս, զորս գործեմք ընդդէմ դիցն : Սոյնպէս և ես, պատիւն պատուելի ոչ կայանայ յարժանաւորութիւս զորս ունիմք, այլ կայանայ 'ի գործս բարիս, որովարդիւնաւորիմք : ասատուատ յայտէ, թէ յոյժ ճշմարիտ է այն, զոր բերէր գրեցեալ մեծատաներորդ Կայսրն Հռոմայ շուրջանակի մատաւնոյն իւրոյ, որ ասէր այսպէս : Առաւել պատվելի է նա, որ արդիւնաւորի զպատիւ և ոչ ունի, քան զնա, որ ունի և ոչ արդիւնաւորի : Եղէն քանզ այսոքիկք յոյժ նշանակեցեալք որ պէս ասացեալ 'ի մարդոյ ծայրագունեղէ : Արդ դառնալով այժմ առ առաջադրութիւն մեր ասեմ

քեզ ։ Եթէ գանդատիցէիր դու յանիրաւութեանցն, զորս առնեն մարդիկք մարդկանց, և թողցէիր զդիւսն ոչ զարմանայի ։ Քանզի որպէս դիքն ոչ առնեն երբեք զիրս անարդարս, այսպէս և մարդիկք հաղիւ առնեն զիրս արդարս։ Արդ նշանակեա զայս, զոր կամիմ ասել, և մի՛ մոռանար երբեք։ Ի խորհրդարանին ասն զպատուիրս յայտնապէս, և ի լուր ամենեցուն, և բացայայտեն զմեզ գործեցեալս ի թաքստեան, և այսու կերպիւ, պատուոյն զմեզ վիրաւորեն և մեղքն զմեզ վատահամբաւ են։ Բայց դիքն դոլով առաւել զթածագոյնք, թէպէտ տան մեզ զպատուիրս, սակայն զանցառնեն լուելով ըստ մեր առ՝ի ոչ վատահամբաւել զմեզ։ Օ՛վ Անթիոքոնոս իմ, եթէ դիքն յարտաքս հանին զեն ի հրապարակս, և ի փողոցս զաղտեղութիւնս և զանարգանս, զոր ի յանկիւնս, և ի տեղիս թաքստեան գործեմք, հաւատա ինձ, և մի՛ երկ բայիլ. զի բազմաց տայցէին զկեանս դիքն, զոր բառնայցէին մարդիկ։ Արդ յայտմիկ թուի ինձ, եթէ և քեզ թուիցի, և կամիս եթէ դու կամցիս, թէ որովհետև դիքն երկայնամտելով, և տանելով զաւրութիւն քո, զոր դու արարեր ի դաղտնի համբերեցին քեզ, դու և համբերութիւն տանիցես զպատուիրսն, զորս ետուն քեզ յայտնի։ Ապա եթէ այլ կերպիւ կարծիցես ի բաց թօթափիլ զպատուիրս ի քէն, մնայցես ի նեղքոյ բեռանցն վատահամբաւութեան։ Ահա գրեցի քեզ երկարապէս, որպէս զի կարիցես այսու անցուցանել զժամանակս։ Իրաւի զի մեծագոյն թեթևութիւն որով թեթևանայ աշխատանն աշխատակիր, է կրթել զանիրս մոլորեալս բարեաւ կրթութեամբ իմիք։ Ոչ կամիմ առաւել և դրել քեզ այժմոյս, եթէ ոչ զայն, որ պատկանի յաքսորանն քո։ Հաւատա ինձ, զի եղէց քեզ բարեկամ բարի ի խորհրդարանի ծերակուտին։ Ահա առաքեցի քեզ զՊանտուցիոս խորհրդակից դրագիրն իմ, որոյ բանիցն հաւատա-

այնքան, որքան հաւատաս թղթոյն իմում, և քերի քեզ դհանդերձ ինչ առ'ի զգենուլ, նսև զդրամ ինչ դի ծախիցես, և դեր քան զամենայն զսիրտ, և զկամեցողութիւնն իմ որով մխիթարիցիս։ Ողջոյն խաղաղութիւն, և բարի ծերութիւն եղիցի ընդ քեզ Անթիդոնոս։ Բարկութիւն դիցն, և զայրացեալ բախտն տարան զատիցին յինէն Մարկոսէս։ Կինն իմ, և որդիքս ողջունեն զքեզ որպէս իրք քոյանինք, զամենայն ընտանիս քոյս ողջունեա'ի մէնք, որպէս զիրս մերայինս։ Թէպէտ կէս թղթոյս ոչէ ձեռամբ իմով գրեցեալ մխիթարեա զքեզ, զի քո էսիրտ իմ բոլորովիմբ Աղուրեան դիտես դու, զի'ի պատերազմին դացիցուց եղեն ձեռքիմբ ծանր բասպէս վիրաւորեցեալք, և'ի ժամանակի խոնարհութեան թմրեալ մնայ մի մատն իմ։ Արդ եղիցին որինչ ինեալցք են'ի ժամանակի աւարտման քանիցս, ոչ աւարտին առ'ի գոլ միշտ քո։

Ա-

Առ նոյն Անթիոքոս, ըստ որում խօսի ընդդէմ դատաւորաց անողորմից, և անիրաւաց։

Թուղթ Մեծաւորերորդ։

Մարկոս հիւանդ ջերմախտիւք, առ քեզ Անթիոքոս աքսորեցեալ, ցանկայ առողջութեան վասն իւր, և հանդստութեան վասն քոյ։ Յաղագս խոյս տալոյ 'ի ձանձրացուցիչ տապոյն Հռովմայ, և վասն ընթեռնելոյ զգիր իմն դրեցեալ լեզուաւ եբրայեցականաւ զոր բերին ինձ 'ի Էլիոս, եկիր այսր 'ի Սամոսիա։ Յոյժ զվաղվաղուն ըշտապուն եւոս ինձ 'ի ճանապարհի, և 'ի պանդոկսն, բայց տակաւին 'ի Սալոն է հաս ինձ ջերմութեան ախտիս 'ի քսան երորդի աւուրն ե երորդի տմսոյն ընկալայ զերկրորդ թուղթն քո, և նոյն ժամայն դիմեաց 'ի վերայ իմ տենչոն ջերման։ Ոչ թուի ինձ թէ ունիցիմք զձեռս բարիս։ քանզի ոչ այն քան երկարագոյն թուղթն իմ եհատ իքէն զաշխատանս քոյս, և ոչ թուղթն քո այնքան կարճառօտ է բարձ յինէն զտենչոն իմ։ Այժմ որ ըսկսի չուել գաղճանալով զգացողութիւն որ 'ի յաշխատանաց քոց եղև, և վառեալ կիզէ առաւել ցանկութիւն զոր ունիմ օգնական լինելոյ, քեզ կամիմ ասել քեզ զիր իմն. բայց ոչ գտանեմ զմիտիթարութիւն այն, զոր պիտոյանան քեզ 'ի յօրինս Ռօգսացւոց յիշեմ, յորս գտի ըզբանս այս։ Հրամայեմք զի մի՛ ոք եղիցի համար ձակեալ առ 'ի տալ զխորհուրդս ումեք, առանց տալոյ զՃարակութիւն։ Քանզի նա որ տառապեալէ բանիւք, սակաւապէս միխիթարի մինչ ոք ոչ առնիցէ նմայ զՃար ինչ։ Եւս ասէր օրէնն, թէ սիրտն վիրաւորեցեալ առաւել հանգստանայ

նայ պատմելով զչար դիպուածն իւր սեփական, քան թէ լսելով զմխիթարանս այլոց։ Աստ դու՝ի թուղթս քո, թէ դատաւորքն են յոյժ խստա գոյնք գավառիս այդորիկ, վասն այսորիկ բոլոր աղգս այս ոխացեալէ յոյժ ընդ դէմ ծերակուտին։ Բարւոք հաւատամ, զի տան պատճառանս նոցա, որպէս զի արք չմոգրիկք առն են, զի պաշտօնեայքն դատաստանին լիցին խստացեալք, և սաստկացեալք, մանաւանդ կղզոյդ այդորիկ, որոյ յաղագաւ ասէ հնագոյն առակն։ Համայնք բնակիչք կղզեաց չարք են. բայց Սիկիլիացիք են չարագոյնք քան զամենեան։ Այնքան կարողացեալք են աստանօր չարքն՝ի չարութիւն իւր եանց, և այնքան խոյս են տուեալ՝ի յանկիւնս բարիքն առաքինութիւն իւրեացն մինչ զի եթէ արդարութիւնն դատաստանին ոչ ունիցեր զփոքր մի քաչասարութիւն, չարագործքն տիրէին յաշխարհի, և բարիքն աւարտէին յոյժ փութանակի։ Բայց՝ի վախճանի նկատելով իմ, թէ որքան անյարմարք եմք ծնեալք, թէ որքան շրջապատեցեալք եմք չարեօք, և թէ որքան թշուառութեաց լցեմք ստորանկեցեալք, ոչ զարմանամ ընդ մարդկօրինութիս, զոր՝ի կիրարկանեն մարդիկք։ Բայց սակայն, ոչ միամ առանց դայթագղելոյ, մինչ մտածեմ զնաստադոյն դատողութիւն, զորս՝ի կիրարկանեն դատաւորքն մերք, ոչ ոգի արք Հռոմէացիք, այլ որպէս անդոյթք, և անիրաւք։ Միով իրաւ եմ յոյժ զարհուրեալ, և որպէս զատեցեալ՝ի խելաց իմոց, զի գոլով բնականաբար ուղղութեամբ դատաստանին՝ի ձեռս դիցն, և գոլով նոքա վշտացեալք՝ի մէնք, և են գթածք, և մեք զդատողութիւնն՝ի նոցանէ եմք՝ի փոխս առեալ, և ոչ եմք վշտացեալք յոսմանէ մենք պարծիմք զմեօք առ՝ի գոլ կոչեցեալք անիրաւք։ Այսու կերպիւ. գիշն ներելով անի բաւութեանն ընդդէմ ինքեանց արարեցելոյ մեան համբաւօք գթութեամբ, և ողորմութեան։ Իսկ մեք պատժելով զանիրաւութիս այլոց, շահեմք զա-

ղանուանակոչութիւն անդիրութիւն, և ստամբա-
կութեան։ Իրաւի ոչ է մարդ 'ի մէջ մարդկան,
եթէ ոչ անասուն 'ի մէջ անասնոց, և վայրենի
կենդանի 'ի մէջ վայրենեաց կենդանեաց նա, որ
մոռանալով զաւղկացեալ դոյն իւր 'ի մարմնոյ։
Ոչ համանկատելով, թէ դիքն արարին զնա կենդ-
դանի հեղ ըստ բնութիւն, և նա դարձուցանէ
զնինքն թոյնաւոր, և կատաղի օձ ըստ նենդաւո-
րութիւն։ Յամի երկոտասան երորդի հիմնադրու-
թիւն մօրն մերոյ Հռոմայ, Ռոմուլոս առաջին
թագաւորն նորա առաքեաց զՏրովարտակ մի ընդ
ամ տեղիս, և 'ի դաւառսն որք էին շուրջ զնն-
քեամբ, այսինքն Վոլսակացիք, Սամնիտացիք,
Էարուսկացիք, Կապուացիք, և ալքանիք զի հա-
մայնք աքսորեցեալք, տառապեալք, և հալածե-
ցեալք դաւառին իւրեանց դայցէին 'ի Հռոմ,
զի անդ լինիցէին ընկալեալք, և նպաստաւորե-
ցեալք։ Եւ եթէ տարեցուցքն նախնեաց մե-
րոց ոչ ստէպ պիս, առաւել զբնակիչս ստացաւ
Հռոմ 'ի մէջ ամաց տասնից, քան թէ Բաբիլոն,
և Կարթագն ամաց հարիւրից։ Օ՛վ փառաւո-
րեցէք սիրտ Ռոմուլոսի. որ զայնպիսի նոր դիւտ
պրոս իկիր էարվ, և փառաւորեցէք լեզու, որ զայն
հրամայեաց, և փառաւորեցեալ հայրենի, և
քաղաք. որ 'ի վերոյ դթութեան, և ողորմա-
ծութիւն եղև հիմնեցեալ։ Համանմանելով ես զտա-
ղրեցուցս տանն Նումանցիս, զոր անդ բազում
գրեանս, 'ի բազմաց դաւառացն արևելեանց
առաքեցեալս, որք սկսանէին այսպէս։ Մեք
թագաւորքս Պարթեաց 'ի յԱսիա, առ հարսն
համադրեցեալս որք են 'ի Հռոմ, և առ բարե-
բախտ ժողովուրդն 'Իտալիու, նաև առ ամենե-
սեան, որք են 'ի ներքոյ հրամանաց Կայսերու-
թիւն իւրոյ, որքև անուանին Հռոմէայնք, և վե-
րակոչին խնամակալք, և դթածագոյնք, զող-
ջոյն յանձին ձեր առաքեմք, և զնաղաղութիւն
հանդարտութիւն վա՜ ձեր, և մեր 'ի դիցն դթա-
ծից

ծից հայցեմք։ Նայեաց ուրեմն թէ զորպիսի պատուելի անուանակոչուի յաղագս փառաւորեցելոյ դիւութեանն իւրեանց, նախկին Հռովմայ ցիքն մերք ժառանգեցին։ Տես թէ զորպիսի բարի օրինակ խնամակալութեան, վասն ամենից Կայսեր քաց ազգայիցն թողին։ Աստ քեզ զմի իր հաւատն, զի Պաշտօնեայք, և սպասաւորք դատաստանին որք մոռանալով զդիւութիւնն Հռովմական դարձուցին զինքեանս խստացեալս ոչ քարքարոք, ոչ ունիցին որպէս բնական որդիք Հռովմայ. այլ որպէս անգոյիցք թշնամիք, ոչ աճեցուցիչք ժողովրդն արքունեայ, այլ որպէս վատահամբաւիչք, և որպէս գողացողք գիտութեանն նորա։ Գոլով եւ տիրոք երեսուն և եօթն ամի 'ի կղզւոյն Սեթինու որ այժմ Կիպրոս անուանի եղէ անդ ձմեռ մի բոլոր Լուայ զոր ասէին 'ի լեառն որ կոչիւր Արքատիա կայր 'ի չորրից սեանց զետեղեցեալ դամբարան մի որ ասէին էր դամբարան թագաւորի միոյ յոյժ հռչակաւորի 'ի կիպեանս իւր վասն գոլոյնմիւրոյ յոյժ դիտաց, և ողորմած։ Եւ որպէս ասացին ինձ, թէ շուրջ Ջանակի գերեզմանին այնորիկ կայր քանդակեցեալ գիր իմն լեզուաւ հրէականաւ, գնացեալ իմ անդ առ 'ի տեսանել զայնպիսի հնակաւորութի, ուր տեսի և ընթերցայ զարձանագիրն այն, որ ասէր այսպէս։ Ես վա՜յ իմ միշտ ընկալայ զխորհուրդս այս։ Զայն զոր կարէի առնել բարութեամբ, ոչ երբէք արարի չարութիւն։ Զայն առ յոր կարէի հասանել խաղաղութիւն, ոչ երբէք 'ի կիր արկի պատերազմութիւն։ Զնայ զոր կարէի յաղթել աղաչանօք, ոչ երբէք զարհուրեցուցի սպառնալեօք։ Զնա զոր կարէի ձարակել 'ի գաղտնի առանձնաբար, ոչ երբէք պատժեցի հրապարակաւ. Զնա զոր կարողէի խրատել ընդ ազդեցողութիւն, ոչ երբէք պատժեցի դանիւք, և ձաղանօք։ Զնա զորս պատժեցի հրապարակաւ նախ ազդէի արարեալ 'ի գաղտնի։ Եւ վերջապէս ոչ երբէք պատժեցի

դոք, որում յառաջադոյն ոչ իցէի ներեալ, և թողեալ զանցանս չորիցս անգամ։ Եւ յաւիմ այժմ վասն նոցա որ պատժեցի և ունիմ զմեծ ուրախութիւն վասն նոցա որ ներեցի։ Քանզի ճնայ որպէս մարդ, զմարմինն իմ ասա ուստեն որդ ունէն, և վասն զի կեցայ, որպէս առաքինի հանգչի հոգի իմ ընդ դիցն։ Արդ զնոսա թուի քեզ, բարեկամ Զենոն արձանագիրեա այս։ Ո՛հ թէ որքան փառաւորեցեալ տարաւի դոյ սայ իկեանս իւր, որոյ այնքան անմահացեալ է այսօր զյիշատակն իւր։ Այսպէս դիքն օգնական եղեցին ինձ՝ի բարիս, և տարանջատիցեն յինէն զչարիս։ Չի ոչ ունիմ զայնքան նախանձառ Պոմպիկոս հանդերձ էլեաւն իւրով, ոչ՝ի Յուլիոս Կայսր ընդ դալ լեաւն իւրով ոչ՝ի Ըշնիպոն ընդ Աքիրիկաէն իւրով, զորքան ունիմ՝ի թագաւորս այս Կիպրոս կղզոյն ընդ գերեզմանին իւրոյ։ Չի առաւել փառաս ունի նա անդ՝ի յայնմ լերինն գոլով մեռեալ, քան զնոսա որք ունիցին, և ունէին և ոչ ունելոց են զամ՝յապէթանական իւրեանց՝ի Հռոմ գոլով կենդանիք։ Արդ ես ոչ ասեմ, թէ չարք, և չարագործքն ոչ եղիցին պատժեցեալք։ Քանզի թարց համաբաղդատութիւն, չարագոյն է նա, որ նպաստաւորիցէ չարագործին քան զնոյն չարագործն որ գործէ, զի որպէս մինն բղխի՝ի տկարութիւն, և միւսն՝ի ներդութիւն։ սակայն ինձ այսպէս թուի, եւս և ամենից իմաստնոց, թէ մեղքն իցէ բնական։ բայց պատիժն ոչ է եթէ ոչ կամաւորական։ Ուստի հարկ, զի բարեխառն իցէ խստութիւն դատաստանին, և իրաւանց, որպէս զի պաշտոնեայքն։ այսինքն դատաւորքն ցուցանիցեն զդաւակցութիւն, և ոչ զվրէժ ժխնդրութիւն, և մեղանչողքն ունիցին զմի ջարկութիւն ժամանակի, և զառիթ առ՝ի զգալել զմեղս անցեալս, և ոչ առնուլ զվրէժ վասն ապիրաւութիւնն ներկայից։ Ո՛հ թէ որքան դաժառք։ և որքան տեղիք եղեն կորուսեալք, ոչ այնքան վասն չարեացն որք գործեցան՝ի նոսա, եթէ

եթէ ոչ վասն անիրաւութիւն դատաստանին, և իրաւանց, զորս պաշտօնեայքն 'ի կիրարկին, զի խոկալով թէ խստութիւն, և սաստկութիւն կա-
ւրեցեին զպէտ զնեաստն անցեալս, զարթուցին զայլ թագղութիւս ոչ երբեք լսեցեալս։ Մինչ թագաւոր սք առաքէ զոք բեռամբ դատողութիւն 'ի քաղաք ինչ, պարտէ զկուցանել նմա զբանս այս, որք են բանք ասացեալք 'ի Յօդոստոս Կայսերէ առ կառավարիչն Աֆրիկոյ։ Բարեկամ, ես ոչ հաւատամ քեզ զպատուն իմ, ոչև 'ի գործ ածեմ զդատաստանն իմ 'ի քեզ, զի լցես նախանձուտ առ անմեղս, և դատիճ մեզաւորաց։ Եթէ ոչ տամ քեզ զհրամանն իմ 'ի ձեռս քոյս, զի ձեռամբ միով օգնական, և պահպանիչ լցես նոցա, որք բարիքն են, զի կայցեն, և միւս ձեռամբս օգնական եղիցիս չարեացն զի յարիցեն 'ի յանկմանէ իւրեանց։ Իսկ եթէ կամիս դի տել զդիտաւորութիւն իմ, առաքեմ ես զքեզ, որպէս զի լիցիս սնուցիչ որբոց, նպաստաւորիչ, և փաստաբան այրեաց, սպեղանի վիրաւորեցեալ լոց, գաւազան կուրաց, և հայր ամենեցուն։ Զթշնամանն իմ համոզելով, և զբարեկամս իմ պատուելով և մեծարելով, և լիցիս այնպիսեաւ կերպիւ ընդ ամենեսեան, մինչ զի համբաւօք գը թութիւն հաճիցին իմայինքն կալ և մնալ ընդիս, և օտարականքն գայցեն 'ի ծառայել ինձ։ Այս եղև խրատ իմն վարդապետական, զոր առաքեաց Օգոստոս Կայսրն առ կառավարիչն իւր, զորմէ եկեալք պատմեալք էին, թէ լցեր սակաւ ինչ ստամբակ 'ի յայնմ գավառին, և իրաւի եղև բանս սակաւ, և համառօտ, սակայն յոյժ օգտակար։ Երանի թէ բանքս այսոքիկ գրիցէին 'ի սիրտս դատաւորացն մերոց։ Ասես թէ յոյժ հանգարտէ կղզիս այս 'ի պատճառս հոգէբարձուաց, և դատաւորաց, որք են 'ի դմա։ Իրաւի ձանձրացուցիչք աշխատանք են ընդունել զարդարութիւն 'ի ձեռաց անիրաւաց։ բայց այսպէս անհանդուրժելի, զի նա որ անողորմութիւն

իւրով անխրատեցաւ յոյժ ընդ բազմաց , և ոչ կենցաղավարութիւնն իւրով զորառանէ , եթէ ոչ ընդ հեղինակութիւնն զորունի կամի զսպել զամենեսեան : Այր բարի առ'ի գոլ ինքն արդար դատաւորս , 'ի յիշխանութիւնէ պաշտման իւրոյ , զոր ետ Թագաւորն իւր , պարտի ունել որպէս զիր սկզբնական , զբարի կենցաղավարութիւնն իւր հանդերձ վարուք բարեաւք , այնպէս որպէս զուղղութիւն դատաստանին , և իրաւանց իւրոց : Զդաւութիւնն զորս զգան չարքն 'ի կատարութեանէ նորա , և հատուցմանն այնպէս սաստիկ բարեխառնիցէ խոհեմութիւնք իւրով , մինչ զի ամենեքին զիշխանութիւնն և հեղինակութիւնն իւր համեմատեալ ընդ մաքրութիւնն կենաց իւրոց : Մեծագոյն անկարկուելիէ վասն ժողովրդեանն և մեծագոյն ամօթանք են վասն նոր որ պատժէ տանջանաւք , մինչ թշուառականն յորում պատժէ , ոչ տեսանէ , և ոչէ տեսեալ զոր ինչ 'ի նմայ որ պատուհասէ . ընդ յորում զայնպիսին արդիւնաւորի զնոյն պատիժն , և հակադարձաբար , մեծագոյն փոքրութիւնէ թագաւորին , որ հրամայէ և մեծագոյն վատահամբաւութիւն իրին հրապարակի , որ հաւանի , և մեծագոյն նախատինք են դատաւորին , որ 'ի գործ ածէ և կատարէ , մինչ թշուառի և փոքրոյ ումիք , վասն թշուառութիւնն , և փոքրութիւնն տան առաւել պատիժ վասն փոքրու իրի զոր գործեաց յաւուր միում, քան թէ առն իմիք մեծագոյնի վասն մեծ գործոյն նորա , որ գործեաց զբազում անիրաւութիւն ի կեանս իւրս : Եւ յայսմիկ դոն վատթարութիւնք այնքան , և այնպիսիք , որք աւերեն զերն հրապարակի , գայթագղեցուցանեն զաշխարհս , և հատանեն զիշխանութիւնս անձանց : Յամին երորդի , յորում Պոմպէոս կալաւ զԵրուսաղեմ , զոլով 'ի նմա տէր , և իշխող Վալերիոս Գրատոն , եկեալ 'ի խորհրդարանն ծերակուտին Երբայեցի մի , ըստ որում պատմեն տարեցուցքն ժամանակին այնորիկ , առ'ի բողոքել զանիրաւ-

ու-

ութիւն, զոր առնէին երկրին այնմիկ'ի ժամու ո-
րում կամէր տալ զիրեշտակութիւն իւր 'ի կողմանէ, և'ի անուանէ բոլոր դաւառին իւրոյ սահմանեցեալ որպէս դեսպան, ասաց 'ի խորհրդա-
բանին այսպէս։ Օ՛վ հալբ համադրեցեալք ով ժողովուրդ, և ժողով բարեբանեցեալ ազգ բախսն ձեր խոստանալով, և ՅԱՆ մեր զմեզ անտերունչ թողլով երուսաղէմ թագուհին ամենից ասացաց, և մայրն համայնից երբայեցոց եղև ծառայ Հռովմայ, և Հռովմացոցն իւրոց։ Իրաւի մեծ եղև կարգուն Պոմպիէոսի և բազում, և յոյժ բազում հոգերեղութիւն զոլոցաց իւրոց առ'ի նուաճել զմեզ։ Բայց ասեմ ձեզ, Մեծագոյն եղև բարկութիւնն ԱՅՆ մերոյ, և թարց համաբաղդաստութեան բազմութիւն մերոց մերոց ոսոց սակս արդիւնաւորեցաք մեք զկորուսան մեր։ Եւ կամիմ զի դիտացեք, զի եմ յոյժ տրտում, զի ոչ էք դուք Հռովմայեցիքդ վերահասուք եղեալք փորձառութիւք իւիք զայսմանէ զոր ես կամիմ ասել։ Զի այնքան բարեդիւթիւ ՅԱՆՆ մեր, մինչ զի, եթէ 'ի միջի մերում դտանիցէին տասն մարդիկք արդարք ընդ Ն-ից հալալաց մարդկանց մեզաւորաց, կամ թէ իցէր մի միայն այնքան բարի որ վասն նորա թողուցիւր այնքան չարիք տեսանիցէիք դուք Հռովմացիքդ, որպէս տեսին երդիսացիքն, թէ որքան առաւել կարողագոյնէր մի միայն ԱՅՆ մեր, քան զամ բազմութիւն համայնից դիցն ձերոց համանդամայն 'ի միասին, Զիրաւն ասեմ, Յորժամ մեք եղաք մեղաւորք, յայնժամ դուք եղայք տեարք մերք, և որքան անիրաւեցաք մեք, այնքան զօրացայք դուք, և որքան տեսիցէ բարկութիւն այն երբայեցոց, այնքան ևս տեսելոցն կարողութիւնն ձերոյ Հռովմացոցդ։ Եւ քանզի վա՜յ այս պատճառիս ես զգամ զմի ինչ, և դուք զգայք զայլ ինչ, ասեմ ձեզ զի ոչ ես անդրադառնամ'ի յերկիրս դուք միայնոյ այն իմոյ, ոչ և ուրանամ զնա,

և ոչ դուք բանիւ իմով անդրադառնայք յերկիր պագութիւն Բաղմութեան դիցն ձերոց։ Կամիմ թողուլ զնիւթականութեան բանիցս այսոցիկ վասն սոյ, որոյ կարողութեամբն ստեղծեցեալք եղուք, որոյ և բարութիւնն հովուեցեալք եղայք և հովուիմք, եկեսցուք ի պատճառս դեսպանութեան իմոյ։ Վաղուրեան գիտէք դուք, թէ որքան խաղաղութի ունեաց Հռովմ ընդ հրէստանի, և հրէաստան ընդ Հռովմայ։ Մեք ձեզ ըստ ամենայնի եղաք հնազանդեալք, և դուք ոչ բնաւ ինչ անարդար ուրացաք տալ մեզ։ Եւ քանզի ոչ գոյ իր իմն առաւել ցանկալի ըստ ամենայնի, և սակաւաւոր ի դործածելի քան զխաղաղութիւն, ոչև գոյ իր իմն առաւել առելի, զոր առելով կեան ամենեքեան ի նմայ որ է պատերազմն։ Եւ աղդելով ձեզ ճշմարտութեամբ, և դուք նախատեսանելով արդարութիւն, և իրաւամբ։ Գահավիժեցուք ուրեմն, և ի բաց ընկեցուք զնա, որք վտանդաւորեն զկամս ձեր առ ի պատել զմեզ, և ընկղմեսցուք զնենդաւորութիւս նոցա, որք երթան զարթուցանելով զմեզ ի յայպտամբութիւն։ Մեծագոյն նշան, և մեծագունեղ սիւն, և խաչիսին անշարժելոյ խաղաղութիւն է հաստատել, և ի բաց բառնալ ի միջոյ զվրդովիչս խաղաղութիւն։ Զինչ օգուտ ասելն մեզ, և խօսիլն ամենեցուն հրապարակաւ, և դոչել խաղաղութիւն, խաղաղութիւն, և յետ այնորիկ ի թաքստեան զէր կուցանեն մեզ, և ձեզ ասելով պատերազմ, պատերազմ։ Զայս ասեմ, քանզի աքսորելով զանդրանիկն Թադաւորին մերոյ յԵրօվմայ ի քաղաքն Լէօն վա անօրէն վարուց նը, և առաքեցիք մեզ ի տեղի նորա զԿամպանիոս, զՄարկոս, զԼոֆիոս, և զՎալերիոս դրաքոան ի կառավարութիւն. որք եղեն մեզ չորս հարուածք, կամ չորս ցասմունք, որոց փոքրագոյնն բաւականանայր թոյնաւորել զբոլոր Կայսերութիւն Հռովմայ, ապա որքան և առաւել զդաւառն մեր թշուառական Պաղեստինու։ Այլ որպիսի մեծա-

ծագոյն դժնդակութիւն կարէ լինիլ քան զայս, զի դատաւորքն, զոր առաքէք, առ'ի բաց քառնալ զչար սովորութիւն արանց չարաց, եղեցին նոյնք ինքեանք դոիչք մոլութեանց նորագոյնից։ Զինչ մեծագոյն նախատինք դատաստանի, և իրաւանց կարէ դոլ քան զայս, զի նոքա որք պարտին պատժել զմոլութիւս ուղղոց, պարծիցեն զինքեանս գլխաւորս, և առաջնորդս դոլ անզգամաց։ Զինչ մեծագոյն Վատահամբաւութիւն լինելոց վասն Հռօմայ, զի որք պարտին դոլ արդարքը ամ արդարութիւք, և իրաւամբ, և օրէնական ամենից առաքինութեանց, լինիցին չարք ամենայնիւ չարութիւք, և ստոգրեցեալք համայնիւք մոլութիւք։ Սոեմ ես, եթէ ոչ իցեն այնքան թիւրեցեալք և զատեցեալք 'ի յիրաւանց, և թուլացեալք 'ի կրթութեանց, մինչ զի առաջագրէին երիտասարդութեցն հրէաստանի, և ուսուցանէին նոցա զնորագիւտ մոլութիւս այնպիսիս, զորս ոչ լուան հարքն մերք, ոչ'ի գրեանս եղեն քննեալ և նանեցեալք, ոչև 'ի ժամանակի մերում տեսեալք։ Օ՛վ Հռօմէացիք հաւատացեք ինձ զմի ինչ, զի զարքան խորհուրդս ընկալաւ հրէաստան 'ի Հռօմա յառաջագոյն, ընկալեալ այժմ զայն Հռօմ 'ի հրէաստանէ։ Տիրապետեալք շահեն զբազում դաւառս թագաւորութեց, միով հզօրագոյնիւ սպարապետաւ հեղլով զբազում արիւնս, և պահպանեն զամենայն ընդ միով քարեաւ դաստուրաւ, ոչ թէ դիտասցեն հեղուլ զարիւնս, այլ թէ հետևիցեն շահել զսիրտս։ Իրաւի դաստաւորն այն, որ առաւել շահէ զկամս, քան թէ զգրամս, պարտի դոլ սիրեցեալ, և նա որ առաւել ծառայէ ընդ գրամաս, և ոչ՝ասէ կամաց, այնպիսին միշտ, և հանապազ ապ զմահ տարաժամ պարտի դոլ արհամարհեցեալ։ Ուստի կարծէք թէ գայ այս, զի աստանօր կառավարիչք, և նախարարքն ձեր ոչ հնազանդին 'ի յիրս արդարադատութեանէ։ Զիրաւն ասեմ ձեզ գայ յայսմանէ, զի նախկնապէս հրամայեցին

զբաղում իրա անարդարս ։ Պատուիրանն սրդար կակղացուցանէ զսիրտս , և պատուիրանն անարդար առնէ զմարդն անգոյթ , և խիստ ։ Եմք մեք այնքան թշուառք , և անադորունք ոմանք թշուառութիւն , մինչ զի թէպէտ հրամայեն մեզ բարեպէս , հնազանդիմք չարաչէս , ապա ոչքան և առաւել հրամայելով չարաչէս կամեմք գոլ հնազանդեցեալք բարեպէս ։ Հաւատացէք ինձ զի իր , զի 'ի բաղում անզգամութիւն , և 'ի տհասութիւն դատաւորաց եղեն ծնեալք երկիւղ սակայս , և անամօթխանութիւն 'ի հպատակեալսն ։ Մեք երբայեցիքս ունիմք 'ի հաւատսի , և մանաւանդ հրամայեցեալ 'ի բերանոյ Աստուծոյն մերոյ , թէ ամենազաւոր , որ ունի զբեռս դատաստանի , և իրաւանց , մինչ տեսանէ , թէ ոք ոչ է ընդունակ գործոյն այնմիկ որ յանձնեցաւ նմա , զի ոչ կատարէ նախանձապէս զդատողութիւն , եթէ ոչ առաւել 'ի պատճառս ազահութիւն ընչից , կամ հաճոյանալոյ առն այնմիկ զոր դատէ , զայս ունիցի 'ի հաւատսի , զի մինչ ոչ նկատէ , և ոչ կարծիցէ , տեսանիցէ զպատիւն իւր 'ի վատահամբաւութիւն , և զհաւատարմութիւնն իւր 'ի կորուստ մատնեցեալ , զինչս իւրս 'ի յաւար , և զմեծագոյն պատուհասն 'ի տան իւրում ունիցի ։ Եհ բանզի ունիմ զայլ ինչ ասելոյ 'ի դատանի , կամիմ ասել զներփակումն բանիցս այսոցիկ , զորս խօսիմ 'ի հրապարակի ։ Եհ վերջապէս ասեմ ձեզ , եթէ կամիք պահպանել զաւառս ձեր 'ի բաղում ժամանակս , որոյ յաղագս տիրեցիք զմեզ մեծագոյն վտանգաւ և աշխատանօք , պահեցէք զմեզ այդպարդատողութիւն , և մեք յօժարութիւն մեծարեսցուք զձեզ ։ Հրամայեցէք որպէս Հռոմայեցիքս , և մեք հնազանդիցուք ձեզ որպէս երբայեցիքս ։ Տուք մեզ զնախարար մի դիմածագոյն , և մեք լիցուք բոլորով գաւառաս մերով հնազանդեցեալք ։ Մի լիցիք յոյժ խստացեալք 'ի պատժել զանկարութիւնս մեր , և մեք եղիցուք առա-

առաւել հնազանդեցեալք հրովարտակացն ձեռոց։ Աղաչեմք զձեզ։ զմեզ աղաչեցեք նախքան թէ մեզ հրամայիցէք։ քանզի աղաչելով, և ոչ հրամայելով, գտցեք 'ի մեզ զսէր որպէս հայր ընդ որդւոյ, և ոչ դաւաճանութիւն, որպէս տէրն ընդ ծառայի։ Զայս խօսեցաւ եբրայեցին այն, և ոչ թարց մեծագունի զարմացման 'ի ծերակուտն խորհրդարանին։ Զայս ամ լուեալ ծերակուտքն, իսկոյն նախասահմանեցին զերիս իրս յոյժ արդարագոյնս։ Նախ զի զամ բանս զորս խօսեցաւ եբրայեցին, դիցեն 'ի քարտիզի որպէս զի գրիցեն 'ի մատեանս, որք էին կարգադրեցեալք, առ'ի գրել զասածուածս բարիս դեսպանացն օտարականաց։ Երկրորդ, բառնալ զպաշօնս նախարարութիւն 'ի Աալերիոս գրաքաջս, վասն գոլոյն նորա խիստ, և սաստիկ, և ատելի ժողովրդեան։ Երրորդ, նախապատրաստեցին զՊիղատոս Լուգդունացին վասն նախարարութիւն գաւառին այնորիկ։ Արդ զինչ թուի քեզ ով Անթիոքոս որքան բարձրագունեղ խօսակցութիւնս արար հրեայն այն։ Ո՛հ Հռովմայ թարց Հռովմայ, որ 'ի Հռովմայ ոչ զՍՂ ինչ ունիս, եթէ ոչ զպարիսպս, և եղեր բազանոց մի մոլութեանց։ Զինչ արարեր, մինչ զպանպիսի նախատինս ալար քեզ եբրայեցի մի 'ի մէջ ծերակուտից քոց։ Իրաւի մեծագոյն աւաղ, և եղուկ 'ի մէջ ամենից աւաղութեց, և մեծագոյն կորուստ 'ի մէջ ամ կորստեան է, մինչ թագաւոր ոք, կամ տէր ոք, որոց կեանքն է այնքան թարց կենաց, և դատաստանն այնքան թարց դատաստանաց, և արարմունքն այնքան թարց արարմանց, և 'ի չարս այնքան համարձակեալ, և 'ի բարիս այնքան երկուցեալ, մինչ զի կարի արդարապէս իւրայինքն ամբաստանեն և օտարականքն յանդիմանեն, ոչ որ սիրէ այլ ամենեքեան ատեն, բարեկամքն ոչ օգնեն, թշնամիքն հալածեն, ներկայքն ջանան բառնալ զբարիս և հեռացեալքն ջանան առնել զչարիս։ կենդանիքն

նիքն կամին հատանել զկեանն , և մեռեալքն ոչ ընդունին 'ի տապանի : Արդ զառնալով առ յառաջադրութիւն զատաւորացն մերոց : Աղաչեմ զքեզ Անթիոքոնոս իմ , զի ասիցես ինձ , թէ ուստի իցէ արդեօք ատտանօր այնքան մեծ գայթադղութիւն 'ի ժողովրդն ; և վատահամբաւութիւն առ թագաւորն , և վտանգ առ դատաւորսն , զոր եթէ ոչ գիտես լուր ինձ զի ասացից քեզ Չի առաջապայի այս յանկարգութիւն : Չի առանձնական ընտանիքն սոփիսելով զթագաւորն և թագաւորն ոչ հրաժարելով նք պատրելով զնա , և նա թոյլ տալով զինքն գող պատրեցել , մինն ագահութիւք և միւսն անգիտութիւն տան , որք որք պարտին հատանել , և հատանեն զնոցանէ , որոց պարտին տալ ; պատուեն զնոսա , որ անպատուեն ; և անպատուեն զնոսա որք պատուեն արքելուն զարդարս , և արձակեն զնիրօղսն մոլութեանց , անարգեն զդուշս ; և հաւատան անզգամաց , և վերիվաքար նախատեսան են ոչ զայշ տօն անձանց , եթէ ոչ զանձինս պաշտօնից պարգևեն անիրաւաց զարդարութիւն , և արդարոցն զանիրաւութիւն : Արդ լուր ինձ , զի ևս ասեմ քեզ : Թշուառականքս այսոքիկ յետ այնորիկ որք ընկալան զպաշտօնս , մինչ տեսանեն զինքեանս ներմուծեցեալս 'ի պաշտօնս որոց ոչեն արժանիք , և են մեծագոյն իշխանութիւնն կարողութիւն պաշտօնին իւրեանց քան զարդիւնաւորութիւնս անձանց իւրեանց , առնեն զինքեանս ահարկուս կիրարկելով չափազանցութիւք զիրս դատաւորանին , և իրաւանց : Առնուն զկացութիւս մեծութեց , որոց գինն է քրտունս աղքատաց , և զպակասութիւնս հանձարոց ընուն ներդուք , և չարագոյնն քան զամ է , զի չափեն զդատաստանս այլոց ընդ սեփական ծգտին իւրեանց : Լուր ; զի առաւել քան զայս կամիմ ասել քեզ : Յետ այնոքիկ մինչ յիմարքս այսոքիկ տեսանեն զինքեանս խորտաւեցեալս 'ի ծոցս ունայնից գործաւութեց ,

թեց, և վոանդպաց բաղմաց, պակասելով թիւն գի տուէ և առաքաստն ղբուշուէ, և խարիսխն փոր ձառուէթէ, և ոչ գիտելով գտանել զենար և զշար չարեացն փոքերց ; ջանան հնարիւ նորա գոյտ առնել զայլ մեծագոյնս ։ Զի աղմկեն, և վիդոյնն զնաղաղութիւս հասարակաց վասն յաստուկ օգտոյ իւրեանց ։ Ողբան զսեփական չարիսն իւրեանց, և ոչ սակաւ զբարիսն այլոց ։ Եւ վերջապէս կորուստնեն զինքեանս, և վասն վոանդաւոր լինելոյ յինքեանց 'ի խորս յորում ոչ գիտէին, վատահամբաւեն զտեարս իւրեանց, որք եղուն նց զպաշտօնս մեծութեթ, վա տապոյն այնպիսեաց որ ոչ արդիւնաւորէին ։ ուրեմն Լուր զի և և կամիմ ասելքեզ ։ Պարտիս գիտել դու, զի սկիզբն արանցս այսոցիկ է հպարտութիւն և անփառութիւն, և մէջն նախանձ, և նենգաւորութեթ, և վերջն իւրեանց մահ և աւարտուն, որոց եթէ յաղագս այսորիկ զիսորհուրդս յինէն կամիցին առնուլ, ոչ պարտին ունել ոչ հաւատարիմք ձեն ։ կամ թագաւորին իւրեանց, այլ ոչ արք պայթագրիչք պարտին գոլ տարանջատեցեալք, ոչ միայն 'ի յիրեր հրապարակէ, այլ և 'ի կենաց իւրեանց սեփականաց ։ Արդ և և կամիմ ասելքեզ ։ Իրաւի մեծէ ագահութիւն անզգամաց այսոցիկ, որք թարց ամօթոյ 'ի ձեռ բակուտէն, և 'ի թագաւորէն խնդրեն զոլաշտօնս։ Բայց մեծագոյն է համարձակութեթ, և նենգաւորութիւն տեարցն որք տան նոցա ; որոց 'ի յայս, և 'ի յայլ իրս ունին զգիտաւորութեթս այն քան ապականեցեալ, մինչ զի ոչ երկիւղ դիցն յեռս քարշէ և ոչ յահիւ թագաւորին ասնձահարիւն, ոչ ամօթանքն արգելու, ոչ իրն հրապարակի ամբաստանէ զնոսա, և 'ի վերս քան զամ, ոչ և բանականութիւնն հրամայէ, և ոչ որդիքն հպատակէ և ենթայդատէ։ ով Ընթիրգոնոս իմ, նշանաւորեայ զբանս այս, զոր գրեմ քեզ 'ի վաղ ձանի թղթոյս այսորիկ ։ Յամի հիմնարկութեն Հռոմայ 642 որպէս զի ժողովուրդն Հռոմայ

մայ ունեաց զբաղում պատերազմունս յաշխարհ դի, յորս Գայիոս Սելիսն էր ընդդէմ Տրեանու, Գնէոս Կորպոն եղբայր նորա ընդդէմ կղզւոյն սարդենեանու, Յունիոս Սիլլայն ընդդէմ ումբրացւոց, Մինուսիոս Ռոսֆոն ընդդէմ Մակեդոնացւոց, Սերվիլիոս Ըգիպիոն ընդդէմ Լուզիտանացւոց, և Սարիոս բգեշին ընդդէմ հուդուրթիոսի արքային Նումիդիանացւոց։ զի այս հուդուրթիոսս։ Ջատագովիւր, և նպաստաւորիւր 'ի Բաբոսէ արքային Մաուրիտանացւոց, որ այժմ կոչի Մառօքօ զոսոս յաղթեաց Սարիոս բգեշին, զոր կալեալ, և շղթայատեալ կապանօք շղթայիւք, յաւուրն յաղթանակին իւրոյ երթային առաջի կառին իւրոյ, ոչ թարգ մեծի ցաւակցութեան ամենեցուն որք տեսանէին զայն։ Անցեալ յաղթանակն իսկոյն յաւուրն յայնմիկ խորհրդակցութիւն ծերակուտին եղև զլխատեցեալ Հուդուրթիոս 'ի բանդին, և Բակոս որ քայն ընկերակիցն իւր շնորհեցեալ եղև նմա ըզ կեանն, և պատճառ որին եղև այս։ Զի էր սովորութիւն ոչ երբեք պատժապարտել զոք, եթէ ոչ նախկնապէս ընթեռնուլ զգիրս, և զմատեանս հնագոյնս առ 'ի տեսանել, եթէ երբեք ոք 'ի նախնեաց նը, արարեալ լիցէր զգործ ինչ արդիւնաւորութեան Հռոմայ, որոյ յաղագաւ թշուառականն այն արդիւնաւորիցիւր ընդունիլ զկեանս։ Արդ գտեալ եղև, զի պապն բագոսիս ոգսորիկ եկեալ 'ի Հռոմ արարեալէր զմեծագոյն աստենաբանութիւն 'ի ծերակուտան որով բանիւ, և ասացուածովքն իւրովք, արդիւնաւորեցաւ թոռն իւր փրկիլ 'ի մահուանէ, և ընդունիլ զկեանս։ Եւ 'ի մէջ բանիցն այնոցիկ կային ոտանաւորք բանքս այսոքիկք որք ասէին։ Վայ թագաւորութեան այնմիկ, յորում են այնպիսիք ամենեքեան, մինչ զի ոչ բարիքն 'ի մէջ չարաց, և ոչ չարքն 'ի մէջ բարեաց ճանաչիլ կարեն։ Վայ գավառին, և թագաւորութեան այնմիկ, յորում այնպիսիք իցեն ամէն ոգի պանդուկ, և

ինչևան յիմարաց, արտաքսումն և 'ի բաց վարումն ամենից իմաստնոց։ Վայ՝ դաւառին այնմիկ, յորում իցեն բարիքն յոյժ երկիւղալիք, և չարքն յոյժ վստահեցեալք, և հանդարձակապէս յանդգնեցեալք։ Վայ՝ թագաւորութեան այնմիկ, յորում անարդեն զնաղարարսն, և նախանամեն զնուազարարս։ Վայ՝ դաւառին և թագաւորութեան այնմիկ, յորում որք ոչինչն հակելով վասն բարուն իւրոց սպանանեն զնա, և զնա, որք ջանան վասն չարութեան և աւերմանն իւր, պակեն, և փառաւորեն։ Վայ՝ դաւառին այնմիկ, յորում խոստանան զկարողութիւն աղքատաց, և զանիրաւ ստամբակութիւն հարստից, և փարթամաց։ Վայ՝ թագաւորութեան այնմիկ, յորում ամենեքեան ճանաչեն զչարն, և ոչ ոք հետեւի բարեաց։ Վայ՝ դաւառին, և թագաւորութեան այնմիկ, յորում գործեն զայնպիսիս չարիս մոլութեաց հրապարակաւ, որպէս յայլում դաւառի երկնչէին գործելոյ 'ի գաղտնի, և 'ի թաքստեան։ Վայ՝ դաւառին, և թագաւորութեան այնմիկ, յորում ամենեքեան լսեն ամենայնի որում ցանկան հասանին, և աւա չարն այն որում ժամանել ջանան ամենայն ջանացմամբ ժամանեն։ Ամենեքեան զոր կարեն ասել, խորհին ամենեքեան զոր կարեն խորհիլ կարեն ամենեքեան որ կարելի է, համարձակին, և դնեն 'ի գործ զամենայն համարձակին։ Եւ վատթարագոյնքան զամէ այս, զի ոչ գոյ բարի մի, որ ընդդիմանալ կարիցէ։ 'Ի յայնպիսում դաւառի մի՝ եղիցիս քնակիչ բնաւին, զի վաղվաղակի տեսանիցի փոփոխումն արանցն չարաց, կամ չքաւորի, և անապատ լինի 'ի բարեաց, կամ քայքայեալ ընկեցիցի 'ի դիցն, կամ առեցեալ տիրապետիցի յանիրաւաց։ Աղաւեալ ևս ասէր զիրացն, որք յառաջագոյն 'ի կիր արկանէին. բայց ոչ առնի 'ի ներկայեականում ժամանակիս։ Աղաչեցուցի քեզ Անթիդոնոս, 'ի դիւն անմահս երգնում քեզ, զի ճայթի սիլոս իմ մտածելով զմեծագոյն նա-

նախատինս, զորս արարին 'ի հրապարակս Հռոմ
մա արքային Բաղոսի, որոյ նախնի պատն ասա
ցեալ, և թողեալեր զայնքան բարձրագոյն, և
զծայրագոյն վարդապետութիւս, և մատեանս առ
ծերակուտն խորհրդարանին։ Զայս թուղթս
ընթերցիր առաջի նախարարաց 'ի գաղտնի, որք
եթէ ոչ զսպիցեն զինքեանս, և ոչ դարձցին 'ի
գործոց իւրեանց, յայնժամ ունիցիս զաւիթ
պատժելոյ զնա հրապարակաւ։ Եւ որ պատկա
նի առ աքսորանն քո, վաղուրեան խոստացայ քեզ
զինիլ բարի բարեկամ քո 'ի խորհրդարանին։ Եւ
զի վայելելոյ զհնագոյն բարեկամութի՝ն մեր, և
հանելոյ զքեզ 'ի կղզւոյդ այդմանէ, նաև հանել
'ի դրաւականութիւնէ զնոսս իմս զոր ետուս քեզ,
իրաւի համարիցես, զի եղիցի ամ ջանացմամբ,
և հոգաբարձութիւ՝ 'ի գործ ածեալ և կատարել։
Ահա գրիցի առ Պանուցիոս գրիչն իմ զի տա
ցէ քեզ զարձեալս հազարս, որով 'ի բաց բառ
նայցես զաղքատութիս քոյս, և աստի առաքե
ցի քեզ զթուղթս իմ զի մխիթարիցես զորտամէ
սիրտն քո։ Եւ զնս առաւել ոչ հայցեմ, եթէ ոչ
'ի դիցն խնդութի՝ն, զբարի վայելումն այնոցիկ
զոր ստացեալ ունիս, և զհանգստութի՝ն անձին
քում 'ի բազում ժամանակս զգայցես իտան քում
Անթիգոնոս։ Եւ չարիքն մարմնականք, թշնա
միքն սատիկք, և բախտքն վերաւորիչք որոշեցին
յինէն Մարկոսէս, քաւուստին Կինն իմ ողջունէ
զկինն քո Ռոֆինս, զի սակ դորայ, և դայէ
սի՝, և ես եմ քո։ Զայցելութի՝ն զոր ընկալաք,
ուրախութի՝ւ, և շնորհակալութի՝ւ քեզ դարձու
ցանեմք։ Դադարիմ անդադարապէս ցանկալ
տեսանել սատ Իտալիայ զանձն քոյ, և անդ 'ի
Սիչիլիա տեսանել զՋերմանիան իմ։

Առ Լամբերթոս կառավարիչ ։ և Նախարարն Կղզւոյն Հելլեսպոնտոսի ։ յորժամ աքսորեաց զկատակարկուսն 'ի Հռոմայ ։

Թուղթ Երկոտասանեարորդ ։

Աւրկոս Կայսր Հռոմայ ։ և Տէր Ասիու. համապայմանեալ ընդ Իւրօպայ ։ քարեկամ Աֆրիկոյ ։ և թշնամի Մաւրիտանու ։ Առ քեզ Լամբերթոս նախարար կղզւոյն հելլեսպոնտու ։ 'ի կողմանէ իւրմէ ։ և 'ի սրբազան խորհրդարանէ առաքէ զհաճոյական խնդութիւն ։ և զանսայթակ ապահովութիւն ։ Զգեստս ծիրանիս զոր առաքեցեր ինձ զգեցեալ ունիմ ։ և զսրակապն տանիմ ընդ մէջս ածեալ ։ և 'ի յանօթութեան յոյժ հաւանեալ եմ ։ եթէ մոռացեալքն ։ թէ հեռացուսցեն քո 'ի Հռոմայ Ջանայր ։ և բերէր զայնքան պտղաբերուն 'ի կղզւոջէս այդմանէ ։ 'ի վաղնջուց համաձայնեալ ։ և միաբանեալ իցէի ընդ քեզ 'ի յօգուտ քո ։ և զծառայութիւն առնելոյ ինձ ։ Եւ առաքեցի խնդրել 'ի քէն զսակաւ ինչ որպէս հեքնելով ։ և դու առաքեցեր ինձ զբաղում իրս հաւաստի ։ Իրաւի զի մեծապէս պարունակեցեր դու զծառայութիւնս քո ընդ ազնուականութիւնն քում ։ քան թէ ստիպմամբ խնդրելն իմ ժլատութիւնն իմով ։ Ա՞ղի եթէ կամիս 'ի յիշումն ածել եւ առաքեցի խնդրել 'ի քէն զբեհեզ երկոտասան ծիրանեաց ։ և դու առաքեցեր երկոտասան ան դամ երկոտասանս ։ Եւ նշանակեցի զանօթս վեց ։ և դու նախահոգացեալես զերկոտասանս ։ Զիրաւն ասեմ ։ զի բաւ այսմ պատճառիս կրկնակի եղև հաճութիւնն իմ ։ քանզի ասա 'ի Հռոմ մեծապէս հուշակեն զաղաստական առատաձեռնու-

նութիւն քո, և այդր ի Հելլէսպոնտոս զփոքրիկ
ագահութիւն իմ ուրեմն դիտեմ հաւատապէս, զի
շնորհակիցեա դու ինէն ես աղաչեմ զդիւան տալ
զաւողութիւն, և երդմնեցուցանեմ զբախան, զի
մի ուրանայցէ քեզ զբարի ազողութիւն։ Ահա
առաքեցի քեզ զերիս խումբս կաքաւողաց, և
զվարպետս յիմարաց, և ոչ յուղարկեցի քեզ զկա
մայնան, քանզի եթէ զամ յիմարան ոչք կան ի
Հռոմ աքսորիցէի, հարկէր նորապէս բաղմա
մարդել զՀռոմ։ Եւ այնքան կրթեցեալք վար
պետքս այսոքիկ առ ի ուսուցանել զնեղադարու
թիւն մանկանցն Հռոմէացւոց, և մանկունքն Հռո
մայ եղեալք են այնքան ընդունակք ի ուսանե
նելոյ, մինչ զի եթէ վարպետք կարեն ընանիլ ի
յերիս նաւակս, աշակերտքն նոցա ոչ բաւէին ի
երիս հազար նաւակս։ Առ իր մի խելմուու
թիւն իմ ոչ զօրէ հասանիլ, և սիրտս իմ յոյժ
գայթագղեալէ ի դիցս վն այսորիկ։ Չի կատա
ղումն սատանի հողմոց քակէ զտուն, բաղմու
թիւն ջուրցն հեղեղաց իբաց ցնդէն զկարմունջս,
եղեամք սառուցեալք ցրտահար առնեն զայդիան,
յանկարծահաս կայծակքն պատառեն զաշտա
բակն, պակասութիւն ջուրցն պատճառեն զսով
ի պաւառս, յօդն ապականեցեալ աւարտէ զմար
դիկս խելացիս։ Ապա ուրեմն ընդէր ոչ գոյ
այնպիսի իր իմն, որ տացէ զվախճան, և վերջ
խելագարաց։ Այլ եմ իրք աշ
տանօր պակասեալք են ի Հռոմ, բաց միայն աղա
ւաշաք, յիմարք, և ծաղրաբանք ամենեցեալք են
առատութիւն։ Ո՛հ թէ որպիսի մեծ ծառայու
թիւն առնիցէիր դու դիցն, և զորպիսի օգուտ
Հռոմայ, եթէ փոխանակ երից նաւիցն խելա
գարից առաքիցէիր մեզ զմի ի խոհեմից։ Կամիմ
ասել քեզ զբան մի։ զի ոսկերաբք դերազանցից
իմաստնոց, սրբազնագործեցեալք են կղզիդ այդ,
առ յոր ի վաղնջուց աքսորեցեալք եղեն ի նա
խանձոտ, և նենգաւորացն Հռոմայ դերազանցք
իմաստասէրք բաղումք։ Ուստի, եթէ զգայու
թիւս

թին զգայարանացդ ոչ ես կորուսեալ կարասցես բարւոք զգալ, թէ որպէս խաղալիս հոտեալ նեխի խեղդարար, այսպէս կղզիդ այդ բուրբ զանուշահոտութիւն իմասանոց։ Մինչ ես եկեալ ի պատերազմ Պարթևաց, յամի չորրորդի Կայսերութեան իմոյ, շրջելով ծովընթացութեամբ վասնդաւորեցի զանձն իմ, առ՝ի տեսանել զգերեզմանդ այդոքիկ, ՝ի քաղաքին Օրբիթայ՝ի մէջ հրապարակին վաճառի գտցես զովիդիոս, որ եղև աբասորեցեալ՝ի Օգոստոս Կայսերէ՝ի կոզմանքարանձաւացն Աբսլինիու, տեսցես զտապանն հռչակաւոր Արմենու ատենաբանին աբասորեցեալն՝ի Սիլլակ։ ՝Ի նաւահանգստեանն Արգոսանդու, գտցես զոսկերսն Կօլիոդրու, որ հաւաքեաց և շարադրեաց զօրէնսն հնագունեղս, որ՝ի յանողորմ Ներոնէ՝ի կապանս մատնեցեալ եղև։ ՝Ի դաշտին Էրլինու, ՝ի վրայ վիմի միոյ մարմարեղինոյ կան փոշիքն Սիլիսու Սերէնուն, որ զեօթն արհեստսն ազատականս այնպիսեաւ վարպետութեամբ շարադրեաց, որպէս թէ ինքն իցէր եղեալ գտիչ նոցա, որ եղև աբասորեցեալ՝ի մարիանացւոց։ ՝Ի յօրէնս բարեաց քեզ երդնում, և՝ի պատիժս փորձառութեան դնեմ զիս, եթէ ոչ գտցես այսպէս, և ճշմարիտն ասեմ քեզ, զի՝ի ծուռկս անկեալ մատեայ՝ի դերեզմանս նոցա, և՝ի քոլոր ժամն այն էին աչիք իմք խոնաւեցեալք, որք և այնպէս էին ծածկեցեալք ջուրքք արտասուաց, ոչ զոսկերսնոցդ կարծրագոյնս հողով։ Ոչ եղեն նոքա աբասորեցեալք վասն գործոց չարաց, այլ վասն անարդիւնաւորութեան հարցն մերոց, որք արդիւնաւորեցան զրկիլ՝ի յնկերակցութենէ անպիսեաց գերահռչակ իմաստանոց, և մեք որդիք նոցա, ՝ի փոչոյ այնքանից դերահամբաւ իմաստանոց։ Ոչ դիտեմ թէ որն իցէ մեծագոյն, նախանձն զոր ունիմ առ կղզին քո, կամ ցաւակցութիւնն առ թշուառացեալն Հռօմ։ Յոյժ աղաչեմ զքեզ ոչ զբարեկամ, և հրամայեմ որպէս ապասաւորի իմում, զի պահիցես զտեղիս զայդ

ոսիկ , զյատկօրինութիս , և մանաւանդ կան աղաղութիւն , զորս ես պարգևեցի : Զի արդարութի է արդարացուցեալ , որ յատկօրինեցեալ լինիցի իկենդանեաց բաղաքքն բազմամարդեցեալք 'ի յայնպիսեաց մեռելոց : Եւ զնացեալն 'ի հարիւրապետէ այսմանէ խմացիս բանիւք զորտուամ գիպոուածն , որ 'ի բանդաղրեցելոցս այցցանէ մեզ , և 'ի մէջ նոցա պատահեցաւ յաւուրն տօնի մօրն Հերէչենիա : Այս ասեմ քեզ , զի ոչ համարեմ այնքան զասատուութիւն խատութեն , զոր յաւուրն յայնմիկ տեսի 'ի Հռօմ , որքան զվատահմբաւութիւն , որ առիթ եղև մեզ : Չի բոլոր Կայսերութիւն Հռօմայ , որ ոչ երբեք յաղթեցաւ 'ի յոյշմաց , ահաւասիկ տեսի անդ աքցացեալ 'ի խելագարիցն Հռօմայ : Որոյ ոչ երբեք 'ի սեամն դրանոցա կարացին մերձենալ պէնքն , տեսանի փղոցն նոր զենուորեցեալ կատակարկուօք : Հռօմ որ յաղթահարէր զամ թագաւորութիւն , ահաւասիկ յաղթանակն նա 'ի ծաղրաբանից , և 'ի դերասանաց : Ահա եմ ես այնքան վերաւորեցեալ 'ի պատճառս իրիս այսորիկ մինչ զի ոչ գիտեմ թէ զինչ ասիցեմ , կամ թէ զինչ գրիցեմ : Միայն իր մի մխիթարէ զիս որ է : Չի ոչ ոք հետև Հռօմ , և Հռօմայինքն իւրք անարդապէս ոչ վայելեն , եթէ ոչ ընդ խելագարից ինքեանք , և կեղծաւորեցեալք իմաստունքն իւրեանց արդարապէս ընկիցին պատժեցեալք 'ի նոյն խելագարիցն , և 'ի յայսմիկ ոչ անիրաւին դիքն : Որոնեմն նա որ ծիծաղեցաւ ընդ դերասանից կատականօք , և հեքնուք , յաւուր միում ողբայցէ ընդ կատակարկուաց 'ի հաւատոն : Եւ աքսորեցի զգասա մշանջենապէս 'ի Հռօմայ , ոչ այնքան վա արեան զոր հեղին , որքան վա խելաց զորս մաշեցին , և ապականեցին : Եւ դառնամ ասել , թէ ոչ վա պատճառ եղանելոյ դոցա մարդասպանութիւն , այլ վա գոլոյն իւրեանց վարպետ բաղմաց խելագարից : Չի թարց համաբաղդաստութիւն առաւել մեծագոյնք մեզք են ընդդէմ դիցն ,

դիցն, և մեսա իրին հրապարակի կառավարութեանն դերասանից, որք բառնան զուշիմութիւնս հանճարեղաց. քան զմարդս ապանից, որք զրկեն զմարդն ի կենաց։ Զի ոչ մեծագոյն պարգևն 'ի մէջ ամենից բարեաց աջողուեցեալ է ուրեմն զբարի ուշիմութիւն խոհեմութիւն, նոյնպէս մի՛ ոք յանդգնիցի գոլ յոյժ հանդարտեցեալ խելամբ իւրով որ յոյժ անչափապէս բարեկամն կատակարկուաց, և խելագարից։ Հաւատա՛ ինձ զիր մի։ Զի ոչ թուչուն մի սիրէ զայլ թռչունս, և անասուն մի զայլ անասունս, և իմաստուն մի զայլ իմաստունս, այսպէս և այնմարմի սիրէ զայլ յիմարս։ Զնիշումն ածեմ, զի յաւուր միում որոնելով, և շուրջ տալով զկոնդակս կամ փիդօլին, յորում են տարեցուցքն Հռովմայ, դիպայ ես առ իր մի զարմանալի բանիցն Օրուեանու հռչակաւոր տեսնաբանին, զոր կարեաս գտանել թաղեցեալ 'ի կղզւոջդ Հելեսպոնտոսի 'ի լերինն Անդամանդինու։ Զի գալով մեծն Ընկկիպոն 'ի պատերազմն Պէնաց, և շրջէր առաւել ընկերակցելով ընդ քաղցեալ դերասանիցն քան թէ հզօր զօրագլխաց, ասաց նմա զբանս այս։ Իրաւի զի մեծագոյն վատահաբաւութիւն է քոյ, և արհամարհանք սրբազան խորհրդարանին զի գոլով դու յաղթող Աֆրիկացւոց, ուշիմագունից, և գու ինքդ գոլով այնքան ուշիմ, և 'ի յարենէ իմաստնոցն Հռովմայեցւոց, կամիս շրջիլ ընկերակցութիւն միայն ընդ դերասանաց, և խելագարից։ Զայն թշուառացեալ գաւառն հայմայնուք իւրովք հանճարեղքն ոչ կարաց ընդդիմանալ զորութեան մոյտ, և մոռածեաց, զի մինտ անկեալէ 'ի ներքոյ կարողութիւն 'ի մէջ այս քանից խելագարաց։ Արդ ապէ առնեմ քեզ, ով Ընկկիպոն, և ասեմ, թէ ոչ վատանգաւորեցաւ կեանն քո 'ի յԱֆրիկայ 'ի մէջ թշնամեաց քոց այնքան. որքան այժմս վատանգաւորի զիմացուածն քո, և զպատուիդ աստ 'ի Հռովմ։ Եղեն բանքս այսոքիկ կարի ոստոտիկք, և յոյժ բարիք,

թէ պէտ 'ի նենդաւորութէ աշխարհի ոչ եղեն պարզամտութէ ընկալեալք ։ Քանզի 'ի սակաւ ժամանակի , 'ի յանձանց փոքրահոգոց վա՛ փոքու պատճառի իրիք , եղէ խեղճ Ալեքսիս այն , և յոյժ հարուստ Փիլոտիսն 'ի բարեկամացն Ընդ հիպոլիտի աքսորեցեալ 'ի Հռոմայ , և մարեալ եղեւ 'ի կղզի այդ ։ Նոյնեաց ուրեմն , ոչ Լամբերթոս , դառնալով 'ի յառաջագրութիս այսոց անուանոց ղինի հասանելոյ այսոքիկ 'ի նաւահանգիստն կղզւոյդ , թողցես զդոսա ընարձակս այնու պտմանաւ , զի մի՛ կարիցեն կրթիլ 'ի յարհեստս իւրեանց , ներբակոխս արասցես զդոսա աշխատանօք , և պատժեսցես մինչ տեսանիցես զդոսա դատարկակեացս , զի թշուառանայնքդ այդոքիկ . փախչելով 'ի յարդար աշխատանաց , և առնելով զանարդար պարապորդութի , գարձեալք են դերասանութէն իւրեանց պակասագոյնք քան զմարդ , և մի՛ ունիցին զդպրատունս հրապարակս օրէն մոլորեցելոց ։ Ոչ թուին ինձ անհաճոյք իրքն հնագոյնից , և նախնեաց հարցն մերոց , բաց 'ի յայնմանէ զի ըմբերեցին 'ի յայնքան ժամանակս , այնքանից կորուսելոց ծաղրաբանից։ Յամի 226 հիմնարկութենն Հռոմայ , 'ի միում սաստիկ , և ահեղալի մահտարաժամի թատրու , յողդագ զուարճացուցանելոյ զմարդիկս , եղև առաջին թէատրոնն իլոյս ածեցեալ , և գտեցեալ , և առաջի անպատմ , յորում թոյլ ետուն դերասանից 'ի կիրարկանել զգործս իւրեանց , և են իրք վիրաւորիչք լսողաց , զի սուեաց մահտարաժամն այն զամս երկուս հարուածովք հանդերձ , և յարատևէ կատաղի բարն կատակարկուացս զամս չորս հարիւրս ։ Բարոնք հաւատամ Լամբերթոս , զի բողոքն բանտարկելոցդ զոր ակսան ասել , ոչ է աւարտեալ այդր . բայց ես ոչ զգամ զայն երբէք ։ զի ամբաստանութէն չարաց առնէ զդատաստան արդար , և զվճռահատութէն իրաւանցն բարեաց , ոչ վարպետն ներոնի առաց , թէ որքան նախատինք են լինելոցք սրտմտեալ

բար-

բարկութիւն մեղաց ընդդէմ արանց բարեաց, այնքան խայտառակութիւնք լինելոց դովութիւնն դովեցեալ 'ի արանցն չարեաց։ Ասեմ քեզ զբան մի, ոչ զի մի' երևիցին քեզ անդոյնք պատիժքս այսոքիկ, Զի Կայսերքն Հռոմայ են դորոմա-դոյնք ընդ օտարականաց, ոչ է իրաւուն լինիլ խստացեալք ընդ իւրանոցն։ Յետ այնորիկ մինչ նախատհմանութիւն եդ զիս յայսմ աշխարհս, ոչ երբէք տեսի ես զսակաւ օգտակար իրին հրաշալարակի, ոչ զմեծադոյն անզգամութեան անզգամաց, ոչ զվատթարագոյն նորագտութեան դատարկակեցից, ոչև զառաւել ստանգել զբաստնամահկանացուաց, քան զայն, որ ընկալեալ լինի 'ի դերասանից, և 'ի կատակարկուաց։ Այլ որպիսի իր այնքան այլանդակ կարէ տեսանիլ, քանզի թեթևանալն այնքան խոհեմից, վա՜ անզգամութեան մոյ անզգամի։ Զինչ մեծադոյն քայքայումն կարէ լինիլ քանզի արարեալ զառաջնորդութիւն զուսնկիպրուն Կամիթիսոլին առ 'ի խել ասացուածս առն մոյ յիմարի, և խելագարի, ոչ զի զմայլեցին նովաւ ծիծաղելով բազումք իմաստունք։ Զինչ մեծադոյն գայթագղութիւն կարէ գոլ քան զայս, զի 'ի պալատս թագաւորաց միշտ, և հանապազ բացեալ գոռուն խելագարից, և ոչ երբէք բացեալ լինի հանճարեղաց։ Զինչ մեծադոյն խստասրտութիւն թշնամութեան կարէ լինիլ քան զայս, զի տան ծերակուտքն առաւել խելագարի միում յաւուր միում, քան թէ զծառայից իւրեանց յամի միում, և ապգակատաց իւրեանց ոչև 'ի բոլոր կեանս նոցա։ Զինչ մեծադոյն անկատարութիւն, կարէ գոլ. զի բերդօրէիցն վերջնոց սահմանացն Կայսերուն, և զինուորացն Իլիրիկու տուրքն պակասին. և դերասանիցն Հռոմայ յաւելուն։ Զինչ համահանդէս նախատինք Հռոմայ կարէ լինիլ, յորում առաւել մեծադոյն զվիշտակ թողուն, ևս Իտալիայ դերասանքն, և ապաստաքն շահեցեալք, և ասացեալք 'ի ձեռս կաքաւման, և երգելոյ, քան

դհուշակաւոր զօրապետսն յաղթանակութիւն, և 'ի զենս իւրեանց : Ասեմ քեզ ուրեմն ճշմարտապէս, զի մինչ թշվառականքս այսոքիկ շրջէին 'ի Հռօմ 'ի տան է 'ի տուն, սերմանելով զլուրութիւն իւրեանց, և ժողովելով զդրամս, որք հուշակաւորքն երթային 'ի դավառէ 'ի դավառ, ծախելով զդրամս իւրեանց, վատնդաւորելով զկեանս, և հեղլով զարիւնս իւրեանց : 'Ի վերջասահմանին Սպանիու, ոչ զի Լիբիացիք ունի ցեին զպատերազմ ընդ Կատէդիանացւոց, և եղև, զի Լիբիացւոցն պակասեցան դրամք 'ի ծախս պատերազմին, Դերասանք երկուք մատուցին զենս իւրեանց, որովք պաշտպանեցեալք Լիբիացիքն յարատևեցին զպատերազմն զամ մի բուր, և պատահեցաւ, զի մթերովք երկուց խելագարից յաղթեցեալք եղեն բազումք հանձարեղք : 'Ի Յեփեսոս քաղաքն ասիացւոց, հուշակաւոր տաճարն Դիանայ, այսինքն Արտեմայ եկամուրք դերասանից հիմնեցաւ : Կագինոս արքայն, որ Ծ. դրամք շինեաց զթէբայեան եգիպտացւոց, տաւաւել ետուն 'ի պէտս շինութիւն, և ծախուց դերասանքն, քանիք համայնք բարեկամքն իւրք : Արդ եթէ պատմութիւն իւրեանց ոչ պատրէ զիս, մինչ Օդոստոս շինէր զպարիսպս Հռօմայ, տաւաւել ստացաւ զդրամս 'ի յերկուց դերասանից, որք հեղձան 'ի դետն Տիբերակա նի, քան զամ դրամն, զորս էհան 'ի գանձարան է հասարակութիւն : Առաջին թագաւորն Կորն թացոց ըստ որում դրի 'իմատեանս եղեալէ ըմբշամարտ, և այլք ասեն թէ եղեալ իցէ դերասան, և ես տեսի զգերեզմանն նը 'ի Կորնթոս, և ոչ ասեմ զստացանէ, կարեմ ասել զբաղմաց : Արդ զինչ ասես Նայեաց և տես Լամբերթոս, թէ որքան իցէ անզգուշութի դիցն, և որքան փոփոխականք իցեն իւրքն բախտին, որովհետև այնքան են իջուցեալք, և 'ի բաց բարձեալք աջողութիւք մարդկան, մինչ զի այնպէս եղանին ոմանք յիշատակելիք վասն դոլոյն իւր.

իւրեանց խեղաբարք , որպէս այլք վա՛ դոլոյն
իւրեանց իմաստուն՝ք , ընդ մի իր վայն հաճ՚իմ
ես դերասանիցն , զի ի՚ներկայութի՛ խաղիցն
իւրեանց ծիծաղեցուցանեն զամենեսեանս , խե՚
ղաբարութի՛ն իւրեանց , զոր ասեն , և մինչ ե՚
լանեն անտի , իւրաքանչիւր ոք անդ եղելոցն
ինայ տխուր , և արտուսի վա՛ զգեստուցն , և
գրամից զոյս տանին ։ Եւ իրաւի այսոր արդար
վճիռ դիցն , զի նոքա որք բերկրեցան ուն՝նուութի՛ ի՚ միասին , յետ ելանելոյ իւրեանց ի՚ թէա՚
տրոնէ անտի , լայցեն զկորուսան ընչից իւրեանց սուանձնակի ։ Արդ , ոչ կամիմ առաւել գրել՚քեզ , եթէ ոչ զիմուզիս այս , զոր առաքեմ յունականաւ բառիւ , ոմ՚ զի կարիցես ցուցանել ամենեցուն բոլոր կղզւոյդ այդորիկ ։ փութանա՚կի ի՚ յետս դարձուցանիցես զնաւսն , զի տանե՚լոցք են զապրուստս ուտելեաց ի՚ նախապատրաստութի՚ վա՛ Իլիրիկու դաւառին , խաղաղութի՚ լեցի ընդ քեզ Լամբերթոս առողջութեամբ հան դերձ , և բանան լեցի հեզագոյն ընդիս Մարկոսիս ։ Ցերակուան խորհրդարանին ողջունէ զքեզ , և դու ի՚ կողմանէ իմմէ ասասջիր զսովորական խնդալն և աջողական երդն ոչ յարտաքորէ՚ քաւուտինն իմ ողջունէ զքեզ , որպէս առաքէ վա՛ դստերն քոյ զգօտի մի յոյժ հարուստ , և փոխանակ ծերանեաց քոց , ահա առաքեցի քեզ վկոց մի զուդեցեալ ի՚ քաթանց պատուականաց ։

Առ Կաթուղիկոս յատկադոյն բարեկամն իւր, որում պատմէ զլուրս Հռոմայ։

Թուղթ Երեքտասաներորդ։

Մարկոս հոգածու նոր, Առ քեզ Կաթուղիկոս հոգաբարձու հնագունն։ Եւ արդէն աւուրք տասն, յորս ընկալայ զթուղթդ մի քո 'ի տաճարի դիոյն Յունվարի, և զոյն դին կոչեմ ինձ վկայ, զի առաւել կամէի տեսանել զանձն քո, դրեա ինձ, զի երկարատեսս դրիցեմ քեզ զեկուցանելով զկրս Հռոմայ, բայց բազում նոտարութիւն ժամանակի առնէ, զի պատասխանիցեմ քեզ կարճառօտաբար, մանաւանդ յոյժ սակաւապէս զայնցանէ, զորս ասացանկամ։ Խնդրեա յինէն, զի ծանուցանիցեմ քեզ, թէ գոյ աստ երբեք զեր ինչ նոր։ Առ այս պատասխանեմ, թէ բարւոք իցեր, եթէ հարցանիցէիր ինձ, թէ յարամեցեալ իցեր արդեօք աստ 'ի Հռոմ, և Իտալիա զեր իմն հնագոյն։ Վասն զի ամենեքեան նախասահմանութեամբ մերոյ համայնք բարիք, և հնագոյնք որդէն աւասեցալք են, և վն վատաբախտութեամբ մերոյ, զկրս նորս, և ոչ երբեք լուեալս տեսանեմք։ Կայսրն, և բդեշխն յատենանիստքն, ծերակուտքն հոգեբարձուքն, Վարդապետքն քրմապետքն նախարարքն, և հարիւրապետքն, ոչ ամենեքեան են նորագոյնք, եթէ ոչ եղեւ նաւորդութիւնքն, և չարութիւնքն յորս են հնագոյնք։ Համայնքն անցանին մեօք առ 'ի առնել զպաշտօնեայս, և կարդադրել զհրովարտաքս, մերձենալ 'ի առնուն խորհրդոց։ զարթուցանել զկաշառառութիւս, և այսու կերպիւ, առաւել գոն լուրք այժմ չորս 'ի յամս, քան որ եղեւ 'ի ժամանակս անցեալ տասն չորեք հարիւրս։ Մինչև նեալք

նեալք մեք յամենայնի իբրև արս 300 'ի խորհրդ-
դալարուն, և 'ի բարձրադոյն Կամիխեսլէն, ուր
երբեմն բամբասեմք, երբեմն գովաբանեմք, երդ-
նումք, խոստանամք թէ զմինն պարտիմք բարձ-
բացուցանել, և միւսն իջուցանել մարթի իցէ։
օգնական լինիլ այսմիկ, և յաւարհարկանել այն
միւ, պատժել ղչարս, և տալ զպարգևս բա-
րեաց, վերանորոգել զհինն, և զհինն արկանել։
Եւ զինել 'ի նորոյ, արմատախիլ առնել զմոլութիւն,
և տնկել զառաքինութիւն, զսպել զիբրեցեալս։
և ճանապարհորդակցիլ բարեաց, ճշնել զանի-
բաւան, և նպաստ լինիլ աղքատաց։ Եւ յետ այ-
նորիկ մինչ ելանեմք արտաքս 'ի խորհրդարանէն,
նք որք խօսեցան բարեպէս, և ասացին զիւրս
առաւել լաւագոյնս, նոյնքն ըմբռնեցեալք են
'ի գործս առաւել չարագոյնս։ Ո՛հ ողորմելի
Հռօմ դու, զի ասատանօր ծերակուտքն ասելով
արացուցք արացուցք, սեցուցանեն զկեանս իբ-
եանց, և յետոյ իւրաքանչիւրոք ջանայ առ օգուտն
իւր սեփական մոռանալով զբարին որ առաջա-
գոյն 'ի յօգուտս իրին հրապարակի։ Բազում ան-
գամ մնամ պշուցեալ հայելով 'ի խորհրդարանին
'ի յայլս, ոչ այլք հայեցեալք նային 'ի յիս, և
ահաբեկիմ 'ի տեսանել զՇոխաբանութիւնս բա-
նիցն զնախանձայուզութիւն գատողութեանց իւր-
եանց, և զարդարս ցուցանումն անձանց իւրեանց,
և մինչ ելանեն արտաքս անդի, դայթագղիմ ես
տեսանելով զդաղտնի կաշառառութիւն, և ըղ-
նենդաւորութիւնս սրտից իւրեանց ներսանայ-
նոց, և զգործս նոցա չարագոյնս այնքան
յայտնի, և հրապարակաւ գործեցեալս։ Աբդ-
գոն այլք իրք, որք առաւել են հիանալիք
ոչ գոյ ըմբերութի, որ կարիցէ ըմբերել։
զի նք որք սնին զանձինս առաւել վատահամ-
բաւեցեալս, և զկեանս իւրեանց առաւել անհո-
գուս, նոյնքն ինքսաբեր դիտաւորութ ուխտեն
առնել զդատաստանս առաւել խստագոյս, և
զանողորմս։ Կարգադրութի Հ անսղալական, և
'ի նենդ-

'ի նենգութէ մարդկայնոյ յոյժ 'ի կիրարկեցեալ, զի նա որ է համարձակեալ, և առաւել վստահ առ'ի գործել զմեղս եղեռնագործս է առաւելս գոյն անողորմ, և խստասիրտ վասն նոյն մեղացն առ'ի տալ ընդդէմ այլոց զխստագոյն վճռահատութիւն. երևին ինձ թէ զմեղս մեր, հայիմք ընդ աչսդաս որք ցուցանեն մեզ զիրս առաւել փոքրագոյնս, և զպակասութիւն այլոց համանկա տեսմբ 'ի ջուրն, յորում ցուցանեն մեզ իրքն առաւել մեծագոյնք։ Ո՛հ թէ որքանիցս և զորքան տեսեալ եմ ես 'ի խորհրդարանին դատապարտեցեալս 'ի կախաղանի վա՜ միայնոյ մեղաց, զոր միան գամ գործեցին 'ի կեանս իւրեանց, 'ի ձեռս նոցա որք գործեն զնոյն մեղս յա՜մում ժամու։ Զայլ շու�ածեմ զայն զոր ընթերցայ։ Զի ումն հաշակաւոր նաւարտակ 'ի ժամանակի մեծին Աղեքսանդրի, շրջելով 'ի յերեսս ծովու կողոպտէր, և ընկղմէր զա՜մ նաւն զորս գտանէր։ Արդ հրամանաւ բարեբախտ ազգին Աղեքսանդրի զինուորեցան ընդդէմ նո՜ր, և ո՜ղ զի ածեալ 'ի կալանս կացուցին զնա առաջի Աղեքսանդրի, առ յոր է հարց Աղեքսանդր։ Ասա ինձ ով Դիոնիդես ընդէր այնքան գայթակղես դու զծովն բոլոր, մինչ զի ոչ գոյ նաւ որ երթիցէ 'ի յարևելս, ոչ և յարևելից կարեն նաւել 'ի յարևմուտս։ Առ յոր աւագակն պատասխանեալ ասաց։ Եթէ ես գայթակղեցայ զծովն ով Աղեքսանդր, դու գայթակղես զծով, և զցամաքս։ Ո՛վ Աղեքսանդր, ես կողոպտեմ զծովն մի միայն նաւաւ վասն այսորիկ կոչեն զիս գող, և աւազակ, իսկ դու կո՛ կողոպտելով երկու հարիւր նաւօք, և վրդովելով զբոլոր սիրելերս երկու հարիւր հազար զինուորաք կոչես կայսր։ Ես երդնում քեզ ով Աղեքսանդր, եթէ բաման հեզանայցեր 'ի յօդնութէ ինձ, և զիքն անողորմաբար խստանայցէին ընդդէմ քեզ տալով ինձ զկայսերութիւնքս, և քեզ տայցէին զաղքատիկ նաւիին իմ, գուցէր երբէք թէ բարեդոյն թագաւոր ընտիցէի ես քան զքեզ,

ղքեզ, և դու իցէիր չարադոյն աւազակ քան զնս, բանքս այսոքիկ եղեն քարոզք պատասխանեցեալք, և ի սիրտն աղնուականութիւն հղորացելոյն Աղէքսանդրի քարոզք ընդունեցեալ, և առ ի տեսանել, եթէ խոստմունքն նոր համապատասխանեցին գործոյն իւրոյ, էհան զնա յաւազակութէն, և արար զնա զօրապետ զօրաց, և եղև այնքան առաքինի ի վերայերիլի, որքան էր չարաճաճիկ ի վերոյ ծովու։ Եւ խոստանամ քեզ Կաթուղիս իմ, զի Աղէքսանդր զիրաւունս ունեաց առնելով զայն, և առաւել զմեծագոյն իրաւունս ունեաց կոչել Նմայ Դիօնիդէս։ Քանզի ահա ասասանօր Իտալիա նոքա որք կողոպտեն հրապարակաւ, կոչեն զնա տէր, և տեսարք, և զնա որք գողանան ի Թաքստեան կոչեն աւազակք, ի մեծագոյն տարեցուցս Լիվիու ընթերցայ, թէ զնա լովյոյժ բախմամբ դիմուն պատերազմին ի երկրորդ ճակատամարտի մարտնչմանն ի մէջ Հռոմայեցոց, և կարթագինացւոց, եկեալ դեսպան մի Լուզիտան ազգաւ, այսինքն փորթուգէզ ազգաբեցեալ ի բոլոր սպանիս առ ի տեսանել, եթէ կարելի իցէր առնել զմիաբանութիւն ինչ եկեալ ի Հռոմ հասատատեաց փորձիւ ի խորհրդարանին թէ յորմէ հետէ մտեալէր Իտալիա, տան անդամ կողոպտեալք էին զդեսպանն իւր, և զինչս, հանդիպեցաւ զի գտնվնա ի Հռոմ, և տես զի մի ոմն ի նոցանէ, որ կողոպտեալէր զդեսպան իւր դնէր ի կախաղանի զնա որ զերծուցեալէր զինքն ի գողէն, ուրեմն տեսեալ զայն պիսի անիրաւ գործառութիւն անարդարութեան, և զի առնէր զայնպիսի անիրաւութիւն անմեղին ոչ այր ոք յուսահատեալ, առեալ զդործելի մի և այնու գրեաց ի վերայ փայտին կախաղանին զբանս այս, որ ասէր. Ով կախաղան, դու քուսար ի մէջ աւազակաց, զարդացար ի մէջ աւազակաց, կորեցար ի յաւազակաց, սաղեցար ի յաւազակաց զուգեցար ի յաւազակաց, տնկեցար ի մէջ աւազակաց, պանդանեցար ի յաւազակաց,

զակաց, և 'ի ժամանակի պիտանաւորութեան, որք պարտէին կախել զաւազակս, արձակեն զաւազակսն, և ընուն զքեզ արամբք անմեղոք։ Ուրեմն տեղին յորում ընթերցայ զայսոսիկ էին օրինակեցեալք 'ի գրոցն Լեվիս, և 'ի պատմութեանն Դանիէլ, և երդնում քեզ 'ի դիսն անմահս, զի համայնք տասնակամք հաստատեալք էին մերանաւ սեւագոյնիս, և միայն այսոքիկ բանքս կախաղանացն գրեցեալք էին գնջիֆրաւ կարմրագոյնիս։ Ոչ դիտեմ, թէ զորպիսի այլ լուրս կամիս զի գրիցեմ քեզ, եթէ ոչ զայս։ զի են ամենեքեանք նորագոյնք, և ամէն այնքան գիրկք և փարիւկք, և տեսանեմ զամենեսեան այնքան թիւրասլիս, և չարաբար հիմեցեալս, մինչ զի երկնչիմ թէ յանկարծօրէն անկեալք վրայ ցին բոլորովնիմբ 'ի վայր։ Սնայցէ 'ի մէջ իմ և քոյալ իր մի, զոր կամիմ ասել քեզ։ Յայտ առնեմ քեզ, զի ոմանք կարի արագապէս 'ի վերելեալ բարձրացան առ 'ի զօրացու

քոս իմ, զի զՀինչինոս Քուլվինոն յամ մի տե-
նաք եղեալ բդեշխ, և զորդիսն իւր դատաւորս
ատենի, կինն իւր եղև տիկին կոյս աղջկանց
ազնուականնաց, և 'ի վերջ քան զամ եղև ինքն պահ
պանիչ կամիմիտօրին, և յետ այնորիկ ոչ 'ի տա-
ղրոջ միում, այլ 'ի յաւուր միում տեսաք զՀին-
չինոս գլխատեցեալ 'ի հրամանակի, զորդիսն
իւր հեղձուցեալ 'ի դեռն Տիբերիոյ զկինն նորա
աքսորեցեալ 'ի Հռոմայ, զտունն իւր քակեցեալ
և իջուցեալ 'ի գետին, և զամ ատացուածս իւր
սեփականեցեալս և տիրեցեալս 'ի դանձարանն
հասարակաց։ Զայս օրինակս այսքան սատիկ,
և խստագոյն, ոչ ընթերցաք 'ի գրեանս, որպէս
զիր մի երկբոյեալ, այլ տեսաք աչօք մերովք առ 'ի
գնել 'ի յիշողութիւն մեր, և 'ի միտ ածել։ Ոպէ
են զանազանք ազգք մարդկան, այնպէս և են
զանազանք բարք մարդկան և փափագք մահ կա-
նայուցաց։ Եւ երևի թէ ճշմարիտ իցէ այս։
քանզի զայն զոր մինն սիրէ, զնոյնն ատէ միւսն
զկնի այսոց որք հետևին, այնորիկ փախչին։ Ո-
մանք ըղձան, և ցանկան իրի իմիք, և այլք մ-
մանք ձանձրացեալք զզուին զիրէն այնմանէ։
Այսու կերպիւ զի ոչ ամենեքեան միով իրաւ կա-
ռեն հաճոյանալ, և բաւականանալ, և ոչ մինն ամե-
նիւք իրօք կարէ ընդունիլ զվճարումն։ Ընտրի-
ցէ իւրաքանչիւր ոք զոր կամի, և դրկիցէ զաշ
խարհ որքան կամի, և որքան հրամայէ, զի ես ա-
ռաւել կամիմ ելանել 'ի վերջ յայս դժուարադնաց
դարս ատկաւ առ ատկաւ, և հանդարտօրէն, և
եթէ ոչ կարիցեմ հասանիլ 'ի դաքաթն, մանա-
ւանդ կամիմ մնալ 'ի ճանապարհի. քանզի փու-
թապէս, և արագօրէն ելանել քրտամբ 'ի վերջ,
և յետայնորիկ իջանել 'ի վայր գլորելով։ Յա-
զագս այսր պատճառիս ուրեմն նկատիցեն յին-
քեանս սիրտքն այնոքիկ, որք կամին անկասկած
ելանել։ Զի ոչ ես յանդգնի գրիչն իմ առ 'ի գրել,
և դու այսու կերպիւ մի հայիցես 'ի սակաւս զորս
ասեմ, եթէ ոչ 'ի բազումս զորս սոքաք կարեմ,

և կամիմ ասել ։ Որովհետև սկզբնաւորեալքեն և գուս ես ի յերկրի օտարականի կամիմ գրել քեզ աստի զամ լուրս ։ Արդ ծանուցանեմ քեզ , զի յայսմ ամի ներկայումս յորում եմք ի 25 Այիս ամսոյն, եկեալ դեսպան մի ի յանտիոս , զոր ասեին գոլ ի կղզոյն Սեթինու , այր դեղեցկայարմար ի մարմնի , և համբաւաբարս դիմաւ վստահ , և արիասիրտ ։ Եվ գոլով նա ի յերկարագոյն աւուրսն յամարայնոյ ի Հռոմ , և տեսեալ թէ ել կեալ հասանի սատիկ ցուրսն ժամանակինձմբ բայնոյ ներհակ նաւելոյ ի կղզին իւր , և գործառութիւնքն իւրք չեւեւս էր հասեալ ի կատարումն, յաւուր միում գոլով ի դրան խորհրդարանին ։ եռեռ զամ ծերակուտսն մնանել ի խորհրդարանն , որոց իւրաքանչիւր ոք մերկացեալէր ի զինուցն , զորս տաներ ընդ ինքեան ։ Արդ նա որպէս քաջասիրտ , և նախանձայուզ հայրենասոյն իւրոյ , առաջն ներկայութիւն ամենցուն ասաց մեզ զբանս այսոսիկ ։ Ո՛վ հարք հռամագրեցեալք, ով դուսմարք բարեբախտք , ես եկեալ ի յօտար երկրէ ի Հռոմ, միայն առ՛ի տեսանել զՀռոմ , և գտի զՀռոմ առանց Հռոմայ ։ Ոչ բերին զիս ի Հռոմ պարիսպքն Հռոմայ , որք շրջապատեալք են Հռոմ , այլ համբաւն նոցա , որք կառավարեն զնոսայ ։ Ոչ եկի ես առ՛ի տեսանել զգանձարանն , յոր մտանեն գանձքն բոլոր գաւառի , և թագաւորութեան այլ առ՛ի տեսանել զնորհրդարանն սրբազան , յորում եղանի խորհուրդ վասն ամենից մարդկանց ։ Ոչ եկի ես ի տեսանել , թէ զո՞ էր պարտէք , և յաղթէք զամենեսեան , այլ եկի մտածելով , թէ տեսանելոցդէ զձեզ առաքի նիս քան զամենեսեան ։ Արդ համարձակիմ ասել զիր իմն ։ Եթէ դիքն ոչ են կուրացուցեալ զիս , կամ խելամտութիւնն իմ ոչ է վրդովեցեալ , կամ դուք ոչ էք Հռոմէացիքն այնք , որք կայնն ի Հռոմ, կամ ոչ իցէ գոյ Հռոմն Հռոմէացւոց ։ Ջնախանեաց ձերոց լուսաք մեք ի կղզւոջ մերում,

թէ

թէ տիրեցին բազմաց գաւառաց, և թագաւորութեաց, և ստացան զայնս զօրութեամբ միոյ, և պահպանեցին հանճարեղութեամբ ամենեցուն։ Իսկ այժմ դուք ամենեքեանքս աւերեք և ոչ ոք գոյ որ ստանայ։ Կախիլն հարքն ձերք, և համայնք զորքն իւրեանց զգործառութիւնս գերահրակելիս արարին, և դուք որք էք որդիք նոցա, զամ ժամանակս ձեր անցուցանէք 'ի գեղեցկախօսութիւն, և 'ի ընդոր հաբանութիւն։ Զայս ասեմ ձեզ Հռովմէացիք, քանզի մեռուցիք զնս 'ի ծիծաղելոյ առ 'ի տեսանել թողուլ այնքան հեռաւորութեամբ և դնել զզէնս 'ի գուռն խորհրդարանին, որքան նախնիքն ձերք առնէին 'ի ձեռս զզէնս առ 'ի ջատագովել Կայսերութեան։ Զինչ օգուտ թողուլ զզէնս վասպահովութեամբ անձին ձերոյ, և մուծանել զձեզ 'ի խորհրդարանն որով սպանանէք զամ մարդիքս։ Զինչ օգուտ ողորմելի պանդխտին դործ ինչ ունեցողի զի ծերակուտն մտանէ 'ի խորհրդարանն թաց զինու սրոյ, և աղեղան, և սիլուն իւր մտանէ յայնր զինւորեցեալ նենդաւորութեամբ, և խորամանկութեամբ։ Ո՛վ Հռովմէացիք ծանուցանեմ ձեզ, զի մեք 'ի կղզւոջ մերում ոչ ունիմք զզօրապետս զինւորեցեալս, եթէ ոչ դեռերակուտս նենդաւորս, զուրս սրեցեալս, և զգեղարդս յօրինեցեալս ոչ ունիմք, բայց սարսափեալք դողմամբ 'ի սրոյ խստացելոյ, և 'ի լեզուէ թշնաւորեցելոյ։ Եթէ 'ի խորհրդարանն մուծանիցէք զզէնս, և նոքովք սպանանիցէք զոմանս, այս սակաւ ինչ կարէ ինքասել։ Բայց եթէ ոչ զանիցիք օգնականք անմեղաց, և ոչ յուղղաւորիցէք զնս, որք եկեալք են վասն բանի, և գործառութեան իրիք, արդարև այս է գործ անմբերելի։ Ես ոչ դիտեմ, թէ զինչ ժառանգութիւն ունին 'ի Հռովմ, զի ոչ տան թոյլ խելագարիցն տանիլ զսուր անդ 'ի կղզւոջ մերում, և 'ի ձեռն առնուն զզէնս, կամ վասն խելագարութեան, կամ վասն առասելոյ սրամտութեան։ որ եթէ վասն սրամտութեան, և ամբարտաւանութեան իցէ, այս ոչ է գործ

Հռո-

Հռոմէացւոց, այլ անգոյթ, և անողորմ մարդոյ, և թէ աղմկիչք, և շփոթասէրք լիցեն դատաւորք խաղաղարարաց։ և անբարուանքն դատաւորք խոնարհաց, նաև նենգաւորքն միմեանց իսկ եթէ խլեսցեն ի ձէնջ զսուրս, զո՞ խենթ գոլցն ձերոյ, ոչ թոյլ տան օրէնքն գլոյ, զի դձ՝ արք խելագարք հովուիցեն զձո՛ հանձարեղս։ Եւ ի յայսքան ժամանակս, յորում ասպատեմ ուղղութեան, և աւարտման գործառուն իմոյ, զո՞ չարակնութիւն ցանկութիւն ձերոյ, չեւեւ եմ զգործ ինչ յառաջեցուցեալ առաւել քան յաւուրն առաջնում, յորում մտի ի քաղաքս սոյս։ Բերեալ զկաղ զձեթ, զմեղր, զբրբում, զդիմոյտս, զաղ զոսկի, և զարծաթ ի կղզւոյն իմմէ ի Հռոմ, և կամիք զի երթիցեմք յայլ ուրեք ի խնդրել զի բաւանս։ և զգաստատանս։ Կամիք ունիլ զօրէն մի ժողովելոյ զեկամուտս ձեր, և զայլ օրէն մի՝ զո՞ սահմանելոյ զիրաւունս մեր։ Կամիք գուք, զի յաւուր միում հատուցանիցեմք զհարկն դիմոսական, և ոչ կամիք զամ մի բոլոր զերծուցանել զմեզ ի գործառութեէ, որոյ սակս եկեալ եմք այսր։ Եւ պահանջեմ՝ ի ձէնջ Հռոմէացիք, զի կամ սահմանագրիցէք զայն զոր հայցեմք, կամ բառնայցէք զկեանն մեր ի մէնջ, որպէս զի եղեցուք զերծեալք, կամ լուարուք զբողոքումն մեր, ոչ՝ զի ծառայիցեմք ձեզ։ Որպիսեաւ այլով կերպիւ կարէ լինիլ, զի ականջք լուիցէք զայն, զոր ոչ կամիք տեսանել աչք։ Իսկ եթէ երևին ձեզ, թէ՝ ի բանս իմ եղեալ լիցեմ յոյժ անհամաստ, և անկարգ, առ՝ի ձարակել զոգուստ հայրենեաց իմում, սակաւ փոյթէ՛ լինձ, եթէ բառնայցէք յինէն ասա զկեանս իմ և այսպէս աւարտեմ զխօսակցութիւն իմ։ Իրաւի Կաթուղոս իմ այսաքէկ եղեն բանքն զոր՝ ի խորհրդարանին ասաց, զոր ես խնդրեցի՝ ի քաղաքացիզ դնիլ։ Քեզ ճշմարտութեամբ ասեմ, զի զհամարձակութիւն զոր Հռոմէացիքն սովորք էին յայլսմ դաւառի ունիլ, այժմոյս օտարականք ունին՝ ի Հռոմ։ Ոչ պակասեցան ոմանք, որք ասացին,

թէ

թէ գեղեցիկն այն արդիւնաւոր իւր դող պատժէ ցեալը բայց ոչ կամեցան դիքն, թէ վա՜ ճշմարտասիրութիւնն ոք պատժիցի 'ի ներկայութիւն իմում։ Բաւականացի, և յոյժ բաւականացի մեզ զի ըստ բերիցեն չարութեաց մերոց թարց զի սպանանիցեմք և հալածիցեմք զնա՝, որք ազգ առնեն մեզ զչարութիւն յայնմանէ։ Ոչ ապահով ջոկն ոչ խարաց, եթէ հովիւն ոչ ունիցի զշուն ընդ ինքեան։ Եւ այն զոր յաղագս այսորիկ զգամ, է՛ զի որպէս ոչ պարտէ արդելուլ զհայհոյումն չանց մասն ոչ հատանելոյ զբուն հովուին, այսպէս և ես ոչ է մարթ արգելուլ զճշմարտաբանութիւն, յաղագս զայրանալոյ ծերակուտին։ Ոչ գոն դիքք որք հրամայեն, ոչ օրէնք որ թոյլ տայ, և ոչ իր հրապարակի որ խոստանայ, թէ նոքա որք կացուցեալք են առ'ի պատժել զատութիւն, նոյնքն եղանիցին դահիճք նոցա՝, որք ասեն զճշմարտութիւնս, ուրեմն ծերակուտքն ցուցանեն զինքեանս գող ալք 'ի կենցաղաւարութեան, և երբ բեմն են առաւել մարդկօրէն, քան թէ այլք մարդասիրք, և դոլով ծառայք մոլութեաց, Ո՛ զատանցի զնա՝ 'ի պատժոց։ Օ՛վ Հռոմ առանց Հռոմայ, որ ահա ոչ զայլ ինչ ունիս, եթէ ոչ միայն զանունն Հռոմայ։ Նայեցաց և տես, թէ ուրէ ժամանեալ ծայրն յաղթանակութեան քոյ, փառքն որդոց քոց, պատիւն տաճարաց քոց, զուզղութիւն դատաստանաց քոց, զի ասասանօր առաւել պատժէն զնա, որ բամբասէ զծերակուտս մի միայն, քան զնա՝, որք հայոյիցեն զամ դիսն 'ի միասին։ Ի սաստկալի պատճառանս ունիմ առ'ի տեսանել զծերակուտս մի կամ զհոդաբարձու դող վատթարագոյն քան զբազումս, և ասեմ (թէպէտ նեղէ զիս խիղճմտանքն իմ) թէ բարեդոյնէ քան զամենեսեան։ Ճշմարիտն ասեմ քեզ Կաթուղոս իմ, թէ ոչ է պիտոյ երթալ, և որոնել զդիսն 'ի տաճարս։ քանզի ծերակոյտքն եղեալք են դիք 'ի միջի մերում։ Եւ այս տարբերութիւնս դոյ 'ի մէջ նոցա որք են անմահք, և

'ի միջ սոցա որք են մահկանացուք : Դիքն ոչ երբեք առնեն զբար ինչ, և ծերակուտքն ոչ երբեք առնեն զբարի ինչ : Դիքն ոչ երբեք ասեն իսկ սէր ոչ երբեք ասեն զշնմարիտն : Դիքն նե բեն բազմիցս, և սոքա ոչ ներեն երբեք : Դիքն շատանան պատուեցեալք գոլով հինդ անգամ յիւ բաքանչիւր տարւոջ, իսկ ծերակուտքն կամին գոլ երկիրպագեցեալք տան անգամ 'ի յաւուրն : Զինչ առաւել կամիս զի ասիցեմ քեզ, եթէ ոչ զի դիքն զամ ինչ զոր առնեն արդիւնաւորին գոլ գովեցեալք, և ծերակուտքն 'ի յամ գործս իւր եանց արդիւնաւորին գոլ անդոսնեցեալք և պար սաւեցեալք : Վերջապէս եղծափակեցից, զի դիքն ամենեին են անպաղելիք զի միշտ տան նշանին, և 'ի յոչ ինչ իրս պաղին երբեք, և ծե բակուտքն ոչ ինչ բնաւ զիրս կարեն տալ նշա նին, այլ 'ի յամի պաղին. միայն 'ի միոջ իրի ուշին զիրաւունս ծերակոյտքն առ 'ի ոչ ընդունիլ ըզ պատիժս, և է այս : Քանզի որպէս ոչ գիտեն, և ոչ իմանան, թէ զինչ իցէ դարձումն 'ի մեղայ այսպէս և ոչ կամին զի ատենաբանքն ծախիցեն զժամանակս առ 'ի ասել զշնմարտութիւն : Արդ լիցի զոր լինելոցէ : զի ես զայս հաւաստի ու նիմ, այսինքն եթէ այր իցէ և եթէ կին. որ տարահերքք զունկն իւր 'ի լսելոյ զշնմարտութի, անկարելիւ, թէ կցորդիցէ զսիրտն իւր 'ի սի բել զառաքինութիւն : Լիցի դատաւոր որ դատէ, լիցի ծերակուտ, որ կարդադրէ, լիցի Կայսր, որ հրամայէ, լիցի բդեշխ, որ տայ 'ի կատա ռութիւն, իցէ ատենաբան, որ ատենաբանէ. զի ոչ գոյ այր 'ի մահկանացուց, որ իցէ այնքան խո հեմ 'ի գործս իւր, և ոչ այնքան մաքրեցեալ 'ի ցանկութեց, մինչ զի ոչ արդիւնաւորիցի զպա տիժս վասն արարմանցն եղելոց, և զգուշութիւն վա յնորիկ զոր առնելոցէ : Արդ ուրեմն գրեցի քեզ զայլոցն, և այժմ կամիմ ասել զիր իմն յինէն : Վասն զի 'ի բանից թղթոյն քոյ ազգ եղև ինձ, թէ ցանկաս գիտել զիր ինչ զանձնէ իմմէ : Գի

տացիր ուրեմն, եթէ ոչ գիտես, զի յամենայն Յունական արարին զիս գատաւոր 'ի վերայ խորհրդարանին, որ է Պաշտօն իմն որում ոչ ցանկութիւն իմ ցանկայր, ոչ արդիւնաւորութիւն իմ ընդոյր, ոչև է սակաւ կարելի (ըստ կարծեացն ա-մենից իմաստասիրաց։) եթէ ոչ զի կամ նուազ է զեսերամտութիւն, կամ յաւելու զեսերապարտութիւն մարդկան, առնուլ կամաւ իւրով զբեռն 'ի վերայ իւր 'ի բեռանցն այլոց։ Սատակ իրակութիւն է վասն մարդոյ միոյ ամենիմաստի առնուլ զպաշտօն այնպիսի, որոյ յաղագաւ, առ'ի բաւականանալ ամենեցուն, պարտ լինի ցուցանել զդէմս իւր արտաքին ներհակ այնմիկ, զոր զգայ 'ի ներսն, գուցէ ասիցես ինձ Կաթուղիսիմ, թէ վասն այսորիկ են բարիքն զի բեռնաւորիցեն զլինքեանս ընդ պաշտօնիւք։ Ո՛հ վատաբախտ Հռոմ. յերբ ունիցիմ ես զայն, զոր ունիլ բարեդոյնքն քո ցանկան։ այսինքն մեծագոյն մատուարաժամ պարտ եղանիլ վասն բարեաց անձանց, մինչ ես փոքանիմ որպէս բարի 'ի մէջ չարեաց։ Ես եմ տու զհաւանութիւն ունելոյ զՊաշտօնս այս, ոչ ոչ կամեցող և ցանկացող նմայ, եթէ ոչ առ'ի կատարել զցանկութիւն ամուսնոյն իմոյ Քաւուս տինին, և առ'ի ընուլ զպատուիրանն Անտոնիոսի անարին իմոյ։ Մի զարմանար ընդ իրն զոր առնեմ, այլ ընդ իրն զոր թողում 'ի յառնելոյ։ քանզի այր ոք, որ նշանեաց զինքն ընդ Քաւուս տինին վաղուրեան ոչ գոյ գործ աղտեղի. զոր ոչ գործիցէ։ Երդնում քեզ, զի յօրէ յորմէ եղէ ամուսնացեալ, թուի ինձ, թէ ոչ լցել մնացեալ 'ի յիս խելամտութիւն բնաւին։ Արդ թողում ոգիմ ամուսնանալն, և դառնամ խօսիլ 'ի պաշտօնէ։ Իրաւի ամ մարդ խաղաղասէր, պարտի 'ի պաշտօնս գոլ յոյժ նեզայեցեալ, և տանջեցեալ։ քանզի որքան ապահովք երթան պաշտօնքն 'ի մէջ առաքինեաց, այնքան վտանգաւորեցեալք երթան առաքինիքն 'ի մէջ պաշտօնից, և եթէ կամիս գիտել թէ որպէս ճշմարիտ լցել այս,

թուեայ զայն զոր շահեն, և նովաւ տեսցես զայնս զոր կորուսանեն։ Եւ եթէ զբարիսն, իւրեանց գիտես այժմ լուր զչարիսն իւրեանց, եթէ ցանկաս գիտել։ Նա որ ծանրաբեռնեալ զինքն հոգսունակութիւնք առ'ի հովուել զայլս, որոնք զհոգս վասն իւր զնախանձ վասն դրացեաց իւրոց, զքաջայիս վասն թշնամեաց իւրոց, զաղքատութիւն վասն փարթամութեան իւրոց, զարթնացուցիչ վասն գողոց, զվտանգ վասն մարմնոյ իւրոյ զվախճան վասն աւուրց իւրոց, և զկորուստ վասն համբաւոյն իւրոյ։ Վերջապէս որոնք զարհուրանս առ'ի կորուստնելոյ զբարեկամս, և վերադարձումն առ'ի ստանալ զթշնամիս, ոչ վատաբախտ այն, որ'ի զաւակաց բազում մարց առնէ յինքեան զբեռնինս ծանուցս. զի միշտ, և հանապազ ունելոցդ զհոգս, և զվարանումն առ'ի տալ զվճարումն ամենեցուն. հաւաքումն վասն այնոցիկ զոր տալոցդ այլոց, և կասկածանք վասն այնոցիկ որ'ի քաց բառնալոցդ արտասուս եթէ կորուսանելոց լցդ երկեայութիւն եթէ վատահամբաւելոցն։ Նա որ ճանաչէ զայս ամ, ոպարտի գիմել թարց սպասելոյ խայթման իմիք առ յանկիւն ինչ և կալ'ի թաքստեան։ Բայց որպէս ասեմ զմինն, այսպէս ասայցէ և զմիւսն. զի երդնում ես, և դու ոչ հակադրես ինձ։ Զի տաւաւել գտանելք ատանօր զայնպիսիս անձինս, որք կամին մանաւանդ դատանիլ'ի յանցս վտանգաւորս, և դոլ ըմբռնեցեալք'ի յայնս. քանզի լինիլ տպահովք'ի տեղիս անկասկածս. քաղում անգամ լուայ'ի քաղում անձանց, որք ասէին թէ երթիցուք'ի թէաստրոնն առ'ի ընթացուցանել զոյլս, երթիցուք'ի դաղանատունն առ'ի արշաւեցուցանել զգազանս, և ժամանեալք'ի տեղին, ոչ թէ անասունքն'ի նոցանէ, այլ նոքա յանասնոցն եղեն փախստականք, և այսու կերպիւ, ուր երթային առ'ի ընթացուցանել զանասունս, անտի դառնան ինքեանք առաւել լքեցեալք, և թալկացեալք։ Կամիմ ասել. թէ որք սիրեն սատանիլ և

և Ջանան Կառավարել զայլս լինին կառավարեցեալք յայլոց։ Ջանան հրամայել, և լինին 'ի ներքոյ հրամանաց, և վերջապէս, մինչ կարծեն թէ 'ի նեռքոյ ձեռաց իւրեանց ունիցին զբաղումս, թշուառականքն այնք դնեն զինքեանս 'ի նեռքոյ ոսիցն ամենեցուն։ Աբդ յաղագս դատանելոյ զՀար, և զնոսա վա՜ վասանգաց այսոցիկ. միով իրաւ միթիթարեն զիս մտածմունքն իմք, և են այսոքիկ։ Զի թարց Ջանալոյ իմում, և առանց մատուցանելոյ զիս նոցա, ծերակուտքն կամիք իւրեանց խնդրեցին, և հրամայեցին ինձ։ Աբդ 'ի յուրթ երորդ տախտակին հնագոյն օրինացն մերոց գրեցեալք կան բանքս այսոքիկ։ Հրամայեմք, և պատուիրեմք սրբազան խորհրդարանին մերում, զի ոչ երբեք տացի բեռն պաշտօնի իրիք նմա, որ կամաւ, և յօժարութ իւրով եկեալ մատուցցէ զինքն առ'ի ընդունել զայն, այլ տացի բեռն նմա, զոր ամենեքեան միաբանութ ընտրեցին զնա։ Իրաւի եղեն օրէնք արդարադոյնեղբ։ Քանզի ոչ են մարդիկք այն քան առաքինիք, և ոչ այնքան բարեկամք իրին հրապարակի իւրեանց ոլոր մոռանալով զհանդարտութիս, և զհանգստութիս իւրեանց, յանձ առնուցուն զինքս լինքեանց և Ջանայցեն այլոց զօգտակարութի։ Ոչ ոք է այնքան խելագար, որ թողլով զլինն զորդիսն, և զհայրենին իւր քաղցրագոյն, կամիցի երթալ յերկիր օտար, եթէ ոչ տեսանելով զինքն 'ի մէջ օտարականաց մոռծիցէ ընդ ատուերաւ դատողութիւն որոնել զոգուտն իւր սեփական։ Ոչ առանց արտասուաց ասեմ. զի թագաւորքն անհոգութիւն, և դատաւորքն ագահութիւն իւրեանց քակեալք, և աւերեալք են զբարձրագոյն պարիսպն բարւոյ քաղաքավարութեան Հռովմայ։ Օվ Կաթուլոս իմ, զինչ կամիս զի ասիցեմ քեզ, եթէ ոչ։ Զի են այնքան լեալք անհաւատարիմք հաւատարմութիքն մերք, այնքան ագահեալք ագահութիքն մերք, այնքան համարձակեալք համարձակութիքն

մերք, և այնքան անդգամոցեալք են ամենեխա
ծութեանն մերք, մինչ զի այնպէս նախապատրաս
տեն այսօր գոտաւորքդ, առ'ի երթալ, և կողոպ
տել զդրացիսն մեր, որպէս զօրագլուխք ընդ
դեմ թշնամեաց մերոց։ Աղդ առնեմ քեզ գի
տել զի ուր Հռօմ էր սիրեցեալ վասն պատժելոյ
իւրոյ զչարագործս, աստուծոյ է անարդեցեալ
վասն մերկացուցանելոյ զանմեղս։ Յիշեմ ես զայն
զոր ընթերցայ, զի ժամանակին յորում բաւա
կանանայր Դէոնէսիոս սիրագուզացին առ ամ
կղզին Սիցիլիայ եկն դեսպան մի'ի կղզւոյն կողո
ոացւոց'ի Հռօմ, որ էր այր ծեր և անցեալ աւ
ուրքք, հանձարեղ'ի դիրս, հզօր'ի զէնս, և
յոյժ հեռատեսիչ ամենից իրաց։ Սա շրջելով'ի
Հռօմ ետես զհանդիսաւորութիւնն սրբազան ծե
սակատարացն, զբարձրագոյն բարձրութիւնն կամ
փիտոլին, զհամարձակութիւն ամբոխին առամիսի
թէատրոնն, զբազմութիւնն ծերակուտից, զնուրս
դիտութիւնն խորհրդածուաց, զչիաւս յաղթանա
կաց, զպատիժս չարագործաց, զնաղարութիւնն
բնակչաց, զանազանութիւնն ազգաց, զառատու
թիւնն ուտելեաց, և զկարգաւորութիւնն պաշտօ
նից, և վերջապէս ետես, զի Հռօմ էր իրաւի
Հռօմ։ Արդ հարցեալ եղև դեսպանին այն,
թէ զինչ թվիւր ինքեան։ Իսկ նա պատասխա
նեալ ասաց այսպէս։ Ո՛վ Հռօմ են դարս ժա
մանակին քոյ դար բոլորովիմբ հանձարեղաց, և
եկեսցէ այլ դար մի, որ իցէ բոլորովիմբ խելա
զարից։ Ո՛հ ծայրագոյն, և յոյժ բարձրագոյն
բան։ Իրաւ Հռօմ թարց ուներլոյ զտուն ասե
նախօսիցյամն 600 իսկ այժմ են ամք ՇԾ հարիւր,
յորս ոչ դասանի մի'ի հանձարեղաց։ Լուր զոր
ասեմ քեզ, և ոչ ասեմ հեգնելով, այլ հաւաս
տի։ Զի եթէ դիքն յարուցանիցին այսօր'ի մե
ռելոց զնախնիսն մեր, կամ ոչ ճանաչիցին և
ընդունիցին զմեզ դալ որդիք իւրեանց, կամ
շնթայասալ զմեզ առնիցին, որպէս զնեալ
դարս։ Ահա այսոքիկ են իրքն, որք անցանին
'ի

'ի Հռոմ ; և դու ոչինչ գրես զայնցանէ ; որք անցանին 'ի յԱգրիպինայ։ Ասեմ ոչ կարեմ գրել քեզ զիր ինչ , եթէ ոչ զայն , որ տացէ քեզ զնեղութիւն։ Իսկ դու գրեայ առիս զիր ինչ որ տացէ ինձ զնեղութիւն։ Դրուսիլա կինն քո կայ 'ի բարի առողջութիւն։ Խուսմբք նաւուցն , որք եկին 'ի Սէթինու , զաղ , զձէթ , և զևորիսխ մեղեր , հոգացեալ ես բարւոք նախահոգացողութիւն արարի զի օգտակարեցաւ 'ինմանէ։ Աղէն գիտես դու , թէ որպէս Քօլիբիոս հօր եղբայրն մեր անկեալ 'ի ձիոյ , մեռաւ 'ի յանկարծ։ Լաէրսիա , և Կօլիդօրոս եղեն բարեկամք , պատճառաւ ամուսնութիւն միոյ։ Ահա ա՛ռաքեցի քեզ զհանդերձ ինչ , և աղաչեմ զքիսն , զի բարւոք Վայելցես։ Քաւստինն իմ ողջունէ զքեզ , և դու համբրես որդոյն քո ողջունեա յինէն։ Դիքն լեցին պահապանք քոյ , և ձախո զակ բանաքն անջատիցեն իքէն։

Մարկոս բոլորովիմբ քո առ քեզ
կաթուլոս , որ եաղ բոլորովիմբ իմ։

Առ սրբահարեցեալն Հռովմէացիս որք ներ-
կայացուցեալք էին զպատկերն Մարկոսի
'ի տեսարանի իմիք, առ'ի կատակել
և պարսաւել զնա։

ԹՈՒՂԹ ԶՈՐԵՔՈՍԱՆԵՐՈՐԴ։

Պարկոս սաեենադպիր, որ 'ի Կողոսիայ
ընթեռնու զդպրութի, առ ձեզ Սր-
բահարեցեալք Հռովմայ, առողջու-
թի անձանց, և զսպումն զղջման կե-
նաց ձերոց ցանկայ։ Ահա այսր գրե-
ցին ինձ, թէ 'ի տօնախմբութէ մերն բէրէչին-
թիսա, գուք ամենեքեանս 'ի միասին ներկայաց-
ուցեալք զտեսարան, կամ զթէատրոն մի, յորում
եդիք զպատկերն իմ ոչ զցուցակ կենաց իմոց,
և զերգս եղանակաց վա՜ համբաւոյն իմոյ։ Ասա-
ցին ինձ, թէ Աբէլնա շարագրեաց զտաղն։
Լուչիա Գուլվիա գրեաց, գու Թուրինգուլա
երգէիր, և ամենեքեանս 'ի միասին 'ի տեսարա-
նի անդ ներկայացուցեալք հանեցիք զպատկերն
իմ նկարեցեալ բազում կերպիւ, դնելով զգիրք
մի 'ի ձեռս կալեալ հակադարձօրէն, կամ գլխի
վայր որպէս Փիլիսոփայ կեղծաւոր, ուսնելով
զեղուն յոյժ արտահանեցեալ 'ի բերանոյ, որպէս
շատասաս, և բարբանջող. համարձակեալ եդիք
'ի գլուխս իմ զլեռ մի զուդեցեալ 'ի թղթոյ ոչ
կաւատ բացարձակ, և յայտնի հրապարակօրէն։
'Ի մի ձեռս իմ եդիք զնոտ մի փշային ոչ սիրա-
հարի գաղձացելոյ, ընդ դրօշաւ մի անկանելով
'ի վայր, որպէս երկչոտ զօրապետի, արարիք
զկէս մուրուացս գերծեցեալ, որպէս սատան-
ասի ուրուք որ ոչ պահէ զտուեցեալ խօսքն
իւր։ Կապեցիք դաստառակաւ զաչս, որպէս
ադիտի դատապարտեցելոյ, և ոչ շատացեալք
այսու

այսու ամենայնիւ, հանեցէք զիս յայլում աւուրս այլ նոպագիւտ կատականաց։ Զի այսարիւք զիս պատկեր մի քանդակեցեալ ունելով զոտս ի յայր դէ սրունկս ի քահրբարեղինոյ զնկուանս ի փայտէ, զոլորս ոտից ի յայրոյ, այսինքն դեղնայ պղնձէ, զանդամս ի պղնձէ, զորովայնս ի տաշեղայ, զկուանակս ի կպրոյ, զձեռս ի խմորէ, զգլուխս ի բուից այսինքն ի գաճից, զականջս ի շոյ, զաչս ի իժից, զհերս գլխոյս ի յարմատոյ հաղողի. զատամունս կատուի, զլեզուս կարճայ, զձակատս ի կապարէ, կամ արճճոյ, յորում կային քանդակեցեալք տողս երկուս հանդերձ գրովքս այսոքիւք։ Ռ. Ա. Հ. Ռ. Կ. Կ. որք ըստ կարծեաց իմոց տաքս այսոքիւք կամին ասել այսպէս։ Ոչ ունի Ալքան Հրա հալելիս Պատկերս այս Որքան Կեղծաւորութիւն ունի Կեանքն իւր։ Եւ յետ այսորիկ գործառութիւնս գնացիք առ յամին դեռոյն, և անդ կայրք ունելով զգլուխն ի վայր կախեցեալ պատկերին իմոյ զոր մի բոլոր, ուր եթէ ոչ էր լեալ արկինն Մէսալինա, կարծեմ, թէ մնայցէր անդ ի կախաղանի մինչև ցայսօր։ Այժմ ով տիկինք սիրահարեցեալք գրեցիք ինձ զԹուղթ մի ընդ Քուլվիոս Քաբրիանաւն, թէ վա՞ այսորիկ մի նեղանայցեմ ես, այլ որպէս այր սիրահար, ի ձեռաց սիրահարեցելոյ կանանց ընդունիցեմ որպէս զհեքնուն և զկատականս, և քանզի ոչ ունելով ես զժամանակ խորհելոյ զայսմանէ, առաքեցիք հարցանել ցիս զվիճաբանութիւն մի զոր կամիք դուք գիտել յինէն, եթէ ես գիտիցեմ ի գիրս իմ, թէ յորմէ, և վասն որոյ ուստի, կամ յերբ, կամ որպէս ստեղծեցան նախկինք, և նախաստեղծք կանայքն. և քանզի բարքն իմ են զի կա տականս ընդունիցիմ որպէս զկատականս վասն որոյ հրամայիք ինձ արարիլ։ Այլք բարեկամք իմ, և ձեր գրեցին ինձ, և գեր քան զամենասեան Քուլվիոս դեսպանն ձեր աղերսեաց զիս, և ես լուեցի, և առ ոչ ոք բնաւ բողոքեցի զձենջ։

միայն թէ թողթոյն ձերոյ և վիճաբանութեան տամ զպատասխանիս։ Արդ որովհետև այլ ոչ ոք աբար ինձ զհարցումս այդ զոր դուք առնէք, և հաստատեմ զպայմանաւ թէ ոչ ումեք, եթէ ոչ առ ձեզ սիրահարացդ առաքեմ զպատասխանիս։ Իսկ եթէ տիկին ոք համեստ կամիցի առնուլ առ յինքն զհարցումն ձեր, նշանէ, թէ արհեստն զոր ունիք դուք նախանձի նա ևս ունիլ։ Իրաւի զի տիկին ոք որ զայրանայ, և զայրացեալ ցուցանիցէ զինքն 'ի նեղութիս ձեր հրապարակաւ, աստուստ դատապարտեմ զնա, զի ունի զմեղս ինչ 'ի դաղտնի։ Նա որ ամրացեալ է 'ի տեղւոջ ապահովագոյնի, ոչ երկնչի 'ի բառանչմանէ ցլոյն, և որկայ 'ի վերայ աշտարակի բերթից ոչ ահաբեկի 'ի մեքենայականէ հրդեհեցմանէ։ Կամ միմ ասել, թէ կին բարեկենցաղ ոչ երկնչի 'ի յառնէ չարալեզուէ, Տիկնայք բարիք, ընկալարուք զիս 'ի մշտնջենական ծառայութիւն ձեր, և դուք չարիք ընկալարուք զիս որպէս զմահաբեր թշնամի ձեր։ Պատասխանելով ուրեմն առ վիճաբանական հարցմանն ձեր, պատկանի դի տել թէ յորպիսւոյ նիւթոյ եղեն գոյացեալք նախնիք կանայքն։ Ասեմ թէ բաւ զանազանութեամբ ապագայ, և ազանց որդան 'ի վերայ աշխարհի զանազանք եղեն կարծիքն որք գտանին 'ի սյատճառս յայտիկ։ Ասացին եգիպտացիքն, թէ յորժամ նեղոս գետն ելանէր 'ի ծոցոյ մօր իւրոյ առուգանելով զերկիր, մնացին անգամանք բազումք յաղտաղտկայինք, և վերաժամանեալ զՁերմութեի տապոյն զարդացան բազումք անասունք և սողունք ջրեղէնք, և 'ի մէջ նոցա գտեցեալ եղև առաջինք, և նախկինք կանայքն։ Ծաներուք ով տիկնայք, զի հարկ եղև ելանել գետն 'ի մօրէն առ 'ի ծնանել զնախածին կինն 'ի յերկրի։ Համայնք ասեն ծուռածք եղեն ծնեցեալք, և զարդացեալք 'ի յորովայնի մօրն իւրեանց, քաց 'ի կնոջէ, որ զարդացաւ առանց մօր, և այս բարուքք երևի

թէ Ճշմարիտ իցէ. քանզի ոչ թարց մօր ծնայք դուք, այսպէս թարց կարդի, և թարց կանանն դեայք, և թարց կարդի, և կանանի մեռանիք։ Խրաւի զի բազումք աշխատանք են դնելիք, և բազում խորագիտութիւն են որոնելիք, բազում անդամ են մտածելիք, և բազումք օգնականութիւնք են ունելիք, բազումք ամք են սպասելիք, և 'ի մէջ բազմաց կանանց են ընտրելիք նա որ կամի զմի միայն կին մի ըստ իրաւանց կառավարել։ Որքան անընդելք, և սատանիկք կատաղիք իցեն քաղանքն, սակայն 'ի վաղճանի առիւծն ունի զառիւծատունն իւր, ցոյն ներ մտակի 'ի ցլարանի իւրում, զձին տիրէ և իշխէ սանձն, կարթն հանէ զձուկն 'ի ջրոյ, դայլն ըմբռնեցեալ նուաճի պարանոցակապօք, և ծովք միայն կինն է կենդանի մի անճնշելի, որ ոչ երբեք կորուսանէ զանդգնութիւն իւր առ 'ի հրամայել, և զվատահ դառողութիւն իւր վա՜ ոչ կամելոյ կալ 'ի ներքոյ հրամանաց։ Աստուծոյ զիւքն զմարդիկքս այնքան մարդիկք, և զանասունս այնքան անասուն և զեղեր մարդկան այն քան բարձրագոյն, և ուժեղութիւս այնքան զօրեղս մինչ զի ոչ դոյ իր որ թռչիցէ բարձրապէս և ոչ որ զերծանիցի թեթևութիւն, և ոչ որ ջատագովիցէ զօրեղութիւն։ Բայց միայն վասն ձեր կանանցդ սիրահարեցելոց ոչ դոյ խայթ, որով զձեզ վարիցեն, ոչ զպախուց, որով զձեզ կարիցեն ունել։ Ոչ զանձ որ զձեզ ջանձահարիցեն, ոչ զկարթ որ ըմբռնիցեն ոչ և զուռկանս որ որս ածցեն։ Եւ վերջապէս ոչ դոյ օրէն որ զձեզ ենթաջնիցէ, ոչ ամօթ որ զձեզ ճնշիցէ, ոչ զերկիւղ որ զձեզ ահաբեկիցէ, և ոչ պատիժ, որ զձեզ զսպիցէ։ Ո՜հ թէ որպիսաւոյ չարաբախտութիւն գիմադրէ զինքն մարդն այն, որ կամիցի ուղղել, և հովուել զձեզ։ քանզի, եթէ անդգամ մի առնուցուք ինչ 'ի ձախակողմն բոլոր աշխարհս ոչ է կարող արտահանել զայն 'ի գլխոց ձերոց։ Եթէ 'ի յիրս ինչ առաջդիցեն ձեզ,

ոչ երբէք հաւատայք , եթէ ասցէ ոք ձեզ զնորհուրդ , ոչ երբէք ընդունիք , եթէ ոք ասպառնայ ձեզ , իսկոյն սկսէք բողոքել , եթէ ոք զձեզ վիրաւորէ իսկոյն հալիք . եթէ հաստոյգեն հպարտանայք , եթէ ոչ մեծարեն զձեզ , շուտով բորբոքիք նախանձու , եթէ զանցառնիցեն զձեզ , առնէք զձեզ համարձակեալ , եթէ ոք պատժիցէ զձեզ , վերադառնայք 'ի յիժ , և 'ի քարքի : Վերջապէս ոչ ոք 'ի կանանց կարաց երբէք թողուլ զյանցանս , այլև շնորհակալ լինիլ , վա՜ բարերարութեան ընդունեցելոց : Կոչիցեն այսոր զկին մի , որ իցէ առաւել անմիտ , քան զայլ ամ կանայս , երդնումն ես , զի երդնուցու , թէ սակաւագոյն գիտութեան իւրով առաւել գիտիցէ , քան զամ մարդիքս ոչ զի ճշմարիտիցէ , զի առաւել գիտնոյն զակասին երբեմն ինչ 'ի հանճարեղութենէ : Արդ կամիք գիտել և տեսանել , ով տիկինք , թէ որքան սակաւէ այն , զորս գիտէք , և որքա՜ն բազումք են այնք զորս անգիտանայք : զի 'ի յամ իրս դժուարագոյնեղս այնպէս վաղվաղակի , և փութանակի սահմանադրէք , որպէս թէ զամս հազարս նախատմոծեալք իցէք զայնմանէ . և եթէ ոք հակառակիցէ ձեզ վասն խորհրդակցութեան , ունիցիք զնա ոչ զմահացուցիչ թշնամի ձեր . յանդուգն կինն այն որ կամի տալ զնորհուրդ մարդոյ , և առաւել յանդուգն մարդն այն որ առնու զնորհուրդ 'ի կնոջէ : Դառնամ ես ասել , թէ խելագարեալ նա , որ առնու զնորհուրդ , և առաւել նա որ խնդրէ . բայց առաւել ևս խելագարագոյնն նա որ կատարէ : Ըստ որում կարծեմ ես , թէ նա որ ոչ կամի սահիլ 'ի յայնքան պնդագոյն քարն , և ոչ վիրաւորիլ 'ի յայնքան չարագոյն տատասկն , և ոչ խայթիլ 'ի մէջ այնքանեաց փշոց , լուիցէ զայն զոր ասէդդ , և առնիցէ զայն որ թուիցի ինքեան , խօսիցի բարւոք , և գործիցէ զչարեաւք , 'ի խոստանալն խոստանայցէ զբաղորմ , և 'ի լրումն

խոսա-

խոստման ոչինչ կատարիցէ, և վերջապէս գո-
վիցէ զնոսա ձեր, և դատապարտիցէ զնորս
հուրդս ձեր։ Հարցանիցեն սատանոր զբազումս,
և յոյժ հռչակաւոր մարդիկս, որք մեռեալք են
արդէն, թէ որպէս եղեն 'ի խորհուրդս կանանց
մինչ կենդանիքն էին. զի եմ ես 'ի հաւատի,
թէ ոչ յայնմ ժամանակի կամին ծնանիլ առ'ի
հաւատալ, և ոչ այժմ կամին յառնել 'ի մեռելոց
առ'ի լսել, որպէս եղև Փիլիպոս ընդ Օլիմ-
բիայ։ Փարեզ ընդ հեղինէ, Աղէքսանդր ընդ
Ռոսանայ, Էնէաս ընդ Դիդոյ, Հերքուլես
ընդ Անտէոս։ Անիբալ ընդ Տամիրայ, Սար-
կոս Անտոնիոս ընդ Կղէոպատրայ, Յու-
լիոս ընդ Դոմիցիայ, Նէրոն ընդ Փոպէոս։
Իսկ եթէ ոչ հաւատայցեն սոցա, որք անցու-
ցին զինքեանս ընդ նշ, հարցանիցեն ցիս որ-
տուսմն, թէ որպէս վարիմ ընդ ձեզ։ Օ՛վ կա-
նայք, մինչ յիշեմ թէ ծնեալեմ 'ի ձէնջ արհա-
մարհեմ զկեանն, և մինչ մոռանեմ թէ կեամ,
և տարիմ ընդ ձեզ, սիրեմ զմահն։ Քանզի ոչ
դոյ այլ մահ, եթէ ոչ կենցաղավարիցն ընդ ձեզ։
ուստի դոյ այլ կեանք, եթէ ոչ փախչիցն 'ի ձէնջ։
Առհասարակ սատանուածք կանանց են, որք ա-
նեն, թէ իցեմք ապերախտք մեք մարդիկս։
քանզի գոլով ծնեցեալք 'ի յորովայնէ ձերմէ,
վարիմք ընդ ձեզ որպէս ընդ աղախնեաց։
Յաւելուք ասել, թէ գուք ծնայք զմեզ
ընդ վշտօք, և սնուցիք զմեզ աշխատանօք ու-
բեմն արդար իմն իցէր տեառնդարել զմեզ միշտ
'ի ծառայութիւն ձեր։ Բազում անգամ աղաչիմ խո-
կալով, թէ ուստի դայ զի մարդ իկք կամին այն-
քան և ցանկան կանանց։ Ոչ դոն այլ, որք ոչ
արտասուիցեն, սիրտք որք ոչ բեկանիցին, հո-
գի որ ոչ տրտմիցի, առ'ի տեսանել զայր հան-
ձարեղ կորուսեալ զկնի կնոջ միոյ խելագարի։
Անցուցանէ զօրն ողջոյն զայնպիսին ծանրացու-
ցանելով զաչսն, և 'ի խաւար գիշերի տանջիլ
մոռածմամբ, յաւուր միում 'ի լեալ զաւրս, և

'ի միւսում աւուր առնելով զծառայութիւն էր,
բե

ապահէ, և 'ի յառնելն գոհակոչէն, և վերջանի
ասեմ թէ դուք էք աղտաղտուկ մի , յորում ի
մասուանքն վանդաւորին , և պալատամտքն
տղմտին , 'ի ձեզ ուշիմքն աղտեղին զհամբաւս
և միամտքն ապականեն զկեանս : Արդ թողցուք
զկարծիսն եպիսկոպացոց և եկեղեցուք առ յոյնսն որք
ասեն , թէ 'ի յանապատին արաբիոս ուր արե-
դակն առաւելաբար ցուցանէ զզօրութիւն իւրոյ
ջերմուեռ անդ 'ի սկզբանէ երևեցեալ կին մի միայն,
և թռչուն մի միայն որ փիւնիկ կոչի որ մի միայն
դուանի, և ասեն թէ թռչունն այն զարդացեալ
եղև 'ի ջրոյ , և կինն 'ի մեծագոյն ջերմութիւն ա-
րեգական և ծառոց որթանց , այսու կերպիւ , զի
կայր ծառ մի յոյժ կերեալ 'ի որթուց , որոյ վի-
եկեալ կայծ իմն բոլորաձև հրոյ բոցակիզի և
վառեցաւ ծառն և այսպէս 'ի հրոյ անդի , և 'ի
մոխրոցն յայնց որթուց այրեցելոց եղև դոյա-
ցեալ նախաստեղծ կինն : Արդ թէպէտ ես եղէ
Փիլիսոփայ Հռոմէացի , ոչ ասեմ թէ չարաբար
իցէ ասացեալ յայսմ կարծեաց Փիլիսոփայն յոյն:
քանզի իրաւի ով տիկնայք սիրահարեցեալք , 'ի
լեզուս հրացեալ քէք և բարուք էք որպէս որ-
թունք ցեցոյ : Ըստ զանազանութեանէ կենդանեաց,
և անասնոց այսպէս ևս բնութիւն 'ի զանազան
մասուն մարմնոյ եղ զոյժ , և զզօրութիս իւր ար-
ծվոյն 'ի կտուցն ,մի եղջերուոյն 'ի յեղջերս, օձին
'ի պարանոցն , ցլոյն զգլուխն , ընձառոյն 'ի թաթն
ձիոյն 'ի կուրծն , շանն յատամունսն , խոզին զա-
ռամնն արտաքինս , աղաւնեաց 'ի թևսն , և կա-
նանց 'ի լեզուս : Իրաւի ոչ բարձրանայ այնքան
թռչուն աղաւնեաց , որքան երևակայութիւնն
ձերոյ խելապարութէ , ուստ այնքան քերձէ կա-
տուն եղնդաւն իւրով , որքան դուք քերձէք զան
միտսն ատիպմամբք ձերովք , ոչ վիրաւորէն այն
քան զձիւն , այսինքն զէշն վայրենի , շունքն որ
սորդաց որք հետևին նց որքան վիրաւորէք դուք
զողորմելիս սիրահարսն ձեր , որք ծառայեն
ձեզ : Ոչ վնասէ , և ոչ դնէ 'ի վտանգս զինքն
նա , որ կալնու ձեռամբ իւրով եղջիւրն ցլոյն ,
որքան

որքան վտանգաւորի համբաւն եղկելոյն այնո-
ւրիկ , որ անկանի ՝ի ձեռս ձեր , և վերջապէս
ոչ ունի այնքան թոյնս օձ մի ՝ի պարանոցի խա-
ւսամ որքան դուք ունիք ՝ի լեզուս ձեր : Արտա-
հանեմ զամ տիկինս Հռովմէացիս ՝ի մի կողմն քան
զի գոն քաղումք ազնիվք Հռովմէացիք որոց ոչ
գոյ գանգատ յանձինսիւրեանց , ոչն երկբայու-
թի ՝ի համբաւս նոցա : զայսպիսեացս ոչ խօսի
թողութն իմ , և ոչ իշխէ գծագրել գրիչն իմ ,
և այլ ամենեքեան որք ոչ են այսպիսիք . ասեմ՝ի
կանացն որք են այնպիսիք որպիսիքեն ամ ա-
նասունք թոյնաւորք որք ոչ ունին ՝ի մարմինս
իւրեանց այնքան թոյնս սփռեալս որպէս կին
մի չար ՝ի լեզուս իւր ունի ժողովեալս : Արդ
տրտմեսուս դիքն հրամայեցին , և նախասահմա-
նութիքն բախտին խոստացան , զի կեանքն մարդ-
կան ոչ կարիցեն անցանել թարց կանանց , Ա-
դեմ երիտասարդացն , և աղաչեմ զներսն զար-
թուցանեմ զհանձարեղս , և ուսուցանեմ ան-
մոլից . զի փախիցեն ՝ի կանանց չարահամբաւաց
առաւել քան ՝ի մահտարաժամէ հրատարակեցեալ
ոչ , ընթեռնելով զօրէնս պղատոնի յոյժ հնագոյնն
ասեն նմայ զբանս զայսոսիկ : Հրամայեմք , զի հա-
մայնք կանայք հրապարակօրէն վատահամբաւ-
ցեալք եղիցին հրապարակաւ ՝ի քաղաքէ արտաքս
եցեալք , վանդի տեսանելով այլք , թէ մեղն ոչ
ինայ առանց պատժոյ , արհամարհիցեն զմեղն ,
զոչ անկանելոյ ՝ի պատիժս , և ասէր Լաս օրէնն ։
Դարձեալ հրամայեմք , զի ներիցեն կանանցն
զամ յանցանս զորս գործեալք իցեն անձամբ , եթէ
տեսանիցեն զղջացեալք կատարեալ զղջմամբ ։
Բայց ոչ երբեք ներիցեն նմա , որ զչար ինչ ա-
ռարեալ իցէ լեզուաւն իւրով ։ քանզի մեղն
գործեցեալ անձամբ , է՛ չար ինչ , որ եղանի
տկարութիք բայց մեղքն լեզուաւ գործեցեալք
են չարք որք եղանին նենգաւորութեամբ ։ Ո՛հ
ահագին պղատոն թաք և չափ ամենից իմացուա-
ծոց , և թագաւոր ամենից փիլիսոփայից , մինչ
՝ի

'ի ժամանակի քում ոսկեզծի արարեր զորեանս այսպիսիս, յորում էր այնքան չքաւորութիւն կանանց չարեաց և այնքան առատութի բարեաց կանանց յունականաց, զինչ արդեօք առնիցեիր, եթէ տեսանիցեիր ատանօր 'ի Հռոմայորում գոն այնքան չարութիւնք հրապարակօրէն, և այնքան սակաւ բարիս 'ի գաղտնի։ Բնականաբար կանայքն պարտին դող երեսաք ամօթխածք, 'ի բանս ժուժկալք 'ի զգայուն խոհեմք, 'ի գնացս հանդարտք, 'ի ղրուցատրութիս քաղցր, 'ի պատժելն գթածք, 'ի կիսեանս պատկառելիք 'ի յանձինս առանձնացեալք, 'ի խոստմունս ճշմարիտք, 'ի սէրս հաստատունք, Աերջապէս, նա որ կամի դող բարի, ոչ պարտի հաւատալ զանձն իւր ու շիմութեանցն ուշիմց, ոչև զանգամութիս անզգամց համբաւն իւր, Կինն առաքինի պարտի զգուշանալ 'ի յիւրսքանչիւր մարդոյ, որ խոստանայ նմա զիր իմն։ քանզի յետ այնորիկ մինչ բոցն վէնուսին բարբոքի, և կուսիկաս նեռատարեալ զնեռս իւր, այնպիսին զթողութի չնորհիցէ։ Քանզի հարուսան մատուցանեսցէ նմա զամ զոր ունի, և աղքատն զամ զոր կարէ, իմաստունն թէ եղիցի յոյժ բարեկամ իւր և անմիտն լինի մշտնջենական ծառայ իւր հանձարեղն թէ կորուսանէ զկեանն վասն նր, և յիմարն թէ ընդունի զմահ վասն նորա, ծերքն ասացեն, թէ կամին լինել բարեկամք բարեկամաց նր, տղայքն թէ եղիցին թշնամիք թշնամեաց նորա։ Սինն խոստանայ հատուցանել զպարտս նր, և միւսն առնուլ զվրէժ 'ի նմանէ որ անիրաւեցաւ ընդդէմ նորա։ Աերջապէս սոքա որպէս զի ծածկիցեն զաղքատութիւն նորա, և նոքա վասն զի հրատարակիցեն զգեղեցկութիւն նորա, և այսպէս թողուն տղամարդն կորուսանել անձն իւր, և տալ զվախճան համբաւոյն իւրում։ կամիմ թողուլ զբարին վասնզի գիտութիւնն իմ ոչ է առաւել քանթէ տալ առնել։ Արդ հարցանեմ զձեզ, ով տիկնայք սիրահարեցեալք եթէ իցէր

պղատոն այժմուս կամ դուք իցեք յայնժամ, առնիցեք պատկերին իմում զտեսարանս կատա-
կի և տանիցեք դեռնաքարշ առնելով զպատկերն իմ՝ ի մէջ Հռովմայ իրաւի ոչ երբեք։ Արդ այժմ
՝ի արարելոցս զորս տեսանեմք՝ ի ձեզ այժմ՝ ի երկիրս այսոսիկ եղեն զորս ասեն յայլոց։ Սակաւք դոն
՝ի Հռովմ, զորս Պղատոն, և օրէնն իւր ոչ դա-
տապարտիցեն։ Չմի իր ոչ կարէք ուրանալ. եթէ
իցեմ ես վատթարագոյն քան զամ մարգիկս՝ ի
վախճանի դատանիցէք զվախճան չարագործու-
թեան իմոյ. քայց ոչ զայս կարէք ուրանալ, թէ
զիրաքագոյն չարիսն, և զվատթարութիւն կե-
նաց, ձերոց ոչ կարեմ պատմել զամ աւուրս կե-
նաց իմոց։ Չմեծ վտանգուն կինն խոհեմա-
գոյն, զոլով դրկից խելագարաց. մեծագոյն
վտանգս ունին ամենիխաղք կանայքն բնակելով
ընդ անզգամաց։ զմեծագոյն վտանգս ունին ա-
ռանձնացեալքն ընդ համարձակաց։ զմեծա-
գոյն վտանգս ունին ողջախոհքն ընդ պոռնկաց,
զմեծագոյն վտանգս ունին պատուեցեալքն ընդ
վատահամբաւաց. քանզի ոչ գոյ կին վատահամ
բաւ, որ ոչ խորհիցի թէ ասէքն իցեն վատահամ
բաւք, կամ ոչ ցանկանայցէ, թէ իցեն վատա-
համբաւք, կամ ոչ ջանայցէ զի լիցին վատահամ
բաւք, կամ ոչ ասասցէ թէ են վատահամբաւք,
և՝ ի վաղճանի առ՝ ի ծածկել զվատահամբաւու-
թիւն իւրեանց, վատահամբաւեն զամ բարիսն
ահա աւուրքդոն ով տիկնայք սիրահարեցեալք,
որք եթէ ճանաչէք զիս, ճանաչեմ ես զձեզ։
եթէ ասէք ասեմ և ձեզ. դիտէք զի ես դիտեմ,
եթէ լռէք, լռեմ ես, և եթէ դուք խօսիք
հրապարակաւ, ես ոչ խօսիմ ծածկաբար։ բա-
ւուրք զիտես դու Աէրլինա, որ շարագրեցեր
զտանաւորս վերի՝ ի տեսարանի, զի առաւել
սուղագոյն ծախեր Լուսիդոս մսագործն զմիան
հորթկան՝ ի սանդանոցի իւրում, քան թէ դու
զանմեղ աղջկունս՝ ի տան քում։ Բաւուրք դիտես

դու.

դու Լուչեայ Քուլվիա, զի մինչ դնայիր և գիտես թէ ընդ ումի բրեթայ առ'ի առնել զնա զաղուեթի ընդ առն քում և արարեր զայս պայմանս, զի միանգամ յօթեներակի կամ դու ննջիցեր ի տան ձերում։ Բարւոք գիտես դու, ով Ռոթօրիա, որ զամս երկուս ծախեցեր զմանկութիւն քո 'ի մէջ ծովու, և զպայման եդեր ընդ ծովագողին Իփիրոտայ, թէ վա՜ հարիւր նաւորդաց ոչ մուծանիցեր 'ի նաւն զայլ սիրահար բայց ի քէն։ Բարւոք գիտես դու Թուրինգուլա, զի յաւուր միում առաջի իմ պատմիր, և թուէիր զսիրահարս քոյս զորս ոչ կարալով թուել մատամբք վա՜ բազմութեա՜ նց, խնդրեցեր զքսակ մի լի սիսեռամբք։ Բարւոք գիտես դու Իդնա Կուռսիա, զի մինչ հոգաբարձոյն քաղաքին էր մուտ 'ի տունն քո, առ'ի հանել զնչան սիրահարութեա՜ քոյ էգիտ զհինգ զգեստս մարդոյ, որոյ զգեստաւորեցեալ շրջէիր 'ի դիշերի, և զմի միայն զգեստ կանացի, որով շրջէիր 'ի տուն ջեան։ Բարւոք գիտես Պէտիլնա Քաբրիցիա, զի Ալվինոս Մէդէլլոս դոլով ամուսին քոյ առաջի վերակացուին քաղաքի եդ 'ի քարտի, զի հրապարակօրէն զա՜մ զոր շահեալէիր 'ի տան իւրում 'ի սիրողացն քոց ծածկաբար։ Բարւոք գիտես դու Կամիլա որ ոչ չատոնալով ընդ քաղաքակցովք քով.եբազում ընտանեկցուին որք ուներին ընդ քեզ՝ ամ ազգս օտարականաց և գիտես խօսիլ զլեզուս ա՜մ ազգաց։ Ամոդ կամեցայ նշանակել զնա՜, որք նշանակեցին զիս, վիրաւորել զնա՜, որք վիրաւորեցին զիս, հալածել զնա՜, որք հալածեցին զիս, վատահամբաւել զնա՜, որք վատահամբաւեցին զիս, և այլոցն ներեկ գրիչն իմ, զի՝նք ներեցին ինձ 'ի տեսարանի անդ, Ամոդ քանզի թուղթն իմ սկսաւ զոր արարիք անձին իմում կամիմ զի աւարտեցից 'ի յայնմ, զոր զգամ զհամբաւէ ձերմէ, և վասն այսորիկ եղբարք եկեցից զթուղթս թէ զա՜մ ինչ ասեցից մարդն կարողէ վեր

ծանիլ փայն բաժանելով զինքն յայնցանէ, քայց ոչ կարէ զերծանիլ ի կանանց եթէ ոչ փախչելով ի նոցանէ։ Աւարտեմ, և խնդրեմ ի դիցն տեսանել ի ձեզ զայն, զոր դուք ցանկայք տեսանել ի յիս։ Արդ ուրեմն սիրահարեցեալքեք, խորհրդակցիմ ընդ ձեզ, զի որպէս դուք կամեցայք, սկզբաղր առնել ինձ ի տեսարանին այս զպէս և դուք ծաղրապէս առէք զզնուասխանիւ։

Մարկոս կողոսացի առ սիրահարեցեալսն Հռովմայեցիս։

Առ Բոհէմիա հարձն իւր որ կամէր երթալ ի պատերազմն։

Թուղթ Հնգետասաներորդ։

Մարկոս նախարար Հռովմացի, եղեալ ի յաշխատակիր պատերազմիս Դացիու առաքէ զողջուն առ քեզ հարձ իւր Բոհէմիա, որ կայ ի յանդորրութեան Հռովմայ։ Զերծանելով ես ի սատիկ, և ի յոյժ խստագոյն ձակատամարտէ, ընթերցայ զպակաս տողս թղթոյն առ քէն գրեցեալս, և զմի երկարագոյն պատմաբանական գիծս ի կողմանէ քումմէ լուայ։ Ասեմ քեզ, զի եղեալես դու ինձ առաւել ահարկու, քան թէ թշնամիքն իմ ինձ, յահ և ի յերկիւղ։ Զի հազիւ առեալ զթուղթն քո ի ձեռս իմ. իսկոյն թափանցեաց խոտաբոյս թոյնն ներդութեամբ իւրոյ ի սիրտս իմ։ Յորժամ տարանջատեցի զմարմինն իմ ի յղձակցութենէ քումմէ, կարծէի զիս ի սրտի իմում ազատեցեալ գոլ ի թոյնից սիրոյն քոյ։ Յորժամ ես կամաւ իմով, և դու ոչ կարալով և առաւել ետուք զմեզ ի ազատութենէ հաջութեանցն մերոց, կարծէի ես թէ և դուք բաժանեալք անջա-

ջատեցան աչք մերք 'ի նայելոյ առ մեմիանս։ Բայց դուք էք այսպիսիք, և այնպիսիք, զի առնէք արտաքսումն սիրոյ դանձարանս ոխակալութեան։ Սերն ձեր ամենեցունց կարէ մաքրիլ միով փոքր բաղձանիս հատիս։ Բայց ոխակալութիւնն ձեր ոչ են բաւականք համայնք խաչնդեղքն, և ջուլ ապքն Աղեքսանդրիու։ Դուք ցուցանէք զձեզ կարի դժուարակիր առ 'ի ներել թշնամւոյ միում, և յոյժ թեթեւոյն ամում ժամու առ 'ի փոխել զսիրոցս ձեր։ Յոյժ մեծաւ հեռաքրքրութեամբ նայեցեալէ իմ զի մինչ 'ի տղայութեան իմում ցան կուլթին իմ բանտարկեցեալէր զկամն իմ, ոչ էր բէք տեսի 'ի կանայս զհաւատարմութեան ոչ զիրաւունս 'ի սերն, ոչև զվանձան 'ի յատելն։ Ներկայ լըբութիւնն քո դանդատէ 'ի տղայական խեղաբարութեանէ իմմէ սնցելոյ, և յայս եղանի, զի ոչ տեսանես զիս խնդրել զքեզ որպ յառաջն խնդրէին, և ոչ ծառայութեան ներկայ։ Իրաւի խելով զամբաստանութիւն քո, և ոչ զանմեղութիւն իմ, այնքան արդարապէս դու հատուցան ելիր ինձ մահուամբ, որքան ես հատուցանեմ քեզ մոռացմամբ, որոց մոռացումն այնքան օտար զարտի դոլ 'ի նայ որ ծառայէ որքան ապերախտութիւն կնոջ ծառայելոյ։ Կարծիս դու, թէ մոռացեալ իցեմ ես զորէնն Աէնոսին, այսինքն Լուսաբերին, յորում հրամայէ, թէ հեռաքրքիրք սիրոզքն զուժեղութիւնս իւրեանց կրեցեն 'ի զէնս, և զսիրոս իւրեանց զբաղեցուցանեն ցեն 'ի սէրս, և առաւել ևս զարտին առնել զի զգեստս երեցեն յոյժ մաքրութեամբ, զոտս իւրեանց յոյժ հանդարտօրէն, զձայնս իւրեանց յոյժ ցածուցեալ, և զանձինս իւրեանց յոյժ ծանրաշարժս։ Զարտին ունիլ զայն տարաբերեալ 'ի լուսամուտս և զսիրոս իւրեանց թեռուցել և վերացեալ 'ի յոգս։ Իրաւի ով Բօհեմայ սի բալիր Հարսէ նայ որ ունի զկամն գերեցեալս և զնեալս ազատս զի անդ կորուսանէ զիմացուածս

իւր ուր զկամս իւր թողու դոլ գերեցեալս։ Զայս ասեմ ոչ զի գիտիցես. զի եթէ արբուն հասակին իմոյ եղեալ զկրթութենն, սակայն խելքն իմ ոչ մոռացաւ զարհեստն։ Գանդատես, թէ ետուր զիս բաղում հեշտութիւն, և զքեզ եդեա լեմ ի յոյժ մոռացումն։ Ոչ կամիմ ուրանալ քեզ զշնորհութիւնն, զի յաւուրն մոռացման մոռացմունքն իմք արարին զցուցակ, և բանականութիւնն իմ նախատեսող բացայայտեաց ինձ, թէ ոչ ծանրակացութիւնն իմ խոստանայ զի և սիրիցեմ, և ոչ հասանն տիոյն քոյ պատկանի. դոլ սիրեցեալ։ Այժմ գիտես, թէ բազում իրս թոյլ տայ աշխարհս տղայոց որոց առնելով ծերքն արգիւնաւորին զմեծագոյն պատիժս։ Տղայութիւքն արարեցեալք ի տղայութիւնն. բղեսին ի տգիտութիւնն. բայց ապերասուին գործեցեալ ի ծերութիւնն ծնանին ի նենգաւորութիւնն։ Յորժամ ես հսկէի ի յանկիւնս փողոցից, շրջէի այսր, և անդր տայի նկարել զքաշուածս, ակնարկէի ի լուսամուտս երդէի զքնապս, դնէի զսանդուխս ի պարիսպս, զարթուցանէի զլերբս ի գեռաքոյս հասակին իմոյ. կարծես թէ գիտէի ես զայն, զոր առնէի. բայց այժմ մինչ տեսանեմ զիս զրկեցեալ ի առաջին հաճութենն յայնմանէ, և տեսանեմ զիս ծանակեալ այնքան ապիտակացեալ հերօք, և զգեստաւորեցեալ այնքանիւք ցաւովք, և հիւանդութիւքք, մտածեմ թէ կամ ալէի ես յայնժամ, կամ՝ ի յերաղն եմ այժմոյս։ Ոչ գիտելով զշաւիղս մոլորեցայ, և ոչ տեսանելով զքարավէժս սպրդեալ անկայ ի վայր. ոչ նկատելով զորոդայթս ըմբռնեցայ. ի յորոդայթս անկեալ պատրեցայ, ոչ ուշադիր լինելով։ Ի յանցս գետոց դահավիժեցայ, ի յիմարաբար նկատման գերեցկայարմարութիւնն իմոյ կորուսի զիս, և վա՜ այսոքիկ արգիւնաւորիմ ընդունիլ ըզ թողութիւն. բայց այժմ որ եղայ ի յաւերակէ, կա՜ միս միւսանգամ դարձուցանել զիս ի վտանգն։ Այժմ որ առողջացայ ի հիւանդութենէ, կամիս

զի

զի միւսանգամ առն ուցում զդեղը, հսկեցի զգ-
դիչերն իբուն, և այժմ՝ի նորոյ աղդեա զի առ-
նուցում զդէնս։ Վա՜ բարեկամութեան հնոյ աղա-
չեմ զքեզ, և՝ ի դիսն երդմնեցուցանեմ, զի ո-
ղորմիցես սիրտ իմ ապստամբեցաւ՝ ի սիրոյ քում
մէջ, և սէրն քո որ է երկեայ թող զկամս իմ ա-
ռանց երկեայութեան, և թող զիս կալ հանդարտու-
թիւն։ Բայց զի զհերս իմ ապիտակս մի վիճաբանիցես
ոչ՝ ապերախտս, ոչ՝ զերեսն քո կանչմոտելս
անմաքրութիւն բղջախոհութեան, կամիմ զի մոռանի-
ցուք զթիվս, զորս շահեցաք, և զորս յուսամք
՝ի շահել յայսմ իրակութեան։ Ասա ինձ ուրեմն,
թէ այլ ինչ արտահանի՝ ի հանգիստ այսմանէ,
եթէ ոչ ժամանակն չարաբար ծախեցեալ. համ-
բաւ աղտեղացեալ, հայրենի ատացուածն, ՝ի
զուր վատնեցեալ, հաւատարմութիւն կորուսեալ.
դիւն զայրացեալք. առաքինիքն գայթագղե-
ցեալք, յորում հատանիմք մինչ անուսիալ անա-
սունք, և վերակոչիմք վատահամբաւք, և
դուք այսպիսիք, և այնպիսիք։ Ասես դու՝ ի
թուղթն քոյ, թէ կամիս թողուլ զՀռոմ, և
գալ առիս ատ՝ ի պատերազմս դացիս։ տեսա
նելով զնեղադարութիւն քո, ծիծաղիմ, և ճա-
նաչելով զնամարձակութիւն քո հաւատամ։ մինչ
ընթեռնելով զթուղթնքո հասի յայս տեղին դար-
ձայ ակնարկել՝ ի հաստատագրութիւն երկեայե-
լով մի թէ քո իցէր թուղթն, և մինչ տեսի թէ ի-
րաւի քոէր խսկոյն սկսան աղմիկք զարկմունքն
երակացս, և սրտիս, և այլապուռնեցաւ գոյնն
երեսիս մոռնելով, թէ կամ յաւելեալ իցէ անրզ
դամութիւն քո, կամ պակասեալ է՝ ի յիս ծան-
բակացութիւն իմ. քանզի զայսպիսի լրբութիւս
ոչ ոք հաւատայ ումեք, եթէ ոչ ինքնանման
անզգամ։ Արդ գիտես արդեօք, զի որ առնէ
զմեղս արդիւնաւորի զպատիժ, և առաջի նորա
որ առնէ վատահամբաւութիւնս։ Արդ հար-
ցանեմ զքեզ, թէ յո՞ կամիս երթալ։ Թողեր
զքեզ կարիլ մինչ էիր տոաս, և այժմ կամիս

վաճառիլ 'ի տեղն դինոյ. եկիր կանխապէս ընդ կե-
ռասին, և կամիս երկարաձայլ այժմ ոչ զսեր-
հեմիլ։ Կերաբ զքեզ ոչ զդեռաբոյս տերև ող-
կուզի, և այժմ կամիս երևիլ ոչ հաղող, կամ
չամիչ։ Հաղողն եղև քաղցր. քսոյց զողքն են խա-
ղողդոյնք։ Ձեռնամածուք եղեր հաստատեալ դու
մանուկ զողով, և եկեալ փութանակի ոչ կան-
խատաս և կարծեսցիս հասուսնիցես, ոչ այլ ինչես
եթէ ոչ հոտեալ և նեխեալ, և եթէ հոտեալ և
նեխեալ նայ ևս անարգեցեալ։ Ոչ շատանաս
դու, զի քաղասնից ամացն, զոր ունիս, քան
և հինգն անցան հաճութիւն կամաց քոց, որպէս
գինի որ քարողի 'ի յայդ պանաց, և որպէս սեռ
ապականեցեալ, և աւերեցեալ։ Արդ ոչ ես
դու Բօհէմիայն այն, որոյ լեկեցեալք են եր-
կուք ատամունքդ, զաչդ 'ի խորանկեալ, զհերս
սպիտակացել զերեսդ կանջմոտեցեալ, զմի ձեռդ
խոտացեալ 'ի գօթից, և զմի կողմդ տիրեցեալ 'ի
յանդամալուծմանէ։ Յո՛ կամիս երթալ ուրեմն
եթէ դիցես զքեզ 'ի զուգեղև նակ, և ձգիցես
զքեզ 'ի Վաւէրս, այսինքն 'ի փայտեայ կարասն,
տեսանիցես զքեզ բոլորովիմբ բեկեալ, և ջախ
ջախեցեալ։ Ի յանցեալ ժամանակի թոյլ ետուր
զքեզ ուտիլ ոչ զձուկն Նորատպէս հանեցեալ 'ի
ջրոյ, և այժմ կամիս բերել զմնացեալ փուշն
առ 'ի պատրաստել զսեղան։ Ով Բօհէմիա, Բօ-
հէմիա, այժմ ծանեայ, զի յաղագս այսր պատ-
ճառիս, ոչ են հաւատալի մանկադոյնից, ոչև
ուրասել ծերոց զի 'ի ներքոյ սաւուցեալ մոխրոյ
թաքուցեալ կայ հուրն ծածկեցեալ յոյժ կար-
մրադոյն։ Գանդատես դու, թէ ոչ ինչ ունիս
այս է գանդատ հնադոյն, սիրահարեցելոցն Հռո-
մէացւոց, զի առնելով 'ի յամենեցուն զոչինչ ու-
նիք, և չքաւորքեք քան զամենեսեան, որոյ
պատճառն է այս. զի զոր պակասք հաւատար-
մութիւն ձերոյ կամիք լնուլ հպարտութեամբ,
և սնափառութիւք ձերով։ Ուրեմն հաւատա ինձ
զի խելագար կացութիւն որ ծնանի 'ի յանարգալ

շահաւէտութիւն, զսակաւ ապահովութիւն և զփոքր բարեբոյն համբաւ կարէ տալ անձին ուրուք։ Ոչ դիտեմ ես, թէ ընդերեսս դու այսքան զայրացեալ, զի յորժամ դու զուգերիր միով ձեռամբդ զարսևանուշն քո և միւս ձեռամբդ բանալիս զքսակս իմ, և առաւել պատերազմս ունելիս ընդ յարկդս իմ յայնժամ, քանթէ ես այժմոյս ընդ թշնամիսն իմ։ Ո՛չ երբեք ունեցայ ես զակուռնս պատուականս զոյս ոչ խնդրեցեր յինէն, և ոչ զիր ինչ խնդրեցեր յինէն որ ես ուրանալի քեզ։ Ո՛հ թշուառականս որ եմ, այժմ արթնացեալ 'ի ծերութիւն իմում, դատանեմ զինքեան տղայութեան իմոյ։ Զաշխատանաց, և զաղքատութիւն դանդատես դու, ես եմ այն, որ կարօտիմ ապրանեցայ վա՜ այսպիսեաց խոցեցելոց հիւանդութեց։ և քաջաբար վա՜ վերացս, և ջուր ցուրտ վա՜ մեծի ջերմութեան։ Ոչ յիշես, և ոչ զմոռաս ածես, թէ սքսորեցեալ հարկաւորութիւն իմ 'ի յերկիրն մոռացման, և եդեալ զկամս քո 'ի խնդրել զծառայութիւն իմ, 'ի ամենայնի դնալի մերկ մարմնով, և 'ի յամառն բարձեալ զգեստուք, 'ի տիղմս երթալի բոկոտամբ, և 'ի վրայ հողոյ հեծեալ 'ի ձի։ Մինչ էի տրտում ծիծաղէի, և մինչ էի ուրախ ողբայի։ 'ի յերկիւղ արտահանէի զօրեղութեան, և 'ի զօրեղութենէ զերկչոտութեան, անցուցանէի զգիշերն հառաչանօք, և 'ի տուն ջրեան շրջէի խելագարեալ 'ի փողոցս եթէ իր իմն պիտոյանալոյ քեզ, զայն գողանալի 'ի հոբէ իմմէ։ Աստ սայ ինձ Բ՚օհէմիա, որով իրաւ լցուցանէիր զխելագարութիւնս քո հրապարակական, եթէ ոչ անկարդ ըղձաձկութիւնք իմովք թանքուցելովք։ Գիտես թէ զինչ թուիք ինձ դուք սիրահարեցեալքդ Հռօմայեցիք։ դուքեք ջոգմի ցեղից վա՜ ծերոց, զբաղու

տայցէիր զքեզ ամենեցուն, այսպէս այժմ դու տաս զք զ ամենեցուն, որպէս զի ամենեքեան տացեն զինչդեանս քեզ։ Ասես ինձ, թէ ունիս զերկուս որդիս, և պակասին քեզ տալ զիք նոր Տուր զիսաւս դիցն, և գոհացիր զնոցանէ, և զգթութենէ նոցա, զի գթածօրէն վարեցան ընդ քեզ. զի տան և հինգ որդւոցն Քաբրի, ցիայի դրացւոյն իմում ոչ ետուն դիքն աւելի քան զհայր մի միայն, և միայն երկուց որդւոց քոց ետուն զսիսուն հայրս, արդ մանաւանդ ասեայ զնոսայ 'ի մէջ հարցն իւրեանց և ոչ անկանի իւրաքանչիւրոց մատն մի։ Լուսիա դուստր քո ծնեալն իքէն, և երկբայեցալն յինէն, յիշեա զի առաւել զբարի արարի նմա ամուսնացուցանելով զնա, քան թէ դու ծնանելով զնա։ Զի զի 'ի յզութենէ նորա կոչեցեր զբազումս, և 'ի յամուսնացուցանելն թողեր ինձ մի միայն։ Յոյժ սակաւ դրեցի առ դեզ փոխանակ բազմաց, զորս կարէի դրել։ Բուլթրիոս Կուռնէլիոսն խօսեցաւ ընդիս երկարապէս 'ի կողմանէ քումմէ, և նոյն ինքն խօսիցէ երկարապէս ընդ քեզ 'ի կողմանէ իմմէ։ Են արդէն ժամանակք բազումք, զի ես ծանեայ զքեզ որպէս զկին անժուժկալ, և բարւոք գիտեմ զի ոչ մնայցես թարց առաքելոյ ինձ զթուղթ ինչ, և մանաւանդ յոյժ խորհրդեցիր քեզ ծածկաբար, դու մի՛ անհամբաւեցես զիս հրապարակօրէն և մինչ ընթեռնուցուս զթուղթս այս, յիշեա զի զբազում առիթս ետուր ինձ զի դրիցէի քեզ։ Եւ թէպէտ զայրացեալք եմք, սակայն ոչ վա՛ այսորիկ թողում առաքելոյ քեզ զդրամս։ Ահա առաքեցի քեզ զհանդերձ մի, և հրամանագիր մի, զի տացեն քեզ զդրամս 'ի գանձարանէն, ոչ՝ զի իցես առեալ զպարգևս յինէն։ Դիքն իցեն ընդ քեզ Բոհեմիա, և զիս հանիցեն խաղաղութիւն 'ի պատերազմէ այսմանէ։

Մարկոս Սպարապետ Դացիու
առ Բոհեմիայ հին հարձն իւր։

Պատասխանի Բոհէմիայի առ Կայսրն, որով ցուցանին Ժոլիրհ խորամանկուիս կանանց։

Թուղթ Վեցևտասներորդ։

Օհէմիա հին հարձ քո առ քեզ Մարկոս Սենթէէլիս մահաբեր թշնամին իւր, ցանկայ զվրէժ անձին քում, և ղչարաբախտուն բոլորից կենաց քոց։ Ընկալայ զթուղթն քո, որով ծանեայ, զի յոյժ ապականեցեալք են ներսնայինք սրտի քոյ, և կարի խստացեալ նենգաւորութիւն քո։ Զայս յատկորինութիւս ունիք դուք նենգաւորքդ որպէս եսդ դու, զի համբերութեամբ տանիցեն ապերախտութիւս ձեր արարեցեալս 'ի գաղտնի, որպէս զի մի՛ վիրաւորիցիք ոչ ինչ կերպիւ ընդ հրապարակաւ։ Արդ ոչեր ըմբռն առնել այսպէս ընդիս Մարկոս։ Չի եթէ ոչ եմ ես դան ձասպետ դանձուց քոց սակայն եմ համբարան դաղտնեաց չարութեց քոց։ Եւ զայն զոր ոչ կա բացիցց առնել անձամբ իմով, Ջանայցիցց զայն առնուլ զվրէժ լեղուաւ իմով։ Եւ եթէ մեք կա նայքս եմք տկարք անձամբք, և յաղթիմք մարմնով, գիտեայ հաւատսի, զի ոչ յումեքէ ենտի բապետեցեալք երբեք սիրտքն մերք։ Ասես ինձ, թէ զերծանելով դու 'ի միոյ պատերազմէ ընկալար զթուղթն իմ, և հանդերձ նովաւ մեծ ահաբեկումն։ Են այս յոյժ հասարակ գաղձացեալ անձանց խօսիլ 'ի սիրոյ և ոգիտաց ձեռնարկել զգիրս, և երկչոտաց պարծիլ 'ի զէնս։ Զայս ասեմ, վա՜ զի առ 'ի պատասխանել թղթոյն կնոջ միոյ ոչ եմ ես, ոչ էր հարկ տալ զհամարս, եթէ եղև յառաջ կամ յետ 'ի պատերազմին, զայս բարբաջք գիտեմ զի զերծար 'ի նմանէ, զի ոչ եղեր առաջինն առ 'ի մոռանել 'ի մարան այլ և ոչ յետինն առ 'ի

առ'ի փախչել։ Մինչեւ իր մանուկ, ոչ երբեք տեսի զքեզ երթալ'ի պատերազմ, որոյ իցեր յերկիւղ կենաց քոց։ քանզի ճանաչելով ես զերկչոտութիւնքո տանջանք պատճառեր ինձ ան ներկայութիւնքո, և այլ ամ ապահովեր յանձնքոյ։ Ուրեմն ասայ ինձ զինչ արասցես այժմ'ի ծերութիւնքում։ Կարծեմ, թէ ոչ տանիս դու զդեղարդ առ'ի պատերազմել, այլ առ'ի յենուլ'ի վրայ նոր յաղագս ոտնացաւութիւնքոյ։ Տանիս զդրեհս սաղաւարդի, ոչ առ'ի ոչ ընդունիլ զվէրս, այլ ըմպել նովաւ զգինի'ի պանդոկս գլեանծախից։ Եմ ես հաւասպի, զի զրեհքն ձեռնամանաց քոց, ոչ են վն յարմարութիւնք հրապարակի, եթէ ոչ դնել'ի գրաւ, վն որկրամոլութիւն։ ոչ երբեք տեսի զքեզ խոցել զայր ոք զինուք քովք։ բայց տեսի զքեզ սպանանել զհաղար կանայս լեզուաւ քով։ Ո վ խորամանկ Մարկոս, եթէ իցեիր այնքան ուժեղ, և զքեզ որքան ես խորամանգ, և նենգաւոր, այն պէս երկիւղալի լինիցեիր ազգացն բարբարոսաց, ոչ ես ատելի այժմ (ըստ իրաւանց) տիկնացն Հռովմայեցոց։ Ասա ինձ, զոր ինչ կամիս ասել, և զայս ոչ կարես ուրանալ, զի եղեր'ի յանցեալում ժամանակի, և ես այժմոյս սիրօղ գաղձացեալ ձիավար երկչոտ, բարեկամ ապերբախտ, ագահ վատահամբաւ, և նենգաւոր խոտասիրտ, թշնամի ամենեցուն և բարեկամ ոչ ոմեք, և դեր քան զամ մեք որք ծանեաք զքեզ անզգամ, և թեթեւամիտ'ի մանկութեդ, այժմ որպէս ծեր խեղաղար զքեզ դատապարտեմք։ Ասես թէ առնելով զթուղթն'ի ձեռատ։ իսկոյն թափանցեաց խոտն թոյնալի նենգաւորութիւնքս իմոյ'ի սիրտս քո։ Հաւատամ ես առանց երդման քոյ, թէ վա գոլոյն իւրոյ զիր նենգաւորութեամբ։ իսկոյն դատեալն է բնակութիւն'ի տան սրտի քոյ։ 'ի յանասնոց դարշահոտից առնուն զթրիաքս, և առողջքն իսկոյն փսխեն։ Ես հաւատս տի եմ, զի ոչ ես մեռանելոյց թոյնեցեալ դեղոք,

զոք, զի բազմիցս թոյն մի ոչ կարէ յաղթել և վնասել զայլ թոյնս, ով Մարկոսդ խորամանկ, եթէ դու իցէիր ճանաչէցեալ յայլոց 'ի Հռոմ ոչ ճանաչեմ ես տրտուսմս Բոհէմիաս տեսանէին ոմանք ասեն, թէ որքան տարբերութիւն դոյր 'ի մէջ բանից քոց զոսս ասես, և սրտին քոյ զոսս ունիս, և եթէ վա՞ դրոցն զոսս շարադրես արդիւնաւորիս զանուն Փիլիսոփայի. բայց վա՞ էարութիւն, զոր նորագիւտ հնարիւք 'ի լոյս ածես, արդիւնաւորիս անուանիլ անիրաւ, և անողորմ։ Ասես թէ ոչ երբեք տեսեր զկին որ հաստատուն 'ի սէրս, և ոչ զզրաւ 'ի յատելն։ Եւ ունիմ զփաւս պարծանաց առ 'ի մոտծել, թէ ես այլք կանայք Հռոմայեցիք առանց ինս ունիցին զծանօթութիւն նուաստութիւնն քոյ. ոչ ունիմ ես։ Նայեաց Մարկոս, կամիմ պատրանահատ առնել զքեզ, զի ես դու այնպիսի ոք, որ ոչ արդիւնաւորիս բնաւ, թէ որ սկսանիցի սիրել զքեզ, ոչև թողուցուն զքեզ առանց ատելոյ, և միշտ նախատելոյ։ Կամիս դու հաստատուն 'ի սէրս, ոչ գոլով հաւատարիմ դու 'ի գործս ծառայութիւն։ Կամիս դու ծառայել կատականօք, և սիրել հաւատաբար։ Կամիս դու Վայելել զանձինս թարց ծախելոյ զիր իմն 'ի ընչից քոց, կամիս դու թէ ոչ իցէ դանդաղ զքէն, և ոչ զարդելումն չարակնութեան քոյ։ Ուրեմն բարւոք ճանաչես զկանայս, Զգեմ քեզ զի մեք կանայքս ոչ կեմք այնքան խելագարք, ոչ կարծեքդ, ոչև դուք այնքան հանճարեղք, որպէս գովեքդ։ Մինչև ցայժմ առաւել մարդիքս տեսաք թողլով զինքեանս 'ի կամս կանանց, քանիցէ կանայք 'ի կամս մարդկանց։ Հազար անգամ տեսեալ եմ, և մանաւանդ ես և դու բազմիցս խօսակցեալք եմք, թէ այր մի ոչ ունի զսիրս առ 'ի սիրել երից կանանց հանճարեղաց. իսկ կին մի միայն կարէ աքացել զերիս հարիւր լիրս։ Ասես թէ ահի հարեցցալ դու յանզգամուէ իմմէ տեսանելով զիս թէ զուլ զՀռոմ, և կամիլ դալ առ քեզ 'ի պատերազմ

բազմագ. իրաւի մեծէ սէրն հոյլեռնեաց, վա՜յ սորիկ բազումք թողուն զբազում բարիս զորս ունին յերկրի օտարականի, և դառնան 'ի հայրենի երկիրն իւրեանց կալով անդ ներուութիւն, և անձկութիւն։ Բայց մեծագոյն եղև սէրն իմ առ քեզ, ուրեմն թուղտայի զհոգս ընդ ամ զուարճութիւն իւրով, և զքեզ երթայի դատանել 'ի յերկիր օտար 'ի մէջ պատերազմաց այնքան սաստկացեալց։ Ո՞վ չարաբարու Մարկոս բարեկամ ապերախտ, եթէ ես կամէի թողուլ զհոգս էր յաղագս երթալոյ և դատանելոյ զսիրտ իմ որ էր ընդ քեզ 'ի պատերազմի։ Եւ իրաւի բազմիցս նկատելով զան ներկայութիւս քոյ նուաղէին անձն իմ ոգի թէ սիրտ իմ ոչ էր ընդիս զի առ ոչ ինչ օգտէին համայնք դեղք բժշկութիւն։ Ոչ կարծեի, թէ սէրն մեր լինելոցելր ոգ սէր անանոց. որք վայելին զհաճութիւս առանց խնդրանաց կամացն իւրեանց։ Երդնում քեզ 'ի դին վէստայ, և 'ի մայրն Բերեզինթիա, զի առաւել պարտաւորիս ինձ վա՜ սիրոյն զոր, ունեցայ 'ի քեզ յաւուր միում, քան թէ ծառայութեան, զոր արարի քեզ զամս 23։ Նայեաց ով խորամանկդ Մարկոս զի մինչ սիրէի զքեզ, ոգ զի ներկայապէս միշտ յաներկայութիւն տեսանէի մոռանէի և 'ի մէջ յերարի անրջականի խօսելի ընդ քեզ։ Կոծէի յաշխատանս քոյս. ցնծայի 'ի խնդութիւնս քո։ և վերջապէս զամ բարիս իմ կամէի վասն քո, և զամ չարիս քոյս առնուի վասն իմ։ Արդ այժմ ասեմ քեզ զոր ինչ. զի ոչ զդամ ես զայնքան ցաւ վա՜հալածանաց զորս այժմ առնես ինձ, զոր քան ապերախտութիւնս զորս ցուցանես ինձ։ Մեծագոյն ցաւք են ազահաց, տեսանելով զինչս իւրեանց վատնեցեալս. բայց ան նմանապ առաւել մեծագոյնք ցաւն սիրահարին տեսանել զսէրն իւր չարասէս ծախսեցեալ։ Այսպէս վէր մի որ միշտ վերաւորէ; վիշտ մի որ միշտ վշտացնէ, ցաւ մի որ միշտ ցաւի, և մահ մի որ ոչ երբեք աւարտի, ոհ եթէ ճանաչիցէիք դուք մարդիկք,

դիկքդ , թէ որքան ճշմարտապէս սիրեն կա-
նայքն մինչ կամին սիրել , և որքան բոլորով սի-
տիւ ատեն , մինչ կամին ատել , երդնում քեզ ,
զի ոչ երբէք հաղորդակցէիք ընդ նս սիրոյ ,
և կամ թէ սիրելիք ոչ երբէք թողով զսէրն այն ,
վա՜ ահին իւրեանց , և քանզի ոչ երբէք լինի
այնքան մեծ ատելութիւն , եթէ ոչ ուր նախ
եղև մեծ սէր , վա՜ այսորիկ ոչ եղիցիս յոյժ
ատեցեալ , զի ոչ երբէք սիրեցար յոյժ հաւաս
տաբար ։ Ողորմելի Բ՝ օհէմայն սիրեաց զքէզ
զամս ՀՀ կենաց իւրոց , և նա ինքն միայն ատես
ցէ զքեզ մինչև 'ի յետ մահուան իւրոյ ։ Ասես
ինձ թէ ես զիս թողի ուստիւ գոլով տհաս , և թէ
այժմ կամիմ վաճառել զիս 'ի տեղի գինոյ ։ Արդ
ես ճանաչեմ զիս դոլ սղալեցեալ ոչ՝ մանկուհի
անզգամ , և մինչ ճանաչեցի գոլ սղալեցեալ զճա
նապարհն սրդէն զաներջանկութիւնն իմ ոչ գտաս
նէր հնար և ճար ։ Այնէ մեծագոյն կորուստ ,
որուամ թարց այլոյ կորստեան մեծագոյնի ոչ կա
րէ ճարակիլ ։ Եաս սղալեցայ որպէս կին և տկար ,
բայց դու ոչ՝ այր և հզօր , ես սղալեցայ անդի-
տութիւն , և միամտութիւն ։ իսկ դու նենգաւո-
բաւ մտածութիւն , ես սղալեցայ ոչ գիտելով թէ
սղալէի , իսկ դու գիտէիր զոր առնէիր ։ ես հա
ւատայի բանից քոց որպէս բանից հաւատարիմ
ձիաւորի , և դու պատրեցեր զիս հազար ատա
ստածութեամբ հանգոյն ատաստածի ։ Արդ ասայ
ինձ , ոչ ապաքէն որոնեիր դու դատանել զժա-
մանակ պատեհաւոր մտանելոյ 'ի տուն մօրն իմոյ
հեգուլլաի առ'ի դաւաճանել զիս դուստր նր ,
Բ՝ օհէմայ ։ ոչ ապաքէն խոստացար դու հօրն
իմում , ուսուցանել ինձ ընթեռնուլ զգիրս յամ
մի , և դու ընթեռնուիր վա՜ իմ զմատեանս սի-
րոյն Օվիդիոսի ։ ոչ ապաքէն երդուար դու ինձ
լինիլ այր , և յետոյ ապատամբեցար յինէն ոչ՝
չար պառնիկ ։ Ոչ գիտես դու զի ոչ գտեր սղա-
տեղութիւն ինչ անձին իմում , ոչև ես գտի զճշ
մարտութիւն 'ի բերանս քոյ ։ դոնեա արդեօք ոչ
կա-

կարեսս ուրանալ զդոյն քո պատուիրանագանց ան-
դիսն , վատահամբաւեցեալ առ մարդիկս սխա-
կալեալ 'ի Հռովմայեցոց , գայթագղեցուցիչ բա-
րեաց , օրինակ չարեաց , և վերջապէս դժպիրհ ,
և դաւաճան հօրն իմում և մօրն իմում հաւա-
սագրուժ , և ողորմելի Բօհեմիայեն սիրա-
հար ապերախտ : Ո՛վ նենգաւորդ Մարկոս , ոչ
ապաքէն մատուցեր դու զքեզ ծնողաց իմոց ոգ-
ապահով պահպանիչ այդ-սոյն իւրեանց . իսկ
դու ոստաքանց , և տերևաթափ արարեր զնս :
Յոյժ չարապէս կարեն հաւատալ զձագս հաւուց
արծուոյն գիշակերի , զոչխարս գայլոց և զփե-
թակս մեղեր աւջից : Ուրեմն չարադոյն եղեր
դու յոյժ , և վատթարագոյն մինչ զարգացու-
ցանէիր զդաստերսն բարեաց : Ո՛վ Մարկոսդ
խորամանկ , զի կարի ինքասակար այդէպան գտար
դու Տիկնացն Հռովմայեցոց վա՜ դաստերացն իւ-
բեանց որք հաւատացին քեզ : Ես երդնումքեզ :
զի ոչ փրծաւ ինքն ողկոյզ , կամ ձողաբարձ
հաղողիցն այնոցիկ , զոր ոչ կերար , կամ կոցա
հարեցեր : Դու կերար զնս տհաս և աղոխ , և ես
խոստանամ՝ զի արասցէ զքեզ առատմեսիար և ստա-
մաբեկ : Ասես թէ զնս հասուցին Ճմմամբ
մատանց ոգ կանխահաս , և յառաջաբեր պտուղ
ոչ նեղէ զնս 'ի յայնց զորս ասես այնքան , որքան
նեղիմ ընդ զառիթս , զոր տան ինձ ասելոյ քեզ :
Չի ամենեն քո եղեալք այնքան անամոթ լրբու-
թիւն հանդերձ , և չարուրթիւն քո այնքան դառ-
հիկ և տմարդի , մինչ զի ոչ կարեմ պատասխա-
նել առաջադրութիւն քում , թարց վիրաւորե-
լոյ զքեզ յոյժ սաստկաբար : Արդ հարցանեմ
զքեզ , յորժամ ամուսնացար ընդ Քառասանս ,
դուեր զնս տհաս կամ թէ հասուն : Բարձրք գի-
տես դու , և բարձրք գիտեմ և սես զի այլք պատա-
ռեցին զսոյն , և դու ըմպես զարիւնն տեռատե-
սութիւն : Այլք կիթեցին զսոյգին նախկնաբար ,
և դու երթաս ժողովելով զանկեալ պտուղն ,
որք մնացին 'ի յատակս ծառոց Այլք կերին զա-
զոխն

զոխն և ժոռն, և քեզ թողին զատանահարոմն։ Ո՛վ Մարկոսդ նենգաւոր, նայեաց թէ ոչքան են չարութիւնքդ, և որպէս դիպն տարցեն քեզ արդարապէս զզատիժս։ զի ոչ 'ի մանկուէ քում արդիւնաւորեցար սիրիլ 'ի հարցէն քոյ, ոչև այժմոյս արդիւնաւորիս դոլ հաւատարիմ կնոջն քում։ Ա՛ւ 'ի առնուլ իմ զվրէժ անձնէ քումէ ոչ են պիտոյք զի ցանկանայցեմ ունիլ քեզ զայլ պատիժս, զի բաւականէ ինձ տեսանել զքեզ դոլ ամուսնացեալ ընդ քաւատինին։ 'Ի մայրն Բերեքինթիա խոստանամքեզ, զի եթէ զանմոսխոհութիւն քոյ հասանիցէր 'ի դիտել զբօսանդակն զայն, զոր 'ի Հռոմ զքէն, և զքաւատինն էն քումմէ ասեն, ողբայցեիր 'ի տիւ, և 'ի գիշեր զկեանն քաւատինին, և թողուցուիր թալց հալածման զորոտու�Բօհեմիայս։ Ո՛հ թշուառացեալդ Մարկոս, թէ որքան թեթեւացեալք են զմոսխոհութիւնս մեր 'ի մոռածմանց քոց քանզի տուն քո եղեալէ 'ի տունջեան դպլատուն Փիլիսոփայիցդ վասն մեծադոյնի վարդապետութեանքոյ։ և 'ի բոլոխոհութիւն քաւատինին քոյ 'ի գիշերի եղեալէ պռունկատուն։ Այսպէս արդար դատատան դիցն ոտովհետև նենգութիւնքո միայն բաւականացաւ թոյնաւորել զբազում կանայս բարիս վասնթարութիւն միայն կնոջ մոյ բաւական իցէ աւերել զհամբաւն քո։ Մի միայն զանազանութիւն դոյ 'ի մէջ իմ և քոյ, և ֆայուատինին քոյ։ զի իրակութիւնքն իմք են կարծելիք, և երկբայելիք. բայց ձերոցն են հաւատալիք։ Իմքն են ծածուկք, և անյայտք, իսկ ձերոցն են հրատարակեցեալք և յայտնիք։ Եւ ահեցայ, և դուք անկաք։ Եւ յաղագս իրի մոյ միայնոյ արդիւնաւորիմ զպատիժս, բայց դուք վասն ոչինչ իրի արդիւնաւորիք զվրէժդ։ Չանսպատուեմ 'ի մեռաւ ընդ սղալանաւ իմով, և թաղեցաւ ընդ զվնմանէն իմով։ բայց վատահամբաւութիւն ձեր ծնաւ 'ի ցանկութեց ձերոց և սնաւ նենգաւորութիւն ձերով, և այժմոյս կենդանի է գործովք

ձերովքեւ վերջանայ վասն այսորիկ վատահամբաւութիւն
ձեր ոչ երբեք մեռանի, զի դուք ոչ երբեք կա-
միք կեալ բարեպէս։ Ո՛վ ենեղբարք Մարկոս
համայնիւ դիտութիւն քով ոչ դիտես դու, թէ
կորնչելով կեանն բարի, ստացեալ լինի համբաւն
շարի, և դադարելով կեանն չար սկանի համբաւն
բարի։ Դու ոչ դադարիս ի խօսելոյ զենեղբարս
զորս կարծողաբար համոզեն քեզ ստահակ դա-
ստողութիւնքն քոյք, և կամիս զի լուիցուք մեք
զայն, զոր տեսանեմք աչօք մերովք։ Զմիայ իրէ
դեռս դու ապահով։ զի ոչ ի քեզ, և ոչ ի քառա-
տինին քո վերայառնեն զսուտ վկայութիւն, քան
զի այնքան ճշմարիտք են չարիքն որք ասին զձէնջ
մինչ զի ոչեն հարկաւոր որոնել և գտանել զստու-
թիւն ինչ։ Աւեւ դու թէ են հնագոյնք գան-
դասք սիրահարացն Հռովմայեցւոց, թէ որքան
առաւել զդրամս առնուսցեն քան զնման առաւել
աղքատք եմք։ քանզի պակասելով զհաւատարմու-
թիւն ի մեզ պատուեցեալք լինիմք հպարտութիւք և
միբացմամբ։ Է՛ իր հաւատն զի ի մարեանոջ յու-
սահատիմք քաղել զծաղիկս, ի ծառոյն կամիր որ
թոյ կամ զրմղի զեղ ջիւրս խոզից, և ի յեղն-
ջոց ուռուցումն, և ի բերանոյ քումմէ զճշմար-
տութիւն։ Հետաքրքրութեամբ վերահասու եղէ
ոչ երբեք տեսի զքեզ առանց չարախօսելոյ ի
յամենեցունց, ոչեւ զդացի երբեք, թէ խնդրի
ցեկիր զբարի ումեք։ Այլ զմրպիսի մեծագոյն
պատիժ կամիմ տեսանել ի քեզ վասն չարութեանդ,
կամ զմեծագոյն վրէժխնդրութիւն ի յանիրաւու-
թեան առյիս եղելոց քան զայս, զի հաւատի է,
թէ ամենից սիրահարեցելոցն Հռովմայեցոց նե-
զուութիւն պատճառենզկենդանութիւնն քոյ, և ամ-
ենեցուն հաջոյանայ լսել զմահն քո։ Անիծեցեալէ
մարդն այն, որոյ զկեանն ողբան բազումք, և
ընդ մահն ծիծաղեալք բերկրին ամենեքեան։
Յաւուրս թիւ է ագահ ապերախտից որպիսի եադ-
դու, մոռանալ զբազումն զորս ընկալնուն, և
քա-

բազում համարել զսակաւն զորս ինքեանք ասեն։ Սիրոյք առասք և մեծայարդք, որքան փառաւորին, և ուրախանան տալով զպարգևս այլոց, այնքան նախատինս կրեն մինչ ընդունին զգործինչ։ Քանզի տալով այլոց եղանին տեսլիք, և ընդունելով զիր իմն յայլոց անդրադառնան գոլ ծառայք նոցա։ Արդ այժմ հարցանեմ զքեզ զինչէ այն, զոր դու ետուր ինձ, և զինչ այն, զոր ընկալար յինէն։ Ես եդի 'ի վտանգի զհամբաւն իմ, ետու զքեզ ժառանգութեան անձին իմում, արարի զքեզ տէր ստացուածոց իմոց, աքսորեցայ 'ի հայրենեաց իմոց, և եդի 'ի վտանգի զանձն իմ։ Իսկ 'ի վարձատրութեան այսոց ամենից յայժմ հրաւիրես ինձ զձշուառութեան։ Ոչ երբէք ետուր ինձ զիր իմն արտի մնոջ, ոչև ես ընկալայ կամաւորութեամբ, ոչև երբէք օգուտ եղև ինձ։ Եւ ոչ զամ ինչ ատանան զանուանս, ոչ վա գործոյն հրապարակական զոր տեսանեմք աչօք, եթէ ոչ վա գաղտնի դիտաւորութեան, ոչ բով 'ի գործածեմք։ Արդ այժմ զգաստացեալ իմանամ, զի դու նենգաւորդ ոչ սիրեիր զես առ 'ի վայելել զանձն իմ, եթէ ոչ որպէս կաշառառու յափշտակել զինչս իմ։ վա որոյ ոչ կոչեմ զքեզ սիրատար ազնիւ, այլ գող, աւազակ և խորամանկ։ Զմտաանեի մի զոր ետուր ինձ, ընկեցի 'ի գետն, և զգետան տուեցեալ 'ի քէն խլոյն արկեալ 'ի հուրն կիզեցի։ Եւ եթէ դիտեցեի, թէ մարմինն իմ որքան աճեցաւ ուտելով զհացն քո, հատանեի զմարմինս գոլով առողջ, և հանեի զանրիւնս առանց ունելոյ զքերմութեան։ Ո՛վ Սարկոպ չարագոյն. միգամածեալ նենգաւորութենքս, ոչ թողու իմանալ զպարզագոյն թուղթն իմ, Քանզի ոչ առաքեցի խնդրել զդրամ 'ի քէն վա բառնալոյ տինէն զաղքատութեան իմ, և զմիայնակացութեան։ Եթէ ոչ առ 'ի վերաձանաչել զերախտագիտութիւն շնորհակալութեանդ առ 'ի տալ զվճարումն արտի և կամաց իմոց։ Աչք ունայնք, և ագահք նմանիք քեզ, շատանան պարգևօք։

քայց սիրաքն սիրահարեցեալք և ներմարմնաց եալքն սիրով ոչ շատանան պարգևօք, և դրա մօք, զի սերն վճարի ընդ այլ սիրով միայնով։ Այ ոք որ ոչ սիրէ զոմ այր քանական, եթէ ոչ զոմ անասուն անբան. և կինն որ ոչ սիրէ վասն սիրեցեալ գոլոյն իւրոյ, եթէ ոչ վասն ագահութեան անձին իւրոյ և ընչից, այնպիսեացն, ուր են հաւատալիք բանիցն իւրեանց ուղև սիրելի է անձ ինն իւրեանց։ քանզի սերն նոցա աւարտի մինչ աւարտին ստացուածքն, և սերն առն աւարտի, մինչ աւարտի գեղեցկութիւն կնոջն։ Եթէ սերն քո միայն ընդ ինքեր ի գեղեցկութիւն երեսաց իմոց և սերն իմ միայն շարժիցէր զիս վասն դրամից քոյոց, արդար իցեր զի ոչ կոչիցէին զմեզ հանձարեալք սիրահարք այլ մանաւանդ լիրբք լրբացեալք։ Ո՛վ Մարկոսդ չարաձիգ, ոչ երբէք սիրեցի զքեզ վասն ընչից քոց, թէպէտ դու սիրեցեր զիս վասն գեղեցկութեան իմոյ, ի բոլորէ սրտէ սիրեցի զքեզ յայնժամ, և ամ սրտի մտօք ասեմ զքեզ այժմուս։ Ասես ինձ թէ դիքն ի կիր արկին ընդիս զմեծագոյն գթութեան տալով ինձ զորդիս փոքրունս և նոքաքն ի բազմաց հարանց Մեծագոյն վատթարութեի կանանց են լինել ան ամօթխածք և լիրբք, և մեծագոյն ապերասուութիւն մարդկանց են, լինիլ լեզուապարք։ զբազում իրաց պարտին համբերել վասն տկարութեան կանանց զորս ոչ խոստասան ուշմութիւնքն մարդկանց։ Զայս ասեմ վասն զի ի քեզ ուշերբեք տեսի զժուժկալութեի առ ի ծածկել զպահասութեան սեփականս, ոչ և հանձար առ ի զանցառնել զտկարութիւնն այլոց։ Ասես ինձ թէ որդիքն իմ իցեն ի բազմաց հարանց։ Ուրեմն ես երդնումք քեզ, զի որդիքն Քաուստինին թէպէտ և դու մեռանիցիս ոչ մնայցեն որբք։ Բ՚ Ճշմարիտ են զի ասես թէ դիքն եղեն գթածք դէպ ի յորդիսն իմ սեփականս, սակայն ոչ սակաւ գթածք եղեր դու առ որդիսն օտարաց։ քանզի Քաուստինն ոչ վասն այլերի ունի զքեզ, եթէ ոչ առ ի

պատ-

պատճառել սպանս իւր, և վա՜ վարդապետիցդ զորդիսն իւր։ Ով Մարկոսդ նենգաւոր բարբաջք կարես լինիլ անհոգ զի որդիքն քո սեփական ոչ են պիտոյք հարսանեաց. մեք վասն միոյ իրի եմք քեզ պարտաւանդեցեալք, և են զի տասն մեզ զօրինակ սմենայնիւ համբել։ Արդ ո՞ր տրամիտեաւ դու համբերես փառաստինայ այնքան խայտառակութեանցն հրատարակեցելոյց, որ բեմն ոչ են մեծապէսն իմն, եթէ և մեք համբերութիւն տանիցեմք քեզ զիրս ինչ ծածուկս։ Եհ՝ի ներկայութենս ոչ դայլ ինչ ասեմ քեզ, եթէ ոչ տալով զվախճան թղթոյս այսմիկ և ցանկանալով տեսանել զվաղճան կենաց քոց։

Առ Մատրինա ազգիկն Հռոմեացի, որով սիրահարեցեալ եղև, տեսանելով զնա՝ի լուսամուտն տան իւրոյ։

Աբկոս յոյժ ցանկացող առ քեզ մատրինայ յոյժ ցանկալի։ Ոչ գիտեմ եթէ երջանկութիւն աներջանութիւն իմոյ, կամ աներջանկութիւն երջանկութեան իմոյ եղև; զի են սակաւք աւուրք, յորս տեսի զքեզ՝ի լուսամուտն տան քոյ, յորում ունէիր զբազուկս քոյս այնքան հաւաքեցեալս, որքան ես ունէի զաչս իմս տարածեցեալս։ Անիծեալք լիցին միշտ և յաւիտեան, քանզի հայեցեալ նովաւ յերեսն քո, իսկոյն մնաց սիրտ իմ՝ի քեզ դերեցեալ բոլորովին։ Ակնքն ճանաչման, և ծանօթութեանքոյ, եղև վախճան բանականութեանս և զգացման իմոյ։ Առ՝ի փախչել՝ի յաշխատութենէ միոյ, գան՝ի վերայ մարդոյ աշխատանք անհուանք։ Զայս ասեմ, քանզի եթէ

ես ոչ իցէի դատարկակեաց, ոչ ելանէի 'ի տա-
նէ, և ոչ ելանելով 'ի տանէ ոչ անցանիցէի ընդ
փողոցն քո, ոչ անցանելով 'ի փողոցն քո, ոչակ
նարկիցէի 'ի լուսամուտն քո, և ոչ նայելով 'ի
լուսամուտն, քո ոչ ցանկանայցէի անձին քում.
և ոչ վշտացուցանիցէի զանձն քո, ոչ և դնիցէի
'ի յայնքան վանդի զհամբուն քո, և ոչ վտանգա-
ւորիցէի զկեանն իմ, ուստ տայցէաք զառիթ
բանբասանաց 'ի քոլորն Հռօմ։ Իրաւի, ո՛վ
տիկին Մատրինա, 'ի յայսմ դիպուածողս ես
զիս դատապարտեմ զի հայեցայ 'ի քեզ, և ոչ
զքեզ կամիմ առնել անպարտ զի կամեցար գոլ
տեսանիլ։ զի եդեր զքեզ որպէս նպատակ, ու-
բեմն ոչեն զարմանք եթէ նեսահար առնիցեմ
զքեզ նետիւքն աչաց իմոց 'ի հողաբլուրն քոյ։
Ծարրել զաչս, կերտել զկուրծս, և զտունս
միջահանել զունքս, զուգել զերեսն, սպիտա-
կացուցանել զատամունս, կարմրացուցանել
զշրթունսն, սանդրել, և հիւսել զհերս, շը-
ջանակել զձեռս, երկայնացուցանել զպարանոցս
զգենուլ զբաղմակերպ հանդերձս, ունիլ ընդ
ինքեան զերս անուշահոտս, զբաղուկս, և զա-
կանջսն զարդարել ապարանջանօք, և դնդօք։
Արդ հարցանեմ ես ցկինն այն, որ այսոքիւք ա-
մենայնիւք դնէ զինքն 'ի լուսամուտն տան իւրոյ
'ի տես ամենեցուն, զինչ իցէ դիտաւորութիւն
իւր և ախտանն։ վա՜յ այժմուս մինչև առաւել
ևս մոռանեցիս ասեմ, թէ ուր ցուցանէք մեզ
յայտնապէս զմարմինն ձեր հրապարակօրէն,
'ի հրապարակի հարկաւորապէս կամիք դուք,
զի մեք ճանաչիցեմք զցանկութիւնս ձեր դաղտ-
նօրէն 'ի դաղտնի։ Արդ եթէ այս այսպէս իցէ,
որպէս հաստատեմ, երևելն ինձ ո՛վ տիկնուհի
Մատրինա, թէ պարտիցես կամիլ դու զնա, որ
կամի զքեզ, օդնական լինիլ նմա, որ խնդրէ
զքեզ, պատասխանել նմա, որ կոչէ զքեզ, զգալ
նմա, որ զգայ քեզ, և իմանալ նմայ, որ իմա-
նայ զքեզ, նաև իմանալով զքեզ, իման այսպես
զիս։

զիս։ Զմոռաւ ածեմ, զի երթալով ես 'ի յանցս
Ճանապարհին սալարիս, առ'ի դատապարտել
զոմանս աւազակս, զորս դատապարտեցեալք 'ի
մահ կախելոց էին զնա՝ 'ի կախաղանի, ուր տե-
սանելով զքեզ 'ի լուսամուտն, անդ կախեալք,
և խեղդեցեալք եղեն ցանկութիւնքն իմք բոլո-
րովիմբ, և առաւել դատապարտեցեր դու զիս
տեսլեամբ քով, քան թէ ես զաւազակսն զայ-
նոսիկ։ Զի զոլով ես դատաւոր, դատապար-
տեցեր դու զդատողն, առանց համարձակելոյ
քեզ ոչ ոք տալ քեզ զպատիժս։ Ոչ եղև այն-
քան խիստ, և անողորմ կախաղանն այն վա՜՛նց,
որք ոչ զայլ ինչ դիտացին գործել, եթէ-
ոչ զչարիս, որքան եղեր դու ընդիս, որ ոչ մտա-
ծեմ եթէ ոչ ծառայել քեզ։ Նոքա տանջեցան
մահուամբ միով, իսկ դու առնես զիս չարաչ-
արիլ հազարիցս։ Նոքա յաւուր միում, և 'ի ժա-
մու միում աւարտեցին զկեանս իւրեանց, իսկ
ես յամենամ կիտում կլանեմ զմահ։ Նոքա տան-
ջեցան որպէս օրինաւանցք. իսկ ես տանջիմ գո-
լով անմեղ։ Նոքա տանջեցան յայտնի, և հրա-
պարակաւ, իսկ ես տանջիմ գաղտնի, և 'ի թաքս
տեան։ Արդ զայլ ինչ առաւել քան զայս կամիս
զի ասիցեմ քեզ։ Արդար և նոքա լային, և ողբ-
բային արտասուօքեր աչօք զի մեռանէին. իսկ
ես լամ և ողբամ արիւնակոթ սրտիւ զի մնամ
կենդանի։ Ահա այսչափ զանազանութիւն 'ի մէջ իմ
և նոցա, զի նոքա ունէին հեղեալ զարանջանս
'ի բոլոր մարմնոյն իւրեանց, իսկ ես ունիմ զարան-
ջանս իմ միայնագամայն 'ի սրտի իմում։ Ո՛հ
Մատրինա խստասիրտ, ոչ գիտեմ ես, թէ ո՞ր
ոգիսի դատողութիւն է այս. զի սպանանեն զմարդ-
գիկս, որք գողանան զդրամս, և զանցառնեն
զսիկնօքն այնոքիւք որք գողանան զսիրտս։ Արդ-
եթէ հատանեն զկեանս նոցա, որք հատանեն զքաղաք
ընդէր ներեն կանանցն որք արտահանեն զաղիսն
'ի փորոտեաց մերոց։ Զանն ասնուականութիւնքս
աղաչեմ զքեզ., և 'ի դիւհին վէնուս զքեզ

երդմնեցուցանեմ, կամ պատասխանեայ ցան-
կութիւնք իմում, կամ վերադարձոյ 'ի յիս զսիրտն
իմ, զոր յինէն յափշտակեալ դողացար։ Եւ մա-
նաւանդ կամիցէի, թէ առաւել ծանիցէիր դու
զհաւատարմութիւնն մաքրութիւնք սրտին իմոյ
հաւատարմի, քան թէ զթուղթս այս աղտոտե-
ցեալ դրչաւ իմով։ Եթէ երջանկութիւնն իմ
յայսմիկ իցէր եղեալ այնքան բարի, և մեծա-
գոյն, և սէրն քո այնքան բարեբաւն, յուսայի
ես տեսանելոյ շահիլ, և ստանալ զայն, զորմէ
երկեայիմ թղթովս այսու կորուսանել։ Եւ պատ-
ճառ սորին է այս։ քանզի լուիցես զվատթար
ասացուածս իմ ընթերցանելով դու զթուղթս այս,
բայց եթէ տեսանիցէիր զիս տեսանէիր և զասա-
տիկ արտասուս իմ, զոր մատուցանէ քեզ չա-
բակենցաղ կեանն իմ։ Ո՛հ եթէ կատաղի ախ-
տաժէտութիւքն հիւանդութենց կարիցէին այնպէս
բացայայտել քեզանով, որպէս կարէ զգալ
սիրտն, ես երդնում քեզ, ով տիկին զի մեծա-
գոյն ցաւն իմ արթնացուցանիցէր զբազում ան
հոգութիւնն քո, և ոչ դեղեցկութիւնն քո, և
բնդձանք սրտի իմոյ արարին զիս սեփական քո,
նոյնպէս և ծանօթութիւնն քո, և իրաւն իմ առ-
նիցէին զքեզ իմ։ Կամիէ ես զի դու նայիցէիր
'ի սիրելն իրաց, և նովաւ հանիցեալ նկատիցէիր
զվախճանն։ Իրաւի յաւուրն յայնմիկ յորում
'ի յենարանէ լուսամտին քոյ խայթեցեր դու
զցանկութիւնն իմ, ոչ ունեցայ զսպակաս տկարու-
թիւն առ'ի յաղթել զիս, քան թէ ուժեղութիւնն
քո առ'ի բռնադատել զիս - և առաւել մեծ եղև
կարողութիւնն քո առ'ի հանել զիս յինէն քան թէ
բանականութիւնն իմ առ'ի բաժանել զիս 'ի քէն։
Արդ այժմ ով տիկնոջ Սատրինա, ոչ զայլ
շնորհս 'ի քէն ինչ խնդրեմ, եթէ ոչ բացայայ-
տել զկամս մեր։ Բայց 'ի պատճառս յայս զինչ
կամիս զի ասիցեմ քեզ, կամ զինչ յուսամ զի ա-
սացես ինձ, եթէ ոչ զի ունեցայր այնքան կարողու-
թիւն 'ի վերս իմ և ես այնքան սակաւ տղատուն 'ի յիս

մինչ

մինչ զի ոչ կամելով սիրտ իմ ոչ է կար եթէ ոչ քոյ և դու կարողանալով և կամելով ոչ կամիս բացա պարզել զքեզ ինձ։ Արդ որովհետուն ոչ կարէ լինիլ, թէ կեանն իմ ոչ իցէ լեալ դատապարտեցեալ և տիրեցեալ ի ծառայութիւն քում, իցես դու այնքան հաւատաւոր ընդ հաւատարմութիւն իմ, որ քան ես եմ երկրպագական 'ի յոյսն քո, զի առաւել և մեծագոյն բարի համարեմ կորուսանել զիս վասն քո, քանզի շահել զիս վասն ոչինչ իրաց։ Արդ այժմոյս ոչ զայլ ինչ ունիմ ասելոց քեզ, եթէ ոչ զայս։ Սի՛ սակաւ համարիցես զկորուստն իմ և 'ի մահուանէ իմմէ արտահանիցես զկեանս, և յարտասուաց իմոց բացայայտիցես զուրախութիւն։ Եւ ոչ զի ես միշտ ունիցիմ զհաւատարմութիւն 'ի հաւատարմութիւն քումմէ, և 'ի յուսոյ քումմէ ոչ յուսահատիցիմ, ահա առաքեմ քեզ զտասն մատանիս ոսկեղէնս հանդերձ տասամբ քարոք պատուականաւք Աղեքսանդրականաւք, և երդմնեցուցանեմ զքեզ 'ի դիսն անմահս, զի 'ի դնելով զայնս 'ի մատն քո, դիցես և զիս Սարկոս 'ի յաղիս քոյս, որ գոլով յոյժ սիրահարեցեալ, դրէ զԼթուղթս այս քեզ սեփականաւ ձեռամբն իւրով։

Առ Աթենացիսն, և առ Լաչէդէմոնացիսն։

Թուղթ ուրեւ առաքելոյ։

Ի Ծերակուտն, և ժողովն իմաստնոցն աթենացւոց, և առ Ծերակուտն, և ժողովն իմաստնոցն Լաչէդէմոնացւոց, զողջոյն անձանց, և զնաղաղութիւն հրապարակի ձեր ցանկամք։ Դիպեան անմահս դիցուք զվկայս, զի 'ի պատերազմի անցելում ոչ ունեցաք զսակաւ տրտմութիւն տեսանելով զձեզ պարտեցեալս, քանզի յայլմէ կողմանէ ունեցաք զհաճութիւն տեսանելով զմեզ յաղթօղս, վասն զի 'ի վերջն վախճանի է այնքան մեծագոյն ինքան սաստիկ պատերազմն, մինչ զի ինքան պարտեցելոց է հաւասարի, և պարտողաց օգուտն, և շահաւէտուն է երկբայական։ Բարուրք կամիք զի յառաջագոյնքան ոչս կամիցիք, և զայն զոր այժմ խնդրէք, զայն յառաջագոյն խնդրիցիք։ Բայց զինչ արասցուք, եթէ տրտում բախտն մերև ձեր առիթ եղև, զի 'ի պատերազմի այսմիկ կորուսիք, և 'ի կորստենէ ձերմէ մեք ոչ օգտիլ կարացաք, և ոչ շահիլ ինչ քնաւ։ Քանզի անաղալելի կարգադրութիւն է, թէ զոր ինչ դիքն կարգավորեալք են, ոչ խոհականուիք մարդկանց կարողք են զսալել, և ոչ սակաւ կարողութիւն մարդկային կարէ արգելուլ։ Խնդրէք գուք զի դադարիցի պատերազմն, և մինչև 'ի յերրորդ ամիս դեռևոցք էք զգաշինս, և սուերլով ժամանակս այս խօսելոցք էք զմիաբանութիւն։ Եւ այսմիկ պատասխանեմք մեք, թէ Ծերակուտն Աթենացւոց ոչ ունի զսովորութիւն առնելոյ զգաշինս, և յետոյ դառնալ միասն ի պատերազմ։ Քանզի մեք ունիմք զորէն

յոյժ հնագոյն, թէ Աթենացիք որք ազատաբար տան զհաւանութիւն սատիկ պատարագմի. ազատաբար և նշորհեն զխաղաղութիւն մշտնջենաւոր։ Մեք ի դպրատան մերում աշխատիմք ուսել զիմաստունս ի ժամանակի խաղաղութեան, առ ի օգտիլ մեզ ի խորհրդակցութիւս իւր ի ժամանակի պատերազմի։ Զայս խորհրդակցին մեզ զի մի՛ երբեք ընդունիցիմք զդաշինս պայմանաւ, և բարւոք երկբայելեաւ։ Եւ է Ճշմարիտ զի նք խորհրդակցին մեզ Ճշմարտութիւք։ Քանզի առաւել վնասակարէ խաղաղութի կեղծաւորեցեալ. քան զպատերազմն բացայայտեցեալ։ Եւ քսենիոս Փիլիսոփայն դեսպանն ձեր խօսեցաւ քեզ մեզ այնքան ծայրագոյն ոճով, և այնքան ճարտասանականաւ արհեստիւ առ այս ծերակուտս, մինչ զի թուի թէ բացասել, կամ ուրանալ զիր իմն զոր խնդրէ եղեցի յոյժ անարդար։ Քանզի առաւել փառաւորութի և պատիւ է մեզ տալ զխաղաղութիւնն մա, որ խնդրէ զայն քանիւ, քան թէ նմա որ խնդրէ նիզակաւ, և տիգաւ։ Եղեցին ուրեմն պատճառն զի ծերակուտքն, և իմաստունքն ժողովրդեանն Աթենացւոց։ Ծերակուտքն, և իմաստունքն ժողովրդեանն Լակեդեմոնացւոց, և շնորհիցի նոցա խաղաղութիւն մշտնջենաւոր, և բարձցի ի նոցանէ պատերազմն։ Եւ առանի այս, ոչ զի գիտիցէ՝ մեր երկիր, թէ յԱթենս է այնքան քաղաքիրտ, և արիացեալ վասն համարձակեցելոց և էսյն քան բարեկամ իմաստնոց և գիտէ պատժել զզօրագլուխս խելագարս, և թողու զինքն ի ներքոյ խոհեմական հրամանացն Փիլիսոփայից հանճարեղաց։ Արդէն իսկ գիտէք դուք, թէ ամենայն պատերազմն մեր եղև ոչ վասն այլ իրի, թէ ոչ ի վրայ ժառանգութիւն գետափիցն քաղաքաց գետոյն Մելենայ։ Արդ այսու թղթովս ասեմք երդուելով՝ի դիս անմահս, թէ մեք թողաք ձեզ ամենևին զամ իրաւունս մեր որ ունիմք ի վրայ քաղաքացն վերոյ ասացելոց, միայն թէ թողուցուք։

ցուք, և տայցէք մեզ զԵւքսինիոս Փիլիսոփայն, և դեսպանն ձեր։ քանզի Աթէնն երջանիկ առաւել կամի զՓիլիսոփայ մի վա՞ ուսարանին իւրոյ, քան զբոլոր գաւառ մի վա՞ իրին հրապարակի իւրոյ։ Եւ դուք Լաչէդէմոնացիքդ մի համարիք թեթևութիւն զայն զոր առնեմք մեք ընդ Աթենացւոց։ Արդ պարտիք գիտել դուք, զի փոխեմք զնոյնութիւնն իշխելոյ ի վա՞ դաւառաց ընդ Փիլիսոփայիս այսմիկ, և կամիք թողուլ զմեզ ի ներքոյ հրամանաց միոյ միայնոյ, որպէս Փիլիսոփայս այս։ Քանզի սա ուսուցանէլոցդ մեզ զբարւոք կեալն, և զբարեպէս կենցաղավարիլն, իսկ ռաւաքն այնք տային մեզ զաւրութիւն չարապէս մեռանելոյ։ Ահա անցանելով մեք ի թշնամութէ այնքան հնաբուծնէ, բացայայտեմք զմեզ բարեկամ ձեզ ճշմարտութի՞։ Եւ ոչ միայն խնդրեմք զի բարձցի պատերազմն, և տալ զխաղաղութի մշանջենաւոր, այլև առաւել կամիք տալ զիսորհրդակցութէն առ՝ի պահպանել զխաղաղութիս այս։ քանզի մեծապէս գերազանցագոյն է դեղն այն, որ պահպանէ զառողջութէն, քան զդեղն այն որ մաքրէ և առ՝ի բաց մերժէ զհիւանդութէն։ Եղիցի ուրեմն խորհրդակցութէն այսպիսի։ Զի որպէս հսկեք դուք զի մանկունքն կրթիցին ի զէնս։ այսպէս և ոքնիցեք, զի երեխայքն ըստ ժամանակի իւրեանց ուսանիցեն զգիրս։ Քանզի ոչ խստիւ ուիդաւ սկսանի պատերազմիլ, այսպէս և քաղցրադոյնիւ քանիւ ժամանի՝ ի խաղաղութէն։ Մի կարծիցէք դուք Լաչէդէմոնացիքդ, թէ թարց պատճառաւ խրատուք զձեզ, զի որդիքն ձեր՝ ի յուսումն գրոց կրթիցին մինչ ուղայք են, և մի՛ թողուցուք զնոսա յառաջել, զարգանալ, և թաքչիլ՝ ի մէջ մոլութեց։ Քանզի պակասելով մի՝ ի յիմաստնոց վա՞ խորհրդակցութէ, և յաւելուլ զայլս սիրօղս մոլութեց, յարուցեալ բորբոքի պատերազմն՝ ի մէջ ժողովրդեան առ՝ի սպանանել զմիմանս։

Ուլև

Ոչ և կամիմք և, զի դուք Լաէդեմոնացիքդ կար-
ծիցէք, թէ մեք բարեկամք իցեմք արանցն յոր-
նախօսից, և բարբանջողաց։ Վասն որոյ հայրն ձեր
Սոկրատէս կարդաւորեաց, թէ առաջին ըն-
թերցուն և դասն որ ասացի աշակերտին 'ի յու-
սումնարանին ընդրում եղիցի այս, այսինքն ոչինչ
կերպիւ խօսիցի աշակերտն այն յամս երկուս
զբան ինչ։ Քանզի անկարելի ինն է, թէ զբ
կարիցէ դոլ խոհեմ, և խոհուն ակ 'ի խօսիլն,
եթէ ոչ իցէ ըմբերօղ 'ի լռելն։ Ասուի մեզ,
եթէ և ձեզ թուիցի, թէ Եւքսինիոս Փիլիք-
սոփայն պարտիցէ մեալ յայսմիկ խորհրդաբա-
նող մերում, պարտիք մոռաձել դուք, զի եթէ
մեք 'ի ներկայութիւն նր յուսամք շահիլ և օգտա-
կարիլ, եղերուք դուք յոյժ հաւատիք, զի
խորհուրդն զոր ասցէ մեզ, դուք ոչ դոտանի-
ցէք զլեալս ինչ։ Քանզի ենօքէն հնագոյն Յաթէ-
նացուցն որոց ծերակուտն ոչ կարէ ձեռնարկ
կել զպատերազմն, եթէ նախ ոչ իցէ տեղե-
կացեալ, և հաւաստացեալ 'ի Փիլիսոփայից, թէ
իցէ արդեօք արդար կամ անարդար պատերազմն.
զորմէ կամի ձեռնամուխ լինիլ, և ընդի վերաքննե-
ցեալ։ Արդ այսուհետև ոչ այլ ինչ մնայ ասե-
լոյ, եթէ ոչ խնդրել բաւականապէս 'ի դիցն
անմահից ձերոց, և մերոց, զի եղիցին պահ-
պանիչք մեր, և ձեր, և հաճիցին առնել
յարամնացական, և միանձնական զնաղղուսիս
այս։ քանզի այն միայն եղիցի մխտուն, որ կա-
մաք դիցն իցէ հաստատեցեալ, և հիմնադրե-
ցեալ։

Ահա աւարտեցաւ ասատ գիրքն ոսկեղէն Ճոխա-
բան Մարկոսի Աւրելիոսի Կայսեր։

Ինչ Անիցէ սատ իւրաքանչիւրոք յենթերցող զի դիրքս այս պարտի ունիլ ընդ բաղումս իրաւմամբ ոչ զմի երջանիկ և յոյժ փարթամ և ազնիւ պարգև, և նոր աշխատանք մանաւանդ թագաւորաց և նախարարաց կառաւարչաց իրացն հրապարակի. և պաշտօնէից դատաստանի, և այլոց նմանեաց սՅ. ևս և ժողովրդոց ռամկաց զի իւրաքանչիւր ոք գտանէ 'ի ամայ աշխատանք իմն զոր պատկանի կացուցեալ իւրում։ Իրաւի զի պարունակի 'ի սմա յոյժ ծայրագոյն և խորագոյն վճիռք. յոյժ առողջք խորհուրդք և հիանալի ազդեցմունք. վՅ նՅ որք պերճացեալք և վերացեալք են բախտիւ և քաղցր մխիթարութիւք, և սփոփմունք նՅ որք նոմա ցաւծուցեալք են. և խոնարհեալք։ Վերջապէս բոլորովիմբ զայնպիսի իմն զի սակաւագոյն բարին սորա համայնքնեն ուտելիք և ախորժք։ զի փառաւորեսցի միշտ ՅՈՏ որ զայնպիսի գիտութիւն և շնորհք. պարգևեաց հեթանոսի և կռապաշտի ումեմն. և նմայ պարաւանդին բազումք վՅ օրինակ տալոյ և առաքինական վարուցն իւրոց զորս եթող մեզ, և վՅ այնքան վսեմագոյն և առողջացուցիչ վարգապետութեանցն և այնքան զարմանալի վճռացն զորս վՅ զեկուցանելոյ զմեզ գրեաց։ Բայց իրաւի ոչ սակաւ պարաւանդիմբ առնողի գրքոյս զոր ընդ մեծի աշխատանաւք հակմամբ և սքնուելՅ թարգմանելով ի յունաց լեզուէ 'ի լատին բառբառ, և 'ի լատին է 'ի սպանիական լեզու, զոր այնքան ծայրագոյն, և քաղցրաբան ոճով շարագրեաց և գրեաց։ Ոչ երջանիկ աշխատանք և երանելի սքնութիւք հակման, ուրեմն 'ի նմանէ եկ այնպիսի պտուղ և օրհնեալ լիցի ձեռն որ զայն գրեաց, յոյժ պատուական կերակուրք են իրաւի զբարձրագոյն բարութիւնս բանից գրքոյս այսորիկ բայց 'ի վաղճանի զհամն զիչ քաղցրութիւն ոճիցն են որք շարժեն 'ի յիշողացանկութիւք. բազումք դրեանք դոն յոյժ հզաղագոյն կերակուրք. բայց են այնքան անհնամեղք

մեղք լայնքան առանց շնորհաց 'ի յոճն շարագրա-
նաց մինչ զի առնուլն առաջին պատառոյն գնեն 'ի
ճանձրութիւն ։ Զբազմութի մի հետևին 'ի յայսոց և
զայնպիսի դրոցն և են զի կեան առաւել ժամանա-
կաւ անբաղձ 'ի գրքատուունս յորում ոչ հաւատամ
թէ իցէ Մարկոսի Աւետիս բազում և յոյժ բա-
զում պարտաւորիմք և ըստ իրաւանց առնողք
գրքոյս վասն այնքան բարեպէս ծախեցեալ աշ-
խատանացն և տքնութեց իւրոց ։ Որոմն ոչ
գտանի շնորհունակութի համահանգէտ զոր առատ
տացեն 'ի յերկրի ազատչեցուք զնոճ որ զայնպի-
սի շնորհն զոր ետ վարձատրեսցէ նմա 'ի յերկինս ։
Զի ուսուցանէ գիրքս այս կառավարչացն
դասաւորաց զարդարատուութի . հպատակաց
հնազանդութի , իշխանաց զգոյթ առ ժողո-
վուրդսն , և ժողովրդեան զսէր առ յիշխանսն ։
Ուսուցանէ տանուտերացն զկերպ , և զեղա-
նակ թէ որպիսաբար պարտեցեն կառավարել զոյս
զտունն , և զնտանիսն իւրեանց , և ընտանեացն
զհաւատարմութի առ տանուտերս իւրեանց ։
Խրատէ զամուսնացեալս մարդիկս սիրել զկա-
նայս իւրեանց , և զկանայս զի աբ պահիցեն զան-
կողինս իւրեանց ։ Հարկաւորէ զնոսոսն սիրով ,
և երկիւղիւ ՝՝՝ զարդացուցանել զզաւակս իւր-
եանց , և զաւակքն ունիցեն զպատկառանս առ
զնոսոս իւրեանց , մխիթարէ զտատապեալս ։
ուրախացուցանէ զորտմեալս , քաջալերէ զերկ-
չոտս , յուսադրէ զյուսահատեալս , քարոզէ
զհամբերութի աղքատաց , ցուցանէ զուսոյնու-
թիւնս ընչից փարթամաց , և զանտոի փառքն
աշխարհիս աշխարհասիրաց , 'ի վախճանի յոր-
դորէ զամ դրկել զառաքինութիս , և 'ի բաց
կալ 'ի մոլութեց , խոտորիլ 'ի չարէ , և առնել
զբարի ։

Թերևս ասիցես ինձ , ով քրիստոնեայ ըն-
թերցող գրքոյս այսորիկ , թէ զայս ամ բարիս
զոր գիրքս այս խոստանայ մեզ , կարեմք գիտել
և իմանալ 'ի գրեանս եճայինս , թարց ընթերն-
ելոյ

լոյ զգիրք մի շարադրեցեալ 'ի յանձնէ միոյ կառ-
պաշտի, որպիսի է հեղինակն գրոցս, այսինքն
Մարկոս Աւրելիոս Կայսրն, որ էր կառապաշտ։
զայս ամ՝, և քան զայս աւելի քարոզին մեզ
քրիստոնեայք վարդապետքն յամ՝ ամ՝, և յամ՝
ուրեք, ուրեմն զինչ պիտոյս ունիմք մեք լսել
զայս 'ի բերանոյ, կամ 'ի գրոցն կառապաշտից։
Առ այս պատասխանեալ ասեմ, թէ յսրժամ
սասցուածք, և քանքն ուրուք բարիք են և ոչ
ընդդէմ հաւատոյն մերոյ, ոչէ անպատեհ ընթ-
ներնուլ զգրեանս չար աղանդաց անհաւատից,
կամ մեղաւոր քրիստոնէից։ Այսրէ այս 'ի սբ
գրեանս քրիստոնէից յորս ընթեռնուք զառա-
քինական բանսն, և զհանձարեղ սասցուածսն
Որոգինէսի, Թէրթուլիանոսի, և այլոց նմա-
նեաց նոցին, որք խօսեցան, և գրեցին զերս ոչ
ընդունելեալս 'ի յուղղափառ եկեղեցւոյն, սա-
կայն ընթեռնանին 'ի սբ գրեանս ուղղափառաց;
և սասցեալք լինին 'ի քարոզի քարոզատուաց
վարդապետաց յայտնապէս 'ի լուր ամ՝ ժողովր-
դեան բարիք սասցուածք նց։ Կառապաշ էր
Արիստոտել, կառապաշտէր Սենէքա, կառապաշ
տէր Պղատոն, և այլք հանճարեղագոյնքեզ փի-
լիսոփայք կառապաշտքէին, որոց գրեանքն տային
'ի տպարանի ուղղափառ քրիստոնէից, ընթեռ-
նանին 'ի վարդապետաց 'ի լուր աշակերտաց իւր
եանց 'ի դպրոցսն, և քարոզին յամպիոնսն 'ի
նախանձայուղ քարոզողաց։ Բայց զինչ հարկա-
ւորութիւն ունիմք առբերելոյ զայլ պատճառ
հաստատելոյ։ Թէ ոչէ անպատշաճ ընթեռնուլ,
կամ լսել զերս օգտակարս գրեցեալս, կամ ա-
սացեալս 'ի յայլազգաց, կամ 'ի մեղաւորաց։
որովհետև նոյն ինքն յաւիտենական իմաստու-
թիւն, և անստեղի ճշմարտութիւն Յ՚ Քս Տէրն
մեր ասաց առ աշակերտսն իւրս այսպէս։ Յա-
թեռն Սովսէսի նստան դպիրքն, և փարիսե-
ցիքն զոր ինչ ասիցեն ձեզ արասջիք, բայց զոր
ծոց նց՝ մի՝ հետևիք։

Արդ այժմ ասելոցեմ թէ ոչ միայն ոչ է ՚ի՚ասասակար ընթեռնուլ, և լսել զբարիս խրատս ՚ի յայլազգեաց գրեցեալս, և ասացեալս, այլ թէ առաւել շարժին սիրտքն մերք առ բարիս. լսելով, և տեսանելով ՚ի ձեռս ընթերցման գրեանցն նոցա զբարի կենցաղավարուն նոցա, քան թէ լսելով, կամ տեսանելով զբարիս վարս քրիստոնէի ուրուք։ Եւ առ՚ի հաստատել զՀնմարտութիւնս այս մի անպատեհ թուիցի քեզ, ով բարեսպաշտ ընթերցօղ զպատմութիւնս այս կարձառօտս։ Կայր քրիստոնեայ մի հարուստ, և յոյժ ագահ։ Սա ունէր զշուն մի յոյժ ոխրական ինքեան, և որքան առաւել ժլատ, և և անողորմ դէպ ՚ի յաղքատս, այնքան գթած, և ողորմած էր դէպ ՚ի սիրական շունն իւր։ Զոր որոյ հրամայեալ էր խոհակերին իւրում, զի տացէր անխնահ, և առատապէս զկերակուր շանն այնմիկ։ Եւ խոհակերն այն թէպէտ ըստ հրամանին ոն իւրոյ տայր զառատ կերակուր շանն, սակայն շունն այն մնայր միշտ նիհար, և նուազ, ընդ որ զարմանայր ոն, զի այնքանեաւ առատութիւն կերակրոց ոչ դիրանայր շունն։ Արդ մերձ առ տունն ագահին այնորիկ էր տուն այլի հնոյ միոյ յոյժ աղքատի որ ունէր և նա զշուն մի յոյժ դեր և սատուար։ Եւ ագահն այն տեսանելով զշունն աղքատին այնորիկ այն քան դիրացեալ, է հարց ցկինն այն, թէ զինչ տայր ուտել շանն իւրում որ էր այնքան դիրացեալ, և կինն պատասխանեալ ասաց նմա այսպէս։ Շնորհակալեմ որ իմ ՚ի շանէ քումմէ, զի յաւուրն է անդամ բերեալ զկերակուր տայ շանն իմում որով դիրացաւ շունն իմ։ Զայս լուեալ ագահն այն ակամ վայ տալ անձին իւրում, և ասել։ Վայ ինձ եղկելոյս, զի պարտիմ ես ուսանիլ զգութ, և զողորմածութիւն ՚ի շանէ իմմէ որ առ՚ի ողորմիլ աղքատ շանն այնմիկ, մնայր ինքն քաղցեալ, և նիհար, և զայս խոկալով եղև այնու հետև յոյժ ողորմած և

առատաձեռն դէպ 'ի յաղքատս և չքաւորս։ Այսպէս և սուրբ քրիստոնեայ ոք յայս-միկ գլուխս զմեծագոյն զոհ, և զերկիւղս զորս կռապաշտքն ունէին առ դիսն իւրեանց. զոր-տակաթիլ սէրն, զոր ունէին առ միմեանս, [illegible] զատաւորաց, զհամա-[illegible] զանց, զատելութիւն առ մոլուխս, և զսէրն առ առաքինութիւս յայնժամ, եթէ ոչ բերանով, գոնեա 'ի մէջ սրտի իւրեանց վայ տուցին անձանց իւրեանց վատթարագ ասելով։ Վայ մեզ քրիստոնէիցս որոց պարտէ երթալ 'ի դպ-րատունն կռապաշտից, առ 'ի ուսանիլ սիրել զՇ-մարիսն ՇՇ, և անարատ պահել զպատուիրանս նոր։ Քո՞ պատուիրեաց մեզ ոչ առնել այլոց զայն, զոր ոչ կամիք մեք թէ այլք առնիցեն մեզ, և առնել այլոց զայն. զոր կամիմք զի ա-րասցեն մեզ այլք։ Վայ մեզ քրիստոնէիցս. զի կռապաշտքն ոչք ՇանՇաէին զքո՞, կատարէին բնականաբար զպատուիրանս այս, իսկ մեք քրիստոնեայքս, որոց ոչ միայն օրէնն բնական. այլ և ՇՇն մարգացեալ բերանով իւրով պա-տուիրէ մեզ զայս, և ոչ կամիմք հնազանդիլ։ Ասէ Սողոմոն առ ծուլացեալս մարդիկն այս-պէս։ Ո՛վ ծոյլ երթ առ մրջիւնն, և ուսիր 'ի նոցանէ, թէ որքան աշխատանօք ժողովեն զկերակուր յամարայնում ժամանակի վասն ՇՇերայնոյ ժամանակին։ այսպէս և իւրաքան-չիւր ոք քրիստոնէիցս կարէ ասել ինքն ինքեան այսպէս։ Ո՛վ քրիստոնեայ, երթ առ կռապաշտս մտաս, և խոկամբ, և ուսիր 'ի նոցանէ ժողո-վել զառաքինութիւս, և զգործս բարիս յամա-րայնում ժամանակի, որ է ժամանակն կենաց մերոց. վասն ՇՇերայնոյ ժամանակին, որ է կեանն յաւիտենական զկնի մահուան։ Իրաւի բաւա-կանք էին մեզ քրիստոնէիցս վարդապետքն, և խրատքն ուղղափառ վարդապետացն մերոց, բայց հաՇեցաւ անհուն իմաստութիւնն ՇՇմար-տին այն մերոց տալ զայնքան զարմանալի և գե-

բաղդոյն իմաստութիւն հեթանոսաց, և զայս արար
ամ վասն երկուց պատճառաց։ Մինն է այս, այ-
սինքն առ'ի վարձատրել զնա յայսմ կենաց յա-
ղագս առաքինութեան նց, ոչ ասէ նոքա Օգոս-
տինոս։ Երկրորդ պատճառն եղև, զի մեք
քրիստոնեայքս ընթեռնլով զգրեանսն յորս սա
բուռնակին համբաւքն առաքինութեան նոցա, և
համարաղդատելով զբովելի վարս նց ընդ վատ-
թարս վարուց մերոց քրիստոնէիցս, սկսիցեաք
ամաչել յաղագս ոչ կենցաղավարելոյն մերոյ բա-
րեպէս։ Իրաւի մեծ ամօթէ մեղ քրիստոնէիցս,
մինչ իմանամք զբարւոք կեալն հեթանոսաց առաջ
նորդութիւն բնականի օրինին միայնոյ, իսկ մեք
ունելով ոչ միայն զբնականն, այլև մատամբն
ոյ դրեցեալ զօրէն, այսքան դաղանացեալք կամք
'ի յօրէնն ամենատուրն, և տեսանել զմեղ այնքան
հեռիս յառաքինութենցն, զորովք այնքան պա-
նեցեալք, և զարդարեցեալք էին հեթանոքն։
Առ և ընկալ ուրեմն զգիրքս այս որպ զգանձ
մեծագոյն, և պատուականագոյն։ Արդ ասեմ
գանձ մեծագոյն, քանզի այլ ոչի գանձ կարէ
գտանիլ քան զգիրքս այս, յորում գտանին այն
պիսիք քաղցրագոյնք վճիռք, այնպիսիք խրատք
առողջատուք, և զարմանալիք աղեցմունք վասն նց,
որք բարձրացեալք են նպաստաւորութիւք բախ-
տին, և քաղցրագոյնք մխիթարանք, և համա-
ղաձաշակ վասն նց, որք ընկճեցեալք են 'ի նոյն
բախտէն, և ցածուցեալք։ Այսպէս ասոց մի պար
զագոյն, որով բարւոք տեսանի տարբերութիւն,
որ կայ 'ի մէջ զուարճանաց առաքինեաց արանց,
և 'ի մէջ վշտամած սրտից սիրողացն մոլուեց։
Այսպէս սիրդ հանդարտ որ զովացուցանէ զսիրտս
տրտմեցելոց։ Այսպէս հողմ մի հանդարտագոյն,
որով զատեցեալք յալեկոծութիւնէ զբաղմանց ծով
աշխարհիս տանի զմարդիկս առ նաւահանգիստն
ապահովութիւն։ Այսպէս գպարատուն մի ճշմարտա-
շէն, յորում ընթեռնանին կենսաբերք խրատքն
ասացեալք 'ի դերեհոգակ Սարկոսէ Աբրելիա-

նէ կայսերէ , և 'ի Ծարադոյն Փիլիսոփայէ ։ Այսէ Հումէրոս երաժիշտն որ քաղցրաբար հնչէ յականջս ընթերցողացն իւրոց ։ Այսէ Զի էրոն Ճարտասանն , որ զմայլեցուցանէ համ՝ զադոյնիւ ոճովն ասացուածոց իւրոց զսիրտս լսողաց ։ Այսէ շող արեգական որ 'ի բաց հեր՝ քէ զմէգս տգիտութեան 'ի սրտից մոլութեան հան՝ դերձ , և ցող առաւօտեան որ բուսուցանէ զիմաստութեան հանդերձ առաքինութեան ։ Վեր՝ Ջապէս այսէ մանանայն յորում դտանի համն ամենից կերակրոց , զի իմաստուն առնէ զոդէտս , սիտիէ զտրամեցեալս , մխիթարէ զվշտացեալս , հասանի 'ի թիկունս տառապելոց , քաջալերէ զվնուոյս . արիացուցանէ զերկչոտս ։ Արդ ո՞ բովհետև այսքան մեծէ և պատուական գանձն այն որ յայսմիկ գրքումս պարունակի . մինչ զի ես ոչ կարեմ բաւականաբար գովաբանել զնա , և ըստ արժանւոյն , կամիմ մանաւանդ լռել այ՝ սուհետև քանթէ խօսիլ զնմանէ ։





ԲԱՆ

ԲԱՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂԱՆ։

Բրաւէ կարի մեծէ աշխատանն, և յոյժ գովելի մեծահռչակ Մարկոս Աւրելեան Կայսերն, վա՛ այնպիսաւոյ նորադիւտ բանիցն, զորս խօսեցաւ, յաղագս քաղցրագոյն ոճիցն, որովք շարադրեաց, և սակս օգտակար բանիցն զորս դրեաց։ Սակայն ոչ է արժանի սակաւ գովութեանն պարոն Գաբրիէլն Համադասպեան երևանցին, որ զայս ոսկեղէն գիրքս 'ի սպանիական լեզուէ թարգմանեաց 'ի հայկական բառբառ։

Արդարև յոյժ զարմանալիք են համայնք գործքն այ. բայց առաւել զարմանալիք են ստեղծագործութիւնքն նո՛ր, որով զաշխարհ 'ի յոչնչէ ստեղծեաց, և 'ի խաւարէ 'ի լոյս էած։ Ուստի, եթէ ա՛ծ կամիցէր աշխատիլ, կամ վաստակիլ 'ի գործառութիւն իւրում, և ունիցէր զդժուարութիւն ինչ 'ի գործս իւրս, իցէր նմա առաւել աշխատելի, և դժուարակիր 'ի լոյս ածել զաշխարհս բոլոր 'ի յոչընչէ. քան զայլ ա՛մ գործս նո՛ր։ Արդ 'ի յարհեստս ազատականս, քան կարծեաց իմոց ոչ գոյ այնքան աշխատակիր, և դժուարին, որքան է թարգմանել զգիրս 'ի լեզուէ միոյ 'ի յայլ լեզու մի, զի է կելուպիւ իւրք ոչ զկր մի 'ի խաւարէ ածել 'ի լոյս։ Իրաւի վա՛ իսպանիացւոց էր ոսկէ գիրս այս Ճիւագ լուսատուս յայտնագոյն, զի ունէին այս թարգմանեցեալ 'ի լեզուն իւրեանց, իսկ վա՛ հայոց ազգիս մերոյ էր մթին և խաւար, վա՛ գոլոյն սորա անծանօթ, և 'ի ձեռն պարոն Գաբրիէլին վերոյ ասացեալոյն թարգմանչին սորայ, եղև ծանօթ և մեզ և յայտնապէս 'ի լոյս ածեցեալ։ Արդ ոչ պակասին մարդիկք որոց ակին զարմանալ ընդ այս, և ասեն։ Ոչ կարէ լինիլ այս,

թէ աշխարհական մարդմի դոլով զբաղեալ 'ի բազում գործառութիւն աշխարհի , որպիսի է պարոն Գաբրիէլն , կարիցէ առնել զթարգմանութիւնս այս : Բայց ես ոչ զարմանամ ընդ այս բնաւին : Քանզի ողորմածն ՅԾ , բան մեծի ողորմութեամբ իւրում , ոչ կամելով , թէ ազգն հայոց զուրկ մնայցեր յայսպիսեաց մեծագոյն դանձէ . ոչ զԹՃԾ , և ողորմածն ներշնչեաց ինա զիւորհուրդ բարի զի կամիցեր թարգմանել զայս , և մինչ ետես զբարի կամն նոր , յայնժամ ըստ մեծանակարողութեան իւրում ետ կարողութիւն նմա , զի թարգմանիցեր , և այսպէս կատարեցաւ կամն ՅԾ և ցանկութիւն սրտի պարոն Գաբրիէլին , թարց կարծեաց իմք , զի կարի յոյժ բարի է լինելոց իրն այն , որում ամենեքեան ցանկան : Արդ ասկեղէն գիրքս այս դոլով նախ թարգմանեցեալ լատինականաւ , և ապանիա կանաւ լեզուաւ 'ի յունականէ բառէ , յետ այնորիկ սկսան թարգմանել 'ի սպանիական , և 'ի լատինական լեզուէ համայնք էուրոպացիք 'ի լեզուս իւրեանց : Ապա՛ուրեմն ոչ կարէ լինիլ , եթէ ոչ յոյժ բարի , և կարի օգտակար ազգին մերում հայոց :

'Ի վախճանի ոչ զայլ ինչ եմ ասելոց ձեզ ի բերգեալ ընթերցողացդ գրքոյս , եթէ ոչ զայս , այսինքն , Յիշեցէք 'ի յերկնաւոր , և 'ի մաքրս վասն յաղօթս ձեր զպարոն Գաբրիէլն և հարս զատ որդին իւր Պարոն Աբիստոկէան որ զկնի թարգմանելոյ զայս գիրքս իմաստասի մեծաւ աշխատութիւնք ետ տպել և բազում ծախիւք 'ի փառս ՅԾ , և 'ի մեծագոյն օգուտ լուսաւորչածին ազգին հայոց : Որովհետև արժանի է մշակն վարձու . և 'ի ձէնջ ոչ իմնդրի զոսկի , կամ արծաթ այլ միայն աղօթ . ուրեմն մի՛ խնայէք տուք զայն հայցողացն 'ի ձէնջ վախճան :

Յուցակ ,

Ցուցակ և ցանկ մատենից նոյթոցն գլխաւորաց, և բարեաց ասացուածոց ոլորք պարունակին 'ի կեանս', և 'ի վարս նաև 'ի թուղթան Սարկաւագի Աւրելիոսի Կայսերն, և Հռիտաքան Ճարտասանին։

Ա

Աճանմահ մի և միայնէ. 137
Աճ առաւել առնէ մեղբարի քան թէ մեք նման ծառաւութի. 362
Աճ հաղորդակցեաց զամ ընդ մարդկան. 330
Առելութի մեծագոյն ոչ գոյ եթէ ոչ անդ ուր եղև մեծագոյն սիրելութի. 431
Աքիլլէս և տրիէստէս 'ի յամի չափաղանցք եղեն ըստ ամի. 270
Այլոցն ով առնու իրաւունք կորուսանել զիւրան։ 148
Անասունքն երկնչին մինն 'ի միւսոյն. 212
Անթիդօնոս բնակիչն հռօմայ աքսորեցեալ եղև 'ի Սիցիլիա. 127
Արմինիոս փիլիսոփայն կարթագինացի. 191
Ամուսնութի վատթար զինչիցէ. 64
Ամուսնութիւն մինչ սահմանի պարտի խորհրդակցել ընդ բաղմաց. 57
Արտաշիտաւել աքսորի վա՜ ոչ երթալոյ 'ի հարսանիս ռամկի միոյ. 82
Աբեհատէ 'ի վաղճանի յադեցեալ լինի. 14
Աստի էլից զհռօմ մոլութիւն. 281
Արիքն զինչ հնարս ունիցին. 320
Այր ոչէ կար ունելով զձեռն լավ և սովորութի էար. 310
Այր յիմար զինչ օգտի. 138
Այր ունայնակեաց է սիրող մոլութեց. 108
Այր զբաղեալ 'ի գործ ինչ միշտ բարի է. 107
Այր առաքինի վստահէ և համարձակ, 244
Աբք հաշիւ առնեն զիրս արդարս. 264

Աղք խստասիրաբք ոչ գիտեն ներել. 116
Աղք խոհեմք զինչ պարտին առնել. 39
Աղք չարք առնեն զթագաւոր աղքատ. 237
Աղք ուռնայնք հուչակեն զհաճուութիւն իւրեանց ընդ ուռնայնս և սնոտիս 90
Անբախտութիւնքն վն էր են բառնալիք. 285
Աղատութիւք գոն անդ ուր յարամեան աղնուականութիւք. 244
Աղատ ոմ կոչի. 244
Այլանդակ գազան երև եցաւ ի Սիրիլեայ. 124
Աշխարհ զինչ իցէ. 302
Աշխարհ արքան նենդաւոր. 289
Աշխարհ լի է նախանձով. 269
Աշխարհ ծառայ է մեզ ձրի և աշխատանօք. 305
Աշխարհս և մարմինն ոչ զբաղին եթէ ոչ մարտն չելով ընդ մեզ. 267
Անուն տարքուինոսի ընդէր հալածեցաւ ի Հռոմայ, 218
Աղքատ ո՞ւր իցէ առաւել աղքատ. 12
Աղքատք որքան համբերեն զլնաւորաց և զօրապետաց. 278
Աշխատիլ առաւել պարտին ստ'ի ամուսնացուցանել զդուստր մի քան զուստերս տուան. 194
Աշխատանք մահու առաւել վտանգաւոր սրնիցէ. 410
Ամանդապահ բախտին եմք ամենեքեանս. 347
Առաքինութիւն զինչ իցէ. 244
Առաքինութիւն զինչ օժիտս ունի. 37
Առաքինութիւն զորքան զօրութի և ուժեղութի ունի. 121
Առաքինութիւն ընդ լեզուաւ պարծեցեալ. 150
Առաքինութի թագաւորին պարտի դոլ մեծագոյն որպէս կարողութիւն իւր. 140
Առաքինութի գերահռչակ յորումիրի կայանայ. 338
Առողջք նախ մեռանին քան զտկարքն. 289
Ապահովի՞ բախտի ոմք իցէ՞. 348

բարե-

Բ

Բաբեկամն առաւել վնասէ ընդ նախանձով քան թէ թշնամին • 271
Բաբեկամքն պարտին լինիլ որպէս լաւ երիվար• 38
Բաբեկամն զորս հեշտասպէս ըստանամք հեշտասպէս և կորուսանեմք • 37
Բաբեկամ ճշմարիտ ոչ ոք իցէ • 210
Բաբեկամք ճշմարիտք ումեն նմանիք • 326
Բաբերարութիւն մեծ բաբեկամի միոյ առ միւսն որն իցէ • 210
Բարիք ծայրագոյնք • 72
Բարիս 'ի ժամանակս երկարս ոչ ճանաչեմք • 48
Բարիքն բնութենականք ոչ են 'ի միում և 'ի նոյնում կացութիւն • 290
Բարիքն որքան են համարելիք • 137
Բարիքն մեռանին առ 'ի կեալ • 319
Բեռն զոր ոք առնու առ 'ի հովուել զայլս զինչէ զոր որոնէ • 404
Բարք բարիք զինչ յատկորինութիւս ունին • 66
Բարքն մարդկան են յոյժ զանազանք • 397
Բախտն որ քան իցէ այլ այլելի յոյժ • 296
Բախտն զինչ էութիւն ունի • 347
Բախտն բազմիցս զնետ արձակէ, բայց ոչ խոցէ • 297
Բոզատունք բազմանան առաւել գեղեցկօք • 214
Բնութիւն սակաւ իրաւ յագի • 14
Բնութիւն զամ իրս արար բնական • 68

Գ

Գեղեցկութիւն կանաց որքան է ճնաակար • 121
Գեղեցկութիւն է ընկերակից խելագար մարդ. կանց • 189

Գանկատ ոչ գոյ վատթարագոյն մարդոյ եթէ ոչ իւրմէ յինքենէ , 241
Գաւառք և թագաւորութիւք որ ոմ պահպանին . 375
Գիրգքն տան զբաղումմ համբաւ եմ մարդոյ . 9
Գովութիւնք չարաց են վատահամբաւք . 389
Գեմիլսիա տիկին պարտէնուհոյնու . 183
Գուեհիկն գեստափին տօնաւիղու կամ դանուքին . 146

Դ

Դատերք պարտին ամուսնացուցանել փուութանակի . 193
Դատերքն պարտին ըսքաղել յաշխատանս . 186
Դատերք ոչ և աղնուի ումեք են հաւատալիք . 184
Դատերք ընդ որումեն ամուսնանալիք . 54
Դպրատուն ընդ հանրական է տուն թագաւորին . 115
Դատաստան ընդունիլ 'ի ձեռաց անիրաւաց են ձանձրալիք . 371
Դատաստան արդարագոյն որն իցէ . 362
Դատաստանք այ են յոյժ դաղտնիք . 364
Դերասանք աքսորեցեալք 'ի հելլէսպոնթոս . 70
Դերասանք աքսորեցեալք 'ի Հռոմայ . 384
Դերասանք առաւել ինասակալք են իրին հրապարակի քանեմ մարդասպանք . 387
Դիք բաղումք 'ի յերկինս վա՜ էր . 137

Ե

Երկիր առեալ բռնութիւն պարտէ հոլովել զայն բարի կառաւարութիւն . 153
Երկիր մայրէ յոյժ գթածագոյն . 227
Երջանկութիւն փոխեմք առեալ . 165
Երջանկութիւք պատճառեն նախանձ . 165
Երկիւղն այ աղաւութիւն 'ի վերէ հարկաւոր . 215

Զ

Զայրանալ'ի վերա չարեաց դայ 'ի խոհեմութիւն. 36
Զարմացումն ուստի բղխի. 267
Զրուցատրութիւնք թագաւորաց թէ հաջելիք իցեն պահպանել զկացութիւս իւրեանց. 79
Զանազանկութիւն յորժամ դայ ոչ դայ միայն. 130
Զօրականքն առ զինչ կրթեն զինքեանս. 277

Է

Էթրասկո և լաթինա համերգք սիրահարին. 181

Ը

Ըշկիպիոն որով արար զինքն հռչակելի. 121
Ընթացք բնականք հպատակքեն փոփոխութիւն. 290
Ընթեռնուլ զգիրս զինչ օգուտս ունի. 143
Ըստայականութիւն ուր թագաւորէ բանականութիւն անդէն հրաժարի. 241
Ըղձակոտութիւնք մերք դռեհիկ և չմարդիք են. 142

Թ

Թշնամի վատթարագոյն քան զամ ո՛ իցէ. 283
Թշնամութիւն առնելն ընդ ումեք պարտէ խորհրդակցիլ ընդ ամենեցունց. 247
Թագաւորն պարտի դատել զամեն հանգիստաբար. 84
Թագաւոր իմաստուն է յոյժ բարի և հակադարձեալ. 144
Թագաւորքն են միշտ 'ի տեղի նպատակի որոց ամենեքեան ակնարկեն. 242

Թագաւորքն ոչ կան առաւել սպասհովաբար, 23
Թագաւորքն պարտին նշմարել թէ ումիցեն յանձնելոցք զորգիս իւրեանց առ՝ զարգացուցանել. 40
Թագաւորք այնպիսիք իցեն որպէս իցեն զարգացեալք ՝ի տղայութիւնէ իւրեանց. 17
Թագաւորք վնէր ից են ընտրեցեալք. 140
Թուխթ հմայութիւնէ տանիլ ընդ պարանոցի արգելանի. 129
Թշուառուիք մարդկան որքան մեծք իցեն. 343

Ի

Իլատութիւն մարդոյ որպէս մեծ իցէ. 349
Իլատութիւնն որքան սակաւ իցէ մարդոյ այնքան ազատ է մարդն. 236
Իառանիք բարիք ուր նուազին. 339
Իողովուրդն հեգեալի աշխատանօք այնմիկ յորում ձգտի կամքն Թագաւորին. 22
Իողովուրդն զովսիրէ. 59
Իողովուրդն պարտի սիրել զԹագաւորն իւր և հնազանդիլ նմա. 84
Իողով և իրն հրապարակի փառաւորեցեալ որն իցէ. 232
Իողով և իրն հրապարակի մշտնջենաւորապէս ճաշոց որնիցէ. 84
Իուժկալութիւն Մարկոսի Կայսեր. 74
Իամանակն փառաւորապէս ծախեցեալ. 86

Ի

Իղձն արտի յոյ միայնոյ ճանաչեցեալ լինի. 211
Իմաստուն աշխարհի ո՞ որ իցէ. 90
Իմաստուն իւիւրք կարէ ճանաչել. 73
Իմաստունն և լիմարն որով զանազանին. 136
Իմաստուն որնիցէ ՝ի մէջ իմաստնոց. 90
Իմաստունն ոչ ճանաչի եթէ ոչ ՝ի մէջ իմաստնոց. 31

Իմաս-

Իմաստուն ոք պարտի դնիլ 'ի մէջ ծերակուսից. 155
Իմաստութիւն զինչ յատկօրինութիւն ունի, և ուր բնակի նա. 337

Լ

Լաչէդէմոնացիք նախկին, և 'ի հնում ժամանակին լիրբք էին. 173
Լրբութի ժողովրդեան մեծագոյնք են քան զանհոգութի թագաւորին. 21
Լիրբքն մանաւանդ ոլոնեն զկին գեղեցիկ քան թէ զհամառսս. 189
Լալն 'ի մահուան գա 'ի բաղում ծիծաղիցն որ 'ի կեանս ունեաց. 201
Լուսիլլա դուստր Մարկոսի Կայսեր. 161
Լուկրեցիա Հռովմացի տիկինն վերն էր ցանկալի. 193

Խ

Խորհրդակցութի ոչ ոք ունի վասն իւրոյ ինքեան. 240
Խորհրդակցութին վատթարի ոչ գտանիցի ճար և ոչ ճարակ. 233
Խորհրդակցութիք չարք 'ի թագաւորաց ոչ են ըմբերելիք. 231
Խոհեմութին փորձի 'ի մէջ լրբից և խելագարաց. 30
Խաբէութիք 'ի մէջ տանն թագաւորաց. 243
Խելքն միշտ զգայ քախցեալ. 14
Խելագարն ոչ ճանաչի 'ի մէջ խելագարաց. 31
Խոզք անկեալք առ յոտս Մարկոսի Կայսեր. 133
Խստութի թագաւորին պատճառէ զասելութի 'ի ժողովուրդն. 79

Ծ

Ծիծաղիլն աղջկայ մեոյ համարի որպէս շնաց ցողն • 162
Ծերութիւն պատուելի որն կամ որպիսի լցէ • 335
Ծերք իմաստունք որուսմ'են պարտանդեցեալք • 336
Ծերիցն որպիսիք իրք պարտին դոլ պատուեցեալք • 336
Ծերք սիրտհարք են նշանակք • 315

Կ

Կալվիսիոս թագաւոր արջիացոց • 169
Կամիլեանք եղեն արք մեծարելիք 'ի քաղաքն Հռոմայ • 2
Կատոն սենատորն որքան համարիւր 'ի Հռոմ • 120
Կոմոդոս եղև ընտրեցեալ 'ի Կայսերութիւն • 158
Կուանէլիսեանքն եղեն բախտաւորք 'ի Հռոմ • 164
Կայսրն նմանի գործարարի • 84
Կրթութիւնն համեստ ծնանի զհանդգնութիւն • 43
Կրթութիւն են ունելոցք զորակցութիւնքն հոգւոյն • 355
Կանայք մանկամարդք ամուսնացեալք ընդ ծերոց զորպիսի սիրտս ունին • 204
Կինն գազան անկիրթ • 411
Կինն ունի զսիրտ գիւրաբեկ • 98
Կինն անհամեստ մինչ վատահամբաւեալ • 162
Կին թշնամի խստագոյն մարդոյ • 91
Կինն ունելով զկեանն բարի ոչ երկնչի իյաւնէ չարալեզուէ • 410
Կանայք նախատեղծք որպիսաբար ստեղծեցան • 409
Կայնայքն ոչ պարտին պատժիլ հրապարակաւ • 99

Կինն ստեղծաւ Թարց մեր. 411
Կանայք որպիսի բարս ունին. 415
Կանայքն Հռոմէացիք պահէին զեօթն իրս. 101
Կանայքն ոչ պարտին ունիլ որպէս զաղախնայս և ոչ որպէս տիկինս. 91
Կանայք պարտին դիմաք դոլ ամօթխածք. 417
Կողմնապահութեան 'ի դրուանս Թագաւորաց. 242
Կեանն մեր յառաջագոյն վաղճանի քան զադամ հուրթին մեր. 143
Կեանն Թագաւորի է որպէս նպատակ մի. 20
Կեալ բարեպէս ոչ է յոյժ դուրին. 202
Կղզաբնակիչք ամենեքեան ջալք են. 367

Հ

Հաւատարմութեան բարեաց յորում իրի կայանայ ցէ. 59
Հետևիլ չար կենցաղաւարութեց Թագաւորաց մերոց ոչեմք պարտականք. 21
Հարկաւորք են կանայք. 93
Համբերութեան է հարկաւոր 'ի յիրս որոց ոչ դոյ հնար և ճար. 345
Հաճութիւնք. և հրճմունք տղայականք զինչ շահաէտութիւնս բերեն. 52
Հակառակութեան բախտին համբերելն է մեծ աշխատանք. 154
Հարուստ ոմվէ յոյժ. 12
Հարստութիւնքն որպէս պարտին հովուիլ. և կառաւարիլ. 340
Հռոմ եղև նախ գլուխ մոլեսիրաց. 348
Հռոմ ոչ ունի եթէ ոչ միայն զանուն Հռոմայ. 108
Հռոմանկեալք 'ի բաձրութիւն կացութեան իւրոյ. 141
Հռոմէացիք վա՞ էր ստացան համբաւ մեծ. 361
Հռոմէացիք վա՞ գիտութիւն իւրեանց եղեն երկիւղալի առ ամենեսեան. 141

շան արուեստից իւրեանց • 8
Հռոմի ացիք 'ի հնում ժամանակին տային զինքեանս
'ի գիրս • և 'ի գիտութիւն պաշտօնի • 108
Հպարտութիւն ատելի է յոյժ ամենեցուն • 150

Ձ

Ձախորդութիւն բնութենական ժառանգութիւն
և տոհմական ատացուցածք են մեր • 165
Ձայնիւ դողել 'ի գիշերի նշանի խելագարութիւն •
346

Ղ

Ճ

Ճոխութեանք պարտին առաքել 'ի դեսպանութիւն
յերկիրս օտար • 355
Ճշմարտութիւն ոչ պարտի լռիլ վասն ահի • 401

Մ

Մարմինն ոչ երբեք յագի • 306
Մարմինն զմեզ ենթարկէ մինչ գիտութիւն զմեզ
ոչ բարձրացուցանիցէ • 68
Մտածմունք բաձրայօնք ունին զբախտս ցա-
ծուն • 282
Մահաժանդ Իտալիա կամ մահ տարաժամ • 131
Մխիթարել զոք բանիւ միայն ոչ է բավական •
232
Մարկոս Աւրելիոս յորմէ ազգէ ծնաւ • 2
Մարկոս Աւրելիոս զի՞ոք վարպետս ունեաց •
27
Մարկոս Աւրելիոս ընթեռնու զսիրիստիանու-
թիւն 'ի ուղղս կղզին • 408
Մարկոս Աւրելիոս բարեկամ գրոց նորագոյնից •
135

Մար-

Մարկոս Աբրելիոս պատուէ յոյժ զիմաստուն. 23
Մարկոս Աբրելիոս ոչ երբէկ կամեցաւ պահել 'ի տան իւրում զայր մոլեհար. 237
Մարկոս Աբրելիոս ատէր զամ մարդիքս ունայն ակեացս. 107
Մարկոս Աբրելիոս համբերող փորձուեց. 262
Մարկոս Աբրելիոս ոչ բաժանէր զժամս 'ի յաւուրն. 86
Մարկոս Աբրելիոս որքան էր սիրեցեալ 'ի ժողովրդենէ իւրմէ. 158
Մարկոս Աբրելիոս բացայայտէ զի իցէ ինքն կառաւարիչք Կայսերութեան. 238
Մարկոս Աբրելիոս հիւանդ ախտակիր ջերմամբ. 134
Մեղել 'ի դրունս տաճարաց արդելեալք են. 129
Մասինիսա, և սօքօնիսքա սիրահարեցեալք. 182
Մաուրիտանացիք դան առնուլ զմեծն բրիթանիա. 105
Միլօն Էպպան զեղ մի միով բախմամբ. 357
Մահն զինչ իցէ. 211
Մահն հաղ իմն է. 203
Մահն բարի պատճառանս յօդէ առ 'ի ունիլ զկեանս չար. 299
Մահն բարոյն արդ ոյն աւորի ողբից և աքից 340
Մահն հօր ընդերեն ցանկալի. 204
Մահուան ոչ ոք ցանկայ. 228
Մահն Մարկոսի Կայսեր. 196
Մեռեալք խնդան զի ոչ ունին զհարկաւորութիւն կանանց. 94

Յ

Յուլիոս Կայսրն սպանանի վասն հպարտութիւն իւրոյ. 83
Յուլիոս Կայսրն ամբարտաւան. 5
Յունվար դին նկարեալ երկադէմս. 75

Յոյնքն լան մինչ Ծնանին երեխայքն • 202
Յաղթանակութիւն Մարկոսի Կայսեր • 272
Յենարան աշխարհի 'ի վրայ որոյ հիմնեցեալ • 229

Ն

Նախանձն անմարտնչելի յոյժ • 267
Նախանձն որով բժշկի կամ բուժի • 268
Նախանձն օձէ թոյնաւորեցեալ • 267

Շ

Շինուածք արագապէս շինեցեալք ոչ կարեն գոլ յոյժ ապահով • 396
Շինուածք ուրեն առաւել վտանգաւորք • 379

Ո

Ուժեղութիւնք ոչ են պակաս արանցն համբերողաց • 278
Ուժն կանանց է լեզուն • 415
Ունայնակեացք դտանեն զամ գոյթակղութիւն • 118
Ունայնակեացութիւնն դտանէ զամ մոլութիւն • 119
Ունայնակեացութիւնն արմատ ամ չարեաց • 118
Ունայնակեացք որքան ինքեանքբեն • 118
Ունայնակեացք ոչ մտածեն եթէ ոչ ինքեանէ ալոց • 117
Ունայնութիւնն որքան ընդունայնէ • 142

Զ

Զարն որաւնի արդոյնաւորի զպատիժս • 423
Զարն սակաւ ժամանակաւ ուսանի • 46
Զարին զոգնութիւն տուողն չարագոյնէ քանզ չարագործն 370
Զարութիւն մեծագոյն կանանց է գալ անզգամ • 336

Զարադոյնք երևին մինչ ակնարկեն 'ի մէջ ձեռին. 120
Զարամ ճիկքն են կրկնապատկաբար չարք. 72
Զիլէբօն կորուս զբաղում հաւատարմութիւն մի 'ի կիր արկանելոյ զչողոքութիւնս. 10

Պ

Պատերազմն ատելիք ամենեցուն. 374
Պատերազմն ընդէր ոչ պարտի առնել. 283
Պատուեայ նախ զաղքատն առաքինի քանզ հարուստն մոլեռեր. 312
Պատմաբանք ոչ դրեն զկեանս Ծնողացն Կայսերաց. 3
Պատիւն Հռոմէացոց որ քան յարատևեաց. 252
Պատուեայ զնա որ արդիւնաւորի միայն պատուոյ. 363
Պատուելին 'ի մէջ պատուելեաց ո՞ր ոք իցէ. 361
Պատուիրանքն արգարք կակղացուցանեն զսիրտս 376
Պանուցիոս դրամդիր Մարկոսի Կայսեր. 257
Պարթևքն են արք պատերազմողք. 272
Պարսոկլիս թագաւոր կոստանդեցոց. 218

Ջ

Ջանք հնադոյնից հակասի ծուլութեն ներկայից. 48

Ս

Ստութիւն ոչ գտաւ 'ի Մարկոս Աւրելիոսն. 2
Ստութիւն դժուարաւ գտանի 'ի յիմաստունս. 9
Սեվ արծուիքն անկան 'ի յոտս Մարկոսի Կայսեր. 133
Սէրն հատուցանի ալեով սիրով. 80
Սէրն զինչ իցէ. 180

Սէր ճշմարիտ ուր գտանի. 344
Սէրն թագաւորաց ընդ ժողովրդեան իւրեանց պարտէ գոլ յոյժ մաքուր. 8
Սէրն կանանց անկատարք են. 92
Սիրոյքն հետաքրքիրք, և զննիչք զինչ օրէնս ունին. 421
Սէրն սիրահարաց ուստի ծնանի. 414
Սիրան յերփիէ առաւել բեռնաւորեցեալ հոգւոյ և վարանմամբ. 228
Սիրահարք ոչ ըմբերեն օրինաց. 184
Սկսրատէս ընկեց զսակին իւր 'ի ծով. 345

Վ

Վաճառականութիւն ովառնէ դնէ զինքն 'ի վտանգի. 327
Վիճելն ընդդէմ յատնի արդարութիւն ոչ պարտին. 246
Վերջն Մարկոսի Կայսեր փառաւոր. 8
Վատահամբաւութիւն յորում կայանա. 363
Վէրիսիմո որդին Մարկոսի մեռանի նախ քանզ ժամանակն իւր. 16

Տ

Տալ զինքն ամենեցուն. 79
Տկարութիւն կանանց. 102
Տգիտութիւն թագաւորին է մահ տարաժամ, և ժանդ. 141
Տգիտութիւն թագաւորաց վտանգաւոր. 140
Տղայն ճանաչի մինչ երեխայէ. 212
Տղայի լինելն ընդ ազգկայէ արդելեցեալ. 218
Տղայութիւն որպէս չարաւէտ ծախի. 335
Տղայք առաքինիք առ զինչ պարաւանդին. 335
Տիկինք ազնիւք որպէս կարեն պահպանել զվարկ իւրեանց. 171
Տաքսիլոս ընդ էր անուանեցաւ հպարտ. 83

Տրա-

Տրաեանոսի մեծագոյն դիւութիւն. 219

Յ

Յաւակցութիւն առ այլս է սուաքինութիւն մեծ. 136
Յաւն մարմնոյ ոչ նմանի ցաւոյն հոգւոյ. 338

Փ

Փառասէրքն ջանան կառաւարել զայլս, և լինին կառավարեցեալք յայլոց. 405
Փիւռոս վա՜ էր յաղթեցաւ 'ի յաղէքսանդր է. 276
Փիլիպոս և աղէքսանդր վա՜ էր են անուանեցեալք 'ի գիրս պատմութեց. 279
Փեսայն յոյժ քննել պարտի. 55
Փեսայն որն պարտի ընտրել. 55

Քաղաքն նախկնապէս պարտին պարծիլ բարեօք բնակչօք հանդերձ, քանզի մեծաշուք շինուածով. 243

Օ

Օրէնք հանապազօր նորոգին 'ի գրունս արքայից. 242
Օրէնքն լաչէդեմոնացոց ընդդէմ ուռնայն ակեաց. 110

Ֆ

Ֆայուստին, և լուչիլա անհամաստք. 163

[Յանկ գրոց և գլխոցն զորս պարունակին]
'ի գրդոջս յայսմիկ.

Գլուխ առաջներորդ։

Յաղագս աղքատանութեան և տոհմականութեան Մարկոսի Աւրելիոյ Կայսեր. 1

Գլուխ երկրորդ։

Յաղագս ուսուցչաց զորս ունեանց Մարկոս Աւրելիան Կայսրն 'ի մանկութէ իւրմէ. 6

Գլուխ երրորդ։

Յաղագս գիտութեան զոր ուսաւ Մարկոս Կայսրն և թուղթ մի աստ գնի զարմանաբար գրեցեալ զոր առաքեաց առ Պօլիոն բարկամն իւր. 13

Գլուխ չորրորդ։

Յաղագս գոլոյն Մարկոսի Կայսեր յոյժ հանձարեղ, սոյն պատճառաւն ծաղկեցան բազումք իմաստունք 'ի ժամանակի նոր. 20

Գլուխ հինգերրորդ։

Յաղագս մահուան Վերիսիմոսին որ թարգմանի Ճշմարտապատոյնեղ որդւոյն Մարկոսի որ յոյժ սիրէր. 25

Գլուխ վեցերորդ։

Յաղագս վարպետաց զորս էառ Մարկոս Կայսրն առ 'ի զարգացուցանել զորդին իւր. 27

Գլուխ

Գլուխ յեօթներրորդ։

Յաղագս իրացն որք պատահեցան հնգից իմաստասիրացն, և յաղագս որոց եղեն արտաքսեցեալք ի պալատէ արքունականէ։ 30

Գլուխ ութներորդ։

Յաղագս խօսակցութեան միոյ զոր արար Մարկոս Կայսրն ընդ վարպետացն որք ճանդերձեալք էին անուցանել զիշխանն Կօմոդոս։ 36

Գլուխ իններորդ։

Յաղագս թէ որպէս պարտին հրաժարիլ ի մեղութեաց վարպետքն այնոքիկ որք անուցանեն զորդիս արքայից։ 42

Գլուխ տասներրորդ։

Յաղագս թէ ո՞րպէս անուցանէր, և զարգացուցանէր Մարկոս Աւրելեան Կայսրն զդստերս իւրս։ 49

Գլուխ մեռասաներրորդ։

Յաղագս թէ որպէս ընտրեր Կայսրն զփեսայս իւրս, և որպէս փորձառութիւն զնէր զնո՝։ 54

Գլուխ երկոտասաներրորդ։

Յաղագս թէ որպիսեաւ կերպիւ խօսեցաւ Մարկոս Կայսրն առ Ծնօղսն տղայի միոյ զոր կամէին ամուսնացուցանել միւսմ՝ի դստերացն նո՝։ 57

Գլուխ երեքտասաներրորդ։

Յաղագս թէ յոյժ քննելիք փեսայն նախ քան զմտանելն նորա՝ի տուն։ 61

Գլուխ չորեքտասաներրորդ։

Յաղագս թէ Մարկոս Կայսրն որքան մեծ բարեկամ իցէ եղեալ ազնիւ կրթութեամբ, և թշնամի աղաւաղչից և կատակարկուաց։ 66

Գլուխ հնգետասաներրորդ։

Յաղագս բարւոյ կենցաղավարութեան Մարկոսի Կայսեր ընդ համայնս այնոսիկ որք դային առ նա առ՝ի ընձեռել ընդ նմա զերի խմբեք։ 71

Գլուխ վեցետասաներրորդ։

Յաղագս տօնին զոր հաչակէին Հռովմայեցիքն զիոյն յունվարի, և յաղագս այնորիկ որ Յաւ-

ուր միում պատահեցաւ 'ի ժամանակս բարեաց
Կայսերս այսորիկ յայնմիկ տոնի. 75

Գլուխ եօթնեւտասներրորդ։

Յաղագս պատասխանոյն զոր Մարկոս Կայսրն
եւս ծերի միում, թէ թագաւորաց ոչ է պարտ
խորհիլ 'ի ժողովրդենէն. 79

Յաղագս թէ որպէս Կայսրն Մարկոս բաժա-
նէր զժամս աւուրց առ 'ի տալ ամենեցուն
զվճարումն ամենից զործառութեցն Կայսերա-
կանաց։ 85

Գլուխ իններեւտասներրորդ։

Յաղագս թէ որպէս Քառասային Կայսրուհին
խնդրեաց 'ի Կայսերէ յառնել իւրմէ զբանալին
ուսումնարանի յարկին նորա, և թէ զինչ պա-
տասխանեաց նմա Կայսրն վասն այնմ պատ-
ճառի. 89

Գլուխ քսաներրորդ։

Յաղագս թէ զորքան վիշտ, և զվտանգս ունին
մարդիկք, որք յոյժ ընտելանան ընդ կանանց 95

Գլուխ քսանեւմիերրորդ։

Յաղագս այնր պատճառի, զոր պատասխանեաց
Կայսրն Քառասինայ շուրջ զայնու որ ասաց
թէ յղի իցէ. 100

Գլուխ քսանեւերկուերրորդ։

Յաղագս թէ 'ի ժամանակի Մարկոսի Կայսերն,
ոչ եկեալք Մաբիոսանացիք բաղում նաւովք
առ 'ի առնուլ վեծ կղզին Բրիթանիու. 105

Գլուխ քսանեւերեքերրորդ։

Յաղագս այնորիկ որ Մարկոս Կայսրն 'ի բա-
նակի իւրում խօսեցաւ զվատթարութիւն պա-
տարկացութեցն. 107

Գլուխ քսանեւչորսներրորդ։

Յաղագս թէ որքան վնասակար իցէ կալն 'ի պա-
լատի որքունի և խօսի յատկապէս զնոցանէ,
որք յաճախապէս մտանեն ընդ այն. 112

Գլուխ քսանեւհինգերրորդ։

Յարատեւելով Կայսրն 'ի զուցատրութեանէ իւրում
պարզաբանէ զդիտաւորութիւն իւր, թէ որ-
պէս

ոչէս կեալ. և ապրիլ պարտին 'ի տան ; և
'ի յապարանի իւրում. 117
Գլուխ քսանևվեցերրորդ.
Յաղագս ահեղատեսիլ դազանի միոյ զորս տե-
սին 'ի կղզւոջն Սիկիլիու, և յաղագս մատեան
միոյ արեամբ գրեցելոյ 'ի միում դրանց քա-
ղաքին. 123
Գլուխ քսանևյեօթներրորդ։
Յաղագս այնորիկ որ պատահեցաւ բնակչի միում
Հռովմայեցոյ որ կոչիւր անթիոքոնոս. 127
Գլուխ քսանևութերրորդ։
Յաղագս 'ի ժանդայմահի միոյ մեծի որ եղև 'ի
յամ Խոսրովայ 'ի ժամանակի Մարկոսի Կայ-
սերն. 131
Գլուխ քսանևիններրորդ։
Յաղագս պատասխանոյն զոր ետ Մարկոս
Աւրելիան Կայսրն առ ոմանս բժիշկս, որք
զայրանային զի գոլով նա հիւանդացեալ ոչ
թողոյր զընթերցումն գրոց. 135
Գլուխ երեսներրորդ։
Ասա խոսի, և ընձեռէ, թէ առաւել ճշմարտ-
կարէ խշնանաց, և թաղաւորաց ոգիտուին,
քան թէ այլոց. 141
Գլուխ երեսունևմիերրորդ։
Յաղագս այնորիկ զոր ասաց գռեհիկ շինական
մի խորհրդականացն Հռովմէացւոց առաջի ներ-
կայութեն Մարկոսի Կայսեր. 146
Գլուխ երեսունևերկուերրորդ։
Յաղագս իրաց առաւել մասնաւորաց զորս ա-
սաց նոյն գռեհիկ շինականն գանուք գեղոյն
առաջի ատենին ծերակուտից։ 151
Գլուխ երեսունևերեքերրորդ։
Յաղագս թէ որպէս Կայսրն Մարկոս ասէր,
թէ ինքն յոյժ սիրէր զժողովուրդն իւր, և
և հակադարձաբար ժողովուրդն ասէր թէ
առաւել սիրէին ինքեանք զԿայսրն. 157
Գլուխ երեսունևչորքերրորդ։
Յաղագս պարգևի միոյ զոր ընկալաւ գլխուտին
Քաուս-

քաւաստին 'ի Կայսերէ յառնէ իւրմէ խնդրուա
ծով բազմաց միջնորդաց. 161

գլուխ երեսունեւհինգերրորդ։
Յաղագս բանիցն զոր ասաց Մարկոս Կայսրն
միւմ 'ի ծերակուտիցն որ գովաբանէր յոյժ
զյաղթանակն. 166

գլուխ երեսունեւվեցերրորդ։
Յաղագս մեծագոյնի յանդիմանութեանն, և
ազդեցութեանն զոր Կայսրն ետ քաւաստինայ
կնոջ իւրում և դստերն իւրում Լուսիլլայ. 170

գլուխ երեսունեւեօթներրորդ։
Կայսրն յարատեւէ 'ի զուցաբանութիւնս իւր և
խրատէ զքաւաստինն, զի հատցէ զառիթս
'ի դստերէ իւրմէ. 180

գլուխ երեսունեւութերրորդ։
Յաղագս հոքսունակութեանն զոր ունէր Մարկոս
և Կայսրն 'ի յամուսնացուցանել զդստերս իւրս. 187

գլուխ երեսունեւիններրորդ։
Յաղագս հիւանդութեան, և մահուանն Մար-
կոսի Կայսեր, և տիոյ հասակի նորա նաև տե-
ղոյն ուր մեռաւ. 196

գլուխ քառասներրորդ։
Յաղագս այնորիկ զոր ասաց Պանուցիոս խոր-
հրդակիցն Կայսեր 'ի ժամու մահուան նո-
րայ. 199

գլուխ քառասունեւմիներրորդ։
Յաղագս թէ հրպէս հրամայեաց Կայսրն, զի
խորհրդակիցն դիցէր 'ի քարտիզի զայն ամ
զոր ասաց. 209

գլուխ քառասունեւերկուներրորդ։
Յաղագս ոպատասխանոյն այնորիկ զոր Կայսրն
ետ Պանուցիոսի խորհրդակցուն իւրոյ. 210

գլուխ քառասունեւերեքերրորդ։
Յաղագս այնոցիկ զոր ասաց Կայսրն վաթղե-
տացն որդւոյն իւրոյ, և կառավարչացն Կայսերու-
թեան. 223

գլուխ

գլուխ քառասունև չորսերրորդ։
Յաղագս թէ որպէս Կայսրն Մարկոս ի ժամու մահուան իւրոյ հրամայեաց կոչել զԿոմոդոս որդին իւր, և՝ որպէս բացայայտեաց զայնոսիկ որք լինելոցք էին կառավարիչք Կայսրութեան։ 237

գլուխ քառասունև հինգերրորդ։
Յաղագս այնորիկ զոր ասաց Կայսրն առ որդին իւր Կոմոդոս։ 240

գլուխ քառասունև վեցերրորդ։
Յաղագս առաւել յատկաց խորհրդոց զորս էտ Կայսրն որդւոյն իւրումն Կոմոդոսի։ 247

գլուխ քառասունև յեօթներրորդ։
Յաղագս այլ յատուկ յանձնարարութեան զորս յանձնեաց Կայսրն որդւոյն իւրումն Կոմոդոսի։ 253

գլուխ քառասունև ութերրորդ։
Յաղագս վերջնոց բանիցն զորս ասաց Մարկոս Կայսրն առ Կոմոդոս որդին իւր, և զասիաստակացն խորհրդոց զոր էտ նմա։ 257

Յանկ թղթոցն առաքեցելոց.

Թուղթ Առաջներրորդ։
Առ Պիրամեն իւր յոյժ յատկադոյն քարեկամն որ էր յոյժ վշտագնեցեալ. 261

Թուղթ Երկրրորդ։
Առ Կուռնէլիոս ընդ որում խօսի վասն զաղ-խատանաց պատերազմի, և զուշայնութեանն յաղթանակաց. 272

Թուղթ Երրորդ։
Առ Տօռքատոս բնակիչն դաւթայ մխիթարելով զնա 'ի յաքսորանս ինչ։ 285

Թուղթ Չորրորդ։
Առ Դոմիցիանոս 'ի Կապուայ մխիթարելով զնա 'ի յաքսորանս իւր։ 295

Թուղթ Հինգերրորդ։
Առ Կլաւդիոս և Կլաւդինա զի գոլով ծերք կենցաղավարեին սէր երիտասարդք. 300

Թուղթ Վեցերրորդ։
Առ Լաբինա տիկինն Հռոմէացի մխիթարելով զնա վասն մահուան առն իւրոյ. 318

Թուղթ Եօթներրորդ։
Առ Չինչինատոս քարեկամն իւր որ գոլով նախ ազնիւ ձիաւոր դարձոյց յետոյ զինքն 'ի վաճառականութիւն. 325

Թուղթ Ութերրորդ։
Առ Կաթուլոս նախարարն գոլով յոյժ վշտագնեցեալ վասն մահուանն Աէրիսիմոնի յոյժ սիրեցելոյ որդւոյն իւրոյ։ 335

Թուղթ Իններրորդ։
Առ Մերկեռիոս բնակիչն սամոսու, որ այժմ կոչի Բենեվենթօ. 343

Թուղթ Տասներրորդ։
Առ Անթիգօնոս մխիթարելով զնա 'ի դիպուածոյ փուսմ յոյժ տրտմականի։ 352

Թուղթ

Թուղթ Մեսրոպաներրորդ։
Առ նոյն Անթիոքոնոս ըստ որում խօսի ընդդէմ դատաւորաց անողորմից, և անիրաւաց. 366
Թուղթ Երկոտասաներրորդ։
Առ Լամբերթոս կառավարիչ, 'և նախարարն կղզւոյն Հելլեսպոնտոսի, յորժամ աքսորեաց զկատակարկուսն 'ի Հռոմայ. 383
Թուղթ Երեքտասաներրորդ։
Առ Կաթուղիկոս յատկագոյն բարեկամն իւր սրում պատմէ զլուրս Հռոմայ. 392
Թուղթ Չորեքտասաներրորդ։
Առ սիրահարեցեալն Հռոմէացիս որք ներկայացուցեալք էին զպատկերն Մարկոսի 'ի տեսանի իմիք, առ'ի կատակել և պարսաւել զնա. 408
Թուղթ Հնգետասաներրորդ։
Առ Բոհեմիա հարցն իւր որ կամէր երթալ 'ի պատերազմն. 420
Թուղթ Վեցևտասաներրորդ։
Պատասխանի Բոհեմիայի առ Կայսրն որով ցուցանին ժպիրն խորամանկութիւն կանանց. 428
Թուղթ Եօթնևտասաներրորդ.
Առ Մատրինա աղջկն Հռոմէացի, որով սիրահարեցեալ եղև տեսանելով զնա 'ի լուսամուտն տան իւրոյ. 437
Թուղթ ութևտասաներրորդ։
Առ Աթենացիսն, և առ Լաչէդեմոնացիսն. 442

ՎԵՐՋ ՅԱՆԿԻՍ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Սղալանք

յուշեմութիւն
'ի տասն և և եօթն
քաղաքն պարտէնպօլիս

'ի յուսանել
եղէալ
վարպետքն եղէն
համապատասխանիցէին

իմաստաց
'ի յեօթն երորորդում
վերահասուլինել
զփոփոխութիւն
'ի յարշաւելոյ
զբաղեցեալ
և ոչ ոք իւրացուցանել

ապականեցեալք
Կայսերն զգենոյր
'ի յարանաց բարեաց
իւեանց
Կայսն
վա՛ չարսովորութե՛ դոյ
դառնմանասել
բայ միայն կանանց
դերագոյն տեսլինն այն
հարցանիցեն
իկին խումբք
քսան և չորսերրորդ
ղերկոտասան նախտակն

յիշել միայն
խոնդրե
տեսանել զայնձն նը
շահեցեալ
միջնորդաց
ատենաբանութիւն
զառաւաքինութիւն

Ուղղութիւնք

յուշիմութիւն 9
'ի տասն և յեօթն 18
'ի քաղաքն պարտէնուպոլիս 18
'ի յուսանիլ 18
եղեալ 18
խարպետքն եղէն 28
համապատասխանիցեին 29
յիմարաց 31
'ի յեօթներորդում 31
վերահասուք լինիլ 38
զփոփոխութիւն 39
'ի յարշաւելոյ 69
զբաղեցաւ 69
'և ոչոք 'ի խաղաղացուցանել 70
ապականեցեալք 73
Կայսրն զգենոյր 77
'ի յարանց բարեաց 77
իւրեանց 82
Կայսրն 83
վա՛ չար սովորութե՛ քոյ 97
դառնամ ասել 97
բայ միայն կանանց 98
դերագոյն տիկինն այն 103
հարցանիցեն 104
եկին խումբք
քսան և չորսերորդ 113
ղերկոտասան տախտակն 128
յիշել միայն 140
խնդրե 144
տեսանել զանձն նը 146
շահեցեալք 148
միջնորդաց
ատենաբանութիւն 173
զառաքինութիւն 175

զփայան

Сія книга принадлежитъ
Поручику Господину
Сергею Петровичу
Варшатову